Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

L Gin
G50

1 9 99

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԵՒ

ՀԱՑԿԱՋԵԱՆ ՎԱՐԴԱՐԱՆԱՑ

ԵՒ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ԱԲԲԱՑԻՑ

ԳՐԵԱԼ ԴԻՄԱԹՆԱՐԱՐ

Ի Ս. ՎԱՐԴԱՊԵՏԷ ԹԷՈԴՈՐԵԱՆ

ՏՊԱԳՐԵԱԼ

ՕԳԱՆԴԱԿԱՑ ԻՄԵԱՑԻՆ

Պ. Ա. ՆԱՏԻՐԵԱՆԻ

Ի ՓԱՐԻԶ

1866=ՌՊԺԶ

ՀԱՏՈՐ Գ

/4470

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библ.
ՀԱՅԿ. ԽՍՀ

29 650

4650 - 60

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ՇԱՐԱԳԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ Լ.Գ.

Երբ Հ. Յովհաննիսեանց ի Պօլիս վասն խնդրոյ փոխադրութեան Մ. վարժապետութեան ասէր. — Տիւռձոբիէն միաբանից ասէր ընդ այլն. — Թուղթ Գեր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս վասն խնդրոյն այնորիկ. — Պատասխանի Հ. Սարգսի առեալ թղթոյ Գեր. Հիւրմիւզի ընդ այլն. — Վճռապարտ խորհուրդ Գեր. Հիւրմիւզի ընդ փոխադրութեան Մ. վարժապետին ի Հռոմ. — Թղթակցութեան Գեր. Հիւրմիւզի և Հ. Սարգսի վասն խորհրդոյն այնորիկ.

Յետ երկար ատեան և անդ գանգատելոյ Հ. Յովհաննես զինուոյ պատճառանօք, ասելի երանել ի ճանապարհ գնալ ի Պօլիս, հանդերձ հրահանգօք և պայմանօք, զոր և ծանուցանէ Գեր. Հիւրմիւզ Հ. Սարգսի գրով, որ ունի օրինակ զայս.

« Հանուսա Թղթակս ծանուցանեմ, զի յՀ տեսայ ուրոյ արարեալ ատեն զՀ. Հայր Յովհաննէս ի Թբեսա, ուստի ի 14 տեսոյ երեալ ի Հոռիմա ատեն երթալ ի Պօլիս ատեն ի խոսել

վերին եւ ինդրոյ վոխադրութեանն, և զպատճէն հրամանին որ տուաւ նմա գոլով ի Պոլիս: Իսկ պրնցկոյն ի նմանէ պատասխանին ընթերցեալ ի Պոլիս որ առ Վ. Շ. Գաբրիէլ:

Պատճէն հրամանագրին առ Վ. Շ. Յովհաննիս.

“ Մեսակ գործ և վախճան յղելոյ միաբանութեանս զձեզ
“ ի Պոլիս, է խօսել անդ ընդ այլ արդոյ վանականն եղբարս
“ մեր զնորոգ Ծադեալ ինդրոյ վոխադրութեան Մուրատեան
“ վարժարանին ի Փարիզ ի Պոլիս, զորմէ հարկ է համօրէն
“ միաբանութեան խորհել և երկուառեք խոհական կշռու-
“ թեամբ ընտրել զարժանն և զօգտակարն: Յայս իսկ՝ արդ
“ է Վեհապատուութեանդ եթէ ուրոյն և եթէ ի համախառնի
“ ժողովի խօսել ընդ մեզ և տեղեկագրոյն առնել զնոսա
“ ամենայն հանգամանաց իրացն: Եւ նախ՝ միաբանն և
“ տուժկոյ որ առ միաբանութիւնս և առ վարժարանն, ի կամ
“ միոյ դպրոցին ի Փարիզ:

“ Բ. Յուցանել ի հակառակէն թէ որո՞յ օգտակարութեանց
“ և շահուց ակն ունել մարթ իցէ ի վոխադրութենէ նորին
“ ի Պոլիս:

“ Գ. Յայտնապատել թէ զինչո՞ւ և որո՞վ օրինակաւ լինելոց է
“ վոխադրութիւնն՝ եթէ այնպէս պատշաճ գտանցի, իբ-
“ րեւ զի ոչ միանգամայն և հրատարակաւ համբաւել զՄու-
“ րատեան վարժարանն վոխեալ ի Պոլիս, այլ զի քան վար-
“ ժարանին կամով միայով անդ ի Փարիզ յուսացն բարձրա-
“ գոյն մակացութեանց և կարեւոր արուեստից, զկրթնական
“ և զօժանդակ դպրոցն մեր որ ի Պոլիս ընդարձակել՝ ունե-
“ լով անդ մանկունս ընտրեալս երեսփիթք յուսացն նախ-
“ նական գիտութեանց, կամ որպէս խորհին մերքն որ
“ ի Փարիզ՝ անդր վոխադրել ի Փարիզէ զկրտսերագոյնսն
“ զոս Մուրատեան աշակերտաց ի կատարել անդ զնախնա-
“ կան ուսումնս իւրեանց, որպէս մեզ տեսանել և ի փոր-
“ ձոյ եւս իմանալ եթէ ո՛րպէս յաջողեսցին իրքն, և զոո ապա
“ ապա խորհիլ և գործել զարժանն:

„ Գ. Լսել և քննել զառարկութիւնն և զժուարութիւնն
„ կառարման գործոյն և ւրպէս զկարդ մարթ լեալ տալ պա-
„ տասխանի ամենայնի և զժուարութիւնն լուծանել։
„ Այսու օրինակաւ յետ երկուստակ գրուցատրութեամբ
„ լուսաբանելոյ խնդրոյն՝ մատուցանել զայն ի ծածուկ քուէ-
„ արկութիւն, և յոր կողմն ելցի որոշումն կամ առաւելու-
„ թիւն քուէից՝ ծանուցանել զայն այսր ի վանս առտպրու-
„ թեամբ ժողովանականացն։ Զայսցանէ խօսակցեալ և գոր-
„ ծոյն զնոյնն կարծեաք և տեսութեամբ, խորհրդա-
„ բար որ ի նոցանէ զանձին և նմի խորհելով, և ոչ ինչ վոյի
„ զգահոյ և զիւառոյ հատարակաց առնելով։

„ Տեսեալ ի վենետիկ ի վանս Ս. Ղազարու

„ Ի 1 յուլիսի 1850.

„ Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ,

„ Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. ”

Ահա այսու և այսպիսի հրահանգօք առաքի Հ. Հովհաննէս Սարկաւեան ի Պօլիս, և գնացեալ նորա անդ՝ խօսի ընդ եղբարց իւրոց երթալ պատրաստաւոր ի Հօրէն հատարակաց։ Իսկ թէ ւրպիսի ոգւով և աղեցութեամբ խօսեցեալ էցէ Հայր Յովհաննէս ընդ նոսա՝ ոչ խնայայ Հ. Սարգիս, այլ խնայայ միայն ի բանից թղթոյ Գեր. Հիւրմիւզի որ առ Վ. Հ. Գաբրիէլ Այվազեան գանհատանութիւն նոցա առնելոյն որ ընդ առաջարկութիւնն այն, ընդ փոխադրութիւն դպրոցին ի Պօլիս, հանդերձ զանազան կարծեօք և տեսութեամբ, խորհրդաբար որ ի նոցանէ զանձին և նմի խորհելով, և ոչ ինչ վոյի զգահոյ և զիւառոյ հատարակաց առնելով։

Խնայեալ և տեսեալ զայս ամենայն Հ. Սարգսի՝ գրէ հատաօր ինչ թուղթ առ Գեր. Հիւրմիւզ, օրինակ զայս.

„ Արհիապատիւ Տէր.

„ Որպէս խնայեցայք և խնայեցայ ի բանից թղթոյ Վ. Հ. Գաբ-

բիել մերոյ, ամենայն ինչ վճարեալ է վասն բանի իմոյ վարժարանիս, հայեցեալ ի զանազան կարծիս եղելոց այդր և ի Պօլիս: ... Ապա չգիտեմ ինձ արդ այլ ինչ վիճիլ ապրել, և եթէ գյաուրաչափն ազգեալն երկրորդել, առեալ և անօ-
գուտ համարելով զայն... այլ պարտ է գործել կամիլ և ակա-
միլ և զեր իրացն Աստուծոյ յանձն առնել:

“ Խոկ թէ գինչ պարտ իցէ գործել, ահա ծանուցեալ է և ծանուցէ ձեզ Վ. Հ. Գործիլ առանձին գրով իւրով և հա-
սարակաց հաւանութեամբ: ...

“ Ողջունեալ զհամօրէն Վ. Հարս և Պատուական եղբարս,

“ Մնամ

“ Արհեստասիրս Տէրութեանդ ձերում

“ Ի Փարիզ. 22 յուլիս. 1850.

“ Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐԵԱՆ. ”

Թուղթ Գեր. Հիւսիւզի առ Հ. Սարգիս, յորում ծանու-
ցանէ զհնարիմացութիւն Հասանին և զիշխանութիւն ապ-
գին, հանդերձ տեղեկութեամբ ի Պօլսոյ, օրինակ զայս.

“ Յարգոյանալիս և վերապատուելի Տ. Հ. Սարգսի
վարդապետի սիրոյ և մեծարանաց ոգևնիս խնդալ.

“ Ընկալեալ յերեկոյին զյաջորդութիւն Պօլսական թա-
ղերդութեանն՝ յորմէ ահա ի գիտութիւն ձեր զօրինակ թղ-
թոյ Վ. Հ. ձերոյ առնեմ, յորմէ իմանալը, զի ձեռն Պատա-
թեան տեղոյդ է ընդ Խակին. և զի յայդ խոկ ուրեմն լեալ է
զարեամ նորա այդր՝ զի պատուարան և զօրավիգն խորհըր-
դոյ իւրոյ արուցէ զնա, յայտ է թէ միջնորդութեամբ և ի խնդրոյ Հռոմէից: Ասի մարթ է զուշակել՝ զի և եպիսկո-
պոսէ այդպէս և այդչափ հեռանալ լինել ի ժամանակի
սոյն քննութեան վարժարանիդ՝ ի դրդմանէ Խակին և ի կա-
մից Հռոմէից. եթէ Հռոմ և Պատրիարքն իսկ ընդ Խակին

է, չմարթէ մեզ առնել ինչ ընդդէմ արքեպիսկոպոսիդ, այլ զայրացուցեալ չար եւս առնեմք : Ոմին իրն տեսչէք թէ մարթ եցէ քաղցրութեամբ վճարել զերան այդր, զի մի նրթ եցեն ի Հռոմ . ապա թէ ոչ՝ խնթամ զի յոտոգայթ անկու ընծրուքն :

" Ասաի զարձեալ խնդասուս լինիմ զի շար եւս ինչ լինիցի մեզ, եթէ ի ձեռս մատնեացուք Թամկին : Աչքաի ի ժամուս :

" Մաղթեմ ողջ լինել

" Յարգոյապատիս Վ. երապատուութեանդ

" Վենետիկ . 23 յունս . 1850 .

" Ն. Ծ. Գէմրդ Վ. Հիսրմիսջ

" Արքեպիսկոպոս և. քնդ Աբթոյ . "

Տեղեկոբիւն ի Պօղոյ տոռեալ ի Հ. Գնաւիխայ Ճեղալեան.

" Ժողովուրդս տեսեալ զի ոչ ապաէ Թամկն ի Հռոմէ
" պատուհասեալ աղերսագրոյ ազգին, բոլոր կալեալ տ. Պե-
" տրիանս աղերսագրով երր 700 ստորագրութեամբ, արդէլ
" դձեռնադրութիւն եպիսկոպոսացն յ30 յունիսի : Ա,յլ Թամկն
" միջնորդութեամբ դեսպանին Գաղղիոյ յ7 ամսոյս ի ծածուկ՝
" երկու ժամս զինի կէս գիշերոյ՝ ի Յիսուս փրկիչ ամենայն
" դրաքն փակելով՝ ի Թիւ պատարագի ձեռնադրեաց յեպիս-
" կոպոսութիւն պետիման, զԱստրճի, և զՀաճի Գաւիթ :
" Կատարեցաւ այս հանդէս լռութեամբ՝ երրն յաւուրս հա-
" յոց անդաց ևկեղեցւոյ տ. տառաժամարտս կայսերօք : Ի լռ-
" անալ տառաւօտն բացան դրունք ևկեղեցւոյն, և համբա-
" ղելոցն սիրեալ ամենայն սրնք, առաւել եւս զայրացոյց
" զազգն և ած ի յուսահատութիւն. այր իւրաքանչիւր սրտ-
" մբութեամբ խորհի հնարս ապատութեան ի բռնաւորէս :
" Ասպ իշխանք որչափ ձեռնթափք երեւին, այլ լռութեամբ
" Թոյլն գործել ինչ : Այժմ ի բերանս հանուրց յաժի համ-

“ բաւ, իբր զի Թշնամին կամիցի փակել զկրօնաւորս ի բնա-
“ կարան բնակարանս, խլեալ զպարսպաց նոցա, աքսորել
“ զոմանս ի նոցանէ, և ընդել զՀամազգաց ընկերութիւն եթէ
“ ոչ ընդունելոյն զնա զլուխ իւրեանց։ ”

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ Թղթոյ Գեր. Հիւպիւզի, յորում ծանուցանէ զյաւելուածն ցաւոց սրտի իւրոյ և զյուսահատութիւնն, որ ընդ Թշուառ վիճակ ազգին, պատճառեալ ի ցաւալից բանից Թղթոյ նորին, օրինակ զայս.

“ Գերապայծառ Տէր.

“ Զանկալի պատասխանին վ. եհլոյ, որում և Ձեայլ յոյժ անհամբերութեամբ, ընկալայ ի 26 անցեալ, և ընթերցեալ զայն՝ ապաքէն յաւելան ինձ ցաւք սրտի, և յուսահատութիւն յամենայնի, տեսանելով զԹշուառ և զողբալի վիճակն ազգիս, մանաւանդ զուղղափառացն. վասն այսորիկ Թշուառ և զանձն իմ համարիմ, չունելով բնաւ ինչ միխիթարութիւն ի Լանից և ի վաստակոց իմոց առել... ապա չինայ ինձ այսուհետև յոյս միխիթարութեանն որ ի մարդկանէ, բայ յայցելութենէն որ ի Տեառնէ, վասն անտերունչ և վարտուել ազգիս։

“ Ձխորհուրդ և զկարծիս առաքելական Նուիրակին առի, զոր հարցաք ի նմանէ, և որով վարեցաք ընդ արքեպիսկոպոսին վաղարշ, ծանոյց և ծանուցէ վ. եհլոյ վ. Հ. Գաբրիէլ մեր առն ըստ բառականին, հանդերձ կարեւոր գիտելեաք։

“ Ես այսչափ միայն ասեմ, որպէս և վերադոյն ասացի, Թէ Թշուառ և ողբալի է վիճակ ուղղափառաց ազգիս, և Թէ Տէրն ինքն այց արասցէ նոցա ըստ բազում ողորմութեան իւրում։

“ Մի ի կարծեաց Նուիրակին և այլ բարեկամաց մերոց առն է, զի հրաժարականաք մեր արդ զպատճառէն վարժարանիս ի գիտութիւն հաստատակաց, առ ի ցրել զձախողակի կարծիս ունելոց որ զմեզ, և ի կարճել զկեղծս հակառա-

կրկաց մերոց . . . վասն այսորիկ պատրաստեալ էի ես և պատրաստեմ զայն այժմիկ ի լոյս ընծայել :

„ Մնամ

„ Գերապայծառ. Տէրութեան ձերում

„ ի Փարիզ . 27 յուլիս . 1850 .

„ Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ Վ. ԹԻՒՐԻՒՄԵԱՆ . "

Տագնապեալ յոյժ Գեր . Հիւրմիւզի յերեսաց ամբաստանութեանց հակառակորդաց վարդանութեան իւրոյ՝ ի խորհուրդ ժողովական մտաքերէ , իբր ի միայնակ զէն վրէժխնդրութեան իւրոյ ի նոցանէ (*), վոխադրել զՄ. վարժարանն ի Հռոմ . և այս խորհրդոյ իւրոյ գտանէ համախոհ զվիամիտ եղբայր իւր զԳեր Եղուարդ , և զկարճատես անձնասէր դասակից իւր զՀայր Ոսկանէ Թրենց , յորոց մին արդէն պատուեալ ի Հռովմայ գահէն եպիսկոպոսութեան աստիճանաւ , ակն ունի թեբեա և այլ բարձր աստիճանի . և միւսն ցանկայ տեսչութեան Մ. վարժարանին , և եպիսկոպոսութեան , իբրեւ բարւոյ գործոյ , վասն այնորիկ պիտոյ և հարկ էր զոհ լինչ առնել գահին Հռովմայ երախտապէտ մնօք , վոխադրել անդ զՄ. վարժարանն :

Գտանէ Գեր. Հիւրմիւզ համախոհ խորհրդոյ իւրոյ և զայլ երկու անձնեան ոմանս ի միաբանից իւրոց , յերիտասարդ քահանայից անտի , որք ոչ այլ ինչ խորհէին , բայց եթէ հաճոյ լինել յաչս մեծաւորին իւրեանց , առ ի գտանել պաշտօն ինչ ի վանս , և վարել զայն ըստ ցանկութեան իւրեանց :

(*) Աւելցին արդեօք , թէ՝ ի հնարս փրկութեան Մխիթարեան ուխտին , ապաւանելոյ ընդ ի փակելոյ Պապին , կամէր Գեր. Հիւրմիւզ փոխադրել զՄուրատեան վարժարանն ի Հռոմ , և ոչ ի վրէժխնդրութիւն հակառակորդաց իւրոց :

Աւելմք , թէ ոչ այդպէս , և հաստատութիւն այսմ , ահա նախ ոչ երկիւղ քահանայից Հայոց միաբանութեան , պաշտպանեալ նորին չառաքելութեամբ Իոակիմ եպիսկոպոսաց . Հիլարիոն և Պատրիարքին Վենետկոյ . երկորդ՝ երբեմն ի գերեւ ելանէ ակնկալութիւն նորա , յաղթութիւն ի վերոյ հակառակորդին իւրոյ Հաւանելի , կասկ նա այնուհետեւ ի կամաց իւրոց անտի , փոխադրութեան վարժարանին ի Հռոմ , գանազան պատճառանաք . . .

Ստանիսլաս Հոկինեանի :

Ապա մնայ նմա հաւանեցուցանել խորհրդոյ խրատ զՀայր Սարգիս Թէոդորեան և զՀ. Գաբրիէլ Այվազեան որք ի Փարիզ, առ որս թէպէտ ուղղակի և անուղղակի գրեալ էր երբեմն, և զարժանին գտեալ պատասխանի, այլ կամի վերըստին գրել. վասն որոյ գրէ Թուղթ առ Հ. Սարգիս, յորում նկարագրէ զինսան որ ի Թշնամեաց միարանութեան, և զօգուտ նորին որ ի փոխադրութենէ Մ. վարժարանին ի Հռոմ, և ի մէջ առնու զամենայն կարծեցեալ փաստս իւր առ ի հաւանցուել զնոսա, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգիս վարդապետի սիրոյ և մեծարանաց ոչնչին կարօտակիր.

« Ընկալեալ զԹուղթ Վերապատուութեանդ զրկեալն ի 27 անցեալ ամսոյ հանդերձ Թղթով Վ. Հ. Գաբրիէլի, ծանեայ զգործեալն այդր առ ի ձէնջ խորհրդով և խրատուք առաքելական Նուիրակին, և հաճեալ եմ ընդ ամենայն և պատասխանդին պատշաճ առ Ձեր դիւրել ձեզ և մեզ զամենայն։ Նոյնպէս և ընդ կարծիս հրատարակելոյ զպատմութիւն վարժարանիդ հաճեալ՝ և զկարեւոր պատճէնս Թղթոց հանեալ ի գիւանէս՝ ոչ դանդաղեցայց յղել ըստ խնդրոյ Վերապատուութեանդ։

« Սակայն ի գործոյն վերահաս չարեացն որ ապտակեն զմեզ արդ՝ այլ ինչ խորհելի է մեզ հնարս ի նահրայուցանել զհարցս Թշնամեացն լսելս մեզ։

« Ախորժեն չիք երկրայել զի ամենայն զօրութիւն Թշնամեացն մերոց ի Հռոմէական է, մանաւանդ Թէ ի Պատրոգէն, առ որում կամաձառս ցուցեալ զմեզ՝ բռնանան ի վերայ մեր, և մեք զուարկք ի պաշտպանութենէն նորա և անօգնականք ամենևին ընկճիմք ընդ նոքօք։

« Այս չար կամակատաց Հռոմէոյ զմեզ՝ հաւատոյս ի մէջ ծաղուցեալ և ծաղուցանեն ամէն զխոտորումն վարժարանիդ այդր ի Փարիզ, զոր և իգնալն յոժամ ի Հռոմ յամի 1846, խակ և խակ յայտնապէս ի գէմս ածին ինձ ծրտա-

Նաւուրք, պի այդր ի Փարիզ վոխադրեալ ղէպրոցդ և ոչ ի Հռոմ վոխադրեցաք, այր ազագաւ խակ և այժմ ի յառախել ամբաստանութեանդ զմէնջ դժուարհաւան լեալ՝ նեղեն զմեզ անխնայ։ Ապա հարկ է մեզ և վասն այսորիկ և վասն այլոց եւս պատճառաց, զոր և դուք և մեք խոստովանիմք միտքան, վաղ կամ անագան փոխադրել զայդ այսի, և ոչբ։

« Որպէս կանխեցի գրել նախընթացիւս, և որպէս հանդամանք խակ ժամանակիս և հէգ և տատապեալ ազգիս յայտ առնեն, չմարթէ մեզ այժմ փոխադրել զայն ի Պօլիս, և ոչ այսր յԱստրիս փոխադրութիւնն իցէ անվտանգ և անեղկեւան, վասն պատճառացն զորոց գրեցի ի նախընթացիս, յորս և զայս յաւելուլ մարթ է ըստ ազգեցոյ մտերիմ բարեկամաց, պի արքեպիսկոպոս տեղւոյդ և տէրութիւնդ արդեօք ի վերայ դնիցեն չվառճառելոյ պատասանդ որպէս բարեպաշտ տեղի. և առ ո՞ր դիմեացուք յայնժամ եթէ և Հռոմ չպաշտպանէ մեզ։ Զի՞նչ ապա առնել իցէ մեզ յայս հանդամանս իրաց։

« Եթէ ի հակառակն հակառակօք վարել պարտ իցէ, և մեզ արդ այնու պարտ է վարել հնարիւք, որով յորտաքին մարտս վարիցաւ Հռովմայեցիդ, այն է զրուն գրաւել զօրութեան թշնամեաց, որով զօրանան ի վերայ մեր. այլ և կամակատարք լեալ յաչս նոցա առաւել եւս զրգռեմք ի վերայ մեր զօրութիւն իւր ի վար արկանել, որպէս տեսանէք այս յայտնապէս. և որ շար եւան է՝ ոչ Հռոմ տիրէ ի վերայ մեր, այլ Ծառայոցն, և Ծառայիւք իմն զայս ոք և զայն, որով այս ամենայն չարիք դան հասանեն ի վերայ մեր։

« Բայց թէ գամ մի անդր ի Հռոմ երթեալ վտանգութեամբ և յաց ձակատով և ակներեւ նոցա զղպրոցդ կայցուք՝ ձայն տալով ատելոց մերոց, զի՞նչ արասցեն նոքա յայնժամ. ամբաստանե՞լ զմէնջ. այլ ո՞չ ապաքէն բաց են զրուանք վարժարանիս առաջի ծերակուտացն և արքայանին խակ խոյտառակել զտգիտութիւն ատելոցն, և ոչ տիրեցէ մեզ յայնժամ Ծառայոցն և կամ Պառնապօ, առնել որպէս ինչ և կամիցի. յայնժամ և ի Պօլիս խակ յաւելուցումբ ի զօրութիւն,

յորժամ արքայն ինքնին յայց ի պարսից մեր եկեալ, և ի նմանէ օրհնեացի մանկտին. յայնժամ դիւրապէն եւս յաջողեացի մեզ արդեօք ընդարձակել և զպարսից մեր որ անդ ի Պօ-լիս, զի վաճառմամբ պալատանդ, որում չկարասցէ խափան լինել Արքեպիսկոպոսդ, հաստեցեալ զպարս մեր՝ յաւելուցուն մեզ եկամուտք. նաեւ ի Տրապիզոն իսկ Թերեւս յաջողեացի մեզ բանալ յայնմանեւս զիաւիեալ զպրոցն մեր:

“Ա՛յս խորհուրդ՝ դիտեմ, զի որպէս ինձ զառաջինն, և ձեզ այդր անտեղի և օտարատուր թուեցաւ, քայց մոտիտ եղեալ յաւելեալքս, Հարք իմ սիրելեալք, ընտելացի ձեզ Թերեւս՝ և ոչ նոյնպէս անտեղի թուեցաւ, որպէս խոստովանիմ հաւանարձակ թէ եղեւ և ինձ: Ա՛յս ասեն ամք են և աւելի փոխադրելոյ Վիրանաձեւանց զվանս իւրեանց ի Հռոմ, և լեռնական ազատիւրդն ամենայն ջօրութեամբ իւրով և ժանր ժանր իրաւամբք և փաստուք զոր ունի ի ձեռին, չկարէ առնուել ինչ նոցա և դարձուցանել առ իւր (*), զի ընդ հովանեաւ

(*) Ոչ փոյթ և պատասխան անաչառ պատմագրաց որ ընդ անպատճառ գնացս Պապաց ամանց և ընդ հնարիմաց քաղաքականութիւն նոցա, ոչ պատմութիւն հիմնարկութեան դպրոցի Վաւասլոցին, և ընդունայն ակնկալութիւն հայազգի բարերարաց նորին, և ոչ փորձառութիւն Մխիթարայ Աբբային և հրահանգ նորին առ աշակերտս իւր եղեն իրաւ Վեր. Հիւբմիւզի ։ ... Ընդէր այս անխրատութիւն նորա, վասն զի կիրք վրէժխնդրութեան, և փառասիրութեան կամակորեն զնա ի յիշատակութենէ անտի, և մոռանալ տան նմա զպարտս իւր, զպատկանութիւն ժառանգութեան ազգատոհմ ազգին և պատուութիւն նորին ։

Աւաղ վատահութեան և զիտաւորութեան հանգուցեալ բարերարին, զորոյ յիշատակ կամի Վեր. Հիւբմիւզ անհետ առնել յանձնել զայն ի ձեռս Վաւասլոցին, չյիշելով բնաւ զդիտաւորութիւն և զվատահութիւն բարերարաց ամանց յոգւոյս, որք նուիրեն երբեմն գումար ինչ արծաթոյ ի կառուցումն դպրոցի միոյ ի Հռոմ քաղաքի ի դաստիարակութիւն և յուսումն մանկանց հայոց ընդ խնամակալութեամբ Պապին, և որք ոչ միայն վրէպին յանկնկալութենէ բարեաց անտի, այլ և չարեաց պատահին. քանզի այնու արծաթով կառուցանի դպրոցն Վաւասլոցին, յորմէ ելանեն աշակերտք, ոչ չար գաւակք, ոչ քաջ ուղիղ տեսութեան հանճարեղ Քափէլէքքի ... որք արկին և արկանեն երկպառակութիւն և տեսլութիւն ի մէջ Հայոց ազգին, և որք հակառակորդք և հալածիչք եղեն ի սկզբանէ հետէ և են արդ Մխիթարեան միաբանութեան, այլ և պատճառք անարգանաց և քանդման նորին լինին ապա ։

Ահա պատա կամի Վեր. Հիւբմիւզ զօրացուցանել և աճեցուցանել յոգիս միաբան, կամելով փոխադրել զՎ. վարժարանն ի Հռոմ, և չյիշելով բնաւ զիտաւորութիւն Մխիթարայ Աբբային և զիտակաւն հրահանգ նորին որ առ աշակերտս իւր, թէ ՚ի պատճառ զգուշութեամբ և խորագիտութեամբ պարտ կին նոքա վարել ընդ աշակերտս Վաւասլոցին և ընդ ժողովուրս նոցին ի Պոլիս և յայլ քա-

արդ գահուն են ամրացեալ. նոյն և մեզ պատահեցի արդեօք. բայց և ի Հռոմ իսկ թերեւս պահանջեացուք տալ հաշիւ. այլ ո՞չ դիւրագոյն յոյժ էցէ անդ ի Հռոմ տալ զայն՝ քան այլուր։

« Ահա տեսաբեթիւն ամենայն ազգայնոյն եկամտից ի Հռոմ, որք ոչ մեր են որպէս զդպրոցիք, ի ձեռս առեալ է Գեր. Եղուարդայ, և առնէ որպէս ինչ կամի, և զտարեւոտական հաշիւան տայ ըստ վաղնջուց կարգին. բայց թէ որպէս՛ քննութիւն լինելոյ այնմ, պարտ է ձեզ ի նմանէն իսկ ի Գեր. Եղուարդէ լսել զայն. և թէպէտ Խաչն, (Գեր. Հաւուն) որ մնախայ յոյժ ընդ այն, ի գալստեանն իւրում անդր՝ կամեցեալ բայց ոչինչ կարացեալ է առնել. զի ասացի, և առացից դարձեալ, առաւել յոյժ ծանրանայ զօրութիւն Հռոմայ ի վերայ մեր արտաքոյ, քան անդ ի Հռոմ։

« Այս խորհուրդք են որք յածին արդ ի միաբանութեանս ի վերայ Թշուառ և անյաջող իրացն ազգայնոց ի Պօլիս, զորս իբրեւ խորհուրդ առաջի առնեմ և խոհականութեանդ ձեռամ յորոճումն, որ եթէ հաստատեցի, մարթ իցէ մեզ և յառաջակայ գարնան առնել զիոխադրութիւնն և գերծանիլ ի ձեռաց յեղյեղուկ և գաղտաբարոյ ազգիդ։

« Ցանկալի է ինձ յոյժ, զի ամօրեայ մի պարապ գտեալ վերապատուութիւնդ գայր այսր ի դժուարին հանգամանս ժամանակիս խորհել զիրացս և կամ զոր ինչ այլ առնել կամբիցեմք, և դառնալ այդրէն ի գործադրութիւն իրացն սահ-

գաքս Աթոյ և Եւրոպիոյ . . . որք միանգամ չվարիցան հրահանգաւ նորին հալածեցան ինոցանէ և հատան ի Մխիթարեան միաբանութենէն. . . Յոգւոմբ յիշատակել և աստ պիտոյ Պաւքթոյ եպիսկոպոսին որ առ Գեր. Ադոնց, և զոր յիշատակեալ եմք ի 308 էջ առաջին մասին։

Ահա գայթ ամենայն ոչ յիշէ բնաւ Գեր. Հիւրմիւզ, տիրեալ ի կրից վրէժխընդրութեան և փառասիրութեան։

Թէպէտ և կարէր Հ. Սարգիս յիշեցուցանել նմա գայթ ամենայն և յանդիմանել զնա յայնժամ, այլ սեռեալ պակասութիւն նորա խնայեաց զի չկարէր նա հանգարտել բանից իւրոց լուէ, և համառօտս միայն առնէ պատասխանի նշանաւոր Թղթոյ նորա, այո՛ նշանաւոր Թղթոյ. քանզի սեռանի ի նմին կնիք բնաւորութեան նորա սակարութիւն մտաց, երկչոտութիւն սրտի, վրէժխընդրութիւն ոգւոյ, գոռոզութիւն և փառասիրութիւն բարուց, հանդերձ ապերախտութեամբ և անգթութեամբ։

(Մանօթութիւն Հեղինակին)

մանկաց, բայց չգիտեմք թէ և այսէ լրք ներեսցին ձեզ զայն։

և Մեք խոստացեալ առաւ զերծաց և զգնացից Եպիսկոպոսիդ ընդ փառաբանեն որ զիմուղմն զայն առ Արքեպիսկոպոսդ շարադրեաց, զարմացաւ յոյժ յոյժ ընդ անճառն և բիրտ դնացս առնդ, և ինքնին ի գուբ եկեալ ընդ մեզ՝ զրէ այսօր առ բարեկամն իւր մեծերիմ, օշ անճանօթ և ձեզ այդր, առ Թօֆֆօլի, զորոյ զճարտարութիւնն մեծ ի բազում ինչ իրս գոլէ մեծապէս, և նա առէ խոստացեալ ընդ որում արժանն է և արագել այնպէս զի ոչինչ հասցէ ձեզ վնաս ի պետութենէն և կամ յարքեպիսկոպոսէն. նմին իրի գնացեալ և գուբ զի ի լինել հարկին խոսնակ ընդ նմա զոր ինչ արժանն է։

“ Մարթեմ ողջ լինել

“ Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

“ Վ՚ենետիկ. 3 օգոստ. 1850.

“ Ն. Ծ. ԳէմՊԳ Վ. ՀԻՒՄԻՒՋ

“ Արքեպիսկոպոս և. ընդ. Արբայ. ”

Առեալ Հ. Սարգսէ զվերոյիշեալ նամակ Գեր. Հերմիւզի, և ընթերցեալ զայն հետևայ և դարձ յոյժ յոյժ ընդ տարտարար և վնասակար խորհուրդն այն Գեր. Հերմիւզի, հանդերձ հակառակութեամբ բանիցն որ ի նամակէն նորին, հայեցեալ ի պաշտպանութիւն Վրդանեանց, և ի տեսչութիւն Գեր. Եղուարդայ, յորում վկայէ թէ չիք արդարութիւն ի գատաստանի Գահուն Հռոմայ, և ոչ երկիւղած վնասակարութիւն ի վարչութեան նորա. տպա գիտէր ակն ունի ինքն գտանել վճիռ արութիւն անտի ... հակառակութիւն բանից նորա յայտնապէս տեսանի։

Հ. Սարգիս կամի գտանիլն, զոր տեսլեան իւրում՝ յառաջ բերել զդէմս նամակին Գեր. Հերմիւզի և ի տ. ի

*առնել նոցին զարժան պատասխանին, բայց ապա զնուա-
ճել զհանդամանս Գեր. Հիւրմիզի, զառգնալ նորա, որ
յամբաստանութենէ թշնամւոյ վարանութեան, անօգուտ
համարի զայն յայնժամ, չազդելով ինչ խաւսիլ մնոյ նորա
այնպիսի բանից, այլ թողու զայն Վ. Հ. Գարրիէլի առնել
ըստ պարշաճի պատասխանի բանից նամակի նորին, հա-
յելով այնր յերկուսին մանգամայն, զոր և առնէ նա ընդար-
ձակ բանիւք. իսկ ինքն առնէ հակիրճ և ազդու բանիւք
պատասխանի նամակի նորա, հանդերձ բողոքմամբ, օրինակ
զայս.*

“ Արհիապատիւ Տեառն Տեառն և Գերապայծառ Հօր
իմոյ կարօտապէն ողջոյն և խոնարհ համբոյր սաղա-
ծարեալ Աջոյն.

“ Ցյանկալի նամակ Վեհիդ, զրեալ յ3 օգոստոսի, ընկա-
լայ յ18 սրբին ամսոյս, հանդերձ ծրարելովն ի նմին 4,800 ֆր-
բանեի վոխառնակարգութիւն, ընդ որ շնորհ առնումք յոյժ, և
աւաւել եւս կալցուք, եթէ միանչեւ ցելս ամսոյս հոգասցիք
գինացելոց պարտուցն վարժարանիս, որպէս զի մարթասցուք
մեք տալ ձեզ այդր զվեցամսեայ հաշիւ ծախուց վարժարա-
նիս. . .

“ Ծանեայ ի գրոյ անտի Վեհիդ և յաւօք սրտի զասրա-
պարս հոգն և գինաւոր խորհուրդն, որք յանձն այժմ
ի միտս Համարակաց, յաղագս բանի փոխադրութեան վար-
ժարանիս. . . ուստր հաճարիմ եւ աւաւել ինչ գրել ի սմին,
քան զմանդամ և երկիցս միտքն խորհրդով գրեալն, որ
ի Վ. Հ. Գարրիէլէ մերոյ ասի, նախ առ Վ. Հ. Պետրոն
ի Հռոմ, և ապա առ Վեհդ այդր յայտ պատճառութեան...
այլ այսչափ միայն ասեմ, վստահանալ թէ գրադրամ անգամ
ասացեալն երկրորդիմ, թէ բշուառ և անճարաբշուառ է ազգս
Հայոց ողորմելոյս, ոչ առ պակասութեան արծաթոյ, այլ
պատճառ Հոգւոյ:

“ Յետ Բարեհամբոյրս մերոյ երանելոյն Պետրոսի Վե-

կաց որ ի մարտնեալեան այնպէս արիաբար, քան ի Հանդուցեալ Հ. Միքայէլ Զամչեան. . . . . Աւաղ, զի պակասեն ի մարտնեալեան այսպիսի անձինք: Եւս մինչ այսչափ ասացեալս, զի առաւել քան զայս պատրաստել զմտաւ լսելեաց, և զայնպարագրեալն արդեօք մտաց երիվարած կարծեցեալ եղբարց... Մի՛ միայն անձն իւր ի խորհուրդ կացէ յաւէտեանս ժամանակաց, զի վնասակար է աղքատաց...

« Բազում սիրով և յաւէտ օրսի ողջունեալ զհամօրէն Վ. Հարս և պատուական եղբարս,

« Մնամ

« Վերապատուոյն Տէրունեանց ձերում

« Ի Փարիզ. 9 օգոստ. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՒԻՐԵԱՆ. »

Պատասխանի Դէր. Հնարիւղի առեալ վերայիշեալ Թղթոյ Հ. Սարգսի, յորում պարծի Թէ չգտակատ լինքն յարհութիւն, առաւել քան զՄխիթար Աբբայն Հանդուգնագոյն և Ճշմարտասէր կրկնով. և մեղադրէ զնա երբեմն փոփոխիչ լեզուին և ծխելն երբոյ ազգին առ ի հաճոյ լինել Հռոմայեցւոյ պահին, և ցուցանէ պերճկեալ սպատնալեացն որ ի Ծաւալոցէն, հանդերձ հրովարտակօք անտի, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և ժեծարանաց ողջոյն.

« Ընդունելոյ զքոյդ Վերապատուութեանդ զրկեալն յՅ անտի ի պատասխանի նորոյ առաքինութեանս որպէս խորհուրդ առ ի լսել և զձեր կարծիս, ծանեայ զայն և ամենեցուն նոսա յընդերցուածն մտանոգ լինել ի նմանէն:

« Վերապատուութիւնդ յարիւթիւն իմն երախտագէտ զմտաբանութիւն, և զգայնութիւն նորին զնէ արտաքոյ կշռոյ

ատումեան մերոյ և ազգիս : Արդարև ատաքնութիւն զեղեկ և կարեւոր է արուեստիւն անընկճելի գոլ իւրեանց և ձախորդակս, բայց և արուեստիւն ատանց բանի վճարիլ՝ ինչ - մըրիկ իմն բուռն և ուժգին գոյացի զմեզ, որում թէ դիմակալել կամիցիմք զօրութեամբ՝ և յարմատս խակ զմեզ տապալէ :

« Զարուեստական մեր զՄխիթար ատնութ յօրինակ. այլ ուր նա հակատակեցաւ իրրև զմեզ Հռոմէայ և հրամանաց Ծառայիցն. ոչ նա լինէն և զկեղտ իւր փոխանց և զձէտ. ապա խնամոյթեամբ պարտ է արհամար լրատուն ընդ հրեշեան կցորդելով, զի մի չարաչար նա ընկճիցիմք : Մինչև ցայժմ մնաքառել մնաքառութք ընդ ատեա մեր, որոց հանդոյն չկարծեմ թէ տեսակ լիցէ մխարանութեանս, և թէ անվեաս գերծանելիցիմք ի ձեռաց նոցա խնամք Տեառն լիցեն :

« Յարդ ազատակ մնայութ Թղթոյ ի Ծառայիցն զրով զեկուցանէր մեզ զորչմանս և զվնաս որոյ ժողովոյն վանս առաքելութեանց Հառնին, և ահա նհաս այն յաւուրս յայտսակ, զորոց զգաստն հանդերձ վճռովքն գոյանիցէք ի Թղթս, յորս չէք ինչ առել քան զառհանձնականն երթալն ի կանոնադրութիւնս 1842 ամին. բայց տեսայութ թէ ո՛րպէս վարեալ նոքօք Հառնն :

« Եր ընդ վճռոյն և այլ Թուղթ տպատիր յերկար, զոր զի ժողովն առ Հառնն յեղծումն Հռոմպդեաց ընկերութեանն որ Թուռնոլիցն է յայժ, և զրութիւն առնէին ընդդէմ մեր երեսի ի նմա. յընթեռնուն զայն Թուղթ ի Պոլիս և նա զայրացեալն առմամբ և խռովութիւնք, և յայլ կամ յայնհասկ որոշեալն երթն :

« Ընթերցմէք ի գրասենեան և զերկրորդ Թուղթ Ծառայիցն և տեսէք, թէ ո՛րպէս արդեօք զիմասիրել զմարժարանդ այսոր՝ միտչէն ցուցանել նմա զանկեալն ուր փոխադրելն կամիցիմք, և այնպէս փոխադրել, զի արդելուլ կամի յայտնապէս զիմասիրութիւնն նորա ի Պոլիս, առ որ չեն եւս տուեալ նոյ պատասխանի, միտչեւ Հարցեալ զօրինադիսան և գրաս-

ուսմարանս տեղեկացուք, թէ ուստի լցեալ նմա խառնել և յերս փոխադրութեան դալոցին։

« Սիրելի ողջունիս վանականացս ամենեցուն մարթեմ ողջ լինել

« Յարդոյապատիս Վերապատուութեանդ

« Վենետիկ. 17 օգոստ. 1850.

« Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և քնդ. Աբբայ. »

Պատասխանի Հ. Սարգսի տուեալ բանից թղթոյ Գեր. Հերմիւզի, յորում ստացանէ նմա զվեհերութիւն նորա ի սպատնալեաց Հռոմայ, գուշակէ զվախճան բռնաւորութեան նորին, արդարացուցանէ զՄխիթար Աբբայն ի գնացս իւր, և յուզիացուցանէ դանցեալ վիշտս միաբանութեան, զարիւթիւն, և յոգիութիւն նորա ի վախճանի, օրինակ գայս.

« Գերապայծառ Տէր.

« Ջահրնկեալ սրտիս գրեանն Վ. եհիլ, ի 17 օգոստոսի, ընկալայ ի 23 սորին ամսոյս, հանդերձ ծրարելովքն ի նմին ազդեալ և աչառու մտօք գրեալ հրովարտակացն պատճէնեաք, և ընթերցեալ զայն ոչ խռովեցայ և ոչ զարմացայ, զիտելով զայն ոչ օտար Տաւրոյին, և ոչ նոր ինչ Միաբանութեանդ, այլ սնեալսն է նմա, և սովորական գիս, մանաւանդ յայսմ ժամանակի և ի հանգամանս վարչութեան Երոպայ, յոր իրաւունք ազգաց գիտեալ վճարին, և իշխանութիւնք են ի ձեռս զգաց և փարախացոյ. « Յաթաղան « Մահէմի նաման զգերբ և փարախիցք։ » Վասն որոյ համբերութեան և հնազանդութեան պէտք են ի ժամուս, մինչև եկեալ արդարութիւն սեռասպանական, խաղաղութիւն սրտի և ազատութիւն մտաց, որք ի բնուստ և ի ներքս յինքեան են մարդկան, և զգոյ խառնել և բառնալ Հանգուցեալ և Հանուն բռնաւորք և անզգամք։

«Այլ խոովեցայ ընդ ահարեկութիւն արտ Նաւապետիդ
նաւուս ի տառապեանս հարուածին հողմոյ որ գոռայ, այլ
չկարէ վճռաբել նաւուս... շատ է դի չկոյէ այն ի ներքուստ
խարխափել, և կամ Ղեկավարին խոտոր վհատուիլ... և
զարմացայ ընդ օտար նշանակութիւն բառին արհեստիդ,
չառակելոյ իմ ի թուղթս. և կրաւի՝ զանգի արհութիւն
ասելով իմանամ ես բարոյական առաքինութիւն լինչ, որ
չկարէ լինել առանց բանի, ապա թէ ոչ՝ չէ պարտ առել արհ-
ութիւն, այլ յանդգնութիւն և մոլութիւն իսկ, որ և անպատ-
շաճ Առաջնորդի միոյ միաբանութեան, մանաւանդ անուն-
բառնչ ազգի միոյ և յօտար աշխարհի. և առաւելապէս զար-
մացայ ես ընդ բառս նաւական Վէհիդ, որ ունի այսպէս.

«— Չբարեհաճան մեր Մխիթար առնուք յօրինակ.
«այլ ո՛չ նա հակառակեցաւ երբեք զմեզ Հռոմայ և հրա-
«մանաց Ծառայելոյն. ո՛չ նա ինքն, ասէ, և զկեղտ իւր վա-
«խեաց և զծէսս. ապա խնամոութեամբ պարտ է, ասէ,
«արհանել, երանելոյն ընդ հլութեան կցորդելով, զի մի
«չարաչար եւս ընկճիցիմք։»

«Այո՛ Գեր. Տէր, ընդ այս հաւանաւական բառս նաւակի
ձերոյ զարմացեալ եմ կարի յոյժ. և ընդ այս թէպէտ պարտ
էր ինձ և արժան առնել երկար պատասխանի, հանդերձ բա-
զում օրինակօք ի հաստատութիւն բանիցս ճշմարտութեան.
բայց տեսանեմ ես արդ զի չկարէք դուք հանդարտել նոցին,
զարհուրեալ յոյժ ի կարծեցեալ ինն բռնաւ վրիժ և յոյժգին
հողմոյ հարուածոյ, Ծառայելոյն, և զի երկնչիմ ի զայթագրա-
թենէ կարի ինն երկիւղած եղբարցս... վասն որոյ համառօտ
առնեմ այսմ պատասխանի, յանդիմանութիւն մատցս և ի հան-
դարտութիւն արարիք. և վասն այսորիկ հարցանեմ ես ձեզ
նախ՝ թէ առ ինչ արդեօք Բարեհաճան մեր Մխիթար ի ժա-
մանակի անդ, յոր այն ինչ զմենաստանս հաստատեաց ի Վե-
նետիկ բազում նեղութեամբ, և յոր ի բազում հոգս առանին
և արտաքին զբաղեալ էր, հապճեպ ի Հռոմ գնաց.
զբազաքն զայն առնել, թէ ամբաստանութեանցն որք
ի հակառակորդաց իւրոց առնել պատասխանի և արդա-

բացուցանել զինաց իւր և զիւրացն ի քարոզութեան։ . .

« Երկրորդ՝ թէ նա ինքն իցէ որ զնգոռ իւր և զծնաս փոխանց, թէ զարդէն փոխոխեալն ի զարուց հետէ պահեաց, և զայն ի հարկէ կանխաւկալ սովորութեան մուծելոյ և տարրացեալոյ յաղգն իւր առհասարակ, առ անհնարին ոգեւոր թեանն, մանաւանդ յուզադիտաց ոգւոյն, որոց իրրև մեռեալ հասեալ հանդրեալ զիտեցութիւնն զայն . . . այլ և ի հարկէ արդիօք ակամայ մոռացութեան, որով մինչ մարթ էր նոցա հասանել նպատակի իւրում. և ապացոյց բանից, ահա ձեզ օրինակքն բերեալ նորա ի բերանոյ թեան իւրում, յորս ունէք են ի գրոց նախնեացս, և հայիցէն բառնան զոր ինքն սկսաւ յօրինել և ձեռնամուխ աշակերտ իւր ըստ թելադրութեան նորա առաքելոյ։

« Նոյնպէս կամք էին նմա և չանք պահել զաղգային սովորութիւնն մինչ մարթ էր նմա ի մէջ օտար ազգաց, որպէս և տեսանի ի խրատս նորա որ առ աշակերտս իւր առաքեալ ի քարոզութիւն, և ի դնայս նոցա, ուստի որոյ ամրասանեցան ի յառինայեալ ազգայնոցս, և յուսանդութիւնս որք պատհեցան և պահին ցարդ առ յաջորդս նոցա։ . .

« Սակայ ինչ ևս որ զնգոռ իւր և զծնաս փոխեալոյ . և սակս իրաւացեալ զարմացայ և զարմացեալ եմ կարի յոյժ ընդ բանս նոսիանցի Վեհիդ, հայեցեալ ի խնդիրս յայս . և ոչ միայն չարի միայն, այլ և ցաւիմ յոյժ, երկուցեալ ի միտս տեսանայն որք ի կարծեաց սուտ ձերոց . և յիրաւի քանզի այդպիսի կարծեօք սասանեցուցանէք զհերս միարանութեան յաղգասիրաբնին անուն իւրեանց . . . և առ ինձ արդիօք այնուհետև վախճան աշխատութեան նոցա, չհամարիցայ յաղգս։ . .

« Եւ երրորդ՝ եթէ արդարև ևս ինքն էր որ փոխեալոյ զնգոռ իւր և զծնաս, սակս ընդէր նզովիցէ նզովէ միարանութեանդ առհասարակ զՏէր Բարեգէն և զհամախոհս նորա ուստի փոխեցոյ նոցա զնգոռ և զարարողութեան ազգին իւրեանց . . . և դուք ընդէր այնչափ վրէժխնդրութիւն միարանութեանդ առհասարակ ոչ իրօրինակս իւր միմիանս, ուստի փոխեցոյ

*նոցա պէտն մի բաս ի ժամադրքի իւրեանց, մնա-
ւանդ թէ պահեալ նոցա զիմոխեալսն յայլոց, ի Բար-
զեանց:...*

*« Եւ եթէ արդարեւ նա ինքն էր որ զայն արար, ապա
իրաւունս ունին Հայք մեղադրել զնա իբրեւ զիմոխիչ ազ-
գային արարողութեան, և զպատճառ հերձման ազգին: Արդ
ի լսել նոցա զայսպիսի կարծիս ի մէնջ, զորոյ զհակառակն
ամէնք ցարդ, համառօտագոյն նոքա ի կարծիս իւրեանց և
խորչեցան ի մէնջ խոսուն:...*

*« Տեսանէք, Գէր. Տէր, զվնասակար հետեւանսն որք
ի կարծեաց սոսկ ձերոց. ապա իրաւամբք ցուցցայ ես և ցա-
հիմ ընդ այս, երկուցեալ ի վնասակար հետեւանացն:... Թո-
ղիք համեմատել զարժանիսն Բարեւտակեանն մերոյ Մխիթա-
րայ, յանձնառութեան իւրում անդ, ընդ արժանիսն յայոց-
դաց նորա, ի յանձնառութեան իւրեանց սոսա: Եթէ այս յանձ-
նառութիւն ի ժամանակի անդ ի ձեռս նորա լեալ էր, զինչ
ինչ բարիս չառնէր նա ազգի իւրում, և ճրոխտ նշխարա-
թիւն չառնէր նա ի վերայ նորա:...*

*« — Մինչեւ ցայժմ մարտակ մարթեցայք ընդ ոտիս մեր,
« որոյ հանդոյն չկարծեմ, ասէք, թէ տեսեալ իցէ մարտնա-
« կեան, եթէ առնիցեն զերծանիցիմք ի ձեռաց նորա, խոս-
« նամբ Տեառն իցեմ: »*

*« Ասեմ ես առ այս, թէ չիցէ՞ լսեալ Վեհիդ զանցս հա-
կառակութեան որ կրեաց Մխիթարեանսն յԱրքայութեան
Գէր. Ստեփաննոս Ագոնցի, որ ոչ մի հակառակորդ իրրեւ
զՀառն առնէր նա, և զամբարտաւանութիւնք միայն էին
զնամանէ ի Հռոմէ, այլ բազում հակառակորդք և բազում ամ-
բարտաւանութիւնք, մինչեւ երդուեալ էին առնել քանդել
զվանս մեր և ի տեղի անդ կոթակ ցանել, և մինչեւ առասիկ
հրամարտակ ի կարտինալէ Ծառայցին հանել, և այն ոչ իրրեւ
զայս որ առ ձեզ կիրարտանեաց առատութեամբ, այլ յայտնապէս
և ի դառնութեամբ, հրամայեալ անդ Արքային ի ծուխս
անկեալ առաջի խաչերեցան զրկել ընդ գնացս իւր
և իրոցն... Հանդերձ արդելմամբ առարքութեան ի ար-*

պատանեաս և վաճառման ինչ ինչ նշանակեալ մատենից...

« Ի բանից առաւ կարէք գուշակել զառաքնապս և զգաւառն Արբայիւն և մարտնաւէնեան իւրոյ... առկայն ոչ վհատեցաւ նա, այլ արիաբեմբ արար պատասխանել և յայնմ ետուն ինչ առհասարակ... և զայն հանդերձ իրաւարէքն և հրոսքնաքն...

« Եւ ոչ այսչափ միայն, այլ և կամէր հանդուցեալ Հայր Գարբիէլ վարդապետ Աւետիքեան ջատագովել զինացս վեցերիւն անձանց ուխտս, որք առաջ ազգային մարտնաւէնեան պատուարանեալ էին հրապարակաւ ի Շուայիայ. և նիթ ձանձրութիւնն հանդուցեալ Գեր. Ագոնցին չէր խափան լեալ այնմ, առնելով առնէր նա զայն անխափան արիաբեմբ և խնամարեմբ իւրով ազգասէր ծերունին այն...

« Աւաղ, զի պակասէ արդ այսպիսի անձն ի մարտնաւէնեան...

« Անցեալքն ժամանակաւ մատուցեալ լինին խոպան, ներկայքն միայն յիշատակին... որպէս նեղութիւնք և միշտ առաջնոցն թիթև և ոչինչ թուին յաչս յետնոցն... իսկ իրենանցն՝ ծանր և անտանելի... Այսպէս են ճանաչումն և պատասան մարդկան, որ միտաց այլոց և միտաց իրենանց. բայց արդարութիւնն գիտաց և գիտէ պահել և յայտնել ըստ ճշմարտութիւն ականատես և ականջալուր արանց պատմութեամբ:

« Իսկ յաղագս բանից երկրորդ Թղթոյ Ծաւալոցին, զոր յիշատակէ վհտ և զոր ինձ խնդրատուս առնէ, սակս եա, նիթ այսչափ հետէ և անկախ գոլով վարժարանիս ի Ծաւալոցին՝ խափան դնէ նա շարժման տալին, և կախումն յիւրմէ առնել հրամայէ, ապա զինչ ինչ խափան և կապանս ոչ դիպէ նա ի միտս տալին, յորժամ միտձ առ նմին և ընդ իշխանութեամբ իւրով էպէ այս:

« Թէպէտ ի սկիզբն նամակի իւրում ասէ վհտ, թէ « Եթ առաքինութիւն իւր, որպէս խորհուրդ առ ի լսել « և զմեր կարծեա, ոչ Թէպէտ և ի Թուղթն իւր որ առ Վ. Հայր Գարբիէլ ասէ, թէ « Առանց հաստատակաց հաւանութեան

„ չառնէ ինքն ինչ, ոչ հայեցեալ ի նոր առաջարկութիւնն, „ սակայն դուշակեմ ես յայլ բանից գրութեան վեհիդ, և այ- „ ցս պիք ի Հռոմէական, զի յոյժ հակեալ երեւիք ի խորհուրդն „ յայն... վասն որոյ ասեմ ես որպէս և առացի ի նախընթաց „ թուղթն իմ, „ Մի մոլէ անձն իմ ի խորհուրդն յայն յաւի- „ տեան, զի վտանգաւոր է աղքատաց ազգիս, և մեր առան- „ ձին վանդամանայն: „

„ Զնոցանէն պարտուց վարժարանիս կանոնացեալ ի հոդա- „ ւոյ, որպէս զի հաստատուն բովանդակն և իմացի որոշ վճռամ- „ տոյ ծախք վարժարանիս և տացի ձեզ այն ըստ ժամանակին, „ և որպէս զի ի կարգի դիցի անդամ մի հաշուեգիրս յառաջ „ քան զդարձն այր Հ. Յակոբեանց. քանզի տեսի ի Պոլսոյ, որ ի Պօլսոյ, թէ յետ քանի մի ամսեանց վտանգաւոր նա դառ- „ նալ ի Փարիզ, թէպէտ և չգիտեմք արդեօք հրամանգոք „ ի Վեհէդ՝ զկնի այսչափ փորձոյ, և առ ինչ վտանգաւոր „ պատճառն նորա այր, մանաւանդ յայսմ ժամանակի, յո- „ րում անձինք վիճակաւորութեանս պակասին անդ, և առա- „ ւելուլ են. . . .

„ Զառնելով այլ ինչ կարեւոր ի ժամուս,

„ Մնամ

„ Գերապայծառ Տէրութեանդ ձերում

„ ի Փարիզ. 27 օգոստ. 1850.

„ Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Սակայն ի վերայ այսր ամենայնի, յոժամ պատրաստի գնալ Գեր. Հիւրմիւզ ի Հռոմ, յուրախակցութիւն Պապին դարձելոյ ի Կայիթայէ, ժողով վանական առնէ և առաջարկէ անդ վարհուրդ իւր, զվճռատրութիւն Մ. վարժարանին ի Հռոմ: Թէպէտ մերժէ ժողովն զառաջարկութիւն նորա իբրեւ զվտանգաւոր ինչ, այլ նա ոչ կասի ի խորհրդոյ իւրմէ. քանզի գնայ նա ընդ Հ. Ռաֆայէլի առ Խոստոյի վճռատրան որ ի Վենետիկ, և հարցանէ զվարժիս նորա որ ընդ այն խոր-

հուրդ իւր, և խնդրէ զօգնութիւն նորա յայն: Հաստատէ փառատրան զկարծիս նորա և ասէ նմա զիր յանձնարարական առ այլ ոք փառատրան ծանօթ իւր ի Հռոմ, առաքեցուցանել նմա ի գործ ն յայն: Խնդրէ ի նմանէ Վեր. Հիւրմիւզ զառանելն նորա և զայլ ոք ծանօթ իւր ի Փարիզ ի վաճառել զպատկեր Մ. վարժարանին, և զայն ծածուկ յիւրոյն անդ. և այսպիսի խորհրդով և պարտաւորութեամբ դնայ նա ի Հռոմ, ուր զբաւանէ զմիւս փառատրանն, և առաքեցուցանէ նորին ակբաւանէ ի գործ դնել զխորհուրդ իւր, այլ բան բաղդին աղբատաց ազգիս ոչ յաջողի խորհուրդ նորա, և յայտնի այն Հօր Սարդէի, յորմէ յանդիմանի նա բան արժանաւոյն, զոր ուրանայ նա անպատկառաբար, և զոր հաստատէ Հ. Սարդիս Համեմատ հաւատոյ, որպէս տեսցի ի միւն ապա բան կարգի պատմութեան:

ԴԱՍԻԽ Ա.Դ.

Չղշակաւն բոզդ Հ. Պետրոսի առ Գեր. Հիւրմիւզ. — Պատճէն նորին առաքի առ Հ. Սարգիս. — Պատասխանի Հ. Սարգսի առ այն բոզդ. — Գանգատ Հ. Սարգսի զգնացից Հ. Եպոյեայ. — Ընդդիմնորհեալ ընդ վերատին դարձ Հ. Յովհաննիսի ի Փարիզ. — Պաշտպանութիւն վիրապնաւի ընդդէմ բղխնաւեաց նորա յօտարից. — Յայտնութիւն գաղտնի խորհրդոյ Գեր. Հիւրմիւզի. — Պատճառ յանկարծ և. փոքրոյ գնացոյ Գեր. Հիւրմիւզի ի Հռոմ. — Յանդիմանութիւն և. գանգատ Հ. Սարգսի ընդ այլ խորհրդոյ և. ընդ այնպիսի բազդատութիւն Գեր. Հիւրմիւզի. — Աղաչանութիւն Հռոմայ ունել վիրապնաւեայ վանականոցն իւր ի Պօղոս. — Էութիւն Հ. Սարգսի ընդ այլ. — Կարի և. դրոշտուն Գեր. Հիւրմիւզի ընդ անհնազանդութիւն վանականացն ազգիս ի Մոռոնոսն վարժապետի. — Պատասխանի Հ. Սարգսի ընդ որոշեալն Գեր. Հիւրմիւզի ընդ անհնազանդութիւն վանականացն ազգիս ի Մոռոնոսն վարժապետի. — Գործակատարութիւն Խոսրոցոյն Թօֆիքհանայ. — Ջանայ Գեր. Հիւրմիւզ արդարացուցանել զանպատեհն գնացս իւր անհնազանդութեամբ վանականացն. — Յանդիմանեալ և. ցուցեալ զայն Հ. Սարգսի հաւատացեալ.

Հ. Պետրոս Վիճանսն սկսաւ ամենայն ինչ ստանալ ի Հակոբայ, ինչ կոչի ի Տրապիզոն ի Վենետիկ, զոր Հրամայեր կարգել Պատրիկն, և անտի գնայ ի Հռոմ յարդարեցուցանել զինքն, որպէս զի կարիցէ վերադարձն գառնալ ի Տրապիզոն, թէպէտ և ոչ հասանէ նորա ամի իւրում, հրամայեցի գոլ Հակոբայն. զի նա անտի թուղթ մի ղրկասցէ առ Գեր. Հիւրմիւզ, յորում անվիրս յանձնարարեալ և ձանձրալի երկարաբանութեամբ խառնեալն զանխոհեմ գնացս իւր ի սկզբանէ անտի մինչև ցայն օր ծանուցանէր, և խնդրէր յՈմրայէն թողութիւն ընդ

այն, այլ և ցանկայ զի ընթերցցին զայն ամենեքեան որ ի վանս և այլուր: ... Թուղթն այն զղջական լսոտ քմոյ և. հաճոյ լինի Գեր. Հիւսիւզի, վասն որոյ առաքեաց նա զպատճէն թղթոյն առ Հ. Սարգիս, զի ընթերցցի զայն, թերեւս օրինակ անտի առցէ... ընթեռնու Հ. Սարգիս զայն և առնէ նմին զարժան պատասխանին, օրինակ գայս.

„ Գերապայծառ Տէր.

„ Ըստ ակնարկութեան ձերում ընթերցայ զպատճէն զըղջական թղթոյ ամենախեղճ Հ. Գեորգեին մերոյ, և ցաւեցայ առաւելապէս ընդ այժմեան միաբան խղձահարութեան նորա, որ թերեւս հաճոյ եցէ Վեհին, քան զոր ցաւէի միշտ ընդ միաբան կամակորութեան նորա, որով առաւել անհաճոյ և արհամարհ իսկ էր նա յաչս ձեր և այլոց ամենից, քան յաչս իմ, պաշտպանելով իմ զնա երբեմն ի բանս լինէ լրտեսի, և ապառնալով ձեզ չթողուլ զնա միաբնակ և ինքնագլուխ յոր և եցէ լրտ, ճանաչելով զհանգամանսն զկոյ նորա: ...

„ Տակաւին չեմ ես մոռացեալ զինդպրութիւն նորա որ ընդ գլուխ միաբնեանց չարժանն, և որ ընդդէմ կարծեաց և փորձոյ ամենայն մեքենագործաց հանգրէն Եւրոպիոյ. այլ թերեւս մոռացեալ եցէ ինքն զրել առ ձեզ զղջումն իւր և ընդ այն եւս. զի ըստ լրտիւ սկզբանն ունէր արդեօք հրամանն ի մեծաւորէն իւրմէ, զրեալ էր գիտուս իւր կոչելոյն, վաստակեցուցանել զնոյն միտն ի քննութիւն այսպիսեաց, և գիտաս իւր ձգտել ի կատարումն խորհրդոյ հանգստաւոր ամենեցուն, հանդերձ ճշտութեամբ 500 ֆրանգաց ի գրամոց վարժարանին:

„ Յայտնեալ ի միտ առնես Վեհդ և զայն, թէ արդեօք ամենայն էր, չասացեալ թէ միաբանիւք իսկ, յանելոյ զգուշութիւն, ի կատարել զանձինս ցանկալոյ հանգստեան նորա, որպէս ասէք, աշխատասէր առնել զոմն յեղբարցս յօրինակել զձանձրալի երկարաբանութիւն նորա. զի արդեօք ինչ ապացոյցութիւն ունէր միաբանիցն զայդ օրինակ ձեռնարկից միաձեռն, նոյնչափ գնահատ

յն կարծեցեալ բարի օրինակ խղճահար միամտին... և յերանի քանզի ի փորձոյ գիտեմ, թէ այսպիսի միամիտք ի ծայրայեղ մոլորութիւնս անկեալ, և որ այսօր ի մոյ ծայրէ յանդգնութեան և անհնազանդութեան, ըստ բանից իւրոց, անկեալ է ի միւս ծայր խղճահարութեան, ոչ ոք երկբայեացի ապաքէն, թէ վաղիւ դարձեալ ի միւս ծայրն անկանիցի, և չարագոյն եւս արդեօք։

« Ասացի թէ յաւելիք ինձ ցաւս, զի ահա այսպիսի անձինք, և այսպիսի խորհուրդ և կարծիք են, որք ունին այսօր և յայսմ դարու զաղգ մի ողջոյն լուսաւորել... աւա՛ղ ընդունայն ակնկալութեան կարօտ ազգիս, և զուր աշխատութեան ճոխ միաբանութեանս. ապա աւելորդ համարիմ յիշատակել սատ և զլարմանս մտացս և զցաւս սրտիս միանգամայն, որ ընդ յանկարծ և հարեւանցի լուրն և ընդ անժանօթ մեզ սատ եղելոցս նպատակ գնալոյ ձեր ի Հռոմ այսպէս հապճեպ... զի ծնունդք են մտաց այսպիսի անձանց զորոց վերագոյն յիշատակեցի. . . . . . .

և ապա ինձ միայն ոչար ակնարկութիւնս առ Աստուած զի՞նչ զի նա ինքն ողորմեցի զժբաղդ ազգիս և խնդճ միաբանութեանս։ . . . . . .

Եւ ահա այսու ցաւագին սրտիւ

« Մնամ

« Գերապայծառ Տէրութեանդ

« ի Փարիզ. 11 մայս. 1850.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԼՈՒՐԵԱՆ. »

Պատմական Հ. Սարգիս տուեալ թղթոյ Գեր. Հիւրմիւզի, յորում դանգատի զինացից Հ. Եսայեայ ի հատուցումն պարտուց վարժարանին, և զրացարձակ իշխանութենէ նորա ի պաշտօն յայն գործակալութեան կարուածոց Մ. վարժարանին, այլովքն հանդերձ... և ոչ հարկ համարի զվերատին

պարձն Հ. Յովհաննու ի Փարիզ, ի հաստատանել պարտս տպարանի վանացս, զորոյ մասն հաստատեալ էր, և հաստատէր զբոլորն, օրինակ պայս.

« Վերապայծառ Տէր.

« Ցգանկալի պրեալն Վ. Հ. որ ի Հռոմայ ի 14 սեպտեմբերի ընկալայ ի 24 օրին ամսոյս. չնորհ յոյժ ունիմ Քանից ձերոց որ ընդ հաստատուն Տպագիտալ պարտուց վարժարանիս, տեսեալ զայն արդեամբք լաւ մասին. բայց յանձն առնել ձեր զհոգ Տպագիտալ մասի նորին Վ. Հ. Եպսկոպ, չիրեւ և չիմ ցի երբէք կատարուն յանձնարարութեան ձերոյ, որպէս և յայտնի տեսանի ի բանս Թղթոյ նորա որ առ Վ. Հ. Գաբրիէլ, և որ ունի այսպէս.

« — Թէ և Գեր. Սրբոյ յանձնեալ էրինձ յղել ձեզ առա-
« էլպազոյն մասամբ զղրանս առ ի հաստատուն Տպագիտալ
« պարտուց վարժարանիդ, այլ ցաւիմ զի կարողութիւն իմ
« զօրէ լաւ գոյն և ոչ Թէ լաւ չգոյն. վասն որոյ աղաչեմ
« անդադար կացուցանել զիս յոյսի մասին: »

« Ահա ի բանից նորին ասի և ի գործոյն տեսանէք, զի չեղեւ և չկոյ երբէք կատարուն յանձնարարութեան ձերոյ, հաստատուն պարտուց վարժարանիս ... և ահա վասն այսորիկ էին երբեմն բանք ապստամբութեան իմոյ, Թէ չէ պատշաճ իշխանութեան և ի կամս մերոյ միայն անձին և այսպիսի անձին Թողուլ զդպրոցականութիւն կարեւոր վարժարանիս, զորոյ գիտէր զօրութեան, այսինքն Թէ ունի նա արժանի ի ձեռին իւրում, և կամ չունի զայն բնաւ, ոչ անձամբ գիտէք, և ոչ ձեռամբ այլոց անձին իմմանէք. այլ բանից նորա միայն հաստատէք և լուէք ... և կարծեցեալ տեսուչ վարժարանիս պարտ ի համբերել և գինչպիտութեան կամաց նորա հպատակել, անձանձիր գոլով խոպան հանդամանաց կարեւոր վարժարանիս, որպէս և անձանձիր և այնմ, Թէ արդեօք օրըստ քաղաքավարութեամբ եցէ այն գրով ծանուցումն առաքեալ հանդերձ կարգաց նոր առ և անդ, Թէ դրամագլուխ վարժարանիս ոչ

միայն ասիրող կայ, այլ և ածգեալ է. և այն յայսմ ժամանակի և ի հանգամանս, յորում աշխարհ ամենայն մեզադիր լինի անզգուշութեան մերում, և առկառութեան աշակերտաց վարժարանիս, և տեսուչն առնի պատասխանել ամենեցուն, թէ պատճառ առկառութեանն է նուազգոհութիւն դրամոց:

«Ուղիղ և ամենապատշաճ մատակարարութիւն վարժարանիս ...

«Ի պատեհութենէ առի և ի պարտուց խղճի մուացս, մանաւանդ յայսմ ժամանակի և ի հանգամանս յոր կայ վարժարան, ունիմ ազդ առնել ընդ այս և այլ առաջարկութիւն մի, եթէ հաճեացի Վեհգ լսել յինէն և պատշաճ արդեաք դատի կատարել, խորհելով միայն զօգուտն հասարակաց, և ոչինչ ակնածելով ի մանուածոյ:

«Իսկ յաղագս բանի պարտուց տպարանի վանացս, եղելոց ձեռամբ Վ. Հ. Յովհաննու, ասէք, ըստ բանից նորա, և կարելոյ առնուլ և հատուցանել զամենայն պատշաճեալն առ այն, որք ցրուեալք են առ արհեստատուն:

«Ասեմ ես, թէ մինչեւ ցարդ հաստուցած մեք զայն իրրեւ երկուհազար չորեքհարիւր ֆրանք, հատուածեալ զայն արդեամբք. հաստուցուք և զմնացեալն նոյնպէս, յորժամ յանդիման լիցի մեզ այն. եթէ չկարծեմք հատուածել զինչ ինչ արդեամբք ի պարտուց անտի, և կամ երկբայիցիմք ընդ այն, դրեալ հարցցուք զայնմանէ ի Վերատեսուչի Հ. Յովհաննէսէ որ արդ և գտանիցի նա, առանց վայրապար և ի զուր ծախուց հանապարհի երթեւեկելոյ նորա այր և այդր, և գուցէ առաւել արժիցին ծախք հանապարհի նորա, եթէ վասն այնորիկ միայն կամի նա գալ այր, քան զկարծեցեալ աւելի պահանջս արհեստատրացն:

«Ապա չկարծեմք մեք առիպողական և կարեւոր զպատճառս նորա այր, թողեալ զայլ ընդարձակ և զանհաճոյ հետեւանսն որք ծագիցին անտի արդեօք, զոր և կարիցեմք դուշակել, յորժամ տեսանիցեմք զգանգատանսն հաշուի ծախուց վարժարանիս այր ամի, ընդ անցեալ ամաց ծախուցն... և ահա առցի զամենայն անաչառութեամբ, զոր հարցիք, և զոր

պարտ անձինս համարեցայ առնել. ինոյ վ. եհիդ խորհել և առնել որպէս և հաճոյ թուիցի :

« Մնամ

« Վերապայծառ Տէրութեանդ ձերում

« ի Փարիզ. 23 սեպտ. 1850.

« Ս. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ Հ. Սարգսի, օրինակ գայս.

« Յարգոյապատիւ և Վերապատուելի Հայր.

« Յառաջ սրտիւ ընթերցայ զգաւառիկ թուղթդ գրեալ ի 11 սեպտեմբերի, Բարւոք է և գովելի նախանձ ձեր որով առաջնքն. բայց մեր Լանք արդ այն են՝ պահել ի հասուչ դիտարանութիւնս, զի յանցանել մերկիս և ի փոխել հանգամանաց ժամանակիս՝ կարող լեիք զգանկացեալն ըստ որպէս պարտն է ծառայել ի տուտպեալ և ի պատակոտել ազգիս. ապա թէ ոչ՝ զինչ շահ լեիք եթէ ձիջուցանիցեմք ի սպառ ըղծրագն լուցեալ ի Մխիթարայ. լաւ է սակաւն և մեղմով՝ քան շատսն և ոչինչ :

« Իսկ նպատակ գտանեմս ինձ այսր ի Հռոմի ոչ նոր ինչ էր, այլ այն իսկ որոյ վասն ի հնգից ամաց հետէ կամեցեալ գալ և խոսանիլ՝ այն ինքն է՝ յողջոյն յորդորելոյն Արքայանին՝ և ի խօսել առ նա և առ ծերանաւորս անձամբ նոա զերաց միաբանութեանն՝ որպէս արարի իսկ և առնեմ քան զրելոցս ի թղթիս որ առ Վ. Հ. Գաբրիէլ, զոր և ընթեռնուցուք, և աղօթեալք, զի և ի Տեառնէ լիցի մեզ յաջողութիւն :

« Ընթերցեալ առ և զխորհիլ զառն և թուեալից առաքինութեանց առնէն զՀամազգեաց ընկերութենէն և զմէնջ և զկրօնաւորաց առհասարակ, սեաի ինձու և զԱռն

*նորա ի վակել զկրօնաւորս ի վանաւոնս, զորմէ և քարոզ-
զարն ինքն առաց համարձակ՝ թէ հարկ լցէ ձեզ կամ թողուլ
զՊօլիս և երանել և կամ ժողովիլ ի վանաւոնս, յոր բարեաք
առնիցէք, ասէ, և օգտակար վասն ձեր կանխել և վաստիլ՝
եւ զի արդարեւ օգտակար եղիցի մեզ այն, մանաւանդ զի
զիւրացոյն արդեօք յաջողեսցի մեզ այդ հանդերձ հրամարա-
կական մատրամբ առանալ տեղի ի Ներա, ուր չեւ եւս են եկե-
ղեցիք ազգիս, և Յակէն գհետ է ամենայն Հանիւք ի առացումն
այնոցիկ, վասն որոյ պարտէ և մեզ խորհել ի առացումն վանա-
ւանն, առ որ խոհան մեծ է ազգաւորիւնս մեր: Գրեցի
զայսմանէ և ի Պօլիս առ ոմանս ի մերոցն, զի լսելեաց խոր-
հեսցին ի հնարս օգտակար իրացն:*

“ Սիրալիր ողջունիս եղելոցն առ ամենեսեան

“ Յարգոյ Վերապատուութեանդ

“ Ի Հռոմ. 2 Հոկտ. 1850.

“ Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՄԻԶ
“ Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. ”

*Պատասխանի Հ. Սարգսի առեալ թղթոյ Գեր. Հիւսիւզի,
յորում յիշատակէ զպատճառութիւնն, որով մարթ էր միա-
բանութեան զառաջն առնուլ միրկին այնորիկ, ամբաստա-
նութեանց թշնամւոց, և որով հաստատուն պահել զմիաբա-
նութիւնն, և միշտ վառ զլուսնալ ճրագն որ ի Մխիթարայ,
և յայտնէ զգաղտնի նպատակ յանկարծ և փութով գնալոյ
նորա ի Հռոմ, առ ի փոխադրել անդ զՄ. վարժարանն,
և զորութիւնսն առաւծոյ չհասանել նպատակի իւրում, և
յանդիմանէ զմիտիկս գնացս նորա, ցուցեալ զայս ամենայն
հաւատոյնք օրինակ զայս.*

“ Արհիպատիս Տէր.

“ Ձեռ երկար համբերութեան և մեծագոյ խոհեմութե-

*թեան ընկալայ ի 11 ամսոյս զցանկալի նամակ Վ.ևհիդ, կը-
բեալ ի Հռոմէ 23 տրին ամսոյս, և ծանեայ անտի յոյնա-
մայս զցաւած սրտիս ընթերցումիդ նախընթաց թղթոյս, և
զաղէտարարութիւն բանիցդ ի չախաւորութիւն ցաւալից զրու-
թեանս առ ձեզ։*

*«Ա.ռ այս առեմ, հանդերձ հայցմամբ թողութեան ընդ
անուշաուութիւն բանից և այս զրութեանս, թէ բարւոք լինէր
և օգտակար յոյժ արդեօք մեզ և տառապեալ և պահակեալ
ազգիս մերանգամանին, եթէ մերայնութիւնս զառաջն առեալ
էր մերկիս այսորիկ, այս ինքն, եթէ զիտացեալ էր ի կիր
առնուլ զպատեհութիւնն զոր ունէր ի ձեռին իւրում, յայ-
զեալ նմա ի Տեառնէ։*

*«Եւ եթէ ի կիր արկեալ էր նա զայն, որպէս պարտն էր
և արժան, ... ոչ միայն չէին նմա արդ չանիկ ինչ պետք ի հաս-
տոչ գինքն պահել, այլ և զմատաղատունկսն ի քնաւակար
հողմոց ինքնին պաշտպանել ... և ոչ միայն չկայր նմա այժմ
երկիւղ շիջուցանելոյ զձրագն շուցեալ ի Մխիթարայ, այլ և
պայծառութեամբն իւրով շլացուցանէր զաչս ամենայն և թըշ-
նամեաց իւրոց առհասարակ, մինչեւ չկարել նոցա տեսանել
զդէմսն անգամ, մող թէ նշմարել զշուքն յեղերս ականն.
զի զործունեայ կամաց և արդեանց պէտք են առաջի մարդ-
կան, մանաւանդ յայսմ դարու և ի հանդամանս աշխարհիս,
և ոչ լոկ բանից և կարծեցեալ խոհեմութեան, զսակաւն և.
զվեղումն չար հատուցել չար զտտապարտն և զոչինչն։*

*«Յաղագս յանկարծ և ճեպով գնալոյ Վ.ևհիդ ի Հռոմէ,
ասէք, թէ «Նպատակ զաղտեան լինոյ այսր ի Հռոմէ ոչ
«նոր ինչ էր, այլ այն իսկ, որոյ վասն ի հնուէ ամսոյ հետէ
«կամեցեալ գալ և խոտանէի, այն ինքն է յողջոյն յար-
«դեանն Աբրահամեի, և ի խօսել առ առ նա և առ ծիրա-
«նաւորս անձամբ նա զերաց միաբանութեանս, որպէս արարն
«իսկ և առնեմ ըստ պրեցելոյս ի թղթիս։»*

*«Եւ առ այս ասեմ, թէ այո՝ նպատակ գնալոյ ի Հռոմէ
ոչ նոր և անծանօթ էր մեզ առ, ծանուցեալ ձեր մեզ զայն
հինգ ամսօք յառաջ և զկարծիս մեր հարցեալ ընդ այն, զոր*

և մեր պատշաճ և կարեւոր համարեալ՝ յորդորեցաք և քաջալերեցաք զՎեհդ գնալ անդ ըստ ժամանակին, մինչդեռ այն ինչ դարձեալ էր Սրբազանն ի Հռոմ, և մինչդեռ ասէին ձեր Գեր. Հայրն անդ էր, և զչարախօսութիւնս իւր որ զմեզ չեւ էր ի տխուր արձանացուցեալ և ի մխոց ծիրանատարած և Սրբազանին զայն հաստատեալ։ Բայց յետ հինգ ամսոց անցելոց անտի, և յետ ընդունելոյ ձեր ի ծաւալոցէն գիրս վարուակս և զայնիսիկ հրովարտակս, չկարծէաք մեք ատ բնաւ, թէ Վեհդ այնուհետեւ ի Հռոմ գնայր, և այնպէս յանկարծ և ձեռով, մինչեւ օր մի և եթ յառաջ գրեալ ծանուցանել մեզ զայն ատ։

« Թէպէտ մեք լուեալ էաք զայն յայլուստ, ի Թօֆֆօլեայ, և եօթնեւկօք յառաջ քան զառհմանեալ օրն եւս մեկնելոյ Վեհիդ ի Վենետկոյ, միանգամայն և գրեալ իսկ նպատակն գնալոյ և ձեռով գնալոյ ձեր ի Հռոմ, և ոչ այլ իսկ որոյ վասն ի հնգից ատենց հետէ կամեցեալ գնալ և խաղաղութիւն, քան քանից թղթոյդ։

« Այլ ողջմտութեամբն Աստուծոյ և պաշտպանութեամբն Սրբոյ Աթոռոյ մերոյ ատ աղքատ մանկունս ազգիս, խաղաղեցաւ վտանգաւոր խորհուրդն այն, և փոխեցաւ կերպարան իրաց. և ապացոյց այսմ, ահա յանձնարարութիւն ձեր որ ատ այլ ոք ի Փարիզ ատ Թօֆֆօլէ, չանալ նորա վաճառել զպատառս, և չչանալ բնաւ ընդունել ատ զհակառակն հրամանագրին որ ի Խաղաղաբէնն, ընդդէմ ազատութեան մերոյ ատ, որ ի Լուի-Ֆիլիպէ և այս ամենայն ի ծածուկ և զանխտ ի մէնջ ատ, պատուիրեալ ի ձէնջ ատն այնմիկ, զոր յանուանէ միայն և ի ձեռն այլոց ճանաչէք և ոչ անձամբ և ուղղակի։

« Ահա ապացոյց նպատակի գնալոյ Վեհիդ ի Հռոմ։

« Եւ ահա կրկին ապացոյց միամիտ և խեղճ վարչութեան վտանգութեանն յայտ ժամանակի, յորում Աստուածն կամ խորհրդականք իւր ատաւել հատատն զգալանիս վտանգութեանն օտարաց և անծանօթից, քան վտանգից իւրեանց և վաստակաւորաց ի գործս։

« Արդարեւ խեղճ վարչութիւն, որոյ ծանր լինի ատաչի

նոցին իսկ օտարաց, որոց յանձնէ զգործս և կրօսանէ զհամբաւ իւր խոպան։

«Ասպա իրաւամբք առաղնի ևս զինդոռևայն ակնկալութիւն կարօտ ազգիս, և զգոչր աշխատութիւն ձոխ միաբանութեանս, որ ունի այսպիսի անձինս, և այսպիսի խորհուրդ և գործս, և որովք ունի այսօր և յայսմ դարուս զազգ մի ողջոյն լուսաւորել։

«Զկամիմ ես արդ հարցանել զկանս վեհիդ, թէ ընդէր կամեցաք զվոխատրութիւն վարժարանիս այդր ի Հռոմ, զի Տէր էք դուք բացարձակ և իշխանութիւն ի ձեռին ձերում է այսօր, թէպէտ և ասէք թէ առանց հաստատակաց հաւանութեան չառնէք լինչ։ Այլ հարցանեմ ես միայն, թէ ընդէր այդուամ և անժամանօթի ձեզ գիմօք յանձն առէք վառճառել զպատասխս, և զայն ի ծածուկ և գանխուլ ի մէնջ նման պատուիրել։

«Մինթէ հակառակ էաք մեք առ եղեալս այս կամաց ձերոց։... Ո՛չ ապաքէն մեք առ և մանաւորապար ես ինքն էի որ զայս կարծիս ձեզ առաջարկեցի նախ, և վասն այսորիկ բազում և երկար խոհիս դրեցի առ ի համոզել զձեզ վառճառել զպատասխս, և դուք հակառակեցարջք կարծեաց իմոյ առանձին և վանականն ժողովէք, բազմախոսելգ զկարծիս իմ նսեմացնել, և վասն այսորիկ կորուսաք մեք զպատեհութիւնն զայն։

«Ասպա ընդէ՞ր այժմ ի ծածուկ ի մէնջ այդ, և զայն յինէն ես, յորմէ նախ այդ ձեզ առաջարկեցաւ, յինէն ես, որ ի ձէնջ կարդեալ տեսուչ վարժարանիս եմ, և յինէն ես ի վախճանի, որ զանս երեսուն և երկք ոգւով չափ աշխատութեամբ ի գործ յայս վարժարանիս վառառեցայ։... Այսպիսի՞ պարտ է լինել արդեօք քաղաքավարութիւն Առաքելորդի և կրօնաւորական Առաքելոյ ընդ հպատակս իւրոց։

«Ո՛չ ապաքէն արդարանալով արդարանամ ես ի բանս գրութեան իմոյ որ առ ձեզ ի 21 Նոյեմբերի, 1846. և զոր աւերդ համարիմ երկրորդել առ, ճշմարտակ այնր առա-

ելութեամբ իմն, հանդերձ առաւելութեամբ ցաւոք սրտի, ըզնդ առաւել ճնշոս հասարակաց։

« Ահ, Գնր. Տէր, գիտացիք և հաւատի լինիք, զի այսպիսի և այսպիսի քաղաքավարութեամբդ մինչեւ ցարդ, վճարեալ էր իմ և այլոց ընդ ձեզ յաւխտան, ... եթէ չունէաք միք ի սրտի մերում վառ զկայծակն ազգասիրութեան և հասարակաց, ակնկալեալ տակաւին հարազատութեանդ և ուղղութեան ի հասարակաց ողորմութեամբն Աստուծոյ։ Վասն որոյ աղաչեմ զձեզ, կամ փոխել զքաղաքավարութիւնդ, որով վարեցայք ընդ իս ի չորից ամաց հետէ, և կամ դադարեցուցանել զգրութիւնդ առ իս, որ զերաց վարժարանիս և հասարակութեանս, տեսանելով ձեր, զի չկարացի և չկարեմ ես լռել երբէք ընդ ձեզ ինաս աղքատաց ազգիս, և ընդ նախատինս միաբանութեանս, ակնածեալ ոտանք. և տեսանելով իմ զի ընդունայն են ազդարարութիւնքս առ ձեզ, արհամարհելով ձեր զայն միշտ զանազան կերպարանօք, մերթ յայտնի ընդդիմութեամբ, և մերթ խոհական կարծեցեալ լռութեամբ... Բոլոր ասել զդայթագղութեանդ միամաց և կարծեցեալ երկմտածաց։

« Այսր աւելորդ համարիմ ես այժմ յիշեցուցանել Ձեհիդ զանօգուտ և զանմխիթար ելից ճանապարհորդութեանդ, որ ըստ խորհրդոյ երեկեան ոմանց և անխորհ խորհրդականացդ և զայն հաւատոքդ և ի փորձոյ ցուցանիլ ձեզ, եթէ ծանուցեալ էիք ինձ յառաջագոյն զերթ ձեր անդ, գիտի ընդունելոյ ձեր անտի զհրամարտական։ Բայց այժմ անագան է և անօգուտ, գուցէ և վնասակար ես, հայեցեալ ի համրամանս ժամանակին, և ի տեղին, ուր պարտ է ուղղել զգիրս... Բոլո՛ր զայն ապա, յետ փորձելոյ ձեր անձամբ զամենայն և դառնալոյ ի վանս Տէրամբ։

« Ա՛ռ այժմ զայն միայն յուշ արարից, զի ահա ի պատճառս այդպիսի անխորհ վարչութեան այսի անկաք մեք առ յայտնեցուցանելութիւնս և ինախատինս, ի չհաւանել և ի փոխել ձեր զթուղթն թելադրեալ ի փորձ առելոյդ խորհրդով գոլ երանելոյդ, զորոյ գիմաւորութիւնն դուք ինքնին

խնդրեալ խոստովանեցայք, այլ անապան և անօգուտ, և որում հարկ ուրեմն արդ դարման առնել առաւելիք:

«Յառաջք զի չյաւելցի յանպատեհութիւնն և այլ անպատեհութիւն, չգրեցայ առ Թօֆիքոլի մեզադրութիւն ի յայտնել նորա մեզ աստ զծածուկ և զպարմանալի քաղաքավարութիւնն որ ի ձէնջ այսր. զի չէ նա արժանի մեզադրութեան, այլ այն որ զօտարսին եղբարդ իւրոց նախադասեաց, յայտնելով նմա զգաղանիս հաւատոյդ. այն զի և չկարէր նա զառանձին պատուէր ձեր կատարել, առանց ծանուցանելոյ մեզ զայն, չունելով բնաւ ծանօթութիւն վերոյ մերոյ: Ապա զգուշացի այսուհետեւ որ անզգուշութեամբ խօսեցաւ և ծաղր եկաց:

«. Երկրորդ՝ Լանք և հնազանդ Գեր. Ագարեանի ի ձեռս բերել յԱւետարիոյ Տէրութենէն տիտղոս Պարոնութեան Ալեքսանդրի Ռոֆայէլի զոր անմիտ փառասիրութեան նորին։

«. Երրորդ՝ անհնարին նախանձայուզութիւն և խորամանդ հնազանդ և յօրդոր Գեր. Ագարեանի առ Ալեքսանդր Ռոֆայէլ և առ Յովհաննէս Մուրատ պահանջել ի միաբանութենէս ըստհաւիս Մ. վարժապետին ձեռամբ Ավետարիոյ տէրութեան, և ի չհասանել այսմ ցանկութեան ցաւի նա յոյժ և չդադարի բնաւ ի յորդորելոյ զԱլեքսանդր Ռոֆայէլ և զՅովհաննէս Մուրատ ի պահանջումն յայն իրրեւ պարտք խղճի մերում։

«. Իսկ բանք և նպատակ զրութեան այլոց ոմանց ի միաբանիցն նորին անտի, էին խնդրուածք և յորդորք յօժանդակել նոցա ի տպագրութիւն մատենից իւրեանց, և ի հաստատութիւն փոքրիկ իմն գպրոցաց առ և անդ ձեռամբ իւրեանց. այլ և գանդատ զվատնոզաց արծաթոյ գպրոցացս, և այս մանաւանդ և ընդարձակ գրեալ կայ ի Թուղթն Հ. Վեցմաւեանին որ առ Ալեքսանդր Ռոֆայէլ։

«. Վեղծաւոր և չարաշահ բարեկամութիւն Գեր. Ագարեանի որ ընդ Ալեքսանդր Ռոֆայէլի յայտնի եղեւ զկնի մահու նորին. քանզի չգրեաց նա գիր ինչ միխիթար առ եղբայրն

քա Լուխ, և ոչ ծանոյց նմա զաւանդեալ արծաթիկ հանգուցելոյն, հնգետասան հազար ֆրանք։

« Տաց Վեհիւդ համառօտ ինչ տեղեկութիւն և զաւագուածոց հանգուցելոյն և զրամիոյ ժառանգութեան իւրաքանչիւր ժառանգաց նորին, հանդերձ դնտելոք ի միխիթարութիւն ձեզ արդեօք։

« Թէպէտ և ոչ ի հայելին և յանդիմարին գրուածս հանգուցելոյն գոյ իրապատում հաշուեկիրք առաջուածոց նորա, բայց ի հաւատուց հաւատարելոց ի Քանչէլիէրին և ի Նօտարաց՝ երեւի թէ որչափ ինչ առաջուածք են նորա, այլ և ի տարեկան եկամտից նոցին նշանակելոց ի հանգուցելոյն ի տեարակի միում անցեալ ամի, որք են երկոտասան հազար լիրէ տարեկան, երեք առ հարիւր չահ. զրամագլուխն լինի չորեքհարիւր հազար լիրէ տեղին, որոյ երկուհարիւր հազար է ի վերայ գետնոյ և տանց՝ գնեալք ի հանգուցելոյն, և երկուհարիւր հազար ի ձեռս Քանչէլիէրին, յեկամուտ անդրանկաց Եդուարդ Ռաֆաէլի։

« Այս ամեն բան կտակի Եդուարդայ և բան օրինաց Անգղիոյ անկանի Լուխի, և յետ նորա անդրանկանն Յովհաննու Ռաֆաէլի, և ոչ այլ ժառանգաց նորա։ Ապա անկանի Լուխի բաժին ժառանգութեան իւրաքանչիւր Աղեքսանդրի հարիւրհազար լիրէ տեղին, և սեփական առաջուածքն նորա հարիւրհազար լիրէ տեղին. ընդ ամենայն երկուհարիւր վաթսունհազար լիրէ տեղին, և եկամուտ նորին ի տարեկն ութհազար լիրէ տեղին։ Զայս բերանով իւրով խոստովանեցաւ նա, և ընդ այս առաջի նմա թէ պարտական է առնել բարերարութիւն ինչ կարօտելոց ազգին իւրոյ, զոր և խոստացաւ նա առնել, եթէ տացէ նմա Տէր ընչեղն զայն, որ բան ճշմարիտ բանից ժողովելն, և զոր վաստակեմ և երկիւղս յիշեցուցի նմա։

« Ի գարնան լսեմ ի Լոնտոնէ ընդ Պուլոյն կամիցս ես հանդիպել Յովհաննու Մուրատի, որ ամուս հետէ անդ բնակի, հարցանել ցնա թէ միտչես ցերբ յամառելի յանվախ հաստատութեան իւրում, որ ի վեսա ազգատոհմ ազգիս և

ի նախատինս անձին իւրոյ : . . . Ընկալաւ նա զիս քաղաքավարութեամբ, և յետ հարցանելոյ զողջոյնէ միմեանց, եղեւ զրոյց մեր զցաւալից մահուանէ Աղեքսանդր Ռոմփայէլի քեռոյ իւրոյ, և յասել նորա թէ ոչ վայելեաց նա ինչ ի կեանս իւր, և ոչ եթող յիշատակ ինչ արժանի գովութեան յետ մահու իւրոյ, առակի եւ . Ո՛չ ապրէն ճշմարիտ է առակեալն թէ որպէս կեայ ոք՝ այնպէս մեռանի . և ո՛չ ապրէն յորինել էր առ քաջիկ ճանապէն զանազանութիւնն որ ի մէջ Սամուէլ Մորատի և Աղեքսանդր Ռոմֆաէլի :

“ — Ա՛հ, սիրելի Պարոն, առաջ, եթէ ճանապէին դու “ զմեծանձնութիւն հանդուցեալ հօր քո, և զերանութիւն “ ժառանգութեանդ, ոչ այնպէս վարէիր դու ընդ միտրա- “ նութիւն, որպէս վարեցար յարդ : Ո՛չ ապրէն մեծ է և “ ցաւ յոյժ, առաջ, ի տեսանել առաջ ազգաց զվարժարան “ հօրդ զարմանան ընդ այն և գովեն զրատերարն, և ի հար- “ցանել զմեզ երեւելի ոմանց ի հանդիսի անդ աշակերտաց, “ թէ ո՞ւր էցէ ժառանգն հանդուցեալ Բարերարին, չգիտեմք “ մեք պինչ առնել նոցա պատասխանի : Եթէ ասիցեմք թէ չէ “ նա ի քաղաքիս, առեմք . և եթէ ասիցեմք զպատճառն չե- “ բեռոյ քո անդ, ամաչեմք առաջի նոցա, զի ոչ է մեզ “ ի վախճարութիւն յայտնել զճշմարտութիւն . . . վասն որոյ “ լռեմք ցաւագին սրտիւ : ”

“ Վտանգեալ նորա զառաջինն՝ ապա ասաց՝ թէ երդնու- “ ինքն առաջի երկնի և երկրի, թէ զղջացեալ էցէ երբէք ընդ “ համառօտն արծաթոյ հրեղական զպրոցին, և կամ ցանկա- “ ցեալ էցէ անխտանել զայն, այլ միտն կամեցաւ և կամն “ ինքն զյապահովութիւն նորին, զի մի՛ կորիցէ բարերարու- “ թիւն հօր իւրոյ : Եթէ հանդուաղք, ասաց, զմիտս իմ ընդ “ այս, դադարեցէք ինքն խորհել և առնել ինչ ընդդէմ միա- “ բանութեանս :

“ Ասացի ցնա . “ Զինչ առաւել ապահովութիւն խնդրես “ դու, Պարոն, ընդ բարերարութիւն հօր քո, քան զպնել “ կալուածոյն յանուն զպրոցի նորին, Սամուէլ Մուրատ, “ որ վասն որոյ և աղքատ մանկանց ազգին Հայոց, Մատա-

“ կարտուխեամբ Մխիթարեան Հարցն որ ի Վենետիկ . և
“ զինչ այլ կամք իցեն ի կտակի հանգուցեալ Բարերարին
“ քան զայս, և եթէ զինչ այլ պայման կայցէ ի վերջին դաշ-
“ նադրի տանդ որ ի մէջ մեր և ձեր , և զորոյ ընդդէմ ոչ առ-
“ նել իցեմք մեք, ցուցէք ինձ , ազաչեմ : — ”

“ Ասաց նա , թէ Այժմեան Մխիթարեանքն ձեր առաքե-
նի անձինք են, և չունի ինքն կասկած ինչ գնացանէ , բայց
ասրմ է յոտս յօրդորել ի տալն նոցա այլ անձինք , որք ոչ
նոյնպէս առաքինիք իցեն , վասնզի գիտասցեն զպրոսան
բաժանեացեն զարծաթ նորին ի մէջ իւրեանց , և ցրուեացին
ասա և անդ :

“ Ասացի ցնա . “ Ներեալ իք ինձ Տէրն , մեռոն է այդ կա-
“ կաժգ . նախ՝ զի չկարէ եկեղեցական և կրօնաւորական մի-
“ սրանութեան մոյ բոլոր անձինք և այնչափ զեղծանել ,
“ մինչեւ այնպիսի գործ գործել . քանզի շատ է , ասացի, թէ
“ երկու և եթ անձինք գտանիցին ի նոսին որք չիցեն այս-
“ պէս զեղծեալք , պաշտպանեացեն զիրաւունս զայն որոյ
“ և աղքատաց տգին իւրեանց բոլորելով յատեանն արդա-
“ րութեան :

“ Երկրորդ՝ մխիթարեանքն մեր թէպէտ և բացարձակ մի-
“ ակարար է կտակաց գպրոցին , այլ ոչ բացարձակ Տէր
“ է նոցին . և եթէ վաճառեցէ՞ն զայն , վաճառումն այն-
“ չիկ անվաւեր լինի առօք ասելն . քանզի բան օրինացն
“ կարէ տգին մեր բոլորել յատեանն և յետս դարձուցանել
“ զայն , առանց ինչ հատուցանելոց գնողին : Եւ հասասա-
“ թէեն այսմ , ահա հինգ ամաք յառաջ ի գնել մեր զգալան
“ որ ի Փարիզ վանն գպրոցին , պետ եղեւ մեզ գտանիր ինչ
“ արծաթոյ . վանն որոյ խնդրէցաք փոխ առնուլ զայն ի վա-
“ ճառականէ ուրուք , և ի պահանջել նորա ի մէնջ գրաւա-
“ կան՝ տուաք նմա զինն ի հատուցաց կալուածոց գպրոցին.
“ զիտէք թէ քանի՛ գնութեամբ և զժուարութեամբ բնակ-
“ եա՛ նա զայն , առնելով թէ չեմք մեք ազգ տէր կալուածոցն այն-
“ չիկ , այլ միայնակատար միայն , վասն որոյ չկարեմք գրաւել
“ զհատուցն նոցին. և մինչեւ տեղեկացաւ նա , թէ կամիմք

“ մեք գնել այնու արժամբ տեղի վան նորին դպրոցին :
“ Եւ երկրորդ՝ զի՞նչ կարծէք դուք, Պարոն. միթէ չունի՞մ
“ ես հոգ և վոյթ ընդ պահպանութիւն և ընդ մշանջենաւոր
“ հաստատութիւն բարերարութեան հօր քո, ընդ որ զամս
“ երեսուն ոչեամ չամ աշխատեցայ : . . . Եւ մի թէ վան սի-
“ րոյ և շահու քանի մի մանձանց միարանութեանս, յորում
“ են ամենք զոր ոչ գիմօք ճանաչեմ և ոչ պանուանս նոցին
“ խոկ գիտեմ ցայսօր, վատակեցայ և վատակի՞մ ես ցարդ :
“ Ա՛հ, սիրելի Պարոն, ախալիս դու մեծատէս, միթէ այս-
“ պիսի կարծիս ունիս գինէն : . . . Գիտացի՛ր քաջ, զի սիրեմ
“ ես զՄխիթարեան միարանութիւնն որ ի Վենետիկ, ոչ զի
“ անդամ եմ նորա, այլ զի նուիրեալ է նա զանձն իւր ի ծա-
“ ռայութիւն ազգին իմոյ, և զի հրաժարեալ է ուխտս ազ-
“ գասիրութեան ի սեփական խոկ ընչից իւրոց յօգուտ և ի պայ-
“ ծառութիւն ազգիս Հայոց :

“ Զայս գիտեցիկ առաքինութիւն միարանութեանս ծանեայ
“ ես ի փորձոյ ի յիսուն ամաց հետէ, վան որոյ սիրեցի և
“ սիրեմ գնա : Զայն այս առաքինութիւն նորա ծանեալ և
“ հանդուցեալ հայր քո, թէպէտ և ի մանկութեան հասակի
“ իւրում, և ի տակաւ ինչ ժամանակի տեսեալ գնա ի վան
“ որոյն Վաղարշ . . . այլ ուշիմ էր մտօք, և հասուննացաւ
“ յայն ապա արդեամբք, հաւատալով ի ձեռս նորա գնաւո-
“ րարութիւն դպրոցին իւրոյ, առանց ինչ բնաւ կասկա-
“ ծանաց ընդ հաւատարմութիւն նորին :

“ Զայն այս ճանաչումն ունել ունէիր և դու ինքնդ, Պարոն,
“ նա և ի ժամանակի անդ վիճոյ որ ընդ իս ի Մատրաս, վան
“ որոյ ի վերջին դաշնագրի մերում չեզեր ինչ կասկածանաց
“ պայման ընդ յարատևութիւն հանդուցեալ հօրդ բարերա-
“ րութեանն : Զգիտեմ ուստի լեալ ապա այդ կասկած ի միտս
“ քո, և ո՛ չարժեաց և թեւատրեաց քեզ զայս վնասակար
“ խորհուրդ . . . յանձնելդ զՀացն ազգասոյց ազգիս ի ձեռս
“ երկդիմի արծոյ, Աւստրիոյ սերութեան, զորոյ անիրաւու-
“ թեան օրինակն ունէաք և ունիմք ի փորձոյ առաջի աչաց,
“ որ ընդ այսպիսի առացուածս բարերարութեան, և զոր խո-

„ լսեսա տրտին մեզ նոքին խակ ներքին խորհրդականք
„ Տէրութեանն որք ի Վիեննա, մինչդեռ անդ գեղերէսք մեք
„ ատ դրուեա էշխանաց վասն ազատութեան մերոյ, և որք
„ խորհուրդ եառեն մեզ վտանգել ժամ մի յառաջ զգալոյն
„ յայլ ազատ տէրութիւն, տեսանելով զանխրատութիւն Մէ-
„ թերնիխի ի ծայրն հասեալ, զրոմանք բարեկամիք Գեր.
„ Ազգեանի:

„ Եւ կամ Լանդդ, ասացի, յետ չյաջողելոյ քեզ ի Վիեն-
„ նայ, խառնել յայն գործոնութիւնն Հռոմից, ոչ գիտե-
„ լով զո, թէ բարերարք ունիք յազգէս Հայոց եառն եր-
„ բեմն բառական արժան ի հատուցել անդ գործոյ մի վասն
„ ամենայնոյ ազգին մերոյ տառնջինն, և գործոցն այն եղեւ
„ ապա վասն ամենայնոյ հասցէին ազգաց ուղղափառաց, և
„ իշխեցաւ Փրօխասկանդա, և յոր թէ ընդունին երբեմն երկո-
„ կամ երէք ամենայնոյ յազգէս Հայոց ուղղափառաց, հասու-
„ բեմն զայն գործութիւն մեծ առնել ազգիս:

„ Լուեալ նորա ուշագրութեամբ զայս ամենայն բանս իմ, ասաց. „ Յերեսի Աստուած պահեսցէ զայս ի վտանգէն:

„ — Այո՛ ասացի, զի օրհնութիւն Աստուծոյ որ ի վա-
„ տակս հօր քո և պաշտպանութիւն նորին հրաւանց ազգա-
„ տացդ ազգիս քոյդ երեցցին և գօրացուցին զմեզ յանձն առ-
„ նել նորոգ աշխատութիւն վտանգել զԱստուածան գոյն
„ քոյն ի Փարիզ, ի յաղագս գործոյ բարերարութեան հան-
„ գուցելոյն, և յառաջադիմութիւն մանկանց գործոցն իւրոյ, զգիս
„ քո, և յառաջադիմութիւն մանկանց գործոցն իւրոյ, զգիս
„ և լսէք և տեսանէք ամի ամի ի լրագրաւքիս:

„ — Այո՛ ասաց նա, տեսի և ընթերցայ զայն ամէն և յոյժ
„ ամի:

„ — Միայն յաւ է մեզ յոյժ, ասացի զի ոչ դանեսք գո-
„ յութ՝ ոչ գիտեսն և ոչ գործեսն, զնախանձս տեսի և
„ զգաստ քո որ ի բարերարութենէ հանգուցեալ Հօրդ . . .
„ Խոկ մեզ ընդհակառակն, ասացի, յաճախ օրըստօրէ վտանգն
„ որ զԵարերարեն, և ազգիդ վասն հոգւոյ հոգւոյ մտանելոյ
„ յոյժ զգալեսն, զորոյ մանկանց գործոցն իւրոյ, զգիս Ազգ-

“ ամեղրի, որ առաւել ճոխ և ուռած քան զհայր քո, և
“ առաւել ծանօթ կարօտելոց ազգին իւրոյ, և բազմամեայ
“ բարեկամ և եղբայր վիարանութեանն՝ չլինիլ ինչ յիշա-
“ տակ արժանի գովութեան, որպէս և զուք իսկ վկայէք
“ հանդերձ գործակցամբ:

“ Ո՛չ ապաքէն ճշմարիտ է առակեալն ծաղովողին թէ
“ — Վայելուչ մարդոյ գմբծութիւն իւր առնել անտի ինչ բա-
“ րի, այն չնորհ Աստուծոյ է: ,, Եւ ո՞չ ապաքէն առեալ էր
“ Աստուած Հօր զչնորհն զայն, որով արար նա զայս բա-
“ րերարութիւնն, և որ գիտաց նա, թէ ի ձեռն որոյ արար
“ էր առնել զայն առ ի հաւանել իւրում գիտառորու-
“ թեան:

“ Ահա յաւելումն վարկիս որ զհանդուցեալ հօրէդ շար-
“ ժեաց զիս այսօր գալ այսր առ քեզ, Պարոն, ի խնդամուտս
“ առնել և ազաչել զքեզ, ճանաչել զո զայս իրրեւ զիս, և
“ վայելել զպատիւ ժառանգութեանդ, որպէս արժան և պարտ
“ է:... Յաջողեացի՛ ինձ այս: Յուսամ եւ ողորմութեամբն
“ Աստուծոյ: ,,

“ Ասաց նա յայնժամ. “ Վ. Հայր, ընդ այս վերջին
“ բանքս հաւանեալ է ինքն, առաւել քան ընդ առաջինն,
“ խորհելով և իբր արդէն և բազում անգամ, թէ անհաւա-
“ տալի էցէ, զի անձն որ զամս բազում աշխատեալ ի գործս
“ յայս գպրոցին, և գրեթէ չանիւ իւրով յաջողեալ այն, ոչ
“ փոյթ ունելոյ դիւցազնութեանն և զիշանչելութեանն
“ նորին, և կամ զհետեցէ նա զայն, զոր հաճոյ լինելոյ քա-
“ նի մի կրօնակից եղբարց իւրոց: Եթէ արուեցէ նա զայն,
“ ապաքէն առանց սկզբանց ոք լցէ:...

“ Ահա այժմ հանդուցեր զոս, ասաց, այսու բանիւք զմիտս
“ իմ ի կատարածանաց անտի. զոր որպ խոստանամ զատա-
“ րել այսուհետեւ խորհել և խօսել ինչ բնաւ զոր բանի
“ գպրոցին. և ցաւիմ, ասաց, ընդ զրկուիլն իմ ցարդ ի վայել-
“ չութենէ պատուոյ որ ի բարերարութենէ հանդուցեալ հօր
“ իմոյ: Արդարեւ ամօթ մեծ է, ասաց, առնել ձեզ հան-
“ դէս ի գպրոցի նորա, և իմ ի Փարիզ գալով չերեւիլ անդ:

„ Եկից, ասաց, անխափան ի դպրոցդ յառաջին պատեհու-
„ թեան: —

„ Յայնժամ դիրկս արկեալ իմ համբուրելի ընդ նմա, և ասացի. Օրհնեալ օրհնեցէ զքեզ Տէր: Ասաց նա, հառաջեալ հառաչանօքն Աստուծով առաջին սէր և մեծարութիւն մեր ընդ միմեանս, և պահեցէ այն միշտ յաւիտեան: Առացի ես. Ամէն: Ապա յաւելի ասել ցնա.

„ — Սիրելի Պարոն, առ ի հառաջել պահել զսէր և
„ զմեծարութիւն մեր ընդ միմեանս, պէտք են քան զառաջելն
„ և քան զարդարութեան գործոն ասելն ճշմարիտ եղելոց
„ բանիւք և արդեամբք: Պարտ է քեզ, ասացի, նախ՝ գրել
„ առ Գերապայծառ մեր, տալով զգաստատ խոստովանու-
„ թիւն ընդ մեծապատուութեանս մինչև ցարդ, և հաշտու-
„ ընդ նմա արդ. խոստովանելով զճշմարտութիւն արդարա-
„ նոյ յամենայնի:

„ Եւ ապա առ ի ցուցանել ուխտին ոչ միայն բանիւք
„ այլ և արդեամբ, թէ չէիր դու երբէք հակառակ բարերար
„ կամաց հանդուցեալ հօր քո, և ոչ ցանկացող արծաթոյ
„ հրեական գոլոցին ի ուխտականել զայն, և պատճառ է
„ քեզ տպագրել առ քանի մի գրեանս ի վերատակ հանգու-
„ ցեալ հօր քո. և այնպիսի գրեանս որ ի կարեւոր պէտս
„ աշակերտաց վարժարանին նորա, որով և արդեամբք ցու-
„ ցանես ուխտին Թէ կամակից և գործակից էս բարերա-
„ րութեան հանգուցեալ ծնողիդ, և որով ծանիցեն զքեզ
„ աշակերտք Մուրատեան վարժարանին՝ արժանի ժառանգ
„ բարեպաշտ նախնեացն իւրեանց, ունելով նոցա միշտ
„ ի ձեռին զգրեանսն, և որով կատարես զպատուէր հանգու-
„ ցեալ հօր քո որ ի կտակի իւրում: —

„ Հաճեցաւ հառաջեցաւ նա ընդ այս խրատս իմ, և խոս-
տացաւ կատարել զայն ըստ ժամանակին:

„ Յետ մեկնելիս և կարեւոր խրատուց իւրոց նա զկնի ինձ
և յայտնեաց ինձ զկզբնատրամադն չարեացն, զորմէն և
խուսափեան իւրոյ ընդ մեզ: „ Աստուած նորա, ասաց, Պա-
„ զոս Աղգարովիչ, գրելով վիր առ նա ի Հնդիկս, և այն-

„ պիտի դիր, զոր յընթեռնուն ստրատիկ մարդ, ասաց։ „ Եւ զայս դիր գրէ նա, մինչդեռ բարեմիտ եղբարք մեր մտերիմ բարեկամ ճանաչեն զնա, թէպէտ ազգ ստրատիկ էի զգուշանալ ի նմանէ ։

„ Երկրորդ պատճառ. չարեաց գԳիր. Ազարեան ասաց, զոր „ զմօքս ոչ ճանաչեմ, ասաց, այլ զրուխեամբ լսելով իմանամ, „ զի այր խորամանդ և հնարիմաց է յոյժ և ստրատիկի, „ յորմէ պատճառ է, ասաց, երկնչիլ, և որ հրաւիրեաց զիս, „ ասաց, բազում անգամ գնալ ի վէնետա, այլ ոչ գնացի „ բարերարդութեամբ, և զի հանդուցեալ քեռին իմ Աղէք- „ սանդրն, ասաց, զգուշեալ էր ի նմանէ ի վերջին ժամա- „ նակի ։ —„

„ Ժամն երբեք հինդ խօսելոյ մեք ընդ միմեանս, և միևնոյն ես ի նմանէ հանդերձ բազում ախորժ անցք ճանապարհորդութեան էին ի լինել, և մեք երթայ- րեք անդ ի Պուլոյն ։ Եթէ չգտանիցէ վնտ անուն միաբան- ութեան ինչ ի ժամուս, յուսամ զի գոյէ զայն տակս ։

„ Մնամ

„ Գերապայծառ Տէրութեան ձերում

„ Ի Փարիզ. 25 յունվարի 1851.

„ Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԼՈՒՄԵԱՆ. „

Պատասխանի Հ. Սարգսի տեսեալ թղթոյ Գեր. Հերմիսդի, յորում յիշեցուցանէ զկարծիս իւր որ ։ այցելութենէ նորա առ Պապն Հռոմայ. զոր զհատուածս թէն նորա միաբան- ոյ երկուց Միխիթարեան միաբանութեան, և առգանէ զհա- կառակ կարծիսն Հ. Անտոնիոսի որ ընդ այն ։ Ցանուցանէ զցանկութիւն իւր և դյորդոր յօրինել և կամ թարգմանել եղբարց իւրոց զկարեւոր գրեանս իսկ առ աշակերտաց, և խնդրէ հրաման ապագրել ի Փարիզ զթուղթսն Հօր Ամբրոսիոսի, այլոցն հանդերձ, օրինակ զայս.

« Արհիւպատոս Տէր .

« Ջցանկալի և դժնարհալից նամակ ՝ի՛ հիմ , գրեալ ի 14 մարտիոս , ընկալայ ի 21 սորին ամսոյս , և ընթերցեալ զայն մեծաւ թաւթեցայ և զոհացայ յոյժ յոյժ զպատշաճանոզական աչօք բարձրելոյն որ ի վերայ մեր թաղաւորեան , և ազաչեցի և ազաչեմ զնա անսրժան բերանով պահել զնոյն ի վերայ ամենայն մեզ , զի ցորչափ ընդ հովանեաւ աչօք նորին պահեալ է մեր թաղաւորեան , չկարէ առնել ինչ սմա ճշտապար հոգմն հակառակութեան , եկեալ ի դէպ ճշմարիտ ասացեալն . « Եթէ « Տէր է մեր օգնական , զինչ կարիցէ առնել մեզ առանց : »

« Ա՛յո՛ Գեր. Տէր , կարեաւր և հարկ էր ձեզ գնալ ի Հռոմ , ի խնդակցութեան արքայանին , քան զոր ամենայնիւ ինձ զայն յառաջագոյն , խնամալ զկարծիս իմ ընդ այն , և ես արարի պատասխանի թէ պատշաճ էր առնել զայն , բայց ի սկզբան անդ , յառաջ քան զառնն հրովարտակաց ի Մեծ լոյէն . յետ այնորիկ կարծեմ ես թէ ոչ բնաւ : Այլ եղեւ որ ինչ եղեւ . չար է զի ներումն և փորձառութեան ձեր լինին յօդուտ և ի խրատ այլոց յառաջն :

« Խոսակցութեան իմ ընդ Յովհաննու Մոբտոմի ի Պուլլոյն երկար էր յոյժ , և ես ոչ զբոսանդամն յիշատակեցի ի նախընթացն իմ . յիշատակեմ ի սմին և զայս որ անտի , և զոր այժմ ոչ աւելորդ համարիմ :

« Ի խոսակցութեանն որ զմիութենէ երկուց Մխիթարեան միաբանութեանն , և յառելն իմ , թէ խնայեալ Գեր. Սրբոյնն ձերոյ զկամն և զպատճառն Պապին և կարծիսն որ ընդ այն , ոչ միայն հատանի կամաց նորա , այլ և յանձն առնու ի կոչմանէ իւրմէ ի յաջողութիւն գործոյն , հրաժարիլ յամենայն առաջնորդութեան իւրոյ , և թողուլ զայն նորոգ ընտրութեան ի բոլոր միաբանիցն , զոմանցունս նա ընդ այն և առաց , թէ բազում խնամոսութեամբ և վհատանձնութեամբ վարեալ էին վհատ յայն : Եւ յառել ասել , թէ անհնարին է

յանձնառնուլ զայն Աղարեանի, հաւատալ զոլով ընդ կրօնաւո
իշխանութեան իւրոյ յայնժամ :

“ Ի սոյն միտս և ի ճանաչումն էի և եմ ես, իմաստութեան
և վեհանձնութեան տալով զքաղաքավարութիւն վեհիդ յայն.
բայց յոյժ զարձայ ի Փարիզ, ուստի զի ստիպեալ զա-
թողուլ էր ումն յեղբարցս ի Պօլիս, Հ. Անանիա Ինճիճեան,
ընդ այդ քաղաքավարութիւնն ձեր, իրրև ընդ վեսաւոր ինչ
և ոչ արժանի պատուոյ միտքանութեան : Ոչ զարմացայ և
զարմանամ արդ, ճանաչելով իմ քաջ ի բազում անգ հետ
և ի բազում իմոցիս զեզական կարծիս նորա. քանզի չհա-
ճի նա և չհաւանի երբէք ընդ կարծիս հաստատակաց, այլ
ընդ ետեղն միայն, և յայն յամառեալ մնայ մինչև ինքնին
փոխանամոութեամբ և ձանձրանոտ բազում իւրովք. և ոչ
երբէք զպատուոյ հաստատութեան և զօրանց ազգիս փոյթ
է նմա, այլ զանձնէն և ի և զհաճոյից կամաց իւրոց, որպէս
սեան և փոյթ ի զանազան պատեհութեանն :

“ Ոչ ապաքէն նա էր որ ի ժամանակի միտքանութեան
Հայոց ընդ ուղղափառաց, այսպիսի եղանակ բազում իւրովք
առաւել պատճառ եղեւ բամբասանաց զմիտքանութիւնս և զայ-
ծաղրելոյ ի նա, քան զամենայն հակառակորդս մեր, գնա-
լով առ բանն եպիսկոպոսն ի Պօլիս և մեզադրելով զերբազա
իւր առհասարակ, իրրև զկամակատարս յուզմանաւորն
վարդապետութիւնն, և պրելով ի վանս, թէ չնորհք նմա
խնդ մոց իւրոց կալ ի կամակատար միտքանութեանս, վասն
որոյ հնարիւր անօրինութեամբ ելանէր իւրոյ :

“ Գիր նորա պահեալ կայ ի գեաւին վանացս :

“ Եւ ո՞չ ապաքէն նա էր, որում առաքելական Հանդու-
գեալ Գեր. Սամուէլեան զարշուռն գործակցութեան կարգա-
ծոց Մ. վարժարանին, հրաժարեաց նա զառաքինն, ասելով
թէ չի իւրն ոչխանեալ ի ծառայել աշխարհական վարժարանի,
ապա յանձն էառ պարտանել, շահել յերկրէ անտի ի հաշիւ
իւր առանձինն, պահելով անդ կենդանին. և իրրև շահեցա
անտի բաւական արծաթ, յոյժամ կամեցաւ զառնալ ի Աշ-
վալով, ի ծախել անդ զարծաթն զոր պինչպետութեան կա-

մաց իւրոց . . . Թէպէտ ի նմին ժամանակի անկեալ դնէի ես ի մահիճս ծանր հիւանդութեան, Թէպէտ և ստացաւ նմա համբերել առաւել ինչ քան զիս տեսանել զլիճակն իմ, այլ ոչ անսաց նա ամենեւին, և ոչինչ կամէր կալաւ զիւրոց հաստատակաց, Թողեալ զամենայն ի բաց գնաց :

« Թողից յիշել զայլ գնացս նորա, այլ ոչ մոռանամ զգալեան Գեր . Հաւանեին զոր ես նմա միայն, յորժամ եկին այսր ի Փարիզ, և ետուն զհանգուիսն իւր ընդ այլ ամենայն եղբարս մեր որ ի Պոլիս : Եւ ընդէր զանկաս Խակին վասն նորա միայն : — Վասն զի օտար և խորթ ցուցանէ նա զինքն ի հաստատակաց կարծեաց, վասն եղականութեան իւրոյ, և վասն այսորիկ զոմն զնա հակառակորդն մեր : Ապա մի զարմացիր Վեհգ զի գայրագնեալ է նա ընդ այն քաղաքավարութեան, և մի՛ զղջացիր ընդ վհատութիւն իւր որ ի ինդիրն յայն, վարանութեան երկուց Մխիթարեանց :

« Ի սկզբանէ անտի հաստատութեան վարժարանացս ի Պատուական և ի Վենետիկ յորդորեցի ես միշտ զոմանս յեղբարցս օրինել և կամ Թարգմանել ընդհատս ինչ ուսումնականաց Վասն սկսանել ի Թուաբանութենէն մինչև գաւառական Թիւնն, և ընդհատս ինչ բանասիրութեան, սկսեալ ի քերականէն մինչև գիտարանութիւնն, ի պէտս աշակերտաց վարժարանացդ և այլոց որ յորդի միտս :

« Թէպէտ և սկսան ունէք ձեռնամուխ լինել յայն, այլ ոչ վճարեցին ինչ զանազան պատճառանաք . . . Թէպէտ և արտին ունէք ինչ, այլ ոչ քան բաւականին ի լրումն կարօտութեանն ի վախճանի՝ յորդորեցի ես առ զՊ. Հ. Ամրոսիոս Գալֆասեան յօրինել Թուաբանութիւն մի կատարեալ քան մերսն ոչ ի սպառ գրոց բարբառ, ի պէտս վարժարանին և հանելոյ ի խորհուրդ ուրեք յայլում, և խոստացաւ նմա տպագրել զայն, հայթայթելով զծախսն ուսանիք :

« Ետուն ինձ անկեղծութեան և Լանկց նորա, զի յօրինեալ նա զայն, և ես ի լինել պատասխանի իմ, Լանգալ հայթայթել զծախս տպագրութեան նորին, և յաջողեցաւ ինձ

այն Աստուծով, զորմէ արարի յիշատակութիւն ինամքովդ Թուղթն իմ, ի ժամուս զայս միայն պարտ անձինս համարիմ ծանուցանել Վեհիդ, թէ այս գործ պատրաստ է ի տիպ արձանացուցանել, և եթէ այլ ումանք յեղբարցս ունիցին կամս յայսմիսի գործ պարապիլ, յայլ ինչ կարեւորութեան պարապեալ ցին, զի սպասին առեալ ի գլուխն: Մնայ միայն այսմ տպագրութիւնն, և այն ևս լաւագոյն արդիօք, ունելով մեր այսր բառարան կատարեալ առաջ ձուլեալ և Թղեալ ի Շ. Յովհաննէս, եթէ Պ. Շ. Ամբրոսիս չէր պարտաւորեալ առնել ճանապարհորդութիւն ի Վենետիկ. բայց յետ գալոյն իւրոյ այսր անխափան սկսցին և կատարումն լիցի գործոյն, առնելով մեր զամենայն յաջողութիւն ապագրութեան առ:

„ Սնամ

„ Գերապայծառ Տէրութեանդ ձերում

„ ի Փարիզ. 24 մայիս. 1851.

„ Խ. Ծ. Շ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՒԼԵԱՆ. ”

Պատահանի Շ. Սարգսի առնալ Թղթոյ Գեր. Հերմիզդի, յորում խնդրեաւ առնել գնա ընդունայն ակնկալութեան յարդարութիւնն Ծառայոյին, և կրօնաւան անդին ժամանակին և արծաթոյ վճարմանութեան ծախելոյ ի Հռոմ: Յուցանէ զդարման հիւանդութեան Գեր. Աղաչանի, և զօգուտն հասարակաց ազգիս: Յայտնէ զկամս տպագրելոյ նոր ինչ օրագիր ի Փարիզ, և խնդրէ ընդ այն հրաման, օրինակ զայս.

„ Արհիապատիւ Տէր.

„ Զննտհանի ի Վենետիկ որ ի 24 մայիսի անցելոյ, ընկալայ յ30 նորին ամսոյ, և ընթերցեալ զայն՝ ծանեայ զհանդամանս իրաց վճարանութեանն որ այդր ի Հռոմի, և որով հասատանայ ի վաս առաւել նա, քի նորա որք ոչ ճանաչեն զՄատա-

լցին արդեամբք, այլ անուամբ և ևթ, և որք չեն առեալ զերծ քաղաքավարութեան նորա՝ բազում ինչ ուղղութեան և ախիթարութեան ակն ունին անտի բարեմտութեամբն իւրեանց... և թէ՝ վարանութեան մերոյ ճանաչելով զնա արդեամբք, և փոյթ գոլով քաղաքավարութեան նորա հաւրեալ և յառեն առաց հետէ, չէ պատշաճ նմա այնպէս ակն ունել անտի, և ծախել անդ զանգին ժամանակ իւր և զկարեւոր արծաթն վատնել վայրապար.... Բազում առակ գիտասցէ որ և բացակայութենէ առաջնորդին իւրոյ և վանաց ընդ այսչափ երկար։

« Ահա այսոքիկ են, որովք հասանաւոր էի ի վերա և հասանելոյ առաւել եւս, և ընդ որս ցաւելոյ և ցաւիմ ես յոյժ յոյժ, և իրաւամբք. քանզի տեսանեմ ես զդիմաւոր անձինս վարանութեան, որոց յանձնեալ և առեալ են ի Տեառնէ, վասն առաջնորդութեան ուխտիս, ի բարեաճութեան տրեին, և վասն զի չնորհս Յարդմանութեան, ի լուսաւորութեան ազգիս, պատրեն նորա առհասարակ ի խծրծիս անտի,... կարծելով և ակն ունելով, թէ այնու ընծեռնեալ զհոգեառաքելութիւն մեր, զարդարեցին նորա այնուհետեւ չարախօսել զմեզ, և թէ այնու արդարացուցեալ զվարանութիւնս մեր առաջի Ծառային, ոչ եւս այլ կասկածիցի նա զաւազակութենէ նորին։

« Ո՛չ ապաքէն արժանի են ցաւոց աչխատութիւն և ծախք ժամանակի և արծաթոյ ընդ այս, և անկարելութիւնն որ անտի վնասուցանի։

« Ներեացեն ինձ բարեմտ աչխատաւորք ընդ այս անախորժ բանս, որ ի ցաւոցն ազոյ և ի կարեկից մտոյ յառաջ գան։

« Յաղագս կարծեաց փառասիրութեան այդր, վասն որոյ զոյ չուժգնաւ վնասի, չունիմ ասել ինչ, բայց ևթէ երբեմն զերծ ոք յոչ առեալ վնասէ, ևթէ հաչիւ փառասիրեաց, զրկեսցէ և Տիրամարդեաց, զնոսիսն է յոյժ ի հաչուէ հասարակաց, քան չափս ժամանակին և քան կշռոյ ծախուցն. զի վասն սա նոքա առանձինն իմանին... ապա քան զնեմ

պարտիք գիտել . . . Թողից ասել զանվիճելի ար վճռոյն որ անու . . . և յաղագս բանի դատին զոր ունիք վարել ընդ քարտուղարին, ուան չորից անձանցս կոչելոցն ի Պօլսոյ, չգիտեմ ես պիտոյ մարթ եղէ զայդ առնել, յորժամ իրաւունս խնդրել ունիք ի Վաւաշոցին, ախթարչտարքին իսկ հատներեալ և յԱնախատականեն, զոր և ականջօք ձերովք լուեալ կէք ի բանոյ նորին, հանդերձ յաւօք պրոի : . . . Ապա կարծեմ ես թէ պարտ է Վ.ՀՀոյ այցելութեան Տեառն ասասել ուան անտեսանել ապին :

« Իսկ յաղագս բժշկութեան Գեր. Ազարեանի ի ցաւոց իւրոց, այլ է իմ խրատ, եթէ անասցէ ինձ, և այլ իմ իղձք ազօթից, եթէ լաւն լինիցին երկնից. ուղղակի և փութով առաւերն Ներսէս Վամբրոնացի դիմել և Թողութիւն խնդրել, յայնժամ չերկբայիմ ես ընդ բոլորովին բժշկութիւն դրա և ընդ խաղաղութիւն մեր ամենեցուն, ընդ փութիւն երկուց ասեմ կրօնիցս, զոր և հաճոյ գիտեմ Աստուծոյ և օգուտ ազգիս առհասարակ . . . Թէպէտ և ամենք յերթալոյս, ի կարծելոյ ազգասիրաց և ի քաղաքագիտաց անտի որք ի Պօլիս ազօթս արարեալ են և առնեն ընդ անցաղութիւն այսորիկ :

« Որպէս ի նախընթացն իմ ասացի, թէ բաղում խոսակցութիւն եղեւ ընդ Յովհաննես Մուրատի ի Պուլղէն, զորոյ մի ուան ցաւոյ յիշատակելոյ, նոյնպէս և ընդ Լուսիկ Առաքելի ի Լոնտոն, զորոյ մի ուան կամիմ յիշատակել ի սմին ի գիտութիւն Վ.ՀՀոյ, և է այս .

« Արդ յաւել ինձ երթեալ Լուսիկ Առաքելի թէ հետանուան գրամագլխոյ Առաքելեան վարժարանին թէպէտ 1,380 վրէ է, բայց հանեալ անտի զհարկն տէրութեան իրրեւ 40 վրէ, մնայ 1,339 վրէ, 15 շիլինկ . ասացի ցնա թէ ընդէ՞ր այն, ասաց նա, թէ ըստ օրինաց Անգլիացւոց, յամինայն հրետասկաց օգտութեան առնու տէրութիւն հարկ 7 փէնս առ լիրէ :

« Հարցի ցնա, թէ նաեւ յայն հրետակային որք յօտարս տէրութեանն ի գործ դնին : Ասաց նա թէ չգիտէ ինքն զայն :

« Ասացի ցնա, թէ յիշեմ ես զի յամին 1835 ի գարձին ի-մեամ առա ի Կոնկաց, լսայ ի հանդուցեալ եղբօրէդ Յակոբանդրէ թէ ընդհանրական վաստարանն պահանջէր ի հրամանէ առաջ ոգորմութեան 5 առ. 100 իրրեւ քօնմիսիոն, պառնեցի ես յայնժամ հանդուցելոյն թէ զնոյն պահանջէր և ընդհանրական վաստարանն որ ի Մատրա և ի հրամանէ ոգորմութեան Մ. վարժարանին, բայց նախագահ գաստարն անդ ընդդէմ եկաց նմա ասելով, թէ չունէր նա իրաւունս պահանջելոյ զայն, զորով գործադրութեանն յառաջս, ապա պարտ է՝ ասացի, նոյնպէս ընդդիմանալ ամս և առ ի Կոնստան : Հաղորդեաց հանդուցեալն զպատմեալն իմ վաստարանին ի նմին իրոյ, և նորա խօսեցեալ յառնի ընդդէմ եկաց պահանջման սմին : Ասաց Լուիզ ծերն թէ այն ընդհանրական վաստարանին էր, բայց այս սէրտիֆիկատ է : Ասացի ցնա, թէ կարծեմ ես, զի նոյն իրաւունքն, յորոց սէրտիֆիկատ գործադրութիւնն զօրեացեն և յայսմ :

Ասաց Լուիզ կրտսերն, թէ ինոյն կարծիս իմ էր և ինքն, այլ առաւելագոյն զայն յերեւելի օրինագիտաց, և եթէ այնպէս իցէ, պարտ է, ասաց, հոգ տանել այնմ, բողոքել յառնէն ի դադարեցուցանել զայն անիրաւ հարկն սէրտիֆիկատ :

« Ասաց Լուիզ ծերն, թէ բողոքել յառնէն պիտին ընդ այն ծախք, և թէ ուստի հատուցի այն . . .

« Ասացի ես, թէ պարտ է նախ առաջել զայն, և ապա հոգալ զծախուցն. և թէ ծախքն այնք միանգամ լինին, խակ օրուան մշանջենաւոր. և թէ ծախքն որ ընդ այն, քեզ անկանին, ասացի, առ ի յաւելուլ զարդիւնս յիշատակի հանդուցեալ հօր քո :

« Արդարեւ պարտ է, ասացի, զայսմանէ հոգալ, զի չէ փոքր ինչ ճնաս աղքատաց այդիս. յամենայն ամի պակասի 40 լիրէ, 1,000 ֆրանք, և այն առանց իրաւանց, յորմէհետէ ձերոյ միոյն. արդէն առանց իրաւանց, ապա զանգատութեան և տարաձայնութեան կառավարութեանց և դատաստանաց անկաս զրամագրութեան ի ձեռս Բանձիլերին, և նորա եղեալ զայն ի գալիքն սէրտիֆիկատն, որ բերէ շահ 3 առ. 100,

և զոր նրատամբք, բան պայմանացն որ ի մէջ հանդուցեալ հօր ձերոյ և Հ. Նիկողայոսի, և բան կտակի նորին, պարտ էր յանձնել Առաքելոյն վարանելեաւն, առ ի գնել նոքա զոյն ի վերայ գետոյ Յորդանան, որ բերէ շահ 5 առ 100, և այնպէս առաւել շահեկան և ապահով լինէր ժառանգութեան տղայոցդ տղին, քան այնմ ի պահել տնօրինեալն։

“ Այս բանից ինձ նրատամն եաւ Նուիրել ձերն, բայց առնել ինչ երկնչի ի ծախուցն, զի մի՛ ի վերայ նր անկանիցին այնք . . . և յերեւի պարտ է վարանելեաւն քան նոցն մերացս, հոգ տանել այնմ, ինչառն տղայոցդ տղին . . .

“ Այսչափ ինչ ի պատասխանի կարեւոր բանից Թղթոյ վեհիդ շատ լոյն . . . եկից արդ յայլ կարեւոր ծանօթութիւն։

“ Արդ՝ ի բաղում ամաց հետէ էին էին ինձ կամք և փափաք նպաստել ինչ կարօտելոյ տղին առհասարակ, օժանդակել նմա զկարեւորն ծարկութեան, զկրթուն առնմ բնական և բարոյական զիտութեան, առանց խառնելոյ յայն զինդիրս կրօնի, յորմէ ոչ բառաղութիւն մուց, այլ վէճ, և դայթագղութիւն ոգեաց, և առանց առնելոյ անդ բնութիւն ինչ գբաղաքական հրաց, յորմէ ոչ օգուտ, այլ վնաս արդեօք զերի տղին . . . զայն ոչ ի մտանան, զի ոչ գոյ այնչափ արծաթ աղքատաց ի գնել, և ոչ ժամանակ յընթացեալ, այլ և տեսր մերթ յերեսաքննչիս առնեան, և պէտ մարթ եղե զերազոյն, և զայն ի վեղս որ ծանօթ և բնակ հաստատուց տղին, ի բնել և յամենատարած մեր գրոց բարեաց։

“ Ահա պատճառք և պատճառ էին խորհուրդ և առաջարկութիւն իմ զոր ետու և տարի ես երկրին եղբարցս ի Վենետիկ, յամին 1836. Թէպէտ և հաճեցան հաւանեցան նորա ընդ այն գաւաչին, բայց ապա այլեւայլ վիրք և կարծիք փոխեցին զկերպարանս նրոց, խորհրդոյ և առաջարկութեան իմոյ, և զխրճանն արդեօք . . . ամփոփեալ զայն առ ժամանակաւորն, առ որս վայն ձգտէր առնութիւն մուց եղբանց, քան առն-

բանդան մարդկային տկարութեան... Թէպէտ եւ ոչ հակառակ կացի այնմ, մանաւանդ թէ օգնեցի ըստ կարի իմում, քաջալերելով զաշխատաւորս յայն, հայթայթելով նմա ըստկարեւոր ինչ պիտանս:

«Այլ ոչ փախեայ եւ բնաւ յառաջին խորհրդոյս, պատուհասանն Աստուծոյ, որ եւ ընդ առաջ եղեւ ինձ Աստուծով: քանզի ի խօսել իմ զայսմանէ եւ բազում անգամ, ընդ վերապատուելի Հ. Գաբրիէլի միոյ ասա, եւ ի յորդորել զնա ձեռնամուխ լինել յայն, զոր զնա յօժար եւ պատրաստ այն, եւ առաւել քան զիս վաս ի սէր հայրենեաց եւ կարօտելոյ ազգին. եւ ի խնդրել իմ ի նմանէ յօրինել համառօտ ինչ նախաշաւիղ նպատակիս, որպէս նա զայն վաղվաղակի, հանդերձ խորհրդաւոր իմն դաղափարս վասն ճանապարհին:

«Յայնժամ խրախուսանալ իմ անտի՝ սկսայ այնուհետեւ ի խնդիր լինել կարեւորին, օգնութեան այնմ յազգայնոց, սկսեալ յԵղուարդայ Ռաֆայէլ որ ի Վենետն, և ի Յովհաննէս Մուրատ որ ի Պուլղին, և ապա ի Խաչատուր Վարդապետ ի Փարիզ, նոյնպէս և յայլ ազգայնոց հանդիպելոց աստ, ի հնդկին եղբարց Տատեանց յորդւոց Պօղոս Աղայի, և յերկուց եղբարց Խալֆայեանց, յորդւոց Կարապետ Աղայի, և յայլոց ոմանց պտելոց աստ: Որոց միանգամ դիտկերն տեսանել և զնպատակն ինչ խնայեալ, յօժարեցան վաստեցան ամենեքեան առհասարակ, երեւել զիմիտքն աստնեալ գրիլ յընկերութիւն:

«Ի ժամուս գրելի վերոհարեալ օրինակաց ընկերութիւն պատրաստ են խառնակրութիւն, և ինան անհամբերութեամբ սպասեն նորին: Այլ մեք կամեցաք փորձել ձեռնամուխ լինել յայն, զան որոյ երբեք փորձ սպասել տեսաք քանի մի օրինակ գործարարութիւն նորին, առ ի դիւրանալ առնել աշխատութիւնն, և յիմանալ զհարկն ծախուցն որ ինան միոյ ինիի ի խորհանչելի ամենան, և տեսաք զի գիւրութեամբ լինի այն, յանձնելով գործարկեալ ասուս մեր, ընձեռեալն Հ. Հ. Յովհաննու, սպասանասպետ ազգիս որ ի քա-

զաբխա, և նորա առեալ զայն գործառնի՛ն որ ի վրա մեր ուստ ճանաչել զտառս մեր, շարել զայն և բերել մեզ առ ի տրտպրել և յոր գոտք յոյժ սակաւ սխալ, քան ի շարուածան որք ի տպարանի վանացս, և զի ծախք նորին ևսյնն հնգետասան ֆրանք վասն երկուտասան Թերթից որք տպագրեացյն ի տարւոջն. և ահա յաջողութիւն նպատակի մերոյ եղեւ Աստուծով։

« Ապա չիմոյ ընդ այսր կատարումն՝ բայց ի հաճութենէ հաւանութեան Վեհիդ և ի հայրական առատ օրհնութենէ ձերոյ, որոյ միայն կարօտիմք, և ընդ ընդունելութիւնս նոցին ոչ բնաւ տարակուսիմք, ճանաչելով քաջ զչափ խնդութեան որոյ Հօրդ հաստատակաց, որ ընդ փոքր մաց որդւոցս վասն բարեաց հաստատակաց ապրին, և մանաւանդ կարօտելոց նորին։

« Թողից յիշատակել առ զարդասիս բոլոր բարեաց զոր տեսանեմ ես ծագիլ ի ձեռնարկութենէ մերոյ առաքելի, զիւին և նի անուն յիշատակեցից, զտրամադրութիւն սրտի և գեառանդ մաց աշակերտաց վարժարանիս ի սէր ազգին, առաջ նորա անդ ինչ ինչ հաստատեալ, զծնունդս մաց խրատուց, որով և կրթին նոքա անդամին յաշակերտութենէ ի մատենագրութիւն, և որով չմոռանան զրնիկ լեզուն խրատուց, յորժամ գառնան ի տեղիս խրատուց։

« Եւ Թողից առել զխոտանութենէ չարեացն, որ եղեւ և ինձ այս տպագրութիւնս, խոտանիլ չարեաց և ինաոյ յիրաւի քանզի հանդամանք ժամանակիս, յառաջադիմութիւնք ազգաց Եւրոպիոյ յորոնաս և ի գիտութիւնս շարժեցին և շարժին միշտ գերիտասարդս ազգին մերոյ որք առ ի գանագան վարժարանս Գաղղիացւոց տպագրել օրագիր ինչ, ըստ օրինակի Գաղղիացւոց, որք համարձակ գրին զամենայն իրաց գչարեաց և զբարեաց առհասարակ, և որոնք առնէին անշուշտ ինոա ազգին մերում. բայց յորժամ լուան նոքա, թէ առնիմք մեք կամ առնել այսպիսի ինչ՝ կասեցան նոքա ի խորհրդոյ անտի իրենց, հաւանեալ՝ թէ մեք զառաջինն առնեմք։

« Ահա խոտանումն չարեաց որ ի յայտարարութենէ առի։

«Ասիցէք արդեօք, թէ սկսանիլ գնալին է, այլ գոյժ է հանապատդրդել զայն, և թէ վ. Հ. Գաբրիէլ ունի յաժարութիւն պատապելոյ յայն, ունկնդիր յաջորդք նորին այդր գնային յաժարութիւն:

«Առեմ ես առ այս նախ՝ թէ ամենայն որ որ յաջորդեալ նմա այր պարտ է գի ունիցի գնոյն յաժարութիւն, հայեցեալ յօդուտ կարօտելոյ ազգիս, և աշակերտաց վարժարանին, և ի խափան չարեաց զոր վերագոյն յիշեցի.

«Եւ երկրորդ՝ գիցուք թէ ընդհատցի այն և ոչ հանապազորդիցի վասն զանազան պատճառանաց. գինչ նոր ինչ լինի և վեղարիլն. ոչ ապաքէն գոն բազում օրինակք յուսումնական ընկերութիւնս Եւրոպիոյ.... Ապա չէ պարտ վասն այսորիկ չհամանել զայս, կասկածելով զհանապազորդութենէ նորին:

«Համէն ես ծանուցանել զայս Վ. Հ. յետ զորձին ձերոյ այսի ի վաղս, բայց տեսանել գի յապաղիցայն, և գի տեսցին ձեր ի նպատաւորագոյն գործոյս, որք ինան անհամբերութեամբ յայտարարութեան նորին, հարկաւորեցայ կանխել զծանուցումն, խնդրելով այսի զհաճութիւն հաւանութեան և զօրհնութիւն Վ. Հ. որք և նոյն են յամենայն ուսոք:

«Առաքեմ ընդ սմին զօրինակ մի ի տպագրեալ թերթից ի տեսութիւն Վ. Հ. և ի խնդութիւն ձեզ և որոց այդր երկիր Վարագայոց, հանդերձ ողջոյնս սիրոյ և բազում յարգանաց, և

«Մնամ

«Արժանապատիւ Տէրութեանդ ձերում

«ի Փարիզ. 5 յունիս. 1851.

«Ի. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՒՐԵԱՆ.»

Առաջար յաւելու ի նախընթաց պատմ զրոյս և զնշանա-

եր հաւուած մի որ ի պատասխանուց Գեր. Հերմիզի տուեալ Թղթոյ Հ. Սարգսի, և որ ունի օրինակ զայս.

« Յարդոյապատիւ և վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ողջոյն։

« Ընկալեալ յերէկն զթուղթ Վերապատուութեանդ՝ ըզդրեալն ի 24 մայիսի հանդերձ օրինակաւ Թղթոյ Մուրատեան Յովհաննու՝ զորոյ և զգալուստն խակ ի վարժարանիգ լուեալ ի Թղթոյ Վ. Հ Գաբրիէլի խնդացի և եւս, զի արժան խակ էր որպէս այնքանոյ հարերարի ազգիս սիրով և բարեկամութեամբ լինել ընդ մեզ։ Երկրորդ՝ զի ի պակասել ասոյացն՝ խաղաղութեամբ յառաջեն իրք վարժարանիդ. և երրորդ՝ զի և բարեաց խակ մարթ է ակնկալել ի բարեկամութենէ նորա։ Վասն որոյ օրհնեալ լիցիս՝ զի պատճառք և պաշտօնեայ եղեր այնմ։

« Խնդամուտ եմ ամենայն ջանից Վերապատուութեանդ բանիւք և արդեամբք ի կատարումն ակնկալութեանս մերոյ ի Ռաֆայէլեան ծերոյն, առ որ օժանդակել կամիցեալ և իմ որով խոք և հնար լցէ՝ հաւանեալ եմ ամենեւին ընդ առաջարկութիւն ձեր առաջնորդելոյ Աղանուրեանց ի Պատա. վոնէ ի Վոնոան, ուր և պատեհ լիցի ձեզ դարձեալ յորդորելոյ զծերսունին և զժողովեալսն անդ՝ ի նոյն բարեգործութիւն։

« Սիրելեացդ մեծապէս և ի խրախուսող բանիցդ զոր ասէք վասն խնդրոյ և իրաց Ագարենի, և ոչ հակառակելոյ իմոյ մխիթեան երկուց միարանութեանց. քանզի քան զվիշտս պատրաստեալս մեզ ի հակառակորդաց՝ վհատեցուցիչ բանք իմոց արամեցուցանեն զիս յոյժ և լքուցանեն, և չգիտեմ զինչ առնել. զի չմարթէ վասն ամենայն իրաց ժողով գումարել և զկարծիս ամենեցուն հարցանել և միտրանել։

« Այլ վասն ասացելոյ անձինդ կարծել թէ ամբ և ամբ շինուցեալ իցեն ի նմա և մեղմեալ գյուզումն երեւակայու-

թեան և զվերաբին. այլ ի դէպս յայսմիկ տեսի զիս խոստա-
նալ կարճիս : . . . . . .
. . . . . .
. . . . . .

„ Մոգքեամ ոչ լինել

„ Յարդոյսպատիս Վերապատուելոյն

„ Ի Հռոմ. 4 յունիս 1851.

„ Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՄԻՒՋ

„ Արքեպիսկոպոս և փոխ. Աբբայ. ”

Պատասխանի Գևր. Հիւթիւզի տուեալ Թղթոյ Հ. Սարգսի, յորում գանգատի վասնզամնայն և խրատուեաց տայ նմա լինել ուղիղ ըստ Թղթոյ նորա, և ակն ունել տակաւին արդարեան ի Հռոմէ, զոր զերծել ինդ և ուրախ լինել ոտից նոյ, օրինակ գայս.

„ Յարգոյապատիս և Վերապատուելի Տ. Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և ախծակցութեան պղծոյն կարոտութիւն :

„ Թուղթ Վերապատուեանդ գրեալ ի Տաճիկս ոչ ապա ետուայն էր ինձ և բազում ուրախութեամբ ընդունեցայ, ոչ միայն իրաց վարանելոյն. ապայն ոչինչ զարմացայ, ոչ վասն զի ինձմէ զի յանձնէ զխորհս առեալ գիտեմ, զի յայտնի արտ տայ երբեմն բարբառել և գոյանալոյս, և այլ վշտահար զրուն պատճառս ցաւոցն հարկանել ոչ կարացեալ՝ զոր կարէն զնա հարկանել. կամ պարզ եւս ասացից, զի ինձ բաղում հարկանի :

„ Եւ ինձ արդարեւ Վերապատուելի Հայր, վիշտ մեծ է որպէս ոչն կարծէք՝ ընդ յաճելն իմ առաջ, ապայն քէ յաճելի՝ զիտացէք զի չկարէի առնել այլազգ՝ ի ծոյլ տեսանելով զանձնայն և լսելով յաճեալսն : Որք Տաճկին լինին արդեօք որպէս և Վերապատուեալքն ասէ, բայց ոչ նոյնպէս անձնեալն և արբոյ ժողովոյն, որ քէպէս յաճի և անապան, բայց հասոյ ուրեմն առնէ արդարութիւն և իրատուն :

«Ո՛չ ահա և նախահայրն մեր ինքնին յետ տառապելոյ սաստ յերկար ընկալաւ հոգւոյ ուրեմն զկռանդակն առաքելութեան. ո՛չ և նախարդքն մեր առ մանկութեամբս մերով զամս հօծն տառապեալ և վաստակեալ՝ ապա ուրեմն ընկալան զուարախարար և գյաղթական վճիռն արդարացուցման: Բայց դարձեալ ամբաստանեցաք և ամբաստանիմք ահա ի չարախօսաց: Եւ զինչ առնել իցէ, Տանզի չպակասին չարք և չարիք յաշխարհի, Թողցո՛ւք զի ընկճեացեն զմեզ խոպան: Եթէ միանգամ նոքա հարկանեն, և մի եւս մեք ըստ ճգնաւորին բանի, և մարտս պատերազմի յառաջ խաղացուք, կամ ըստ Խրայէլացւոցն օրինի կէաք ի չինուած տաճարին խմաստութեան և կէաք զէն ի ձեռին ընդ հակառակորդն մարտիցուք: . . . . . .

. . . . . .

«Գովեմ և զեռանդն Ձեր և զնախանձ առ ի Թիկունս հաստելոյ կարօտութեան Թշուառագունիցս ազգիս այնպիսի օրագրով որ Հատարակաց ամենեցուն իցէ իմանալի: Այլ զի առաջարկութիւն իմն այդպիսի լեալ այսի երկամաւ յառաջ և յայնժամ ոչ պատշաճ համարեցաւ հատանել ժողովն վանական, այժմ զիա՛րդ համարձակեցայց ես ինձէն հակառակ այնմ տալ հրամանն. վասն որոյ մի՛ ինչ ծանր Թուեցի ձեզ խոնարհ մի ես յապաղել մինչև զարձայց ի վանս, և մի յառաջնոյն իմոց գործոց լիցի որոշումն տալ խնդրոյդ օրհնութեամբ հանդերձ:

«Սիրալիր ողջունիւ որոյ տատ ընդ իմն ես մաղթեմ ողջ լինել

«Յարդոյապատիւ Վ[երապատուութեանդ]

«Ի Շռոմ. 14 յունս. 1851.

«Ն. Ծ. ԳԷՄԱՐԴ Վ. ՀՈՒՄՄԻՆՋ

«Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ.»

Պատուհանի 2. Սարգսի տուեալ Թղթոյ Գեր. Հիւբմիւզի, յորում զարմանայ և ցաւի ընդ սխալ կարծիս նորա որ զպա-

նոյնանութիւնն Ծաւարդին և սուրբ Ժողովոյն, և յորում ցուցանէ զընդունայն ակնկալութիւնն որ յարդարութիւնն սուրբ Ժողովոյն. յիշեցուցանէ վերատին զխնայել նորա գնալ ի Հռոմ յայնմ ժամանակի . . . և ցուցանէ զանուոյ պատճառանս նորա յապարել տալ զհաւանութիւնն իւր տպագրել ի Փարիզ զնոր օրատիրն, ոյլովքն հանդերձ, օրինակ գայս.

« Վերապայծառ Տէր.

« Անակնկալ պատահանին վ.հիմ, առնալ ի 14 յունիսի, « շշ սակաւ զարմացումն մտաց և ցաւ սրտի երբ առ ակնկալ- « ութեան խրատուս և բարեաց, որ ի վտիճոյ և ի վշտաց ձերոյ « սրտի . . . աւանդ վրիպանացս . . . և յիրաւի՝ քանդի ասէք, թէ « Իւր Ծաւարդին իցեն արդեօք որպէս և վերապատ- « ուելիդ ասէ, բայց ոչ այնպէս ամենեքեան և սուրբ Ժո- « ղովոյն, որ թէպէտ յամր և անագան, բայց հասակ ուրուն « առնէ արդարութիւն և իրատուն: »

« Հարցանելոյ ես նախ. Ոչ ապաքէն անդամք Ծաւարդին են որք կազմեն զսուրբ Ժողովն, և որոյ գլուխ կարծեցեալ Ֆրանսոյն, և քարտուղար նորա Բառնապեն: Մի թէ ածա- կան լինչ յարելոյ ի գոյականն փոխիցէ՞ ամենեքեան զրուն նշա- նակութիւն բառին . . . և ո՞չ ապաքէն առեալն արդարեւս թեան ունել ունէր զոյն այս ածականն, և մի թէ այսու անուամբ՝ արդարութեամբ և իրաւամբք կէին գործք նորին:

« Երկրորդ՝ թէ ոչինչ արդարութիւն և իրատուն սրտի ցարդ սուրբ Ժողովոյ միարանութեանս. իրատուաց նա հրա- պարակս և կամ առանձին զոք ի գրպարտչաց անոր միա- բանութեանս: Ոչ երբէք: Արդարացոյց նա հրովարտակս իւրով և կամ բերանով զմիարանութիւնս, թէ արդար է նա ի գնացս իւր: Ոչ երբէք. այլ լուաց նա միայն և կատեցաւ ի դատապարտելոյ զմիարանութիւնս բառ ցանկութեան ըզ- նամեայ սրին:

« Զկարացեալ դատաւորի ոչինչ գոմանել պատճառս դա- տապարտելոյ զմիարանութիւնս որ, արձակելոյ գնա լու-

թեամբ. ընտրեա նա զպարտս արթուն պաշտամանն Իւրոյ, արդարութեան և իրաւանց։ ... Ահա այսպիսի գնացք են աւրք ժողովոյն ընդ միաբանութեանս մերոյ ի սկզբանէ անտի մինչեւ ցայսօր ժամուցանիկ, ... և այդ զայսոսիկ գնացս նորա հոմարիք դուք արդար և իրաւացի, և շատանայք այսուհետև և տանիք ամենայն տառապանաց և վշտաց, որք չպակասեցան ցան ցարդ և չպակասեցուին յաւիտեան, ցորչափ յաջորդեացն գտանկը նորին, թէպէտ չար և տառապ, այլ լսելով լուաւ և լսիցէ նոցա քան մեզ անմիով հայրապետս, որպէս և վկայեալ վկայէ Գեր. Իլարոն ի Գօլիս, և որպէս լսելոց էք զայն ի բերանոյ եղբօրդրդեայ նորա այդր ի Հռոմի։

« Ահա այսպէս ծանեալ և ճանաչեմ ես ի բազում ամս հետէ զգաղափարութիւն սրբոյ ժողովոյն ընդ միաբանութեանս ... և ահա յայս հայէին բանք նախընթաց գրոյս իրբեւ ի խնդամտութիւն ճշմարտութեան և ի քաջալերութիւն սրտի և բազկաց ձերոց, և ոչ ի յրդռանն նոցին երթիք, որպէսզի ինչ համարեցայք և զարմացուցիք և ցաւեցուցիք զիս յոյժ։ Ապա ի բանից այս վերջին թղթոյս իմոյնաբք քոյ, թէ չէ իմ անդ թողեալ զիշխն և գրաւանն հարեալ, չունելով իմ երկիւղ յաքացեայ նորին բնաւ, հետ գոլով ի նմանէ բարեբաղդութեամբ բազում ընդունելոյ։

« — Գիտացիք, ասէք, զի չկարէի առնել այլ ազգ ի մօ« տոյ տեսանելով զանձնայն և լսելով յամենեսեան։ » Այո՛ Գեր. Տէր, նախատես գոլով իմ այսր վիճակի ձերոյ՝ ազգարարի ձեզ յառաջագոյն և ի հեռուստ առաք, չգնալ ձեր ի Հռոմէ, և կամ գոնէ չյամել անդ ընդ երկար, առ ի չտեսանել զանկնելն և ի լսել յամենեսեան զանուղղութիւն։ Թէպէտ և եռաք ինձ ընդ այս երկիւղն իրաւունս, այլ զանազան ինձ զայն այժմ, թերեւս յետոյ ակնկալութեան։ Ապա հարկաւորիմ և ես վերստին երկրորդել զանուշադ բանսն թէ, ոչ իրաւասութեամբ եռուզի որք եռուզի ձեզ խորհուրդ ի Հռոմ գնալ, յայնսիսիկ ժամանակի յոր կայիր վիճակ ձեր և հանգամանք Եւրոպայ։

« Յորում բանի նոր օրհնութեան չնորհ յոյժ մեծ

վախճար և գալչեր բանից հօրդ հաւատակից, որով միխ-
թարէք և քաջալերէք զմեզ առ ի խորհուրդ և ի գործս յայս
կարեւոր յոյժ հաւատակից ազգիս, այլ արդեամբք, յորոյլ-
լովք զգործադրութիւն տալին, թէպէտ և խոչն մի ժամանակ,
ոչ խրախուսեաք զմեզ, մանաւանդ հայհոյեալ ի պատճառն
յորոյզման, որ ունի տակն.

“ — Առաջարկութիւն լինի այդպիսի լեալ այսր երկամա-
“ յառաջ, ասէք, և յայնժամ ոչ պատշաճ համարեցաւ ժո-
“ ղովն վանական, այժմ զիա՞րդ համարձակեցայց ես ինձէն
“ հակառակ այնմ տալ հրամանս։ ”

“ Ոչ յիշեմք մեք, թէ այսպիսի ինչ առաջարկութիւն եղեալ
լցէ վեհիդ ի մէնջ առաւ, բայց եթէ վասն բանի տպագրու-
թեան քերթուածոյ վ. Հ. Արսէնի, ընդ որ արարիք զայս
պատասխանի, թէ “ խորհուրդ յղելոց այդր քերթուածո-
“ վ. Հ. Արսէնի ի տպագրութիւն ներածելոյ կառաւնի գրոցքն,
“ թէպէտ և ոչինչ անտեղի, բայց զի չկարէի առնել զայն
“ ինքնին միայնակ, հաճեալ ի ժողովն խորհրդականացս մի-
“ ածայն քուէիւք բացատական առաւ պատասխանի, զի և
“ առ այսոսիկ են նշանագիրքն ի տպագրութիւն աշխարհա-
“ գրութեան, զի միառեակ գրոցքն այնոքիւք ոչ վճարեսցի
“ տպագրութիւն մատենիկանն, այլ և այլեայսի և այլօրի-
“ նակ գրոց եւս լցի կարօտ, և որպէս այսոքիկ առին, նոյն-
“ պէս և այդոքիկ այսոր մարթացին յղել։ ”

“ Ահա ընդ այս է լեալ առաջարկութիւն առաւ և այսպիսի
պատասխանի և պատճառ առեալ ի վեհէդ, որ բոլորովին
այլազգ է յայս առաջարկութենէ մերոյ տեսակաւ և պատճա-
ռաւ, որպէս առաւ յայտնի երևեալն. զայս չկարծեսցայս առա-
ջարկութիւն մեր ոչ վանական և ոչ խորհրդականացդ ժողո-
վոյ, այլ միայն գիտութեան և հաւանութեան վեհիդ և օրհ-
նութեան ձերոյ, որոյ ծանուցաք, և զոր խնդրեցաք ըստ
ժամանակին. և յիրաւի՝ քանզի զինչ ունի ժողովն ընդ այս
գրոչել, զի ոչ այժմեայ ունիմք խնդրել ի վանացս և կամ
ի վարժարանէս ի ձախս տպագրութեան գործոյս, հոգալով
մեր զամենայնի յառաջագոյն, առարկութեամբ ազգայնոյս,

և ոչ զոք այսի աշխատասէր խնդրեմք ի գործս, յանձն առնել զայս ջանիւքեամբ վերապատուել Հ. Գաբրիէլի, որպէս և յանձն էառ զաշխատութիւն աշխարհացոյցին, որ տպագրեցաւ և տպագրեցաւ ատ ի Փարիզ, և որպէս զաշխատութեան տպագրութեան ճառից մրցանակատարաշխութեան աշակերտաց վարժարանիս, հանդերձ թարգմանութեամբ ի հայ լեզու բանաստեղծական գործոց միոյ ոմանց Լամարթինեի, որ և ատ ի Փարիզ տպեցաւ։

« Խոկ եթէ կայցեն այլ ինչ պատճառք որք մեզ անգիտելիք, կարծիք ինչ ընդունայն մտանեալոց ոմանց արդեօք, յառաջ ես ի խոհականութիւն վեհիդ բառնալ զայն ի միջոյ ձեռն բարեաց հատարակաց որ է միայնակ նպատակ մեր առհասարակ։

« Մնամ

« Գերապայծառ Տէրութեանդ ձերում

« ի Փարիզ, 25 յունիս. 1851.

« Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

« Յարդեալսատիկ և Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և մեծարանաց ոգւոյն,

« Զայս վերջին թուղթ գրեմ Վերապատուութեանդ առ ի Հռոմէ, ի պատասխանի գրեցեալդ առ ի Ջենէ ի 14 ամսոյս։ Առեք ցաւել Ձեզ զի յայսպիսում ժամանակի այնպիսի բնաւորութեամբ զբ կայ մեծատար ի Պօլիս. և մեք զան ժամանակս հարկաւորեցաք կարգել զնա յայն պաշտօն՝ ոչ առանց նախընթաց հաւանութեան միտքն որ անդ, զի կարծեցեալ բառհարկին խօսել ընդ Վանկին. քանզի Վ. Հ. Արապեան պատճառել զձերութիւն՝ հրաժարեալ էր գրեթէ յամենայնէ. բայց վայրապար եղեւ ակնկալութիւնս մեր, զի և առ արդ զհանդերձութիւն իւր պատճառել և ներարգելեալ, որպէս թէ կենդանւոյն մեռեալ կցէ հրաժարէ յամենայնէ. բայց զո կարգեցեալ փոխանակ նորա։

„ Մարթ էր կարգել զՀ. Յովհաննէս, բայց զի առժամանակեայ յղեցաք զնա անդր, և այնպէս խակ ծանուցաք և գրեցաք առ Խաչն, որ որպէս գուշակեմ, չէ յոյժ հաճեալ ընդ յերկարել նորա անդ, և յայսպիսում ժամանակի եթէ գրեցից Ձեզ նմա անդ և փոխել զգեստս իւր, խիթամ զի հակառակեացի այնմ Խաչն, և որպէս խորհուրդ առաքակ բարձցէ զարձեալ այր: Վասն որոյ իմ խորհուրդ այս է, զալ նմա այր առ ժամանակ մի և ապա առնել երթեալ անդր որպէս ձեռաւոր, որ հզօրագոյն եւս լինի. նմին իրի խակ երկրորդեցի առ նա զհրաման գալոստեանն այր, բայց տեսցուք թէ զինչ արասցէ պատասխանի:

„ Ընդհ ունիք վասն հաճութեանս իմոյ ընդ տպարութիւն Բառարանութեան Հ. Ալիշանայ, զորմէ վաղ խակ գրեալ ձեզ էի զնացի ես ի վանս, զի եթէ Հ. Պետրոսին և Հ. Մանուէլին չեւ սկսեալ են տպարել, մի տպարեցցին: Բայց իմ բանք ոչ վասն այդպիսւոր տպարութեանն էին, զորմէ որպէս և նախընթացիւս գրեցի, չկարեմ ասել զինչ արդ միանշեւ գարձայց ի վանս և անտի գրեցից ձեզ զհաճութիւնն իմ հատանութեամբ ժողովոյն յոր յոտամ:

„ Բայց զի ոչ գոյզն զինչ իրք են սկիզբն տպարութեան այդր յանուն միաբանութեանս, և մարթ է թէ անխոհեմ անձնք ժամանակաւ զեղծանիցին այնու ի վատանդ միաբանութեանս, կանխաւագիւք գրել ինձ զհաճութիւն ձեր ի դադարութիւն այսմ:

. . . . . .

. . . . . .

„ Միաբեր ողջունիւ եղիցին ասա ընդ ի

„ Մաղթեմ ողջ լինել

„ Ձարդ գյատարիւ Վերապատուութեանդ

„ ի Հռոմ. 24 յունիս. 1851.

„ Ն. Ծ. ԳԱՄՐԳ Վ. ՀԻՒՄԻՒՉ

„ Արքեպիսկոպոս և կից. Արբայ. „

Պատասխանի Հ. Սարգսի տեսալ թղթոյ Գեր. Հերմիւզի, յորում յիշատակէ զկարծիս իւր որ զընդունայն ակնկալութենէ մխիթարութեան նորա ի սրբոյ Ժողովոյն, և ցրէ զանուտի պատճառս և զկասկած նորա որ ընդ տպագրութիւն օրագրութեան ի Փարիզ, օրինակ զայս.

« Գերապայծառ Տէր.

Զցանկալի և զվերջին նամակ Վեհիդ, զոր ետուր ի Հռոմայ ի 24 յունիսի անցելոյ, ընկալայ ի 1 սեպտեմբերի ներկայ անտի զհանդամանաց իրացս անդ, որ ի համբերատար աշխատութեանդ ձերոց : Գոհանամ յոյժ զվերին խնամոյն, որ պահեաց զձեզ քաջառողջ յայնչափ ժամանակ և յայնքան վտանգ, և աղաչեմ զնա զի պահեսցէ զձեզ միշտ ի նմին, և հաստատեսցէ ընդ այն զիւր միխիթարութիւն. քանզի ի մարդկանէ, թէպէտ և յանձանց սրբոյ Ժողովոյն, չունէի և չունիմ ես բնաւ միխիթար ինչ ակնկալութիւն, խելամուտ և փորձ դոլով իմ ի բազում ամաց հետէ իրաւանց և արդարութեանն որ անտի :

« Եկից արդ ի խնդիրն որ վասն տպագրութեան մատենից ի Փարիզ և ի փարատումն կասկածանաց ձերոց ընդ այն : . .

« — Ոչ զոյգն ինչ իրք են, ասէք, սկիզբն տպագրութեան « այդր յանուն միաբանութեան, և մարթ է թէ անխոհեմ « ոմանք ժամանակաւ զեղծանիցեն այնու ի վատ միաբա- « նութեան : Նախեւաղիք գրել ինձ զկարհուրդ ձեր ի զգու- « շութիւն այսմ : »

« Ասեմ և ես նախ՝ ամենածանր ինչ իրք են հաստատութիւն վարժարանիս աստ ի Փարիզ երաշխաւորութեամբ միաբանութեանս. զի մարթ է անխոհեմ ոմանք զեղծեալք ի վարչութիւն սորին՝ վտանգեացնեն զմիաբանութիւնս :

« Արդ՝ նմէ հաստատացն և հաստատացեալ Միաբանութիւնս զվարչութիւն վարժարանիս ի ձեռս այնպիսի անձանց յորոց խոհեմութիւնն վստահ եղիւ և լիցի, ապա պարտ է գնոյն

վատահութիւն ունել ինոսա և ի տպատրութիւն մատնելոյ այսր. քանզի նոյն անձինք են որք վտրեն զմարժապան և տպատրին այսր զմատուցանս, և ոչ այլ անձինք . . . Եւ եթէ վստահութիւնս ունի իշխանութիւն յետս կոչել զանյարմարն ի պաշտօնէից վարժապանիս, ապա կարէ յետս կոչել ասոի և զանխոհեմսն որք զերծանիցին ի տպատրութիւն մատենիցն ասոր ի Փարիզ, և կամ խոտանել տալ զայն. և ապա ոչ միւթ բնաւ այսոր վտանգ ինչ միտանութեանս :

« Եւ երկրորդ՝ թէ այդպիսի կասկածանօք և խոտանօք լքանին սիրտք և կապին ձեռք անձանց միոց ասոր, ի յօրինել և կամ ի թարգմանել ինչ մատեան, չունելով վստահութիւն ընդ անվրէպ տպատրութիւն գործոց իւրեանց ձեռամբ այլոց այդր ի վանս, մանաւանդ ի գործս ուսումնական, յոր միւթ տպրդին սիրտք, և մանաւանդ ձեռամբ այնոցիկ որք անժանօթ են պիտութեան այնմիկ, և յոր մի և եթ սխալ գնան մեծ առնէ մատենին . . . զորոց գիտցն ունին միտքն ասոր, և չվստահին բնաւ յանձնել ումեք այդր ի տպատրել զգործս իւրեանց : . . Ապա չէ պարտ զի մնասի կասկածանօք մատենագրաց ոմանց խոտան լինին իրանք ընդհանուր Հասարակաց :

« Ահա կանխեցի գրել վերին գիտութիւն իմ ի գիտութեան այսմ, գրառնելով զկասկածանսն որք ընդ այս, թէպէտ և գրառեալ էի ես զայս յառաջագոյն գրութեամբս որ ի 5 անցեալ տմնեան, և որ ունէր այսպէս.

« — Առանց խառնելոյ յայն գինեղիս կրօնի, յորոց ոչ « ըստատրութիւն մատց, այլ վէճ ի գայթագղութիւն սր« գիտաց, և առանց առնելոյ անդ քննութիւն ինչ քաղաքա« կան իրաց, յորմէ ոչ օգուտ, այլ վնաս գերի ազգիս : »
Սակայն ի վերայ այսր ամենայնի եթէ իցեն ոմանք այդր որք հակառակիցին այսմ զանպատեհ պատճառանօք, ունել ունիմ ես ասել նոցա բազում ինչ իրաւամբք և արդարութեամբ, բայց ի ժամուս այսչափ միայն ասացից, թէ « Կարեն նոքա « խոտորել զճանապարհ գիտոյն, այլ չկարեն խափանել « զընթացս նորին : » Այս է, կարեն նոքա չհաւանիլ ի յայնոսիկ որոնք ի վէրս ասոր հրատարակեցին օրագիրս այս, այլ

ցանկ նա զգաստասութիւն մեկնելոյ եղբօր իւրոյ ի Հռոմ. մայ դառնալ ի վեննեայէ, և զխոստումն արարեալ պարկ ի Հռոմայ յերեսաց խռովութեան որ ի քաղաքին, և զյապաղումն դառն մարդանութեան որ ի Վաւրոցին, օրինակ գայ.

" Գերապատիւ Տէառն Հ. Վարդան վարդապետի կաթողիկոս ազգին.

" Գեր. Արքահայրն չկարացեալ մեկնել առաջ ի շրջիկութիւնս, հանդերձ մեկնել առ վաղս, վասն որոյ զրկեալ ի հանդերձանս և յոյզկութիւնս, չկարաց գրել այսօր առ ձեզ, և ես խոկ համառօտս առիթիս վճարէ զայս.

" Արքայքն մեկնելոյս ի գիւղ, զորմէ բազում բանք և մեկնութիւնք առնեն առ, այլ հաւատոն այն է, զի քաղաքս չեւ եւս է յանդարտս:

" Ամենայն զրուածք մեր ի կարգի եղան առ, և են քառ բառականին ձանձիք ձերառաւորաց, և արքայքին խոկ կամք են զի ածցին ի ժողով: Վասն որոյ յուսամք զի առաքարդեալ պաշտօնեայք Վաւրոցին ոչ եւս կարացին ի մէջ իւրեանց դառել գիրն, այլ հարկ է նոցա հանել զայն ի ժողով, և այսպէս ապահովեալ արդարութիւնս մեր: Բայց քանի թէ անապահեալ առաքեն ժողովն վասն այդց եւս պրականաց նորա:

" Ազգականն զձեզ ձերոնին և Գեր. Արքայն. ազգայն սիրոյ Պ. Հ. Ամիրեանց, և կարօտագին սիրով ձեռամ

" Մնամք վերապատուութեանդ

" Ի Հռոմ. 4 յուլիս. 1851.

" Ն. Ծ. և հոգևհարազատ եղբայր

" Հ. ԵՒԻՒԱՐԴ ՀԻՒՐ.

" Արքեպիսկոպոս Շիրակայ. "

Պատուխանի Հ. Սարգսի առեալ թղթոյ Գնր. եղուարդ Հերմիսպի, յորում յայտնապէս գուշակէ զպատճառ մեկնելոյ պատկին ի Հռոմէ, և ոտգոնել զանպատեհ վարչութիւնն պետութեան նորա, և ցուցանէ յուսահատութիւն ընդ յաջողելն իւրեանց մերոց ի պատասխանի անդ, և ցաւի յայժ ընդ կարուստ ժամանակի երկուց հարցասաց պատասխանոյ ի մեռանիս, օրինակ զոյս.

„ Գերապայծառ Տեառն և հոգևհարտպատ եղբօր իմոյ կարօտապին ողջոյն.

„ Զընտրհատիծն Գնր. Տէրտէրեանդ, գրեալ ի 4 յուլիսի, ընկալայ ի 10 սրբին ամսոյս, և ծանեայ անտի զանորոշ հանգամանս իրաց մերոց այդր, և զգաւելից վհատ քարտքիդ: Տէրն ինքն յաջողեսցէ մեզ, առաջնորդելով Առաջնորդին մերոյ ողջոյն հասանել ի վանս, և այցելութիւն արասցէ բնակչաց տեղւոյդ, և համօրէն աշխարհի, ազատելով ի բռնաւորաց:

„ Յայտնի են պատճառք մեկնելոյ այսի սրբազանին, և չկարօտ այն բազում բանից և մեկնութեանց, անպատեհ դնացք վարչաց պետութեանդ, որոյ առեալ սրտին զսիրելի սրբազանն յաչս ժողովրդեան, և ազատութիւն գպաւոնական անունն ուղղափառութեան առաջի անպիտանեացն ի հաւատս և չարախտաց:

„ — Որ սուր սունս արով անկանի. „ ասաց Քրիստոս վախանորդին իւրոյ Պետրոսի, յորժամ եհան նա զսուն զի Մալքոսի: Ծառչ և ոչ սուր ցուցաս յերկինից Առաքելոյնոյն, և ասացաս նմա այնու չարիքագի չնչամահաց իւրոց: Սուր Մահմէտի միայն սուսս ինդրին Գաղղիոյ հրեշտակապետի ի հնազանդել զմարդիկ Ղուռանին իւրոյ:

„ Ձինչ զանազանութիւն կայցէ սրով ի գնացս նորա և դայ, անուամբ միայն և ոչ արդեամբք քրիստոնեայ: ... Բազում են ընդ այդ քաղաքականութիւն դոցա անաչառ քննութիւնք և դատաստան երեսի մտանողաց յեկեղեցւոյ

կան և յաչխարհիկ կարգաց և յամենայն ազգաց, յորոց զվիճն վիայն կարեաւր վարկայ, առաքել առ ձեզ այսու պատեհիւ ընթերցումն, առ ի տեսանել՝ թէ որո՞վ ճանապհն նորա զարդարութիւն և վերաւոյն քրիստոնէական քաղաքավարութիւնն ։

« Ապա աւելորդ համարիմ եւ, յետ քան հանուցելոյ ըզդնացս վարչաց պետութեանդ, մանաւանդ յայսմ ժամանակի, առնել ինչ պատասխանի այնր բանից նամակի ձերոյ, որք հային ի հանդամանս և յեղս իրաց մերոց այդր. այն զի և ձեզ խակ թուի թէ անպատանեալ տակաւին ժոլովն վասն այլոց նա զբաղանաց նորա։ Այլ միայն յիշեցուցանեմ ձեզ վերըստին զայս ինչ որպէս արդէն ասացի որ ընդ կորուստ անգին ժամանակի երկոքին Գեր. Հարազատացդ, պարտական ձեր յիւրաքանչիւր ի խնդիրս անտես և վնասակար, զոր պարտ էիք ծանել ի կատարեալն, յորում և ի փառս Հաստատչացդ, ի բարեկարգութիւն ուխտս և ի լուսաւորութիւն ազգիս Աւուր կորստեան այսորիկ ։

« Այլ՝ Գեր. Տէր, կորուստ մեծ համարիմ եւ զիրաքրիկ իմն անկարգութիւն ի միաբանութեանս, զի վնաս մեծ ծագեսցէ անտի, չտանելով զարման քան ժամանակին . . . և շահ մեծ գիտեմ ազգիս և փառս միաբանութեանս զիրաքրիկ ինչ գրաւոր աշխատութիւն ձեր . . . և ապա մնայ ինձ քաջալերել և աղաչել զձեզ, զի յայս միայն պարտականէիք, և զի միխիթարեալք զիս հաղորդելով և ինձ գաշխատասիրութիւն ձեր, յոր աշխատեցայք և զոր յառաջ ասրիք ցայդ ։

« Մնամ

« Վերապայծառ Տէրութեանդ

« ի Փարիզ՝. 15 յունիս. 1851.

« ի. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԼՈՒՐԵԱՆ. »

Պատասխանի Գեր. Եղուարդ Հիւրմուզի տուեալ Թղթոյ Հ. Սարգսի, յորում ծանուցանի դհաճութիւն և դհատուցու-

*Թիւն իւր ընդ բանս Թղթոյ նորա, և խոստովանի զճշմարտու-
Թիւն հանդերձ վկայիւ, կարմինել Մոյի, և ցուցանէ յան-
ուանէ զրանաւոր պաշտօնեայն որ ի Մաւրոցին, և զպղա-
տարաթիւնն որ ի գառամանէ անտի։ Յիշատակէ զհնարինոց
գնացս Գեր. Եզբարեանի, զանպատի ընդ անկարելիր վիա
Հ. Յովհաննու Սարկաւճի, չկամելով գնալ անդ օգնել նմա, և
չնորհակալ լինի Հ. Սարգսի ապա ի խրախուսել զինքն, օրի-
նակ գայս.*

« Գերարգոյ Տեառն վերամեծ վարդապետի և հո-
գևհարազատ եղբօր անձկաւէտ ողջոյն.

« Ընդ չնորհելոմդ ի 15 յուլիսի ընկալայ և զոպատիր
իսա ու Համարիմն, զոր ընթերցայ սիրով, այլ առաել
քան զայնոսիկ զրկեցաւն ի Վերապատութիւնդ՝ ընդ որս
յոյժ զուարճանամ. քանզի Վերապատութիւնդ կամի իմն՝
նորագործ ճարտարապետութեամբ զերկիրս երկին առնել, և
գինակիցս սորա երկնաքաղաքացիս, որ ցանկալի է, բայց ան-
հնարին։

« Պարտ էր ինձ առ բազում ժիմակեաս յետուլ, բայց արա-
գամութիւն Վերապատութեանդ և առանց այնոցիկ քոյ
խնդամուս լինի իմոսոկց մարդս. վասն որոյ ցաւ մեծ է և ինձ
ընդ կորուստ ժամանակիս, զի յերկուց ամաց հետէ չկարեմ
գրել և ոչ առ մի յօդուտ մերազնեայց։ Յանկոյն առ նո-
ցին օրինակ պատճարութեան՝ որ պակաս յայգին, և յեր-
կուց ամաց հետէ կոյ առաջի իմ Տակաւս չեւ ակեալ։

« Ջնոյն բանս Վերապատութեանդ առէ և կարմինել
Մոյ. « Յաւիտ ընդ կորուստ ժամանակի ձերոյ։ » Սակայն և ոչ
ինքն ցարդ կարաց բառնալ զպատճառս կորստեանն, Թէպէտ և
համարձակապոյս խոստացաւ վասն միր ընդ արքեպսկոպոսն.
քանզի այժմ բարեացակամ Մաւրոցին էշխէ ի վերայ նորա, ընդ որ
զպատճառն և կարմինալ ինչ ելցէ։ Ա՛հ քանի ցանկալի էր ինձ
ի Վերապատութիւնդ դէմ դառնալ քանի մի գայր այր,
ի քաջալերել զինս, և Թերևս կարէի իսկ բառնալ զպատ-

իսա ալ Նամարթինի, զոր ընթերցայ սիրով, այլ առաւել քան զայնոսիկ զրեցեալն ի Վերապատումն ենէզ՝ ընդ որս յոյժ զուարճանամ. քանզի Վերապատումն իւնդ կամի ինձ նորագործ հայրապետութեամբ զերկիրս երկին առնել, և զնոսիկս տրտում երկնաքաղաքացիս, որ ցանկալի է, քայց անհնարին,

« Պարտ էր ինձ առ բազում միջակէս յեռուլ, քայց արապատումն Վերապատումն ենդ և առանց այնոցիկ քոչ խելամուտ լինի իմոյոց մտացս. վասն որոյ ցաւ մեծ է և ինձ ընդ կրօնաս ժամանակիս, զի յերկուց ամաց հետէ չկարեմ գրել և ոչ առ մի յօգուտ մերազնեայց: Ցանկալի տալ նոցին օրինակ պատմագրութեան՝ որ պակաս յայգին, և յերկուց ամաց հետէ կայ առաջի իմ Տակիտոս չեւ սկսեալ:

« Ջնոյն բանս Վերապատումն ենդ առնէ և կարծիս Մայ. « Յաւիտ ընդ կրօնաս ժամանակիս ձերոյ: » Սակայն և ոչ ինքն յարդ կարաց բանալ զպատճառս կրօնանն, թէպէտ և համարձակագոյնս խօսեցաւ վասն մեր ընդ սրբազանին. քանզի այժմ քարտուղար Ծաւալոցին էրեալ ի վերայ նորա, ընդ որ զարմանան և կարծիքք ինքնին: Ա՛հ, քանի՛ ցանկալի էր ինձ զի Վերապատումն ենդ զեթ զամիս քանի մի գայր այր, զի քաջալերէր զիս, և թերեւս կարէր խոկ բանալ զպատճառս կրօնանն ժամանակի իմոյ և գայլոց ամենեցուն ի վանս:

« Ջերկուս գայլոսիկ ամս այնպէս վշտօք անցուցի, զի յոյժ առաւել վախճարեալ գոանէի յարհաւիրս մարտին՝ յոժամ Ասլանոյ շուրջ պատեալ զօրք հարկանէր զքաղաքս, և առմբք թօթափէին զմեզ. զի առմբք այնոքիկ ոչ այնքան հարկանէին զիս ի սիրտ, որպէս նամակք Ծաւալոցին հարկանեն:

« Վննոսականն մերձ ի շունչ վախճանին՝ տակաւին ոգորի ընդ մեզ: Ասեալ իսկ լցեալ զի տեսեալ ի գրուած այլ ի Ծաւալոցն՝ որով հնարի ցուցանել արդարացի զապստամբութիւն Պապիկեանց, և զատապարտել զՄելքոնեանն խրոմքն, իբր թէ ի ձեռն աշխարհական բազկի տախտակ նոցա զՊրակտա-

ամեն ի վճիռն յոյն, որով և անկեալ ինդրոյս : Եւ ապա ի գլուխացից և ի պատրոյ վարանութեան իւրոյ կամի ցուցանել, զի ինքն է յաջորդ Մխիթարայ, և մեք խոտորեալք ինամանէ :

« Այլ ես շնորհ ունիմ սկզբոյ վերապատուութեանդ, զի և ի հեռուստ այսի խրախուսէ զիս . բայց արդարև առաւելապէն յոյժ լինէր ինձ խրախոյս, եթէ հանգուցանուիլ զվերապատուութեանդ լինէր առատ ի : Իակ ես յանձն առի, զի գէթ առժամանակ մի գայր զգործունեայ և փորձ տեղւոյս այսր, և գրեցաք առ Վ. Հ. Յովհաննէս, զի գայցէ այսր ի գործակալութիւն, և ես իբրեւ օգնական նմին աշխատ եղէց որպէս ցարդն : Առ նախկին դիր հարազատին իմոյ ժխտական ես պատասխանել, առ երկրորդն չես ես պատասխանեաց երկու ամիսք են . այլ չյուսամ ինչ, և այսպէս լինի կատարել յանօգուտս զնշխարեալ առաքելս :

« Գրկախառն համբուրիւն ճեամ կաթողիկն

« Սիրելի Վերապատուութեանդ

« ի Հռոմ. 4 օգոստոսի 1851.

« Ն. Ծ. և հոգեկցորդ եղբայր

« Հ. ԵԴԻՒԱՐԴ ՀԻՒՐՄ.

« Արքեպիսկոպոս Շիրակայ . »

Պատասխանի Հ. Սարգսի առեալ Թղթոյ Գեր. Գէորգ Հիւրմուզի, յորում ցուցանէ թէ չէք զանազանութիւն ի Մատեանն և ի տուրբ ժողովէ, զհակառակութիւն բանիցն որ ի Թուղթն նորա, և թէ տուրբ ժողովն ոչ երբէք արդարացուցեալ է զմերանութիւնս յայտնապէս, այլ լուռելեայն միայն . ցուցանէ զսակաւ և զնուազ արժանն նորա որ ի տպագրեալ Մատենին տերունին, այլ և զվնասակարութիւնն որ առնէ. յանդիմանէ զհնարիմաց քաղաքավարութիւն նորա որ ի խընդիրն նոր օրագրութեան, և յիշատակէ զգնացս Հօր Յովհաննու և Հ. Եսայեայ ոգւովքն հանգերձ, օրհնակ գայս .

« Արհեստասէր Տէր.

« Ջերկոսին նամականին ձեր, պրեաք յԱնգռնայ և ի Վիեննէ, ընկալայ ըստ ժամանակին, և ընթերցայ զնոսին զարբ մտցմամբ մտաց և ցաւոք սրտի: Զարմացմամբ մտաց ասեմ, յաղագս զանազանութեան զոր առնէք ի Մատլոցն և ի տուրբ ժողովէ, յորս վնաս ինչ և բազում, ասէք, հասանել զայն պատճառ.

« — Պառնասոս որ ի Մատլոցին, որպէս ինչ գործէ զամենայն, ի տուրբ ժողովին ոչ միայն չէ գործ, այլ և ոչ առն, զի չանկանի նմա բան, որպէս ի ժողովէ առաջադայելոցն մերոց, քարոզութեան, և Ճրանանի իսկ որ ի Մատլոցին գործ է և նախադաս, ի ժողովէ հաւատար այլոց ծերանալոցն ոչ ինչ առնի քան զմիոյ ուրուք զօրեն բանք »

« Ասացի ես և առեմ դարձեալ՝ թէ յորս ոչ վնաս ինչ և բազում, մանաւանդ թէ ոչինչ զանազանութիւն գոյ, հասանել զայն յորդանոյ անտի լերոց և ի բանից իսկ գրութեանց ձերոց. և յիրաւի քանզի առնիցէ յորդանոյ լերոց ճանաչի, և ոչ իսկ անուանէ առեալ նմին: Արդ հարցանեմ ես վեհիդ, զի եթէ Պառնասոս ոչ միայն չէ գործ այլ և ոչ առն ի տուրբ ժողովի, քան կարծեաց և բանից ձերոց, ապա որովհետև իրաւամբք ինքնօրէն գործէ նա գահերայն ի Մատլոցին, նոյնպէս քան բանից ձերոց. և ո՞րպէս իրաւունք մխիթարեանցս չգոյին ինչ առ արքունին, ունայնով նորա միշտ բանից քարոզութեան Պառնասոսի, քան բանից գրութեանց ձերոց: Թողից ասել զոչ հանգիստութիւնն իշխանութեան քարոզութեան որ ի ժողովի առաքելոցեցդ և որ ի ժողովի Մատլոցին:

« Եւ եթէ Ճրանանի իսկ ոչինչ առնի քան զմիոյ ուրուք զօրեն բանիք նորա ի ժողովի Ճրանանոցի, ապա որպէս չնորհիւք նորին առ ոտիսն մ՚ը լեալ՝ խոնարհեցաւ ի Պօղոս հրա-

և ի բանից իսկ պրոբեանց ձերոց... և Թողից ասել պհարտանոքեննէ բանից, որ ի հաստատութիւն կարծեաց ձերոց յայս. և ապա զարմանամ ես ընդ այս և ընդ այսպիսի կարծս ձեր ձեր, որք ոչ յայլ ուսանիք յատուկ գան, բայց ևիէ յերկուց պատճառաց ասել, կամ ի չճանաչելոյ ձեր զգրանատեսութիւնն որ ի Մատեան և ի տուրբ ժողովն, (Ելից և ամենայն բազում դեպերեցայք զոր առ գրուեաս նոցին, հանդերձ բազում վկայութբ,)... և կամ ի չկամելոյ ձեր զի այլք ծանիցեն գայն. զի մի արդեօք կորուսանիցեն զվարկն որ գնեանէ, և գնեանեաց նոքին, կարծեցեալ օրինաւոր ժողովոյ... բայց գայս ի նոցանէ միայն կարէք ծածկել որք ոչ են տեղեակ եկեղեցական անուշ պատմութեան... և հանդամանաց մեր այժմեան:

« — Այս ժողով է, ասէք, որ յամենայնի արդարացուց « ցեալ է զմեզ ընդդէմ Մատեանն, և ի ժամանակս նախա- « հօրս մերոյ առեալ զկնդակն գայն ապա առաքելու- « թեան: ո՞վ ընդէր ոչ յիշէք և զկապանան որ ընդ այն ապա առաքելութեան, զկնի քննութեան առեալ մերոյն առաջի նոցին որ այդր ի վենեաիկ, և որ ի Պօլիս, և կամ յայլ ինչ տեղիս. Թողից առ զանազանութենէ և զշնչութենէ նոցին այժմ յիշատակութեան Գեր. Հատենին, ունելով նորա գայն ի տուրբ ժողովոյն: Ապա ոչ է ապա առաքելութեան առեալ Եախտհօրս... և ընդէր ոչ արդարացոյց նա ցարդ զհալածեալսն ի քրնութենէ Հատենին, կնքով արդէն զանմեղութեան հալածելոցդ և զանիրաւութեան հալածչին, չառեալ զոգս հրամանն զառնալ յապա առաքելութեան իւրեանց. վասն զի Մատենին, այսինքն Յրանեանի և Պանեանցի չեղեալ չեալ առ ոտիսն, խոհականացան դէպս գտանել յայլ:

« Տեսանէք զգուր Հատագովութեան և զնեան մխիթարութեան ձեր, այլոյքն հանդերձ...

« — Չհատատես բանից, ասէք, մարթ է վերստատա-
« տութիւն առնուլ ի նոցունց ապա ոչ ինչ առաքելու- « թեան: ո՞վ Այս- « տեղ են և ընթերցեալ գայն, այլ բազում ձանձրութեամբ և տրտմութեամբ, վասն անդ ստացեալ որ ի նմին. բանդ

զարդիւնս գործոց Նախահօրս մերոյ ի տպագրութիւնէ առեալ զրոց ցուցանել նա. եթէ արդիւնք մեծ իցէ այն, ապա մեծապոյն եւս Ազգին վարդապետին, առաջին գալով նորա յայն: Իսկ զարդիւնս գործոց միաբանութեանս հաստատէ ի վիճակեցեալ Ղեւոնդեայ եւ Յովսեփայ, որոց առաջինն թէպէտ ի գրուած լինէ իւր գովութեամբ իսկ զմիաբանութենէս, բայց յայլ գրուածս իւր պախարակէ զնա:

“ Արդ՝ եթէ պարտ է հատուցակաց հատուցանել բանից գրուածոյ Ղեւոնդի, ապա հատուցանէ բանից և այլ գրուածոց նորին գիտելոց յեղոյ... իսկ վիճակեալն երկրորդին ոչինչ համարի յաշս հատուցակաց, ի համարս տգէտ և անարդ արանց դասելով զնա... Բազից ասել զվիճակեալն որք ի լրութեան, ասի և անտի լսելոց, առանց լինչ քննութեան և հաւատոց:... Ահա քառ այժմ են և այլ հատուածք բանից որք ի նորոգ տպագիր տեսրակին, և որք ոչ բերեն, ոչ օգուտ լինչ միաբանութեանս, և ոչ պատիւ հեղինակի նորին, չգիտեմ ես, որո՞յ միտս ծնունդ իցէ այն.

“ Գանգատ անել, թէ տպատարտ և զուր հատած միջոց միաբանութիւնս ասի և անտի. այլ թէ ուսո՞ւ և ընդ՞ր: ոչ ասէ բնաւ. զան զի ակնածէ և երկնչի յայտնել զանուն հալածչին, Հասունին և Վաւասորին: Եթէ ակնածես և երկնչիս զու ի նոցանէ, ընդ՞ր հրատարակես զտետրակդ, զի չկարին ընթերցողքն առնել անտի գաղափար, չճանաչելով յանուանէ զհալածող միաբանութեանդ և զպատճառան հալածանաց. ապա այնպէս է որպէս թէ չկայցես լինչ հրատարակեալ. Բազից ասել զվայրապար ծախուց և զծաղուց ի հատուածոցդ:

“ — Հռոմէականն մեր իրք որ ընդ Ազարենի և ընդ Հասունի և ընդ Հասունեան պատրիարքին յուսամ, ասէք, թէ ի բարին յաջողացին Տէրամբ, միայն թէ ոչ ազգայինքն որ ի Պօլիս եղեցին լինչ մեզ ի վնաս:”

“ Կարծեմ ես թէ և իրքն Պօլսոյ ոչ եղեցին լինչ մեզ ի վնաս, եթէ վեհդ և անդ ի Պօլիս երթիցէ անձամբ, որպէս և գնաց ի Հռոմ, և որպէս յուսայ ընդ յաջողութիւն իրացս

*ունել . բայց պիտացել ի Պաղեստին դեռ կենդանի է , և իշ-
խէ ոչ միայն ի վերայ սուրբ ժողովոյն, այլ և ի վերայ սրբա-
գանին իսկ, ընդ որ զպահանջ կարողութիւնքն ինքինին, քան
բանից Թղթոյ Գեր. Եղուարդայ :*

*« Աւուր կարուտեան անդին ժամանակին և կարեւոր սրծա-
ծոյն, որք կարէին ծախել յօգուտ կարօտելոյ ազգիս . վասն
բանիցս և կարծեաց Մայ . « Յաւէտ ասէ ընդ կարուտս ժա-
« մանակի ձերոյ . » քան բանից Թղթոյ Գեր. Եղուարդայ :
Միայն վնասն է որ սակաւ ցաւի ընդ այն և բարեաց յա-
ւոյ, չկարեմ ասասի և զինչ . . . չատացից դադարեցնել այնո-
րիկ որ ի ժամանակս յայսմիկ . . . և ցաւօք սրտի զինադադ
տարաբաժանեան այսր ի Փարիզ օրագրին և այլ ինչ կարեւոր
գրեան :*

*« Թոյլտ ես արդ առնել պատասխանի բանից նախընթաց
Թղթոյ վեհիդ, թէ եղեալ էցեն սոսկ երկուին և կամ ոչ,
և այլ երկու առաջարկութիւնք սպարզելոյ այսր զիարդիա-
վէսն և զայլ օրագիրս ի գրոց լեզու, և թէ զինչ արարեալ
էցէք այնց պատասխանի, ոչ յիշելով ձեր զժամանակն հա-
ւասաւս, զորմէ և մեր զգուշութիւն եղեալ, և զի գոյիւ այնր
նախաշաւիղ էին բազմասիրեալ կամաց ձերոց, համառօտելոց
արկէն ի մուխ և յայտնելոց սպա օրինաւոր կարծեցեալ ձա-
նապարհս, քանիք համարակաց և յայտարարութեանն որ
ունի պատկառ .*

*« — Վասն սպարզութեան այսր ի Փարիզ և օրագրին զոր
« առաջարկեցէք, որմէ և գրեալն էր ի Հռոմէ՝ ընդ զայն
« իմ այսր հոգ կալեալ համն զինադադրին ի ժողով առաջնոր-
« յից, ընդունելով զամենայն Թուղթս ձեր գրեալս վասն այ-
« նորիկ, և ժողովն համարին, թէպէտ և զամէն զամենայն
« ձեր և զգայնութիւնն գեղեցիկ օրհնել ազգիս, բայց ընդ
« սպարզութիւն այսր վճռական և համառօտ քանիք
« ոչ համեցաւ, այլ սոսկ սպարզել սուտ ի վաղս : Բայց իմ
« ոչ չսպասեալ այսմ, համն գիրն ի ժողով վաճառին, և
« նոսա գործեալ ընդունել զամենայն գրեալսդ ի ժողովին,
« և ձառագեալ ի քոնէդ ամենայն գործեալ վարուցեալ*

«ցին ի բացատրելոյն, և ոչ միտք միայնոյ տարածայնելով
«զի այդր տպագրեցի, այլ առ ի վաղս տեսին ամենեքեան.
«և թէ չեցէք վառեալք և չհաճիք ընդ առն սրբոյդ,
«նկատեցէ այլ Գ. Հ. Ամբրոսիոս կամ սրբոյդ, և միտա-
«նեսցի զայդ ոք յընդ նմա:»

«Ահա այս է պատասխանին առաքելութեանց և հայցուածոց միտք ի ձէնջ այսր, առանց բնաւ ինչ պատճառելոյ անդ, և առանց յիշատակելոյ և քննելոյ զառեալն միր պատճառս, և զրաժանն տարակուսանացդ, այլ բացատրեան միայն և անպատճառ խոհան, իբրև բացարձակ հրամանն և վճիռ կայսերական:

«Ոչ կամիմ ես առ առնել քննութիւն վկայութեանն սուրբ, զազատութենէ կամացն և զճանապարհէ անձանց ժողովրդոց, զիտելով իմ չափ և փոքր խոկ զոլով յամաց հետէ առաքելութեան ձերոյս, զի առ ի հասանել կամացդ՝ այնչափ կասկածանաք և երկիւղալից հետեւանօք պաշարեալ էք զմիտս զոցա, միանշեւ առանց ինչ պատճառս տալոյ և խնդրելոյ, միաձայն և հաւանութեամբ զառաքելութիւն միր մերժել:

«Եւ հաստատութիւն այսմ, ահա բանք և բառք անդամ պատասխանւոյ ձերոյ ի սկզբանէ անտի յառեալ այսր առաքելութեանդ միտք, որք ոչ ասելի և կամ պակաս են, քան իմաստք սուրբ, միայն զանազան կերպարանօք, քան առնեն քարտուղարութեան ձերոյս... ապա բացատրեան պատասխանին առաքելութեան միտք էր և ի ձէնջ միայն, և ոչ ի վանական ժողովոյն, և զգիտեան ձեր որ ի Հռոմէ և որ այսր ընդ իշձա միր օգնելոյ ազգիս, հնգետասան էր:... Այլ կամիմ և զայս անձին համարիմ ի խոհ միտս յիշեցուցանել ձեզ ինչ ինչ յանցեցեալ անցելոց, որք և յոյժ ի դէպ են խնդրոյս, և որք ի խոտան արդեօք և ի գործոն միտս միտք վարանութեանդ:

«Արդ՝ յիշել յիշեմ եւ զոյժալիւ գնացս հանգուցեալ Պետ. Սուքիաս Սանդիանն, որ ընդ հանգուցեալ Հ. Գաբրիէլ Ասանիքեան, որոյ յառաջարկել նմա երբէք երբէք ինչ ինչ

կարեւոր և օգտակար միտրանութեանս, քան ճանաչման և քան փորձոյ խորհ, և ի չհաւանիլ նորա ընդ այն՝ եթէ ան. չիամութեան խոչ և եթէ ան ի հաճել զկամս եկեղեցւոյ ասելոյ, որպարտաւորեալ զանձն իւր առնուլ, թէ չկարէ ինքն զոյշ մնալ ի առանց առաջակայից և վանականի ժո. ղովոյ, և այնպէս մերժէ միշտ զառաջարկութիւնն նորա. և զայս Գեր. Սամուէլեան ինքնին պատմեաց ինձ միանգամ և երկիցս բարեհաճութեամբն իւրով, իրրեւ ճշմարտ ինչ հնար կարծելով զայն գնացս իւր ընդ նմա։

“ Բայց խնամոյ զայն ունէր Հ. Գաբրիէլ Ակնարկեան, և այնչափ վշտանոյ ընդ այնպիսի գնացս նորա, մինչեւ հանիլ ի զղուշաւոր բերանոյ իւրմէ և ի ցաւագին սրտէ բարբառ. ատրուսիելի,... զոր ասես ուրեմն ինքն իսկ Գեր. Սամուէլեան յայտնեաց ինձ գրով, առեալ զայն ի Լմնոան յամին 1844, ի ժամանակին յորում վշտացեալ էր նա մնհնարին ի բանից և ի գնացից ուրումն յեղբարցս սուրբ Հ. Ոսկեանէն, որոյ խոր հրդով և ընկերաց նորին արհամարհեալ էր երթեալ զառաջարկեալն Հ. Գաբրիէլի Ակնարկեան, և որ ունի այսպէս.

“ — Ամէն առաքեալ, յոր գոյակերպ նշմարեմ ինձս “ ցաւով սրտիս, և խիթամ յոյժ թէ ի գուցէ մարդկու. “ թեան ուրումն հաւատացի ի վերայ իմ, որ ասէր ցիս, թէ “ բոլորտորեակն կանացն Ասորոց նման ընտրութեան մի “ Արեւելոյ, զի կոյժանեցի յառնոյ ընտրութեանս մի Արեւմտից “ Ցայժ ոչ ուրեք ի վեր հանեալ էի ես ցաւոյ, և ահա առ “ վշտիս ասացի ի անդրոջս, ինձ առանձ ի խրատս և ի զգու. “ շութիւն։ ”

“ Ի բանից սոցին ճշմարիտ խոստովանութիւն Գեր. Սամուելեանի, թէկուզ և անազան յոյժ և անտրտունջ, պարտիք Գեր. Տէր, ի մտի առնուլ, թէ գանի անպատեհ են և վնասակար այսպիսի գնացք Ասորոյն վերոյ, մինչեւ հանել սուր ի բերանոյ Հայոցին իւրոյ զայսպիսի տարտամելի բարբառս, և բնազդաբար վհատիլ զոմն ասես։

“ Ցիշեմ ես և զայլ բնութիւնն և զգանգստս ծերունեայդ ուրեք ասէր ինձ զգնացից Գեր. Սամուէլ. գանգի առնին նորա,

թէ յերկրաստարդական հասակի եկեալ նորա ի վանս՝ և վարժեալ գոլով ի շուկայի սրանց Պօլսոյ, վասն որոյ այնպիսի գնացուք վարէր ընդ մէսրանս։ . . . Թէպէտ և զուք ի մանուկ հասակի եկեալ էք ի վանս, և անծանօթ հնարից շուկայի սրանց, բայց եթէ յերկար ամաք կացեալ ձեր ապա ի Պօլիս, և խառնեալ ի հոգս և ի խնդիրս ընտանեացդ՝ վարժեալ սրտիւք էիք յարուեստս յայս վաճառիւ։ . .

« Յիշելով յիշեմ ես զերկրին քննութիւն և զգանգատ ձեր որ զոպտրեալ մասնիկս վանացս, և զպահանջումն ընդ այն. քանզի կամիք զուք առաքել ձեզ նախ ի Պօլիս զձեռագիր տպելի մասնացս, զի քննեալ և պատշաճ դատեալ ձեր զայն ի տպագրութիւն, ապա տպագրիցին զնոսին. քանզի ասէք, թէ վանականքս ոչ ճանաչէին զիմաստ և զպիտոյս սրոյն բացակայ գոլով ի Պօլսոյ և յազգին իւրեանց։ . . Իսկ այժմ զհակառակն առնէք. զի զքննութիւնն և զդրոշմումն տպելի մասնիցդ վանականացս անխափանէք, արհամարհեալ զվարժիս բացակայ եղելոյն, թէպէտ և յայնժամ վանականքս զայնչափ և զայնպիսի անձինք էին, և զուցէ առաւել... և այն գանգատ և համարձակ գրութիւն ձեր այնչափ, մինչեւ ասէր Գեր. Սամսոեան, թէ զարձեալ կարմիրացեալ է քիմ Հ. Գէորգին, յընթեռնուլ զիմսոյդ (*)։

(*) *Հ. Գէորգ Հիւրմիւզ յայժամ ի Պօլիս էիմբ և իբրեւ մի յերիտասարդ միաբանից՝ Վրէ Քաղքիս առ Գեր. Ներսիսս Սամսոեան, առնելով ի նմանէն քննութիւն և զատատանն ընդ գրուածս սմանց ի միաբանից, և խնդրէ առաքել առ ինքն ի Պօլիս գրուածսն զայնոսիկ յառաջ քան զայլսն զի քննեացէ զայն և ևիմէ զատուցած զատից տպագրեացին այնմ. քանզի ինքն միայն ճանաչէ զօգտակարն տպելն գոլով ի միջի նորին։ . .*

Ընդ այս ինդրատուն գնացս նորա առ Գեր. Սամսոեան, թէ կարմրացեալ է քիմն Հ. Գէորգոյ։ . .

Եւ յայժամ նա ի Վենետիկ էիմբ և իբրեւ Աբբայ գրնդհակառակն առէ և առնէ. ահա զայն հակառակութիւնն քանից և գործոց նորա յուշ առնէ նմա Հ. Սարգիս։

Եւ ոչ այսչափ միայն, այլ և կարճառաբանութեամբ խրատ ընդրուն նա ի հարց խորամանդութեան Հասունի, ասելով ի Հռոմէ գրով վկայութիւնն արժանաւորութեան նորա յեպիսկոպոսութիւն, և գայն ի ծածուկ առանց ծանուցանելոյ Վենետկոյն խրատ Գեր. Սամսոէի, թէպէտ և առ երկիցս և երիցս գրեալ հարցանէ զնա գպատճառս յանկարծ գնալոյ Հասունի ի Հռոմէ, այլ նա առնէ պատասխանութիւնս . . . և ահա գայս ամենայն անդադար գնացս նորա յիշեցուցանէ նմա Հ. Սարգիս և յանդիմանէ ի պատճառութեան։ . .

Ստանաբանութիւն Հիդինակին։)

«Առաջ էի այս փոխոխութիւն կրծոց և զառաջանէի ձերոյ, բոլորովին հակառակ. ո՛չ ապաքէն ի չարից զանց վարկնւանիւ որ զանձին ձերդ, և չոչինչ հանապազիւ զայրոյ:

«Ի դէպ իսկ այժմ համարիմ և զայն պատմանին ձեր զոր եառաք ինձ երթալն այդր. քանզի յառնել իմ գնացեալ Գեր. Առաքելոնէ, թէ պրանդակ ժամանակ Արքայութեան իւրոյ հիւանդութեամբ անցոյց նա, ասացէք ինձ զոր յայնժամ. «Լաւ է դի վախճանեցաւ նա. թէ յերկար «ևս ապրեալ էր նորա, բոլորովին միաբանութիւնս յան- «կարգութիւն հասանէր: » Ո՛չ չափազանց վարկ զանձնէդ առնել ձեզ համարէի ևս արդեօք զայս բանս ձեր, եթէ այժմ ևս վիճակ միաբանութեանս լուսոյն և ոչ յառնդոյն էր քան զայնր ժամանակին: Թէպէտ և առնէր նա թերութիւն, սակայն առնէր և կատարեալութիւն, խոստանայր խոնարհութեամբ զճշմարտութիւն ապա, զոր վերագոյն յիշատակեցի:

«Յիշեցէ՛ք արդեօք զերթեալն խոտան վաճառել այլոց զկապարեայ տառս մեր, և այս խոտանն վաճառման ժողով պրպտեալ էր, և միաձայն հաւանագոյնս գոհէին հատուցանել և ժամանակի Արքայութեան Աղբրտեանին, և պատճառն ոչ այլ ինչ՝ բայց եթէ կարձառոտս անձնասիրութեան: Թէպէտ և յետոյ գիտէ ընդ այն, առանձինս զի վաճառէին զայն վիճականքն և շահէին անտի արծաթ, բայց անագան յոյժ և անօգուտ, շհարցանելով ոտրոք այնուհետեւ և զկապարեայ տառից մերոց. ապա ծնաց մեզ ի խոտանանել անտի շահ, յիշատակ կարձառոտս անձնասիրութեան:... Զնոյն շահեցայն անշուշտ և այժմեան խոտան տպելոյ այսր գհայերէն մատեանս:...

«Պարզ յիշեցուցանել ձեզ զօգտակար առաջարկութեան մեր որ գվաճառմանէ պատճառս, և գխոտանն որ ի ձէնջ ընդ այն անտի կատարածոք, բազմահոգւոյ հնարեալիք... Թէպէտ և յետոյ գիշատչացն ընդ այն անհնարին յոյժ, այլ անագան և անօգուտ, կորուսանելով զպատեհութիւն վաճա-

ուրոյ պայն . . , և թողից յիշեցուցանել ձեզ պատգամ և վկայեալ առաքելութիւնս իմ, զոր արհամարհելով արհամարհէք միշտ ըստ սովորութեան ձերում ։

“ — Եթէ չկայէք, ասէք, վատահք և չհաճիք ընդ առն “ որոգայթին, նկատեցէ այսր Պ. Շ. Ամբրոսիս կալ արգել- “ լին , և վարանութիւնս զայլ որ կայցէ այդր ընդ “ նորա : ”

“ Ասեմ եւս այս, եթէ տակաւին չկայէք խնայեալ զվնասն որ ի վարանելոյն պաշտօնէից վարժարանին և խրատուցանել անոն, կայցէք և զայլ երկուս տանս ընդ նորա : . . Թէպէտ և տեսանեմ եւս և վարձս խակ գիտեմ, զի չէ ձեզ ինչ փոյթ զվնասուցն և զխրատուցն՝ որչափ մեծ և ծանր կայնն այնք, չուռ է զի կամք ձեր տառապին և հրամանն բացարձակ կատարեսցին . . . ապա թէ ոչ՝ չառնէք դուք զայդ լծուցիչ արտ և ձեռաց վնասակար ազգարարութիւն, հանդերձ հեգնական մին եղանակաւ :

“ Հարցանէ յառաջս հաստատակաց, թէ “ Ասոյ պարո “ կէ առանել զշահատրութիւն իշխանութեան : ” Պատաս- խանի. “ Յանչափ վարողաց գոյն : ” Յուսայն ես առանել ձեր զոյն ի Պառնասոյ, այլ վրխակցայ ես ի յուսոյ անտի եմի :

“ Ընթերցեալ է ձեր զհին գարս պատմութիւնն, պարտիք ընթեռնուլ զմիւսն և զվերջին գարուց պատմութիւնն, խնա- նայք յայնժամ զդանդաղութիւնն որ ի նոսին վարչու- թեանց . . . Թէպէտ և ազգ մարդկան և ապինք նոյն են, այլ ճանաչումն և գաղափար նոցա յոյժ զանազան, մանաւանդ յայսմ գարս և ի մանուկսն : . . Յաւէտ ես յոյժ, զի ոչ գիտէք դուք, թէ յորմէ՞ս կայէ իշխանութիւն Պառնասու- թեանդ :

“ Ի վախճան բանից խնդրեայս այսորիկ, երկարեցեմ վ՚եհով զառաքեալ սուցեալսն որ ի նախընթաց թուղթն իմ, թէ “ Կարէք խոստել զձանապարհ գնոցն, այլ չկարէք խա- “ փանել զընթացս նոցին . ” այլեւքն հանդերձ : Զի մեզ փոյթ զի անուն մեր կայցէ կամ չկայցէ պատգրեալ

ասացեալ, չունելով մեր բնաւ կարձառօտս սովորութիւն։ Եւ ես ինձ զի օգտիցի անօթ ապրն մեր, և աշխատութիւնս ի փառս Աստուծոյ լիցի։

« — Իբր վ. Հ. Յովհաննու ծանրացան ինձ ի հոգս, ասէր.
« և թէ՝ գրեցի նմա և դարձեալ գրեցից զի առժամանակ
« մի ի Հռոմ, և նա չառնու զայն յանձն, այլ կամի զալ
« նախ այդր ի Փարիզ, և այդր չգիտեմ թէ գինչ արասցէ
« գարձեալ։ Զգիտեմ զկնի իրացն։ »

« Ի նախընթաց թուղթն իմ ծանուցի Վ.Հ.Ի. համառօտ բանիւք գինիք բնաւորութեան նորա. ծանուցից ձեզ զայն ի սմին առաւել ընդարձակ բանիւք։

« Արդ՝ ի սկզբանէ անտի, ի հինգ ամաց հետէ խնդրէի ես ի նմանէ միջոց, և ամենաւարտապէս կէս իւրաքանչիւր տարւոյն ցուցանել ինձ ճիշդ գհաշիւ տարեկան ծախուց վարժարանիս, և նա բաւ սակաւութեան իրաւ նախ չորէ ի չոր արկանէր զայն, և ապա կէս տարւոյն ասէր թէ չկարէ փակել գհաշիւն, կարօտեալ գումար ինչ արծաթոյ. և այսպէս անմարթ եղեւ ինձ առնուլ ի նմանէ անգամ մի գճիշդ հաշիւ ծախուց վարժարանիս։

« Եւ իբրև կոչեցաւ նա այսր, ասացի նմա նշանակել զաճառն տալիս իւր և յանձնել մեզ զայն առ. արար նա զայն, և եցոյց անդ իբրև հնգետասան հազար ֆրանք արարեալ, թէ-պէտ և քանի մի առարք չառաջ առացեալ էր ինձ, թէ արարք վարժարանիս ընդ ամենայն իբրև առն հազար ֆրանք էին։ Ի զանազանութենէ բանից նորա կասկածեալ իմ զուշակեցի, թէ առաւել նա էին արարք վարժարանիս, քան զոր առացի ցնա թէ բարւոք լիցի չառաջ քան զդարձ իւր այդր հաստատել զրամանոցակ արարս վարժարանիս, և նա զրեցից, ասացի, Վ.Հ.Ին հայթայթել առանց վնասու և իցէ եղանակս հնգետասան հազար ֆրանք ի հաստատանել զայն և ի վաճառել գհաշիւն, և վասն այսորիկ արար է, առ-ցէ, չատակել զինչ իւր առարս քանի մի։

« Ասաց նա ինձ, թէ չկամի ինքն առ անդի կարծեաց ոմանց այդր գառնալոյ. չգոհանալ առաւել նա հաստատե-

ցայլ ի կարծիս իմ, թէ առաւել էին պարտիքն քան զերեւելացուցեալն, որպէս և առաւել իսկ. զի վտանգակ հնգետասան հազար ֆրանկի, քառասուն հազար ֆրանք էին պարտիքն, ծածկելով նորա զայն յինէն միշտ. զի ամենայն գործք և րա գաղտնի էին յինէն, յորոց զմին յիշեցից առ

և Գնաց էր նորա հաւաքումն ինչ հանդոյց և գնուած Բուչնոց, ի պէտս բնական պատճառին, և պահեալ զայն ի անձնի միտս վարժարանիս, և ոչ ինձ զայն ցուցեալ և տացեալ բնաւ, այլ միայն Վ. Հ. Վարդիկի, և զայն ի վերջին առաք ինձ ելոյ իւր առն, և իրրեւ առանց ուրուք պահեալ իւր, Թէպէտ և անգիտացաք յետոյ ի դնացողին, զի գնեալ էր նորա զայն, այլ Թէ քանի գումար արծաթով, ոչ գիտեմք զարդ։ Նոյնպէս և զրազգեմ պատկերազարդ մատեան, պահեալ նորա զայն ի անձնի իւրում առանձին, առանց ինչ անգիտակից, գիտեմ իւրանչիւր նոցին, այլ միայն վասն գրեանց այսչափ գումար արծարոյ։

“ Յետ առաւոտ ինչ գարձի իւրոյ այսր գրեաց նա առ իս Բուդի մի, յորում յուցանէր զինքն յոյժ գոհ և ուրախ ընդ առաքեալն էջերոյ իւրոց այսր, զանձնական այլազգ գումանիլով քան զոր կարծեր յառաջ, գնաչխ ծախուց վարժարանիս յուսալով առ ձեզ առանց ինչ քննութեան։ “ Եւս է, “ ասէր, զի երբեք երբեք երեւեցցի ի վաճառ ազգիչն և կամ “ գործակալն վարժարանիս, այնուհետեւ անձնայն ինչ “ զերծ յոչնչացի, առանց ինչ հակառակութեան. չի “ գրուածքն արդարեք են, ասէր. մարդկային սխրա- “ Թեան։ ”

“ Արդեւ յայնժամ այսր Բղեց նորին զարժան պատասխանին, յանդիմանելով զանհոգութեան նորա որ զերազանց ազգասոյց ազգիս, և զանձինք բնաւորութեան իւրոյ Վասնզի նորա զգաստ էր իւր զարգասց այնուհետեւ գրել առ ի Բուդի, մանաւանդ և խելամուտ եղեւ Թէ չիցոյ տեղի զանձայլ իւր առն վերադրել. վասն որոյ սկսաւ այնուհետեւ խնդրել առաջի գնացեալ ինչ իւր, զոր անկրաւորեմբ ուրեք և ի ծածուկ պահեալ էր։

ա Աչքակս էին ամենայն գործք նորա դատաստի միջոց : Զանազանութիւն և զշտապութիւն նորա ի մատակարարութիւն վարժարանիս զուն հինդ , տեսանէք և իմանայք ի զանազանութենէ տարեկան ծախուց վարժարանիս առելոյ ձեզ ատա , թողեալ զծախս չինուածոց և նորոգութեան պատանոյ , յոր ծախեաց նա ոչխարութիւն և անխոքութիւն իւրով երեսուն հազար ֆրանք , վաճառաց նա նոյնպէս ի հինգամեայ մատակարարութեան իւրում հարիւր և քսան հազար ֆրանք , ընդ ամենայն հարիւր և չետն հազար ֆրանք , և առաւել արդեօք :

« Թէպէտ իմ զայսոսիկ նախատեսել ապ տարին ձեզ առանձին և ի ժողովի անդ առաջակայից , սակայն ոչ լսելի եղեն բանք իմ . և ի յանդիմանել զիս տարուն , (Հ. Վարդան Այվազեան ,) իբրեւ թէ պատասխի ետ զանուն պետական անձին , ոչ ինչ փոյթ եղեւ ձեզ , ուստի ձեր պղծել ի մուխ :

« Նոյնպէս և ատա ի փարիզցւոյն ձեզ յայտնապէս զշտապութիւն նորա որ ի ծախս առանձին զգեստուց իւրոց , յորում ծախեալ էր նա ի միում տարւոջ եօթն հարիւր ֆրանք առնել քան զիս , և ընդ այն եւս ինձ պատասխանի , թէ « և նա « զանել ի հաշուի իմում զանպատշաճութիւն ատան ֆրանքն , ոյ որ էր զին միոյ զոյգ կօշկի , զոր ես ասէի թէ իմ էր հասուցեալ , և նա ասէր թէ ինքն էր հատուցեալ զոյն , և այսպէս արհամարհեցէք զպղտորութիւն իմ յանձնային , և վերծեցէք զառաջարկութիւն իմ միշտ պղծս և այժմիկ . . .

« Սակայն ի վերայ այսր ամենայնի զանգատ նա և արձանագրէ , պղծս և լուայ ի Թղթոյ ուրումն որ ի Պօղոյ , պղծս թէ չճանաչին այնչափ անաց աչխատութիւն և արժանիք իւր . . . և իրաւամբ արդեօք , քանզի ուր ոչ գոյ արդարութիւն , ոչ գոյ անդ և գոհութիւն . . . ապա մի՛ զարմանայք և տարակուսիք զի ծանրանալ ձեզ հոգ իրաց ատոր և անտի

« Ահա նոյն ձեզ տեղեկութիւն առանձ ընդարձակ զվերոգոյ բարոյ և զդեցիկ նորա . կարծեմ ես թէ չունիցի նա երես և համարձակութիւն գոլոյ այսր , յետ այսչափ անհա-

մոքնեանն որ ի կողմանէ իւրմէ, և յանդիմանութեանն որ ի կողմանէ մերմէ ուղղակի և անուղղակի գրութեամբ։ Բայց եթէ ունիցի նա վստահութիւն և ակնկալութիւն արդեօք ի բանիդ Թղթոց ձերոց առ ինքն՝ ման որոյ կարի նախ գալ այսր ի Փարիզ, զայս ես ոչ գիտեմ. զի ամենայն խորհուրդ և գործ ձեր գանխաւալ են լինէին իրրեւ յօտարէ և ի կատարածառայ անձնէ. հանգերութեան պէտք են ինձ և մխիթարութեան որ ի Տեառնէ։

« Ահա ամիսք երկք են, զի չառաքէ այսի գործակալն ընտանեական ձախան վարժապետին, և վճռեմ ուսուցանել ի նմա պատճառն վարժապետին, և գիտասցեն իւր միանգամայն, թէ առնել գործակալին մինչև գարձիլ ի վենետիկ. և ահա գործքդ և ոչ յիշէք զայն բնաւ։

« Արդ՝ գիտացիք, զի յանդատար գտանիցանուց հին. պարտաւորեալ ասի, և ման կարեւոր ձախուց ճանապարհի գնացելոց մանկանց՝ հարկաւորեցաք մեք հայթայթել ասի և անուն մոխ արծաթ ասան հատոր ֆրանք հանգերձ վաշխիւք. ի գտանել մեր գործակին որ ի Վենետիկ, պարտիմք հատուցանել նմա զայս փոխ առեալն, Ռասդէ անուն վեց հատոր ֆրանք, որ հայր բաւական լիցի ման ձախուց օրոսատ և ապահովիցեր անուց։

« Զգայ պարտ է ձեզ հոգալ զձախուց հարկաւորին և այլ անուց, ... եթէ կամիք զի հանապարտրդեցի վարժապետն, և ոչ դադարիցի, որպէս փափաքի Վ. Շ. Նայլ վարդապետ Մղրտչեան, առ ի հատուցանել զնմանուսն ի հատուցանել զպարտս վարժապետին որք այդր և ի Զատաւեան, որպէս զի կարիցէ այնուհետեւ ննջել առանց գոլոյն ժամն ի գիշերի և երեսս ի ցերեկի, և որպէս զի ունիցի գոհանալ ինչ ասկաց առ ի բառնել զայն երեսին երեսին և զատարճանալ յանձն իւր։...

« Ապրէն բան բաղդին վարժապետին երկու եղակաւ գործակալոյ հանդիպելոցդ մեք, ինչպէս և երեսքին նորա ի միոյ վերակացուէ գատախարկեալ, բայց բարեկին հանգստակ են իրերաց. զի մին ոչ համոզէ բնաւ զիարդ արծաթոյ, և

միան զրեթէ պաշտէ զայն. և զի մին անմիտ չտայրութեամբ իւրով արկ ընդ պարսիւք զվարժարանս, և միան անարգ կծծութեամբ իւրով ծանրացոյց զայն և զոհեցոյց զամենեսեան։... Սակայն և երկոքեան նոքա ի ձէնջ հատուածեցան ի պաշտօնն յայն, թէպէտ և մին չէ հաճոյ այժմ աչաց ձերոց, այլ միան բարի է յոյժ յաչս ձեր, չիմանալով ձեր տակտիկն և չտեսանելով զթերութիւն նորին։ Տէրն ինքն պարծանացի պարսաւս պղիւն։

„ Յաղագս տեսութեան միոցն ընդ Յովհաննու Մարտոլի ի Լոնտոն, ասէք. „Իսկ թէ կայցէ ի խոտանումն իւրում զոհ „ լոյ ի վարժարանէ և պնդապոյն յոյժ յօդիւ միոյ կապե„ լոյ ընդ մեզ։ Բայց զմիջնորդս և զմիջոցն այս ցանկութեան ձերոյ մերժելով մերժէք տակտական քաղաքավարութեամբ ձերով, բացատական պատասխանեալ։

„ Խնդրեալդ մեծապէս ընդ տարեւորական փլինոբխոն պատկերոյց վարժարանիս, և ակն ունիմք զի ի գարնանի իւրեանց միջին օգտակարք պղիւն և ի գումորխէն և ի պարծանս վարժարանիս։ Այլ՝ ակն ունիմք և մեք զի նորա յուսարկացին զայդն մեր, զարմանայն գնա ի մերկրանիլ զնոյ տպատութեան, քան զխոտանութեան Բարերարին տանելոյ ի կատկի իւրում. գանդի Մխիթարեան վարդապետքն սպատհարեալ ձեռն և զերի եղեալ յետամուտ խորհրդով և վատ քան զոյն՝ ծուռացան խոտան զգայեան իւր և զգաստն վանեցանին։

„ Զարմացմամբ մեծաւ և ցաւոք սրտի պղտնեալ զհամերկն Վ. Հարս և Պ. Եղբարս,

„ Մնամ

„ Գերապայծառ. Տէրութեանդ ձերում

„ Լեփարիզ. 19 օգոստ. 1851.

„ Ի. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԼՈՒՐԵԱՆ. „

ԳԼՈՒԽ ԼԲ.

Պատասխանի Գեր. Եղուարդ Հիւրմիւզի առեալ թղթոյ Հօր Սարգսի. — Այլ պատասխանի Գեր. Եղուարդ Հիւրմիւզի առեալ թղթոյ Հ. Սարգսի. — Թուղթ յանկիւնացրեալ Հօր Սարգսի առ Հ. Յովհաննիս Սրկոչի. — Թուղթ շնորհակալական և բարեւաղթական Պարոն Մոխսիս Հասուճի առ Հ. Սարգիս. — Պատասխանի Հ. Սարգսի առեալ թղթոյ Գեր. Գեղարդ Հիւրմիւզի. — Պատասխանի յանկիւնացրեալ Հ. Սարգսի առեալ թղթոյ Հ. Մանուէլի Քաշուհեցւոյ. — Պատասխանի Գեր. Եղուարդ Հիւրմիւզի առեալ թղթոյ Հ. Սարգսի.

Պատասխանի Գեր. Եղուարդ Հիւրմիւզի առեալ թղթոյ Հ. Սարգսի, յորում առնէ քննութիւն զգրուածս երկասիրութեանէ Հ. Արսէնի Բագրատունեայ և վերոյն, օրինակ զոյս.

« *Վերապատիւ Տեառն և հոգեհարազատ եղբօր վերամեծ վարդապետի ողջոյն կատարեալ.*

« *Չընդհատեալ ի սիրոյդ ի 25 Նոյեմբերի, հանդերձ այլոցն որ ի ձէնջ առ Վ. Հ. Բագրատունեան և ինամանէ առ ձեզ գրեալ ընկալայ, և բազում զուարճութեամբ և գոհաբարձութիւք վերծանեալ ընթերցայ. զի բազում ինչ խրատականք երկուածոք բանք էին, որովք մարթ էր ինձ օգտել։*

« *Ուրախացայ գոհանալ, զի Թուի ի բանից Վ. Հ. Բագրատունեայ թէ պարտապէ նմանք անշուշտ։ Մի ըզմի Վերապատուութիւնդ, և մի՛ դադարեցցէ ի գրելոյ զինս. զի թէպէտ և այդպէս պատասխանիցէ, այլ ազնուութեամբ բանիցդ գոհ բերցին միշտ արդարք. սիրէ նա ծանչել միշտ զերկասիրու-*

Վինա էր, զոր այլազանօրէն յիմարութիւնս կոչէ, զի ըստ իրաւանն Երազմոյ՝ ծածկել զայնոսիկ կարիցէ. քանզի ոչ ոք յիմաստնոց իրաւ ծածկել զրանաւործութիւն, վասն որոյ ուրանամ զվիժագոյն նորա թէ բանաւործութիւն էցէ յիմարութիւն. զի թէ այսպէս էր, պարտ էր ասել՝ թէ ինքն կամաւորապէս սխրանոյ զյիմարութիւն որ մի՛ լիցի:

« Գոյին և ինձ ինչ ի Թուղթս անդ գժուարինացք, զոր մարթ էր կամակորել. այլ ես ուղիղ ըստ գրոյն իմոմամ, զի մի՛ եղեց յոլդոզ և անուսումն: Բայց չնորհ ունիմ սիրոյդ, զի վասն իմ աշխատ լեալ և օրինակեալ էք զԹուղթան՝ որ յոյժ հաճոյ եղեն ինձ: . . . . . .

. . . . . .

. . . . . .

« Այժմ վերստաւուածութիւնդ գործեալ ցաւեցի ընդ զուր աշխատութեան մեր, այլ զուր աշխատութիւնք այսոքիկ օրհնեն զպետանեան և արդասաւոր գործեն գնասին: Ահա պարտեցայ և ի զուր աշխատութիւն յայսոսիկ ընկղմեալ խորասուզեալ կամ յայրեան անցց հետէ, և գրուել ի գետն շրջմոլիկ կեանս անցուցանեմ, սակայն հանդերձ այսու ամենայնիւ ոչ միայն զժանեակ այլոց սրտիք պետանոյ անձին շահել՝ որում պարտ էր առն իրրեւ զոչծակալ ազատ կալ ի գրաւոր երկասիրութենէ, այլ և օշնութեամբ զուր աշխատութեանցս յաջողեցուս ինձ և ինչ ինչ երկասիրել: . . .

. . . . . .

. . . . . .

« Գրկասէր համբուրիւս Ձեզ

« Վերապատուութեանդ

« Ի Շամախ. 4 դեկտ. 1851.

« Ն. Ծ. Հոգեկցորդ եղբայր

« Հ. ՆԻԿԱՐՈՒ ՀԻՒՄԻՒՉԵԱՆ.

« Արքեպիսկոպոս Ճիրակայ. »

Պատասխանի Գեր. Եղուարդայ տեսեալ թղթոյ Հ. Սարգսի, յորում ընդունի և հաստատէ զպուշակութիւն նորա որ զվիճակին Հռոմայ, այլովքն հանդերձ, օրինակ զայս .

« Գերապատիւ Տեառն և սիրելւոյ Հօր վերատեսուչ վարդապետի կարօտագին ողջոյն.

« Յամենայն ցայս վայր ի պատասխանել պատուական գրոյդ, որ ի 24 օգոստոսի չնորհեալ՝ մխիթարեայ զիս, որպէս և ամենայն Թուղթք . Վերապատուութեանդ մխիթարին զիս ի պանդխտութեանս իմում առ և ուսուցանեն, մանաւանդ առաքելոյ զծխէն .

« Արդարեւ հաւատամ զի մրրիկ ահագին պատրաստի ի վերայ քաղաքիս. զի և ոչ առաջնով մրրկաւն խրատեցաք, և հանապազորդեմք ի նոյն մեզ՝ որ առաջնոյն բարկութեանն ձայնաւոր լինիմ: Արդէն իսկ նշանք մրրկին նշմարին, զոր ընթեռնուցուք ի լրագիրս աներկրայապէս. և նոյն իսկ յանդուգն հանդրձակութիւն Մացկինեանց Հաստատէ զերկիւղն՝ յորմէ խնդրեմք :

« Տժգոհութիւն օր ըստ օրէ ծաւալեալ համարձակ զքաղաքս. յաւուր Տնտեան Տիրամօրն յերանել արքազանին ի հանդէս՝ ոչ ոք կացցէ ձայնեաց, ոչ ոք խնդրեաց օրհնութիւն: Այս ամենայն և եւս հաւատանն զդաժանից գուշակութիւն Վերապատուութեանդ, և ցանկալի առնեն ինձ զխոստաս առի ի քոյ: Այլ ինչ և արձակ արտ կարեմ քաղել քանել զծերունի ուխտն և ուխից ամոյ, մանկանացս իմանիցս:

« Նոյն խոչընդոտն եղեւ ինձ և յանգեալ մրրկի, զոր քաջ նախազուշակեալ յորդորեցի զնա խրախուսել եղանել ընդ իս ի քաղաքէս, ուղեւորել ի մի յերկուցունց հայրենեացս, զի չեւ եւս անկեալ կայր յայնժամ ի մահիճս. այլ ի չառնուլ նորա յանձն գալ ընդ իս, յաւուրս ախտամահութեանն եղէ ապրուան, և նա զերծոյց զիս յամենայնէ : Բայց չնորհ մեծ առնեմ սրտալիր խնամոյ Վերապատուութեանդ, որով հոգայքդ ընդ

*կեանս իմ, և խրատս խոհական պղտչութեան պրկք ի ժա-
մու։ . . .*

“ Վրկտեան համբուրիւ ոտից Ձեռաց

“ Վերապատուութեանդ

“ Ի Հռոմ. 14 մայր. 1851.

“ Ն. Ծ. և հոգեկցորդ եղբայր

“ Հ. ԵՒՈՒԱՐԴ ՀԻՒՄԻՒՋԵԱՆ

“ Արքեպիսկոպոս Ճիրակաց. ”

*Թուղթ յանդիմանութեան Հ. Սարգսի առ Հ. Յովհաննէս
Սրմուեցի, յորում Հարցանէ զպատճառ գանգատելոյ զինքն
նէ. յիշեցուցանէ նմա գանգատեհ դնացս և գիշատակարս մա-
սամբարութիւնն նորա ի Մ. վարժարանին, և յանդիմանէ
զնա արժանապէս վասն սպերախտութեան նորա առ ինքն,
օրինակ գայս.*

“ Վերապատուելի Հայր.

*“ Լսեալ եմ առ յոյժ սուրբ ի բերանոյ Վեհին մերոյ
առ իս, Հանդերձ մեծաւ զարմացմամբ, զի բողոքեալ ես զս-
պասն առնս ի վասն Ձեռամբ մերոյն այդր, գանգատեալ
զինեն, թէ “ Այսր ի սեռնիկն քո խոյզ և խնդիր եղեալ և բացեալ
“ ամենայն տպիք և փականք, և ինձիք բերոյդ ինչ գտեալը,
“ որովք չգիտեմ, ասէ, զի՞նչ իցէ խնամեալ և կամ ուսո՞ւ և
“ յուսի՞ զայդպսիկ լսեալ իցէ և խնացեալ, և կամ զի՞նչ
“ ծառուկք իցեն ի սենեկին ընդ կնքեալ. զայդպսիկ Ձեզ մարթի
“ է խնամեալ այդր և լուսաւորել զինեն։ ”*

“ Ահա բանք բերոյ Վեհին մերոյ առ իս։

*“ Արդ՝ հարցանեմ զեզ, թէ ընդէ՞ր իցեն այդ բողոք և
գանգատ քո, և թէ իրաւամբք իցեն։*

“ Ո՞չ տպրեն յեղ առաքեալ ինչ ժամանակս քո ի Պոլիս

ակտոյք պրել և խնդրել ասել Ի. Հ. Գաբրիելի առաքել քեզ այդր պատեհս ինչ գբանի մի ի զգեստուդ որ կայնի ի գգրոցս անելիդ այր, թէպէտ և փակեալ՝ բայց հատարտակաց բանալեաւ, զոր և առաքեաց քեզ հետ գհետէ և զանազան պատեհս։

« Ի գգրոցն անդ էր և չալն այն աղնիւ հազար ֆրանքի, և էր այն ապահանել ի ցեցոյ առ անհոգութեանդ, զոր և առաք ինորոգել, հարիւր ֆրանք ի վարձ աշխատութեան, թերեւս գտանել ի դնոյ նորին հինդ հարիւր ֆրանք, ի դարման կնոյ ինոսեն վարժարանիս (*)։... Եւ ո՞չ ապաքէն լաւ խնդրոյ գս և լաւ ցուցակիդ առաքեաց նա քեզ ապա գինացեալ զգեստդ և զանազան կարծեցեալ ինչդ. թէպէտ և այս վերջին խնդրեալքդ ընդ մանաւար վտանգաւոր էին, և բանալի նոցին չգաւաս ուրեք ի սենեկիդ, բայց քանզի խնդրեալ էիր զս զայն յանուանէ և ցուցակաւ, հարկաւորեցաւ նա բանալ գգրոյն ձեռամբ գործոյ յանդիմանն ինձ, առ ի հանել անտի զայնս և յառաքել քեզ այդր։

« Խնդրեալ էիր նա առաքել քեզ գնամանքն որ առ քեզ առանձին գրեալք յայլոց. բայց քանզի խառն գոլով ընդ նամանքս հաստրակաց, և գի չունելով մեր բնաւ ոչ ընդունայն հետաքննութիւն և ոչ աւելորդ ժամանակ յընթեռնել և յարշել զայն ի մէնանց, առաքեցաք քեզ այդր ըստ խնդանդումն վտանգաւոյն յարշել զս զայն, զորոյ առ քեզ պահել, և գհաստրակացն առ մեզ զորձուցանել պատեհս. չունաք մեք ի նոսեն և ոչ մի բաղդ կնքելոյ զորմէ բողոքս, թէ չուժեալ իցեմք մեք գկնիքն, և ոչ այլ ինչ բաղդ զաւք ի գգրոյն անդ, բայց յերկուց գրոց ընդունելութեանց առեալ քեզ ի բարեկամէդ Ա. Ռոսէ վառն երեքտասներ ֆրանք պարտուց իւրոց, և այն բաց առանց պահպանի և կնքոյ. զորմէ գրեալ եհարց զքեզ Վ. Հ. Գաբրիել թէ պահանջելի էր այն ի նմանէ թէ ոչ. և զս նոսեր նմա պատասխանի թէ ոչ։

(*) Եալն այն ընծայեալ վաստակս ի Անտոնիկ պէյէ Տէկբեան, և զայն Հ. Յովհաննէս Վրիուչին սեփականեալ և ի ծանօյ պահեալ էր ի գգրոցն իւրում։

ՀԱՅԿԱԶՆ.

«Եւ արդ՝ ևթէ այսպիսի այսոքիկ են հչմարտութեամբ և հաստատեալ յուցեալք լինիլն, ապա ընդ՞ բոլորեա զու զինեն ու. վեհն մեր ի վանս, և զմի՞ն իրաւամբ զանգատես գինեին... Եւ ոչ այլոյժ մնայն, այլ և այնչափ գայրացեալ են, զրպէս լսեմք, մինչեւ ու զանութեան զրոյդ ի մահիճս հիւանդութեան անկանել, և երկիւղ կաթուածոյ ամլ կոթածոց մերոյն այդր, և տեղի գայթագղութեան և մեղադրանաց գինեն այսր, զրպէս թէ ևս իցեմ չարեացդ այդոցիկ առիթ և պատճառ:

«Թէպէտ և Բարեգամեաս զու զրան պատճառն զանգամանաց քոց և գայրացման զրոյդ, այլ յայտնի է այն ինքնին իսկ. վասն զի Հասու արդ իսպառ յոյժ վերամեն զամնայոյդ ի Փարիզ, և մարելոյ զոյն ընդարձակ կեանաց:

«Եւ ո՞ իցէ այսմ պատճառ. ո՞չ սպրքեն անպատեհ գնացք քո, անհպատեհեան և անմիտ չարչարեան, որ ի ժամանակս հրատարակեան իւրեանց սպրատոյ սպրին, և սպերախտութեան առ Բարերարդ:... Եւ հաստատեան այսոցիկ, ահա զանազանեան սպրնկան ծանուց վարժարանիս, որք զրեթէ կիսով չափ պակասին այժմիկ. ապա անհպատեհեամբ և շարչարեամբ վասնիցեր զարձեն սպրատոյ սպրին զանի հինդ՝ հարիւր և յիսուն հազար ֆրանք, և չկարես զու զոյս պատանել, մնելով իմ հասանել ի ձեռին:

«Եւ ահա անկատ զանգամանքդ և յանդուգն արհամարհանքդ զանձնէն այնորիկ, որոյ Բողոքել ի ձեռս զու զանեանց իրաւանց իշխանութեան իւրոց զանի եօթն, և որոյ վիճեալ անդադար ընդ մեծին և ընդ փոքուն ի պաշտպանել զքեզ, և ապա զրեթէ ի քէն, Թէ այլ առնելոյն գրաբիչք իւր արգասիք Լին վարդկայեն ակադրութեան... և Թէ՝ ո՞վ իցէ նա զի հանգամանիցի զանել զգգոյն զու, զոր և ոչ Աբբայն Լիլլն կարիցէ զայն առնել. զի երբ ոդոիչ էր նա ինչուան, ոդոիչ էր զու սպրնամբ, առևտրականի գրեզ ձանաչելով սիտերդ՝ան, և զանձնայն զայն առնելով սպրդ:

«Ոչ առնելոյ չարչարութեան և անհպատեհ զանգամանացդ....
և ոչ մեծ սպրդ առնելոյ զու զանութեան և սպշտպանութեան:

«Բանադատեմ ես յարգարութենէն յիշեցուցանել քեզ զպայմանիդ զնացս քո ընդ ես ի սկզբանէ հետէ, սկսեալ ի 1844 ամէն, յառաջ քան զինել պատահս և հառաւել մեր ի Փարիզ։ Թէպէտ և զամենայն ինչ, զծախս մեր որ առաւ և առնէ ի ծախել էի ես և ի ձեռս քո և ի կամէ, առանց հաշիւ ինչ ի քէն պահանջելոյ, իրրեւ պատասխանատու քո եմ հատարակութեան, և իրաւունս ունելով յայն, առկայն չանցայր զս միշտ ամենայն հնարիւք հետացուցանել զիս ի Փարիզէ և ի վենետիկ առաքել, պատրուակս կարգաւորելոյ իմ առ զիս վարժարանիս, որպէս զի մի՛ այլք իրաւնեցեն յայն. և զայս իրատանդ հնարս քո, կարծելով ցեղդ վասն Հ. Թէոփիլեն անգամ իմացաւ, և ազդ արար ինձ առելով, թէ Հ. Յովհաննէս կամի հետացուցանել զքեզ առ նէ, առ ի վարել քոս ցանկութեան իրաւ»:

«Իրրեւ կոչեցայ ես ի մխիթարութենէս դնալ ի վանս լրնտրութեան նորոգ Արթայէ, և ի գալ առս ի Պօլոյ Հ. Առաւանին հանդերձ ծանելոյն, թելադրեցեր զս նմա գրել ի վանս առ նորոգ Արթայն (ձեռամբ փոստարանին ձերոյ Հօր Գարբիէլի,) և առնել նմա թէ չկամիք զս երկրեանդրդ զվերադրուածն դարձն իմ ի Փարիզ, զոր և յայտնեաց ինձ Արթայն։ Ապա չէ պատճառ քեզ դանգատել այժմ զայլոց, զի չկամին և իրաւամբ ընդ վերոյն դարձն քո այդր ի Փարիզ. քանզի զս զայն ինձ չկամեցար անկրաւութեամբ։

«Կացոյց զքեզ վիրաւորութեան զրժանալ վարժարանիս ընդ ինձ, որպէս և տեսանի ի կանոնս նորին. բայց տեսանել նորս ապա զչարաչար վատակարարութիւնդ զարհուրելոյս և նմանի ի ձեռայդ զպաշտօն զրժանալութեան, յանձնելով ինձ և զայն վիրաւորեալն։ Տրամեցար զս ընդ այն յայնժամ, զնուս ածել զգանդատն կարծիս և զքննութիւնն որ յայդմ։

«Արգահատեալ իմ քեզ՝ ասացի վարել զս զպաշտօն զրժանալութեան իրրեւ ի կրկնանել ինձ տուներն, վասն իմոյ իրրեւ ի քէն տալ ինձ քոս ժամանակին և պարկեշտութեամբ զտրեկան հաշիւ ծախոյ վարժարանիս, և յուցանել ընդ-

դուխտեամբ գինացեալ պարտիսն, առ ի դարման տանելս այնմ, զոր և բազում անգամ խնդրեալ էի ի քէն: . . . Սակայն ոչ երբէք եառեր ինձ զայն քոյ ժամանակին և պարզութեամբ, և ոչ յաւգեր ինձ ճիշդ գինացեալ պարտիսն վարժարանիս, յեօթնեակէ յեօթնեակ արկանելով զայն . . . այլ խնդրէիր յինէն անդադար արծաթ և ցուցանէիր զբեղ յոյժ նեղեալ ի պարտատերաց:

ա. Եւ երբեք կոչեցար դու ի վ.եհէն մերոյ գառնալ ի ժամս, առացի քեզ յայնժամ նշանակել գումարն գնացեալ պարտիս վարժարանիս և Թողուլ մեզ զայն առ, առ ի հատուցանել առանց ինչ տարակուսանաց և խնդրոյ: Արարեր դու զայն և ցուցեր զպարտիսն երեք հնգեառան հազար Ֆրանք, թէպէտ և քանի մի տարեաւք յառաջ քան զայն առացեալ էիր ինձ, թէ բանդակ գնացեալ պարտիքն հազիւ առան հազար Ֆրանք էին:

ա. Ի գանգատանալն բանիցդ դուշակեցի ես թէ առեալ էին պարտիքն քան զգուշանալդ, վասն որոյ առացի քեզ յառաջագոյն գառնալդ ի վանս առեր ինչ, մինչեւ գրեցից առ վ.եհն և խնդրեցից ի նմանէ հայթայթել զկտր և լցէ եղանակաւ հնգեառան հազար Ֆրանք, և առաքել մեզ զայն ի հատուցանել զո ինքնին գնացեալ պարտիսն, և վաճել զայն հազիւ առանց ինչ խնդրոյ և տարակուսանաց մեզ առ ապա բնդ այն: . . .

ա. Առացեր դու ինձ տվերակատ պարզութեամբդ, թէ չկամիս դու առնել առ կամաճանաչ ունիդ որ գյօժարութենէ կամացդ գառնալդ ի վանս քոյ հրամանի վ.եհին: . . ի բանիդ այդ առեալ ես համառեցայ ես և կարծեաց իմ, թէ առեալ էին պարտիք վարժարանիս քան զնշանակեալդ, պարէս և համառեցար ապա . . . զի փոխանակ հնգեառան հազար Ֆրանկի, քառասուն հազար Ֆրանք էին այնք:

ա. Ահա այսպէս ամենայն խորհուրդ և գրիչք քո գաղանի և գանգատ էին միշտ առ, նաև յայնմ ժամուանկի յորում ի կարգիանէ խելի վարիչ գործոց գրաշուռն գրծակցութեան:

ա. Վնաս էր դու գհասարակաց ինչ հանդոյց և գիւանաց

Բաչնոց ի պէտս բնական պատմութեան, և փակեալ էր զայն ի սենեկի մոյ վարժարանիս, առանց հարցանելոյ և ցուցանելոյ ինձ զայն անգամ, մինչ յայտնեալ էր Վ. Հ. Գէորգեանի, և զայն ի վերջին աւուրս մեկնելոյ քո առաւ, և զայն իբրեւ առանձ ուրուք պահեալ անդ, առանց ծանուցանելոյ նմա զամեն առանցառանն, որպէս զի յանձնելոյն նմա ի պահանջմանն, թէպէտ և առաջեայս յետոյ ի գոնապանէն, զի գնեալ էր զոռ զայն, ... չգիտեմ քանի՛ գումար արծաթով. քանզի չես ուրեք նշանակեալ զգին նոցին։

« Եւ Բողոս ասէ զաւետարանիչն, զոր գնեալ է քո լսա զինչ պիտոյութեան կամացդ և պահեալ ինեզքին անենկիդ, յայտնապակ ինչ զրկատանի, զոր և առանց գիտութեան խնդ և խորհրդոյ առեալ էր չինել... մինչ վարդ Նախշէնին մեծ չորք զանազան և պատկերազարդ օրինակ կան ի նոսին, և այլ զանազան պատկերազարդ գրեանք, որք և ոչ ի պէտս վարժարանիս, այլ ի մեսս աղքատաց ազգիս, և զոր ոչ քո է ընթերցեալ, և զոմանս անտի և ոչ բացեալ, զի չունէիր դու ոչ ախորժ ընթերցման և ոչ խոկ ժամանակ. զի յատուկ մինչև ցերեկոյ և անտի մինչև ցկէս գիշեր աստ և անդ չգնելով, և այն ոչ ի զորձ վարժարանիս, զի զայն հոգս բոլորովին Բողեալ էր ատաուորաց վարժարանիս, ... այլ ի գրասանս քո. զի ծախք կատարդ ի տարեկն իբրեւ երկու հազար գրանք էին. բայ նշանակելոյդ, Բողեալ զծախան տեսանացդ, զոր ոչ էր նշանակեալ...

« Եւ Բողոս ասէ զանձամբ չտալովենէդ, որ ի ծախս հազար գրանք ակն ժամացուցի, հանդերձ երկու հարիւր գրանք ակն չղմայիս, Բողեալ զայլ երկու ժամացոյցս զոր ասդէն ունէիր... այլ և գիտեմանակ հանդերձելդ, զի բաց ի գիտացդ ազանելոց և ածելոց ընդ քեզ, Բողեր աստ ի սենեկիդ ևօթն զգեստք, ոչնոսիօթ, գիտեմանակս գրեթէ բոլանդակն նոր. առան բանկին յանձնիս չտեսայ և ի մատրէ, մանաւանդ գերձակի գործ, որում ի վարձ աշխատութեան հատուցանէք երկու հարիւր գրանք, որ մնացեալ էր. երկու գոյդ ակնոսակ մատրեսոյ երկայն զօրոցոյ, և քանի մի գոյդ ակնոսակ

կաչեայ ձեռնոցս. թո՛ղ զարծաթեայ և զոսկեզօծ խաչս, մատս և մատանիս, և այլն և այլն, որք առաքեցան քեզ այդր ի Զօլխս ըստ խնդրոյ քո:

« Իսկ զինչ առացեր զվայրապար ծախուցն որ ի չինաստան և ինդոստանին պատահեն. դի փոխանակ երեսուն և ութ հազար ֆրանքի, ըստ մեր հաշուի արարելոյ ի ճարտարապետէն մերոյ, և այն վասն բոլոր չինաստանին, ծախեցիր դու վասն կէսոյն միայն եօթանասուն և հինգ հազար ֆրանք: Եւ այսմ պատճառք, անծանօթութիւն և անհոգութիւն քո ընդ այն, ըստ վկայելոյ այլ ճարտարապետի ի քննել գոյն, և ականատես անձին եղելոյ ասա ի ժամանակի անդ, ըստ կամին քո, Ասասմ Ալ Ռօսլի. դի ընդ առաւօտն երանէր ի տանէն, ասէ, և ընդ երեկս դառնայիր անդ, և դի չկարէիր հանդուցանել զմեզ քո գործատրացն, և այս յայնժամ, յորժամ չեւ էին հասեալք ի Զօլայ մանկունք վարժարանին, չունելով քո գնա դրամոյն ի պէտս նոցա որ ըստ օրէ:

« Սակայն ի վերայ այդր ամենայնի պարծէիր դու միշտ ասա, թէ քաջ տեղեակ ես իրաց չինաստանի, և թէ՛ քանի հազ և աշխատութեան կրեալ էիր ընդ այն, և զանգառնս այդր վկէնջ, և մեզարիս զհետաքրքրութիւնս, դի ոչ ծանեալք զարդիւնս աշխատութեանս քո:

« Չարչեալ գքեզ երբեմն ատելութեան Տիսօ զանուն ուղղի վարժարանին՝ ասա ի յիշատակել զոյն Ալմանաքի երեսուն ըստ տարեթուանն, որպէս և յայսմ ամի եհարց ցքեզ զոյն, նոյնպէս դու նմա յայնժամ զանուն քո, և նա զոյն յիշատակեաց անդ, որով և պարծես այժմ թէ զքեզ ճանաչէին ասա ամենեքեան ուղղիչ վարժարանին... Ցցեն այդ գնացք քո քեզ ի պարծանս:

« Ահա այսպիսի էին խորհուրդք և ապաշնորհ գնացք քո ընդ ես ի տեղիս անտի մինչեւ ցայսօր ժամանակի, որ և լսէի և չկամէի արդեօք յիշեցուցանել քեզ, եթէ չէին այնք ի ծայրն հասեալք, և արդարութիւն չէր զի քեզ բանադատել: Ցցէ թէ դարձեալ ես ի քեզ գտանիցես զոյն խորհուրդս, և չես ինքդ քեզ...

թիւն իմ. . . . Ապա չմնայ ինձ ընդ այս առաւել ինչ ասել, բայց եթէ զուարթ դառնամանն դասակցիդ Վ. Հ. Եսայեայ զնոյ առ վերատին յիշեցուցանել, թէ

“ — Արժան էր քաջ հասու լինել բնաւորութեան Սո-
“ կռատեան, որոյ ոչ գոյ քաղաքիկ։ Ա՛հ յիշէք զանիրախիտ
“ այն (հանգրուանն) նորա առ Գաղատացիս. և այժմ
“ վիճակ տոլորովին վասկաալ է ընդ Գաղատացւոյն։ Արդ՝ կա-
“ րէք ընտրել, թէ ո՞րպէս համապատասխանել նախընթաց
“ խոհեմութեան և փորձառութեան ձերում. Սորկռատն գոհ է
“ զանձնայն ինչ զրօսանաց և զուարճութեան իւրում. այլ և
“ կնիք բնաւորութեան նորա։

“ Բասելայ. 11 Հոկտ. 1846.

“ Ձեր անձնանուէր

“ Հ. ԵՍԱՅԻ ՄՃՄՈՒԲ. ”

“ Եթէ չառնի ոք կնիք իսկ անհամանարտուց, զինչ պատ-
է զնա համարել։

“ Յառապին պտիւ կարեկից մօտ կնքեմ զքուղթս, և ձեռ

“ Վերապատուելի Հայրութեանդ

“ ի Փարիզ. 17 մայիս. 1851.

“ Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԻՄՈԻՐԵԱՆ. ”

Թուղթ շնորհակալութեան, բարեմաղթութեան և յանձնապատութեան Պատրն Մալեէի Հաստենան առ Հ. Սարգիս Թիմոթէոսեան ի Փարիզ, օրինակ զայս.

“ Յարգոյանելոյ Վերապատուելոյ Հոյր որդիական
խոնարհութեամբ սորբ աջդ կը համբուրեմք բոլոր
բնաւնեօք սորբ օրհնութեանդ խնդրելով.

“ Հրամանաւդ յարգութեան ապրանքը հասաւ և Կահիրէ և ապին զուարթութեամբ ետուն ինձ զգրեալսն

և անոնց եղած քրտինքները Թուխտ արդեանցդ պատուին է որ հիմայ կը վայելէ կոր մեր ազգը և վայելէ պիտոր ալ օրհնութեամբդ անհատ դարեր: Ես ատ արդեանցդ փոխարէն կը մաղթէ թէ բոլոր մեր ազգը հրամանցդ շատ երկայն տարիներ երանելաբեմեր անչուշտ մեր սուրբ Պարպմանչայ դասը դասելէդ, նաեւ սուրբ կրօնիդ ալ որ մեր ազգին փառք ու պարծանք պետն է, թէ մենք և թէ մեր բոլոր ազգը չէ թէ միայն երախտապէտ չնորհակալութիւն պիտի ըլլանք հապա պարտաւոր ենք աղօթք ընելու միշտ անոր հաստատութեանը պայծառութեանը և բարեյաջողութեանը և գործ իւր կենաց:

„ Ամենապատիւ Հայր, պիտնալով արդէ հայրական գութը ձեր ցաւակը Թովմաս հասունեանը որ հրամանցդ խնամքովը հոգ տարուի իւր կատարեալ դաստիարակութեանը որ մեր ցեղին թէ փառք ըլլայ և թէ մեր կենաց զէն անխոնջի և օրհնութեամբդ վերի խնամոն քրիստոնեայ մեր Աստուած վարը հրամանցդ յանձներենք:

„ Ողջ մեր ի պարծանս ազգիս

„ Ի Պօլիս. 1851. 3 դեկտեմբերի.

„ Ամենապատութեանդ

„ Միշտ երախտապէտ որդի

„ ՄԱՎԱՒՆ ՀԱՍՈՒՆԵԱՆ. „

Գաստիարակն Հ. Սարգիս առեալ զդեղ Գեր. Հիւրմէ. ի յուլիս ամսի զնաց ընդ ծովս Կոստանդնուպաւլիս. հոգաբարձեալ էր երկոց Գեր. Ազգիանեան ի Հռոմէ, ճանապարհակցութեամբ Հռոմէից, որպէս և ընդ ընտանեաց անխափան վարուցանութեան երկոցունց որ անտի արդարեւ Հռոմ, և յաւէտ ընդ երկուս ժամանակի նորա, ոյրմէն հանդերձ, օրինակ ոչ

« Գերապայծառ Տէր.

« Ջանախիթար լուր մահու Աւետիք Պաղտասէրի լսեալ իցէք ցաւով յոյժ առատաւ, և զկարեւորն վասն բանի նորոգ գործակատարելոյ անդ, հոգայեալ անդ ըստ ժամանակին:

« Ընդ եւս իրաց Ազարեանի որ ի ժողովոյ Հռոմայ ոչ ինչ տարակուսի ես, հաւանեալս գոյով ճշմարիտ առածին, թէ « Խորամանդն ի խորամանդութեան իւրում ըմբռնի: » Արդէն և ընդ բռնաճնոյին ժողովոյ, չհրատարակելով զվճիռն, ես ոչ բնաւ զարմանամ, ճանաչելով քաջ զսովորական քաղաքավարութիւն Նորա որ ընդ անտերունչ ազգս արեւելեան. միայն ինձ անձանձիկ մնաց յուսով միխիթարել, ակնկալեալ յաղթութեան յարդարութիւնէն որ անտես... այլ երանի թէ չարժէր նոցա այն կարի յոյժ թանկ կորառեամբ անդին ժամանակին:

« Եթէ ծանիցէ որ քաջ զհանգամանս Երոպայ առհասարակ յոր կայ այժմ, ապաքէն չկարիցէ ասել թէ ինքն յանդգնութեան և ի խաղաղութեան կայ ուրեք. ամենեքեան և ամենայն ուրեք ի խռովութեան են, և աշխարհ կարօտին առհասարակ.... Ամեմ

« Գերապայծառ Տէրութեանդ

« ի Փարիզ. 25 դեկտ. 1851.

« ի. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՒՈՒՐԵԱՆ. »

Զառաքեալն յանդիմանութեան Հ. Սարգսի առեալ ինքով Հ: Առնուէլի Քաղաւնեան ի Պօլիս, յորում յանդիմանէ զյանդգուէնն և զանկիրթ կերպիս և զդառնասոյն նորա և այլոց անդ ի ինդիր երանեաց ազգասոյց ազգիս առհասարակ, հայեցեալ ի հրեստակն ազգութեան, օրինակ զայս.

« Գառնակոն Հայր.

« Եթէ չէ արժան առնել զառաքեալն ամենայն անտանելի բանից ինքից, այլ արժան է յանդիմանել զանկիրթս

կարծես քո, և այլոց այդը, որ վերատեսչ տգիտաց տեղիս առհասարակ. քանզի ըստ բանից կտակի Եպիփանեայ յայտնի և պարզ իմանալի, զի Թողեալ է հրեշտակն այն վասն զպրութեան որ և տգիտ մանկանց տեղին Հայոց առհասարակ։ Այսպէս խնայուս Աստուած արդարութեան Աստղիացւոց որ ի Մատրաս, ի քննել զինդիրս զոմն հինգ, և այսպէս խնայաք և խնամեմք մեք, կտակատարքն և ես, զեզերելով յայն յերեսաւն և վեց ամաց հետէ։

« Այլ զոր ճշմարն և քանի ոչ երևելեան ունիք անծանօթ բանից կտակին և անխորձ իրաց նորին զընդհակառակն խնամեայք, վասն որոյ և ինքնահաճ կամօք զատանան տնէք, և կամակոր մտօք վճիռ հատանէք, այսպէս.

« — Ինդիր մեծ է, ասէք, որոշել զընդաւնելութիւն կամ
« զի ոչ ի վարժարանս մեր զմանկունս ի հերձուածողաց տղ-
« զի... բաց առն ի կտակի Եպիփանեայ չէ եղեալ որոշակի
« ընդառնել զմանկունս և ի հերձուածողաց տղայս. ասէ
« չընդունելովն չառնեմք ընդդէմ կտակին, որպէս ինձ և
« բազմաց այլոց թուի։ »

« Ընդ այս անմիտ կարծիս քո առանձինն ես ոչ զարմանամ, միշտով զրկիցուդ և զմանուցուդ յանկութիւնդ... այլ զարմանամ, մանաւանդ թէ ցաւիմ, և առաւելապէս ցաւիմ ընդհանրական մարդասիրութեան, զի չառնելով նորա զայլ զիւրոց անուն, քեզ հատուցանէ այդպիսի կարեւոր պատճառ։

« Աւաղ բազում վարժարանք։ . . .

« Ապա մնամք ևս պատճառք զոր ասա ընդդիմութեանդ, չդնելով ի վարժարան զԱրդունդն մանկունն, և չընդունելով մանկունս ի հերձուածողաց տղայս, և ընդ այս յարդարացուցանել զքեզ բերան ինձ զրանս այնուամենայնի վճիռն մերոյ է, « Բայց մի' ի Հայոց հերձուածողաց զոյս նուագ։ »

« Եւ ոչ խնամս, զի զոյս նուագ ասելով յայտ առնէ թէ չէ նա ի կարծիս քո յայլ անկեսս, զրկել իսպառ զմանկունս նոցա յերաժշտաց ասէ իրեանց, կամակոր մեծիմեծաց կտակի Եպիփանեայ։ . . Բայց զի, որպէս ի նախընթացն ևս ասացի, հրամայեն այն չընդունել զմանկունս ի Հայոց տեղիս,

էր առ մեռոյ երկիւղին որ ի Ծառայէն և յաչակերտսն ներ-
ին, և յայլ հակառակորդաց ... Այո՝ մեռոյ էր երկիւղն
այն, որով և կռակածէր վէհն մեր ի գործ, թէ խոխանէր
Հասան զգալուան այսր այսի մանկանց :

„ Ինձ երկեցեն զերկիւղ, ու ոչ ինչ երկիւղ : ”

„ Ոչ կամիմ առանց յանդիմանութեան Թողուլ զինքնահա-
ճութիւն կռուացդ և զհակառակութիւն բանիցդ և որ յայ-
տառիկ.

„ — Եղեալ եմ ի մոռ, առաւ. զառ մի ամբաղձ կամ ըստ
„ մտանն ժողովել և առաքել յայլոց քաղաքաց, զոր և արկին
„ ինձ առցեալ եմ ունայց : ” Ապա անցին և անդ յաւելու-
ան, թէ չէք ինչ յոյս յառաջադիմութեանն որ ի մանկանց
անտի, և ցուցանես զժառութիւն ընդ այն յամենայն կող-
մանց, բան ճանաչման և բան փորձառութեան քո ....

„ Ահա ինքնահաճութիւն կռուացդ և հակառակութիւն բա-
նիցդ :

„ — Ջառաջիկայ Թուղթս զրեմ, առաւ, առ ի սրբագրել
„ զվրիպակ կարծիս վերապառութեանդ զանձնէս... և
„ առաւ է ամենեքեան զոր ըստ եւթ էք : ”

„ Վրիպել ես արդեօք ի կարծիսն իմ որ զբէն, եթէ չառնէի
հառատք ի ձեռին, զանազան զրութիւնք, որով համա-
ռեմ ի կարծիս իմ, և յորմէ զուշակեմ և զայլ բազում ան-
պատեհութիւնս ... Ապա զաղտուց, ազաչեմ, գրել առ
ի Թուղթ այսոցեանս և այսպիսի Թուղթ, ... զի մի յան-
գիտիս ինչ վիճաբանիցի, ինձ առանել ինի տրտունջ և
զեզ առանել ետ յանդիմանութիւն ...

„ Յաւուրն սրտի Յունի

„ Վ. Հայրութեանդ

„ ի Փարիզ. 8 յունվար. 1851.

„ ի. Ծ. Շ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՒՐԵԱՆ. ”

ԳԼՈՒԽ Լ.

Թղթակցութիւն Գեր. Հիւրմիւզի ընդ Հ. Սարգսի. — Խնդիր զԱղաւնալեան ժառանգութենէն. — Այցելութիւն Պ. Յովհաննէս Աղային Մոլուսի ի վարժարան հօր իւրոյ, և բանք ընդ նմա.— Պատասխանի Արքեպիսկոպոսի Փարիզոյ առեալ պղծոյ Գեր. Հիւրմիւզի. — Ընտանի և բնիկ Պ. Աղաւնւոյն առ Արքեպիսկոպոս Փարիզոյ, և որպա առ նա. — Խնդիր կենդանագրի Գեր. Հիւրմիւզի.

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի առեալ ընդ Հ. Սարգսի, յորում ինքեան արդարացուցանէ զինքն, այլ մեղադրելոյն և խոստովանի զանկարողութիւն իւր, օրինակ զայս.

« Յարգելոյ և Վերապատուելի Տ. Հ. Սարգիս վարդապետ սիրոյ և մեծարանաց ընդեղն.

. . . . . .

. . . . . .

« Առիթ հոտակ ունիմ, չուշաց և խնացեալ ի Վ. Հ. Ղեռնեակ՝ զի ապրարհիցեմ ի բանալ զբուղդս ձեր, որ վասն առիթ չդադարիլ ի ցաւելոյ ի վերայ միմրանութեանս, որոյ առաջնորդի չկամի լսել ի հպատակաց իւրոց գձգնապարտութիւն:

« Ինձ ոչ ծանր և զժոխի լեալ կին ինձ ձգնապարտութիւն ընդդէմ Վերապատուելոյն, առկայն զի չէր իմ ցաւդ ուրեք ի ծուղծս իմ արտաքոյ և կամ գանգատ կալեալ առ ձեզ գայեցանէ, և անհնայն իսկ ընդդէմ առեալ իմ պատասխանի, և ի լալ ձեր երկիք երկիք՝ իմ գրեալ ի տակտեն և կամ հարցեալ զձէնջ, ծուխ ինձ, զի այս անհնայն չատ իսկ էին ի ցուցանել, զի և զժոխին ինձ գձգնապարտութիւն չհրատարեմ ի լսելոյ:

„ Բայց թէ ախտաբեր բնութեան յետոյն ինչ ներգործեալ լինի ինձ վա, (ոչ գաղտուկ, որպէս ըստ քերթողական խոցոց աշխուժին կամեցեալ է նկարագրել Վ. Հ. Գետոն, այլ՝ գայլայլութեան իմն է սրտի,) յայնմ պարտի կարեկից լինել ինձ վերապատուութիւնդ, և ոչ մեզադիր, մանաւանդ եթէ հաճեցի զամ ի ես ընթեռնուլ զվուշտն զայնոսիկ, որպէս յինէն առ ինքն գրեալ: Այլ ինձ՝ թէ հաւատոյք՝ զան զընթերցուածն այնոսիկ՝ ծանրագոյն է յոյժ և դժուխի դրութիւն այսոցիկ, յոր բռնադատեալ եկի յոչ կամաց:

„ Մարթեմ ի Տեառնէ ողջ լինել յաւէրժ կենդանութեամբ

„ Յարգոյապատիւ վերապատուութեանդ

„ Վենետիկ. 20 մայիս. 1852.

„ Ն. Ծ. ԳԷՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻԶ

„ Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. „

Պատասխանի Հ. Սարգսի առեալ թղթոյ Գեր. Հիւրմիզի, որով ծանուցանէ նմա զհատուցումն մուծ իւրոյ գործակցելոյ զանազան ազգասիրութեանն իւր առնա, օրինակ գայս.

„ Սիրելապատիւ Տէր.

„ Զանկալի պատասխանին ձեհիլ, առեալ ի 20 մարտի, ընկալայ ի 27 որպէն ամսոյս, և ընթերցեալ զայն՝ առաւել նա հատուցայ ի միտս զգալոյ յանազան ազգասիրութիւնսդ, թէպէտ և չէ լեալ ձեզ ժամն և դժուխն ձգնաբուռնիւ իւրեանց պարոցս, հատուցանել բանից թղթոյ ձերոյ, և զհակառակն այնորիկ առեալ քերթողական աշխուժից Վ. Հօր Գետնոյն, այլ և ոչ կամիմ բանադատել զձեզ այսուհետեւ ի ժամերգոյն և ի դժուխի գրութեան այսպիսեաց, բառնալոյն ցեալ միայն-ընդ ցանկալի լար քաղցրութեան ձերոյ, զոր և փոխարէն լսել միշտ, հանդերձ հայրական ողջունիւդ, եթէ

հաճեսցիք ընդունել ինձ զայս ուղղակի և անուղղակի պրսե-
թևամբդ։

« Մնամ

« Արհիւպատոս Տէրտէրեանդ

« ի Փարիզ. 28 մարտի. 1852.

« Ի. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ, յորում ծանուցա-
նէ նմա զկարծիս իւր որ զԱզամալեան ժառանգութենէն, և
զդարուստ Յովհաննու Մուրատի ի վարժարանն, և զիւսակ-
ցութիւնն որ ընել նմա, հանդերձ գուշակութեամբ, օրինակ
զայս.

« Արհիւպատոս Տէր.

« Եախընթաց նամակս ձերով ծանուցիք ինձ զխնդիրն Ազամալեան ժառանգութեան իրրեւ երագ ինչ մայն, և զմեկնութիւն նորին խնդրեցիք յինէն, զոր և եառ ըստ պիտոյիս ինձմէ հանդերձ ազդարարութեամբս որ զազգա-տար փառասրանէն, և յաւելուածով ինչ... Սակայն լուայ եա ապա ի Թղթոյ Վ. Հ. Վեհանդի, Թէ արուեստ կայ ձեր պայմանել արդէն, և առեալ հրաման ի Վենետն հաստատել զխնդրեալ պայմանն որ ի փառասրանէն, և Թէ՝ յաւելեալ նորա ապա յայն գործադրելոյն կամ յայնժամ Հ. Վեհանդ ի հաստատեալ գայն։

« Զեն ինձ արդ կամք, Գեր. Տէր, առնել ընդ այս քննու-Թիւն, Թէ զմարդ առանց տեղեկանալոյ ձեր զխնդրոյս և զհան-գամանաց առն, փառասրանին, արուեստ կայանիլ... և Թէ՝ գոյ իրաւամբք և արդարութեամբ կամեցաք զոր կիսատ-ձին առնել զնա իրաւանց ձերոց, ծանուցանել Թէ կարօտեալ ազդս. և Թէ՝ զինչ յարգահատութեամբ յոյնն առաք հաս-տատ անցանել առ մեզ զգործադրութիւն, իրա-

հանջել և յընդունել ի կողմանէ վիպասանութեան զարժանսն զոյն Աղամալեան ժառանգութեան, որ ի ձեռս վաճառական ընկերութեան Ընդկաց... անօգուտ և անհաճոյ գիտելով պայսպիսի գինութիւնս, որպէս զայլս որ զոյլ ինչ երաց երթեն... այլ հաւրցանել խոնարհութեամբ, թէ ընդէր թաղուցեալ և թաղուցանելք լինին զարուեստն ձեր զայսմանէ, ասելով թէ, «Մեք առ այժմ չունք ինչ թղթակաս վաստականն, «մինչև ասցուք տեղեկութիւն ինչ ի ձէնջ:»

«Այլ՝ չեմուք դուք թղթակ ինչ առ վիպասանն, այլ առ Վ. Շ. Ղևոնդ, և նորա տեսեալ զարտասպումանն՝ կամի ի հասանելոյ զոյն, մինչև ասցէ ձեզ տեղեկութիւն զարտասպումանէն վիպասանութիւն, և այլ՝ ժամուարտարութեամբն Աստուծոյ առ վիպասանութիւնս, կամելով նորա ի միասանալոյ հասանութենէ անտի:... Կարծեմ ես և զայս պատճառ ընդ քերդողական խրոց ազնուժիցն կամեցեալ և ընկարագրել Վ. Շ. Ղևոնդ:... Ես ապաքէն յայսմանէ պատճառենէն ձանձրացեալ իմ՝ եղէ ի մոռ զարտեցուցանել զգրութիւնն իմ որ զիրոց հասարակաց և զարտեցուցն զոյն... և ես ապաքէն ունիմ և ունիմ ես այժմ առանել ևս իրաւունս հասանալ ի միասանալ իմ յոյն: Բայց քանզի ակաց ես միանգամ գրել զինդրոյս, գրեցից և զայս անգամ ի գրուածն ասելն:...

«Երեցի ես զայս և առ Վ. Շ. Ղևոնդ մեր ի լինանն, որպէս զի ընդ այնմ չարժեցի ընդ Եկեղեցի վիպասանելն, չարուեցայ ինչ ընդ նմա մինչև քանի մեղմութեամբ զինդրոյս յամենայն կողմանց և անձանց, նախ՝ ի կողմանէ այլ ժամանակաց, յորոց գիտեմ ես մեծն, և այս ի լոյ, թէ զոյ արդի մի Աղամալեան Օգոստինոսի ի Վենետս:

«Կարծեմ ես թէ պատճառ է ընդ նմա խոսել, և ի նմանէ տեղեկանալ զայլ ժամանակաց, և ի նոցանէ առնել հաստատութեան վաւերական գրով և հաստատութեամբ վկայից, և այնու յանդիման լինել ընդհանրական վարչին Աղգայնոց վաճառական ընկերութեան Ընդկաց որ ի Վենետս, և հարցանել զկարծիս երեսելի վիպասանից. և թէ

չէ պարտ վարանելոյն զերծս հատուս ընծայել ամենայն մարդոյ, բախտախնդիր արանց, և մտանել ընդ նոսա ի դաշինս պայմանաց, և առ երբէք ի ձեռս նոցա զիր դրամագլխոյթեան յիւմէ, թէպէտ և խոստանայցեն նոքա բանիւ և գրով չպահանջել ինչ ի նմանէ մինչև ոչ ի ձեռս բերցեն զարծաթն: Քանզի բիւր ինչ դէպք անակնկալ փոխեն զկերպարանս պայմանացն և տան նոցա տեղի պահանջանաց. Թող զվաճառ արծաթոյն յորժամ անցցէ այն ի ձեռս նոցա և յիշխանութեան:

ա. Յո՛չ լիցի նմա երկրորդական և անգործ զիր գործակատութեան որ առաւ երբեմն Պօղոս Լազարովիչն, և գրով չարչարանաց նա զմեզ այդր զամս ինչ, հանդերձ հինգ հազար ֆրանք ծախիւք դատաստանի:

ա. Զգիտէ վարանութիւնս, թէ ո՛րպէս անցուցաւ արծաթն Ռաֆաէլեան վարժարանին ի Մարսէլ ի Լոնտոն. քանզի ի յանձնել կառավարատար Կավալրի զերաւանդս զայն Լօտարֆանչէլերի, գործակալ կարգեաց նա ի կողմանէ իւրմէ զվաճառական ընկերութիւնն մի ի Մարսէլ, ի պահանջել զարծաթն զայն ի Մերսանայ իրաւախոհութեամբ կամ դատաստանաւ. բայց առ ի հաւատալ զայն ի ձեռս վաճառական ընկերութեանն այնորիկ, էառ նա անտի երաշխաւորութիւն ընդ այն նոյնչափ գումար արծաթոյ ի Լոնտոն, մինչև հատուցանիցէր ընկերութիւնն զարծաթն զայն յապահովութեամբ ի ձեռս իւր ի Լոնտոն անխափան. և ընդ այս ամենայն, վաճառական ընկերութիւնն եղեալ յարծաթոյ անտի հինգ տարիւր միայն, ի վարձ աշխատութեան իւրոյ, հանդերձ ծախիւք դատաստանին:

ա. Պահանջեաց վարանութիւնս զայս երաշխաւորութիւն ի Բելէկրէն վաստատանէն ի յապահովութիւն արծաթոյ իւրոյ հաւատացելոյ ի ձեռս նորա. և կամ կարի՞ր նա տալ զայն Տեառնէ՛ք, Գեր. Տէր, զանխորհրդութիւն վարանութեանդ յայսպիսի գործս, և զանխոհեմութիւն և զարհամարհութիւն նորա որ զերծրդեալ փոխ եղելոյն, թարուցանելով ի նմանէ զդրծս իւր... և ահա պատրաստեալ էմ յարդարութենէն

խօսեցայ դարձեալ զճշմարտութիւնն։ Տաց ի սիրն և զլուր գալոցեան այսր ի վարժարանս Պարոն Յովհաննու Մուրատի և Պարոն Յովհաննու Յարութենի, ըստ խոստմանս իմում որ ի նախընթացն իմ։

«Յերեք անցեալ ամսոյ ևկին յանկարծ ի վարժարանս այց առնել մեզ Պարոն Յովհաննէս Մուրատ և Պարոն Յովհաննէս Յարութիւն, և իրրև ժամ մի կացեալ՝ վերադարձան դառնալ ի բնակութիւն իւրեանց ի պանդոկի ուրեք որ ի քաղաքս։ Ի վաղիւ անդր գնացաք մեք երեքեան ի փոխադարձ յայց նոցա անդ, և հրաւիրեցաք գնալ բնակիլ առ մեզ ի վարժարանս, ըստ յառաջագոյն հրաւիրանաց իմոց, և ըստ խոստման յովհաննու Մուրատի։ Հրաժարեաց նա անտի ասելով, թէ ընտանիք Յովհաննու Յարութենի ունէին գալ ի Փարիզ, վասն որոյ պարտ էր ընդ նոսա ի մնալն կալ ի պանդոկի անդ, բայց յայլում նուագի եկեսցէ։

«Իրրև ևկին ի Լոնտոնէ ընտանիք Յովհաննու Յարութենի, հրաւիրեցի գնալ ամենեսեան գալ ճաշել ընդ մեզ ի վարժարանս. յօժարութեամբ և սիրով յանձն առին նոքա գՀրաւէրս։ Իրրև մտին նոքա ի դասիճ վարժարանիս, ելաք մեք ընդառաջ նոցա հանդերձ աշակերտօքս, ընկալաք գնոսա քաղաքավարութեամբ և ածաք ի դահլիճն, ուր յանդիման եղեալ աշակերտաց վարժարանիս խօսեցան ճառս արձակ և առանձին բանիւք ի Հայ, ի Գաղղ. և յԱնգղ. լեզու, Մէշտաակելով գրաբերութեան հանդուցեալ Աղայ Սամուէլի երախտաւէտ մօտ, և գայցելութեան որդւոց նորա և իւրոցն առ մեզ ուրախութեամբ արտ։ Ներկրեցաւ յայժ Յովհաննէս Մ. և զուարճացաւ յանձն իւր մեծապէս։

«Իսկ Յովհաննէս յարութիւն յանախնկալ ուրախութեանն արտասուեաց և ասաց ինձ, զի՞նչ եաս խնդրէ Պ. Յովհաննէս Մուրատեան, ահա կամք և յանկութիւն հանդուցեալ հօր իւրոյ կատարեալ են յամենայնի. պարտ է նմա չնորհակալ լինելքեզ ընդ կատարումն այս։

«Ասացի ես, պարտ է չնորհակալ լինել հանդուցեալ Բաբերարին, ազօթելով միշտ վասն հոգւոյ նորին։

ա. Այո՛ ասաց նա, պարտ է գոյլ առնել, բայց պարտ է եւս զճշմարիտն խօսել. զի եթէ չէր քո աչխատեալ, և այնպէս աչխատեալ, անհնարին էր քէ կարէաք մէք այսօր զդպրոցս այս սուտ տեսանել. քանզի գիտեմ, ասաց, զաչխատութիւնն քո, և աչօք իմովք տեսի զանձնային անցս որք անցին ընդ քեզ ի խնդիր այս դպրոցին:

ա. Ապա հրամայեցաք դնոսա ի տեղն. ձայնեցին նոքա սխրժանօք, հաճեալ յոյժ ընդ կերպարանն և ընդ բնութիւնն. սակաւ բաժակ ի կենդանութիւն Գարդն Յովհաննու Մարտիր, և ի պայծառութիւն տան նորա. էառ նա զայն ի կենդանութիւն մեր և ի համառօտութիւն վիրապանութեան յաւիտեան: Ելեալ ի տեղւոյն անցաք վիրաւոն ի գահիճն, որ եկիր զարձեալ աչակերտին և երթեալն երգ մի երանութեան հայելն ու հանդուցեալ Տաճիկ Մարտիրն, յորմէնեալ ի Վ. Շ. Վարիճէ, և այլ ինչ երգ Գալոխարէն հանելի նուագարանաւ: Զուարճացան և զարմացան նոքա սմիաբանութեան ընդ յառաջադիմութեան նոցա յոյնս, և գովեցին զդաստիարակն և զվարժապետս նոցա, և այսպէս ուրախութեամբ և գոհութեամբ յոյժ մեկնեցան ի մէնջ, ժամս հինգ անցուցանելով առ ա մեզ:

ա. Ի վաղիւ անդր դնացի ես առ նոսա, քան սովորութեանն և հարցի առնձինն զԳարդն Յովհաննէս Վարուքեան, քէ պինդ վարկ կալաւ Գարդն Յովհաննէս Մ. վիրապարանէս, և քէ զինչ խորհի և առնէ այժմիկ:

ա. Ասաց ինձ, քէ յոյժ զոհ և ուրախ է Գարդն Մարտիրս, և քէ չունի նա խորհել և առնել ինչ ընդ այն, առանձինք զգաստութեան կանոնք և ցանկութեան հանդուցեալ հօր նորա, և վայելեալ զգաստն որ անոնք. և քէ՝ գրեցաւ հանդերձ ընդ մեզ առ երեսին վերայ երկուցն, քէ մի՛ արկէք ծանրացուցէք վիրապանութեանդ զվիրաւոյն ընդ հօր նորա, անկարծ ոտանէք զոքանչ նորա. վասն որոյ կամէր յառաջանալ գոյն, արկանելով զվիրապանութեանդ ընդ հնամանութեան տէրութեան ինչ:

ա. Գնացի Հ. Մարկոսի, ասէ, գոյն այժմ, զառաջինն

կելով նորա յայն ժամ բարեաց, և չիմանալով բնականարար զանկիշտասկանքեան վատակոց իւրոց և արդեանց նոցին, բայց միանգամայն է նա, ասէ, յետ մահու նորա պահիչ զայն վարանոցեան: (Յետ մահու Հ. Սարգսի տարակուսէ նա ընդ այն . . . ոչ գիտէ թէ ի կենդանութեան նորին ոչ միայն չպահեցէ նա զայն, այլ և գիշատակ նորա անգամ չնչել կամիցի յերկրի, եթէ կարելի է . . . և ընդէր այս, վասն զի այսպիսի գիշատակ մանաւանդ տուեալ ինչ ածէ համբաւոյ հասարակաց, քան սկզբանց իւրոց:) Եւ ես, ասէ, կարծեմ թէ իրաւունս ունի յայմ Պարոն Մարտին. քանզի ոչ գոյ յաշխարհի այս իշխանութիւն ինչ անկախ ուսուիք, եթէ Բազարի իցէ և եթէ Պապի, այլ կախումն ունի ուսուիք:

« Եւս ևս նմա պատասխանի զայն զոր տուեալ էի երբեմն Յովհաննու Մ. ի Պուլղոյն, և զոր գիշատակեալ եմ ի թուղթն իմ առ Վենդ. հաւանելացաւ նա բանից պատասխանւոյս և լուեալ ինչ ընդ այն:

« Ի վկայել նորա արդարութեան և երկիւղածութեան Յովհաննու Մ. գիշատակաց ինձ ինչ յանցեցին անցելոց որ ընդ խնդիրն հրամայի զպատմանս. պատմեաց ինձ նա թէ ուրեք կամեցեալ էցէ Հնդկաստայ Մ. Լրել առ զհրեայն զպրոցիս կաշառօք հարիւր հատար առեալ, երիս հարիւր և յետոյ հատար ֆրանգով, խոստանալով զայն ընդհանրական վարդապետին տալ ի Մարտս, և նորա վասն առնելով ըստ նա ընդ յայլազգեացն այն . . . և թէ չհաւանի Յովհաննէս Մարտս անկրս կամաց նորս, երկնչելով յարտասոյ լսել մաց, վասն որոյ և երկպառակութիւն իմն ի միջի երիցս եղբարցն և բաժանումն ի միմեանց:

« Զայսր անօրէնն կամաց Հնդկաստայ Մ. քէպէս և լուեալ էի ես ուրեք ի Մարտս, այլ անդրէկացոյց իսանել առ և զհանգամանաց նորին մասն և հաւատամս, զոր և յանելոց ի պատմութիւնս վարդապետս:

« Ի մերձենալ առ Պարոն Յովհաննու Մ. զառնալ ի Հնդս, առաց ինձ թէ յայժ բարեաւ լինի գնալ և իմ ի Հնդս յայսմ ժամանակի, առ ի հանդիպել ինչպատարագ Ասիական հանգա-

կել նորա ի զուր և չյապաղել զբաժանումն ժառանգութեան որ ի առաջուածոց Աղէքսանդր Ռաֆայէլի. քանզի պիտոյ զուտ, ասէ, վարել ընդ նմա։

« Եւս ևս խորհուրդ Յովհաննու Մ. միջնորդ կալեալ յայն գկարօտեալ Ռասիմէն, որ գտեալ էր ի Լուիզ Ռաֆայէլէ մեռուան հազար լիրէ ստերլին ի կենդանութեան նորա, և որ ունէր գտանել եւս տասն հազար լիրէ ստերլին յետ մահու նորա, թողեալ նմա կտակաւ։ Եթէ չհամոզիցի Եղուարդ Ռաֆայէլ ի բանից և յակնածութենէ կարօտնալոյն, ասացի, յայնժամ խորհեալք զմիջնորդութենէ իմմէ։ Բարի է ասաց, գրեցէք և ծանուսցէ ինձ բան ժամանակին։

« Ահա ձեզ լուր, Գեր. Տէր, զբանից և զհաճութենէ Պարոն Յովհաննու Մ. ընդ վարժարանս զոր ցանկայիք լսել, հանդերձ լրով և հաճութեամբ ընտանեաց նորա հանդիպելոց մեզ առ, թէպէտ և չկարօտի հաճութիւն կամաց Վեհիդ վկայութեան նորա և այլոց, որպէս հաւատացեալ եմ, տեսանելով զարդասիրն որք ի չանից վաստակաւորացս ոդորմութեամբն Աստուծոյ և ազօթիւք ձեր, զոր և անպակաս առնել հայցեմ, և որով ունամ

« Արհեստասէր Տէրութեանդ

« Ի Փարիզ. 17 յունիս. 1852.

« Ի. Ծ. Շ. ՍԱՐԳԻՍ ԹԼՓՈՒՄԵԱՆ. »

Թուղթ Շ. Սարգսի առ Գեր. Հիւսմիւզ, յորում ծանուցանէ նմա զկարծիս իւր որ զբնդրոյ Աղամալեան ժառանգութեան, և զընդունայն ակնկալութիւն նորա առնի, հրաժարելով վարդապետութեան երկնից ի ժառանգութենէ առնի' պրոյ իւրում առ գործակալն ի Հնդիկս, որինակ գայս.

« Գերապայծառ Տէր.

« Եթէ գրեալ և գրեալ էր Վեհիդ առաքեցոյն գոհ-

գնկութիւնն առեալ երթեմն ի հանդուցեալ Հ. Նիկողայոս Բուզայեանէ զԱղամալեան ժառանգութենէն, չմնայր ձեզ յայնժամ խորհել անգամ զայնմանէ, թէղ թէ խօսել և կամիլ ի պայմանս գաշանց ընդ ումեք մտանել վասն այնր ի գտանել ինչ անտի: . . . Եւ եթէ առաքեալ էիք ինձ նախընթաց նամակաւք զտեղեկութիւնս զայս զոր առաքեցէք այժմ, չմնայր ինձ արդեօք տեղի կասկածանաց թափուցելոյ ձեր վրնէն զայս, և քննութեանն որ ընդ այս . . . ապա աւելորդ է այսուհետև վասն այսորիկ կարծիս տալ, տեղեկանալով զհանգամանացն:

« Արդ՝ քննեալ իմ զկրկին գրուածն որ այսր ի վանացս և որ անտի ի Կ.ոնստանդ, տեսի և տեսանելի ես յոյժ սակաւ, և գրեթէ ոչինչ ակնկալութիւն վճռութեան գոյ վարանութեան ի ժառանգութենէ անտի, մանաւանդ թէ ընդհանուն հոգք և վայրապար ծախք լինին մեզ արդեօք անտի, թէպէտ և որչ և վաւերական պայմանաւք ազատ կացուցանիցէ զինքն ի ժախուց պահանջատաց. զի շատ է պահանջողին՝ այնոքիկ զեր գործակալութեան տեսանել նմա ի միաբանութենէս, որով և պատասխանատու լինի նա ընթացից գործակալին իւրում:

« Թողից ասել զընդունելութենէ իմմէ նորա յԱնգլիացւոց առնել, առանց գրոյ գործակալութեան, և որ ի կոչանել այլ ժառանգաց յիշատակելոց անդ: . . .

« Ապա արդարև երազ ինչ թուի և ինձ այս այժմիկ և անտի ակնկալութիւն:

« Ամեմ

« Գերապայծառ Տէրութեանդ

« ի փարիզ. 9 յուլիս. 1 օգոստ. 1852.

« ի. ծ. Հ. ԱԱՐԳԻՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Պատասխանի Հ. Սարգսի առեալ թղթոյ Գէր. Հիւսիսեցի:

յորում ծանուցանէ զինդոսքիւն իւր որ ընդ սիրտնաս արքունէն նորա գտեալ ի պարպացմանէ աշակերտաց Վարդանայ վարժարանին . զնորհակալութիւն իւր ընդ օրհնութիւն առեալ ի նմանէ վասնակատարաց վարժարանին , և ապ կապեալ ընդ այլ ազգայնոց Վասնզոյ զհամարումն Վարդանայ զոր ինդոսքիւն ունէր առ նոսա , զի սիրով ընդունիցին զնա , և ի ծառայութեան իւրեանց հաստատեսցեն :

« Արհեստատեղ Տէր .

« Ջնորհալից նամակ վ. եհիպ , գրեալ յՕ օգոստոսի , ընկալայ ի 16 սրբին ամսոյս , և խնդացի ընդ սիրտնաս սրտի ձերոյ , որ ի վշտաց ժամանակիս , թէ և ըստ մասին և եմք , ընդ գարշացումն սակաւ աշակերտաց վարժարանիս , սիրտ ունել զերախտիքն , զոր տարան ձեր , զոր պահեցէք Տէր ի շնորհս իւր միշտ , և ի յիշատակ բարի ազգասիրին , այլ և յուսամ ես յոյսիմէքիւն Վասնզոյ և ի պարտականութիւն ամենօրհնեալ Հոգւոյն , զի սիրելիցի Հայրդ հատուցանիցեն . համբերութիւնն և արիութիւնն պէտք են ի ժամանակիս :

« Ընդ յոյժ ունիմ հայրական սէր առաւ օրհնութիւնն վ. եհիպ առեալ վասնակատարաց վարժարանիս , և խնամս մեծ ազգ ձերոյ , գարձուցանելով առ փոքով գ. Հ. Ամրուհիս բան բան խնդրոյ էին :

« վասն խնդրոյ Վարդանայ ժառանգութեան , կարծեմ ես գաղտնեալ էցէք այժմ ի հոգոյ անուն գործակալն , բանիւ գմահ Բէլէկին փառատրանին :

« Որպէս ի նախընթացս ասացի ընդ այս գկարծիս իմ , գնոյն երկրորդեմ և ի սմին , թէ պարտ է մեզ նախ՝ լրատուիս լինել ընդ այլ ժառանգաւորսն , ի բաժանել գժառանգութիւնն գայն , եթէ արդարև չունին նորա կարողութիւն ինքեանք գիմելոյ յառնութն , և առնուլ ի նոցանէ օրինաւոր չխառնութիւն գործակալութեան , առ ի յանդիման լինել ձեր առնելն . և ապա ի խնդիր լինել գործակալի ազգաւ , համագիր առնելոյ նոցա ընդ գործակալն : Այլապէս չկարո-

Տեմ ես, թէ յաջողեցայ ձեզ ի խնդիրս յոյս, մնանւանդ թէ իսու լեցի։...

։։ Մնամ

« Արհեպատառս Տէրութեանդ

« Ի փարիզ. 18 օգոստ. 1852.

« Ի. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐԵԱՆ. »

Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հիւբմէտ, յորում ազդ առնէ զկարծիս իւր գրութեամբ Հ. Գաբրիէլի, հայեցեալ ի բանս պատասխանոյ որ ընդդէմ գրութեան Հարսխօսից միաբանութեան, և յորում առաջ զցանկալի պատասխանին Արքեպիսկոպոսին Փարիզու առեալ թղթոյ նորա, և յանուցանէ զհաճութիւն Արքեպիսկոպոսին Փարիզու ընդ նամակ և ընդ ընծայս Պ. Աղանուրի, և խնդրէ ի նմանէ զկենդանագիր նորա, զնոյն պայն ի գահլիճ Մ. վարժարանին, օրինակ գայս.

« Արհեպատառս Տէր.

« Հաճարեալ իմ, նախ առ ի գրելոյն վնհիլ որ առ Վ. Հ. Գաբրիէլ մեր առաք, վասն որոյ և ես ազդ արարի զկարծիս իմ առանձին ի պատասխանի անգ թղթոյ ձերոյ, որ ի բանս պատասխանոյ ընդդէմ գրութեան Հարսխօսից միաբանութեանս։ Թէպէտ և չազդեաց կարծիքս, բայց եւ հպօր գոլով կարծեացն այլոց որք ի Ռօմա և որք այդր, արդարեն որ անտի ապա երեւեցաւին, յորժամ հանգամանաց մերոց անդրդմունք հանդէս արարցին, որպէս և սկսեալ է առանց առնել։

« Աւուր անհամբերութեան։

« Ահա Արքեպիսկոպոս Հարգիս արար պատասխանի նամակի վնհիլ և առաքեաց մեզ զայն ուղղել առ ձեզ ի վանս. ընթերցեալ մեր զայն՝ տեսաք զի բաս ցանկութեան ձերում էր այն յամենայնի, և այնչափ, զի նմի մեր խոկ թելադրեալ

էր նմա վիճասոս բանիցն և պրատն անպամ, ոչ առաւել քան զայն կարէաք առնել. վասն որոյ զոհացաք վինասոյ Տեառն և զպաշտպանութենէ նորին, յորմէ թելադրեալ նորա զրեաց զոր զրեաց. ընթերցցի զայն Վեհդ և մխիթարեսցի, այլ և հրամարակեսցէ զայն ի՛րր և ո՛ւր պարտ է և հարկ հրատարակել, յորմէ անուն չարախոսաց վարժարանիս, և ի քաղաքիս վատակարարաց տրին։

« Գիտէ արդէն Վեհդ զհամոթիւն Պարոն Ագանուրի որ ընդ պատուիրանադիր արքեպիսկոպոսի Փարիզու, և զքաղաքական նամակ զորա առ սա, հանդերձ ընծայիւք, թարգմանեալ մատենիւք նախնեացս, զոր մատուցաք նմա անձամբ, ես և Հ. Գաբրիէլ, և զոր ընկալաւ սա բազում հաճութեամբ և զուարճացաւ յոյժ ընդ բանս նամակին. և ի յիշեցանել մեր սմա բերանով զիշձս արսի զորա, նմանիլ իբր Ագգարու զրելով առ Փրկիչն մեր, սաց սա. Եւ կարի խակ քաջ։ Եւ յորուցեալ երաց զդրբարանն, առ անուն օրինակ մի ի կենդանագրոյ իւրոյ, որ այն ինչ փորագրեալ էր ի վերայ պողպատի, և ետ մեզ զայն առնուլ. Ահա առաքեմ զայս ի գիմաց իւրոց բարեպաշտ պարոնին ըստ ցանկութեան իւրում, ընդ պատասխանւոյ Թղթոյ նորին զոր ապագ ապա։

« Եւ ահա ի բարեպատեհ ժամուս հանդիպեալիմ և ես հանդերձ եղբարբքս որք առ, խնդրել ի Վեհէդ ընդհ ինչ, որ ի խնդութիւն մեզ և ի լրումն վատաց վարժարանիս, զպատուական կենդանագիրն Արհիպատոսիս Տեառնդ, զոր զինի կենդանագրի հիմնադրի ուխտիս, Բարեխնամութենին մերոյ Մխիթարայ, և Բարերարի վարժարանիս հանդուցեալ Աղա Սամուէլ Մուրատեան, էական ինչ և կարեւոր յոյժ ի զարդ և ի փառս վարժարանիս դիտացի և գիտեմ ես յանդիման առնել առ ի դահլճիս, և զոր ցանկալի ես և ձեզի օր ըստ օրէ իմանալ, թէ նկատելոյ էր այն այդր ի ճարտար նկարչէ ոմեքէ, առ ի խնդրել ի Վեհէդ զգաղափար նորին։ Ահա իմացեալ իմ զայս ի Գ. Հ. Ամբրոսիոսէ, որ ապաշեմ զՏէրդ զի շնորհ արարեալ առիթ գաղափարել զայդ և առաքել

մեզ փութով ձրչան մարթ լցէ և որ՛վ ճանապարհաւ, առանց հոգալոյ զծախուց գաղափարելոյ և ճանապարհի նորին, զի և ինքն հասուցից զայն ի յաւուկ ինչ արծաթոյ իմոյ նուիրելոյ յօգուտ աղքիս և ի փառս միաբանութեանս :

« Վերատին աղաչեմ զՏէրդ կատարել անխափան և փութով զայս ցանկութիւն սրտի նորին, որ դաւանի միշտ զանձն իւր

« Աւրհնապատիս Տէրութեանդ ձերում

« ի Փարիզ. 20 *Հոկտ.* 1852.

« Խ. Ծ. Հ. ՍԱՄՊԻՍ ԹԻՒՒՈՒՐԵԱՆ. »

ԳԼՈՒԽ ԼԹ

Անդրանուէրբիւն արուեստից Փաշայիս Հռոմիոյ ընդդէմ Մխիթարեանց վէճ. — Յաղթութիւն Գեր. Հիւպատոսին վասն Մխիթարեանց վէճ. — Յաղթութիւն Գեր. Հաստատի ընդդէմ Մխիթարեանց վէճ. — Յայտարարութիւն Գեր. Իլլրօի և այլոց ոմանց ի յանուագութիւն Մխիթարեանց վէճ. — Ընդդիմախօսութիւն Հ. Անդրէի Բագրատունեանց և Գեր. Հիւպատոսին առ յաղթութիւնն. — Պատասխանի Հ. Սարգսի առեալ յԱրքայէ Գեր. Հիւպատոսին վասն ընդդիմախօսութեան. — Յայտարարութիւն Հ. Գաբրիէլի Ամասիացւոյ ընդդիմախօսութեան Մխիթարեանց. — Յայտարարութիւն Հ. Գաբրիէլի Մխիթարեանց որ ի Վենետիկ, հանդիման Յայտարարութեան Հ. Գաբրիէլի. — Յայտարարութիւն Մխիթարեանցն որ ի Պօլիս, ընդդէմ յայտարարութեան Հ. Գաբրիէլի.

Ի բաժանել ազգս Հայոց ի միմեանց կրօնական և քաղաքական վարչութեամբ, վարել առանձին առանձին գործարարս, յառնացեալ Հայ եկեղեցականաց Կաթողիկեան Հռոմոյ, որք և առնէք Մխիթարեանց Վենետկոյ, հանդիպակութիւն գտեալ ամբաստանեն զնոցանէ անդադար ի Հռոմ իբրեւ զհերձուածողաց։

Դժուարեալ ընդ այն Գեր. Հիւպիտոի՝ յոմն ուրեմն յարգելութեան իւրում հրամարակ տետրակ մի խոստովանութեան Մխիթարեանց վասն Քրիստոսի երկուց բնութեանց և մի կամաց և զոյգ գործոց։

Ընթերցեալ զայն Հ. Սարգսի՝ տեսանէ ոչ միայն սկսար յոյժ փառաբն որք ի նմին, այլ և միաւսկար բանիւն: Ազդ առնէ նմա զահաճութիւն իւր որ ընդ այն, հանդերձ քննութեամբ, այսպէս. «Զերիվ գրուածդ այդ ոչ օգուտ միաբանութեան, «և ոչ պատիւ հեղինակինդրին. չգիտեմ որո՞յ միտք ծնանիլ «էգ այդ: » Եւ դուշակէ գիմաստակար հետեւանսն որ անտի, և դուշակութիւն նորա վրիպել կատարի. քանզի գայրացեալ ասէցին ընդ այն հրատարակեն գորագործք մի անուանեալ Մխիթարեանք, որ և ապա Զարմանալի կոչի ի միխիթարեանց:

«Ընթերցեալ զայն Հ. Սարգսի՝ ոչինչ գտանեմ. քանզի հարցման ծնանիլ միայ լինի այն հրէշեցն, աշակերտաց, յոր գաւակաց Վաստրցին Հռոմէայ: . . .

Երբեմն յոմ Հ. Սարգիս թէ Գեր. Իւարսն Արքեպիսկոպոս Լամենացւոց ի Գալիս՝ սկսեալ կացեալ է ճշմարտութեան, ի նշանակել զառաքեան և ի խոյտառակել զգրգռարուիչս Մխիթարեանց Վենետկոյ անաչառ քննութեամբ և յայտարարութեամբ՝ տպագրեալ զայն և սփռեալ առն և անդ, զհանուցեալ զՏեառնէ որ պաշտպանէ միշտ զճշմարտութեան իւր, չարժեալ զօտարազգին որ ի գոմբ: Եւ երբեմն ընթեռնու նա ի գրոցն Հիւանդոյ և Գալոյ զչաստազուարթութեան մխիթարեանց եւոյ՝ յիշէ զգանս Փրկչին.

Եթէ զոքա լռեացեն, քարինքզ աղաղակեացեն:

Ընթերցեալ յոյժ Փրոմանի Գաղղիացւոյ ի Փարիզ զյայտարարութիւն Գեր. Իւարսի՝ չարժի և նա յարդարութենէն ի պաշտպանել ճշմարտութեան և ի քա՛ջալերել զՄխիթարեանս անչարժ կալ ի սկզբունս իւրեանց. զրէ նա երկու հատուածս բանից ի խնամութեան և յոյժ խոհեմութեան, զորոյ մի ասէ Բարգմանէ Հ. Գաբրիէլ Ասլեազեան և ապա զրեալ առաքէ ի Գալիս ի սկսել անդ, ընդ որ յոյժ հաճին Մխիթարեանքն անդ, և յարդարին զնա Բարգմանել և ընդհատուածն և ապա առաքել նոցա ի Գալիս, Բէյրէս և զրեն

ապա անտի և ի վանոյց չոգալոյն և չառաքել զայն անդ, երբեք ոչ հաճոյ կամացն Հռոմայեցւոյ այնպիսի գրուածք, զոր կարծեաց Մխիթարեանց որք ի Հռոմ:

Մինչդեռ այսպէս ողջմտութեամբն Աստուծոյ պաշտպանեալ Մխիթարեանց վիճակոյ յամենայն ոտանէ, ել Հայոց յանկարծ, թէ միաբանութիւն իւր ի վիճակիկ խորհի առնել պատասխանի ինչ Զարմանեանին այնորիկ, թէպէտ և ի կարծիս լինի և ասէ զայն իւրոցն ի Փարիզ, թէ պարտ էր միաբանութեան լռել ի ժամուն՝ շահացեալ պատասխանեաւն որ յայլոց և ձնալ եղից իւրացն, Գեր. Իւրօք պատասխանեաւ ի Հռոմ և որչման անտի. քանզի կոչեցեալ էր նա անդ ի Պօլսոյ վասն խնդրոյն այնորիկ: Այլ և կարծէ եւս, թէ գուցէ առեալ եցէ միաբանութիւն իւր ի խոհական և յինամանն արանց բարեկամաց իւրոց առնել պատասխանի Զարմանեանին ոտից. և թէ՝ ի հարկէ պատասխանին այն վիճակոյ էր ի խնամոց և պատեհ բանիւք, որպէս վայել խակ էր առնիցանի և պատուոյ իւրում, և խորհրդով և հաւանութեամբ հաւատակաց:

Եւ մինչդեռ այսպիսի կարծեօք և յուսով ձնոյ Հ. Սարգիս ի Փարիզ տեսանել զձեռագիրն նորին կամ լսել զհարցումն որ ընդ այն. զի եթէ չէին անդ չորեքեանն գիտութեամբ և փորձառութեամբ վիրադոյն քան զեղբարս իւրեանց որք ի վանս և ի Պօլիս, սակայն ոչ տորադոյն էին քան զնոսին, ահա առաքն նմա անդ ի վանոյց պատասխանին այն որ առ Զարմանեանի ոտից, Ընդդիմախաւսորեալ անուանեալ, և այն տպագրեալ և յառաջագոյն ի Պօլիս յղեալ ի տեսել անդ, թէպէտ և կարծեցեալ խոհական պայմանաւ, եթէ պատշաճ դասիցին իւրքն հրատարակել զայն, գիտելով չամի՛ թէ իւրքն անդ զայն առնէին զոր կամէին, թէ և այնու համբաւ և պատիւ համարէն Միաբանութեան աղտրտէին. այլ չէր նոցա ինչ փոյթ, զի անմիտ կիրք վրէժխնդրութեան զօրացեալ ի նոսա և ի վեր էր քան զամենայն ինչ յայս նոցա, որպէս և առնաւ այն ապա. . . Այլ թէ ընդէր չառաքէ Գեր. Հրամայ զայն նոցա ի Փարիզ, կամ չհարցանէ նոցա ինչ զայնմանէ, վասն զի

*չարհագանց վարկն որ զանձնէ իշխէն և զդասակցաց իւրոց մի-
այն, արհամարհէ զկարծիսն այլոց : . . .*

*Առեալ Հ. Սարգսի զտպագրեալ պատասխանին այն որ առ
Զարմանառեան և ընթերցեալ զքանի մի էջս անտի՝ զարմա-
նայ յոյժ, և յառաջ մատուցեալ զընթերցումն նորին, հիա-
նայ, և յառարտել զայն ամէն բոլորովին, և պրեթէ ժամն
լինէ ընդարմացեալ կայ, չկարելով հաւօրէն ի վերայ կալ բա-
նիցն ճշմարտութեան. երազ լինի թուի նմա այն, չկարելով
հաւատալ՝ թէ ի գրչէ իւրոցն և ի տպարանէ վանայ արբոյն
Ղազարու ելեալ էր այն . . . և ապա տատազէ նա զայն ի յա-
ւելուածոյ անտի նորին, արդէն յօրինելոյ յիւրում. լեզու և
տպելոյ և սփռելոյ ի Հռոմ, զոր և ծանուցաք. և առաւել
եւս տատազէ նա զայն ի բանից Թղթոյ Հ. Անանեայի ձեռնա-
տպարանապետի ի վանս, որ ունէր այսպէս.*

*« Ընդդիմախօսութիւնն այն Թէպէտ ի Վ. Հ. Արսէնէ
« Բագրատունոյ յօրինեալ, բայց գրեթէ կերպարանափոխ
« եղեալ է ի Գերապայծառէն մերոյ : »*

*Ահա ճանաչէ նա և զնոր ծնունդ մուց նոյն հեղինակին,
Թէպէտ և խառն ասի և անտի իրրեւ զհրէշ լինէ որ յաշ-
խարհի . . . Եւ ընդէր այս այլանդակութիւն : . . Առ ի հաճոյ
լինել և պատել նր և իւրոցն միայն ի կարդինալէ Ծա-
ւոյեան Յրանսոնէ, և ի քարտուղարէ նորին Պառնաթէ.
վասն այսորիկ ոչ զպատուոյ միտրանութեան իւրոյ և ոչ
զօգուտ հասարակաց ազգին վոյթ է նմա, այլ զանձնային
լինչ զոհէ . . .*

Յատկից վիճակ միտրանութեան : . . .

*Գրէ Հ. Գաբրիէլ Ա.յվազեան առ Հ. Անանեա ի վանս, և
առ Հ. Աղեքսանդր ի Պոլիս, բողոքելով և յայտ առնելով ըզ-
տհանութիւն իւր և իւրոցն ի Փարիզ ընդ պատասխանին այն
որ առ Զարմանառեան, և պահանջելով, զի գիցի ի ճակատ
գրուածոյն այնորիկ անուն հեղինակին, Հ. Արսէնի Բագրա-
տունոյ : Յաւելու Հ. Սարգիս առանձին ի թուղթն Հ. Գաբ-
րիէլի առ Հ. Անանեա և զայս բանս .*

« Հայկեան յամենայն հանդամանս պատրաստութեան ոգի,

„ անպատեհ և վնասակար ճանաչեմ զդրուագն զայն. վասն
„ որոյ խոստանայի այն և մի ախտեցի բնաւ յազգի մերում.
„ Եթէ ակնածելի է Հ. Արսէնէ, եա եղէց երաշխաւոր
„ համոզել զնա. և եթէ ընդ կորուստ որ ի ծախս տպագրու-
„ թեան նորին հոգացի, եա հատուցից զայն ի քսակէ
իմմէ:

Տայ Հ. Անանիա պատասխանի, թէ չէր կամեցեալ Հ. Արսէնէ զնել զանուն իւր ի ճակատ գրուածոյն այնորիկ. և թէ ընդ հասանել այնր ի Պօլիս՝ սիրեալ էր այն յամենայն տեղիս, և Հ. Աղեքսանդր առնէ պատասխանի զայս.

„ Վասն ընդդիմախօսութեան Հ. Արսէնէ, և ինձ պատ-
„ շաճ թուէր զնել զանուն իւր, որպէս և մինչ գրէրն առա-
„ ջեալ էաք. բայց թուի թէ երկչոտութիւն ինչ արգել լեալ է
„ այնմ, զի արշաւի ոգելից թուի նոյնչափ վատարի է սիրտ
„ նորա:„

Յետ հակառակելոյ Հ. Պետրոսի Ալիշանեան ի Փարիզ ելանելոյ ի վենետիկ, և ցուցանէ Գեր. Հայրապետի և վարանիոյ զոհամոլութիւն իւր և իւրոցն ի Փարիզ ընդ պատասխանին այն որ առ Զարմայեանն: Գոնէ նա զնոսա արձագանգ յոյժ ընդ տպագրութիւն և հրատարակումն նորին:

Մինչ այս մինչ այն, և ահա յոչնած մի զԸնդդիմախօսութիւնն երեսի Արշալոյն Արարատեան, որ թէպէտ բազում հանդուրժամտութեամբ և զգօնութեամբ չարտայրեալ, այլ ոչ սակաւ անաչառութեամբ արդարակորով ընդ հանդուրժախօսութեանն բերելով՝ ընդոստոյց առհասարակ զմիաբանութիւնն, մասնաւանդ նոյոյ զմինն մեծ՝ բացեալ ի մէջ ազգին և միաբանութեանն՝ ի խոր անդիտութենէ Մխիթարեանց կենցաղական պատշաճից, աճեցոյց զմրմունք զգաստից, թէպէտ և չկարաց խոտոր բանալ զաչս կուրացելոյն կրեաք, որ նախանձու կրօնամոլութեան կամ խարէական կեղծաւորութեամբ կոծանէին զսէր ազգին և զհամարումն միաբանութեանն: Եւ ահա յամրոզութիւն վհատից աշխարհի անցեալ՝ յետոյ ամանոր զօրինակ յիշատակեալ յոչնածոյն:

Յօդուած Արշալոյս Արարատեան.

« Զմիւռնիա. 10 Հոկտեմբերի. 1852.

« Յայտնի է բարեաէր հասարակութեանը, թէ անցեալներ՝ վենետիկ տոքթր Ղազարոս Մխիթարեանը անուամբ՝ իտալերէն պարտաւոյր մը հրատարակեցաւ ի Կոստանդնուպոլիս ընդդէմ Մխիթարեան միաբանութեան վենետկոյ. զորոնք հերձուածող, հերետիկոս, խարդախ կանուանէ, և ուրիշ սոսկ նման ածականներ կուտայ. նմանապէս Հռոմայ պետութեան հաւատարիմ ու անհնազանդ են կրսէ, և այլն:

« Այս պարտաւորիքը, թէպէտ և անանուն, սակայն զանազան ապացոյցներով իմացուեցաւ ու հաստատեցաւ, թէ Գերապատիւ Հայոց Նախագահ արքեպիսկոպոսին ու Գուլէնցի վարդապետաց գործն է:

« Նոյն ազգային լրագիրները՝ յուսաւորեալ գարուս ոգւոյն համեմատ, քան ժամանակին ազգասիրաբար պաշտպանեցին վենետկոյ միաբանութիւնը, որչափ որ կարելի էր:

« Բայց մօտերս յիշեալ պարտաւորիքին դէմ և իրրու թէ ի պաշտպանութիւն սուրբ Ղազարու Մխիթարեան միաբանից, ուխտած էին նոր գիրք մը, կամ լաւ եւս է ըսել նոր պարտաւորիք մը երեւան եկաւ ի Կոստանդնուպոլիս վենետկոյ վանքը տպեալ, որ բովկացեալ էր 115 երեսէ, բաց ի 34 երես թարգմանեալ դրուած է մը, Ջատագովութիւն անուամբ. զոր վենետկոյ Մխիթարեան վարդապետները տարօրոյս սկիզբներէ իտալերէն լեզուաւ տպեր և Հռոմ յուզարկեր են:

« Այս Ջատագովութեան տետրակը, զոր իրուամբ պարտաւոտոյ կրնանք անուանել, քան զրեթէ ամէն թերթին մէջ հերձուածող, հերետիկոս, և վոլտերեան ածականները կրկնուած են Հայոց համար, այս Ջատագովութեան տետրակը կուսեմք, պատճառ եղաւ վերոյիշեալ իտալերէն պարտաւորիքին հրատարակութեանը: Ասոր տարակոյս չկայ՝ թէ այս Հայերէն նոր պարտաւորիքը եւս, որուն վրա-

յօք է խօսքերնիս, նորանոր և վչտալի պատահմանները ծնանելու սահմանուած է ընդդէմ Մխիթարեանց սուրբ Ղազարու իրենց անհաշտ թշնամեաց կողմանէ. այսինքն գոլէճցի վարդապետներէն, որոց համախորհուրդ կերևին ուրիշ հռոմէադաւան հայ կրօնաւորաց միաբանութիւնները։

" Մեր յարգոյ ընթերցողները՝ Վենետկոյ Մխիթարեանց համար Արշալուսոյ մէջ հրատարակուած պաշտպանողական յօդուածները կարդալէն ետեւ, այժմ անշուշտ խնամ հետաքրքրութեամբ և անհամբեր սրտիւ կսպասեն տեսնելու, թէ արդեօք այս նոր հրատարակեալ դրքին խմբագրէն հեղինակը ուրիշ ինչ օրինաւոր և հիմնաւոր փաստեր յառաջ բերած է հերքելու համար Մխիթարեանց դէմ եղած ամբաստանութիւնները։ Բայց մեծապէս պիտի զարմանան երբոր խմբագրն թէ յառաջ բերած դիմաւոր փաստը ուրիշ բան չէ, բայց միայն թէ " Ան օրուան օրս ամէն Մխիթարեանք երդում կուտան, թէ " Հայք հերձուածող և հերետիկոս են, թէ հրաման չկայ անոնց " հետ հաղորդակցութիւն ընելու յաստուածպաշտս, և ոչ իսկ " հրաման կայ անոնց եկեղեցին երթալու։ "

" Այս անարժան և կրօնամոլական հինցած ժանգոտած խօսքերուն կրկնութիւնը խոստացեալ՝ չըսեմք ուրիշ բան երեւցաւ մեզ Վենետկոյ մեծարգոյ միաբանից բերանը, մանաւանդ այս բառերուն դարձուածքի մէջ։ Վասն զի այսօրինակ անարդական խօսքերուն ինչ արժէք ունենալը շատ ալեկ պիտան իրենք և իրենց ժողովրդեան ուսանել և բառերնիս մաքրել. ուստի անօգուտ էր անշուշտ և մեծ անխոհեմութիւն այնպիսի դրատրութիւններով զիրենք արդարացնելու երթալ, և հին վէրքերը դրդռել և խոր վիրաւորել շատ մըխիթարեան ուղղափառ հայ ժողովրդեան սիրտը, որոց բառականն ժամանակէ ի վեր երկայնամտութիւն, ընտանութիւն և ազգասիրութիւն կըցուցընէին, անոնցմէ փոխադարձ սիրոյ և մտերմութեան հատուածք կընդունէին։

" Այո՛. բառերշարքն ուղղափառ Հայոց բաղում ներողամտութիւն ունէին այս պարագայիս մէջ ունի գաղթականութիւն տեսանել Վենետկոյ մխիթարեան արժանապատիւ

մարանից իմաստութենէն և կենցաղավարութենէն (*), քան թէ հրապարակաւ ժողովրդական երդում մը լսել թէ, «Հայերը «հերետիկոս և հերձուածող են, և հրաման չկայ անոնց «սկսելեն երթալու»: Եւ ինչ կրնայ հետեւիլ այսպիսի անարժան երդումէն. քանզի ահա Հասան նախագահ արքեպիսկոպոսը և գոլէճին վարդապետներն ալ կերդնուն իրենց Խոտերէն պարտաւորութեան մէջ թէ վճռեսկոյս Մխիթարեանք և հետեւարար անոնց ժողովուրդը հերձուածող, հերետիկոս, մոլորեալ են, և այլն:

«Նոյն անարդարան ածականներն ևս Հասանեանին և անոր կուսակցութեանը նուիրեալ կըտեսանեմք վճռեսկոյս վանքը տպուած գիշեալ նոր պարտաւորութեան մէջ: Ասոնք ահա պապական եկեղեցականք և պապական ժողովուրդք. բայց և այնպէս գիրար հերետիկոս և հերձուածող կըկոչեն ու գիրար ի մահ կատեն և կանարգեն ի մեծ դժբաղդութիւն հռոմէական խեղճ Հայ ժողովրդեան, մեր համազգի սիրելի եղբարց:

«Զայս տեսանելով ըսեն Հայերը, պէտք է որ իրենց տոհմն վիշտը և տրտմութիւնը չտխաւորեն, գիտնալ թէ Հասանեանց երդումը կամ հաւատութիւնը Մխիթարեանց հերետիկոս ըլլալուն վրայ ինչ արժէք որ ունի նէ, նոյն արժէքն ունի Մխիթարեանց երդումը սուրբ էջմիածնայ տրդատոյը այսինքն ըսեն Հայոց հերետիկոս ըլլալուն վրայ: Բայց չեմք ուզեր լռութեամբ անցընել հայերէն պարտաւորիչին մէկ գէտաւոր վատն ալ ի պաշտպանութիւն Մխիթարեանց, որոց անաղարկելի հակառակորդին համար, այսինքն Գերապատիւ Հասան նախագահ արքեպիսկոպոսին համար երկու գերազրեան խոտ սատիկ և պատշելի ածականներ առեղծեր է, որ են արշխարհևոգեպատուախոհեմ, արշխարհևոգեխնդիրխա-ոխրատ. և այս ածականներէն անոր տալէն ետեւ, գրե-

(*) Թէպէտ և ատ գաղափարութեան են ասուածոյ բանիս խմբագրին Արշալոյսոյ, սակայն և Ճշմարտութեամբ վիճանգամայն, եթէ կէրպ վրէժխնդրութեան ունայ ի Մխիթարեանցոյ հզմանէին գործեան վատասկոյ նախնեաց իւրեանց: (Ազնութիւն Հեղինակին.)

մանոյը (Թխմարխանէ) կը յուզարկէ որ եօթը չղթայով կապեն գնա։

« Բայց Թէյլ տուք ինձ յուշ ածել ձեզ, մանաւանդ հետևեալ պատահարքին, թէ այն օձեալ անձը, զոր դուն, զինի այդպիսի սքանչելի ածականներով զարդարելու, անօրէն հերետիկոս խեղտո, և այլն, և այլն, անուանելու, զարմանացը կը յուզարկես, այն օձեալ անձը կրսեմ, Հռոմ գնաց և Հռոմայ պապական անխտիր ժողովքին և անխտիր պապէն նախատաճ արքեպիսկոպոս և հոգեւոր հովիւ ընտրուած է չատոնցմէ հետէ, և հռոմէական հայ ժողովրդեան մէկ մեծ մասը հաճ և հաւան է անոր ընծայութեան, ու ծնցեալ ման ալ կրպարտաւորի կուրծքէն հնազանդիլ անոր։

« Այս անցը գուցէ՝ շատ ժամանակ չանցած, յաղթանակու պիտի վերադառնայ Հռոմէն պապական նոր կոնգակաւ մը, և յայնժամ գուն ալ, ինչպէս նաեւ հռոմէական բոլոր հայ ժողովուրդը պիտի պարտաւորիք երթալ անոր ոչը համբուրել, և անոր ցոյց տուած կարդադրութեանցը հետեւիլ՝ եթէ չէք ուզեր դատապարտուիլ իբրեւ անհնազանդ և անհաւատարիմ Հռոմայ գահուն։ Ասոր ինչ օգուտ կրնաս ձեր այս արտաքոյ կարգի գերադրական ածականներ տեղծելէն,

« Բաւ լոյն մեզ որ մենք զՀռոմէականը պաշտպանել ուժիմք. ապա՝ նկուղեմք խոնարհաբար խնդրել Մխիթարեանց պատուելեանը երթալ հնդինակին, թէ Հռոմէականը կըրնան այս պատասխանը տալ իրեն։ Ասոր մէկ կըկարծեմք թէ շատ բարի էր, որ յիշեալ հնդինակը վեհանձնական լուռթիւն մը պահէր այս դէպքիս մէջ, արհամարհելով Հռոմէացոց ամբաստանութիւնները՝ քան թէ այսպիսի թևթեւութեամբ գրուած նախատական խօսքերով զէնք տալ անոնց ձեռքը։

« Ամենայն չէինք ուզեր ամենևին լսել այս հետևեալ անհամեստ նամակութիւնը զոր յուսալ կըսիրէ իր պարտաւորքին Հերետիկ երևալ իրաւապարտութիւն Հռոմէացոյն. « Սուրբ « Հայրապետ վանքը ինչ կըկարծէ կոր աս խնդրը. Զինքը « վինէօյին մխիթարեան, չէ նէ մի Պօնտէլին լօքանուան։ »

« Հայերէն պարտաւորքին հնդինակը կուզէ հաստատել՝

թէ Մխիթարեանք հիմնադիր կամ գործակից չեղան Համազգեաց ազգասիրական ընկերութեանը։ Եւ թէպէտ վենետկոյ Մխիթարեան վարդապետներէն մէկը, այսինքն Վերապատուելի Մինասեան Հ. Պետրոսը անոր կանոնադրութիւնը գրեր է ի սկզբան, սակայն ուրիշ նպատակաւ չէ գրեր կըսէ, այլ որպէս զի չըլլայ թէ ա ազգային երիտասարդք (հումմէապատանք) ինքնիններուն մէջ գեշագոյն բան մը ընեն։ ո Ձեմ ըսեր թէ Մխիթարեանք կընդունին արդեօք պարտաւորութիւնը, այսինքն թէ Համազգեայց ընկերութիւնը ի սկզբան գէշ էր, և Հ. Պետրոսը գէշ բանի ձեռք զարկեր է, որպէս զի ազգային երիտասարդք մէջ գեշագոյն բան մը չընեն. բան հասկնալ ուզեմ թէ երկուց չարեաց փոքրագոյնը ընտրեր է։ Այս խօսքը՝ բան որում ուղղակի Համազգեայց ընկերութեան յարգոյ և ազգասէր անդամոց կը դպչի, ասոնց անունց կըվերաբերի արդարացնել պինդեանս, եթէ չեն ուզեր չար գործի մը ձեռք զարնող, այսինքն չարագործ սեպուիլ՝ պարտաւորին ըսածին նայելով։

« Պիտի վերջացնեմ՝ այս վշտալի յօդուածը յուշ ածելով ձեր Համազգի Մխիթարեան լուսաւորեալ ժողովրդեան՝ թէ անցեալները, երբոր Հասունանոց կողմանէ հերձուածող և հերետիկոս անուանեցան, իրենք որ ամէն մէկ ժողովուրդ են, ո՛րչափ ձեզ վիշտ և տրտմութիւն և այլայլութիւն զգացին, և սկսան խռովիլ և գայրանալ, և ունէք հրապարակաւ անիծանել հայհոյել։ Ասոնի երկրայութիւն չկայ թէ բուն Հայերն եւս (որոց հարիւրին երկու բաժանդամ չեն կազմեր հումմէական Հայք) նոյն վիշտը և տրտմութիւնը պիտի զգան և զգային. և հետեւաբար իրաւունք ունիմք Մխիթարեան Վերապատուելի վարդապետաց և անոնց ժողովրդեան քրիստոնէական ներողամտութեանը վրայ, եթէ ունէք լսելիք, ընդդէմ ասոնց ազգանական հեզութեան, իրենց բարկութիւնը չկրնալով զսպել՝ կրնաք խօսին կամ գրեն իրենց դէմ։

« Դժբաղդութեամբ Վենետկոյ վանքը ի պաշտպանութիւն Մխիթարեանց մասնաւորեան ոչինչ հայերէն պարտաւորեալ, փոխանակ հանդարտ ոգւոյ, հեգութեան և ներողա-

մըտաբեան օրինակ մը տալու հաստատութեանը, նմանապէս Հաստենեան կուսակցութեան, և փոխանակ՝ իբրեւ ճշմարիտ աշակերտ Քրիստոսի՝ ազօթելու. Մխիթարեանց քշնամւոյ վրայ և ըսելու, « Տէր, թող դոյա, զի ոչ գիտեն զինչ գործեն. » փոխանակ այսպէս ընելու, կըսեմք, յիշեալ հեղինակը իւր պարտաւորութեան մէջ այնքան անարդական և զէշ խօսքեր ուղղեր է Հաստենեանց դէմ, որ անհնար է թէ նոյն զէշ խօսքերէն մէկ քանին ի տարտարոսէ դրուած չըլլայ. ուստի կրնայ ըլլալ որ տուրք Աւետարանին դատապարտութեանը ներքեւ ձայ, որ կըսէ. « Ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարտարոսի՝ պարտաւոր լինի դատաստանի. « և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լինի առնին. « և որ ասիցէ ցեղբայր իւր մոռա, պարտաւոր լինի դհնեան « հրոյն. »

« Աւր թողումք հատա, որ կոխէն զուարթ եղեմներն եւս, այսինքն զրուն Հայերը անգամ չարաչար կընախատէ, Հայաստանեայց կաթուղիկէ տաւրելական ուղղափառ տուրքն ներկելեն, որուն մէջ ծնեալ և մկրտեալ է, բայց ի ուրիշ շատ Հռոմէական հայելէն՝ իրենց այս օրուան հոգեւոր հովիւն ալ Գերապատիւ Հաստենան նախապահ արքեպիսկոպոսը, քան վկայութեան նոյն իսկ հայելէն պարտաւորին. »

Յետ քանի մի տուրց անոնք ընդհրցեալ վիրաւորեալ յԱրշալոյս Արարատեան վերոյ քննութիւնն որ ընդ պատասխանին վիրաւորութեան, առաւել եւս տարբանայ Գեր. Հերմիւզ և ցաւի յոյժ ընդ պրուածն այն իբր, և փութայ բժշկել զվիրատրեալ սիրտ ազգին ամբ ինչ յայտարարութեամբ, և յորդորեալ զայն ցուցանել Հ. Վեռնդի, և նորա ուղղեալ ինչ ինձմէն ըստ հանդամանի իւրում՝ առ հաղորդել զայն և իւրոցն ի Փարիզ, և վիրաւն խորհրդով և հաւանութեամբ առնել ըզյայտարարութիւնն զայն և հրատարակել ի մէջ ազգին.

Ընդհրցեալ ապա և Հարց Վարդան և Գաբրիէլ յարշալոյսն զվերոյ քննութիւնն զայն զոր դուշակեալ էին արդէն՝ ցաւին յոյժ յոյժ, ոչ ընդ արտաքս, անհաղորդ գոլով այնմ և

բողոքելով ընդ այն, այլ ընդ նախատինս միաբանութեան, և առ ի զուարճս առնուլ չարեացն, զի մի առասել եւս ճարակ տացէ հրդեհ քննութեան զմիաբանութենէն յամենայն հայելին լուսոյն, կարեւոր և հարկ համարին առնել համառօտ ինչ յայտարարութիւն Արշալոյս Արարատեան, և զայն խորհրդով և թելադրութեամբ խոհական և իմաստուն արանց բարեկամաց իւրեանց ի Փարիզ, և զայն ծանուցանել Հ. Գաբրիէլ Վեր. Հիւրմիւզի ի վանս, յղելով նմա զօրինակ յայտարարութեան, որ ունի այսպէս.

« Արդ՝ հրատարակիչ Արարատեան Արշալուսոյ.

« Փարիզ. 7 Նոյեմբերի 1852.

« Լրագրոյդ 426 թիւը երէկ հասաւ ձեռքս, և առաջին հասուածը կարդալով՝ ըստ բաղում գիտից իրաւացի գտայ այն խորհրդածութիւնները որ ըրեր էք՝ խօսելէն պարտաւորդրոյն դէմ Ս. Ղազարու տպարանէն եւս նոյնպէս անանուն հայելին գրուածքին վրայ ; Ինչ որ այսու առթիւ մեր Մխիթարեան միաբանութեան համար ըսեր էք՝ ամէնն ալ իրաւացի կըլլայ՝ թէ որ այն գիրքը Միաբանութենէն շարադրուած և իսկ բոլոր միաբանից հաւանութեամբը տպուած ըլլար, որ այնպէս չէ (*) : Այն գրուածքին հեղինակը մեր վարդապետաց մէկն է միայն. և որովհետեւ խօսելէն պարտաւորդրոյն մէջ այն անձին անունն ալ ծանր գրպարտութեամբ յիշուած է, կերպով մը իրաւունք ունեցած սեպուեր է անշուշտ պահանջելու որ հրատան տուն իւրեն ինքզինքը պաշտպանելու և գրուածքը վանքին տպարանը տպելու ;

(*) *Կարիատանքն ասուածոր և բանք պաշտպանի միաբանութեան. և յիրաւի՛ գանգի բաց յիրիւց և յիրից անձանց միաբանից, այլ քամնեցքին հաւանին ընդ գրուածն այն Հ. Արսէնի Բագրատունւոյ, և ընդ յառնլուածն յաջն Վեր. Հիւրմիւզի, որ ոչ միայն անպատեհ ատելձանի նոցին, այլ և ընդդէմ խղճի միաբաց իւրեանց, քէպէս և առ կոյր հնազանդութեան, ըստ յիսուսեան Սահմանադրութեան, սեպհականելոյ ինքեանց. քէպէս և առ երկիւղի հալածելոյ ի հաւատնեանց, ասկայն ոչ զրպարտանան երբէք ի հաւատնութիւն և ի լուսաքիւն իւրեանց որ ընդ այն . . .*

(Մանաքութիւն Հեղինակին)

“ Այս տեսակ ջատագովութիւնները շատ անգամ փոխանակ արդարացընելու յանցաւոր կընեն զմարդ . և հրամանքդ լաւ հասկըցեր ես որ այն գրուածքը կրնայ վնասակար ըլլալ մեր միաբանութեան թէ Հոմ թէ Պօղոս և թէ ուրիշ ո՛ր տեղ որ խրկուի . Գիրքը տպագրողներն ալ անտարակոյս կը դուշակէին այս վնասը՝ թէ որ իրենց դէմ եղած ամբաստանութիւններէն քիչ շատ տաղնապած ու շփոթած չըլլային , և չէին Թողուր որ իրենց տպարանէն առանց քննութեան և հարկաւոր սրբագրութեանց այնպիսի ոճով և իմաստներով գիրք մը ելլէ :

“ Մխիթարեան միաբանից մէջ մինակ ես չեմ ախոռացողը այն գրուածքին հրատարակութեան . մանաւանդ որ տեղւոյն անուանէն՝ չգիտցողները կրնան կարծել թէ բոլոր Միաբանութեան կողմանէ եղած է : Ասոր կը խնդրեմ որ նամակիս տպագրութեամբը ծանուցանէք ձեր ընթերցողաց թէ մենք հաստատութեամբ գրած ենք մտքերնիս որ ամենեւին չկտսորինք այն քրիստոնէական եղբայրսիրութեան և ճշմարիտ ազգասիրութեան զգացմունքներէն որ հրամանքդ ալ շատ անգամ արդարացի գովեստներով բարեհաճեր ես յիշատակել , և մենք միշտ հիմա ամենայն անկեղծութեամբ ցուցուցեր ենք . ուստի պի անջնջելի կերպով տպաւորուած են սոնք մեր սրտին մէջ :

“ Ողջ լերուք :

“ Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ

“ Միխիթարեան . ”

Առնալ Գեր . Հիւպլեայի գյայտարարութիւն Հ. Գաբրիէլի խոսքի և հոգայ յոյժ , թէ գիշէ արդեօք անոր ծագիցի . . . բայց յուսալով թէ չէր Հ. Գաբրիէլի դեռ յղեալ զայն առ խմբագիրն Արշալոյսի , զրէ առ նա չյղել զայն միշտէ ի միաբան հոգեյցն զայնմանէ , և խոստանայ առաքել նմա զպատ-

բառնալն ի վանից : Այլ անագան ազդարարութիւն նորա , զի յղեալ էր տրա զիւրն ի Ջմիւռնիա առ ի հրատարակել յԱրշալուսին :

Առաքէ Գնր . Հիւրմիւզ վճռառացեալ յայտարարութիւնն զոր որոշեալ էր վանական ժողովով և տպագրեալ ի վանս, և զոր Թողու ի քննութիւն իւրոցն ի Փարիզ, յաւելուլ կամ նուազել ինչ անդ և ծանուցանել նմա զայն միտքով , որպէս զի հաստատակաց հաւանութեամբ հրատարակեսցի այն , եթէ չէր դեռ Հ. Գաբրիէլի առաքեալ զառանձին յայտարարութիւն իւր առ խմբագիր Արշալուսին . ապա թէ ոչ՝ և միաբանութիւնն զիւրն հրատարակեսցէ առանձին , քան որոյ տպագրեալ էր :

Ընթերցեալ Հարց Սարգսի և Գաբրիէլի զյայտարարութիւնն վանաց , տեսանեն զի նոյն իմաստք բանից լինին անդ որպէս ի բանս յայտարարութեան Հ. Գաբրիէլի. բայց վանացն առեալ ընդարձակ , իրրեւ մեկնութիւն յայտարարութեան Հ. Գաբրիէլի, և երկոքին եւս , զճշմարիտն առնել կարկառունք, առ իմանալ զնախատինս միաբանութեան և իթևթեւացուցանել զթերութիւն նորին : Առաջնոյն պատճէն տեսաւ ահա ի վեր անդր . տեսեալ ասացաւ և զերկրորդին՝ ողջամիտ ընթերցողք ինքեանք զատեսցեն :

Յայտարարութիւն Միխիթարեան Միաբանութեան .

« Մինչդեռ մեր վեհափառ Միխիթարեան Միաբանութիւնն նախատակից և խոհեմապար պարտաւորէր մը վիրաւորուած , ինքն զինքն պաշտպանելու և ազգիս ու ժողովուրդիս վերցընելու կրնար , ոճով և վարքական վայելութեամբ գրուած պատասխան մը հանելու և ցուցընելու ազգին և եկեղեցւոյ և բոլոր աշխարհիս առջեւ՝ իր գործոց դիտումներն և ազգասիրութիւնն, որոնց համար բազմոց սիրելի և պատուելի եղած , ոմանց ալ նախանձելի կամ խորշելի կերեւնար կամ կըհաչտակէր , բարեկամաց յորդորանքէն

ամէպուեցաւ հրատարակելու առժամայն գրուած պատմութեանս մը, որուն տեղ տեղ ոճը և բառերն (որ աւելի բան չարտադրուին ոճն է,) ինչպէս ամէն խոհական և անաչառ ընթերցող կիմանայ, թէպէտ և իրմէ վերջը մը հրատարակուած ալ տեսուի, և տեղ տեղ խմբագիրներուն ատելութիւնն, բանիք նաեւ խաղութիւնն, տեղ տեղ ալ տարբեր մտքով առնուին, ընթերցողաց ունեց գայթակղութեան և ժխտարութեան պատճառ ուսած ըլլալը՝ խնդրանք գանազան ազգային օրագրաց ձեռքով, և աւելի Զմիւռնիոյ Արտատառեան Արշալուսոյն մէջ. ուսկից նոր վէրք մ'ալ առինք, և թերեւս առջինէն աւելի ծանր: Ոչ ոք ալ այս նոքի գրուածներն ոչ այնքան զմեզ նախատելու մտօք շարժած են մեղի դէմ, հապա զմեզ իսկ նախատող և վերաւորող տեսիլով պերճուս կամ անոր մեծապոյն մասն մը, զոր մենք միշտ սիրեր և պաշտպաներ ենք, և ի նոյն միտս և կամս հինս ալ հաստատ ենք և պիտի ջնամք ցորչափ երկրիս վրայ Հայք և Մխիթարեանք պիտի ջնան:

« Կրնասովանիմք ճշմարտութեամբ, որ մեղի դէմ եղած պարսաւանաց սկսումն չարժեցանք պատասխան տալու, և մանաւանդ շատով պատասխան տալու. իսկ երբոր մենք զուրկն պարտաւոր երեւցանք՝ կրնութեանք ոչ միայն մեր բարեմտութիւնն յայտնելու, այլ և զարձեալ ամենապատրաստ ազգասիրութեամբ ոչ մտածելու անոնց՝ որ ուր և իցէ կերպով զրկենք կրնային մեղմէ նախատուած. և կը յուսամք որ այն ազգն որ երեն սիրոյն անչէջ վառարան մը սեպեր ու պատուեր է այս միաբանութիւնս, նոյնն սիրով ձեռք տայ՝ ոչ մեղի միայն, այլ և բոլոր իր մէջի միաբանութեան գանազան գասուց եւս կատուց օրերն միացընելու, և խաղաղական տրտիւ և բանիւք իր երջանկութեանը միտ դնելու:

« Արդարև ազգերնուս սէրն և օգուտն մեղի կը քաղցրացընէ զայս այսպէս ընել, նոյն սէրն արդարութեան համար կըսասիկ ալ զմեզ՝ որ քանի մը խօսքով պարզենք մեր խնամներն՝ որ այն Պատմախանասուութեան գրքին մէջ եւս ալեկ

չեն բացատրուած կամ չեն լմնցուած. և որովհետև այն պրուժքին դէմ բողոքոց մէջ Ջմիւռնիոյ օրագիրն աւելի ծանր կերպով պրուիւամին բազմաց մոադրութիւնն իրեն կըրնայ դարձընել, մենք ալ կարճ նկարագիր կուզենք պատասխանել իրեն իրաւ գլխաւոր մեղադրութեանցն, որ մեր վրայ կըդնէ. անոր ցուցուցած կամ կարծած գայթագղութիւնն վերցնելու մտօք, և ոչ հակառակելու (*) :

« Այս ըրած մեղադրութեանց մեծագոյնը այն է որ այն Պատասխանատուութեան հեղինակը մէկ քանի բանաստեղծական նորահնար ածականներով և խիստ պրուցուածքներով կընախատէ պ. Վեր. Հասուն Նախագահը : Բայց նախ մեզի ըսելու օրագիրը որ նախ ինքն իսկ կըցուցընէ թէ Պատասխանին հեղինակը մէկ չէ, այլ քանի մը անձինք :

« Երկրորդ, պէտք է որ գիտնայ այս ծանուցեալ օրէնքն ալ, որ պրուածք մը երբոր անանուն դուրս կելլէ, անոր դէմ պրուածքներն ալ ատոր կամ անոր չեն կրնար երթալ, և ոչ ոք իրաւ ատ անձին կամ ան անձին դէմ գրած ըլլալով յանցաւոր կընտրուի. արդեօք հրատարակի մէջն ալ երբոր վէրը կամ վարը արձանագիր անուն կամ կընիք որ չըլլայ գանի նախատող կամ անարգող պատասխանի տակ չկրնար, մանաւանդ երբոր ինքը Բազաւորը իսկ չէ ըսելով չընդունի այն հրատարակը : Գիտեն ամէնքը որ Գեր. Հասուն Եպիսկոպոսական տեղեակ ատ խօսքերը գրուցուելէն ետքն ալ, յայտարարութիւն ընելով և իրեն պատասխանութիւն տանելով՝ իրաւունք տուած կըլլայ գրքին հեղինակին դէմ գրելու : Եւ թէ որ իրացընէ գրքին հակառակ գրուած ըլլար այնպիսի մէկ անուն մը, հարկաւ շատ ուրիշ կերպ պատասխան կըտրուէր : Կրնայ անանուն Օրագիրը որ այն Մխիթարեանց պատասխանատուութիւնը մէջ քանի մը տեղ նզած է Գեր. Հասուն Եպա-

(*) Որչափ ջանայ Գեր. Հիւրմիզ ծածկել զանգատանի գնացս իւր կղկղան պատճառանօք, այնչափ առաւել յայտնէ զայն, նմանեալ այնմ որ կամի կորկոտել զպատառատուն հանդերձ իւր անյարմար կարկատանօք, առաւել եւս պատառէ զայն, որում ի չէզ եղանէ ատոցիայն կլխմնփոխ, թէ :: Անտիառատութիւն իցէ պարզմտութիւն փոփոխիլ և կարկատանաց ժողովուիլ ::

(Մանրամասնութիւն հեղինակին.)

հին յիշատակութիւնը, և կարծենք որ իր պատուոյն պակսելու բան մը պրուցուած չէ։ Ուրեմն այն մեղադրուած խօսքերը Պարսաւադրին դէմ պրուցուած են, մանաւանդ թէ անոր անճառն առաքելութեանը և պրպտութեանը դէմ, իրեն ծանր խօսքերէն մէկ քանին միայն հեղինակին վրայ դարձնելով։

«Իսկ թէ Օրագիրը Պարսաւադրքին անանուն հեղինակին ալ չվայելեցնէ ու մեծապէս մեղադրութեան արժանի համարի, կը յիշեցնենք իրեն Պօղոս առաքեալը, որ երբոր Անանիա քահանայապետին առանը կեցած պատուախան կուտար իր անմեղութիւնը ցուցընելով, և քահանայապետը հրամայեց հարկանել զբերան նորա, ինչ բան անոր առաքեալը. «Զարկա» նելոց է զքեզ Աստուած, որմ բռնալ (*). և դուն նստիս դա» տել զիս ըստ օրինաց, և առանց օրինաց հրամայես զիս» հարկանել։» Ա՛ս խօսքը շատ ծանր երեւեցաւ հոն քովը կեցողներուն և ըսին, ինչպէս հիմայ Մխիթարեանց, «Զքա» հանապետ Աստուծոյ հայհոյես։» Որուն Մխիթարեան հեղինակն ալ հիմա նոյն Առաքելոյն տուած պատասխանը կուտայ. «Ոչ գիտէի, եղբարք, եթէ իցէ քահանայապետ։» Ձան զի հոս մէկ անանուն մը աներեւոյթ և անյայտ՝ ինքզինքը ծածկեր ու բերանը բացեր ամէն ուզածը առանց խնայելու այնպիսի անվայել կերպերով կըզրուցէ, և կընախատէ չէ մէկ՝ այլ շատ հինգ օծեալ եպիսկոպոսներ ու մէկ Մխիթար Սրբոյն պէս աստուածարեալ անձ մը, և այնչափ վախճանեալ և կենդանի վարդապետաց խումբ մը, ամէն զրպարտութիւն և ծանր խօսքեր ըսելով, ինչպէս որ օրագիրն ալ գիտէ և կըվկայէ, զորոնք պատասխանը գրողը չէր կրնար օծելոյ մը տալ, ատոր և այնպիսի անարժան և դատապարտելի բանի մը ատոնիկ պէշտութիւնը ցուցնելու համար բաւած խոսքերը, որպէս զի ուրիշ մէկ մ՚ալ չհամարձակի այդ ամենավատակար յանդգնութիւնը ընելու՝ օծելոյ մը չեն պրտաւած.

(*) Արմ բռնալ, յՍրբոյականն նշանակէ հիդծաւոր, իսկ թէ նշանակիցէ և Աքչխամենագիրքն թարգմանեաւ, ոչ գիտեմք մեք. Հ. Արսէն Բագրատունի որ ի ցեղէն ներսէսեցւոց էր, և աշակերտ նորին միոյն գիտեն.... Յոգումք

բայց թէ որ գտնէինք մէկը անանկ համարի՝ մեղադրելու իրաւունք ունի, ուստի ի չկայելեր ամենեւին օծելոյ մը՝ այն խօսքերը՝ որոնք այն անչնորհք Պարտաւադիրքը պրոպին դէմ գրուցուեր են, ուսոի մեղադրելի կըլլան։

« Ի վերայ այսր ամենայնի սա ալ իրաւ է, ինչպէս Օրագիրն ալ խոհեմաբար կըգրուցէ՝ թէ անանկ պարտաւադիրք մը արհամարհել ու պատասխան չտալը ամենէն աղէկ վայրածն էր Մխիթարեանց. և այնպէս ալ կընէին թէ որ գրքին պրպտութիւններն ալ Մխիթարեանց պատուոյն և անուանը միայն պիղծ բաներ ըլլային, և ոչ հաւատքնուն ալ, որ հարկաւ մեծ դայթակղութիւն մը կը պատճառէր ժողովրդեան, մանաւանդ երբոր լուրթիւնը իրրեւ հաստատութեան նշան մը տեսուէր. անոր համար առ ժամս այն պատասխանը տրուեցաւ, որուն մէջ թէ որ պատշաճէին եւել բան մ'ալ գրուցուած է՝ յուսանք որ ընթերցողք ներողամիտ կըլլան այնպիսի կերպով նախատուած ընկերութեան մը համար գրող հեղինակին, որ ինքն ալ մանաւանդ ծանր կերպով նախատուած է այն Պարտաւադրքին մէջ,

« Աւելորդ է թերեւս ըսելը որ այն պատասխանատուութեանը մէկ երկու խօսքերն ալ ծուռ հասկցուեր են. որովհետեւ Պարտաւադիրքը գրող անանունին հերետիկոս ըսուած ալ է նէ՝ ձեռնարկութեան կերպով մը ըսուած է, իրեն ըրած ծուռ տրամաբանութիւնները ծաղրելով։

« Երկրորդ մեղադրութիւնը օրագրին այն է՝ որ Հանդիպեալ ընկերութեանը համար գրուցուեր է թէ որպէս գիտալ գէշագոյն բան մը չըլնէ երիտասարդներէն. ուսկից սա կուզէ հանել Օրագիրը, թէ ուրեմն առաջ գէշ է եղեր ընկերութիւնը որ ալ գէշագոյն չըլլայ կըսուի։ Սակայն այդ գէշագոյն բառը ընկերութեան համար ըսուած չէ և չէր ալ կրնար ըսուիլ.

յիշատակել սար և զայլ այնպիսի ածականս, զոր մակագրեն նորա Վեր. Հաւատն է պիտոյքն Հարսնացուին նորա, առանց ակնածութեան է Հոգւոյն. Աճա կարկառանք արով կարկառէ Վեր. Հիւրիւզ գպատառասուն հանդերձ իւր... և իրաւունք նորա փոխադարձ նախասիրոյ զՎերապայծառ Հաւատն....

(Տառապարիւն Հեղինակին։)

որովհետեւ այն ժամանակը դեռ ընկերութիւնը հազիւ սկսած ըլլալով՝ ազէկ կամ դէշ բան մը ընելու ալ դեռ առնչութիւն չէր եղած. հապա ընկերութեան կանոններուն վրայօք խոսած է հենգնօրէն, որոնց համար երբեմն դէշ՝ շատ խօսքեր եղած ըլլալով, ինչպէս ամենուն յայտնի է, պարն կուզէ հաւկըցնել գրողը՝ թէ Վ. Հ. Պետրոս վարդապետը անոր համար յանձն առաւ այդ կանոնները գրելու, որ երիտասարդները իրենց գլխուն ալ գէշագոյն բան մը չբնեն. թէ որ ան իր միտքը ազէկ չէ կրցեր բացատրել՝ պակսութիւնը բացատրութեանը կոչմանէ է և ոչ Հաստզգեաց ընկերութեանը:

„ Գանք երրորդ և ծանրագոյն մեղադրութեանը, որուն համար դառնացեալ սրտիւ կը բողոքէ օրագիրը թէ Մխիթարեանք հերետիկոսի ու հերձուածողի անարգական անուններով Նախահայր են գրուն Հայերը, և թէ երբեմ կրնան թէ Հայք հերձուածող և հերետիկոս են: Իրենց բառը ատ է. „ Մխիթարեանք ատորուան օրս երբեմ կրնան ատ իրենք „ խնդրոյն վրայօք, իրենց՝ սուրբ Աթոռին հետ միշտ և կա„ տարեալ միաբանութեանը, և թէ ոչ երբէք ուրիշ ուղղա„ փառ վարդապետներէն զատ և օտար կարծիք և վարդա„ պետութիւն ունեցեր են: „ Մխիթարեանք այնչափ յանդուգն չէն որ եկեղեցւոյ դատաստանը իրենց յախշտակելով իրենք իրենցմէ այդպէս երդմունքներով անանկ մէկ բացատրութիւն ընդհանուր վճիռ մը տան. և ոչ այնչափ տխմար, որ ուրիշի հաւատոյը համար երդումն ընեն:

„ Իսկ թէ այսպիսի խնդրոց մէջ սուրբ Եկեղեցւոյ և ուրիշ ուղղափառ վարդապետաց կարծիքն ինչ է՝ հերիք տրվեցյեր են Մխիթարեանք իրենց գրոցը մէջ, ինչպէս այն Տրամախոսութեանը մէջ ալ որն որ կը յիշուի Տերտերոջ մը վերջապէս անունով նոր հրատարակած տետրակին մէջ, և կը խոստովանին որ աղգայինք իրենք իրենցմէ ալ առաւածարանութենէ և առաւածարան վարդապետներէ տեղեկանան առանց բանիւ վրայօք, որով Մխիթարեանց ալ արդարութիւնը լսուցուի: Թէ որ չէ՝ Օրագրին ըրած այդ բարկը և մեղադրութիւնը ծանր է տալ Մխիթարեանց, որոնցմէ շատ հեռու է

իրենց ազգայնոցը նախատինք կամ թշնամանք ընելու կամքը։ Իրենց ազգասիրութիւնը քիչ շատ՝ կարծեն որ յայտնի եղած է իրենց գործքերէն. և թէ որ քիչ մը իրենց ազգը նախատել ուզենային, իրենք այսչափ չէին նախատուէր։ Փորձով իմացած գիտեն ազէկ այն մեղադրուած բառերուն ծանրութիւնը, անոր համար հարիւր յետոյ տարիէ ի վեր է որ փաստաթղթեր, ջանացեր և աշխատեր են վերցնելու ազգին միջէն այդ տեսակ և ազետալի բառերն ալ և անոնց պատճառներն ալ. ինչ որ կրցեր են ազգին բարւոյն և պայծառութեանը համար ընելու՝ ըրեր են, Հայոց ազգն ալ ազգաց և ազանց առջին ճանչցնելու ու փառաւորելու անհոգի չէն եղած. կարճ խօսքով՝ այնչափ մերեր են իրենց համազգիքը, որ ամէն բան նէն եաթը մէկ այնպիսի փառաւոր Պարսատագրքի մըն ալ արժանի եղեր են։

« Այսու ամենայնիւ եթէ յոմանց ազգասէրաց կըհամարուին և ջատագովք ազգին, խօսքերնին չլսուիր. և իրենց դառնած և քարոզած կամքուդիկէ եկեղեցւոյ ճշմարտութեանցը դէմ հակառակութիւն որ կըլլայ, ըսել է թէ ուրիշ իրենց ու ազգայնոց ընդունած հաւատոյ վարդապետութեանցը մէջ տարբերութիւն մը կայ, զորն որ իրենք ազգայինք ալ ճանչնալով՝ հռոմէական կամ հռոմէադաւան կըկոչեն զանոնք, չըսենք թէ ուրիշ անուններ ալ կուտան. և այս տարբերութեան հարկաւ հետեւանքն է բաժանումը։ Եթէ ծանր է ազգայնոց սա բաժանումը և այդ բաժանման հետեւանքները, ու շատ հեղ պատճառ նաեւ յոխտից ազգային վիճից և բանակռուութեանց, մեզի կերեւնայ թէ անոր ճարն է որ, ինչպէս կըսեն բոլորն ու ցուցանեն աշխարհիս տակ իրենց անկխտրական սէրը և մտերմութիւնը Քրիստոսի ընդհանուր ուղղափառ եկեղեցւոյ հետ (*). տակէց մեծ, տակէց ուրախալի բան. ինչ կրնայ ըլլալ Մխիթարեանց համար. և

(*) *Մխիթարեան Հայց ճանաչելով քոչ զուղղափառ գաւանութիւն հաւատոյ հայաստանեայց եկեղեցւոյ, և լեզուպէս և սահմանարան գոլով, նոցա անկանի է խոցել մտաց ցուցանել Հռոմայ դէմ ընդմտութիւն և բառնալ ի միջոյ ազգիս գերիպատակութիւն։*

(Շարունակելի։)

եթէ իրենց թէ մէկ կողմէն և թէ մէկալ կողմէն այսչափ լաւ նախատրիաքներէն այս մեծ օգուտն որ ելլայ, իրենք զիրենք երջանիկ կըսեպեն, և ամենայն սիրով ներքև են ու կընեբեն միշեա հլու լաւ նախատրիաքներուն, և նոյնչափ եաս, և աւելի ալ լսելու պատրաստ են ազգերուն բարեաց համար։»

Առաքէ Գեր. Հիւրմիւզ գյայտարարութիւն վանաց ի Պօլիս առ իւրան ի հրատարակել անդ. բայց իւրքն ոչ միայն անհետ առնեն զայն, չյայտնել զորչումն կամաց վանական ժողովոյն, այլ և հակառակ կամաց նորին առնեն անդ յայտարարութիւն մի իւրեա ի դիմաց ընդ միարանութեան ընդդէմ յայտարարութեան Հ. Գաբրիէլի Այվազեան. և այս առ ի ծածկել զյանցանս և զնախատինս իւրեանց, և ի տալ զայն Հ. Գաբրիէլի։

Անտանիկ պատճէն յայտարարութեանն այնորիկ, որ զնախատինս զՔրիդիհախօսութեան զամենայն միարանութեամբն իրեա զհանդերձ վառաց արկեալ, զանվերապանութեան միաբանիցն տայ զհատասխս։

Յայտարարութիւն Կոստանդնուպօլսոյ վարդապետաց.

«Արշալոյս Արարատեան լրագրին 429 թուին մէջ մէկ թուղթ մը կարդացինք, Փարիզէն գրուած 7 Նոյեմբերի, Այվազովսքի Հ. Գաբրիէլ Մխիթարեան վարդապետին ստորագրութեամբ, որ կուզէ ցուցնել՝ թէ խոսքերէն պարտաւորին դէմ սուրբ Ղազարու վանքէն եղած պատասխանը՝ Մխիթարեան միաբանութեանը չէ, հապա մանաւանդ մարդու մը։ Ով որ աշխարքի օրինաց տեղեկութիւն ունի և խելքը բանեցնել գէ, ինքնիրէն պէտք է հետեւցընէ, որ սուրբ Ղազարու վանքին տպարանէն եղած որ և իցէ գիրք մը՝ որ և է հեղինակի անունով ելլայ բոլոր միաբանութեան կըհամարի, և Արբան է երաշխաւոր, թող թէ երբոր առանց անուան ելլայ. վասն զի սուրբ Ղազարու վանքին տպարանը ոչ է համարակաց տպարան որ ամէն առանձնական մարդ ուզածը տպէ. իսկ միաբանութեան

անձ մը գործս տեղ բան մը տալու ելլայ, ինքնագլուխ ըրած կլլայ, և զայն չի համչնար Աբբան և Մխիթարեանները : Առտի հարկ չկայ ծանուցանել Հասարակութեան որ ան Բառին Մխիթարեան Մխիթարեանը չի կրնար ելլալ, այլ միայն ան մէկ մարդուն է՝ որուն անունն ալ տակը տառատած է : Եւ ամեն կարդացող ինքիրեն պէտք է լսէ, որ սա Բոլին հեղինակը ինչ համարձակութեամբ վատահացեր է վանքին տպարանը տանիլ անուան մը տպուած բանը՝ մէկ մանուածի մը գործ երեւցնել և իր օտար տպարան ինքնագլուխ տպած Բառին և կտրիճը միտրանութեան տրիշ անձանց ալ ընծայել : Վասն այնորիկ մենք ամենքս միտրան, նա և մեր Աբբոյին ու միտրանութեան կոչմանէ, չենք համչնար և չենք ընդունիր ամենեւին ան Բառին, և կըսենք որ ինք տեր տեսլի բոլոր Հասարակութեան :

*« Մխիթարեան Մխիթարեան
Վարդապետաց Վենետիկ որ
ի Պոլիս :*

« Ի Կոստանդնուպոլիս.

« 28 Նոյեմբեր 1852. »

Ա՛չ ապաքէն ճշմարտի առացեալն Հ. Սարգսի որ ի Թուղթն իւր առ Գիր. Հիւսիսք, թէ « Մխիթարեան վարանու« թիւնն ապաստարկու ծառայ և զերի եղեալ յառաջին« խորհրդով վարժեալ ազանց՝ մուտս ի սուտ զպաշտօն« իւր և զպատիւն վարդապետին », ո՛չ եւ ո՛չ ապաքէն ի զէպ խակ եղանէ Գիր. Հիւսիսեան զուշակութիւնն այն Հ. Գաբրիէլի Ալէմանեան որ զԳիր. Սուրբ ոգի Սոփի, թէ « Թագաւոր« թեամբ կամացն Աստուծոյ եղեւ ընտրութիւն քո Ա՛զգդ« ութիւն, զի կոչեցեալ յաւուրս քո Մխիթարութիւնս :

Եթէ տեսեր զպատուիրանաց Ալեւտրանին և անծանօթ վարդապետութեան հայց իւրոց զրոյց՝ չկարէ արդարանալ ընդ այսպիսի անպատեհ և անկիրթ գրուածս, զատարտուել ի բնութեանն օրինաց, ապա զիաւրէ կարկիչ արդարանալ Ա՛զգասէր հաւրեաւրդ Ալեքսի և Ա՛զգնախարարս զբ . . . և զայս ի սխալ արձանագրացանել և յաղքի իւրում հրատարակել : . .

Եթէ գտանէր զբ ի վանս սրբոյն Ղազարու այնչափ խանդակաթ և ոգեբեր՝ մինչեւ վան փրկութեան Ա՛նգլիացի նոտարանէից աղօթս յօրինել և առ զայն ի ձեռս աշակերտաց իւրոց, զի աղօթեացեն հանապազ վան զարձի նորա ի ծոց սուրբ Եկեղեցւոյն Հռոմայ, ապա ընդ՞ր ոչ առնէ նա (Հ. Գաբրիէլ) զնոյն և վան փրկութեան հանդգնեալ իւրոց, կարծեցեալ նմա հերետիկոսաց Հայոց : . . Եւ ոչ միայն չառնէ նա զայս, այլ և առնահար լինի ի վերայ մնրմնջութեան նորա, բարձրանայն կարդալով զԸնդհանրութեան

թեեւ այն ի ձեռնարկն վտանգ, ի լսելս սուղ համոզեցոյց Հայոց և պաշտպանելոց ընդ այն . . . .

Եւ ես ոչ ակն ածեմ ցնորելոյ իբր ծայրս արտասուաց վիճի ոչ ի պիտեն հրոյն, ոչ

Եւ Աստուած որ բարկանայ երբեք իրաւ արտասուաց ոչ սուղ արտասուաց վիճի գոհանալն, ոչ

Եւ երկն ոչ վայ, յոր ձեռն գայցէ գոյժ արտասուալեաց, ոչ

Ապա պրոյսի պիտեն, քանի՞ վայ, և որչափ գոհանալն իցեն ձեւս, որ գոյութիւն սուրբ տայցէ երբոր իրաւ հաւատոյ ստացեալ, և սուրբ քան զերկիր պատուական ի Գահէն Հոգւոյն. և սքանչել սուրբ պիտոյիցն աստուածոյ.

ոչ Ժեժեալն արտ սէր. Իրեսս և յանդգնէ. Առաւոտ. ոչ Խորհուրդ. Անկրուա. Գառնալ. Լուիմ. Անել. Հրեշտակ. ոչ Էա, Անկրուա. Անեխոչ. Տխուր, Անոխի. Արդարանալ. ոչ Եղայրասէր. Փրկիչ. Անասնասէր. Երկրաշարժ. Ոսոխ. ոչ բերայ. Կոյր. Անիրաւասէր. Հրէշ. Գարմանալի և ահեղ ոչ Հմայեալ արժանի. Կառավար պրպտիչ. Յիսուս. Անհաւատ. ոչ Երկրաւորեալ մարդ. Երբ դերապարտուց աստ և երանելոց. ոչ գառան. Արշաւանաց երեսից խռովեալ մարդ. Հայհոյիչ. ոչ Յիշեցուսու, և այլն, և այլն, և այլն : »

Թողից ասել զանցուցանել և զանձն բանիցն և զայլանոյսն իմասցին զոր Աստուածաբանեալն ասէ, և զոր Տեսանողն ոչ մինս բերին մտադիրին մաց և եղծանիլ պղտոյն երբոյ, և ասացին ևս զոր ըստ այն հասանելն և զայն հասանել. այլ և առաքեալն Յովսեփեանն ասելն, թէ երբոր Աստուածեանն զոր ի վատս և զոր այլոյր ի նոյն մաս երեսից էր . . . Եթէ այլ զոր ի նոյնիկ խոսիցի գնչութեան, յայտարարեալն իբրև ասելն, բնաւորեալն զնա յաս կոչել զայն, ուրեմն գնչութեան. այս եթէ ոչ, այսուհետև ևս հասանել զնա անդրադարձ ի Աստուածեանն երեսից :

Եւ եթէ այսպիսի այսպէս են գնչութեանն, այս պրակս կոչեր Հ. Առաքել յայտնել զՀ. Գալիճեան Բերդաւոյ և զան Բերդաւոյ անուն հրամանեն ևիկեր ի ա-

նոց խրոց : . . . Յորժամ Աբրայն և որք անդ և ի Պօլիս տարտարտ բարկութեամբ և անկարգութեամբ լցեալ՝ ոչ անաստ պատուիրանացն Քրիստոսի , պարտական էին Հ. Գաբրիէլ անսալ հրամանին որ ի նոցանէ . . . և յորժամ հաւանիցի նա ի Միաբանութենէն , անարգանք լցեն նմա՝ թէ հաւանողաց նորա : . . .

Ասացեալ յիշելով յիշէ Հ. Սարգիս , և ի դէպ-խոկ , զրանս Նահապետին Յակոբայ որ առ որդիս իւր ի խնդիրն այն անիրաւ վրէժխնդրութեան , ասելով այսպէս .

« Շմաւոն և Ղեւի եղբարք , կատարեցին զանիրաւութիւն « ի կամաց իւրեանց . ի խորհուրդս նոցա մի մտցէ անձն « իմ , և ի ժողովս նոցա ոչ հաճեսցին միտք իմ . զի սրտմ- « տութեամբ իւրեանց սպանին զարս : Անիծեալ սրտմուտ « թիւն նոցա զի յանդուգն էր , և սրտութիւն նոցա , զի « խիստ էր : » Ծննդոց . 5-7 .

Յամին 1853 ի 19 յունվարի ժամանէ ի Փարիզ ի Մ . վար- ժարան Հ. Ղեւոնդ Ալիշանեան իրրեւ պատգամաւոր Գեր . Հիւրմիւզի , և մատուցանէ զվերոյիշեալ Թուղթն որ ի դիմաց ժողովոյն առ Հ. Գաբրիէլ Ակիսեանն , և խօսի նմա բերանով զպատգամն առաքելն իւրոյ , հանդերձ բանիւք խնդրանաց Բնաւ ի հաստել զնա՝ կատարել զկամն Աբրայնի և իւրոյն որ ի Պօլիս : Եւ իրրեւ տեսանէ թէ չկարէր հաստել զնա փոխել զմիտս նորա ի հանդուրժանել ճշմարտութեան , զնոյս առ Հ. Սարգիս և խնդրէ ի նմանէ օգնութիւն յայն , հաստել զՀ. Գաբրիէլ անսալ բանից իւրոց :

Հարցանէ ցնա Հ. Սարգիս , թէ ունի՞ր նա յԱբրայնէն գիր , կամ բերանով յանձնարարութիւն առ ինքն :

Ասէ նա , թէ չունի ինչ անտի :

Ասէ ցնա Հ. Սարգիս . Ապա չանկանի նմա խառնել յայն : . . .

Ասէ նա , թէ Որովհետև միաբանք են սուտ , անկարի քեզ խառնել յայն :

Ասէ Հ. Սարգիս . Գուն միայն այդպէս համարիս զիս . զի

եթէ և առաքեալ այդպէս ճանաչէր, ազգ առնէր ինձ յառաջադոյն զգալուստ քո այդր, և գնալոյսն երկուորդ պրաեթամբ իւրով: Ապա ոչ անկանի ինձ խառնիլ յայն:

Երբեմն կարի շատ սովոր ես Հ. Գաբրիէլ խօսել նորա ինչ ընդ այն, խօսի նա յայնժամ զճշմարտութիւնն: ա. Զինչ " խնդրէ, ասէ՝ ժողովն ի Հ. Գաբրիէլէ. յՔոա կոչել զայ- " տարարութիւն իւր որ յԱրշալուսին: Զիա՞րդ կարէ նա զայն " առնել առանց ուրանալոյ զճշմարտութիւն և զուղիղ հա- " նապատն իւր ընդ այն. շատացի՛, ասէ, ժողովդ ընդ " լուսիսն Հ. Գաբրիէլի, չյայտնելով զվանական ժողովով " յայտարարութիւնն, որով կարէ խոյտառակել զմերան " ի Պօլիս՝ ընդ յանդուգն և առաւ յայտարարութիւն իւրեանց " անդ: . . .

" Եւ ընդէր, ասէ, կոչէ Աբրայն զՀ. Գաբրիէլն ի վանս: " — Ի չինութիւն գայթագղեալ եղբարցս անդ, առաւ: — " Ասեմն կամաժառար ոք համարին նորա զնա յուղղափառու- " թիւն հաւատոյ, քան ամբաստանութեան մերոյն որք ի Պօ- " լիս: . . Եւ ասեմն գնալով նորա ի վանս՝ հաստատացի ամ- " բաստանութիւն նոցա: Այլ գիտացիր, ասէ, զի եթէ արա- " չե Հ. Գաբրիէլ զինչ և կոչէ յայտարարութիւն և կամ զինչ " զոա իւր քան զառն վարժարանիս, արարից ես յայտա- " բարութիւն մի, ոչ իբրև զնորայն համառօտ և անորոշ " բանիւք, այլ ընդարձակ և որոշ բանիւք, որով ծանիցեն " ամենեքեան զճշմարտութիւն և զարդարութիւն միանգա- " մայն: . . . Ապա զարմացեալք, ասէ, յայր անխոհեմ և " ինաւակար պահանջմանէ ձերոյ: "

Եւ իբրև տեսանէ, զի փոխէր անդադար զիսօս իւր Հ. Գաբրիէլ, հարցանէ զնա, թէ ունի՞ զրով կամ բերանով զիեկատրութիւն բանից Աբրայնի, որով ապրա էր Հ. Գաբրիէլի առնել նորա ինչ յայտարարութիւն:

Ասէ նա, թէ չունէր զայն առաւ, բայց զիտէր զինս նորին:

Ասէ ցնա Հ. Մարկոս, թէ տայէ զայն զրով Հ. Գաբրիէլի, և իմացի թէ Հաւանեցայ նա ընդ այն, և արարայ

ինչ լսա այնմ : Հասանէ նա քանից Հ. Սորգսի և առնէ զայն, բայց ոչ գրով, այլ բերանով, ըստ որ չիասանէ Հ. Գաբրիէլ, և երեսաքը. քանզի տյսպիսի մեծին մեծութիւն, Թէ յամենայնէ մերոցն է ինքն ի բոլոր Ընդհանրութեան որ ես Հայոցս, և Թէ՝ բնդունի և ինքն գյայտարարութիւն արարեալ նորոյն ի Պաւլոս :

Երթ մերժէ Հ. Գաբրիէլ զայն մեկնարարութիւն և հասանել նա նոր յայտարարութիւն, յայնժամ գրէ Հ. Գևոնդ առ Սրբոյն ի վանս, և ծանուցանէ նմա զայն ամենայն եղեալսն ի Փարիզ :

Պատասխանի Հ. Սորգսի առեալ Թղթոյ Գեր. Հերմիզդի, յորում յայտ առնէ վերոյիշեալ Գեր. Հերմիզդ, և ցանկայ Հայոց Հայրապետին Հասանել ի Գաբրիէլ ի վանս, և բոլոր ընդհանուր ժողովրդեան Վարդապետս, օրինակ գայս .

« Վերապատիւ Տէր .

« Ընկալայ յերկի գնացեալ Ա. Հեղբ՝ գրեալ յ Հիերոսոլիմէ, և ծանեայ զկամս Քոյ սիրելիք բանիւք . — « Լուաք, ասէր « ի գրեցդ Վ. Հ. Հ. Գևոնդեայ զկնի Քոյ չգալոյն այսր « սուրբ գվ. Հ. Գաբրիէլ : Այդ և մեր իսկ կէր և « ցանկալի, եթէ և Վերադարձութիւնդ ասացեալ « մեզ այսր գրով օրինակս և կալէ ի գործոյն ասացեալ « չարեացդ՝ որ ասացեալ զկարգաւորութիւն, գրով և խրատ « զերծուցեալ Հանդերձելոցդ՝ կարացուք ի կարեւոր ժամու « հանիլս գործոյդ և կալոյդ Վարդապետութեան. զորս « Թէ ոչ՝ հարկ ի մեզ տեղի առ և բազում ինչ կորու- « ստանել : »

« Վասն եւս ասացս, Թէ զկնի իսկ և զկարգն ընդհանուրին ի գործեցեալ գործոյն չգոհացեալ առնուլ և հանդերձեալ գործոյն հանիլ զերծեալ զերծեալ զերծեալ

ի 25 դեկտեմբերի անցելոյն, յիշեցուցանելով իմ Ձեզ տեղ գգուշակութիւնն Միքայէլի, և զորս Մովսէս նորընծայէր, որք և յայսմանէ ետեղեալք էին ըմբելցս և կռուացս միտնալոյն . . . Եւ թէ արդարև այդ և Ձեր խղճի նեղութիւն, ապա չէր պարտ Ձեզ դրկել Յուդէի և այնպիսի Յուդէի սա. Վ. Շ. Գարդինէլ ասաւ, . . . և այն ոչ միայն ի դէմս ժողովոյ, այլ և ի դէմս հանդիսին Ներսէսի, զան անդադար դարձի նորա ի վանս անյաղթ : . . .

« Եթէ հանդուրժեցաւ Վ. Եղիզ ուսուք արդեօք գայթակղիլ Յուդէի դրկել, և զան այնմ ասել զոր այդ առաքել կարծեմ Թէ պատուհաս էր երկաթով դրոշմեալ ինձ զայն յանդիմանել այդ առնել, կամ գոնէ, ի ձեռն առաքելոյն բանիւ ծանուցանել դնդապետի զայսոսիկ նորա այդ : . . .

« Ասացեալ այս խնդիրս անաչառ քննութեան և երկար պրոֆեսն, զոր Բազում յայլում եւսագի, և ի վերջին հանդուրժեցաւ, որպէս և զան բանի վաճառեան առնել Սարգսի, առանց Վ. Ադամպանին : . . .

« Այս ինչ ինձ զայն հանդուրժութիւն առնել այժմ պատասխանել, զան բանի առաջարկեալն որ ի Ձամբայ, և զան որ յետոյ ինդրել Վ. Եղիզ իմանալ զկարծիս մեր առ

« Գրելի, առ ինձ ետուս առ Վ. Շ. Վ. ետուր զան առ
« ետուին զոր գրեցաք առ գործակից մեր, և զրուած իմն
« պատասխան այդ ի վաճառականէն մերմէ ի Ձամբայ : այ
« առանց մերժելոյ զառաջարկութիւնն, պատասխան մեզ
« յայտարարեալ զգուշանալ : Գանդի անձնեցուն բարեկամացն
« մերոց ծրտութեան և խոր բարկութեան իւրեանց լինել,
« չմերժել զառաջարկութիւնն, այլ թէ և ջանիցք ինչ,
« առնէին չկատարանելիք, այր մերժելոյ, առնն, ոչ բարուք
« այլեք գձեզ կարծիս : Այլ խոհեցեալ և Ձեր այդ
« զերացս առնել զկարծիս Ձեր ժամով, զի գձանգիտի
« օգտակար բանից այսոցիկ յօգուտ Միաբանութեան :
« Եւ այս ամենայն մեզ, թէ այլ՝ բարւոք ձեր ի բերան Վ.Եղիզ

որ առ Վ. Հ. Վեռնէ առաջարկութեան Կարտուղարին Վատիկանի որ առ դրժամարան վանացս անդ, և դադարեաց պատասխանին Ձեր ընդ այն այժմ. այլ Հաւանեցաք մեք առ, և Հաւանիմք երբէք ընդ առաջարկութեան Կարտուղարին Պատնապօլ, վասն զի անիրաւ է այն և ճշմարտի Մխիթարեանս, չատոյից թէ քանդուին տրին իսպառ: Ապա յայտառնեմք, բողբոջիմք մեք առ ամենեքեան, զի չընդունիմք մեք զո և իցէ առաջարկութիւն, որպէս և իցէ փոփոխել յերիցեալ, առանց յառաջագոյն տեսանելոյ և քննելոյ մեր զայն, ճանաչելով քաջ պարկեշտութիւնն Կարտուղարին . . . և պատուականութիւնն դրժամարտից վանացս անդ, Գերապայծառ Տէրդ Հիւսիսի և Հոր Ռոմայէլի:

“ Ահա այս են կարծիք մեր և կամք առ ընդ խնդիրս այս, որով և Ձեռ

“ Ի փարիզ. 9 փետր. 1853.

“ Գերապայծառ Տէրութեանդ Ձերում

“ Ի. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՄԻԱՆ. ”

Եւ Հ. Սարգիս ի Թղթոյ ուրուք ի Վենետկոյ, թէ առնն Սաքքօն որ ի Պատուիռն առագաստ Մ. վարժարանին, և որ արժեալ էր 80,000, Ֆրանք, վաճառի 40,000, Ֆրանքով ի Հ. Եաչէ, և հրամարակի ի ներանել, թէ կամի Մխիթարեան յառաջ առնել զկնեալ Հնութիւն որ ի Պատուիռն և փոխադրել անդ վերոյիշեալ Մ. վարժարանն, թէպէտ բարդին ազգասոյց տպին Հայկազն վաճառելն այն, Հանելով Մխիթարեան իշխանութիւն վաճառելոյ զայն, ի գնել օրէնադիրացն զմարհիկս առագաստիցն Մ. վարժարանին, զորմէ հոգացեալ էր Հ. Սարգիս նախահայրացն տեսութեամբ ի յոյժ հանգամանութիւն իրաւանցն տպին:

Վասն վաճառ բանի վաճառին առնն Սաքքօի, զորմէ յիշա-

ասէ Վեր. Հնարիւր ի վերոյիշեալ թուղթն եւ՝ յայտնացուցանել պինդն ընդ այն, այսպէս.

“ Առեալ եմ Զեր հարկաւ զպատճառ վաճառականն տանն
“ Սոքքօի . . . բայց թէ Զեզ ոչ օգտակար թուին իրքն,
“ և եմ Զեր այլ խորհուրդ ի մտի, է գեւ ժամանակ խա-
“ նութեան զվաճառումն, գրեալք և ծանուցէք մեզ զայն :
“ Իսկ թէ ընդ՚ր չկանխեցի ծանուցանել զայն, քանզի
“ համարիմ թէ ինքն գործակալն որոյ է ընդ Զեզ թղթակ-
“ ցութիւն, ծանուցանէ Զեզ զայդպիսիս. քանզի և ես
“ ի խուռն այսր ծանր հոգոց և գործառնութեանց ժամա-
“ նակիս չժամանեմ այդպիսեաց ուշ առնել, որով թէ թե-
“ թանամ ուրեք ի պատշածից, ակն ունիմ կարեկցութեան
“ ի Զէնջ լինել արժանի :

Առնէ Հ. Սարգիս պատասխանի այսր բանից թղթոյ նորին պատ և անուղղակի, ի պատասխանին իւր որ առ Հ. Աղեքսանդր պէշիքթաշ, և զոր առաքէ ի վանս ընծեռնուլ նմա Վեր. Հնարիմի, ապա հասուցանել ի ձեռս Հ. Աղեքսանդրի ի Պօլիս, և որ ունի այսպէս.

“ Ես արարի պատասխանի այսր բանից թղթոյ Վ. Հնին, թողով զայն ի վերջին այսր հարկաւորութեանն. որ՝ ահա առեմ ես առ այս նախ՝ թէ պատճառ դժկամակելոյս ընդ վաճառումն պատճառն Սոքքօի էր, վասն զի առանց ծանուցանելոյ ինձ լինէ վաճառն զայն կէս գնով. քանզի իմ էր զայն պատառ գնեալ, և քանի լինէ արժանի ի նորոգութիւն նորին ծախեալ, և քանի աշխատութիւն ընդ այն կրեալ. ապա իրաւունս ունիմ դժկամակելոյ և զանգամակելոյ գՎ. Հնէն : . . .

“ Առեմ երկրորդ՝ թէ այո՝ լուեալ եմ ես ուսանք հարկաւ պատճառ վաճառման այնորիկ առ ի բարձրացուցանել զհիմնարկեալ չինուածն, ի փոխադրել անդ զՄ. Վարժարան : . . . Եւ երրորդ՝ հարցանեմ ես, թէ գիարդ համարէր Վ. Հնէն, թէ ինքն գործակալն, Հ. Եսայի Մգրաք, ծանուցանել ինձ զայդպիսիս, որում արդէն ինքն ուսեալ էր

բարի արհեստ յեօթն տարի հետէ, արհամարհել և ոչ ինչ համարել զիս յիրաւունս վարժարանին, և ոչ այլեւս վիրաւ, այլ և իրրեւ խորհրդոց և գոյ համարել զիս ընդ Հ. Յովհաննու Մարկոսէն ի տառակարտութիւն վարժարանին. ապա չհամարէր նա թէ ինքն զպծտական ծանուցանիր ինձ գոյութիւնս . . .

Ապա առաջ ևս, թէ չեն իմ բանք գրեթէ ընդունելի այսոցիկ, յոր և յամենայնի ինքնահաճ ևս, զիմաստուց ապրուցս ապես, զրամի չեզրս և չի ևս վասն երեսաց, բայց զայն յամենայնի ի հառաջս կանուց Հ. Պարսի, որ ըստ օրինակի Քհօռզոմի սիրով իւրով գնէ և ծառայ, զինչ ասպարաց ապես, որ ի ձեռին և յիշխանութեան նորա է, բերելոյն . . . ապա ցաւիմ ևս առաջ ընդ միաս ապրուցս ապես, և ընդ գայթագղութեան նորին ի ծանուանիցս, բան կարելից լինիմ ևս, որոյ ծանիր հոգի և գործունեութեանդ ծանուանիցս ի իւրեանց անդր, կանուցս են, և արդարև գործոյ իւրոյ, Ընդհանրախոհութեանդ, զոր չհրաժարեալ ապ ապրելի ևս, և ևս ոչ սեռոյ ինձ : . . . . . .

Գնեմ անդ և գհակառակութիւն բանից Թղթոյ նորա և գանարգութիւն հրամանին, թէ „ Լուայ ի պրելոյ „ Վ. Հ. Պետրոսեայ գիտաս ձեր չարժելոյ այլեւ տարաւարժ „ սուց գՎ. Հ. Պարսիկ. այլ և մեր խղճք են և ցանկու „ թիւն : „ Զիարդ համաձայնիցին այս բանք, ընդ բանից Թղթոյ իւրոյ պրելոյ առ Հ. Պարսիկ սուրբք ինչ յառաջ, թէ „ Մեծաւ ախաճութեամբ ընթերցաւ ծառայս զԹղթոյ „ իւրոյ պատասխանին, քանզի ոչ ակն ունէր եթէ գանգատ „ գիտիցէ ի յոյժ հրամանէ իւրոյ սուելոյ վարուն հաւա „ տեմութեան ոչ ծառայիդ վիրացոյ, այլ և հաճոյէն Աստուծոյ „ Որպ սեղեկացեալ ի Հ. Պետրոսէ գհամաձայնիս սիրոյդ „ ի գործ ի վիրսին : „

Տեսանէք գհակառակութիւն բանիցդ ընդ վիրացոյս, և համառօտիւ գանգրպտութիւն հրամանիցի ծառայիդ և հաճոյիցի Աստուծոյ : . . .

ԳԼՈՒԽ ԽԲ.

Հաշտասիրութիւն արդարասիրելոյ Հ. Գարբիէլի ի յայտարարութեան իշր. — Պահանջումն ժողովոյ վանուց ի Հ. Գարբիէլէ. — Թիւնզրհեի Հ. Սարգսի գնի պահանջման այլ. — Գառնատեառնի Հ. Գարբիէլի առ Ժողովն գնի պահանջման նորին.

Յամին 1853. յ9 փետրվարի, ընդունի Հ. Գարբիէլ ի Փարիզ Թուղթ մի ի Հ. Բարդէ ի Պոլիս, յորում են նշանակեալ բանք, և որ անկ օրինակ գայր.

„ Ընկալայ պրկեալդ ի 29 անցելոյն և զոր միանգամ գրեալ-ըդ վասն յայտարարութեան մերոյ: Կարծեմ Թէ և Վերապատուութիւնդ առ ի խառն մտածել էր չկարէր այլազգ խոչնդել և դարձել. այսու ամենայնիւ ոչինչ եմք մեք համոզեալ, զի բնաւին առաքինութեամբ ձերով յետ այնքան փոփոխեալ առ ձեռն պատրաստ, դարձեալ խառնակել ի Վերապատուութիւնդ չհրամարեալ գայր:

„ Հայր սիրեցեալ, առանց առաքինական զգուշութեամբ ձերով գիրեք գրեթէ մեր առնելոյն ի ձեզ. ապրիլն ժամանակս շար է, և Քշմանց գրոհ յաճառն ընդառաջ ի վերայ մեր, և մեք ևթէ առանձին առանձին նպատակաւոր լեալ-ք նայս, գիտեշ ոչ լոկ մեզ յայտնի: Աղաչեմ ի սի բերան զՎերապատուութիւնդ ի սէրն Քրիստոսի հալ ի խառնիմանդ, և զոր վաղագամ գրեցեալն զեզ ի վառոյ մի ընդդիմանալ այնմ, զի միանշեւ անցանել գրկեալն է այն: „

„ ի Պոլիս. 1 ապրիլ. 1853. „

Ահա ակամայ խոստովանութիւն ճշմարտութեան ի բանս յայտնիկ, յեղ այլքան վրայիցն ուրիկ առ ձեռն պատրաստ, դրաձեալ խոստանալոյդ իսկոյն ի Մխարանոցին չհրատակել զայն, զյայտարարութիւն վանաց, որով արդարանայր նա ի բանս իւր, և զսուտ յայտարարութիւն Պօղոսի, որով խոյտատակէր զնոսա բոլորովին: Եւ ահա հակառակութիւն բանիցն նոցա. ուրախանան ընդ անհնակալութիւն նորա, և ինքեանք ևս են չինու վրէժխնդրութեան, բողբելով անդադար հանել զնա ի պաշտօնէ իւրմէ. երդմնեցուցանեն զնա ի սէրն Քրիստոսի մեղաւոր զինքն հրատարակել ընդ արտաքս իւր ուղիղ, որպէս զի արդարացին ինքեանք յանխրատ գործս իւրեանց, չընդիմախօսութիւնն, և այլն, այլ ի զուր ելանէր ևս յոյս նոցա, հաստատուն մնալով նորա ի բանս ճշմարտութեան, և անզեղջ ի գործս արդարութեան:

Ի 20 փետրվարի 1853 ամին ընդունի Հ. Գաբրիէլ ի Փարիզ թուղթ մի ի Պօղոսէ յաշակերտաց Մ. վարժարանին, յորում արդարացուցանեն զինքեանս ընդ ստորագրութիւն իւրեանց ի թուղթն չարախօսութեան գնահատել, և յայտնեն զհեղինակ նորին, օրինակ զայս.

„ Վերապատուելի Հայր.

„ Արդ՝ մեք ստորագրեալքս գննեցինք, հարկաւոր եղաւ միջոցներն ի գործ դրինք և խնդրանք որ նոյն մարդասկան գրոյն հեղինակը այն անձն չէ որն որ իրրև հեղինակ կը ձևացնէ ինք զինքը, և որուն մեք բարեմտութեամբ մեր ստորագրութիւնները տուինք: Այս պատճառաւ իրաւունք ունինք անոր դէմ բողոքելու, մեր ստորագրութիւնները յետս կոչելու, վասն զի չենք կրնար և չենք ուզեր լալ գործիք մը այն անձանց (կամ այն անձին) ձեռք որ անուններին պահելով իրենց միտք առաջ տանելու համար, զմեզ ձեր աշակերտներէդ ձեզի դէմ գշելու և իրենց գրած թղթին հեղինակութիւն մեզի ընծայելով, և զայն մեծ վկայութիւն մը համարելով, ձայներնին

երթալով կը բարձրանան. մինք ոճն կատարելութիւն չենք ուզեր ընել, մի՛ պիտի ինչ տեսակ Հասուններու։ Ջորս դին դիմակ, և անոնցմեն երեսը միայն բաց։

„ *Ձեր աշակերտներն*

„ *Միքայել Սեբաստեան.*

„ *Ո. Փաշայեան.*

„ *Մ. Կիւզել.*

„ *Ա. Տուզաք.*

„ *Յովսէփ Ագնուռեան.*

„ *Մ. Մանուկեան.* ”

„ (*Առարկէ ասոր և Գալուստեան, բայց ապա կարեւոր հանգամանք կը։*) ”

Անա բացատրական հայկին, յայտնելու խորհուրդը Հ. Սարգսեան Հ. Սարկաւագի, հանդերձ նախատօնաբանութեամբ, զոր կարգան ունի ճանաչել յայտնապէս Հ. Գաբրիէլ Լամենի և յոճոյ նորա որ Լիթուէնն չարախօսութեան վերայ ընկալեալ Պօղոսյ, և զոր ապա Հ. Սարգիս Չայլամեան Բազուցիոյ ընդունելութեան նմանեցուցանէ գնա, ճանաչելով քաջ վկնիք բնութեան նորա և զգի վրէժխնդրութեան որ Լ նոցանէ։ . . .

Ճանաչէր արդեօք և Գ. Հերմիզ, թէ դաւանակից պրոթեստանտ որ Լ կողմանէ խրոցի և յաշխարհականաց առ Լիքի երեսին Լ Պօղոսյ, Թեսալոնիկեցիք էին այնպէս Հ. Սարգսեանի, և զգալոյ պահանջել Լ Հ. Ագնեանէ այլ յայտարարութիւն . . . չեւանի բնաւ այնպիսի նշան, այլ այսչափ միայն, և այն ձեռամբ Հ. Ղեւոնդի Լ Փարիզ, թէ պրեցէ Հ. Գաբրիէլ Լ Հռոմ և Թողէ կարծեալ Ժառանգին զպահանջէ զայն որ Լ տանէ, ակն ունելով հասանել ցանկութեան երեսաց, խոստեամբ կարծեալին։ . . . Այլ վրէպեցաւնա յանկարծութենէ անտի, չտեսնելով զայն յանձն Հ. Գաբրիէլի։ . . .

Ի 21 փետրվարի 1853 ամին ընդունի Հ. Գաբրիէլ գիր ի վանաց Վենետկոյ, գրեալ ի վենց համօրէն միաբանից անդ եղելոց, յորում ցուցանեն զկարծեցեալ քաղցրութիւն իւրեանց առ նա, և պահանջեն ի նմանէ զնոյն, այլ ոչ նոյնպէս, մեկնութիւն խնդրեն ի նմանէ բանից յայտարարեալ նմանն իւրոյ որ յԱրարատեան Արշալուսէն, առ ի բժշկութիւն դալթագղեալ մտաց հասարակաց, օրինակ զայս.

„ Վերապատուելոյ Տեառն Հ. Գաբրիէլի Վարդապետի ողջոյն ի վենց համօրէն Միաբանից:

„ Ոչ ինչ ծանր համարեցաք Միաբանից ամենայն որ առ, ժողովական գրով երկրորդել յարդոյապատիւ Հայրութեանդ զժկամակութիւն իւր վասն յայտարարութեանն զոր արարէք ի նոյեմբերի, ի ձեռն Արշալուսոյ Արարատեան օրագրին զվիճունելոյ, և զկամս իւր զոր ի ձեռն գրոյ առաքեալ Հարց և Վ. Հ. Վեհանդեայ ծանոյց Ձեզ:

„ Վ. Հ. Վեհանդ գրեաց ի 21 յունվարի թէ, „ Ձեր՝ բա-
„ րեմտութեամբ, և ի պաշտպանութիւն Միաբանութեանս
„ լցէ գրեալ գյայտարարութիւնն, և թէ գրանն ամենևին
„ իրաւացի կարծիւ, իմանայցէք զՄիաբանութեանս գնացից
„ և ոչ այլ ինչ: „ Սակայն ետես Վերապատուութիւնդ, զի
առհասարակ ուղղախոհք և անուղղախոհք զհաւատոյ խնամեալ գրանն խառնիցան, և սակաւքն այնոքիկ որ ըստ մտոյ ձերոյ զՄիաբանութենէս առանձնալ խնամեան, միայն գայթագղիցին, անկանոնական համարեալ զնոսին:

„ Երկրորդ՝ ի գրի Վ. Հ. Վեհանդի այն էր, զի առանձնալ էք թէ „ Ոչինչ ծանր և գայթագղական բանս գրեալ լցէք
„ ի յայտարար նամակին: „ Իբր յայտ առնել կամիցի, զի թէ գուշակեալ էր Ձեր յառաջագոյն թէ գայթագղելոց են առհասարակ՝ ոչ գրելիք սրտիւք զայն ինչ, կամ ոչ այնպէս գրելիք:

„ Արդ զի գայթագղեցաւ ժողովուրդն առհասարակ ըստ ոչ կամաց ձերոց, (թէպէտ և ի բերէ մեկնելով գրանս ձեր,)

պարտ է զի Վերադառնութիւնդ արագ և է օրինակս բժշկեցէ զմեռանողս : Ի բժշկութիւն և յուղղութիւն մտաց ոչ յետս կոչումն պահանջէ ի Ձէնջ Մխիթարութիւնս, այլ ճեմնութիւն թերթ հասկացեալ բանից, կամ յայտարար գիր ուղղախոհութեան մտացդ որպէս պարտն է : Ահա սովիմբ կրկնէ վերանին ժողովս զորոշումն իւր և ակն ունի, զի ոչ մերժեցէ Վերադառնութիւնդ զառաջարկն յօդուտ համաբանից, յորում ժամս և ինքնին Մխիթարութիւնն Հանացի գրեալ ի Հռոգովութիւն անձին Վերադառնութեանդ զոր ոգեշունչ միտքն արար

« Վենետիկ ի տուն Սրբոյն Ղազարու .

« 16 *փետր*. 1853 .

« Գէմրդ վ. Հիւրմիւզ Աբբեպետս. և. քնյ. Աբբայ .

« Հ. Անանիա Ճէլալեան Ազգակից .

« Հ. Պետրոս Մինասեան Ազգակից .

« Հ. Ստեփաննոս ենաջիճեան .

« Հ. Ղուկաս Լազեան Ազգակից .

« Հ. Աբրահամ Ճարեան Ազգակից .

« Հ. Մաղաքիա Յովհաննէսեան .

« Հ. Օգոստինոս Գուիմճեան Ազգակից .

« Հ. Համազասպ Թէրճիմանեան .

« Հ. Օգոչնտիոս .

« Հ. Բռնաբաս Եսայեան .

« Հ. Եփրեմոս Տոկեան .

« Հ. Գաբրիէլ Զարհ .

« Հ. Վարդան Շիշմանեան .

« Հ. Համբեակ Պապեան .

« Հ. Գրիգորիս Մէրճան .

Ակնարկ համարիմ առնել առ քննութիւն գրոց այսոցիկ, նոյն ածէք և նոյն արդիւնք առնելով և այլ գրոյ Մխիթանութեանն որ ի վանս սրբոյն Ղազարու, այլ ոչ ակնարկ համարիմ յիշատակել առ գրանս նշանաւոր և կարեւոր թղթոյ Հ. Ալեքսանդրի Պէշիկթաշլեան, որ առ Հ. Սարգիս, և որ ունի այսպէս.

„ Զսակաւ թէ նամակն Վ. Հ. Այվազովսքեայ չիարէ ար-
„ դարանալ, իբր զի բանք նորա ոչ հայելի ի հաւատոյ վար-
„ դապետութեան, այլ միայն յոճ գրուածոյն և յարհամար-
„ հարան բանս որ ընդդէմ հերձուածոց չարամասնին: „

Իսկ բանք Վերոյիշեալ գրոյ հանդերձն Մխիթանից եղելոց ի վանս, ունի այսպէս.

„ Առհասարակ ուղղափառք և անուղղափառք դհաւատոյ
„ խնդրեալ գրանն խոովելոյն: „

Հարցանեմ ես արդ՝ թէ զինչ հանձայնելոյն այսպիսի բանք ընդ միմեանս: . . . Որոց բանից արդար էր հաւատալ. Մխիթանից սրբոյն Ղազարու, որք հեռի էին յապգէն, թէ Հ. Ալեքսանդրի, որ ի մէջ ազգին էր ի Պօլիս, և լաւ յամենայն ուսուք զկարծիս նորա: . . . Ո՞չ ապաքէն հակառակութեան բանից նոցա ընդ միմեանս ի խնդիրս յայս յայտնի ապացոյցք էին կրից վրէժխնդրութեան խրտանց, թէպէտ և գանազան կերպարանօք և ցանկութեամբ: . . .

Ողբալի՛ց վիճակ Մխիթարութեան: . . .

Պատասխանի Հ. Գաբրիէլի Այվազեան առնուլ գրոյ միաբանից որք ի Վենետիկ զօրաւոր փաստիւք և քաղաքավարի բանիւք, լուռ չափս քաղաքավար բանից նոցա չափելոյ, օրինակ գայս.

„ Մեծարգոյ և Վերապատուելի Հարք.

„ Ջմոզվակաեն Ձեր գիր, գրուխլեալ ի 16 ամսոյս և ստացեալ ի հանօրէն միաբանից այդր, ընկալայ և ջերմ ունիմ, զի ոչինչ ծանր համարեալ է ժողովք մի-

ծարդոյ երկրորդել առ իս զոր ինչ միանգամ պատուական առաքակայինն ժողով գրեալ էր յՅ յոհնվարի, և իբր իսկ անուանեալ է զնորայն զգացմունս և վկաս և զորոշումն յառաքիկայս խնդիր ։

« Ներեցէք ինձ, վերապատուեալ Հարք, եթէ յանդգնիմ զիջողութենէ այսր ձերմէ համարձակութիւն առեալ՝ առաքի առնելցեմ ձեզ և զիմ սակաւամանրագոյն տեսութիւն ի բանս ինչ նմանկիդ ։

« Եւ նախ այն, զի յայտնապէս երեւի ինձ, թէ տեղեկութիւնքն առեալք այդր ի պատգամաւորէն ձերմէ ի Վերապատուելի Հ. Ղեւոնդեայ, Թերի յոյժ լեալ են, կամ ոչ բաւական ասելի ինչ և կամ բացայայտագոյն ունելով քան զվաղ իսկ գրեսլան յինէն առ Հոգեւոր Տէրն յՅ դեկտեմբերի անցելոյ ամին, այլ և լոկ և Թափուր Թուէն լեալ ի մանրամասն և ի բազմապատիկ խելամտութեանց անտի զոր լուաք նա առաքեալ յայդց և յինէն, առանց կարելոյ կամ Թերեւս կամելոյ լուծումն ինչ կամ պատասխանի բանաւոր առնել մերոց բանից և վասից ։

« Երկրորդ՝ զի ոչ կարծեմ եւս, Թէ որպէս հաւանեալ Թուէ ժողովդ մեծապոյծ այդպարեւ ժողովուրդն առհասարակ ուղղափառք, ըստ ձերումդ ասելոյ, ինքնին և յինոյ բանից խառնեալ և դայթակղեալ էին, և ոչ մանաւանդ ի բազբատան յայտարարութենէ անտի զոր հրատարակեցին մերայնք մեր որ ի Կոստանդնուպոլիս ի դէմս իւրեանց և ի դէմս համօրէն Ազգին Ասորւոց, եւս և յանտեղի պրուցացն ախտելոց ինոցանէ յազգին այսու պատեհս զիմէ անուանէս և զգնացից և վարդապետութենէ և զհաւատոյ ։

« Զհաւատոյս այսր ամենայնի առ ձեռն պատրաստ ունիմ առաքել, վասն որոյ և համարիմ, Թէ նոցա պարտ է և ոչ ինձ, ի բժշկութիւն դայթակղելոցն վաթառել, և ժողովդ արժան էր արդեօք, ըստ այսմ տեսութեան զնոսա նախ կշռադրել, քան Թէ նոցա խորհրդոյն և կարգաւորութեամբ զիս պատահական և պատճառաբար հրատարակել առաքի մեծի և փոքու, արդեամբք և բանիւք ։

« Երրորդ՝ պի եթէ նմին հակառակ՝ յինց խակ բանից գայթակղեալ էին ժողովուրդն, և այն՝ որպէս վկայէք, զսո ոչ կարաց իրոց և իբիր սկսնեալով գրանս իմ, ապաքէն բո զոքականն այն թուղթ իդիմաց համօրէն Ազխոյիդ երեւեալ շատ խակ Ըրէ և հերքէ բացէ ի բաց պիմ յայտարարութիւնս և զազդեցութիւն նորին ցոյչամի Ազխոյիդ համօրէն չէին ժե ժեալ հրատարակաւ զրողքն, այլ մանաւանդ և հաւանո թիւն իմն ընդ այն ցուցանելոյ երկարատեւ լռութեամբն իւ րով։

« Չորրորդ՝ պի սակաւքն այնպիսի որ ըստ իմոց միտց և բանից պիտարանութեանս դնացից և ևթ, և ոչ այլ ինչ, այս ինքն և ոչ ըստ հաւատոց, իմոցան ասէք, զրանն զայն, « թէ « որ այսու առթիւ մեր Մխիթարեան Մխարանութենան հա « մար ըսեր էք, ամենն ալ իրաւացի կըլլային, թէ որ այն « գիրքը Մխարանութենէն շարադրուած և կամ բոլոր վիս « բանից հաւանութեամբը տպուած ըլլար։ » Սակաւքն այ նպիսի առեմ կամ ներքինք են և կամ արտաքինք։ Եթէ ներ քինք, ոչ ունին բնաւ տեղի և իրաւունս գայթակղելոյ ընդ ճշմարտութիւն այնպիսի, որում և խիղճ և գրութիւնք և տպագիր յայտարարութիւն իւրեանց որ ի վանս՝ վկայեն. և եթէ արտաքինք, եաս առաւել տգոյս չարդարանայ գայթակ ղութիւն. պի և ոչ բնաւ անկ է օտարոյ օրինաւոր առնել դատաստան և կամ վաւերական ինչ վճիռ հաստատել, թէ որ գործք միաբանից ուխտիս մերոյ կանոնականք համարիցին ատ մով, և ոչք անկանելիականք։

« Հինգերորդ՝ պի շնորհ յոյժ ունիմ այժմին յատուկս պայ մանաւոր բանին, որով խոստանայ պատուական ժողովդ, պի ընդունել խնամ զաւաչարկ իւր՝ Հանոցն և ինքնին Մխարա նութիւնդ գործել ի Հատապուութիւն անձին իմոյ։ Միայն թէ համարձակիմ յուշ առնել ձերումդ խնամոութեան, պի եա անցեալ եմ ամենևին, թէ բաց ի բանէ յայտարարու թեանն այնպիսի բիչ հասկացեալոյ յոմանց, որպէս ասէք, որ վասն և ոչ ևս կոչումն պահանջէք այդ ցիւնն, կայցէ ինչ ի վարս իմ՝ և ի վարդապետութիւն յանցեալոյն և ներ-

կայուն, որ կարօտեցի որպիսւոյ և իցէ մարդկեղէն ջատագովութեան. ամէն իրի և խառնվանիմ, զի ոչ կարեմ հաւատանել ի վերայ կալ իմոյոյ այսր բանի նամակին ձերոյ։

“ Այսու ամենայնիւ հանդերձ, եթէ արդարեւ միտք ի տպատ կարեւոր հարկ համարիցի ժողովդ ձեր ի բժշկութիւն և ի բարձումն գայթակղութեանց և յուղղութիւն մոլոց և յօդուտ հասարակաց գործառնութեան առաջարկութեան իւրոյ լինէն կոչմանէ, ներեցէք ինձ խնդրել ի ձէնջ, վերապատուեալ Հարք, զի յառաջ քան զամենայն հաճեալ լիք յայտ առնել ինձ դրով, և ժողովականացդ ամենեցուն առդարձութեամբ, եթէ սուտ և անվաւեր ճանաչէք զդրոյք Պօլսեցւոցն Հարց ընդդէմ իմում յայտարարութեան, զի ըստ այն մասին, որով և զուխտ համօրէն Ս. ազգիդ հանդերձ ինձ հակառակ յարուցեալ և բողոքարկուս հռչակեցին։

“ Եւ ապա յետ այնորիկ հաճելիք ցուցանել ինձ նոյնպէս դրով և յստակ և անկեղծարժ բանիւք և բառիւք, և ձեռնադրով վանականացդ ամենեցուն, թէ զրպարտիչ ինչ մեկնութիւն կամիցիք զի արարից ես յայտարարութեանն իմում տպագրելոյ, որպէս զի ըստ այնմ մարթացայց, եթէ կարող ինչ իցեմ, վախճան առնել իմոյսանն ահաճութեան և զբժկամութեանց, որոց Թուխմ լեալ պատճառ։

“ Ակն ունելով թէ ոչ զլացի կատարումն խնդրոյս իմոյ յանակնառու արդարութեանդ ձերմէ,

“ Ողջ լինել մաղթեմ

“ Վերապատուեալ Հարանցդ,

“ Ի Փարիզ. 25 փետր. 1853.

*“ Խ. Ծ. Հ. ԳԱԲՐԻԷԼ, ԱՅԳԱՊԱՏ. Հ. Մ. ”

ԳԼՈՒԽ ԽԳ.

Մանուշցոյն ժողովոյ վանուց առ Հ. Սարգիս գոռնեալ յայտարարութիւն որ առ Պապն Հռոմայ. — Պատճէն յայտարարութեան այնր. — Ընդունիւր և. ընդդէմ այն խոհից հաստատակաց որք ի Մ. վարժարանին, և. առանձինն ընդունիւր Հ. Սարգսէ.

Ի 13 մարտի 1853 ամին ընդունի Հ. Սարգիս գիր ի վանից ի ժողովոյ առաջնակային Ալբրային, յորում ծանուցանէ նմա և Հ. Գաբրիէլի նախ զընդունելութիւն պատասխանւոյ նոցա որ ընդ հարցումն իւր զդրուածոյ Տէր Պրիզոր Խապատաճեանն, և ապա ծանուցանէ ամենեցուն որոց անդ՝ զյայտարարութիւնն զոր արարեալ էր Մխիթարեանցն առ Սրբազան Պապն ի Հռոմ, հանդերձ կարծեցեալ պատճառաւքն բռնադատելոյ իւր առնել զայն, օրինակ զոյս.

“ Յարգելապատիւ և Վերապատուելի Տեառն Հ. Սարգսի վարդապետի և որոց օդդր են Վ. Վ. Հարց ողջունիս սիրոյ խնդալ:

“ Ընկալեալ ժողովոյս զթուղթ Վերապատուութեանդ զոր ընդ Վ. Հ. Գաբրիէլի զրեցէք ի 18 փետրվարի, ուրախ եղեւ. զի որպէս յուսայր ընկալաւ զպատասխանի հարցմանն իւրոյ, չունելոյ ձեր ոչ հաճութիւն և ոչ մտան և բուժին ի յայտարարութեան զրելոյ ի Տէր Պրիզոր վարդապետէ Խապատաճեան: Այլ զի վերատակար զոլով զրուածոյն և առեալ պատճառս հակառակորդացն մերոց նորոգ զրպարտութեանց, և

ի Հռոմէ նորոյ կաթուղիկոսական գՁէնլ և զմէնլ, հարկ է վիճանութեանս օրինակաւ ինձ յայտ առնել զերկայն ճշմարտութիւն, և զի չկաք Ձեր հաճութիւն ի գրուածին. քայց թէ ոչպէս, Ձեամբք լսել և ի Ձէնլ :

“ Գալով արդ յայլ խնդիր, գիտէք ապաքէն զի առաջագոյն առաքելութիւն ինձ եղեւ մեզ ի Մաւրոցէն և ի դիմաց արքունեան առնելոյ յայտարարութիւն լինէ. յայսմ առաքելութենէ որչափ և չանացաւ Մխիթարութիւնս հրաժարիլ՝ չեղեւ հնար, զի ի խնդրելս մերում զորոշումն գաւխս և գյայտարարութիւն ուղղութեան կամ թիւրութեան հաւատոյս, առաւ պատասխանի, թէ լոյն և այն յետ այնորիկ, այլ ի հանդարտութիւն արտի և խղճի Արքունեին ի վերոյ այնչափ կաթուղիկոսական եղելոց գՁէնլ, կարեւոր է յայտարարութիւնդ. զի և յետ այնորիկ լոյն վճիռ յայտարար արդարութեանդ և լուսթիւն մշտնջեան : Եւ ինքն Արքունեան ասացեալ է, թէ ընդէր այդչափ ծանրանան Մխիթարեանք և խուսանն յառնելոյ գյայտարարութիւնդ. այդու առաւել եւս կասկածաւորս առնեն զանձինս :

“ Յայս ամենայն հայեցեալ Մխիթարութեանս և ի հանդամանս եւս մեր և ժամանակիս, բնաւգաւեցաւ առնել զվերնշեալ յայտարարութիւնն, այլ այնպէս, զի դէթ չյաւելուցու նոր պարտս ի վերայ մեր, որպէս հնարեն յաւելուլ ասեք, զոր ահա յղեմք առ Ձեզ ի տես, յորում որպէս տեսանէք և ներդմանէն յոր ասեն զմեզ, խնդրեմք ազատանալ՝ և վասն ազատութեան տպագրութեանս մերոյ, զոր հնարին ասեք արկանել ընդ պարտեաք, տեսանէք թէ որպէս տամք պատասխանի, և մեր եղեալ մաքառել վասն այսորիկ մինչեւ ցվախճան :

“ Յայտարարութիւնն գնեալ ի վանական ժողովի և վճռեալն քոյին քով եղեւ ընդունելի. և զի ասեպատ խնդրի ի Արքայէնն, յաւարտումն ազգային յուզմանց, հարկ է մեզ որպէս մարթ է, ճեպել ի նոյն : Արդէս գիտացեք առաջարկութեանդ, Ձեռամբք կարի շատ հետամուտ լեալ են և առիպեալ զԱրքայէնն ի ցրուել զմիտութիւնս, քայց նորա

չէ առեալ զայն յանձն, տեսանելով մանաւանդ զկրկին վաւառաւոր վկայութիւնս զմէնջ դրելին Վենետկոյ :

“ Ժողովն վանական ընկալեալ զպատասխանին Թղթոյ իւրոյ ի Վ. Հ. Կարկինէ, ոչ յամեցեալ տալ և այնմ պատասխանի :

“ Ի ժամուս սկսալիր ողջունել առնելոցն մասնիմբ ողջ լինել

“ Յարդոյապատիւ Վերապատուութեանդ

“ Վենետիկ. 8 մարտ. 1853.

“ Ն. Ծ. ԳԷՄՊԻ Վ. ՀԻՒՄԻՆՋ.

“ Փոխանակ քարտուղարի

“ Հ. ԱՒՐԱՀԱՄ. ”

Յայտարարութիւն Մխիթարեան Մխիթարեանց Վենետկոյ առ Սրբազան Պապն Ի Հռոմ, բարգևանեալ յԻտալ. բնագրի Մխիթարեանցն Ի Հայ լեզու Ի Հ. Գ. Վենետկ. Տպարանի Ամիրեանց.

“ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԱՆ, ՀԱՅՐ.

“ Ընդհանրական Աբբայ Ս. Ղազարու և ամենայն անդամք
“ Մխիթարեան Մխիթարեանց Վենետկոյ, նշաւակ կար-
“ ծեալք անդուլ սիրատածութեանց, որ միայն հիմնեալ
“ է ի խաղաղական քաղաքավարութիւն և ի պատուական հո-
“ գեաց, զոր և աւուրս ժամանակին չնարհօքն պարգևեցին
“ յայդոլ Տեառն, առ որ և հոգեալ կոչեմն և համբակական
“ գաւանութեամբ ոչխարք նոյնիրեալ են գկեանս իւրեանց
“ մինչև ի հեղումն արեան : Վանարհեալք առաջի Աստուծոյ
“ գիտութեամբ ոչընչութեան իւրեանց, և լիովին համոզեալք
“ յանձինս ընդ միշտ պահպանութիւն միանձնական կարգաց

„ և ընդ քնարակերպ հնագանդութեան առնելոյն կարգաց Մ. Գա-
„ հուելի, որ է մայր և դաստիարակ ուղղափառ հշմարտու-
„ թեան, հշմարիտ և միակ կենդրոն հաւատոյ Յիսուսի
„ Քրիստոսի, և թէ այնպէս քաղաքավարեալք եցեն ի կըր-
„ թութեան քահանայական առաքելական պաշտամանն իւ-
„ րմանց, մինչդեռ ոչինչ ունել առգամանելի յաչս Աստու-
„ ծոյ և մարդկան (*) : Հայցեալ գշնորհս Հոգւոյն սըր-
„ բոյ, միաբերաք հաստատեցին խոնարհաբար մատուցանել
„ առ գահ Սրբութեանդ, յառակ և ինքնայօժար Յայտարա-
„ րութեան հաւատոց իւրեանց ուղղափառ առաքելական և
„ հռոմէական, եւս և ծանօթութեան կարեւորագոյն մա-
„ նից յարգութեան, յարակցութեան և արդարդ հպա-
„ տակութեան առ Ս. Աթոռն և առ վճռոս նորա : Որպէս զի
„ այսու օրինակաւ, եթէ հնար է, բարձցին այսուհետեւ
„ պատճառք յուժկ ունելք և է՝ խօսելոյ կամ գրելոյ զնոցա-
„ նէ չար, յորմէ վնաս ծած է եւ անձնական խաղաղութեան
„ նոցա և բոլանդակ հասարակութեանն, և անպատմելի
„ դայթակղութիւն հանդգնի ուղղափառ Հայոց, առ որոյ
„ հոգեւոր օգուտ՝ գիտաւորարար ուղեալ է Կարդ իւ-
„ րեանց : Եւ որպէս գի Ս. Յոգոին Աստուծոյն՝ որ ի մեզ
„ գոհմարելոց է գառաւտան առնել գանարդ իւնդրոց ինչ՝
„ պատճառելոց ի ձախողակ թելադրութեանց (կամ նա-
„ խապաշարմանց) գՄխիթարեանց վնասակոյ, առնելի նոր
„ և անսիրելի մեզ եղեալ խրատ :

„ Վասն այսորիկ անկեղծութեամբ և խոնարհութեամբ
„ Յայտ առնեմք.

„ Ա. Հաւատամբ և դաւանիմբ, որպէս և միշտ հաւատա-
„ ցաք և դաւանեցաք՝ զոր ինչ և հաւատոյ և ուսուցանէ

(*) Այդ յոյժ ցաւալի է, յոյժ հնազանդութեամբդ, և փարիսեական անձ-
նագոհութեամբդ գինչ չահեցար որ ապա ի Գահէն Հռոմայ. գիշխանութիւն
Կար. Հաւատի՛, թէ գիտացո գերութիւնդ նմին . . . Փորձառութիւն նախորդաց
մոց չեզեւ երբեք փոխ ի խրատս. զի կիրք վրէժխնդրութեան և փառասիրութեան
հատն մատանել փոխ գիշխանութիւն քո, և յուսացուցին առանձնապէս գիշխանու-
Հարցապատին Աստուծոյ : . . .

(Առաջարկութիւն Հիմնական)

„ Ս. Մայրն եկեղեցի կամուղիկ առաքելական և Հռոմէա-
„ կան, որով իմանամք կրկնել զպատմութիւն հատուց քա-
„ րայարութեան հանգանակին առելոյ ի սրբայիշատակ
„ Պետէ Դ. և փրօքուր առնեմք զի կամիմք կեալ և մեռա-
„ նել յայս հատուս, Տեառն օգնականութեամբ :

„ Բ. Հաստատեմք և վերատին դաւանիմք զոր միանգամ
„ սրբայիշատակ Ներսեսոս Ը. կարգադրեալ է յիւրում հան-
„ գանակի վասն Արեւելեայց, զոր և հանդիսապէս զաս-
„ նեալ իսկ է մեր և երգեալ ի նոյն՝ ի մեռս կրօնաւորու-
„ թեան մերոյ. և յորմէհետէ ի սուրբ կարգիս մերում,
„ կատարելագոյն պահպանութեամբ ուխտից եղելոց, և մի-
„ անձնական կանոնաց, հաստատելոյ յառաքելական Ս. Աթո-
„ ռոյն :

„ Գ. Ցանձն առնումք, ընդունիմք և պատուիմք, որպէս և
„ միշտ յանցեալսն արտեալ է անկեղծութեամբ Միսրանու-
„ թիւնս մեր, զամենայն օրէնս Ս. Հռոմէական Եկեղեցւոյ,
„ և հնազանդիմք ամենայնի և միոյ միոյ արուեստից, կանո-
„ նադրութեանց, վարչարարութեանց և վճռոց, արտադրելոց
„ և արտադրելոցս յաղագս՝ ի Գերագոյն Քահանայապե-
„ տէն և ի Ս. ժողովոյն. և նշանակաւ (ի մասնաւորի) այնո-
„ ցիկ՝ որք արգելուն զհաղորդութիւն յաստուածային ընդ
„ հերձուածողաց. նորոգելով միանգամ ի միաբանեալս
„ դէպ ստորագրութիւնս մեր՝ ողջագուրելոյ և համաձևոյ որ-
„ պէս եղբարս մեր՝ զամենեսեան զնոսա զոր Ս. եկեղեցին կա-
„ րուղիկ Հռոմէական՝ ճանաչէ որդիս իւր, և աղօթելոյ
„ քարոզելոյ բանիւ և գրով, և հնարելոյ, զի մերոքինքն
„ յաղագս ճշմարտութեանն՝ դարձցին ի միասին և միայն վա-
„ րիս Քեռւան Պրնատոս, որոյ գլուխ, կենդրան և հովուա-
„ պետ է քահանայապետն Հռոմէական: Եւ Էպէս արդեամբք
„ հաստատեն ճշմարտութեան գնոսիցեմք զի ոչ ուրուք ի մե-
„ րոյ միանձանց հաղորդեալ լիցէ յաստուածային ընդ հեր-
„ ձեալսն, որպէս հաճոյ թուիցուս ոմանց բացատել, ի միոյ
„ սոյն ամենայնի չորեքսր և յոյս առնեմք, զի կէտ ա-
„ մրոխայն ուղղութեան դէպ լոյս յաւ հետ ունիք

„ ի մերց միանձանց սիրել ի պատուիրանի առ ուղղա-
„ փառ կարգաց, ոչ միայն ոչ ջնասպանելիք և պաշտպանելիք
„ զարարս նորա, այլ առաւելն իսկ պարտաւելիք, ընդհա-
„ նուր մեծաւորաց պահելով զառնելն ընդ նմա ի միտս
„ ածելով զպատուհասն՝ որք միանչեւ յարուածն ի միան-
„ նական սխալս՝ զրծպտրելիք են արդ ի սրբաւ Կարգիս
„ մերում։ Եւ եթէ բառ ոչ կարծեաց մերոց՝ չինելոյ ուրուք
„ երբէք ի մերոցն անկեալ ի յանցանս հաղորդակցութեանն
„ յառաւածայինս, ցուցցէ որ մեզ հաւառեալ անժխտելի
„ փաստիւք՝ սխալեալ զրբ, յայտ առնէ՝ առաւելն իսկ
„ յայտ առնելիք՝ ընդունել զայս մանկացուցումն ի ձեռաց
„ Տեառն, և վարել ընդ յանցուցելոյն կամ ընդ յանցու-
„ ցեալսն, անձանձիւ մեզ ցարդ, բառ առհասարակ օրինաց
„ ի կանոնս մեր՝ որպէս զի մի միոյն մեղաւ բովանդակ Մար-
„ մնոյն պատուհաս։

„ Դ. Յայտ առնելիք պատրաստ լինել ի ժողովն՝ պատ-
„ ուիրանաւորեալ մեզ անդամն ի ժամանակաց Հիմնարկին
„ մերոյ, առ ամենայն միանձունս որք գառաջին նուագն ձե-
„ ռն արկանեն ի գործ առաքելութեան, և մասնացանել
„ յայնմ պատճէն՝ զոր և ի երդումն, բառ օրինակի ամենե-
„ ցուն այլոց առաքելական հարցուածոց կամ առաքելոց
„ ի մեռս անդ արդարն պաշտամանն խրնամոց. և նա և
„ զերդումն զայն՝ որ առեալ լինէր երբեմն առաջի առաքե-
„ լական Եռակի Վենտակոյ, զհաղորդակցութենէ յառա-
„ ուածայինս, պատրաստ եղիք այժմ առ և զայն առաջի ժո-
„ ղովրդական պատրաստութեան միտելով այ-
„ սրիկ, բառ եղանակին որով հրամայեցաւ մեզ ի Ս. Յով-
„ հաննէ Մաւրիկեան՝ անդամն յամին 1780. Թէպէտ և ար-
„ դիւնք երեցն բացայայտապէս հաւանեցուցին զմեզ, (որպէս
„ և բազում անգամ առաջի արարք Ս. Յովհաննէն,) եթէ
„ ի սակս պարտուցս այսոցիկ եղելոց ի վերայ մեր, վոխա-
„ նակ հնարելոյ զգանկացեալ խաղաղութենն, ամբաստա-
„ նագիր մեր զնոյն ինքն պատճառս տալն նորա՝ յերկայն և
„ ի կատարած արկանելոյ զպարզութիւնն հաւատոյ մերոյ։

«Ն. Բարկեանք և բնդունիմք զՀրամանդն առեալ Ս. Ժո-
«ղովոյն յամին 1842, բրօքսր առնելով Թէ մերայսմանն վիշա-
«ղաչայսք նմին կէս առ կէս. ասկոյն ապերանիք զՍրբոս
«Թևոնդ և զՍ. Ժողովն, զի առժանի համարեալք վաստրա-
«պէս յայտնել և ճշդել զնիւթս հակառաճառելոյն (յորս
«Սխալարհանք միշտ կրօղք եղեն) Թէ որովհետև
«պարս էր ընդհանրական Սրբոյն վարել ի կիրառութեան
«կարողութեանն չնորհելոյ նմա ի Ս. Ժողովոյն՝ զան քա-
«ղաչաց, և զայլ եւս գժուարութիւնան՝ որք կրճին եղեն
«ի գերեա հանելոյ զոզին գիտունն Եուսդոյին: Ազդ
«առնիմք եւս անկնաժողութեամբ՝ գիտել յայտ պարտոյն,
«Թէ ո՛րչափ ոչ միայն պատշաճ՝ այլ և կարեւոր իցէ՛ ինամ
«առնել գարտուղչացն, որք ծննդոց յարեանց և վարդ-
«բերք յարեանոց ի տղոց ոմոց, զան ձեռոյ բանից Հրա-
«հանդին, նա մանաւանդ զան մեկնութեան բանիցն զոր
«ոմք անզգամք իշխանութիւնն, որպէսզի լինին ի տա-
«առնելոյ երկնից գծնդս և զազգանան, և ի շնչելոյ զօդ
«հայրենի՝ ի վերսհան հետանոթիւնս, որպէս Թէ վտա-
«բերք ոմանք իցեն ի հայրենեաց:

«Զ. Պատկառ կամք վարչական կամացդ արեւելեան
«Եկեղեցւոյ և յամենայնի յարմարիմք ընդին, ազաչելով
«զՍրբութիւնդ և զԺողովն Ս. Հաստաձայնել զիանուան զայ-
«նոսիկ զոր ոչխարհեալ ընդունելոյ է այս, որպէս զի բարձցին ձայն
«ձանր մեղադրանաց՝ որ առեալ պատճին, և որպէս
«զի և յարեանէ վարկցին երբ եւս ոչխար կարգաւ՝ ընդ
«որս մարդասէր յարեանս:

„ Ի. Պանդի ի սահմանադրութենէ մերմէ առնիմք կրթել
„ և հրահանգել զմանկունս Հայոց յուրոյն վարժարանս,
„ բօրհնեալ առնեմք զի ոչ երբէք պանծ արտրաք ծախել
„ հոգ և խնամ և վաստակ՝ առ ի ժամանել ի կատե-
„ ւոյս այս նպատակ, հնարելով ծրել յոգիս համբակացն
„ զմաքրապոյն սկզբունս կամ ուղիկն Հառմիական հաւա-
„ տոց : Եւ զանդի Հանք մեր պահակալք օգնութեամբն
„ Աստուծոյ յաջողակ եղեալ, զարթուցին և զրգռեն
„ միշտ զնախանձ ի վերայ մեր մինչև ընդ կատածանօք
„ խակ արկանել զմեզ և յայսմ ճառին. ապա յայտ առ-
„ նեմք զի ոչ երբէք մերժեցաք և ոչ խակ մերժեցաք զիր
„ և է հակառութիւն Թեմական առաջնորդաց՝ որոց հաւ-
„ ատական իրաւասարութեանն խակ պարտք և իրաւունք
„ են՝ արթուն կալ ի վերայ քրիստոնէական կրթութեան
„ ի սիճակս իւրեանց, որոմ և կարեն զիւրաւ ի վերայ
„ հասանել վասն յաջողակութեան աշակերտաց մերոց ի ծա-
„ նօթութիւն լեզուի տեղեացն՝ ուր վարժարանքն կանգ-
„ նեալք են. և եթէ չիցէ այդ բնաւական ի վկայութիւն
„ բարեկարգութեան նոցին, ոչ խորհեմք ենթադրել զմեզ
„ առ ի և է այցելութիւն, կամ առաքելական Նուիրհի
„ կամ որոյ և է այլոյ իշխանութեան անաւարտականի,
„ զոր կամիցին յառնել ի Թեմականն տեղական եպիսկո-
„ պոսաց. միայն ազաչեմք զի մի ընդունցին ոչքս յաղտա-
„ յին եպիսկոպոսաց՝ որք կուսակից և կենդրոն են հակա-
„ ռակ կողման :

„ Ը. Յառաջնակք ընդ պայման ոգիոյութեան ազգին
„ Հայոց, պարտս մեզ համարեցաք լուսաւորել զնա որ-
„ պագրութեամբ դործոց սրբոց և ուսումնականաց, հա-
„ զեալս և հրահանգիչ գրովք, և ազգային Հարց սրբոց
„ և արտաքին հեղինակաց հնոց և նորոց, տալով ի լոյս
„ տպագ մենատանիս մերոյ Սրբոյն Ղազարու. չա-
„ նեմք և ոչ Թեթևագոյն խիղճ՝ անհոգ լինելոյ յօրինա-
„ կագիր ապագրութեանց մերոց ի վերաբերեալն յամ-
„ րագնութեան ուղղախառ կրօնին զոր ոչ և է գլխոյ.

„ բայց քանզի և զնոսանդն կրօնասիրութեան և ազգասի-
„ թեան մերոյ ընդ բամբասանաց արկին երեսին (որք
„ և բոլորովին հերքեցան մանրամասն քննութեամբ նշա-
„ նակեալ գրոցն՝ ի գերագոյն ընդհանրական Սրբազնա-
„ նութիւն, և հաստատեցաւ ի Սրոյ ժողովոյ Փառա-
„ նաւ յամին 1816-21,) և զեռ եւս նորագիւտ ամ-
„ բաստանութեամբ զգրոյ երանելոյ Ներսէսի Լամբրո-
„ նացւոյ. ապա յայտ առնեմք պատշաճ լինել, զի
„ թէ գարձեալ ամբաստան ոք լիցի առ Սուրբ Աթոռն
„ զո՛ր և է գրոց տպելոյ ի տպագրատան մերում, առ-
„ ոյ ամենայն հաւատարմութեամբ ջմեռութիւն և ըզ-
„ պարզաբանութիւն զոր և է բանի որ յերկու միտս
„ հարկանիցի և ի կասկած. և առ ուղղագրել խնդիր
„ հաստատութեամբ զոր և է խնդրոյ զերագոյն հեղի-
„ նակութիւն Սրոյ ժողովոյն Փիլիպեանց գրոց գոյէ ան-
„ համաձայնս իւրոցն և վարդապետութեան Սրոյ Հռոմէա-
„ կան եկեղեցւոյ:

„ Թ. Քանզի ոչ է համաձայն հշմարտութեան, թէ Միա-
„ բանութիւն Մխիթարեանց վնեստոյ ունիցի ինան
„ ի հաստատութեան ընկերութեանն Համազգեաց, որպէս
„ կամք եղեն ոմանց տալ հաւատալ Մատեանին, քան
„ ի պատահական խնդրոյ զոր ծաղկեցին առ ի ոմն ի մի-
„ րոց վանձանց յանցանելն իւրում ընդ Կաստանդնու-
„ պոլիս՝ յօրինել զատուածի իմն կանոնացն, առանց
„ նախածանօթ գիտութեան և կամակցութեան ընդհանր-
„ կան Սրբոյին, և ոչ այլոյ ոքուք ի վանձանց, ապա
„ ոչինչ նորոգելով զնախկին յայտարարութիւն միր որ
„ զայսմանէ ի սկիզբ խակ տարուջ, ընդունելիք և պատուելիք
„ զո՛ր և է վճիռ նախագոհեալ Սրոյ ժողովոյ որ զայսմ
„ իրէ, թէպէտ և ամենևին օտար է այն ի Սահմանադրու-
„ թենէս մերմէ:

„ Ժ. Առ վերոյիշեալ Յայտարարութիւնս և առ պետիկ
„ զոր ինքեան խնդրեցեալն ի միջի Սրբութեանդ կամ Ժա-

„ լոյն, ի յաւելուած այնոցիկ, զոր ինքնայօժար արուար-
„ բեցաք ի թղթիս՝ յարեմք խոնարհ և արդարդիր ազաչանս
„ մի, անթերի վաստհութեամբ լսելի լինելոյ։ Զանդի հրա-
„ պարակագոյժ եղեն նախաամինք որով ընդ վայր հարկն
„ գնուատ Հպատակութիւն մեր զանազան օրինակաւ, յոր-
„ գլխաւոր՝ պատկառելիս մեր ի վարդապետութիւնս, յորմէ
„ և հերետիկոսն անուն՝ եղեալ մեզ։ և զի ապահով համարե-
„ ցան զերազոյն վճիռք արուարձեալք ի Ս. ժողովոյն
„ Վաւրգեան՝ որ վասն բարոյական, ուսումնական և կրօ-
„ նական գնացից մերոց՝ որովք ի 26 սեպտեմբերի 1718
„ և յ՝9 յուլիս 1821 ամին՝ հրատարակեցաւ, թէ ամենայն
„ այգպիսի վարկած սուտ էր և զրպարտական; ամենայն
„ իրաք, հարկ է, զի նոյն արուարք ձրիապէս զմէնջ համբա-
„ ւեալք՝ հրապարակաւ և վկայեցին սուտք լինել, որպէս
„ և արժան է ճշմարտութեան և արդարութեան։ Վասանց
„ պարտաւորելոյ զվաստահամբաւիչսն ի լռութիւն՝ որով ար-
„ դելցի նոցա կրկնել առ ս՛ոք և իցէ զնոյն ամբաստանու-
„ թիւնս (թէ ըստ օրինակին որով մինչեւ յայժմ շարժին,
„ և թէ այլով որով և է օրինակաւ՝ որ ի նոյն նիւթոց ծա-
„ գին,) յետ ամենևին յայտնի լինելոյ, հերքելոյ և սուտ
„ երեւելոյ նոցին. ոչ միայն ոչ լիցի հնար առանալոյ երբէք
„ զօգուտ խաղաղութեան՝ զոր անդադար մաղթեմք ի Տուո-
„ ղէն ամենայն բարեաց, այլ և պարտիմս մեր զարձեալ
„ ծագր ինչ, և ոչ կարիցուք հոգեւորապէս օգնել ուղղա-
„ փառաց, ոչ չահել զհերձուածողս, զորչափ հաստատուն
„ միան ձայնք զրպարտութեանց, որովք զօր ամենայն արուա-
„ դնին ի մեզ։ Անշուշտ հաւատք այսմ նպաստակի՝ ի վաղուց
„ ցանկացեալ վճռումն՝ զոր չեւ եւս է արուարձեալ Ս. ժողո-
„ վոյն Վաւրգեան, զպատգան խնդրոց ընդդէմ մեր յարու-
„ ցելոց, զոր և արագարագ ածել ազաչեմք եռանդագինք,
„ անկեալք առ ոտս Սրբութեանդ, զորոյ ազերսեմք զհայ-
„ րական և զառաքելական օրհնութիւն։ „

Վնարգ ձեռաց ծնողի և միաբանակից Հայրապետի Յովսեփ.

բուխնա այս, և Թարգմանութիւնն յոտնգոյն քան պյոտի բնագիրն՝ արժանի է անհաւատաս խղճի և գրչի Թարգմանչին, և զգուշի արդեօք վերծանողացն առհասարակ ։ Փութացուք ի հաւատոմութիւն իմաստից մերոց անտրտ և վատթար յայտարարութեանս, զոր Վիպասանութիւնն յանդգնութիւն իւր խոկ գրեաց և կնքեաց ամենայն կեղծաւորութեամբ. զի յետ գրելոյ առ Հ. Սարգիս՝ որպէս տեսանի ի վեր անդր էջն 213, Թէ «Յայս ամենայն հայեցեալ Վիպասանութեանս «և ի հանգամանս նոս վեր և ի ժամանիլիս, բանադատեցաք «առնել զխնդրեալ յայտարարութենին, »» գրէ և առ Պապն, Թէ «Հայցեալ զնարհս Հոգւոյն սրբոյ՝ միաբերաք հաստա«տեցին խոնարհաբար մատուցանել առ գահ Մրբութեանդ «պատակ և խնդրաւոժար յայտարարութեան. »» այլովքն հանդերձ ։ Արդ՝

Առաջին հատուած յայտարարութեանս այսորիկ գաւանութիւն է, առ որ չկաց ինչ ասել, զի ամենայն որ իշխան է հաւատալ և դաւանիլ, որպէս և գիարդ հաճոյ կնքեան Թլփեցի ։

Երկրորդն՝ վերանորոգութիւն իմն է ուխտին և կանոնապահութեան, առանց հարկի եղեալ, մանաւանդ Թէ միտաւակար յոյժ, զի խոտորանի, Թէ Վիպասանութիւնն Թուլացեալ կոչի արդարեւ ի կարգաց կրօնի իւրոյ ։

Երրորդն՝ հրաժարումն է լուր իմիք յառաքելական պաշտամանէն, այսինքն ի չորրորդ ուխտէ իւրեանց, այնու զի խոտանման հետի կալ յամենայն հաղորդակցութենէ ընդ Հայոց ։

Չորրորդն՝ է յանձնառութիւն չնութեան և երգմանց, որ նախատինք մեծ է Վիպասանութեանն, մանաւանդ Թէ անձնասպանութիւն բարոյական յաչս աշխարհի ։

Հինգերորդն՝ է յանձնառութիւն հրամանատրի Ծառային որ ի 1842, այսինքն գերութեան անիրաւ պահանջանաց Հատանին, որոյ այնչափ ժամանակ ընդդէմ կացեալ էին ։

Վեցերորդն՝ է Համակար յանձնառութիւն կարդադրութեանց արեւմտեան եկեղեցւոյ, մանաւանդ Երկրին Ֆռանգաց ։

ամբարս յարեւելեան եկեղեցւոյ կանոնաւ, որ և արհամարհութիւն կարդաւորութեանց սրբոց Հարցն մերոց։

Եօթներորդն՝ է յանձնառութիւն այցելութեան և քննութեան այր ոմեք և իցէ վանս վարժարանաց իւրեանց, նախանձք մեծ ընդդէմ Մխիթարեանն և ազգին և կամակից հանգուցեալ բարերարացն։

Ութներորդն՝ է յաղագս տպագրութեան գրոց յորում է նախանձական խոտորումն և յանձնառութիւն կարծեցեալ դրացութեանցն, թէ գոն ի գիրս Մխիթարեանն խարդախութիւնք կամ իրաւամբ կասկածելիք, և մանաւանդ ի տպագրութիւնս կրօնականն գրոց նախնեաց Հարց մերոց սրբոց։

Ինններորդն՝ է մտածութիւն իմն Հանդգնեցաց ընկերութեան՝ որպէս թէ ըստ ինքեան վճռակար ինչ ճանաչէ զոյն Մխիթարեանն նկեղեցւոյ՝ որպէս ասէր Հաւան։

Տասներորդն՝ է յանձնառութիւն այլոց եւս պահանջմանց և յառելուածոց գրոս սրսոցեն Սրբազանն և Վաւաջոյն, որով Մխիթարեանն կինէ զանարգանս իւր և գլխոյ ընկերութեան անճոռնիկ։

*Ահա այս է յայտարարութիւն Մխիթարեանց վենետկոյ առ Սրբազան Պապն ի Հռոմ, ըստ թելադրութեան Գարուանալոյն Վաւաջոյն Պառնապոն, յորմէ զարհուրին Գեր. Հիւրմուզ և եղբայր նորա Գեր. Եղուարդ, և Հ. Ոսկեայէլ Թրենց, և որում հանդէպ լինել կամին. վասն որոյ ճեպէ Գեր. Հիւրմուզ հասանել տալ զայս վանեալն ժողովով և յղել ի Հռոմ։ Թէպէտ էին ի Պօլիս անձինք Մխիթարեան երկասանն, և յայլ կողմանս հինդ որք անժանօթ և անհաղորդ այսմ, թէպէտ և անձինք չորք ի Փարիզ յայտ արարեալ էին Մխիթարեան յառաջագոյն թէ չընդունին զառաջարկեալն ի Պառնապէ, իբրեւ վճռակար և կտրծանիչ Մխիթարեան, և թէ զի և էցէ յայտարարութիւն Մխիթարեան առ Պապն ի Հռոմ չընդունին առանց տեսանելոյ և քննելոյ զոյն նախ, այլ արհամարհէ Գեր. Հիւրմուզ զբարեր Նոցա, և հասանել զոյն յղէ նախ ի Հռոմ, և ապա առ. Նոսա ի Փարիզ առաքէ զօրինակ նորին ի տես միայն . . . Եւ ահա հնարի-

մաց քաղաքավարութիւն և անպատեհ վարշութիւն Առաջնորդի Մխարանութեան . . .

Պատասխանի Հ. Սարգսի և իւրոյն որք ի Փարիզ տուեալ գրոյ ժողովոյն ի վանս, վասն բանի յայտարարութեան առ Պապն ի Հռոմ, յորում ծանուցանեն նմա մի առ մի զիւրաքանչիւր հետեւանսն որք ի յայտարարութենէ անտի . չարդարացուցանեն ինքս յայն, պայման դնեն դադարելոյ ընդհանուր ժողովոյ, և բողոքեն վերստին զայնմանէ, օրինակ գայս .

« Վերադառնալ Հարկ :

« Զժողովական նամակ Ձեր գրեալ առ մեզ յ 8 ամսոյս, ընկալաք ի 13 սորին, ընդ նմին և զօրինակ խոստերէն յայտարարութեանն առաջարկելոյ ի Մատլոցէն, և ի դիմաց Սրբազանին, որ և քննեալ ի վանական ժողովիդ և միաձայն քուէիւք ընդունելի լեալ է Ձեզ :

« Արդ և մեր առորագրելոցս ընթերցեալ մտադրութեամբ զնոյն Յայտարարութիւն, միաբան խորհրդով հարկ և պատշաճ համարեցաք, առանց այժմէն ի քննին մտանելոյ միոյ միոյ ի յօդուածոց նորին, ծանուցանել մեծարգոյ ժողովդիդ զայսոսիկ :

« Ա. Ի յայտարարութեան անդ բովանդակին յանձնառութիւնք նորանորք այնպիսիք, որոց չկարէ Մխարանութիւնս մեր հաւանիլ՝ առանց ընդհանուր ժողովոյ .

« ա . Ձի յանձնառութիւնս այս արդարացուցանէ զամենայն զրպարտութիւնս և զկասկածանս եղեալս մինչև ցայժմ զդէմ և զվարդապետութենէ և զընթացից Մխարանութեան մերոյ :

« բ . Ձի հաստատէ զամենայն զրպարտութիւնս հրատարակեալս յիտալական Պարտաւագրին :

« գ . Ձի արդեօք զՄխարանութիւնս ի գործունեայ վարակոյ յօդուս կրօնական, բարոյական և ուսումնական յառաջադիմութեան ազգիս Հայոց տհաստարակ, և եղծանէ

զանգհական կնիք Միսրանութեանն՝ որոյ յայլոցն, որ է ազգասիրութեան։

« դ Ձի ներքոյ արկանէ զՄիսրանութեանս ամենայն անիրաւ պահանջման Գեր. Հաստնի և համախոհից նորին ազգասէրից։

« ե. Ձի ընդդէմ բացայայտ դիտաւորութեան բարերար կուսակրաց և հաստատակ ազգային իրաւանց ներքոյ արկանէ զվարժարանս մեր հրամանաց Ծառայոցն, և այցելութեան և քննութեան աշակերտաց նորին, անհաչտ ատելութեամբ։

« զ. Ձի յաւելու ի վերայ մեր և յաչխրդաց մերոց բեռինս ծանուն և անտանելիս։

« է. Ձի նախատինս դնէ պատուոյ, վաստակոց, ուղղամտութեան և անաղարտ քաղաքավարութեան նախնեաց մերոց և ժամանակակից Հայոց, որք վաստակաւ և առանց այնպիսեաց երդմնակուռ խոստմանց այնչափ արդիւնս վաստակոց ցուցին յօգուտ եկեղեցւոյ և ազգիս, Վասն որոյ վանական ժողովք անբաւական է ամենեւին, քան սահմանապրութեան Ներսէս և վասն հաստատուն սովորութեան առնել զայնպիսի յայտարարութիւն ի դիմաց համօրէն միաբանից, Վասն որոյ,

« ը. Ոչ զրպարտութիւնք ոտից, ոչ սպառնալիք աւազակաց, ոչ կասկածանք Սրբազանին, ոչ յորդորանք բարեկամաց և ոչ հանդամանք մեր և ժամանակիս պատիկք և խլեն, ոչ զօրեն բռնադատել զմիսրանութիւնս զի արտացէ, եւս առաւել զի փութացի երթեւ ինքնայօդար խոստովանութեամբ առնել զյայտարարութիւն այսպիսի առանց ընդհանուր ժողովոյ։

« Գ. Եթէ հաւանեցայ Միսրանութիւնս զուսարել ժողով ընդհանուր յաղագս այսր խնդրոյ, նախ քան զամենայն պարտի պահանջել, զի պաշտօնական և վաւերական գրով տացին մեզ առաջարկութիւնք կամ հարցմունք Սրբազան Պատրիարքին և կամ Սրբոյ ժողովոյն Ծառայոցն, և ըստ այնմ ապա յօրինեսցի ժողովք ընդհանուր գյայտարարութիւնն կարեւոր։

«Դ. Եթէ հակառակ ամենայն ակնկալութեան և յետ ընդդէմ այս ամենայն խորհրդածութեանց, Մեծարգոյ ժողովդ վանական համարիցի զանձն իւր բաւական ի տահմանել զիրատ, կամ յոյժ պայծառագոյնն զայն քան օրինակին առ մեզ առեալ և կամ շատ կամ սակաւ փոփոխութեամբք խակ, Մեք առարգրեալքս բողոքեմք առլին Թղթով ի ժողովն ընդհանուր, և առ այժմ յայտ առնեմք; զի անման և անհատոյթ եմք յանձնառութեանց բազմաց որ ի յայտարարութեան անդ, և անպատրաստ եմք ի հետեւանացն ժամակարաց յոյժ յոյժ, որպէս կարծեմք, ոգիս մերում և մտածութեան, որ յառաջ գայցեն ի յանձնառութենէդ Ձերմէ։

«Ողջունեալ մեծարանօք զԳերապայծառ Աբրահայրն և զմանակատառ զամենեսեան,

« Մնամք

« Վերապատուութեան Ձերում

« Ի Փարիզ 15 Մարտի 1853.

« խոնարհ ծառայք

« Հ. ՍԱՐԳԻՍ Վ. ԹԻՒՐՄԵՆԱՆ
Վերատեսուչ Մ. վարժարանիցն.

« Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ
Տեսուչ ուսմանց և դաստիարակ
Մ. վարժարանիցն.

« ԱՄԲՐՈՍԻՈՍ ՓԱԼՃԱՃԵԱՆ
Վարժապետ ի Մ. վարժարանիցն.

« Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ՄԱՐԳ. ԱԼԻՇԱՆԵԱՆ. »

« Որ վերադարձաւ Հայր վանահայրն ի Փարիզ որ ի վանս Աբրահամայ.

« Ի Վենետիկ. »

ի տարագրել Հ. Սարգսի և իւրոցն զվերադիշեալ բողոքական պատասխանին իւրեանց, կոչէ նա զՀ. Ղեւոնդ Ալիշան ի սենեակ իւր տարագրել անդ իբրեւ վկայ այնմ. Եթէպէտ զառաջինն այնպէս լինի նա անդ, բայց ապա կամի և ինքն տարագրել յայն իբրեւ զմի ի նոցանէ, իբրեւ բողոքիչ։ Ասէ ցնա Հ. Սարգիս, Թէ չպահանջէ ինքն զայն ի նմանէ, պատգամաւոր գոլով իւր անդ ի դիմաց Արքային և ժողովոյ նորին։ Ասէ Հ. Ղեւոնդ. քանզի և ինքն ի նոյն կարծիս նոցա լինելով՝ կամի իբրեւ զմի ի նոցանէ տարագրել յայն, և տարագրէ իսկ, և ոչ այլոյ միայն, այլ և գրէ նա ընդ այն ճառ մի երկայն իբրեւ էջս յիսուն, յորում պախարակէ զԼնդդիմախաւսութիւն Մխիթարեանցն որ առ Զարմանականաւն, և չառարկէ զյայտարարութիւնն Հ. Գաբրիէլի որ յԱրչռուհի պատմի արարառեալ։ Գովէ յոյժ զխուրճանան վարժարանն, և զբարեկարգութիւնն և զկատարելութիւնն պաշտօնէից նորին. առնէ նա անաչառ քննութիւն զյայտարարութիւնն վարդանեանցն Արքայանն ի Հռոմ, անպատեհ և վնասակար ինչ համարելով զայն, հանդերձ զօրաւոր փաստիւք և ապացուցիւք։ . . .

Յայտնէ նա զայն գրուած իւր Հ. Սարգսի առանձինն և կամի ընթեռնուլ զայն յանկարծ նորա և իւրոյն անդ ի փարիզ, զոր և ընթեռնու հանդերձ կարեւոր ծանօթութեամբ։ . . .

Առնէ նա զայն գրուածն ի պատասխանի պատգամաւորութեան իւրոյ յորժամ դարձեալ ի վանս, և հարցանելոյ զնա մխիթարեանն զայնմանէ, զոր և յիշատակեցոյ ապա ի տետրակ իւրում ըստ կարգի պատմութեան։

Առնէ Հ. Սարգիս և առանձին քննութիւն զյայտարարութեանէն Մխիթարեանց առ Պապն, և պատասխանի բանից Գրիգոր Գեր. Հրեմեանի, և տայ զայն ի պատասխանի Գրիգոր Հ. Ալիքսանդրի, զոր առաքէ ի Վենետիկ ընթեռնուլ և տալ ի Գօրիս, և որ առնէ օրինակ զոյս.

„ Ահա կատարումն դարձոյ մխիթարեանցդ յեղծանին սկզբանէ հիմնադրի կրօնիս մինչ Մխիթարայ, և ի հաստատու-

թիւն սկզբանց աշակերտաց Մաւսէսեան Հռոմմայ . . . այլ ե-
րանէլ թէ և այդու հաճոյ լինէիք նոցա : . .

« Եթէ այդչափ յանձին կալայք դուք ընդունել զամենայն
առաջարկութիւնս Գարտուղարին Մաւսէսի , և առաւել
քան զպահպանջեալն ի նմանէ , որպէս տեսանիլ ի յայտարա-
րութեան ձերում առ Սրբազանն ի Հռոմ . . . ապա առ ինչ
հրաժարակեցէք զԸնդդիմախօսութիւն ձեր առ Զարմանեանսն ,
իբրեւ սուտ և անիրաւ զրպարտութիւն առելով զայն , հան-
դերձ բազում լուսանօք առ Գեր . Հաւուն , և զայն այժմ
հաստատելով հաստատէք այդու յայտարարութիւնս ձե-
րով . . . և եթէ չեղեւ այն բաւական և ի համոզմունս
սրտի Սրբազանին ի վերայ այնչափ կասկածանացն որ զձէնջ ո ,
ապա զինչ օգուտ եղեւ ձեզ անտի : — Առելութիւն համար-
ձեալս առ Մխիթարեանդ , և պատճառ հայհոյութեան
ընդդէմ Հռոմէական եկեղեցւոյն և նախնեացդ հիմնադ-
րին ձերոյ . . . և ահա արդասիք ոչ ընդդիմախօսութենէն
առ Զարմանեանն : . .

« Ո՛վ անմիտ վրէժխնդրութիւն և անչափ անձնասիրու-
թիւն , յո՛ր սահման հակառակութեան բանից և գործոց տար-
եալ հասուցանէք զառաջնորդ մխիթարեան Մխիթարեան ,
և զմխիթարեալսն ընդ նմա ոչ ի վանս , ի Պօլիս և ի Հռոմ ,
« Եւ ինքն Սրբազանն առացեալ է՝ թէ ընդէր այդչափ ծան-
« րանան Մխիթարեանք և խուռնն յառնելոյ գյայտարարու-
« թիւնդ . այդու առաւել եւս կասկածաւորս առնեն զանձի-
« նըս : »

« Հարցանեմ և ես , թէ ո՞ւմ առացեալ իցէ նա զայս
բանս : Ո՞չ ապաքէն Պառնապայէ : Եւ ո՞վ է Պառնապաս :
Ո՞չ ապաքէն գլուխ ոտիտց ձերոց : . . Ապա գիա՞րդ կա-
րեն հաւատալ գործակցաքն ձեր անդ բանից նորա , և հա-
ւանիլ առաջարկութեանցն որ ի նմանէ : . . Տեսանէք գրա-
բնկատութիւն Գարտուղարին Մաւսէսի և գրաւականութիւն
գործակցաց ձերոց ի Հռոմէ , զոր ի նախընթաց թուղթն
իմ ազգ առաքի վերին , և ընդ որ գժուարիւր նորա , գան-
գամն ի գրի խրատեմ որ առ Հ. Գաւոնդ . սխալեցայ ես

ի կարծեան իմ . . . և ունի վնասն իրաւունս պանգատելոյ ընդ այն : . . .

« Յայս ամենայն հայելեալ մարտնեթիւռն և ի Հանգա-
« մանս եւս մեր և ժամանակիս՝ բռնադատեցաւ առնել ըս-
« խնդրեալ յայտարարութիւնն. այլ այնպէս՝ զի գէթ չյա-
« ւելուցու նոր պարտս ի վերայ մեր, որպէս հնարին յաւե-
« լեալ ասելք, զոր ահա յղեմք և առ Ձեզ ի տես : »

« Ձմտրդ համաձայնելոյն այսոքիկ բանք Թղթոյ ժողո-
վոյն ընդ բանից Թղթոյ Վ.ենէն, թէ « Գրեցի կանխաւ առ
« Վ. Շ. Գ.եառնդ վասն առաջարկութեացն եղելոց մեզ
« ի Հռոմ, և զմեր պատասխանին զոր գրեցաք առ դործա-
« կալն մեր, և գրեաց ինձն պատրաստի արդ ի փոստարա-
« նէն մերմէ ի Հռոմ, որ առանց մերժելոյ զառաջարկու-
« թիւնան՝ պատուաւորս մեզ յարդարեսցէ զայնոսիկ : »

« Տեսանէք զհակառակութիւն բանից և գործոց առ Վասն-
զանն . . . « զի գէթ չյաւելուցու նոր պարտս ի վերայ
մեր. » ասէ, և ահաւասիկ ինքնին յաւելու նոր պարտս ի վերայ
նոր և նորայնոց, որպէս յայտ է ի յայտարարութեանն. « և
պատուաւորս մեզ յարդարեսցէ զայնոսիկ. » ասէ, բայց
յառաւել ինն նախատինս նոցա յօրինէ նա զայնս, որպէս
անուանի անդ . . . ապա յաւելու ի թուղթն յայն և զայս.
« Արդ խորհեցեալ և Ձեր այդր վերացս՝ տալիք գկարծիս
« Ձեր վասն, զի գիտեցեալն օգտակար բանից արար-
« ցուք յօգուտ Մխիթարեանս : »

« Խնդրեալ մեր առ զամենայնի քաղաքավարութիւն
նորա՝ վասն զոյացաք առնել պատասխանի խնդրոյն, յայտ առ-
նելով զդադարման ընդդիմութիւն մեր ընդ միաբանակար առա-
ջարկութեանն Գարատազարին այսպէս.

« Այո՛ լաւագ մեզ ի Թղթոյ Վ.ենէտ, որ առ Վ. Շ. Գ.եառնդ,
« և զպատշաճ պատասխանին Ձեր ընդ այն առ դործակալդ
« ի Հռոմ. այլ չհաւանեցաք մեք առն և չհաւանիմք երբէք
« ընդ առաջարկութեանն Գարատազարին, վասն զի անկրա-
« նելի այդ և միաբանակար մարթանելոյ, չասացեալ թէ
*« ի քանդումն տրէն խորհ . . . ապա յայտ առնեմք մեք

„ սուր ամենեքեան, բազմեմք, զի չընդունիմք մեք զոչ և
„ իցէ առաջարկութիւն, ուրեք և իցէ և յոմանէ և իցէ փաս-
„ տարանէ յիրերաց, առանց յառաջագոյն տեսանելոյ և
„ քննելոյ մեր զայն, ճանաչելով քաջ պարտկամութիւն
„ Քարտուղարին և պատասխանութիւնն զոր ծածկալացն մեր
„ անդ : Ահա այս են կարծիք մեր և կամք ընդ խնդիրս
„ այս : ,,

„ Եւ արդ հարցանեմ ձեզ, թէ կամ այս և այսպիսի պատ-
ճառս վասն մերոյ անտի, և պատասխանոյ մերոյ առի՝
զիա՞րդ կարէք նա զայնպիսի յայտարարութիւն առնել առ
Արքայեան :

„ Յայս ամենայն հայեցեալ վարանութեամբ և ի հանգա-
„ ման նա եւս մեր և ժամանակիս՝ բանադատութեամբ առնել զնդ-
„ բեալ յայտարարութիւնն :,,

„ Ի հանգարանալն նա եւս մեր, ասէ. այսինքն յընդդիմու-
թիւն մեր՝ որ ի միջի չորեցունցս առի, քանզի առ էր և
Շ. Վեհանդ, որ ինձն մեր կարծեան էր, և որ զրով ծանոյց
վեհին զկամս իւր, և նորա իսառուցեալ ամս, չառնել ինչ
յայտարարութիւն առանց յառաջագոյն յղելոյ զայն առ ս
և իմանալոյ զկարծիս սորա ընդ այն . . . ձեզի նա յայն,
առաքէ նախ զյայտարարութիւնն առ արքայեան ի Շոամբ,
ապա յղէ առ մեզ առ ի Փարիզ զգառնեն նորին ի տես
վայն, ի յանդիմանութիւն մեզ և ի նախատինս, և ոչ վասն
այլ ինչ, արհամարհելով զկարծիս մեր խորս : Ահա հնարե-
ցաք քաղաքավարութիւն, վանդամոյն և բնաւորական
վարչութիւն վեհին մերոյ ի վանս :

„ Եթէ չկամիցիմք, ասէք, ածել ի կատարումն զրօթալից
„ գործութիւն բարեչիշատակ Գեր. Ագոնցին մերոյ, թէ
„ Թղթոցքն կործանումն հիցին մեզ անդրանիկ : ,,

„ Հարցանեմ ձեզ արդ, թէ ոչք ածել կամին կործանումն
Միաբանութեանդ : Դարձո՞ցք, թէ Դուք այդր ի Պօլիս և
Առաքեցէք ձեր ի Վենետիկ . . .

„ Ահա արդիւնք գործոցն ցուցանեն զայն . . .

„ Այլ զի միաբանագոյն գոյ, ասէ, գրառոյն,

„ առեալ է պատճառ հակառակորդացն մերոց նորոգ զբր-
„ պարտութեանց, և ի Հռոմէ նորոյ կռակածանաց զՀնդ
„ և զմէնջ, հարկ է Մխիթարեանս օրինակաւ իմն յայտ-
„ նել վերոյն ճշմարտութիւն, և դի չիք ձեր հաճութիւն
„ ի պրուժն. բայց թէ ո՞րպէս, ճառիք լսել և ի Հնդ։ „

„ Եթէ վեհապար գոլով պրուժն Տէր Գրիգորի Խապա-
բաճեան հասեալ ի Մխիթարեանէս առեալ է պատճառս
հակառակորդացն նորոգ զրպարտութեանց, և ի Հռոմ
նորոյ կռակածանաց զՄէնջ և զՀնդ, ապա վեհապար-
դոյն պրուժքն Տէր-Յովհաննու Զօհրապեան, և Տէր Թով-
մասոյ Մաքսուեան, և անանուն Տիխխանցւոյն, և զանազան
Հայ օրագրաց որք եղեն և որք լինին այսուհետև, և որք
ապացեն պատճառս հակառակորդացն նորոգ զրպարտու-
թեանց և ի Հռոմ նորոյ կռակածանաց զՀնդ և զՄէնջ,
թէպէտ և չլինի մեր հաճութիւն ի պրուժան յայնոսիկ,
բայց թէ ո՞րպէս, ճառիքդ լսել և ի մէնջ . . . և այսպէս
չկոյ երկիք վախճան նորոգ զրպարտութեանց և նորոյ կռա-
կածանաց զմէնջ և զՀնդ . . . Ապա ո՞րպէս ասէք, թէ
„ Զի յետ այնորիկ լոյծ վէիս յայտարար արդարութեան
„ ձերոյ և լռութիւն միանգամայն։ „ Տեսանիք զհակառակու-
թիւն բանից ձերոց և զառանց տրամաբանութեան և հետևա-
նաց զրուխիւնդ յամենայնի։ . . .

„ Այլ թէ ասի՞ լցէ այս շփոթութիւն մտաց ձերոց,
յայտ է թէ յեղծանել ակզբանց հիմնադրին ձերոց, որպէս և
յայտնապէս տեսանի Ընդդիմախոսութիւն ձեր առ Զարա-
մատեանն, և ի յայտարարութիւնդ առ Արարատեան . . . և
ապա որոց՝ ոչ միայն Խորենեանն այլ և Երեմեանն արժանի
հանդատունք Մխիթարեանց։ . . . . . .
. 77

ԳԼՈՒԽ ԽԴ.

Հիւանդացեալ ցաւալի զոչխակոչեալն Հ. Սարգսի խոստովանի Տեր. Հիւրընդունի և յանձն առնու զայն. — Յիչեցուցանի նմա Հ. Սարգիս զպատմական պատիւն. — Կարեւոր հաւատոյ խոք ի հաստատութիւն կարծեաց Հ. Սարգսի։

Պատահանի Տեր. Հիւանդէն տեսեալ թղթոյ Հ. Սարգսի, յորում խոստովանի զղէպ գողչակութիւն նորա, և զայն զանձնէ իբրև խնամոյ և արդեամբք ճշմարտեալ. Լսեալ ի զուր անմեղադիր առնել զինքն ընդ կոչ Հ. Գաբրիէլի ի վանս մնոյն անկեալութեամբ, տարակուսի ընդ բռնակալութիւն յայտարարութեան իւրոյ առ Արքունին, առաքէ նմա զյայտարարութիւնս այլ երկու եպիսկոպոսս ընդունել զայն, և արդարացուցանել զինքն յիւրումն յայն. Հանդիպէ զդատաստանական իշխանութիւն Պատնեպոյի, և ինչ խոստովանութիւն որ ի Պօլսոյ, օրինակ զայս.

„ Վաղ իսկ ընկալայ զթուղթ Վերապատուութեանդ, զբեալ յԹ փետրվարի. այլ թէ յապաղեցի՝ չառնէի ինչ կարեւոր ի պատասխանել, և մանաւանդ առ այնպիսի գուշակութիւնդ բռնադ բանիւ առատաձեռնարձ ծերունեոյն, զորոյ զնոյն թէ բանիցն կալեալ առ ի գյաչերդան երկրորդիմ և ըզխոստովանութեան Պղեն ոչ բանիւ և եթ բերանոյ, այլ արդեամբք յանձն իմ ճշդեալով։

„ Մեզադիր լինիք ինձ, զի գՎ. Հ. Գաբրիէլ անարգաբար կոչեցեալ էիմ ի գիմաց համօրէն ասելոյ. եթէ այդպէս է, ապա ասելոյ ոչինչ էիմ յանցաւոր. իսկ անդա-

դարար յայնժամ լինէր, եթէ ոչ յաղթանակեալ վերադառնայր վաճառք։

„ Զգաստասխանին մեր որ առ խնդիր Արքազանին՝ բանիւ Քարտուղարին, տեսեալ և ընթերցեալ նոցէք ցարդ, ընդ որ չգիտեմք թէ զինչ խնդրոյն առնիցէ։ Այժմ յղեմ առ Ձեզ և զերկոսին յայտարարութեանս երկուց եպիսկոպոսացն, Իլարիոյ և Հաւսնէի, զոր ընթերցեալ արասջիք զտեսութիւն ձեր, և զոր կամիքն դուշակեսջիք։ Ջօրութիւն մեծ Քարտուղարին երեւի ի նոսա, որ թէպէտ բամբասեալ՝ սակայն կարգի ի Արքազանէն դառնալ ինքնին վճարել զիրան։

„ Տեացուք արդ զինչ ի Պօլսոյ ելցէ փոխարկի։

„ Ի 18 մարտի. 1853.

„ ԳէմԱԳ Վ. ՀԻՒՄԻՒԶ

„ Արքեպիսկոպոս և ընդ. Արքայ. „

Պառասխանի Հ. Սարգսի առեալ թղթոյ Գեր. Հիւսիւզի, յորում ցաւի նախ ընդ անօգուտ ազդարարութիւնս իւր որ առ նա, զոր և յիշատակէ Թուականաւ, և մեղադրէ զնա ընդ արհամարհութիւնն այնորիկ. ապա որպէս և կատարումն գործակութեան իւրոյ որ զվշտաց նոքին, և յիշատակէ զպատճառան, այլովքն հանդերձ, օրինակ զայս.

„ Արհիապատիւ Գերապայծառ Տէր.

„ Զգաւազին արտիս գրեալն Վ.եհիդ, ի պատասխանի թղթոյ իմոյ գրելոյ յ 9 փետրվարի, ընկալայ ի 19 ամսոյս, որ նախապէս և յառել եաս զգաւազ արտիս, յիշելով զվայրապարն զրութիւնս և զանօգուտ ազդարարութիւնս իմ առ Ձեզ. և վրաւ, քանզի եթէ բանք թղթոյ իմոյ գրելոյ ի 21 նոյեմբերի անցելոյն, ապշեալ էին Ձեզ, ոչ հարկ լինէր ինձ արդեաք երկրորդել անդ „ զաղէտալի գուշակութիւնս բանիւ աստուածաբարձ Մերոյն և զորս խորհնացեալն . . . „

և ոչ նորոգէին այժմ ցաւք սրտի իմոյ. և եթէ բանք թղթոյ իմոյ գրեցելոյ յ 9 փետրվարի, անցելոյն ապրիլ էին Ձեզ, ոչ յաւելուին ցաւք սրտի իմոյ, մանաւանդ յայտարարութեամբ Թեոդիկ ձերով առ Սրբազանն. ապա հարցանելով եւ արդ՝ եթէ

“ զաղէտալի դուշակութեանն Թէլ բանիցն կալեալ առ Ձեզ
“ գյայտնութեան երկրորդէ, և գխարհնեաւն ապրս ոչ բանիւ և եղ
“ բերանոյ, այլ արդեամբք յանձն Ձեր ճշմարտելով ո, ուստ
մեզ լցէ, Վերապայծառ Տէր. ոչ ապաքէն այնմ, որ չափա-
զանց վարկ զանձնէ իւրմէ և զդասակցաց իւրոց և եղ ունի,
խակ զայլոց չափաւոր յոյժ, չասացից Թէ բնաւ խակ, և արհա-
մարհութիւն, . . . և որպէս ազգ ազգի անաչառութեամբ
գհետեւեանն, զուշակելով զորդւոյն հանդուանանս Մխիթա-
ռեանց յորում կայ այսր : . .

“ Մեզադիր լինիք ինձ, ասէք, զի զՀ. Գաբրիէլ
“ անարգարար կոչեցեալ լցեմ ի գլխոց հանօրէն Ռափ-
“ ռա. եթէ այդպէս է, ապա ռափա ոչինչ իցէ յանցա-
” ար :”

“ Այսմ ես առ այս նախ՝ Թէ այո՝ մեղադիր եղէ և լինիմ Ձեզ, զի առնելով առնէք Դուք զամենայն ինչ ըստ կամաց ձերոց, և առ ի չառել տերգի ոսկիք ասել ինչ ընդ այն, ասէք Թէ ի գլխոց հանօրէն ռափայ արարեալ էք զայն. այսպիսի է բարեմասնութիւն ձեր յօրէն ասաց հետէ, զոր և ցա-
յել եմ առաջս գրութեամբս : . .

“ Երկրորդ՝ հարցանեմ ես, Թէ յանցանք ուրուք և ոմանց ոսոխ կարծեցեալ հանաչել. ոչ ապաքէն ի գործոց անտի նոքին և նոցին : “ ի պտղոց իւրեանց ճանաչի : ” Խակ արդ՝ գործք Ձեր, բնդդիմախօսութիւնն առ չարամտեանն, և յայտարարութիւնն առ Սրբազանն ապացուցանեն են, Թէպէտ և Ձանոյդք և Ձանաչք ի գլխոց հանօրէն ռափայ հանարել տալ զայնս. յայտնեալ և բաս այսմ ի կոչել զՀ. Գաբրիէլն, վասն որոյ և մեղադրութիւն իմ Ձեզ, և մանաւանդ առ յայտն ի ձեռ պատահիցէ : . .

“ Խակ անարգարար յայնժամ լինիր, ասէք, եթէ ոչ յայ-
” տանեալ վերապատուդ վարդ :”

«Ասեմ ես, թէ անարգարար կոչել Ձեր զնա ի վանս հաւատոյ և յայտնի էր, զոր զի ամբաստանեալ էր առ ի մեծոցն ի Պօլիս և ի Հռոմ, իբրեւ հակառակ հերձնակաց ընդդիմախոսեալն առ չարամտութեանն, զոր բանից Թղթոյ Հ. Աղեքսանդրի Պէշիքտաշեան, և զոր յորդորելոյ նորա հնազանդել սորա հրամանի և կարգաւորութեանցն որ ի վանից այսր, և իբրեւ կամակատար ի վարդապետութիւն հաւատոյ, զոր բանից գրութեան ձերոյ, թէ «Փանդի և «այլազգ չկարիմ, ասէիք, փութով հանդարտեցուցանել «զՀռոմի, զմերան, և զնոսա մերակոյին ճանկատոյդ տալ «խռովեալ հոգան ընդ որդիս իւրեանց։» Եւ զայսպիսի վերադառնալ սորա փառաց, թէական էր և անյայտ, եթէ առնէր սա հակառակ ինչ յայտարարութիւն, ուրանալով զձշմարտութիւն, առ ի հաճել զկամս մերոցն ի Պօլիս և ի Հռոմ. եւ եթէ զլռեալն սա առնել զայն, չկարէր յաղթաւակեալ վերադառնալ փառօք. ապա անարգարար էր կոչել Ձեր զսա ի վանս, եթէ հաճէր և եթէ չհաճէր զկամս մերոցն. և ապա չգնալով սորա ի վանս և չառնելով այլ յայտարարութիւն, պահեաց զպատիւ իւր և զմիաբանութեան իւրոյ վանականն . . . թէպէտ և զժրաղդութեամբ ոչ ծանաք զոք զայս մինչեւ ցարդ։ . . .

«Զպատասխանեն մեր, ասէք, որ առ խնդիր արդարանին, «բանիւ Քարտուղարին, տեսեալ և ընթերցեալ իցէք ցարդ, «ընդ որ ոչ գիտեմք թէ զինչ խնդրեն ասել։»

«Ասեմ ես առ այս նախ՝ թէ այո՝ տեսեալ և ընթերցեալ մեր զայն՝ առաւել ևս հաստատեցաք ի միտս՝ թէ զամենայն ինչ լսոյս ձերոյ առնէք զուք, և հնարիմոյ քաղաքավարութեամբ վարիք ընդ մեզ յիօթն ամաց հետէ, մտանելն առնելով զբազում մեր, զոր յառաջագոյն արտաքս ընդ այն, և ընդ ելս նորին տարակուսելով, թէ զինչ խնդրեն ասիցեն . . . ասեմ ես ապա, թէ Զամենայնն զոր բազում ինչ ունէ ասել և պահանջել ի Հէնէ, և զուք չկարէք զանազատել ենթ ինչ, զի ստուգ և կամաւոր զերի է զուք նմա յայտարարութեամբն ձերով առ Սրբազանին. Ասեն որոյ պարտիք բա-

զամ ինչ վշտաց և թշուառութեանց ի նմանէ ակնառնել, քան արժանի գործոց ձերոց . . .

„ Այժմ յղեմ առ ձեզ, ասէք, և զերկուսին յայտարարու-
„ թիւն երկուց եպիսկոպոսացն Իլարիոյ և Հաւսէի, զոր
„ ընդերցեալ արասջիք զտեսութիւնս ձեր, և զոր կամիքն
„ դուշակեսջիք : ”

„ Զայտարարութիւնն Ձեր որ առ Սրբատանն ոչ յղեցէք
առ մեզ յառաջագոյն, զոր ընդերցեալ առնէաք զտես-
թիւնս մեր, և յորմէ կարէաք դուշակել բազում ինչ. զայն
յայտարարութիւնն, զոր պարտ էիք յղել առ մեզ պառ, և
զայն զոր մեք իրաւունս ունէաք պահանջել և պահանջեցաք
ի Ձէնջ այսր. այլ դուք ապա զայլ երկուց եպիսկոպոսաց
յղէք առ մեզ յայտարարութիւնս ի տեսութիւն և ի դուշա-
կութիւն, առ ի ծանուցանել մեզ զմեծ զօրութիւն Քարտա-
զարին Պաղեստացւոյ, և ի խնդրատուս առնել զմեզ արդեօք, թէ
չէր Ձեզ մարթ զանազատ նմա զայն յայտարարութիւն ձեր առ
Սրբատանն. ապա թէ ոչ՝ ցրուէր զմիարանութիւնդ :

„ Ընդունայն խնդատուութիւն, և անտէր երկիւղ . . .

„ Զօրութիւն մեծ Քարտուղարին երեւի ի նոսա, ասէք,
„ որ թէպէտ բամբասանաւ՝ սակայն կարդի ի սրբատանէն դա-
„ տաւոր ինքնին վճարել զիրան : ”

„ Այժմ երեւի վնհիլ, թէ զօրութիւն մեծ է Քարտու-
ղարին, կալով ձեր ի Հռոմի առ մի, և հարազատիլ առն բա-
դումս, և գրելով Ձեր առ իւ անտի այսպէս.

„ Քառնապաս որ ի Տարսոնոյ, որպէս ինքնօրէն գործէ
„ զամենայն. ի սուրբ ժողովին՝ ոչ միայն չէ գլուխ, այլ և
„ ոչ առն, զի չանկանէ նմա բան, որպէս ի ժողովի առաջա-
„ կայեցն միոյ՝ Քարտուղարին : ”

„ Տեսանէ՞ք արդ՝ զի չճանաչէիք և չճանաչէք զսա քնա-
զանդաբարութիւնն Հռոմայ, որպէս և յայնժամ ցուցի
ես ի պատասխանիս յայն, թէպէտ և արհամարհեցէք զսա
զբանս բամբասիլ բառ սովորութեան ձերում, կարծեցեալք
խոհեմութեամբ . . . Այլ՝ անձանձրութիւն Ձեր քաղաքա-
վարութեան Հռոմայ ; և արհամարհութիւնդ խորհրդոյս

ապա, են պատճառք ամենայն չարեաց այսոցիկ, նախատանաց, անարգանաց Աստուածեանդ յամենայն ատեանք, և կրծանման նորին, եթէ ոչ արտաքուստ ի ժամուս, այլ ի նեղքուստ յայտնապէս . . .

« Իսկ գործակալութիւնն Հ. Ռափայէլի Թրինց ի Հռոմ, զամենայն ինչ վճարեաց, զպատիւ և զարդիւնան Ռեխտով վանգամանն ազարտեաց . . . ահա հաստատութիւն բանից ճշմարտութեան, մանաւանդ յայտարարութիւնն որ ձեռամբ նորին լինի . . . ասկայն ի վերայ այսր ամենայնի, վարկ մեծ ոսկիք դուք գիտեալ դառակից Քեր գոյով նորա, և մի ի կարծեցեալ սեանց տանէ Մխիթարայ . . . Նորատունկք Բառնապետայ, ուրախ լեալ ետեղեցին Հռոմէայ, զի երկնեաց Աստուածն և ծնաւ զազգ մի ոզջոյն միանգամայն ահա . . .

« Ընդ այնպիսի յայտարարութիւնս, ընդ յետամուտ խոհրդով գրութիւնան ասեմ Մօնսինեօր Իլէրոյի զարմանալի և արդեաք, եթէ անժանօթ էի ակզբանց պաշտօնէից Աստուածոյն և չարաչահութեան նոցին, եթէ չէի ես ընթերցեալ զվահան Հաւատոյ հանդուցեալ Հ. Մխայէլի և հաւանեալ բանից նորին, և եթէ ոչ գիտէի զառակն զայն ոսկիկ, բայց ճշմարիտ, թէ Գայլ զգայեցի միս ոչ ուտէ : Այս վայ միամիտ ոչխարաց, օտար ազգաց հաւատացելոց և մատնելոց ի ձեռս նոցա . . .

« Իսկ ընդ յաղթանակ ընդդիմամարտութեան և փառաւոր վերադարձման Վեր. Հաւատնին ի Պօլիս չարաչարուեալ են երբեք, և մանաւանդ յետ հրամարակելոյ ձեր զԸնդդիմախօսութիւնն առ Զարմանառուն Լորա, որպէս և ակնարկեալ եմ ի թուղթն իմ, գրեալ ի 21 Նոյեմբերի անցելոյն : Ահա առաքեալն իմ ընդ յայտարարութիւնս երկուց եպիսկոպոսաց և գուշակութիւնն որ անտի . . .

« Տեսցուք արդ, ասէք, զինչ ի Պօլսոյ եկեալ վոթորիկ : »

« Այրած արտի քրիս վախրարութիւն. բան ոսկիկ առաձին . . .

« Եթէ քանզուան չարաչար ինչ յահագին իմն վոթորիկ վերիվարութիւն ինչ ևս վտարելոցն անտի, այլ ոչ ևս ձեզ

և այս վիճաբանութիւն արար, զգուշանալն այնորիկ ի ձեզ հանելով Բառնապօի, և մնալուանդ անաչառ դատաւորին, խղճի մասց ձերոց, . . . առանձինդ ձեր գոյն յարգասիոց Ընդդիմախօսութեանդ առ Զարեհաւանեանն, . . . և յայտարարութեան ձերոյ առ Արքունիսն : . . .

« Թէպէտ և ցաւոցս այսոցիկ լիցուք և մեք հաղորդակից ասաի, այլ ունելոք մեք զայս վիճաբանութիւն արար, զի անհաղորդ եմք մեք անպատեհ գործոց ձերոց, ապ առնելով ձեզ զայն յառաջագոյն, և բողբելով ընդ այն ապա, որով ինամ

« Գերապայծառ Տէրութեանդ

« ի Փարիզ. 24 մարտի. 1853.

« խ. ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՒՐԵԱՆ. »

Արժան և ի դէպ համարիմք ի լոյս ածել առաջիկս և զնամակն ուրումն ի վիճաբանեան մերանիցն որ ի Պօլիս, գրեալ առ Հ. Սարգիս ի Փարիզ, որ ունի օրինակ գայս.

« Յարգոյապատիւ Տէր.

« Մեր հետի գալով այսր և ի վանաց՝ չգիտեմք զինչ գործի և յինչ բերին խորհուրդք Մխիթարեանա, առկայն որ ինչ ի լոյս եղեւին յայտարարութեամբք մերոյն՝ յայժ հետի թուեին ինձ ի խոհականութենէ, և քրիստոնէական եղբայրութենէ և ի վիճաբանականն ակրոյ, յորոց ոչ այլ ինչ դուշակ լինիւ, բայց եթէ գայթակղութեան հասարակաց և ընտանի բեկումն Տանս Մխիթարայ :

« Ժամանակ այս է զգաստութեան երիցագունից սիրոք և ասիճանաւ՝ իբրեւ ազատացելոց ի բանտէ և ի վիճապարծ կրից կարելոց, անխառոր յաղթել շահուց զգեակ խնամոյն խոհականութեանն ունել, և զերասերդսն խոսիանել

զանդէպ բերումն ի վեաս հասարակաց : Քանզի որպէս խնամոութիւն համարի զառաջնոցն ժամանակաց դիչատակս արժանի գործս և զիրացն վորձ յանձին դանձել առ ի զարդ խոհականութեանն, նոյնպէս արժան է վիանգամ և յապագայն ուշ առնելով գործել, զի մի նախատինս զանձանց առանձնացուք յետնոց փոխանակ գովելեաց :

« Մարդկօրէն տկարութեամբ ինչ գործել՝ սեպհական է բնութեանս, և կարեկցութեան արժանի առ ի բարւոց. իսկ զվրիպակս պաշտել և ինոսին Հանու լ յառաջադէմ և յաղթող հանդիսանալ ընդդէմ խղճի մոաց՝ այդ չարաց է ցոյց ոգւոյ և կերպարանաց : Ջինչ և կամիցի որ գործել ազատ է ըստ անձնիշխանութեանն, այլ ոչ դատաւոր յետ գործելոյն. զի այլք զմեզ քննեցին և դատեցին զդատաստան. արդ՝ որ ոք վատահ յանձն իցէ՝ ըստ Աստուծոյ, ըստ ուղիղ բանականութեան և ըստ խղճին դատաստանացն ընթանալ, ոչ ըստրջացի ի վախճանին :

« Ի և ժամանակ, մարդիկ և տեղի, յորոց գոլին ուղղութիւնքն, և արժան է՝ են գործել ժամանակ, մարդիկ և տեղի, յորոց գոլին թիւրութիւնք յուղղութիւն համարել, և այսոքիկ զօրաւոր հրապոյրք են մերոյ տկար կամաց. առկայն երանի այնմ առաւ, որ յիւրից վերապրելոյն գոլեացի, զի զուղղութիւն Աստուծոյ ժառանգէ, զնորին զորդեալով զպատկեր, զմերս առաւ զխոհականութիւն :

« Սիրտ իմ ընդ ուղղութեան բանից իսօսի ընդ Յարդոյատաիս Հօրդ, մի՛ նախատիցէք և ընդվայր հարկանիցէք զսէր իմ, զմեծարանութիւն, և զհոգ հարազատութեան մերոյ ծնընդեանս, այլ կատարեալ զիննդիրն իմ (*) առաք ինձ Ջնօք պատճել առ ամենեսեան :

« Արդ՝ կրաւորապէսնիցս յոյս և ակնկալութիւն յետ Աս-

(*) Ծրատ գիզեցիկ, խնդիր կարեւոր առաւնէ ատա, այլ առ՛ղ, զի անօգուտ են և անպատկան, որոց արժան էր ատլ գոյս խրատս, և յորոց պարտ էր խրնդրել գոյս խնդիրս, ոչ գիտէ ժխամիան ... ցառնալ ընդ գոյքատգրութիւնն ժողովրդեան, և չփոթեալ յոյլ ընդ այլոյ կարծեաց խրոցն՝ զրէ գոյս քառդի քնլատրութեամբ ասանց անտի, որատ և ընդունի գործան պատասխանին ... (Ստանթուքիան Հնդկաստանին.)

առաջ խնամոյն ի Զնզ է, և առ ի Զինչ վիճակութեան և վիճակեան ապառնալ մնամբ, որպէս Հայկեմքս եառնդապին պաղատանօք ի պարզեւողէն, մաղթելով երկայն և երջանիկ աւուրս

“ Յարգոյապատիւ Հօրդ

“ Կ. Պոլիս. 25 փետր. 1853

“ Խ. Ծ. և որդի

“ Հ. ՄԵԼԳՈՆ ՄԻՀԻԹԱՆ. ”

Պատահանեն Հ. Սարգսի առեալ թղթոյ Հ. Մելգոնի, յորում խնդրուած առնէ զնա ճշմարտութեան, և հարցանէ ի նմանէ ինչ մի կարեւոր պիտոյ, օրինակ գայս.

“ Պատուական և սիրելեալ Հայր.

“ Զթուղթն Հայրութեանդ, զրկեալն ի 25 փետրուարի անցելոյ, ընկալայ ի 10 մարտիս, և ընթերցեալ զայն՝ արդարեւ առեմ քեզ՝ ոչ կարացի և չկարեմ ցարդ հաւատալ ի միտս իմ որ ինչ մուց բանից դրուիցանդ, թէ զրոյց իցեն որպէսք գանգատանքդ. քանզի յայտարարութիւնք առկոյք իմիտամ ես զայն որ ի Վ. Հ. Գաբրիէլէ ասէր և զայն որ ի ձերոցն ասէր, և թէ ընդէր յայտարարութիւնքս առհասարակ իցեն կամ Բուիցեն քեզ պատճառ գայրագոյնի հատարակաց և գնասուի ընկերական Տանն Միխիթարայ և ոչ ընդդիմախօսութեանն այն իցէ, կամ Բուիցէ քեզ պատճառ գայթակղութեան և այլն, որ հրատարակեցաւ ի վաղուց, վասն որոյ եղեն յայտարարութիւնքս այսոքիկ գանգատանս, այն որ ի Վ. Հ. Գաբրիէլէ ասէր խոհականութեանն և ճշմարտութեանն, առ ի զգաստ առնել զաչս բնաւոցն, և ի պահել զգաստ Ներսես, յայտ առնելով թէ չէն անհնար միաբանիցս հարցել անպատճառ զրուցոյն որ*

նորին, Ընդհանրապետին, և այն որ ի ձեռըն այսր, յանդգնութեամբ և առաքինութեամբ, առ ի վառել սրտիկս զգայր վիպասանութեան, յայտ առնելով թէ հատանութեամբ համօրէն Ազգաս է հրատարակել Ընդհանրութեան այն։

“ Արդ՝ թուի ինձ թէ չես դու խելամուտ զանազան նպատակի այսորիկ, զյայտարարութեան առհասարակ համարիս պատճառ զայթագրութեան Հատարակաց, և կամ թերևս յաւելուլ ի մերոյն այսմ թերագրեալ գրես առ ի զայս թուղթդ. ևան որոյ պարտ է քեզ նախ խելամուտ լինել իրացն հնգմարթեան և առա գրել ինչ, թէպէտ և անտգան և անօգուտ գրութիւնք, զի վճարելով վճարեաց վանքն զամենայն ինչ ձեռակար յայտարարութեանքն իւրով որ առ Սրբազանն ի Հռոմ, և զոր լսելին մերքն այդր և պարծեցին այսուհետև որք չառագոլին զԸնդհանրապետին՝ և ընդ որ արարին դիանգուգն և զառա Յայտարարութիւն իւրեանց այդր։

“ Յառաջ զի չիցես դու ի թիւս նոցա, ունելով յերակս կարմիր զի Հայաստան արիան . . . և ցանկալի զիտել, թէ իցէ և այլ ոմանք ի մերոյն այդր որք չունին ի թիւս նոցա, և թէ քանի՞ և ո՞րք են զվատորքն ի զոսա, Հեղինակք յայտարարութեանդ։

“ Փոխադարձ ծառայութեամբ

“ Մեսրոպ

“ Պատուական Հայրութեանդ

“ Ի Փարիզ. 18 Յունուար. 1853.

“ Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՒՐԵԱՆ. ”

ԳԼՈՒԽ ԽԵ.

Պատուխանի վանականն ժողովոյ առեալ թղթոյ Հ. Գաբրիէլի Ալիազեան. — Անկ ոչինչ պատասխանի Հ. Սարգիս ի պատասխանին թղթոյ Հ. Աղեքսանդրի Պէշիքթաշլեան. — Արտաքսագոչական յայտարարութեան Հ. Գաբրիէլի. — Վճռական կարգադրութեան ընդդիմախօսութեան Գեր. Հիւրմիզի. — Բողոք Հ. Սարգսի ընդ ամենայն վանականութեան Պատրիարքութեան վարմունքին.

Պատուխանին վանական ժողովոյ, ուստեքն էր Գեր. Հիւրմիզդի առեալ թղթոյ Հ. Գաբրիէլի, յորում ոչ պատասխանի թղթոյ նորին, այլ ողջոյնք և պատճառք նմին, և յորում տեսանի յայտնապէս կինք բնաւորութեան Գեր. Հիւրմիզդի, օրինակ զայս.

« Յարգոյ և վերապատուելոյ Հայր.

« Ընկալեալ վանական ժողովոյս զթուղթ Ձեր, գրեալ ի 26 փետրուարի, ի պատասխանի իւրումն թղթոյ գրելոյ ի 17 փետրուարի, ոչ որպէս ակն ունէր եղեալ զայն: Եւ արդ ի քննին առեալ զվերջինս տեսութիւնս Ձեր տայ զայս հակիրճ պատասխանի առ իւրաքանչիւր յօդուած:

« Ա. Զի Վ. Հ. Վեհափայ թէպէտ և լուաւ բան ամենայն հանգամանաց տեսեալ էր զկարեւոր տեղեկութիւնս, բայց և առ Ձեզ գրելով յամենայն նուազս կամէաք և նոս տեղեկացոյն լինել ամենայն պատճառաց Ձերոց բանաւորոյ:

« Բ. Զի թէպէտ և ոչ հաւանելիք թէ ժողովուրդն զայ-

թագեալ էին և խառնեալ ի Ձերոց բանից, ունելով ի ձեռին վաւերականս առ այն, սակայն են և մեր Հաւատոյք առ ձեզն, ոչ ի մերայնոց պրուիեանց, այլ յարտաքնոց՝ որ դհակառակն վկայեն: Բայց դի մի՛ ասիցէք թէ և նոքա ի մերոցն գրգռուիեանէ յայն դանգատս եկեալ էցեն, ահա ապացոյց անժխտելի նորին իսկ Ձմիւռնեական օրագրի բանքն, որ յառաջ քան զմերոցն բողոքական յայտարարուիեան: Իսկ թէ ոմանք ի ժողովրդենէ այլ ազգ ինչ առ Ձեզ գրեալ էցեն, չեն գործք, բայց նոցին բանք չեն բաւական յեղծանել պայծառ բանս և բժշկել դպայթակղելոցն բազում միտս: Այլ որս և ոչ իսկ մեր բանք և յայտարարուիեանք գօրեացեն ինչ, ցարշաւ լռեալ կայցէ գրոյդ բանիս:

« Գ. Բողբաական Թուղթ մերոյն ի դէմս ոչխարս տկար բացատրեալ այն՝ զպղծուիեան նամակիդ, որոյ վասն արտրեալ իսկ են, սակայն ոչ այնու բարձեալ լինին մեղադրուիեանք զՁենէ, որ ազատաս դասի և բամբասի ցարդ բովանդակ մարտնուիեամբս:

« Գ. Բանք մերոյ նամակին պարզ էին, և չունէին պէտս այլեւայլ մեկնուիեանց. սոցեալ էաք « Թէպէտ և եղեալ « են իցեն ոմանք որ ուղիղ զբանդ իմացեալ իցեն, սակայն « և նոքին ընդ անկանոնականուիեան գործոյդ գայթակ- « ղեալ են: »

Եւ չկարէք ասացանել, թէ նեղբինքն կամ արտաքինք ընդ՚ր գնեն և ընդ խոտ գառնատեսս արկանեն զգործս մեր առանձնական: Ո՞չ ապաքէն ոտպիր հրատարակեսմբ նամակիդ իրաւունս եսոք ամենեցուն գառնատես առնել և գնեալ զգրուիեանդ, զպատճառն որոյ վասն բերեալ էք, և թէ ինչ յանդիմացին մեզ բանիդ: Ցետ միանգամ ի գործ ոտոյ նամակիդ, ամենայն որ իշխան է տալ դէպ մեկնուիեան և կամիցի:

« Ե. Ջառագրուիեանն բան որ ի գրի մերում, չկարէր առ այլ ինչ առնել ակնարկուածն, բաց յառաջադիր խնդրոյս գործոյ մեր բանքս էին: Իսկ պահանջանք ժողովոյս ի Ձենէ, որ ի սկզբանէ, նոյն և այժմ է, այս ինքն, բժշկիլ գպայ-

թակղեալ միտս բանիւ միով, զոր թէպէտ ահիմութիւն, թէպէտ յետս-կոչումն կամիցիք անուանել, ի նոյն յանդիման իմաստ :

« Խակ առ վերջին խնդիրդ առեալք, զի չեհաս տակաւին ժամ ի խնդիր լինել մերոյս պատուոյ, կամ յիրերայ պահանջելոյ զհատուցումն չարահամբաւելոյ մերոյ անուան. ապա թէ ոչ՝ մեզ նախ պարտ էր և օրէն պահանջել ի Ձէնջ զհամաբան և զպարտիս, զոր ինքնուրոյն նամակաւ աղաւնեցիք : Գանգի ո՞ երբէք կարէր զմտաւ ածել, զի ամն ի միաբանից մերոց ոչ բանիւք լոկով, այլ և աշխարհաքարող տպատրութեամբ զայդ նախատինս արասցէ, ոչ միոյ ումեք ի մէնջ, այլ ուխտիս համարակատար, և զայն տալով տպագրել նոցին խակ պարտաւորէութեաց մերոյս կրօնի :

« Յայտնի անտակնկալ և ի շարադուշակ դէպս, մարթ է զուշակել թէ յորմէն ամօթ ընդունելոյ էին մերքն ի Պօլիս, և տխրեալ առնել զայդ Յայտարարութիւն առ ի խաղաղել զաղմուկն, որում ընդդէմ բողոքէք արդ, և կամիք զի ժողովս մեր՝ վճռով իւրով որպէս առաւ և անիրաւ դատաստանեացէ զայն, և զանձն իւր : Արասջիք դուք նախ զոր Ձեզն անկանի, զկարեւորն քան զհամբաւ մեր արտաքին, այն է բառնալ զդայթակղութիւնն ի միջոյ, յետ որոյ խորհեսցուք զմերոյս համբաւոյ և պատուոյ : Խակ թէ զորմէնէ մեզնէ բանիցդ պարտ էիցէ առնել, քանզի խակ յայտնի է Ձեզ և առանց խակ մերոյս թելադրութեան : Եաւս է զի էիցէ բաւական ի փառաւոր զառեալ կաւսած նամակիդ :

« Մրտալիր ոչխունիս ցանկամբ ոչ լինել

« Յարգոյ Հայրութեանդ

« Վենետիկ. 23 մարտի. 1853.

« Ն. Ա. ԳԷՄՊ Վ. ՀԻՒՄԱՒԶ

« Աբբահայրապետ և ընդ. Աբբայ. »

(Եւ այլ 15 անձինք որք յառաջին բաղդի.)

Առէ Հ. Գաբրիէլ, ոչ առնէ այլ պատասխանի վերադիշեալ Քրիստոյ ժողովոյն, յուսահատեալ գոնանել անտի միխիթարութեան, երանեան և արդարութեան։

Այլ Հ. Սարգիս չկարէ լռել դանդրատութեան. քանզի առնէ անուշաս քննութեան վերջին բանից նորա, ի պատասխանին իւր որ առ Քուղէն Հ. Ալիքսանդր Պէշիքթաշլեան, և որ ունի այսպէս.

„ *Ահա յետ ամաց միոյ և պատճառաւք յայտնելոյ ես վհէն պատասխանի Քրիստոյ Հ. Գաբրիէլի, երբեք ի դիմաց վանական ժողովոյն, առ ի վաւերացուցանել զայն ըստ առաքելական իրաւ։*

„ *Զանդրատութեան նախընթաց բանից վերադիշեալ պատասխանոյ Քրիստոյ ես քննել առաւ, այլ վերջին միայն բանիցն այնորիկ կամիմ առնել անուշաս քննութեան, քանզի հայեին այնք յարդարութեան և յիրաւունս հատարակաց, և են այսպիսի.*

„ *Ով առ վերջին խնդիրդ ասելիք, դի չեհաս ատեանն*
„ *ժամ ի խնդիր վճռելոյ միոյ պատուոյ, կամ յիրերաց*
„ *պահանջելոյ գհատուցումն չարդահատելոյ միոյ անտառն.*
„ *ապա թէ ոչ՝ մեզ նախ պարտ էր և օրէն պահանջել ի քէնջ*
„ *գհամբառն և զպատիւ զոր ինքնուրոյն նամակատարքդ տարա-*
„ *ծեցիք։*

„ *Ահա սկսեալ կինք բարւոյ վհէին յայտնի բան իւր յայտնապէս տեսանել, զոտզութիւն, նա և ի նուաստութեան անդ իւրում. և ես բան անուշաս քննութեան իմում քննելոյ զայս բան նորա ըմ առ ըմ։ Քննելոյ նախ՝ թէ դիտէր և ոտանի չարդահատեալ իցէ անուն Աթանասիոսի, և ապա թէ ոտանի պարտ էր և օրէն պահանջել գհամբառն և զպատիւ զոր ինքնուրոյն նամակատարքն ունիցի։*

„ *Արդ՝ ո՞չ պարտիմն անդստանէ և վերապարզ ընդդիմութեամբն այն յօրինեալ և հրատարակեալ է ի Վեր. Հերվասէ . . . Թէպէտ և տրիշք նա ապա, և արար յայտա-*

բարեվիճակն ինչ գրչեան, և ապագրեաց զայն հաւանութեամբ վանական ժողովոյն, և յղեաց ի Պոլիս հրատարակել անդ և այլուր, ի բժշկութիւն գայթագղելոց մտաց, այլ շարժեալքն ի վրէց վրէժխնդրութեան Թաքուհեանն զայն, և ազգ առնեն առաջնորդին խրեանց ի վանս չառրջանալ ի վերայ այնր, զի որ ինչ գրեցաւ գրեցաւ յընդհանրութեանն որ առ Ղարամանեան . . .

« Ինկ գինչ արար ընդ այս Հ. Գաբրիել Ալվադեան, յետ ընթեռնլոյ զապագրեալ ընդդիմախոսութիւն, և զարհուրելոյ ընդ անպատեհ և վնասակար բանսն որ ի նմին, և յետ ազգ առնելոյ ի վանս Աբրային չհրատարակել զայն, հանդերձ առանձին գրով ազգարարութեանս իմոյ և բոլորելոյ զի գոնէ անուն հեղինակին գիցի ի ճակատս նորին, որպէս զի մի անուղ բոլոր վիրաւորեանս ազգասցի, և յետ տեսանելոյ տրա զիատրութիւն գաչեակութեան իւրոյ և մերոյ առհասարակ, չարահնարեալոյ անուղ բոլոր վիրաւորեանս յօրագրին Հմիռնոյ, փոխագրա սա գարման տանել չարեացն, պահել զգաստ Համարակս, արար գՅայտարարութիւնն զայն, հաւանութեամբ մերով և խորհրդով խոհական և խնամատեն տն Մոյ Վարդևացւոյ և կարեաւր բարեկամի մերոյ, և զայն՝ յաւելեալ տա մեզ Յայտարարութեանն որ ապա ի վանսդ առաքեցաւ ձեզ այդր :

« — Տեսանել զայն մերոյն ի Պոլիս, ընդունին ամօթով. » վրիպելով ի յուսոյ Վրէժխնդրութեան իւրեանց, և յայտարարութեան ինչ ընդդէմ այնր վտիտ, և ամենեն գրով գՎարդան վրէժիմնդիր լինել նախատանաց իւրեանց անդ, զսաժել գՀ. Գաբրիել, յետ կոչել զսա ի վանս իւրեանց գյանցաւոր, կամաժառ ի վարդապետութիւն հաւատոյ, և գալիապզեցուցիչ ժողովրդեան իւրեանց, զոր գրգռեն ինքեանք, և ամենց Թեսպրին գրել Թուղթ մեղադրութեան առ սա սոսա ի Փարիզ. վասն որոյ կոչեցաւ սա ի վանս, և հրամայեցաւ անդ առնել այլ յայտարարութիւն, որանալ գՀշմարտութիւնն : . . Ո՛չ չարժեցաւ սա խոհագէտ իրովք, և ո՛չ արար այլ յայտարարութիւն, ո՛չ սա անհնարեաց-

Թուխեան (*), այլ առ ի չարալ տեղի անկրաւ պրպտուեցեան և ի չարպարել զխնդիռ մտաց իւրոց։ . . .

« Եւ արդ՝ հարցանեմ ես ցնա, թէ որպ և ուսոյ պարտ է և օրէնս պահանջել զիարքեպն և զպատիւ Մխիթարեանս. ի Հ. Գաբրիէլէ Ալիշանէն որ այսպէս ուղղութեամբ վարեցաւ և ելոյց ինոյ ի ճշմարտութեանն, թէ ի Գեր. Հիւրմիւզէ, որ նախ զանպատիւն և զվնասակար գրուածն այն, զընդդիմախոսութիւնն, հրատարակեաց, և ապա զիարքեր յայտարարեալ զայն արար առ Սրբազանն ի Հռոմ, զոր ինքնին հերքեաց և յետս կոչեաց զընդդիմախոսեալն իւր, և զոր աղաչանաց զիարքեպն և զպատիւ բոլոր Միսիթարեանս. . . Ապա չինայ նմա այսուհետեւ ասել ի դիմաց ժողովոյն, « զի « չեհաւատայիր ժամ ի ինդիր լինելոյ վերոյ պատոյ, կամ « վերոյ պահանջելոյ զհատուցումն չարուհամբաւելոյ վերոյ « անուան. »» քանզի կանխաւ վճարեաց նա ընդ ձեզ զանձինսն, հանձնալի յայտարարելոյ առ Սրբազանն ի Հռոմ. ապա ինոյ ձեզ այսուհետեւ զերծ և կտրած լինել Տաճնապօ և Հռոմէ մինդամենայն. . . և իրաւամբք, ի հատուցումն անպատուի բանիցն որ յընդդիմախոսութեանն, և մանաւանդ յայտարարութեանդ առ Սրբազանն. . . .

« Տեսանէք արդ վրէժինդրիդ պատուոյ ձերում, թէ ո՞ չարհամարհաց զանուն ձեր. ճշմարտասիրս Հ. Գաբրիէլ Ալիշանն, թէ կեղծարարն Գեր. Հիւրմիւզեան (**). . . և

(*) Ասիցեն արդեօք, թէ որ միանգամ ուխտել է զկրաւնաւորական Հնազանդութիւն, պարտ է նմա Հնազանդիլ Աբբային իւրում յամենայնի։

Առեմք, թէ պարտ է նմա նախ Հնազանդիլ Առաւժոյ, ճշմարտութեան և արդարութեան, որ քան Հանուչեանն մտաց և խղճի իւրում. երկրորդ պարտ է նմա Հնազանդիլ քան առհմնաւորութեան կրօնի իւրում, որում պարտ է նախ Աբբային Հնազանդիլ. ապա պահանջել զայն ի հպատակաց իւրոց. եթէ Աբբայն ոչ Հնազանդի առհմնաւորութեան կրօնի իւրում, չկարէ նա պահանջել զՀնազանդութիւն ի հպատակաց իւրոց. իսկ արդ Վեր. Հիւրմիւզ պակասեցաւ յայնմ. որպէս և Հաւատոյ ոչ ցուցաւ, ապա չկարէ նա պահանջել զայն ի հպատակաց իւրոց։

(Առաքաւութիւն Հեղինակին։)

(**) Անկարգաբան, մեծարան նշանակէ։

(Առաքաւութիւն Հեղինակին։)

թէ ոսոխ ևսխ պատ էր և օրէն պահանջել գպատիւն ի Հ. Գաբրիէլէ՝ որ Համառօտ նամակաւ յայտ արար ոտիկն գճշմարտութիւնն, ատ ի պահել գպատիւ Համօրէն ոխոյն իւրոյ, թէ ի Գեր. Աբրայէն, որ ընդդիմախօսութեամբն և յայտարարութեամբ իւրով զրոխանեցաւ Ոխոյն իւր իսկ ոտկեաց և գերի արար ոտխոյ նորին . . .

“ Պանդխտ ի երէց կարէր գնամբ ածել, ատ, զի ոմն ի մի-
“ պանից վիրց ոչ բանիւ լոկով, այլ աշխարհագործ-
“ ատպարութեամբ զայդ նախատինս արարեալ. ոչ միայ ածիք
“ ի մէնջ այլ ոխոխ հատարակաբար, և զայն ատով
“ ատպարել նոցին իսկ պարտատիրոց վիրջս կրօնի: ”

“ Վասի ևս ատ այս, արդարև չկարէաք երէց գնամ
ածել, զի ոմն ի յաջորդաց Մեծին Մխիթարայ, ոչ բանիւ
լոկով, այլ արդեամբ իսկ ձեռամբ զի յօրինել և գայն
ատպարեալ յայդ իւրեամ հրատարակել, և բանքն ար ինձին
ոչ միայն ընդդէմ ակղատանց հիմնադրի կրօնի իւրոյ, այլ և
ընդդէմ իսկ պատուիրանաց սահմանացն, և ինձերոց այլ
յանցանաց և յաւխտնական նախատանաց ոչ միայն զինքն,
այլ և զաւխտ իւր կամի արկանել հատարակաբար . . .

“ Ակ՝ պարտատիրոյ՝ ոչ կրօնին ձերոյ, այլ անպա-
տեհ և վնասակար գործոց ձերոց, որպէս և յայտնի է ի բա-
նից յանդիմանութեան նոցա որ առ աշակերտ Քրիստոսի,
և որ անհնարին նախատինք են ձեզ հայհոյել ի հանդատանս
նոցա և ի հանդատանս ձեր . . . Թողից ասել զպատուիրել
ձերոց յայտնի դէպս, ատով ատպարել նոցին իսկ պարտա-
տիրոց առ ի դատարկացանել զնոսա այլ ևս պարտուել
զձեզ. տեառնէ զպատուական քննութիւն կարծեցեալ իմաս-
նոյն, որով կամի ծանրացուցանել զյանցանս սորա. և Թողից
հարցանել, թէ յայտարարութիւն ձերոցն ի Պօղոս, որոյ
անպարտատիրոց ձերոյդ կրօնի նոքա ատպարել
զայն . . .

“ Յայտնի անանկնալ և ի չարագուշակ դէպս, ատրի է
“ զուշակել, ատ, թէ յայտնի ամօթ բմբռնեալ լինիմ
“ վերայն ի Պօղոս, և ախտալ առնել զայդ յայտարարու-

„ Թխեն առ ի խաղալել զաղմանէին, որում ընդդէմ բողոքէք
„ արդ, և կամիք զի ժողովս մեր՝ վճռով խրով որպէս առա-
„ և անխրատ դատապարտեացէ զայն, և զանձն իւր։ ՚՚

„ Հարցանեմ ես առ այս, եթէ ընդ ոտս հանուցաս և անօրէն բանիւք յայտարարութեան որս յամօթ մեծ ըմբռնեալ էիցեն ձերքն ի Կաստանդնուպոլիս, և ստիպեալ առնել զայն յայտարարութիւնն, ապա յորպիսի ապրանս կալեալ էիցեն նոքա անդ, յորժամ տեսեալ են զընդհանուր և որոշ բանիւք յայտարարութիւնն արարեալ ձեր վանականն ժողովով։ . . .

„ Յայտնի է այն և չկարօտ բնաւ դուշակութեան։ . . .

„ Եւ եթէ զայն յայտարարութիւն ձեր թաքուցին նոքա, որպէս և զերծան ի կարծեցեալ ամօթոյ անտի, ապա յորպիսի ամօթ ըմբռնեցին նոքա անդ, և զանի՞նչ նախատիցին յամենայն ուստեք, յորժամ յայտարարութիւն ձեր առ Արքազանն հրատարակեցի անդ ի Գերապայծառ Շառուենէն, . . . որով յայտնապէս ցեղս կոչէք զընդհանրութիւն ձեր առ Շարամսառանն, և ընդունիք զամենայն զբարպարոսութիւնս որք անդ, յանձն առնուք զանձինս ժողովոյ Մուշողին, և հնազանդիք առնելոյն և միոյ միոյ առնելոցս, կարգաց շրջաբերականաց, և վճռոց արդեն հրատարակելոց և յապագայ հրատարակելոցս։ . . . Զայսոսիկ եւս ևսպէս էր ժողովոյդ յառաջագոյն դուշակել, և ապա հանձայն հաւանիլ զնոյն յայտարարութիւնն որ առ Արքազանն, և որք հնազանդութեամբ զանձն էր ի սմին առարկել, եթէ կային յերակս էր կամիլ ի սպանո ազգասիրութեան և տարերք ինչ սկզբանց հնձանացն ի միս էր։ . . . Այլ առաջ, զի վրիպեցաք ի վայելչութենէ, և ի յառաջն արդեօք։ . . .

„ Եւ կամիք, ասէ, զի ժողովս մեր՝ վճռով խրով որպէս
„ անկաս դատապարտեացէ զայն և զանձն իւր։ ՚՚

„ Վասն եւս առ այս. եթէ չկամի նա դատապարտել զարարս առաջս և զանխրատ յայտարարութիւն նորա, զինչ չունիմք նոքա հաւանութիւն ի նմանի, զոր այն, մանաւանդ

այն ինչ ընկալեալ էին անտի գյայտարարութիւն առջեանց նորա որ ընդ այն, զԸնդդիմախաւսութիւնն, ապա սրտէս կամի նա և բանագատ զաս ուրանալ զճշմարտութիւնն, առ ի հաճել զանիրաւ կամս իւրոյն ի Կոստանդնուպօլիս : . . . Եւ եթէ համարի նա, զի գտառապարտելով իւր գյայտարարութիւնն զայն, գտառապարտ և զանձն իւր խոկ, զանդգ խաւսումանէ նա գյանցանս իւր զհրատարակումն Ընդդիմախաւսութեան, և գչարիսն որք անտի ծագեցան, ապա սրտէս կամի նա զի առ ընդդէմ ճանաչման իւրում և իւղճի մոտց հաւատարել նմա յայն : . . .

“ Արասջիք դուք, ասէ, նախ զոր ձեզն անկանի, զկարե-
“ ւորն քան զհամբառ մեր արտաքին. այն է, բառնալ զգոյ-
“ ութիւնն ի միջոյ, յետ որոյ խորհեցարուք զևիրոյս հար-
“ բառոյ և գաւառոյ : ”

“ Աահա ես առ այս, զի արդ առ նախ զոր անկ էր առնել գյայտարարութեան ձշմարտութեան, զկարեւորն քան զնուաղ համբառ ձեր արտաքին, թէ վիրաւն էք դուք առնութեան նա և յանպատուհան և ի վնասակարն իսկ. այն է, ոչինչ վոյթ ունել զգոյութիւնն փարիսեցի կուրոց. և զի խորհեալ է առ արդէն զապագայ համբառ իւրոյ և գաւառոյ, առնել միշտ բառ գաւառիւրանոց աւետարանին և բառ սկզբանց հիմնադրի կրօնին իւրոյ մեծին Մխիթարայ, թէպէտ և հնար է մարմնով ի վանաց նորա, այլ հոգւով մերձ է նմա. և զի դառն մեծ բացեալ է ամ ողբմութեամբն Աստուծոյ և օգնականութեամբ ազգասիրաց :

“ Վասն եթէ զգրպիսի մեկնութիւն բանիցդ պարտ կայէ առ-
“ նել, ասէ, քանզ իսկ յայտնի է ձեզ և առանց իսկ մերոյ
“ բերութեան : ”

“ Գրէին երբեմն ի վանաց առ առ, թէ շատ էր զի տայր զհատանութիւն իւր նորոգ ինչ յայտարարութեան ի գիմաց իւրոց առնել, հոգայր զայնմանէ միարանութիւն. և այժմ հրաժարին ի բերելոյ անդամ. զինչ արդեօք պատճառն. կարծեմ ես, զի խրատեալ նոցա միանգամ, առեալ ամ զգրիւսկ զկնան յայտարարութեան իւրեանց : . .

„ Եաս է, ասէ, զի լցէ բաւական ի փարատել զառնալ
„ կամակաց նամակիդ : ”

„ Այս ինքն շատ է զի լցէ բաւական, որով կարիցեն
իւրքն ի Պօլիս պարծել առաջի ժողովրդեան, թէ ահա ի վախ-
ճանի խոնարհեցուցին ի կամս իւրեանց զՀ. Գաբրիէլ Այվա-
զեան . . . այլ սա հաստատեալ էր ի մտի և առաւել ևս
այժմ, չառ նոցա զայն մխիթարութիւն յոտիսանն. և իրա-
ւամբք, քանզի ուրացումն լինի այն հնմարտութեանն . . .

„ Ի գէպ խակ համարիմ յիշատակել սստ և զնամաւորինակ
բանս նամակի Վ. ՀՀի մերոյ առ Հ. Գաբրիէլ, գրեալ ի 23 հոկ-
տեմբերի անցելոյն, և համեմատել զայն ընդ բանից յայտա-
րարութեան նորա որ առ Արրապանն արարեալ ի մարտի
ապրելոյս, և որ ունի օրինակ զայս .

„ Չէ պարտ զրկել զՀ. ասէ, այլ ի տախտել հարկին
„ ոչզևոբեաւք առնել նմա զիրաւունս մեր. Հակառակելով նմա
„ յայլմէ ոչ կարելք, զի նա հզօրագոյն յոյժ քան զմեզ է,
„ և մեք հռոմէականաց զօրութեան զմեք կարօտ, և նոքա
„ յոչնչել է մեզ ցարդ ընդդէմ այնչափ զոս և կառոյզ
„ ջնջեալ զոս : ” Տեսուք ապա և զրանս յայտարա-
րութեան նորա առ արրապանն : „ Ամենայն անգամք Մխի-
„ թարեանց վիճակիլ մարտն հոգալ
„ առհասարակ, խոնարհութեամբ մատուցանել առ գահ
„ Արքեպիսկոպոսի, բացայայտ և ինքնայօժար ցայտարարե-
„ լիւն : ”

„ Հարցանեմ ես այժմ, թէ զիարդ համաձայնիցին ընդ մի-
մեանս այսոքիկ բանք նորին՝ „ այլ ի տախտել հարկին ոչ-
„ ևոբեամբ առնել նմա զիրաւունս մեր ”, ընդ ինքնայօժար
յայտարարութիւնն : . . . Թողից առնել զայսմանէ առաջինն
որ ի յայտարարութեան անդ, թէ „ ամենայն անգամք մի-
թարեանց վիճակիլ ”, կիսով չափ միայն
զառանելով ի վանս և հաղորդ զոլով այնմ, և մեք չորե-
ցուցից առ յայս առնելով նախ ընդդէմ առաջարկութեան
հառնապօլ, և ապա բաղդելով ընդդէմ արարեալ յայտա-
րարութեանն որ առ Արրապանն :

„ Ոչ մերժեմք, ասէ, զհպատակելն առ ուրախ և ի այցե-
„ լութեան Առաքելական Նունցին, կամ որոյ և ի այլոյ ար-
„ ատաքոյ կարգի իշխանութեան, զոր կամք իցեն յառելու
„ յիշխանութիւն տեղական եպիսկոպոսաց։ »» Հանճայնե-
ցին այսպիսի բանք ընդ բանից իւրոց ոչք ի նամանլին, թէ
„ Այլ ի ասելն հարկին ուժգնութեամբ առել նմա զիրա-
„ ւունս մեր։ »» կամ ընդ բանից կամակի բարերարին ազգիս,
և կամ ընդ նպատակի վատահատորացն յայն։ . . .

„ Տեսանէք արդ, թէ զիարդ ճշմարտացաւ և արդեամբք
իսկ կատարեցաւ ասացեալն քմ երթեալ, թէ կամեցաւ և Ջա-
նազ Վէհն մեր զոհել Փառացեալն զՄ. վարժարանն առ
ի հաճոյ լինել նմա և ի վերժ խնդրել յատեաց իւրոց։ Ահա
ազգասիրութիւն նորա, և արդիւնք Ընդհանրասուրբեանն ար
առ Ջարտեառնեանն։ . . .

„ Ազգայի վճռակ վարուցութեան։ . . .

„ Եւ արդ զինչ պատճառ և արժան էցէ ինձ առնել, Հայե-
ցեալ յեղծումն սկզբանց կրթեալ վարուցութեան, յորում-
առնի վաստակոց հարց և եղբարց մերոց և ի վառանգ կրթա-
ութեան իրեանց աղգասացս ազգիս հայոց։ Ո՞չ արդեն պարտ
և արժան է ինձ զայն առնել, զոր խիզճ մտացս չկարէ լսել,
զոր պատիւ անձինս պահանջէ, զոր սէր ազգիս ասիպէ, և
արգարութիւն բռնագատէ, և զոր յիշատակ երեսուն և վեց
ամաց վաստակոցս չկարէ երբէք մոռանալ. այս է, յորժամ
վէր զատացուածս Մ. վարժարանին, անցուցանել սալ իմոր-
հակս անդ ատացուածոց նորա զանուն ժառանգաց բարե-
բարին քան զայլանցն որ ի վէր իմ և նոցա, և զոր հատա-
ուածոց հանօրէն վարուցութեանս ատրուգրութեամբ իւրով,
և քան պահանջմանն Յովհաննու Մանուկ, որպէս զի չկարիցէ
վարուցութեան օտարացուցանել զայն, և կարգել սալ
ի կալանել ժառանգաց բարերարին իմոյ վարժարանին,
որպէս զի անուչատութեամբ ինքն ընտրութեան հանդանց զբա-
րոցին, և արդարութեամբ վատահատորութեան նորին, վայե-
լեալ հանօրէն ազգիս զիրաւունս իւր, քան զիրաւունս
բարերարին, զինեալ ճիշդ զէզ և ճատ վարժարանին, և

պաշտպանելով զյաւաջադիմութիւն և զբարեաւճութիւն նորին ի խաղաղութեան և ի վերակացութեան ...

« Այժմ՝ զայսոսիկ պարտ և արժան է ինձ առնել ի կենդանութեան իմում, և թողուլ արշալոյս հնարաւոր իցէ. այս է, ծանուցանել Յովհաննու Մաւրուտ, ժառանգի և կառավարի Բարերդին, թէ

« Զանազ ութ և տասն, յորմէ հետէ զրկաց և ի Մաւրու« ս է, արարի զամենայն կարեաւր Ջանս իմ ի պահպանել զի« բաւեն ազգաւդ ազգիս, և ի կատարել զիւրն հանգու« ցեալ Բարերդին: Թէպէտ և ազգ արարի ես և բազկեցի« բաղում անգամ ընդ անաւղութիւն մաւտակարարութեան« վարժարանիս, այլ չեղեւ լսելի այն զանազան պատճառա« նըդ, և համբերեցի ցարդ՝ յուսալով ուղղութեան արին,

« Այլ արդ՝ ծանուցանեմ քեզ ցաւրք սրտի զի տասնի յոյս« իմ խափան, տեսանելով զխոխոտութիւն սկզբանց միարա« նութեան, վասն որոյ երկնչիմ ես ընդ յապահովութիւն« և ընդ միջանձնաւթիւն բարեաց հօր քո, վասն որոյ« պարտ է քեզ պահանջել ի միարանութենէս՝ նախ մուծանել« ի մուրհակն կարաւծոց զպրոցին և զանուն քո, ըստ պայ« մանին դաշնագրի մերոյ, հաստատելոյ և տպագրելոյ ի միա« բանից, որպէս զի չկարիցէ միարանութիւնս ստորագրեալ« նել զատացուածս զպրոցին, վաճառել կամ ընդ իշխանու« թեամբ տալ զրաւել նորա ազգաւն մանկանց ազգիս ա« հաւրակ տանց խարեբեան: »

« Ահա զայսոսիկ պարտիմ ես ծանուցանել Յովհաննու Մաւրուտ և օգնել նմա ըստ կարի իմում, վասն բարեաց հա« տարակ ազգիս, և վասն հաստատութեան միարանութեանս, եթէ ճանաչէ նա զայն միայնակ գործան սխալանաց իւրոց տրտնջից ի յայտարարութեան որ առ Արքազանն ի Հռոմ,

և եթէ արհամարհիցէ նա զայն՝ քաւեալ եմ ես յամենայնէ։ Ապա պատրաստ լինի միաբանութիւնս տալ պատասխանի Յովհաննու Մուրատի։ Եթէ հակառակիցի նմա, գիտէ նա յոր առնանն պարտ է բողոքել և պինչ համար ի նմանէ պահանջել։ Պահանջեցէ նա ի միաբանութենէս հարիւր միլիոն Ֆրանք ելամուտք քան ամաց որ ի կալուածոց դպրոցի հօր իւրոյ, որ ծախեալ են վասն քառասուն եւեթ մանկանց և կարծեցեալ ազքատ մանկանց և ի Պօլսոյ միայն, և այն վասն թէպարհատար ուսանող նորա ի Պատուհն, և վասն երեսուն և եթ մանկանց, նոյնպէս կարծեցեալ ազքատ մանկանց և ի Պօլսոյ միայն, վասն չափաւոր ուսանող նորին ի Փարիզ. և հատուցութիւն այսմ ահա վկայութիւն ի բանից Թղթոյ դործակալի կալուածոց դպրոցին, որ յորդորեալ յարդարութենէն. գրէ առ ի յայսմէս.

„ Վերապատուելի Հ. Սարկուեին յետ չարից ամաց հարկ
„ եմ կարաց ցուցանել մեզ մանրամասնաբար գնելդ հաշիւն,
„ եմ վասն քան և հինդ մանկանց ուրեկան ծախք են երե-
„ սուն և երիք հազար Ֆրանք։ Ասի կարող էք ի միտ առ-
„ նուլ, եմ միանչ քառասուն էին մանկունք ի վարժարանիդ,
„ ոչ բաւէին ծախք վարժարանին հարիւր և սուն հազար
„ Ֆրանք. վասն որոյ յայն ատենս դադարեալ է հոգի
„ իմ, միանչեւ համարիմ փոքրագոյնն ի չարեաց զնոհ իմ.
„ քանզի ոչ կարեմ տեսանել անտարբեր աչօք զանհուն ծա-
„ խըս դրամոց որդոց և աղքատաց, և գչնչին արդիւնս որ
„ անտի. նոյնպէս անտանելի է ինձ և վատանեութիւն որ
„ յառաջ գայ ի մատակարարութենէ միոյմէ։

„ Ն. Ծ. Հ. ԵՍԱՅԻ ՄՂՐՈՒԵԱՆ. ”

„ Եւ այլ համար պահանջիցէ Յովհաննէս Մուրատ ի Մխա-
թարեանէս. յայնժամ տեսցէ Վեհն մեր, եմ ի չարեացն զնոհ իմ
ասուի գինչ բարի երեսիցի, և թէ ո՞չ իսկոյն երեսիցի։...
Ասկայն գինչ և ի խնդրոյ ասուի յառաջ գայցէ ի մխիթարե-
եանն և ի պարծանս ինձ լինելոյ, գի գերծայց ես ի խղճէ մե-

*տացս, առնելով իմ զվերջին ճիգս ի պաշտպանութիւն իրա-
ւանց ազգաւոյ ազգիս, և ի պարծանս ինձ, ընթեռնուլ
պատմութիւն վարժարանիս, և իմանալով թէ քանի տառա-
պանօք և ոգւով չափ աշխատութեամբ և հակառակութեամբ
իսկ միաբանութեան ի ձեռս բերեալ ունէ այս արժանի դպրո-
ցին, առն միոյ Բազիշեցւոյ որ ի միաբանից անտի, . . . և
ոչափէս ի կիր առին զայն պանծացեալքն յանձինս քառասուն
արք Գօլանցիք ի միաբանից անտի, որպէս և խոհական և խո-
նարհ այրն այն Սերաստացին, որ յօդուտ և ի փառս ազգին
իւրոյ հաստատեաց երբեմն ի Վենետիկ ի վանս սրբոյն Ղազա-
րու զմիաբանութիւն իւր, և այժմ յաջորդ նորա ինքնա-
հաճ և գոռող Գօլանցին ի միտս և ի նախատինս դարձոյց
զայն . . .*

*« Գիտեմ զի ասիցեն ոմանք թէ խնամ և յանդուգն են
բանքս առ Աբրոյն միաբանութեանդ . առ որս երկրորդեմ
ես զերբեմն ասացեալս որ ի պատասխանին Գրիգոր Հայր
Սամուէլի, թէ . Սկզբամբք են սէր և յարգանք իմ առ Աբ-
« բոյն . սիրեմ և յարգեմ զնա, զի զլուխ է նա միաբանու-
« թեան, բարերարին ազգիս . ի պահանջ նորա յայն, պա-
« տասխանին սէր և յարգանք իմ առ նա : Այս մի համարիցին
խնամ և յանդուգն բանքս իմ, հայեցեալ ի սկզբունս իմ (*).
և մի թերեւս ինչ Բազիցին երեսուն և վեց ամաց կեանքս ան-
ցուցեալք բազում վշոք և տառապանք ի գործ մի, որում
ապա չգտանիցի ինչ միխիթարութիւն, այլ յաւէտ միայն և
տրտմութիւն . . .*

*« Ահա դանուցի ձեզ՝ թէ զինչ են սիրելին սպասիկս քոյ
խղճի մտացս և քոյ պատուոյ, և քոյ վաստակոցս, հայեցեալ
ի յապահովութիւն և իմշանչնաւորութիւն բարեաց Բարերա-*

(*) Ասիցեն արդեօք թէ հակառակութիւն սկզբանց Հ. Սարգսի տեսանէք տառա-
նս, տագտանիլով նորա զՀ. Արսէն ընդ նախատականն բանիւն որ գինէր. Հատուածէն
զպատուելոյ ի Հոգեմաշ Գահէն, և ինքն զինոյն առնէ գինր. Հիւրմիւզի. պատուհասոյ
նոյնպէս անտի . . . Ասեմք նախ՝ թէ չիք համեմատութիւն ընդ նախատական
բանս սորա և նորա . երկրորդ՝ սա պատճառն որ ի Հոգեմաշ Գահէն ոչինչ հաստատ.
խակ նա հաստատ ինչ, և ոչ բաս այնմ վարի. վասն որոյ և բառապատանաց պիժանի.
(Տառօթութիւն Հրատարակչին.)

բին ազգս որ վասն գպրոցին որք և ազբատ մանկանց ազգին Հայոց առհասարակ ։ »

Զայս ամենայն անաչառ բննութիւն որ գրանից Թղթոյ ժողովոյ, մանաւանդ Գեր. Հերմիւզի, և գկարեւոր ազգասիրութիւն որ գիրատուց ազգին առնէ Հ. Սարգիս ի պատասխանին Թղթոյ Հ. Ալեքսանդրի, և առաքէ գայն ի վանս ընթեռնուլ նախ միաբանութեան, ապա առաքել առ Հ. Ալեքսանդր ի Պօլիս. և զայս միշտակեցեալք մեք առ վասն կարդի բանից պատմութեանս, հայեցեալ ի թուղթն ժողովոյ ։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Թուղթ Հ. Ալեքսանդրի առ Հ. Սարգիս վասն բանի յայտարարութեան Հ. Գաբրիէլի, և ազգասիրութեան գթութենէն աչակերտաց Մուրատեան վարժարանին. — Անուշա պատասխանի Հ. Սարգսի առեալ բանից թղթոյ Հ. Ալեքսանդրի. — Թուղթ Հ. Սարգսի առ Գեր. Հերմիզ, վասն բանի թղթոյ Հ. Ալեքսանդրի.

Թուղթ Հ. Ալեքսանդրի առ Հ. Սարգիս, յորում չնորհակալէ նմա զծնունդ վրկչին մերոյ և զնոր տարին. ծանուցանէ գեղկելի վիճակ խրեանց անդ ի Պօլիս պատճառաւ յայտարարութեան Հ. Գաբրիէլի որ յԱրշաւսին, և աղաչէ զՀայր Սարգիս, յորդորել զնա յետս կոչել գյայտարարութեանն զոր հանդերձ աղաւթարութեամբ գրատարակութեանէ աչակերտաց Մուրատեան վարժարանին, և գոհութեամբ առ Հ. Սարգիս ընդ արդիւնս վաստակոց նորա ի վարժարանին, օրինակ զայս.

„ Վերադառնալոյ Տեառն սիրելոյ Հօր Սրբոյն վարդապետի ողջոյն կարօտագին .

„ Յորմէ հետէ ընկալայ զպատասխանի Վերադառնալոյ թեանդ զրելոյն ինձ ի ձեռն եղբօրորդւոյս Պօղոսի , զոր յանձնեալ միանգամ հայրախնամ հոգոյ Վերադառնալ թեանդ վառած եմ թէ խնամեալք գնա և փոյթ առեալք յառաջադիմութեան նորա իբր որդւոյ հարազատի :

„ Նախևմարթեմք Յորդոյ Վերադառնալութեանդ զաւուրս բարօրութեան յերջանիկ առեր ոտնից ծննդեան փրկչին մերոյ և. նորոյ տարւոյն , և ընդդրկեալ ի հետեւս իբր ի մօտոյ յիշելով զաւուրն զանցեալս յանկեղծ խնդութեան , խնդրեմ ի մանկացելոյն գնոյն ուրախութիւն արժի հանապազորդել մեզ օրով երթեին հրճուեալ բերկրէտք ի սէր եղբայրական ի ծոյլ հատրակաց Աօրս մերոյ :

„ Երանի էր մեզ եթէ միշտ ինոյն ուրախութեան կացեալ հանապազորդէաք , և գնոյն արդ ի գրի ընդ միմեանս հաղորդէաք :

„ Այլ բարեաւտաց առաւնոյ նախանձեալ ի մեզ՝ խոտանդ հնարեաք ի վեր և ի վայր տարալեաց գիտացութիւն մեր :

„ Ա՛հ , սիրելեալ Հայր , եթէ տեսանէիր արդ միանգամ գիւղակ մեր գեղեցիկ և ի սմօքով ակնկարեալ ընթերցմամբ Աարշալուսին գնամբ Վ. Հ. Ալվազեանի հանդուստ ընդդիմախօսութեան հրամարակելոյ ի վաճառ , և գ'ի նմանէ ծաղեալ զաղմանէն և զանարգանս բարեկամաց մերոց , և զբնածոխութիւն թշնամեաց , արդարև ի գութ շարժեալ և ի կարեկցութիւն և գու ընդ մեզ թախիծ զարմանայր :

„ Սիրեր խոտանեալ ի թշնամեաց , այն ինչ հանեալ ի գերեզման անկաք վերստին : Մեհեալք յամս մերկայոյզ և հալիս վերծեալք ի յանկոյճ նուաճանգիտ մերձ կամք յենկղմել յանդունդս : Վառակեալ ընդ երկայն ժամանակ ի մաքրել զիւրեանս խոտանեալ՝ և այն ինչ պատրաստք ի վախելի ի գաղոյ այդեան , յանկարծ եղաք կարկառեալ :

“ Եկին հասին իմերայ մեր ամենայն չարիք և վայք միանդամայն ի խնդութիւն թշնամեաց, որք իբր զրօշ յաղթութեան սիրեալք ի ձեռին պիտանալից օրագիրն զայն առեալ ինքեանց զմօտալուտ կործանումն մեր, ասելով թէ ահա պատառեցան ծածկոյթք կեղծաւորացն այնոցիկ. և մանաւանդ խնդային ընդ բանն նամակին որ ասէր, թէ “ Ես միանակ չեմ ախտաս- “ ցող Միաբանութեանդ մէջ առ գրքին հրատարակմանը. ”
և մուծանէին յաչս մերակողմանց գռչելով.

“ Կէօրսիւնի՞զ մի սէյնասիղինիզ Աբրալըարը. հերեսիկնա “ մոռ տուրար, սէյլիլէր մի. Հայտար ըա պիր մի սէյլէր, “ իչտէ իապար. ծնար Հայ սըր, հերեսիկտօղրու պրաք “ մաղար, ” և այլն և այլն :

“ Եւ ահա ընդ բանս սորա և ընդ արհամարհանս, և ընդ- թերցեալ կրկին և կրկին զնամակն մահահրաւէր բարեկամք մեր և զբարեկրն անճառն, բարկացեալք, զայրացեալք, այլ յայլմէ եղեալք, ամօթապարտք և կորզուխք, ակռան վռնձ և զխիճ ի գրուանս բնակարանաց մերոց, ունն յայս կոյս և ունն յայլ կոյս խնդրել և հարցանել. “ Ա՛ս ինչ խնթա- “ թիւն է, աս ինչ ոսոխթատրզութիւն է. սո՞ւ է եղեր Հայր “ Գաբրիէլին խնդացութիւնը որ կըսէիք. անիկայ ձեզի թըշ- “ նամի է եղեր ու չէք ճանչցեր. սո՞ւ ինչ էր որ ըրաւ, զձեզ “ և զձեզ միանգամայն խայտառակեց. ” և այլ այսպիսի անբան բանք թշնամանաց ի բամանայէ և յաչխարհակալանաց, առ որս չգոյր մեզ այլ պատասխանի, եթէ ոչ զրկոմ հեղինակ- նոք թէ “ Սատանան եռեւեռս ընկեր է որ կործանէ զմեզ : ”

“ Եւ զայդ այնչափ երկոց և վտանգաց զոր նախնիք մեր և մեք վտանգեցաք ի փայլուն անուան Միաբանութեանս. այլ մի թէ այդ էր պատճառ խնամութեան նորա, որ պինդն և զմեզ միանգամայն էառ ի ծաղրանս և յայդն կատականաց : Սակայն զա “ զՄատխարութիւնն կրեցաք, և կրենաբրե- “ թեան ոչ նմանեցաք. և ի տառապութիւն բանիցս՝ ընթերցեալս զպատճառս քաղաքին զորս ահա ծրարեալ ի գրիս, և տացես ինձ իրաւունս :

“ Եւ օգուտ պիտի չլինի ասելիքներս. միթէ ինձն

էր պատասխանատու հերձուածոցդ վասն մեր, կամ թէ ինքն էր երաշխաւոր բարեաց Միաբանութեանս. ո՛ր ոք դրդեաց զնա յայս գործ եպերելի յաչս իմաստնոց և ոտիոտից, յորմէ ոչ այլ ինչ ժողովեցաք, բայց զվնաս անուան անձին իւրոյ և Միաբանութեանս գլխովին:

«Գուշեցէն բազումք, եթէ Հ. Գաբրիել հակառակու- թեամբ գոլով ընդ Հօրն Ագաթեն, դոյս օրինակ թշնամանեալ է զնա. այլ ես ասեմ, մինչ զվրէժ մոյ ուրուք յեղբարցն պարտ էր լուծանել ի մօրէն իւրմէ որ ծնաւն զնա, որ սնոյց զնա, որ մեծացոյցն զնա և փառաւոր արար: Զգիտէ՞ր թէ և մեք Հայք եմք, այլ չեմք հակառակ օրթոյ ժողովոյն Քաղ- կեդոնի: Ո՞չ յիշեաց զոր ուսաւն թէ մեք զՀոգին սուրբ ի հօրէ և Որդւոյ զաւանիմք, և ոչ իրրու զայժմու Հայս ի Հօրէ միայն:

«Ընդէ՞ր ոչ ի միտ եած զի զկայանն չընկալեալ մեր լսոո Հայոց՝ զհաստատակաց բնակարանն վանեցանելոց մինչև ցվեր- ջին զատուսան, և փոխանակ ընդունելիք զքուարան մեզաց և զդատաստան առանձնական: Ո՞ զոր յուղարկաւացս մերձ ի վանեցանել ոչ խնդրեցէք զվերջին օծումն շնորհարեր, որ ոչ պաշտի ի Հայոց: Վասնզի՞ս ո՞չ գիտէր, թէ մեք ի գլուխ կաթուղիկէ եկեղեցւոյ և մերոյ գաւանութեանս ունիմք զմեծ քահանայապետն Հռոմայ, գյաջորդն Պետրոսի, և զփո- խանորդն Քրիստոսի, զորմէ կախեալք կամակար լսոո ամե- նայն բանի որ հայի ի վերուվիճն հոգւոյ և ի հանդերձելոյ կենացն (*):

«Եւ ընդէ՞ր էր ապա հակառակիլ ընդդիմախոսութեանն

(*) Հ. Գաբրիել, և ամենայն ոգեաժիտ Հարք Միխիթարեան ճանաչէին և ճա- նաչեն մինչ զքահանայապետն Հռոմայ իբրև զյաջորդ առաքելոյն Պետրոսի, որպէս զքահանայապետս այլ քաղաքաց իբրև զյաջորդս այլ առաքելոց: Իսկ կամակար կախել զՊապէն Հռոմայ, Հ. Ագեքսանդրի և զառակցաց նորին մեր- ձին պատկանի, և այն ոչ ի վերուվիճն և ի հանդերձեալ կենաց Հայի, այլ ի վերջի- նըդրութիւն յառաքելոց իւրեանց, և ի պատուասիրութիւն առաքելական կենաց. և ա- պացոյց այսմ, ահա Ջարմանաւանեանն և ընդդիմախոսութիւնն: Թողումք ասել առ զհակառակութիւնն ի քանից և մեռաց Հ. Ագեքսանդրի որ ի քուղքն էր, և պրմէ առանցու ք ապա:

(Առնթութիւն Հետինակին.)

հրատարակել, և արհամարհանք զոյն լրատուին ոտք շաղակրատանաց խուռնակուռուտ լրագրոյն : Մինչ չտեսաք և մեք ի գրքոյկն յոյն զոպի բանաստեղծական գրոցին և լեզու անաւոր հեղնական . այլ պինչ վնաս մեզ այսի , մինչ այնու ոչ հերքեցան գրպարտութիւնք Զարմանաւնին թէ չեմք հերետիկոսք (*), չեմք երբէք հաղորդեալք ընդ հերձուածոց : Եւ մինչ անգիտանային Հայք թէ բաժանեալ եմք ի նոցանէ . ապա թէ ոչ՝ ընդէր էր նոցա հալածել զմեզ քան և հինգ ամաք յառաջ , զոր և այժմ խակ առնէին դժնդակագոյնս , թէ զոյր նոցա իշխանութիւն ի ձեռին, բարբարոսքն այնոքիկ, արքայատանքն , ապերախտքն առ Աստր Լուսաւորչին մեր , ապանողք սիրասուն որդւոց նորա և թոռանց , որք իբրեւ զդպիրս սիրասանս զարդարեն և պարծին ի շէրմ հարց խրեանց :

« Մեք եւս Հայ եմք , այլ ուղղափառ Հայք և ուղղափառան քան Հարցն մերոց արեաց : Հայք եմք , այլ հպատակ ընդհանուր գլխոյն Եկեղեցւոյ Արքային Պաղեն Հռոմայ և հնազանդ հրամանաց նորա ամենայն լրոք և յամենայն իշխանի հաւատոյ և ի կարգաւորութիւնս Եկեղեցւոյ . ուրեմն գի՞նչ է մեզ թէ դուք հերետիկոսք , այլ և այնու առաւել եւս հաստատեցան այնք . և ապացոյցք այսմ , անա նախ՝ տհաճութիւն Հռոմայ ընդ Ընդդիմախոսութիւն ձեր , և հրամանն ի չհրատարակել զայն , և ապա նուաճել զձեզ խոպան ընդ ձեռամբ Հասուներն . . . և անա արդասիք որ յԸնդդիմախոսութենէն ձերոյ : . . Կարծէք թէ թէ արդարութիւն Հաւատոյդ ձեր զարժանն , ընդ անիրաւ գրպարտութիւնն որ պատճէս Հայոց : . . .

(Առնախութիւն Հետեւակին :)

ելին յողջոյն այցելութեան. իսկ յայս նուագ ցայն վայր տեւեալ պատմութիւն նոցա, մինչեւ ելցէ տերաման ի լոյս լիուլ պատասխանի ամենայն լրագրոց վիանդամանն և ուժգնագոյն չարչարութեան նոցա։

« Ոչինչ չէր պարտ խնամոյն Հ. Գաբրիէլի շտապել և երագել և գործել զոր ոչն վայել էր, և այնպէս անձնատուր լինել յամօթ Միսթանութեան և ի կիզոր անուան նորա, զոր ոչինչ օգտեալ ի զինջանել պատմութեան նոցա և յաւել եւս ի վերոյ իւր հաստատութիւն կեղծաւորութեան իւրոյ արդարոյն պատճառաբանութեամբ. վասն որոյ թէ և մեզ մի միայն է ճանապարհ վախչելոյ ի վտանգէս յայտարարութեամբ (*), սակայն և անձնական իմաստք լրագրոյ քաղաքիս ընդ այն որ ի Զմիւռնիայ, ձեռն տուեալ մեզ թե բեւս յակառակս, զոր լինչ հանդարտութեամբ զվրդովեալ սիրտ կուսակցաց մերոց։

« Այլ մեր անհանգիստ են միտք մինչեւ լսելոցն լինչ ի Հռոմէ, եթէ ո՞րպէս նորա դատեսցին զնոսն (*) ։ Մի հանա-

(*) *Այլ զուք իմաստնագոյնքդ յառաջ քան զնա փութացարք պանդտեհն և պանիրատն գործել, ի զեղծումն սկզբանց Միսիթարայ, և յեղծումն արդեանց վաստակոց աշակերտաց նորա։*

(Ստանթուքիէն Հերինակին։)

(**) *Աճապարեաց նա յայտարարութեամբ իւրով ի պահել զպատիւ հաստատուցց, փութացարք զուք յայտարարութեամբ ձերով յայտարարել զանուն բոլոր միաբանութեան, իբրեւ հաւան և հաղորդ գործոյ ձերոյ, յառաջով այնու փախչիլ ի վտանգէն, քնկիա ի դիրեւս ել յոյս ձեր։ « Որ յառաջ մեղանչէ անյոյս « կորնչի։ »*

(Ստանթուքիէն Հերինակին։)

(***) *Լսելոց եք փութով զսովորական գատաստանն ի Գանկն Հռոմէայ, և ընդունելոց եք անչուշտ գործան ջնջման ի քահանայապետէն նորա, բան կամեսցաք կախելոցդ գնահատել։ . . .*

« Կամաւոր կուրացելոյն չիք բժշկութիւն։ »

(Ստանթուքիէն Հերինակին։)

(****) *Քնկիա ու. Հայք ոչ հաւատացին զձեզ հաղորդ ինքեանց, տեսանելով պանծիա խորհուրդն ձեր ի հաստատուցս, սակայն ոչ կարծէին թէ յոյն ատելեաց անբրտութեան հաստանիլոց էք, կոչելով գնոսա հերետիկոս, բնդդէմ ճանաչմանն և խոստմանն ձերոց։*

(Ստանթուքիէն Հերինակին։)

լիք եմէ Հայք հաւատային զմեզ հաղորդս ինքեանց, և արդ պահանջեն ծանուցեալ ցառնան. քանզի ես յորմէ հետէ ելեալ եմ այսր, իբրեւ նուագս տեսանելով ընդ քահանայս և ընդ դպիրս և ընդ աշխարհականս նոցա զմի և զնոյն վէճ վարդապետութեան մատանց հաւատոյ և զգիտասցուքն Պապին ի վերայ ամենայն քահանայապետաց քրիստոնէից : Ապա ոչ նոր ինչ էին առաքելքն Յիսուսի :

« Այլ գիտէք զինչ էր պատճառն վասն որոյ այնպէս ցասնան, զի խարեցան առաքի : Գանգի ի հրատարակել անդ Ջարտաւանին և ի խնդրել ժողովրդեան մերոյ հանդարտ Դպրոցականաց և ամբոխին նոցա, դրբա զայդ ժամ բաբելասէր համարեցան որսալոյ զմեզ առ ինքեանս հանդերձ ժողովրդեամբ մերով, զի ակամբ խոստանալ տայ մեզ զնկեղեցին խրեանց որ ի Ներսէս զմեծն, առ ի կատարել անդ զպաշտամունս մեր քան կարգ ոդղափառացն, ՄԻԱՅՆ ՉԻ մեք երթեալ մոցոյք ի ներքոյ իշխանութեան Պատրիարքի նոցա : Չայս այսպէս խոստացեալ և խօսեցեալ իսկ ընդ բազում գիտասցս ապին և ընդ երեսելիս, մինչ դեռ օր ըստ օրէ Յիսուսի առաքելութեան խրեանց, եղեալ ի լոյս Ընդդիմախօսութեան Հ. Արսէնի, ի դերեւ եղեալ ամենայն ակնկալութեան խրեանց, և յոտոյ, առ վերջին կատաղութեան ակամբ լրագրով հարձակ և յաչխարհ հանդարտ վիրաւորութեանս (*) : Ահա այս է ճշմարիտ պատճառն բանդագուշանաց անմիտ լրագրոյ, որք չարժէին իսկ պա-

ձերով մտեալ որդւոյ նորա յառաջեայէ ի մայրենի լեզուի
իւրում և յայլ գիտութիւն:

„ Թէպէտ և ի Հայոց հերձուածոցաց է մանուկն, բայց հայր նորա յանձնէ բոլորովին զորդի իւր ի մեզ դաստիարակել ուղղասլաստել. չանդի և ինքն ոչ տակաւ լուսաւորեալ է հաւատոյս :

„ Յուսամ զի ոչ պատճառ նմա դիտեցիս այս, որում բազումք ապաշաւորք էն ի վխմոյ նորա : . .

„ Չառնելով այլ ինչ մեամ ողջոյն տիրոյ Վ. Հ. Գաբրիէլի և Պ. Հ. Ամիրաթոսի

„ Պօլիս. 15 դեկտ. 1853.

„ Խ. Ծ. Հ. Մանուկ Բաջինեան. „

Զառաքեան Հ. Սարգսի առեալ թղթոյ Հ. Մանուէլի, յորում յանդիմանէ զնա ընդ հակառակութիւն բանից և կարծեաց նորա, այլովքն հանդերձ, օրինակ գայս.

„ Վերապատուելի Հայր.

„ Զգրեալդ ի 15 դեկտեմբերի անցելոյն, ընկալայ ի 28 նոյեմբերին ամսոյ, և ընթերցեալ զայն՝ ծանեայ զվնդիրդ որ վասն մանկանն, ընդունել մեր զնա ի վարժարանս, բան առաչնոյց և Բախտանձանաց Հօր Նորա, ի ձեռն ձերակոդմեան ողդուհոյս խնդրուց : . .

„ Թողեալ ես առաջոր առնել քննութիւն զկարողութենէ և զկամաց Հօր մանկանն, ի հաստատանել մեզ առթիւն թոդուլ զնա ի վարժարանս մեր ընդ հաստատութեան զոր ունիմք ընդ ձեզ, զի ոչ ինչ ծանրանայցէ ի ձեզ ի ծախիցդ, զոր ունիմք ընդ ամենայն աշակերտս մեր

ընդ խնդիրդ, վ. Հայր, թէ ընդ միջնորդութիւն և ընդ վկայութիւն ձերակոդեան ողղարեան իշխանաց ոմանց այդր չառաջեալ քո Հաւանեխ այժմ ընդունել ձեր ի փարժարանս դրոշն հերձուածոյն, ապա ընդէր Հակառակիլ դու երբեմն ընդունելութեան մերոյ յոյն, այլ և ընդդէմ խրճն մասդ Համարիլ զայն . . . Մի թէ միջնորդութիւն և վկայութիւն այլոց ունայ յերարդս այսր, առ մեզ ասա, չէիմն քեզ բաւական, և հանդուցիչ խրճի մասդ երբեւ զրոցայն . . . և թէ ունիս դու արդեօք նորոգ և Հակառակ հրամանն ի վեհէդ, ընդունել մանկունս և ի հերձուածոյդ Հայոց, որ պատոհ-ման պատուիրեալ էր քեզ այսպէս .

“ — Վասն Մարտանն վարժարանին առաջիք պատուա-“ ական մանկունս Բաշակաւոր, որչափ և հնար իցէ, բայց մի “ ի Հայոց հերձուածոյդ զայս նուազ : ”

“ Աչ կարծեմ ես բնաւ, ընդունել իմ զորդրեալն ի վանս զընդդիմախոսութիւնն որ առ Գարամանեանն, և զձեռագիրս յայտարարութիւնն նորա որ առ Արարատեան, յոր աչ միայն հերձուածող և հերետիկոս կոչէ զՀայս, այլ և ար-տաքս եկեղեցւոյն Քրիստոսի, երբեւ զհեթանոս կոչէ զնոսա, ընդ որ Հաւանեալ և Համաձայեալ ձեր զայն այդր առարքրու-թիւնդ ձեռաց, բայց ի միոյ յերարդս այսր . . .

“ Այսպէս չիցայր քեզ կարծեմ տեղի առնել զայդ խնդրուածդ լինել : . .

“ Ողջունելովքն ի քէն վ. Հարք առ առնն ողջունեն զքեզ փո-խադարձ սիրով, և ես

“ Ձեռս

“ վ. Հայրութեանդ

“ ի փարիզ . 8 յունվար . 1854 .

“ ի. ծ. Հ. ՍԱՄՊԻՒ ԹԼՈՒՄԵԱՆՑ . ”

Փարիզ Հ. Սարգսի առ Պետ. Հրամայ, յորում երկարդի

պրոպոն իւր որ ընդ ինեամբ քաղաքավարութիւն նորա և հանճարեղ խրատ, և պատմէ զայցելութիւնն և զընդունելութիւնն առաքելական Արքեպիսկոպոսին Փարիզու ի Մ. վարժարանն և զկարծիս նորա որ դիւրաւարութենէ վարժարանին և զաշակերտացն նորին, և ծանուցանէ զկարծիս և զվարկն Արքին Պէյլ որ զնմանէ, օրինակ գայս.

„ Գերապայծառ Տէր,

„ Յիշատակն անհնարին ինեամց և բարեաց Ադդիս և Մխիթարեանց միանգամայն ստիպեն և բռնադատեն զիս ի խոնճէ մատուս բերել իմ յոյս վերջին գրութիւնս առ Ձեզ, թէպէտ և ելք տրին չկոյին ինձ ի միխիթարութիւն, որպէս և նախընթաց երկար գրութիւնս . . . Սակայն լոյծ այս վկայ վերջին Ջանից և արձան յաւիտենական յիշատակի Ադգին մեր . . .

„ Արդ՝ հարցանեմ եւ նախ՝ ով թէ կարճատես անձնասիրութիւն և անարդ նախանձ ունոյ տիրեացն իսպառ ի Մխիթարեանս . . . և ով թէ աչ տեսանէն նոքա զարդիւնս գործոց իւրեանց . . .

„ Աչերդ համարիմ զրուանդական վերստին յիշատակել այժմ ի սմին, հաստացանելով իմ զայն յառաջագոյն, այլ պէտն էր ինչ միայն անտի, որ իրրեւ ծնունդ և արդասիք են նոցին, հետ զհետ երեւեալ . . . և նախ՝ յաղագս բանի Յայտարարութեան վարժարանիս, ընդ որ ցաւուցեալ, ասէք, Արքազանին, և Ձեր անհնարին վշտացեալ, ազգ արարիք մեզ զայն յելս անցեալ դէպքերի.

„ Ահա ի սկզբան ամենայն երկոքին միաբանակաք Արքեպիսկոպոսի քաղաքիս եկեալ մեզ յայց՝ կամեցան տեսանել զՅայտարարութիւն վարժարանիս, զոր և ցուցաք նոցա. Հարցին նոքա յաղագս ուսման, թէ զինչ իմանամք մեք Հոգի կուսակցական, և մի հաւատ, և մի պաշտօն ամենից. և լսեալ ի մէնջ զհնութիւն և և զպատճառսն զոր և առաք այդր իրրեւ, զոհ եղեն նոքա յոյժ.

«Յաւելաք մեք ինքնին ասել ցնոսա, զի եթէ պատչաճ համարիցին պարզագոյն եւս առնել զրանն, զոր ինքեանք արասցեն, և մեք վերատին տալպրեացուք զՅայտարարութիւնն զայն, զէպէտ և զառաջինն աւելորդ թուէր նոցա յաւելուլ անդ այլ ինչ, հայեցեալ ի բանաւոր պատճառան մեր, բայց քանզի ի Հռոմայէր ապդարարութիւնն՝ յաւելին նոքա անդ ապա երկուս և երիս բառս, և ահա տալպրեցաք և տուաք յայտնանէ օրինակ մի Արքեպիսկոպոսին, և երկու օրինակ Նուիրակին, ընդ որ ուրախ եղեն նոքա։

«Յետ այնորիկ հարցին Ա֊Թոռակալքն, թէ զո՞ր քրիստոնէական վարդապետութիւն ուսանին մանկունք վարժարանիս. և մեք առացաք զՆիկարմինոսին և զՅօրիին, թարգմանեալ ի հայերէն մեր լեզու։ Ընդրեցինն նոքա տեսանել երկուս երկուս և առանձին առանձին ի մանկանց կաթոլիկաց և ի բաժանեալց, և տրաբին նոցա հարցմունս զէական մասանց Հաւատոյ, և զՊատկն, և զքառատրանէն, և այլն, և յոյժ գոհ եղեն նոքա ընդ պատասխանիսն զոր ընկալան ի մանկանց առի և առի (*)։

«Ապա իջեալ ի վայր տեսին և զայլ մանկունս վանդամանդ հաճելեան ընդ ամենեսեան. և ապա մտեալ ի մատունն աղօթեցին վայրկեան մի և հաճեցան յոյժ ընդ վայելչութիւն տեղւոյն, և ելեալ անտի հրաժարեցան ի մէնջ քաղաքավարութեամբ, քանզի երեքեան զմեզ ի դժուարին վտանգս մեր առեալ, խոստանալով մեզ զպաշտպանութիւն Ա֊քեպիսկոպոսին, և ասելով թէ ապագէ ևս զմէնջ ի Հռոմ վկայութիւն նպաստաւոր բան ամենայնի։

(*) Ասացին արդեօք, թէ զի՞նչ առնին Ա֊Թոռակալքն հարցմունս հաւատոյ նա և մանկանց բաժանելոց, ապա գոլով նոցա ի խնդրոյ խորութեան հաւատոյ, քան զիւտութեան և հաւանութեան Ա֊քիսկոպոսին Փարիզու։

Ասեմք. թէ հարցմունս զէական մասանց հաւատոյ առնել և բաժանելոց իրաւունս ունէին նոքա, գոլով վարժարանին ընդ մատակարարութեամբ միաբանութեան հպատակին Հռոմայէց Պապին, և ունելով անտի հրամանս հարցանելոյ և փնտելոյ զնոսա։ Նոյնպէս և դպիւռութիւնք Պապին և դպրոցքն փառատրանին կամին խմանալ։ Ընդ որս առեալ նոցա գործն պատասխանին, բաւականանան նոքա ընդ այն։

(Մանրութիւն Հետինակին.

„ Եւ ահա իգնացից սքեռուակալացն և իվերջին բանից նոցին առ մեզ, յոյժ ուրեմն է ապա, թէ չէ ցաւոցկատ Արքազանին քոյ յայտարարութիւն վարժարանիս . . . զուցէ և ոչ տեսանել իցէ նորա զայն . . . այլ Պառնապէ տարիս թշնամուց Մխարանեցեանց, և մնասուցանել վարժարանին վերոյ ասս, և իհնանել սպառնալիքն այդր առ ձեզ, և ամբաստանութիւնն զմէնջ առ Արքեպիսկոպոսն այր: . . .

„ Այլ պէտք թէ, ըստ վկայելոյ քոյ և հաւատարիմ գործակալացդ ի Հռոմ տեսեալ իցէ Արքազանին զՅայտարարութիւն զայս և ցաւոցկատ քոյդ այս. բայց ամբաստանութիւնն նորա անտի, և զանգատ ձեր այսր գՀ. Գաբրիէլ են, յայտարարութեանն ոչ յանուն նորին հրատարակեալ, այլ յանուն տեսչին Մ. վարժարանին:

„ Եւ զարձեալ՝ եթէ կայր ի Յայտարարութեանն այն անհաճոյ ինչ Արքազանին, առաւ ձեզ իսկոյն օրինակ մի առեալ ընդէր ոչ ապ արարիք ձեզ յայնժամ: Ապա յայտ է, թէ ամբաստանութիւնն անտի ի Պառնապէ է առ ի քանդել զվարժարանս, հանելով գՀ. Գաբրիէլն առեալ (*), և զանգատ ձեր զսնանել, առ ի հաճոյ լինել Պառնապէի, վանգամնոյն և ի կատարել զցանկութիւն կամաց ձերոց, փոխարելով առեալ զվարժարանս, և կամ զոհել զայս բոլորովին կամաց Մասալոցին, քան բանիւ Յայտարարութեան ձերոյ առ Պապն:

„ Ահա կարճառես անձնասիրութիւն և անարդ նախանձ ունանց տիրեալ ի Մխարանեցեանս: . . . „ Պառնապէն զա„ մենայն լինչ ինքնին գործէ, ասէք, բայց հրատարակէ զայն „ յանուն արքազանին: „ Նոյնպէս և դուք զամենայն լինչ առնէք քան կամաց ձերոց, բայց հրատարակէք զայն յանուն

(*) Ո՞չ ապարդեն Ձ՛ճարտար ասացեալն Հ. Սարգսէ, և յաւելուն ցուցք սրտի նորին, զի յիշատակ Հ. Գաբրիէլի ի փոքրամարդին ելանեն անտի և քոչակաւոր աշակերտաց նորին . . . և զի սեռեալ Պառնապէի Գարգինեանին զկատարեալ հրամանի իւրոյ յաւելու նա զայն, և զի՞նչ հետեւանք անտի՝ յայտնի են ուշադիրն . . .

(Վանաբնակ Հեղինակին.)

*համօրէն Մխիթարեանք. և հաստատութիւն բանիցս ընդ-
մարտութեան, երաշխաւորեցան վկայքն և հաւատարքն,
զորս ունիմ պատրաստ և ի ձեռին, և որք յառաջ և ի յայտ
եկեցին ըստ ժամանակին, և զոր ընդ հուպ կարծեմ և ոչ
անազան, հայեցեալ ի վարչութիւն ձեր այժմեան։...*

*« Եւ երկարել՝ յաղագս բանից Թղմոյ ձերոյ որ առ Արքին
Պէյ, և զոր չեա այլոց ոչ անկեղծ և հաւատարիմ բանից
առեք. « Գերազոյն զլուխն եկեղեցւոյ միայն ունի կարողու-
« թիւն հանդարտել զպայրայեալ խիղճս։ »*

*« Ընդ այս հարցանիմ ես նախ՝ թէ զինչ են պատճառք
զայրանալոյ խղճից։ Ոչ ապաքէն անպատեհ և վնասակար
գրուածքն ձեր, Ընդդիմախօսութիւնն առ Զարմանեանն,
և Յայտարարութիւնք առ Արքայեանն։...*

*« Ասացաւ ես, թէ այո՝ Գլուխն եկեղեցւոյ միայն ունի
կարողութիւն հանդարտել զպայրայեալ խիղճս, և գլուխ
Մխիթարեանս ունի միայն կարողութիւն զրգռելոյ զպայ-
րայեալ խիղճս։...*

*« Զհայրական խիղճն ձեր կամիք վարել ի վերայ
հպատակացդ յայնժամ յորժամ զնոսա յանդգնութիւն գե-
րութեան անկեալ տեսանիցէք իրրեւ զձեզ և չար եւս քան
զձեզ։... Մխիթարեանն ոչ կարէ անիրաւել, ասէք, առ
Հ. Գարրիէլ, և զոչ գլուխ անտանելով Մխիթարեանն,
առաջին է ի պատառել զպատմուճան ձեր և ոտըզակել.
Հայհոյեաց, զի եւս պիտոյ են մեզ վկայք. և նոքա տեղի,
Մահապարտ է։*

*« Այս արդարեւն արդեօք Հռոմէացիքն, Պատուոյն,
յամբաստանել զՀ. Գարրիէլէ, զի հայրօրինակ Առաջնոյդ
նորա վկայէ յանցանաց տրա, մեղայ վարդապետութեան
ի հատուցս, և ոչ տրտմի և ևի, այլ և միսիոնեայ, խնդա
և Հ. Ամբրոսիոյ. քանզի միով գիտութեամբ և հատանե-
թեամբ տրար սա գայթակղութիւնն զայն, թէպէտ և մեք
եւս կամէաք տարակրել անդ, այլ տացաս յօրինագիտէն,
թէ շուտ էր միոյն անդ տարակրութիւն ի գիմաց ամենե-
ցուն։...*

«Ահա հայրական իշխանութիւնդ, որով պարծիք ի թուղթն ձեր որ առ Արքին Պէյ և խոհական խնամոութիւնդ, զի առ այնպիսի ոք զրէիք զայն զոր զիմօք ոչ ճանաչէիք այլ ի համբաւոյ միայն, և յերկրորդ անգամ և եթ ընդ միմեանս թղթեալ ...

«Որպէս չափազանց վարկդ զբէին և զքոյդ է միայն, նոյնպէս և պաշտպանութիւնդ ուստ նուա է միայն, ուստ զործակցայդ որք ի Հռոմ, և որք ոչ միայն անբաւական են և անյարմար յայն զործ պաշտօնան, այլ և վնասակար խակ Մխիթարութեանդ և ապրիլ միանգամայն, ուստ յանդուգն և աներես զործածութեան խրեանդ որ ի բանս Յայտարարութեան առ Սրբազանն ...

«Սակայն պաշտպանէք զնուա, քանզի մին հարազատ է և միուն զաւակիդ, ուստ որդ և արժանի պաշտպանութեանդ. խակ Հ. Վարբիէլ որ զպատիւ և զերաշխս հատուցանէիս Հանուց պաշտպանել, արժանի համարիք զատապարտութեան ...

«Եւ ահա արդարութիւն Հօրդ հատարակայ ...

«Եթէ զրոխանդակ բանս Թղթոյդ մանր և անաչառ քննեցեալ, չիցէ ինձ բաւական քառասուն էջք Թղթոյս, ապա համառօտեցեալ զայն:

«Ի հայելին զրուածիդ որ առ Արքին Պէյ և որ ծայր ի ծայր լի է կեղծաւորութեամբ և նախատանօք և անպատեհ երգիծանօք, զարմանալի և յոյժ ցաւալի է ոգիտութիւնն, զի մի այլ ինչ ասացից, որով համարիք զանազանութիւնն ինչ զտանել ի զազրելին Բարգամանութեան Յայտարար Թղթոյն Հ. Վարբիէլի, այլայլելով զպարզ և զյայտնի իմաստս բանից նորին:

«Զուք ինքնին խակ կամաձեւի ցուցանէք անդ զՀայր Վարբիէլ և զվարդապետութիւն նորա առաջի առաքին, որով կարծէք թէ խնամատուն և արդար երեսք յաչս Արքին Պէյի:

«Արարիք Անդամալս ...

« Գիտէք թէ ինչ ասաց նա յորժամ ընթերցաւ զթուղթդ։ Կատարեալ ժիզուիթիզմ, կեղծաւորութիւն, հանդերձ անոնձ և անպատեհ գրութեամբ . . . վասն որոյ և գայթագղեալ կորոյս խոպան զվարկ իւր որ զեկեղեցականաց . . .

« Ահա արդիւնք գրութեան ձերոյ առ նա . . .

« Երեւեցի ի մօտոյ և արդիւնք Յայտարարութեան ձերոյ որ առ Սրբազանն, հայեցեալ ի բանն վարժարանիս . քանզի լուեալ Յովհաննու Մուրատի զհանդամանաց Միաբանութեանն և զվտանգէ բարերարութեան հօր իւրոյ, կամի յաղտոտել զայն իրաւամբք և իշխանութեամբ Առնէից . . . Վասն որոյ պատրաստ լիրուք առնել նմա պատասխանի . . .

« Ահա ազգ արարի ձեզ զայս ամենայն վերջին այս գրութեամբս, բանադատեալ ի խղճէ մտացս ։ Ոչ ինամ ես ի ձէնջ պատասխանոյ թղթոյս, ճանաչելով արդէն զարհամարհող սովորութիւն ձեր, այլ ինամ ուղղակի և կամ անուղղակի ձեռնարկեցութեան ձերոյ ի բան վարժարանիս, առնել յայնժամ և զվերջին պարտս իմ, ցուցանել զճշմարտութիւնն հաստատուն իբրեւ քարայրի անշարժի, ազգին մերոյ և օտար ազգաց առհասարակ, որպէս զի ծանիցեն զայն ամենեքեան և արասցեն զարդար դատաստան իւրաքանչիւր գործոց ։

« Ինամ ցտագին արտիւ

« Գերապայծառ Տէրութեանդ

« ի Փարիզ . 18 յունվար . 1853 .

« Ի. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՒԴՈՒՆԵԱՆ . »

ԳԼՒԽ Ը.

Կաղկած Յովհաննէս Պոլսոյ ընդ ազգասէր բռնդի Հ. Սարգսի որ առ ինքն. — Հարցուածք Յովհաննէսի Պոլսոյ առաջի և անտի զՀ. Սարգսէ և զարդիւնս նորին. — Երկիւղ նորա ի պատասխանելոյ անտի. Կոչ Հ. Սարգսի ի Յովհաննէսի Պոլսոյ. — Երթ Հ. Սարգսի ի Լոնտոն առ Յովհաննէս Պոլսոյ. — Խոհուեղութիւն և խոնարհութիւն նորա ընդ ինքն. — Դարձ Հ. Սարգսի ի Փարիզ. — Թղթակցութիւն Հ. Սարգսի և Յովհաննէսի Պոլսոյ ընդ միմեանս. — Խոստովանութիւն, յետադարձիւն խոհուեղութիւն և անցուցք գնացք Յովհաննէսի Պոլսոյ ընդ Հ. Սարգսէ.

Առեալ Յովհաննու Պոլսոյ զաղաչարար և զթելոյ թուղթ Հ. Սարգսի Թէոդորեան, զրեալն ի 10 դեկտեմբերի անցելոյն, յորմէ զանազան խորհրդով ըստ կաղկածոյս բնաւորութեան իւրում, և զի առ քեռայր իւր Աբրահամ Աղանուր ի Պատաւիոն, հարցանել զկարծիս նորա, թէ կարի՞ ինքն վատահել ի Հ. Սարգիս, և ըստ խրատուս և թելադրութեան նորին ձեռնամուխ լինել ի խնդիրն յայն վարժապանին, առաքելով նմա զօրինակ թղթոյ Հ. Սարգսի Թէոդորեան:

Զի նա և առ Թէլրօթ Անգղիոյն անուանեալոյս Պապին ի Հռոմ, խնդրել ի նմանէ տեղեկութիւն, թէ հաւատալի էցէ վարդապետութիւն Մուրատեան վարժապանին ի Հռոմ, և թէ արդեաւք էցէ այն, խնդրէ զի մի անուն իւր յիշեցցէ ի խնդիրն յայն: . . .

Թէպէտև Աբրահամ Աղանուր վատահանէ զնա ի Հ. Սարգիս, և խորհուրդ տայ նմա անուանել զպարագրութիւնս նորա, և առնել ըստ թելադրութեան նորին, հանդերձ բարեաւ զո-

վասն եամբ զարդարութենէ և զազգասիրութենէ Հ. Սարգսի, երկու և երեք Թղթով առնա, թէպէտ և Թէլրօթ ասյ նմա տեղեկութիւն թէ հաւատոի էր վոխադրութիւն վարժարանին ի Հռոմ, և որպէսզ այն ի Պատկն, ասկայն ի վերոյ այդ ամենայնի չդարժի և ոչ փոյթ լինչ առնէ զայնմանէ. այլ չարժի միայն ի բանից լինչ Պատկին, զոր ասէ նա անհնարկատութեն իւրոյ Թէլրօթի, և Բացարձակ կամք իւր են, զի փոխադրեսցի Մխիթարեանց վարժարանն ի Հռոմ։ ”

Մխիթարեանց վարժարան անուանէ զայն և ոչ Մուրատեան. վասն այնորիկ դժուարի նա և չարժի ընդ անյիշատակութիւն անուան հօր իւրոյ, և վասն այնորիկ կոչէ նա զՀ. Սարգիս առ իւր ի Վենետն, ձեռամբ փոստարանին իւրոյ ի խօսել ընդ նմա զայնմանէ և առնել զարժանն։ Առնէ Հ. Սարգիս պատասխանի նմա ուղղակի ծանուցանելով զդժուարութիւն իւր գնալոյ առ նա, յորժամ հարկն պահանջիցէ, օրինակ զայս.

“ Բազմապատիւ Տէր.

“ Յերէկն եկն առ մեզ փոստարան ձեր Պատրն Մօր և ծանոյց մեզ լրմանց ձերոց, թէ Վենետիկեանդ անուանդ զոլով յայտնի առաջս չկարէք գալ ի Փարիզ, ըստ խոստման ձերոյ և յառաջադրութեան, վասն որոյ ասէք, եթէ կարեւոր իցէ յոյժ տեսութիւն մեր ընդ միմեանս, իմ և կամ Հ. Գաբրիէլի անցեալ ի Վենետն և կացեալ այդր առաջս լինչ խոսակցութ ընդ Ձեզ զկարեւորացն որ վասն բանի իմոյ երթալոյ ասէք։

“ Առայն ես նմա եթէ խորհեցայց և ծանուցից ձեզ զրով զայսմանէ։

“ Այդ՝ ծանուցանեմ Վենետիկեանդ նախ՝ զի ցաւեցայք մեք յոյժ ընդ լուր անսպասելութեանդ, և զի յուսայք յոյսդ մխիթարեանց Վասպուրական և ուրախացուսիք զմեզ զամենեսեան ցանկալի գալստեանդ առաջս մեր։

„ Ան ժամս խօսեցաւ մեք ընդ Պարոն Մօլտի զկարեւորութեանն. և երկարտրդ՝ եթէ հարկ իրացն պահանջիցէ խորհելոյ և խօսելոյ ընդ ձեզ, և Դուք ոչ կարիցէք տակաւին գալ, յայնժամ մեք ինքնին եկեսցուք այդր անխափան. իմիսա չինք ինչ տեսիլոյ զայն, վասն որոյ ոչ հարկ համարիմք զդալուստ մեր այդր յայտնել աւուրս. միայն աղաչեմ զձեզ փոյթ կալջիք առողջութեան ձերում զոր կարեւորագոյն և պատուականն քան զամենայն ինչ զիտեմք համարիլն Տանդ և մեզ և ազգիս, և տալիք մեզ լուր ուրախարար որ ընդ այն.

„ Մնամ

„ Բազմապատիւ Տէրութեանդ

„ ի Փարիզ. 27 յունվար. 1854.

„ Խ. Ծ.և աղաչարար

„ Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՕՒՐԵԱՆ. „

Վերատին կոչէ Յովհաննէս Մուրատ զՀ. Սարգիս առ իւր Լոնտոն, ձեռամբ փաստարանին իւրոյ, կարեւոր յոյժ համարելով զտեսութիւն իւրեանց ընդ միմեանս. Յանձն առնու Հ. Սարգիս գնալ առ նա Լոնտոն, Թէպէտ և յանդիմանեն եղբարքն, իսկիզբն վերտվարի, վասն որոյ նեղի յոյժ իցյուր. Գնայ բնակի Տան Յովհաննու Մուրատի որ քաղաքավարութեամբ ընդունի զնա, և աւուրս տասն մնալոյ բար և սիրով հիւրընկալեսցէ. Այլ թէ զինչ խօսին նոքա ընդ միմեանց և զինչ որոշեն զինդրոյ վարժարանին զայնչափ աւուրս, ահա տեսանել բովանդակին ի նամականին Հ. Սարգսի առ Յովհաննէս Մուրատ Լոնտոն, և մանաւանդ արարք ի վերջին նամակի նորին, յորում բովանդակին ամենայն խօսակցութիւնք և որոշումն և գործ որ իխնդիրն այն.

Գլուխ Հ. Սարգսի առ Յովհաննէս Մուրատ Լոնտոն,

յորում ծանեայանէ պյաջող ճանապարհորդութիւն իւր, պատճէն ի փարիզ, և զհաւանութիւն եղբարց իւրոց յարիլոց ընդ նմա ի յայտարարութիւնն որ վասն բանի Մ. վարժապետին, օրինակ գայ.

« Բազմապատիւ Տէր.

« Մեկնեալ իմ ի Սիրելեացդ այսր քաղցր յիշատակօք, և ժամս երկու ճանապարհորդեալ շոգենաւօք հասի ի Ցլօքսոն ի 5 ժամու երեկոյեան, և տեսեալ անսի զծովն ի խաղաղութեան և զշոգենաւն պատրաստ գնալ ի Պուլոյն, մոլ յայն խակոյն, և ժամս երկու նաւարկեալ՝ ժամանեցի ի Պուլոյն յոթ ժամու երեկոյեան, ուր օթևանեցայ զայն գիշերն և ի վաղիւ անդր ի տուան և կէս ժամու առաւօտեան եկեալ ի շոգեկառն և ժամս վեց և կէս ճանապարհորդեալ՝ ժամանեցի այսր ի Փարիզ ի հինգերորդ ժամու գիշեր միջօրէին, ողջ և անվտանգ խնամօք Բարձրելոյն և աղօթիւք Սիրելեացդ։

« Գոհ ի կայսրանի երկաթեայ ճանապարհին զեղբարս իմ զՎ. Հ. Գաբրիէլ և Ամբրոսիոս վարդապետս որք եկեալ էին ընդ առաջ և ձեռային մեզ, ակն ունելով պտանել և զՁեզ, ըստ յառաջագոյն ազդարարութեան իմոյ. թէպէտ և վրիպեցան յանկնակալութենէ իւրեանց, այլ իմացեալ զպատճառ կասելոյդ, ձեռին յուսով ընդ հուպ ցանկալի տեսութեան ձերոյ առ մեզ ամենայն յաջողութեամբ։

« Ձեռ հարցանելոյ մեր զողջունէ մխիթարից և զհանգամանաց իրաց վարժարանիս, առաջարկեցի նոցա մխիթարել և յարել ընդ իս ի յայտարարութիւնն որ վասն բանի վարժապետին. հաճեցան հաւանեցան նոքա ընդ այն և խոստացան հաստատել զայն ամենայն յօժարութեամբ, որպէս և հաստատեցին յառաջ ձեռամբ իւրեանց, հանդերձ յաւելուածով, առաւել ինն բացայայտ բանիւք, զօրաւոր փաստիք և կատարեալ հաւաստեօք, որպէս տեսանէք։ Յուսամ զի բարեկամացեալ ընդ այն Տէրութեանդ յառաջացուսցէ զպրծն, ի պահպանութիւն իրաւանց աղաւտաց ազգիս, ի մշակել

նուագարանին յիշատակի բարեաց հանդուցեալ Բարերարին :

« Հմարտ քաջալերեալ զօրասլիք Տէրտմր , Սիրելեալդ իմ Պարոն , և զօրեղ բան արժանի անուանդ Քերոմ , ժառանգի և կտակատարի Աղայ Սամուէլ Մուրատի , և մեք , ես և եղբարք իմ աստ , օգնական լիցուք քեզ , միտանելով և յարելով ընդ քեզ ի բանս և ի գործս յայս , և յամենայն ուրեք և ժամանակի :

« Իակ յաղագս բանի պաշտպանութեան վարժարանիդ ի Գաղղիացւոց Տէրութենէն , գնացեալ խօսեցայ ընդ պատուական Տէրութենէն , գնացեալ խօսեցայ ընդ պատուական Պարոն Մօլտին , և բան խորհրդոյ և կարգաւորութեան նորին պատրաստեցաք զինդրուածն ձեր , հանդերձ այլ կարեւոր յաւելուածով , յառաւել իսն հաստատութեան խնդրոյդ և ի յաւարհուրդութիւն իրաւանց ազգատոհմ ազգիս , զոր և առաքեցաք Քեզ այդր ի տես և ի քննութիւն : Եթէ հաճեալք ընդ այն եկեալք այսր մատուցանել զայն անձամբ Գաղղիացւոց Տէրութեանն :

« Վ. Հ. Գաբրիէլ մեր աստ և Արթին Պէյ արդէն խօսեցեալ են զայսմանէ ընդ պատշաճեալս Տէրութեանն բերանով և գրութեամբ , և տրամադրեալ զինս կատարել զխնդիր Ձեր կարեւոր , հարստատութեամբ իսն ազդեալ են նոցա , եթէ զաւագի Տէրութիւնս զայս խնդիր Ձեր , ունիք դուք կամ և իշխանութիւն փոխադրելոյ այդր ի Վենետիկ զվարժարան Ձեր . վասն այսորիկ ցուցեալ են նոքա կատարել յամենայնի զխնդիր Ձեր , պաշտպանել զվարժարանդ :

« Գալուստ Գերապայծառ Արբային մերոյ աստ ի Փարիզ յապագի ամսեանն աւգոս ինչ , ձեռնտու նորա Թղթոյ ի Հռոմէ , ըստ ազգատարութեան բարեկամին մերոյ տր ի Վենետիկ :

« Զունելով այլ ինչ կարեւոր ի ժամուս , բայ ի սիրոյ և յօրհնութեան ողջունէ աս Համօրէն սիրելի գերապատուիդ , երկայնել յամենայնի :

« Բայց կարօտութիւն ողջոյն սիրոյ և յարգութեան մատուցանեն Պարոնութիւնդ Վերտապետիդ Հայր Գաբրիէլ

և Ամբրոսիոս վարդապետ, և միաբան ընկերքն գոլոտեան ձերոյ, և ես

« Մնամ միշտ

« Բարեպաշտ Տէրութեանդ ձերում

« ի Փարիզ. 27 Փետր. 1854.

« Խ. Ծ. և աղօթարար

« Հ. ՍԱՐԳԻՍ ԹԼԻՈՒՐԵԱՆ. »

Յոլհաննէս Մուրատ չառնէ պատուախնդի վերադիշեալ Թղթոյ Հ. Սարգսի ուղղակի, այլ անուղղակի, ձեռամբ վարդապետին իւրոյ Մօտի, յանուցանելով նմա զհամառօտիւն իւր ընդ գրուածն Հ. Սարգսի, որոյ խնդրեալ զայն ի վարդապետէն վերադարձ կարճել զանոնկ պատճառանս նորա, վերամին գրութեամբ, օրինակ զայս.

« Բարեպաշծա Տէր.

« Այն ինչ Ձեր էի ես ընդունել ի Ձենջ հաճութիւն սրտին ուսանելոյ, հանդերձ ծրագրելովն ի նմին յաւարտութեանէ որ լինիցի և ցեղարարց սուրբ, և զոր առաւել եւս հաճոյանան Ձեզ կարծէի, զայն առաւել եւս բացայայտ և մեկին բանիւք գրեալ գոլոյ նորին, ի հաստատութիւն միարանութեան զոր ծանկցութեան միոյ ընդ ձեզ և զան կարեւոր հաւատոցն յանելոյ անդ ի վարդապետութիւն գործոյն և ի վկայութիւն իշխանութեանն ձերոյ, ահա լուայ ի Պատուն Մօտեն զի անհաճոյ հաւանարար լոկ այն յաչս Ձեր. ընդ որ ոչ միայն զարմացայ, այլ և յանելոյ յոյժ, Ձանուցանելով Ձեր ինձ ուղղակի կամ անուղղակի զպատճառ սիտութեանդ ընդ այն. և ես ոչ կարացի զուշակել այլ ինչ առն, բայց միմիայն, զի կամիցէ

դուբ ընդունել զնոյն գրուածն, զոր առտպագրել եսուբ ինձ այդը, այսինքն զի առտպագրեացնն անդ և եղբարք իմ աստ, վասն որոյ փութացի օրինակել զայն ձեռամբս և եսուս առտպագրել անդ և եղբարցս աստ, զոր առաքեմ ձեզ այսօր ՅԵրեք առնոյս։

„ Եւ ահա զայս գուշակեցի և արարի, յուսամ թէ չսխալեցայ ի գուշակութիւնս իմ յայս. ապա թէ ոչ՝ ծանուսյիք մեզ զկնան ձեր և զհաճութիւնդ զի կատարեացուք զայն, որպէս և ծանուցաս մեզ ի ձեռն Պարոն Մօլտի։ Միայն աղաչեմ զձեզ փութով արարէք զոր ինչ ունիք առնել, զի անգին է ժամանակն, հայեցեալ ի հանգամանս իրացն։ . . .

„ Մնամ միշտ

„ Բազմապատիս Տէրութեանդ Ձերում

„ Ի Փարիզ. 3 մարտ. 1854.

„ Խ. Ծ. և աղօթարար

„ Հ. ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵՆ. „

Պատահանի Յովհաննու Մուրատ առեալ ինդիր Հ. Սարգսի, յորում ծեղադրէ զնա, իբրեւ թէ պակասեալ էջէ նորա ի խոստումն իւր առ ինքն, և զինդհակառակն էջէ արարեալ, և որով յայտնապէս ցուցանէ նա զինքզ բնաւորութեան իւրոյ, զվատածոռ և դժնդեղուկ միտս և զխարդախութիւնն իւր միանգամայն, օրինակ զայս.

„ Վերապատուելի Հայր.

„ Զինդուլն ձեր որ յ3 ամսոյս, հանդերձ գրուածովն առտպագրելով ի ձէնջ և յեղբարց ձերոց, ընկալայ յառաջ քան զամս, այլ յոյժ անապան, վասն որոյ ոչ կարացի առ անդէն պատասխանի, զի զօրն ողջոյն զբաղեալ էի ի քաղաքավիճին, և ի 5 ժամս երեկոյին և ես գրիճայ լուան։

«Ներեցէք ինձ անշուշտ, եթէ պատասխանելովս թղթոյ ձերում խօսեցայց ամենայն անկեղծութեամբ որ հարկաւոր է ի ցոյց ճշմարտութեան իրացն։

«Յորժամ դուք մեկնեցայք ասի, յայտնապէս ասհմանեալ էաք ի մէջ մերում, զի դուք պարտ եկք տեսանել ընդ Պարսն Մօլսի եթէ կայցէ ինչ արժանի ուղղարկելոյ յԱռաջարկութեան վճռոյն զոր կամէաք մատուցանել առ Պետութիւնն Գաղղիացւոց, և եթէ զԱռաջարկութիւնն զայն յառաջքան զամենայն ինչ պարտ էր մեզ անյեղլի եղանակաւ յօրինել, տարածրել յերկուս օրինակս և տալ երեսից։ Գանգի խնդիրն էր ոչ եթէ ի վերայ խոհանելոյ միայն զխոհատրութիւն վարժարանին ի Շառլմ, այլ ի վերայ հաստատելոյ զակիզբն յօրոյ վերայ գործդ այդ հրեռակի՝ խարդախեալ աներակ հրոսակաւն Լուի Փիլիպէ, պարտի ձեալ յայսմ հետէ ի Փարիզ, և կամէաք զի մի ևս ձեռոյ զայսմանէ ի մէջ մերում և ոչ մի ինչ կասկած և տարաձայնութիւն։

«Յառաջեալ էաք միանոյն, զի մինչդեռ յօրինեսցի այն Առաջարկութիւն վճռոյն, երկոքին եղբարք ձեր հարքն Գարրիէլ և Ամբրոսիոս առաքելեացն յերկուս օրինակս զրուածն զայն զոր դուք առեալ էիք ինձ, և զորոյ օրինակն ընդ ձեզ տանէիք։

«Այս կրկին գործադրութիւնք պարտ էին կանխել քան զայլ ամենայն գնացս առ Տէրութիւնն։

«Դարձեալ և զայս հաստատեալ էաք ի մէջ մերում, զի յետ կատարելոյ զայս ամենայն, փոյթ կալցուք (Լանալով վանգամանն ի ձեռս բերել զվճիռ Տէրութեանն,) զի ընդդիմադիմութիւնն զոր կամէր ես առնել փոխադրութեան վարժարանին մի՛ հրատարակեսցի՝ մինչև զրեցից առ Արբապետն և յայտ արարից նմա զպատճառս իմ։

«Բազում և բազում կրկնեցի ես ձեզ՝ թէ քանզի Արբապետն ունի ուղղակի ծանուցեալ է ինձ զկնի իւր տեսանելոյ զվարժարանն փոխադրեալ առ ի աչաց իւրոց, յանկարծական ընդդիմադիմութիւն ինչ եղեալ լինիցի՝ առանց յառաջագոյն այդ առնելոյ, հաւատարտաղար լինէր անձնական նախատանաց,

զոր ինձ ոչ էր օրէն երթէք առնել առանց յանցաւոր լինելոյ։

«Այս էր ահա, Վեր. Հայր, ճշդիւտ պիծ պնացիս զոր ևս ամենայնիւ ամաչեալ էաք միմչչեւ ցայսմ ցերեկոյ։ — Եւ արդ զինչ եղեւ։

«Գրուածն յերկուս օրինակս որ պարտէր առաքել առ իս առաքեալ յերկուց եղբարց ձերոց (որպէս առաքէք զուք ինձ զայն այսօր առաքութեամբ երեցունդ,) փոխանակեալ էր յայլմէ գրուածոյ զոր զուք նոյնպէս առաքեալ էիք երեքին ի միասին, բայց փոխեալ լսա ոճոյն, և լսա դիտութեանն բոլորովին այլայլեալ։

«Ամենեքին դուք ևս համաբերեցայք զերկուսին գրուածս զայդպիսիս լրբեւ զմի և նոյն ինչ նշանակութ լսա դոյզնութեան և լսա նշանակութեան՝ է նախատինս առնել բանականութեանս խնամ։ Կարծեմ ևս թէ ճանաչեմ զգօրութիւն բառից և բանից, որպէս և վկայութեանց ի մէջ բերելոց, և խնամ թէ որպիսի վախճանաւ ի մէջ բերին այնոքիկ։

«Առաքելութիւն վճռոյն որ պարտ էր յառաջ քան զամենայն ինչ յօրինել, առաքել, և փոխադարձել ի միմեանս, ոչ յօրինեցաւ, և ոչ առաքեցաւ, և ոչ փոխադարձեցաւ մինչեւ ցայժմ, որպէս թէ երկրորդական ինչ գործ էցէ այն, զորմէ պարտ էցէ անդորր սրտիւ խոկալ, մինչ դեռ Հ. Գաբրիէլ և Արքին Պէյ ժողովրդեն առնել յանուն իմ առաջի պաշտօնէից Տէրութեան խնդիրս բաւիւք և գրով, հանդերձ ապառնալոք փոխադրելոյ զկարժարանն ի Կոստան, մինչ հայցուածն իմ ոչ կատարեցաւ ի Գաղղիա։

«Ինչ պարտ էցէ խորհել զայսմ ամենայնի, Վեր. Հայր։

«Մինչ դեռ ևս չինէն կոչնանել առաքեմ առ այր մի պատուաւոր, զոր յանձնեալ են օգնութք իմ, ապարտութեան ի վերայ գնացիցն ընդ որ զուք հաւանեցայք, և զոր պարտ էր նորա ի գործ դնել մինչչեւ արտելոյ ինչ, զուք ի միւս կոչմանէ ոչինչ փոյթ առնէք, զայնմ գնացից և զխոստանալոյն խոստմանց վերոյ որ ևս այնս ունիմք յարտութեան, ի ձեռս առնուք զանձն իմ և մատուցանիմք զպաշտօնէից

Տէրութեան խնդիրս զոր ես ոչ ճանաչեմ, գրուածս զոր ես ոչ եմ տեսեալ, և հոգիդ տայք միանգամայն զինուցս պատկառանաց զոր կամէի ես ցուցանել Պապին. և այսպէս, զգործն զոր պարտ էր մեզ պատշաճ հնարիւք ի գլուխ տանել խոհեմութեամբ՝ իրրեւ զդաշնագրութիւն ինչ հաստատակ թիւր իմացեալ դուք առնէք այնպիսի ինչ, որ զանուն իմ հասուցէք հանդերձ նախատանօք առ Գլուխն Եկեղեցւոյ :

“ Ընդէր իցէ այս Վեր. Հայր :

“ Ոչ ես էի որ հետամուտ եղէ ձեզ ի բռնանդակ յայս գործ :

“ Պարտ էր ձեզ անկեղծութեամբ վարել ընդ իս, եթէ պէտս ունէիք իմոյ իրաւանց ի զօրացուցանել զգործոդութիւն ձեր, և կամ զէթ ի հանդստեան թողուլ զիս. ես շատ խակ տառապանս ունիմ ի կեանս իմ, և ոչ կարօտիմ այսոցիկ ամենայնի :

“ Յետ երկուց աւուրց գրեցից առ Պարոն Մօրս թէ զինչ պարտ իցէ առնել :

“ Խնդրեմ հանդստել զիս, Վեր. Հայր,

“ Ի Լոնտոն. 6 մարտ. 1854.

“ Ա.ժենախոնարհ ծառայ ձեր

“ Յ. Ս. ՄԱՀՐԱՏ. ”

“ Յ. Գ. Ա.յժմ իսկ ընկալայ զթուղթ Պարոն Մօրս գրեալ յՅ աւուրս :

“ Ես ոչ էի խնդրեալ ինձանէ զարձուցանել առ իս զառաջարկութիւն վճռոյն. ոչ բարւոք իմացեալ է զիս առ իս. Գրեցից առ նա վաղիւ. առ այժմ, եթէ դուք ոչ ունիցիք ինչ ընդդիմութիւն, յուսէք նմա զթուղթս գայ : ”

Առնէ Հ. Սարդիս զարժան պատասխանին վերադիշեալ Թղթոյ Յովհաննու Վարդապետ, և ծանուցանէ զայն փառա-

բանի նորա Մօտի յառաջ քան զուզղելն առնու ի Լոնտոն։ Խորհուրդ տայ Մօտ և խնդրէ ի Հ. Սարգսէ չտալ զայն պատասխանի ի ժամուս, զի մի՛ ի պատ. լրկտալ Յովհաննու Մուրատի ձեռնթատ լինի ի գործոյ անտի, ճանաչելով զիւրաքանչիւր բնաւորութիւն նորա, այլ հանճար էնչ և հանդիպէ պատասխանի տալ. զոր և առնէ Հ. Սարգիս, այսպէս.

« Բազմապատիւ Տէր.

« Զարմացեալ և ապշեալ եմ ես յոյժ, Մխիթարդ իմ Պատրն, ընդ նորանոր և անակնկալ յուս և բանս որք ի ձէնջ. և այս այնչափ միմեանց կարծելս թէ յերազի էիցեմ, կամ բոլորովին անծանօթ էիցեմք միմեանց, և կամ խոտակցութիւնք մեր ընդ միմեանս ի վերջալոյն ամենեան ատենս բազում ամօք յառաջ եղեալ էին . . .

« Այլ զինչ և էցէ զկարեւորագոյնն հոգալով ի ժամուս, և զայլսն թողուլ ապա, յորժամ յաջողեցի մեզ Տէրամբ զմիմեանս տեսանել այսր ի Փարիզ, խելամուտ առնել զձեզ ամենայնի, փութամ առաքել ձեզ զինդրեալդ լինէն, ի յոյժ և յապացոյց ճշմարտասիրութեանս իմոյ և ճշմարիտ բարեկամութեան առ ձեզ, և ի վարառումն կասկածանաց ձերոց զինեն ի սպառ.

« Աղջոյն սիրոյ և յարդանաց մատուցանեն ձեզ եղբարք իմ աստ, և իմ ողջունեալ զհամօրէն Մխիթի Տանդ, հանդերձ օրհնութեամբ ի Քրիստոս,

« Ամեմ միշտ

« Բազմապատիւ Տէրս Թանդ

« Ի Փարիզ. 24 մարտ. 1854.

« Ն. Ծ. և ազօթարար

« Հ. ՍԱՐԳԻՍ Վ. ԹԼՈՄԱԵԱՆ . »

Մինչեւ տեսեալ Հ. Սարգսի զվերադիմեալ պատասխանին, լսէ եւ այլ նորանոր եւ անհատուցելի ինչ ի Յովհաննէս Մաւրասէ, ձեռամբ փաստարանին նորա Մօտի, այսպէս թէ, ունելով իբր միջոց առաջի զրաւչին Յայտարարութիւն Հ. Սարգսի եւ գուշակելով զվնասակար հետեւանսն որք անտի, չկարէ ինքն որոշել ինչ մինչեւ ոչ տացէ Հ. Սարգիս զվկայութիւնս զայս.

“ Ես Հ. Սարգիս Թէոդորեան կամակատար՝ թէ վէճք եղե-
“ ղին ընդ վաճառականութիւն հրեսականին, և թէ դժուարու-
“ թիւնք լցցեն ի կոզմանէ ժառանգաց և կամակատարաց
“ ի վերայ հատուցման այնր հրեսականի, չորոյ անձամբ ա-
“ պարան Յովհաննէս Մաւրաս և առաջարկեցի նմա, թէ բա-
“ ւականանամ ես ոմեսն հարկս հատով, և տամ յետքար
“ ընդունելութեան վասն բովանդակ դրամիցն: Բայց Պարոն
“ Յովհաննէս Մաւրաս ոչ հաճեցաւ ընդ այն, այլ կամեցաւ
“ զի հրեսականն հանդուցեալ հօր իւրոյ վաւերական համարեա-
“ ցի, և կատարումն տացի բարեպաշտ գիտաւորութեան նո-
“ ցա, հատուցմամբ բոլոր դրամիցն: Եւ թէ տեղեակ եմ զի
“ ոմն ի պաշտօնէից Ասլանին ի Մաւրաս առաջարկեաց Պարո-
“ նոց Մաւրասեանց, եթէ տացեն նմա հնգետասան հազար
“ հատ, ըրէր նա զկտակ հօր նոցա, բայց Պարոն Յովհաննէս
“ Մաւրաս ոչ հաճեցաւ ընդ այն, ընդդէմ խղճի մտաց հա-
“ մարեալ զայն: ”

Եւ եթէ տացէ զայս վկայութիւն Հ. Սարգիս, խոստանայ ինքն հանդերձ երդմամբ վճարանել ընդ նմա ի պաշտպանել զիրաւունս տգիտաց տղին. տակաւին ոչ՝ չկամի ինքն բնաւ խառնել յայն:

Զայս նոր և անակնկալ առաջարկութիւն վկայութեան առնէ փաստարանն Մօտ Հ. Սարգսի գրով, և խնդրէ ի նմանէ պատասխանի:

Առնէ Հ. Սարգիս պատասխանի գրութիւն փաստարանին, ծանուցանէ նմա զձշմարտութիւն իրացն, և զանիրաւս պահանջս Յովհաննու Մաւրասի, հանդերձ հատուածօք:

Ժանուցեալ վտառտրանին զճշմարտութիւն իրացն և հաւատնալ ընդ այն՝ կամի խորհրդատուիւնամբ զերն վճարել. յորինել նա ինքն վկայութիւն մի ըստ բանից ճշմարտութեան և առաքէ զայն առ Հ. Մարկոս ի քննութիւն և ի հաւանութիւն։ Քննեալ զայն Հ. Մարկոս և ուղեալ ինչ ինչ ինքին՝ գործեցանէ առ նա, ասելով, եթէ բառականացի Յովհաննէս Մուրատ ընդ այն՝ հաւատացեալ ինքն զայն ասպա։

Առաքէ վտառտրան զվկայութիւն զայն առ Յովհաննէս Մուրատ ի Լոնտոն, և յուսայ թէ բառականացեալ նորա ընդ այն տացէ իւր իշխանութիւն գործել ի պաշտպանութիւն Մ. վարժարանին։

Յետ երից աւուրց անտի ժամուցանէ վտառտրան Հայր Մարկոս, թէ բառականացեալ իցէ Յովհաննէս Մուրատ ընդ վկայութիւն այն, միանգամայն և գոհացեալ՝ թէ ընդ՝ առանց տարապրութեան առեալ էր Հ. Մարկոս զայն վկայութիւն։ Տարապրէ անդ Հ. Մարկոս և առաքէ նմա զայն ուղղակի, հանդերձ վերոյիշեալ պատասխանւոյն, որ ի 24 մարտի։

Յետ չորից աւուրց անտի յառ գործեցանէ Յովհաննէս Մուրատ զառաքեալ վկայութիւն զայն հանդերձ հաւատոյ ինչ գրով, որ ունի օրինակ զայս.

„ Վերադարձեալ Հայր.

„ Լոնտոն. 28 մարտ. 1854.

„ Վերոյիշեալն գործի խորհեցար և խոհեցար առ ամենայն ինչ ժամանակ, ոչ ի սակաւին հարկաւոր ինչ, զոն զրոյ յառաքեսի զվկայութիւն ձեր, և ինդրեմ չդժկամակիլ, քանզի յոյժ հետի ի մտաց ինց գործոցդ վերոյիշելոյ գձեզ։

„ Ընկալարուք վ՚եր. Հայր իմ զոգջոյն յարգանսն.

„ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՐԱՏ. „

Առանց ինչ յիշելոյ զրանից պատահանաւ նորին որ առ. ժելապրութեան Բուղի էր, յորմէ զուշակէ Հ. Սարգիս զյետոսիս խորհուրդ նորա ի խնդիրն յայն պաշտպանութեան վարժարանին, և ոչ այլոյն միայն, այլ և ինքեան նա տեմ, իրրեւ խորհանդ հնարք էր ի գերեւ ելլին։

Վկայութիւնն զոր խնդրէր ի Հ. Սարգսէ՝ ոչ բան ցանկութեան էրաւ լինի, այլ բան իրացն ճշմարտութեան. զոն որոյ կամի վրէժս խնդրել ի նմանէ, ընդ այն, և խնդրէ վրէժս այսպէս. զրէ նա Բուղի առ ատելութեն ուսանոց ի Փարիզ, և յայտ առնէ նմա, թէ ոչ միայն չուզի ինքն զնոյդխոհրդեան ինչ ընդ վարժարութիւն Մ. վարժարանին ի Հռոմ, այլ ևնամուսնոց հաճութիւն յոյժ ընդ այն, և թէ ոմանք ի միաբանից վնասիցեն, որոց գլուխն է Հ. Սարգիս, նա և միայն որ զնոյդխոհեալոյ փոխադրութեանն այնորիկ ի Հռոմ. և զայս զրով յայտարարութիւն էր հաղորդէ զրով Հռոմեայ Նուիտացին ի Փարիզ։ Ահա անտրդ վրէժխնդրութիւն Յովհաննու Մարտոյ փոխանակ պաշտպանութեան վարժարանին։

Թէպէտ և կամի Հ. Սարգիս զարձեալ տալ Բղեայ նորա զընդարձակ և զործուն պատասխանին, բայց կասկածանէ գնա անտի զարձեալ փոսորկին, յուսալով տակաւին զգաստութիւն նորա, այլ ի զուր, յամառեալ նորա ի նոյն վատանձնութեան և կեղծաւորեալ բարեպաշտու-

ԳԼՈՒԽ. ԺԱ.

Լոր վանուցն Հ. Մկրտչի Աղբերեան և քննուբիւն ընդ արդիւնս գրուցոց պատմագրեան նորա. — Լոր գնացից Գեր. Հիւրմիզի ի Փարիզ, և յամենունելի նորին ասի. — Բողոք վանականից ընդ երթ նորա ի Փարիզ. — Կարճ Գեր. Հիւրմիզի. — Հարցումն ընդ այլ Հ. Սարգսի. — Պատասխանի Գեր. Հիւրմիզի. — Անուշաս բանիք Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիզ. — Յայտնութիւն նենգութեան Յոհաննիսեանց Մոդրատի. — Ամբաստանութիւն Գեր. Հիւրմիզի զՀ Գաբրիէլի. — Որոշումն միաձայն բոլոցա ընդդէմ յԱնդիսանաւորէ ժողովի. — Տեղեկութիւն առ Պապն զՄ. վարժապետութեան. — Գարձ Գեր. Հիւրմիզի ի Վենետիկ. — Բողոք Հ. Գաբրիէլի առ միաբանսն ի վանսն. — Բողոք հանրականաւ Հայոց ընդդէմ փոխադրութեան Մ. վարժապետութեան ի Հռոմ. — Պատճառ նեղութեան վանիցն փոխադրութեան Մ. վարժապետութեան ի Հռոմ.

Գալեմ Գեր. Հիւրմիզի առ Հ. Սարգիս, յորում ծանուցանէ զմահ Հ. Մկրտչի Աղբերեան, և զկնի Գաբրիէլեան երթոյ ի Փարիզ, օրինակ գայս.

« Յանգիպեալ որպէս զոմանց ծանուցանել վերադառնալ և որոց ընդ Ձեզ են վ. վ. Հարցն, զի վատառողջ ծերունին մեր, վ. Հ. Մկրտիչ վարդապետ յերկիւղ ընդ այդ տաւրոսեան կնքեաց զրաղմարդեան կեանս իւր, ննջելով հեղիկ զքուն արդարոց : Որոյ ի նեղսատ տարբնաւէր և տառապաւէր հոգւոյն՝ որպէս առ ի վանս քահանայք նոյնպէս և զամբ այդր ամենայն երկուս երկուս գտանեն, զի վտիտացի առ ցանկալին իւր բարեխոսել վասն վիրաւորելոցն :

«Ի ցոյց երախտապարտութեան միոյ ոմն այնպիսի որ վաստակաւոր Մխիթարութեան Բազեցաք զնա յուրոյն չիրմի ի մեծի աւանդատան։

«Յաւելուա զեկուցանել զի ըստ խորհրդոյ Մխիթարեան՝ յուռթս յայսմիկ, եթէ Տէր կամեցի, ուղեւ եղէց գալ այդր և բերան ի բերան խօսել ընդ Քեզ, և լսել ոմն ի Քէնէ, որպէս զի մխիթարեան խորհրդով մարթասցուք ըստ նս յառաջ վարել զօգուտ Մխիթարեան և զվարժարանիդ ի փառս Աստուծոյ և յօգուտ ոստոստելոյ ազգիս։

«Մաղթեմ ողջ լինել

«Յարգոյապատիւ Վերապատուութեանդ

«Վենետիկ. 4 մարտի 1854.

«Ն. Ծ. ԳԷՄԱՐ Վ. ՀԻՒՄՄԻՒՋ

«Արքեպիսկոպոս և. ընկ. Արքայ.»

Առաւօտ ի գէպ է և արժան իսկ առնել ինչ ինչ քննութիւն զրանից վերոյիշեալ Թղթոյն. նախ՝ թէ զինչ էին արդիւնք վաստակոց և բազմարդիւն կեանք հանգուցելոյն, Հ. Մկրտչի։

Ա. Ասկզբնութիւն Հ. Մխոյէլի Զամչեան ի պատմագրութիւն Հայոց, և ի Վահան Հառաղ։

Բ. Առաւաժարանութիւն, զնոսա ոչ տպագրեալ, յորում Հառագրի զարմրոզութիւն հայասանեաց եկեղեցւոյ։

Գ. Թարգմանութիւն զրոց Հայոց ի լատին լեզու, առ ի ցուցանել զուղղափառութիւն Հայոց եկեղեցւոյ։

Դ. Թարգմանութիւնք Փիլոնի Երրայեցւոյ և Եւսէբիոսի Պամփիլեանի, նոյնպէս ի Լատին լեզու։

Ե. Վարք սրբոց, յորս ցուցանէ զԱստուածամէր և զառաքինութիւնս հոգեւն նոր։

Զ. Մասին Վարուց սրբոց, համառօտութիւն տհաճելի զործոյն։

Է. Թարգմանութիւն գրոց Թաւանի յետագոյց ևիսկ, յորում ցուցանի կարեւորութիւն հաւատոյ :

Ը. Թարգմանութիւն բարոյական գրոց Ագաթոնի և Սենեկայ ի Լատին լեզուէ :

Թ. Թարգմանութիւն Տարեկան Առածոց մասնիցն ի Լատին լեզուէ :

Ժ. Ծանօթութիւն գրոց Թեսաւրոսի Բարգմանեալ ի Հայր Վերդանէսէ Ակէրեան :

ԺԱ. Դիմառնութիւն Զարից Վերջնոց, բարոյական ծանուցանող ծագութիւն տանատուր :

Թող զայլ աշխատասիրութիւնս և թարգմանութիւնս բարեյաճան գրոց նորա որ յաշխարհիկ լեզու, Դեղ կենաց, և այլն :

Երկարեղ՝ թէ յորմէ էր առաքինասէր և առատաձեռն հոգի նորա :

Ա՛չ ապրէն յերկայնութիւնս և յազգասիրութիւնս և յամենայն կեանս նորա :

Եւ երբեք՝ թէ արդարեւ ըստ խորհրդոյ Աստուածութեան գնացեր նա ի Փարիզ. և թէ կամ՝ հարկաւորութիւն բերեալ ի բերան խօսելոյ ընդ նոսա որք կային անդ. և թէ արդ և ընդ որոց խորհրդով լսաւ նա յառաջ վարել զոգուան հասարակաց . . . Այս ամենայն յայտնացեալ ի գալ նորա ի Փարիզ :

Անտ յելս ելոյր 1854 ամի գնոյ հասանել Գեր Հիւրմիզ ի Փարիզ, հանդերձ երկու վարդապետօք, Հ. Յովհաննէս Թրինոյ, և Հ. Եսայիս Մղրտիան, և ահա հասանեն հնագհնաւ նէ նամակունք ի վիննեակոյ ի գանագան անձանց վկայութիւնս Հ. Գաբրիէլ ի Փարիզ, յորում գանգատին և բարկին ընդդէմ Գեր. Հիւրմիզի վասն գնալոյ նորա ի Փարիզ իբրև խորհրդով Աստուածութեան :

Գրէ ոմն այսպէս.

“ Ի գործս և ի խորհուրդս նկատողդ չէք մեր մնան և
“ բանիւն. ոչ յանուն Աստուածութեան գան, այլ յանձանց :
“ Եթէ խորհրդոյ Աստուածութեան անկն մնացականին,
“ ապրէն և յայս կեանն խրախոյս ասատութեանց ոչ ար-
“ կանէին գանձին և զկեղ : ”

Ասա սին պրէ .

« Ածար ի վանս քոյ յերկուց ամենեքեան ի ձեր խորհուրդս
« են և ի վնաս ։ »

Այլ սին պրէ .

« Ի վանս ամենեցուն մեր սկզբաք բարեխնն ընել եւս իրացդ ,
« և ամենեցուն աչք ի ձեզ հայեն ։ »

Եւ այլ սին առաել պրէ .

« Խարէական բանեզործութիւնք բարեկամ մեզ կործեցելոցն
« սոքա յայտ յանդիման խոյտառակեցան ի յայտարարու-
« թիւն նոցա Հռոմայականին որ ի Հռոմէոյ ։ Որ են պատրաստ
« սխալիւն նուաստացուցիչ յայտարարութեանդ , որոյ վե-
« կային Երկիւղք՝ եթէ գրգռես սկսանդ և նզովիւք սուրբ-
« գրեցուք ։ . . . Աչք է խոստովի և անդադրական սկիզբ
« բարեխնդ հոգեկան եղբարդ ։ »

Բայց յառաջնումն և սկզբին Գրոց ասէ , Հասանել և հասարակաց և բոլորական Բոլորի մի , և օրինակ մի անուն առաքեալ առ Գնր . Հրեշտակ , և այն յաւետ հասանելոյ նորա անդ , և Փարիզ , օրինակ գայր .

« Եւ զի ոչ հաճոեցանք և ոչ զիտացաք հասարակաց
« եր գնալն նորա ի Փարիզ և գնացողքն , խնդրեցին անզէտն
« (ի վանական ժողովէ) ազատ լինել ի պատասխանատա-
« րութենէ գործոց և բանից անդ լինելոյց . . . . Եւ թէ որ
« առանձինն գիտացեալ կամ խելամտացեալ գործէ լինի
« զոր ոչ գիտէ կամ հաճի մատուցանել , կամ գիր գործ
« և անձանօթ գիր կամ գործէ ասէ առ ասոր գոյժ
« խնդրոյ , որոյ պարտաւանդեցի ազատութիւն մատուցա-
« նել , և ընդունել և՛ ի մերձել գասուցեալն կամ գրեալոյ
« յասելն , գիտացեալն սմենեքեան զի ասոյն ի գիտանել և
« ի կամաց մերոց այդպիսի գործ կամ բան , ասոյր և սրտա-
« գոյ բանից Աստուծոյ , վասն որոյ և հաւատաս իսկ պահանջեաց
« ի մէնջ , ասոյր և սրտագոյ , կարծեաց , իրաւանց և յաւուց և
« սրոյ և մեր և գործոցն ։ »

Ահա յայտնեցաւ ամենայն , զի ոչ բան խորհրդոյ մատու-

նախնեան գնացեալ էր ի Փարիզ Գնր. Արքայն, "և զի ոչ
հարկաւորութիւն կայր բնդեան ի բնդեան խօսելոյ նորա ընդ
Ա՚ն ապրիլն արդարանայ Հ. Սարգիս ի կարծիս էր որ զնոյն
չուխնեն Գնր. Հրամիրեալ, թէ և Զամնանայն ինչ յանձնել
և իրրև գործէ, և ոչ թէ խորհրդով Մխայանութեանն
և առնէ ։ ՚՚

Զառաջս գնալոյ Գնր. Հրամիրեալ ի Փարիզ կրկին լինի.
մի՝ ի գործ գնել զիսհատրութիւնն Մ. վարժարանին ի Հռոմ,
և մեա՝ հանել զՀ. Գարրիել ի Մ. վարժարանէն, և ի տեղի
նորա զՀ. Ռամայել կարգել. և հաստատութիւն այսմ, ոչա
նամակ Պապն Ագրահամ Ազանեցի առ անհրաժեշտ էր
Պապն Յովհաննէս Մարտա ի Լնդոն, որ ունի օրինակ
զայս.

" . . . . . .

. . . . . ,

" Վերապայծառ Արքեպիսկոպոս և Արհամարհալի վանից
" արդեն Ղազարու ի Վենետիկ, քանի մի վարդապետաց
" այսօր և վաղն հաշիլ ունին ընդ մեզ ։ Հարցուցի թէ երբ
" ունի երանել ի Համազարհ գնալ ի Փարիզ, ասաց զկնի մի
" ոչ աւուրց ։ Խոստացութիւն ընդ նմա խնդրեցի մի ապա-
" հանջուին Հռոմէնց չատ մեծ է, և ասի թէ մի ոմն Անգղիա-
" ցի պաշտօնակատաց Փարիզն ար մտերիմ է յոյժ ընդ Մարտա
" եղբօրն իմոյ, միջնորդի հաստատացուցանել զերկուքն իմ
" Պապն Մարտա ի կոմս Փարիզ փոխադրելոյ զկոչէն
" ի Հռոմ ։ Եթէ այսպէս մեծապոյն և ասելի ընդդիմա-
" դրութիւնս, միշտ և ցաւ լցեալ սրտի իմոյ, զոր ոչ յատա-
" ցայց տեսանել. այլ եթէ ապրուխատուպէս այս խորհուր-
" թիւն գործադրեսցի մեր ոգեաւն երեսի Հորդել ունի,
" Տէր մի արասցէ ։ Բայց ես պատահեցայ թէ ոչ հաստա-
" տաց եղբայրն իմ արասցէ ինչ ընդդէմ կամաց իմոց,
" ասէ ոչ պաշտեմ և խնդրեմ չտնել զայն որ ընդդէմ
" ի սմենայն գիրս և ձայնիւ չէ թէ գիտեմ կրնայ,
" տալի Հայրապետիս Հռոմ միայն և անհրաժեշտ, և թէ միտ

„ զամէն Մարգաս, հոյելով յերանեաս խնդճ ապին
„ մերոյ :

„ Ի Գառնւս. 10 դեկտ. 1854.

„ ԱԲՐԱՀԱՄ Ց. ԱՂԱՆՈՒՐ. „

***

Խոկ հաւատաւոքիւն կարգելոյ զՀ. Ռափայէլ ի տեղի Հ. Գաբրիէլի, էր աննայն պատրաստութեամբ գալն Հայր Ռափայէլի, զի գաննայն առանձին ինչս իւր աճեալ էր ի Փարիզ :

Նախրակ Գապին որ ի Փարիզ հարցանէ յԳեր. Հիւրմիւզ, թէ ընդէր չառնէ նա զխոհարութիւն Մ. վարժարանին ի Հռոմ բան յանկութեան Արքունեին :

Պատասխանէ նա թէ ժառանգ բարերարին Յովհաննէս Մուրատ չկամի զայն :

Յուցանէ նմա Նախրակն զի ուղի Յովհաննու Մուրատ ինքն, յորում հաւանեալ էր կատարել զհրամանն Գապին, փոխադրել զՄ. վարժարանն ի Հռոմ :

Գաղի գայ Գեր. Հիւրմիւզ Հ. Արքեպ Երթեալ ի յանկութեան վաղուց բան Յովհաննէս Մուրատ :

Այսու ամենայնիւ դժուարի Գեր. Հիւրմիւզ փոխադրել զՄ. վարժարան ի Հռոմ, վասն զի Միաբանութիւնն նա չէր հաւան ընդ այն. սակս կամի հանել ի վարժարանէն զՀ. Գաբրիէլ, որպէս զի կամք Հռոմէից կատարեսցի բան իսկ, բան կարծեաց Հայոց, և գայ կամն իւր առաջելոյն Հ. Արքեպ, և յորդորէ զնա հաւանիլ այնմ :

Հարցանէ ցնա Հ. Արքեպ, թէ Հռոմ առնուլ զո՞ իմանայր նա. զՊապն, թէ զպարտուցեալս Մուրատին : Պատասխանի Գեր. Հիւրմիւզ, թէ, „ոչ Պապն չունի բնաւ ինչ տեղեակ
„ ինն զայնմանէ, այլ զամենայն ինչ Կարուսելին Մուրա-
„ ինն, զամենայն առնէ :„

Ասէ ցնա Հ. Արքեպ. „ Եթէ այդպէս ճանաչէք դուք, ապա

“ որով խղճէ մեզ կամք դալ հպատակիլ այդպիսի հրա-
“ մանաց, սեռասելով յայտնապէս զիշատակար և զկոծանիչ
“ հետեւանսն որք ի հպատակութենէ այսր . . .

Ասէ ցնա Գեր. Հիւրմիզդ, թէ “ Ինքն զխոչդ մեզ խոց
“ եղեալ է իմիրայ խղճի մեզ Պաղին : ”

Զայրացեալ Հ. Սարգսի ընդ այն այլանդակ կարծիս նորա՝
“ ասէ ցնա. “ Եթէ Դուք այդպիսի կարծեօք հնազանդիք
“ սակաւն անկրա հրամանաց նորին, պարտ իցէ և հպա-
“ տակդ այդպիսեաս հնազանդիցին . . . Ո՞չ տեսանէն
“ այս զերութիւնդ պատղ է յայտարարութեանդդ որ առ
“ Պաղն, և զորոց բողոքեցաք մինդամ և երկիցս : . . .
“ Զգաստացարուք արդեաւ այսուհետև յայդպիսի խորհրդոց
“ և գործոց վնասակարաց . . . Մխարանութիւնդ արդէն
“ քաջքայեալ է բարոյապէս այսպիսի վարչութեամբդ, մի
“ քայլ մնէք զոյն և բնական. խնայեցէք յարդիւնս վատա-
“ կոց հիմնարկին ուխտիդ, և աշակերտաց նորին, և զգաս
“ չար յաչխատութիւն իմ վասն կարօտելոց ազգիս , ”

Զայս և առաւել քան զոյն բանս խրատու և ազդրանաց
խօսեցաւ Հ. Սարգիս յանդիման ամենեցուն հզօրաց իւրոց
ոսհատարակ, և սեաւ խոտակրութիւն նորա ժամ իրրև ել-
լոյս. և իրրև տեսանէ նա, թէ ի նոյն միտս յամառեալ կայ
Գեր. Հիւրմիզդ, յայնժամ ասէ ցնա ցասագին սրտիւ և
“ Ինչ մի միայն ունիմ, զի և նովէ զամենայն ընդդիմանալ
“ յԱրրայութիւն , ”

Ասէ Գեր. Հիւրմիզդ. “ Զոմանի թէ չէի ընդդիմալ. ցասեալ
“ օրն այն յորում ընդդիմացայ ես : ”

Ասէ Հ. Սարգիս. “ Այո՛ ցասեալ օրն այն յորում եսաւ
“ ես վկայութիւն ընդդիմանալ : ”

Զայս ասացեալ՝ երանէ յիրեարց նորա զայրացին սրտիւ և
անպատուաբանութեաբ, թէ “ Քաւեալ եմ ես յանկրա գործոյդ : ”

Թէպէտ Գեր. Հիւրմիզդ հրամայական իրաւամբ խոսէ,
և ի կարծիս իւր յամառէ, սակայն առանձինն խոսէ ընդ
Հ. Սարգսի խոնարհութեամբ, խառնականելով զիշատակս իւր

և խնդրելով ինձանէ խորհուրդ առ ի գործման տանել այնմ, թէ գինչ տեղեկութիւն կարէր տալ Հռոմէոյ գևղից իրացն որ ի Փարիզ, գխոհարութեննէ Մ. վարժարանին ի Հռոմ, և գխոհարութեննէ պաշտօնէի նորին, Հայր Գաբրիէլի Այվազեան:

Արգահատի նմա Հ. Մարգիս, և խորհի լինել Հ. Գաբրիէլի գառաջս առնուլ չարին. ահաբանին և հառաւոտն ի միջ իրեանց և Գեր. Արդէն քանի մի պայմանս, և յորինեն նամակ մի ի դէմս նորա առ Պապն ի Հռոմ, տալով նմա տեղեկութիւն, թէ գտեալ էր իւր գՄ. վարժարանն ի բարեկարգ վիճակի բաս ամենայնի, և թէ վասն փոխարութեան պաշտօնէի նորին, Հ. Գաբրիէլի, հարկաւորեալ է ընդհանուր ժողովով առնել:

Հարկաւորի Գեր. Հիւրմիզ հաւանիլ պայմանացն, համաձայն գոլով այնց բաղդոյ վանականաց: Թէպէտ և խոտանայ նա առաքել գնամանն ի դէմս իւրոց առ Պապն ի Հռոմ, յարդարացուցանէ Հ. Գաբրիէլի, բայց ոչ գաղտուկ նա յամրանալոյ առ Եուխրատի Պապին, և առ Արքեպիսկոպոսի Փարիզու գանհնազանդութենէ Հ. Գաբրիէլի. վասն որոյ կոչի նա յանկարծակի ի Հռոմ և յանդիման: Եւ նա անվհատ համարձակութեամբ ոչ պատասխանի, թէ պատրաստ է, ինքն երանիլ ի վարժարանէն, եթէ Գեր. Հիւրմիզ ուրանայցէ զխոստումն իւր թէ առանց ընդհանուր ժողով չառնէ ինչ որոշումն ի վարժարանի:

Անդ այսպիսի լինին եղք գոլոյ Գեր. Հիւրմիզի ի Փարիզ ի Մ. վարժարան... և անդ առաքեալ քաղաքավարութենէն նորա յամենայն ուրեք...

Ի 21 ապրիլի 1854 ամի երանէ Գեր. Հիւրմիզ ի Հռոմ, հանդերձ երկու վարդապետօք Եկեղեցւոյ ընդ իւր, գառնալ ի Վիեննեայ, չհարեալ վճարել ինչ բաս ցանկութեան նորա իւրում:

Ի վախճան անցք Գրի Հ. Գաբրիէլ Բոռղի երթեալ գտանել բաղքաքան Բղեշխ որ ի վանականաց, տալով նմա տեղեկութեան զոլոյ գնալոյն Գեր. Հիւրմիզի ի Փարիզ, և

պատանեաւք նորա, հանդերձ օրինակաւ պատասխանոյ որ առ Պապն ի Հռոմ, օրինակ գրոյ.

«Արդ ե՛ս Սիրեցեալ Հայր.

«Զպատասխանի նամակին զոր գրեցեր ի 21 մարտի յանուն քո և ի դէմս միաբանիցդ և միտիս եղբարց որ գքեզ, հաստացանեմ առաւել գրով գրոյիլով և հաւանեցեալ եմք Վ. Հայր Սարգսի և Սիրոանոյ:

«Եւ նախ այնմ միայնիւք, զի եկատարդ այսր այր բազում անգամ յայտ արարին բանիւ եթէ ոչ միայն իշխանութեան ինչ ոչ ունին, այլ և ոչ կամս ամենեւին, բնութեամբ վճարելոյ զիրան զոր վասն եկիալ էին, քան այնմ և զդրամս յղացան ի բանտանելոյ իմերոյ մեր:

«Երկրորդ՝ զի Թէոդիտ և չորից և հնգից երթեալ տեսին զնուիրեալ Պապին որ ի քաղաքին, և առանձինն խորհուրդ կալան ընդ նմա, այլ Թէ զինչ ինչ խոստացեալ էցեն և զինչ սահմանեալ ինքեանն կամ խորհրդակցեցին, և Թէ ժամուցին առ նա Թուղթ կամ հրամանս առաքէ, և յինչ միտս, մեք ոչ գիտեմք ամենեւին:

«Երրորդ՝ զի ի գրոցդ մեր և ի ժողովս ընդ նոսա այս ինչ էրք և այսպիսի և եթ սահմանեցան և հաստատեցան.

«Ա. Զգաստանալ եղելոյն ցարդ ի միաբանութեան որոց և յայտարարութեանդ պատշաճից և անպատշաճից՝ Թուղեալ ի ժողովն ընդհանուր, որ գոհանալով անպատճառ լսեալ հանդամանաց ժամանակիս զգեստութեան մերոյն իմոյն:

«Բ. Մինչեւ գոհանալ այնր ժողովոյ՝ մի՛ եւս գործել ինչ այնպիսի մեծ կամ փոքր որ բազմիցդ Թուղթ հասանել եղանել որոց և վախճանի միաբանութեան:

«Գ. Իրաց դնել գործադրել միաբանութեան Վ. ժողովրդեանն ի Հռոմ:

«Դ. Առնել ի սմա առ ժամս և ոչ մի ինչ միաբանութեան ինձանդ:

„ և. Գրել Արտային առ Արտաշէս Պապն պատասխանել ըստ օրինակին ծրարելոյ նամա, միայն վանական ժողովոյդ առնելով իշխանութիւն առնել ինչ փոփոխութիւն ի բառս ինչ նորին, եթէ այնպէս պատշաճ թուիցի, բայց ոչ ի կարեւոր խնդրոյն։

„ Արդ մեք երեքին Հարքս որ ի վարժարանիս յայս առնեմք, դի եթէ արտաքոյ այսր ամենայնի կամ հակառակ ինչ այսոցիկ խորհուրդ և բան լինի և կամ գործիցի այդր և այսր և ի Հռոմ, անպատճառ եմք մեք և զերծք ամենեքեան յամենայն պատասխանատուութենէ, և այժմէն յորդորեմք ամենայն ընդհանուր ընդդէմ ամենայն ձեռներեցութեան որ լինիցի յայսմանէ ի ձեռն վանական ժողովոյ և կամ Առաջնոյդ։

„ Ազէ լեր, և զիմաստութիւն պայծ ընթերցիցես ի քոյ ամենայն ներքոյ։

„ Ցոյց զնա և Գնէր. Արտային, եթէ պիտոյ լինիցի. և թէ այն չիմանիցի պատշաճ, ծանո՛ ինձ, և յլեցից առ նա զպատճէնն տալեն առանձինն։

„ Ի Փարիզ. 22 ապրիլ 1854.

„ Հ. ԳԱՖՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ. „

Յետ քանի մի աւուրց անտի լսի թէ Նուխրատ Պապն ընկալեալ էր հրաման ի Հռոմէ մի ևս գնալ փոխադրութեան Մ. վարժարանին ի Հռոմ. վասն դի խնդրեալ Պապն զոհաճութիւն Գաղղիոյ Տէրութեան որ ընդ փոխադրութիւնն այն։

Եւ յետ ոմանց ինչ աւուրց անտի հասանէ և բողոքական Բուդէ մի ընդ այն Գաղղիարէն լեզուաւ առ Գաղղացւոց Տէրութեան, առարկութեամբ Հռոմէական Հայոց նիստ նաց որ ի Պօլիս, և ճառագայթէ այն ձեռամբ Արքին Պէյի Զմառեան առ Նախկնան արտաքին գործոց և ուսմանց։ Զորոյ հայելն օրինակն դիցաբ առ իրեւ նորագ ապացոյց, թէ

նոյնն իսկ հռոմէական Հայոց միաբանն մասին հակառակ էր մեզ վերոյիշեալ Մ. վարժարանին ի Հռոմ, թէ Լուսաւորչական միաբանն մասին, որ նոյնպէս ունէր և ունի իրեանց վանքերը զրաւելու պատճառները :

Բողոք Իշխանաւորաց հռոմէական Հայոց Պօղոս բնդդէմ փոխադրութեան Մուրատեան վարժարանին.

« Մեք ստորագրեալքս Կաթոլիկոսական Հայ Կաթոլիկ ժողովրդեան դլխաւոր երեսփոխանքը, ձենք սրտի ցաւով իմացանք որ մեր Մուրատեան Դպրոցը որ ինչուան հիմայ ի Փարիզ կեցաւ պատճառով և խորհրդութեամբ, կուզեն անկէ դուրս Մէջն Խաղոյ մէկ քաղաքին մէջ փոխադրել տալ, ասիկայով նոյն դպրոցը կառավարող Մխիթարեանց վարդապետները :

« Այս դպրոցիս հաստատութիւնը Փարիզի մէջ դիտմամբ մը արդիւնք չեղաւ, այլ մանաւանդ խոհական կշռութեան, հինադրին առաջարկեալ նպատակին հասնելու լաւագոյն միջոցները դիտելով :

« Եւ նախ, նոյն իսկ Մուրատեան Դպրոցին հաստատութենէն շատ տարիներ առաջ, Փարիզի Դպրոցները և ուսումնարանները Հայ երիտասարդաց իրր թէ ժամադիր տեղին եղած էին : Հին ավանդութիւն մըն էր իրենց հոն երթալ՝ ընդարձակ, գիտնական ու հաստատուն կրթութիւն մը ընդունելու ուսմանց և մասնաւորութեան առին ճիւղերուն մէջ : Ասոր և Մխիթարեան վարդապետաց ընտրելիք բան չէր մնացած, առ ընտրութիւնը չատնցուելնէ երած էր ապգը :

« Եւ ինչ փոխանակ Մխիթարեան Հայք չհետեւին այնպէս ավանդութեան մը ընթացքին որ իրենց ձեռքը չէր արգիլել : Փարիզէն դուրս ոչ կրնային իրենց Սահակ Մուրատէն յանձնառած Հայ երիտասարդներուն կրթութեան և ուսմունքի պաշտօնը ուրիշ օտարատր կերպով կատարել. Փարիզ, ուր որ երթային այնչափ երիտասարդք բարեկարգ կեանքի մը ավանդութենէ կրնային

պիտի բլլար : Անոր համար ալ ոչ մի ինչպան հետևի Փարիզի Հայկական դպրոցին օգտակարութիւնը վրայ տարակոյս մի ունենար, ամենքը միարերան այս վարժարանին արդիւնքին կը հաշտկեն : Եկեղեցական իշխանութիւնը, որուն կը վերաբերի կրօնական վարդապետութեան ու պաշտամունքի քննութիւնը, և Հատուկաց կարծիքը, ոտպրութեան ամենէն ազդու միջոցներովը, մտրանեցան անկեղծ գովեստներ և վկայութիւններ տալու անոր :

« Մենք ալ չենք փախցներ այս առիթը յայտնելու բարձրաձայն մեր երախտագիտութիւնը առ Մխիթարեան վարդապետս Մուրատեան Դպրոցին, վոնն լուսաւոր և բարեկիր խնամոց որ կը ցուցընեն մեր դաւակաց կրթութեանը համար, որուն պատուղները կը վայելենք ամէն օր, և աւելի պիտի վայելինք եթէ երկնց խնամատուն և հանճարեղ տրծքը հակառակութիւններ չկրէր այնպիսի մարդոցմէ՝ որոնց անշուշտ մի միայն նպատակն է արգիլել և ջնջել այս ամէն աղէտութիւնը որ կրնայ առաջ գալ մեր ազգին մէջ :

« Մուրատեան Դպրոցին ներկայ բարգաւաճ վիճակին մէջ, որ ամէն տեսակ ջանքե և զոհերով առաջանայ, Մխիթարեան Հայր երկնց կրօնական վարդապետութեանցը ամբողջութիւնն այնչափ բազմաթիւ երաշխաւորութիւններ տալէն ետքը, ու ատենէն ի վեր Արեւագան Հայրը իւր փետրաւարի 2 ին առաքելական Նամակին մէջ մեծագոյժ առ վկայութիւն մը տալէն ետքը, արդէ կերպով չենք կրնար մեկնել երկնց դէմ ի գոյ գրուած բռնական միջոցները, բայց միայն ատ որ հատուածն գիտութիւն մը կայ բոլորովին խառնելու ու բարոյապարկ ընելու ազգը :

« Թոյլ տուէք մեզ աւելցընելու նաև որ Մուրատեան Դպրոցին դէմ ի գոյ գրուած ատ հնարքը այնպիսի պակասութիւն մը կը յայտնէ անհատութեան և կասկածի տեղի մը, որ անտրակոյս նոյն իսկ Դպրոցին ու գոյն վարող կրօնական Մխիթարեանեն աւելի բարձր տեղ մը կը գրաւէ, քան թէ նոյն իսկ Դպրոցը, ու յիշեալ Մխիթարեանը : Իրաւցնէ, գիտութեան արժանի բան մըն է, երբ մէկ կողմէն Գաղղիոյ

ին դանուած գպրոցի մը վրայ անհանգիստ ըլլալ կը ձեւացուի, մինչ կոզմէն հանգիստ կը թողուի Աւստրիոյ մէջ ճիշդ անոր նման գպրոց մը, որ է մեր Ռաֆայէլեան վարժարանը, նոյն ակզբանէ ու նոյն Մխիթարեան ձեռքին տակը կառավարուելով։ Ա՛ս երկու գպրոցներն ալ հաւասարապէս սիրելի են մեզի, ու երկուքին համար ալ մի և նոյն բարեացակամ պաշտպանութիւնը կը խնդրենք։ Ասոնք կը բողոքենք մեր Փարիզի ազգային գպրոցը ուրիշ ոչ և իցէ տեղ փոխադրելու ամէն կարծիքի դէմ։

« Կը բողոքենք նախ, վասն զի Մուրատեան Գպրոցին ու անջախտութիւնը ուրիշ բանի պիտի չծառայէ, բայց եթէ անոր յարգը կորսընկնելու, ու նոյն իսկ անոր գոյութիւնը վճռապէս վտանգի մէջ դնելու. մանաւանդ եթէ մտածուի անանկ տեղ մը փոխադրելու որ ամենևին չկրնար պատճառել ուսումնարանութեան և քաղաքականութեան պայծառութեանը։

« Կը բողոքենք նաեւ երբեւ հայր հոգ և մտմտուք ըզգալով մեր զաւակացը համար, որ ամէն տղոց՝ ամենէն վտանգաւոր հասակի մէջ՝ երկնք երկնց գլխուն ճոթով, մեծ ազգի մը ապականութիւններէն պաշարուած, ու ալ չունենալով առջեւնուդ ու անձ երկնց զսպոխարկներուն իմաստուն խրատները, չարաչար վտանգներու մէջ պիտի կրնան երկնց կրթութիւնը ու բարոյական կեանքը։

« Վերջապէս կը բողոքենք ի նպաստ դիւրութեան, ազգին քաղաքական յառաջադիմութեան, և ամէն ըսնկը, ի նպաստ խաղաղութեան, միաբանութեան, բարեկամութեան և նոյն իսկ կրօնից։

« Գաղղիացւոց վեհափառ Կայսեր բարձր խոհականութիւնը յոյս կուտայ մեզի, թէ ասանկ վճռի մը մէջ՝ որ չէ թէ միայն Հայ ազգին օգուտը, այլ նա և Գաղղիոյ պատիւն ալ, թէպէտ և անուղղակի կերպով, խաղալիք կընայ, պիտի չմերժէ իր գործուած պաշտպանութիւնը տանիլ Վարժարանին մը վրայ որ հիմայ երկու ազգաց մէջ երջանիկ կապ մըն է, ու ամէն տարի իր աշակերտները կը խրկէ Աւստրիոյ գաւառ-

նկատմամբ Գաղղիոյ լուսաւորութիւնը ու քաղաքակրթութիւնը տարածելու։

„ Ի Կաստանդնուպոլիս 13/25 Ապրիլ. 1854.

(Աստղագրութիւնք։)

Թէպէտ և հետանոյ առ ժամն վտանգ փոխադրութեան Մ. վարժարանին ի Հռոմ, վասն երկուց պատճառաց, առաջին՝ զի ազգն ոչ կամի զփոխադրութիւնն զայն, և երկրորդ՝ զի տէրութիւնն Գաղղիոյ ընդդիմանայ այնմ յայտնապէս։

Սակայն վտանգ հալածանաց որ իւրից վրէժխնդրութեան ոչ հետանոյ երբէք։ . . .

Ազգն և Տէրութիւնն ազատ էին ի վրէժխնդրութենէ Մխիթարեան Առաջնորդին և համախոհից նորին, բայց ոչ Մխիթարեանքն որ ի Փարիզ, մանաւանդ թէ գնաս հանդերձ զրպնէշ և գրգռիչ Ազգին և Տէրութեանն։ . . . Ապա ինոցանէ խնդրի վրէժ, և նախ յայնմանէ պատրաստ էր սկսանել, որոյ անուանն արդէն կասկածելի ցուցեալ էր Հռոմայեցւոյ ձեռամբ իսկ Մխիթարեանց. այս է, ի Հ. Գաբրիէլէն, որ հոգին էր վարժարանին և ոչ բազում հանդերձեալ վերատեսչի նորին։

Եւ զանազի հիերեմիկոսական յայտարարութեանցն որ ի լատերի Զմիւռնոյ յետս կոչումն ոչ էր արարեալ, պարտ էր զի հանդիպի վարիցի ի Մ. վարժարանէն, և ի տունն նորին այնպիսի անձն մի դիցի, որ առ այժմ տկարացուսցէ զազդեցութիւն վերատեսչին, և ապա այնպիսի իմն շաւիղ կայցի զի վարժարանն անզգալի նզմանակաւ ի Հռոմ փոխադրիցի, կամ թէ ի Փարիզ եւս մնասցէ, նզմանակ ներքին կրթութեան բոլորովին փոխիցի, իբրև նկեղեցական ինչ դպրոց լիցի, կամ իբրև պնորընծայարան վանից սրբոյն Ղազարու։

Սակայն ոչ միայն ամենայն անձինք Մխիթարեանց չէին յայս կարծիք, այլ և կասկածելի էր թէ վերատեսուչ Մ. վարժարանին ընդդիմանայր այսմ յայտնապէս, եթէ այսպիսի ինչ հրաման ուղղակի ի Գեր. Հիւպիւզ ընդունէր։ Ապա

յայտնի ինչ էր, զի պիտոյ էր Գնր. Հիւրմիւզի և զայս նուազ զՓառաւոցն ի կիր առնուլ, և նորա արդէն այսր բանի գործիք զԳնր. Հիւրմիւզ ի կիր առեալ էր Ցայտարարութեամբն Մխաբանութեան, գրեալ առ Նուէրսկ Պապին ի Փարիզ՝ ծանուցանել զկաման իւր. զոր և ցուցցուք ի սմին կարգաւ։

ԳԼՈՒԽ. ԾԲ.

Յանդիմանութիւն և խրատ Նուէրսկի Պապին առ Հ. Գաբրիէլ, և պատասխանի տրա առ նա, և հանձնարարեալ նորա զկնի այսր։ — Գիր հրաւիրանաց Գնր. Հիւրմիւզի առ Հ. Գաբրիէլ, և պատասխանի տրա առ նա. — Խոնարհագոյ Հ. Սարգսի առեալ Հ. Գաբրիէլի. — Հրաւէր Սրբոյն Պետի առ Հ. Գաբրիէլ. — Թուղթ Գնր. Հիւրմիւզի առ Հ. Սարգիս. — Թուղթ Գնր. Եղուարդոյ առ Հ. Սարգիս. — Ժամանումն Գնր. Եղուարդոյ ի Փարիզ. — Ակնկալութիւն բարեաց ի Պապէն Հռովմայ. — Երթեցեալ յաղթանակ Մխիթարեանցն ի վերայ թշնամեաց իւրոց. — Պատասխանի Գնր. Հիւրմիւզի առեալ յոդոյ Հ. Գաբրիէլի. — Փնտռութիւն բանից Գնր. Հիւրմիւզի.

Յելս յունիսի 1854 ամի, կոչէ Նուէրսկ Պապին զՀ. Գաբրիէլ առ ինքն յօժարեալն իւր, և յետ ծանր ինչ յանդիմանութեան, յաղագս ընդդիմանալոյ նորա փոխադրութեան վարժարանին ի Հռոմ յորդորէ զնա զի դանէ ելցէ ի վարժարանէն և երթիցէ ի Հռոմ արդարացուցանել զինքն։

Պատասխանի տայ Հ. Գաբրիէլ բանից Նուէրսկի. «Կամ «ակն պիտոյ իմ զինէ են յանցանքս զի երթեալ արդարացու«ցանել զիս ինքս աշխատեցայց։»

Առ Նուէրսկն, «Ես ոչ գիտեմ և ոչ գիմարդապետութեանդ

„ զանգատ ինչ լսեալ եմ , բայց տեսանեմ զի այլք պղտո-
„ բեալ են զմիտս Սրբազանին վասն քո , չգիտեմք ինչ
„ կրից չարժեալ . ուստի բարւոք լիցի զի անձամբ երթիցես
„ ի Հռոմ , և ինքեն զիտասջիք , զի վատօք դառնաս այսր : ,,

Առ Հ. Գաբրիէլ . „ Ես ամենևին չունիմ միտս ընդդէմ
„ կամաց Մեծաւորիս վայրկեան մի կալ ի վարժարանիս .
„ բայց յայլ կողմանէ որովհետև ոչ գիտեմ զկանոնաս ,
„ և ի գուր բամբասեալ եմ , ոչ գիտեմ թէ զինչ հարկ կայցէ
„ զի երթալ ի Հռոմ երթայցեմ , և ոչ մանաւանդ ի վանս
„ առանձնանայցեմ : ,,

Վերոյն վկայէ Նուիրակն , թէ „ Ես յամենայն ուրեք և
„ յամենայն բերանոյ գովեստ միայն լսեալ եմ զքէն . բայց
„ երկնչիմ զի նախանձոտ մարդիկ կասկածելի ցուցեալ են
„ Սրբազանին զաղտուկան կարծիս քո : Վասն որոյ թուի
„ ինձ թէ բարւոք լիցի , և պատիւդ ևս յաւելցի , եթէ անձամբ
„ ի Հռոմ երթիցես , և զգրպարտիչդ խայտառակիցես :
„ Միայն թէ , ասէ , վասն այսորիկ ոչ գոյ հարկ փութալոյ .
„ Թող աշակերտացդ տարեկան քննութիւնքն արտիւալ առա-
„ տեսցին , և յետ Հոկտեմբերի երթալ գնացես : ,,

Հ. Գաբրիէլ խորհրդոյս այսորիկ ոչ ընդդիմանայ , և Մեծաւորին գրեալ հարցանէ թէ ՚երբ պարտ էր առնել զքնդհանուր ժողովն , որպէս զի և ինքն ևս ի Վիննաեկ երթիցէ , և ապա եթէ վերտին ի փարիզ դառնայցէ , ընդ Հռոմ անցանիցէ :

Գրէ Հ. Գաբրիէլ զիւղին զայն ի 21 յունիսի , և ձեայ օր բան օրէ պատասխանուց , և ահա յետ քանի աւուրց անտի ընդունի պատասխանի թղթոյ իւրոյ , օրինակ զայս .

„ Արդոյ և վ. Տեառն Հ. Գաբրիէլի վարդապետի սիրա-
լիր ողջոյն .

„ Վիննաեկ . 2 յունիսի 1854 .

„ Ահն ինչ գայն եսի գրել առ Ձեզ , ընկալայ զգրեալդ

*ի 21 յունիսի անցելոյ հանդերձ ծրարիցն իմովն ինձ եւ խնդա-
մուռ եղէ ամենայնի : Ես ի գարձին իմոյ այսրէն խորհրդով
առաքակայիցդ Մխիթարեանս գրեցի ի Հռոմ առ մեզ
փոքր մի եւս պարտ դի ընդհանուր ժողովով տեսցէ Մխի-
թարեանս գիրս վարժարանիդ : Եւ ընկերակ պատասխանի
խնամ թէ չէ մարթ զհրաման Պապին ընդ ժողովով արկանել .
և երկրորդեցաւ մեզ նոյն առաջին հրամանն , որում չմարթէ
հակառակել և ոչ գիտացումն նորին յապաղել այլ եւս
ի գլեա մեզ ամենեցուն : Վասն որոյ յորդորեմ զձեզ յանուն
սիրոյ հնազանդութեան զոր խոստացեալ էք Աստուծոյ՝
անդանդաղ եղանել ի վարժարանէդ , և այժմէն ուղեւորեալ
ի Հռոմ՝ զամենայն հնարս հնարել առ հանդուցանելոյ գիրս
Սրբազանին :*

*« Առ այս խնդրելով Ձեզ ի գօրութիւն գնորհս օդնականու-
թեանն Աստուծոյ , եմ միշտ*

« Սիրոյ Վերապատուութեանդ

« Ն . Ծ . ԳԷՄԱՐԳ Վ . ՀԻՒՐՄԻՒԶ

« Արքեպիսկոպոս և ընդհանրական Սրբոյ . »

*Տեսանեմ Փարիզու Մխիթարեանք , որպէս և գրատոր վկա-
յութիւնք վանականաց առուգին , զի թուղթն այն Մեծաւորին
սովորական քաղաքավարութեամբն և ապդնապետ ոգւովն էր
գրեալ , և ամենևին ժողով չէր արարեալ և յայլոց խորհուրդ
չէր հարցեալ , այլ և յայտնի էր ամենք յառաջ պատրաստեալ
լինչ այն :*

*Տեսանէք Հ . Սարգիս յայտնապէս , զի եթէ հրամանն այն
անդանդաղ կատարէր՝ գործոյ վարժարանին և ուսմանց
աշակերտաց նորին ջնաս լինէր . այն զի դեռ չէր յայտնի թէ
գո՛ ի տեղի Հ . Գաբրիէլի կարգել ունէր . և զի թուղթն այն
առ Հ . Գաբրիէլ էր միայն գրեալ , իսկ առ ինքն նրբեւ վե-
րատես չկայր հրամանն ինչ ուղղակի . վասն որոյ խորհուրդ*

տայ Հ. Գարբիէլի թէ ինչ ունէր առնել պատասխանի, զոր և ինքն եւս առարքութեամբ իւրով կամէր հաստատել, և որ ունէր օրինակ գայս.

« Առաւաձապատիւ Հոգեւոր Տէր.

« Ի Փարիզ. 10 յուլիս. 1854.

« Ընկալեալ յառաւօտուս զշնորհեալն ի Վեհէդ յՀ առաքայս ամենեան, փութամ յայտ առնել սովիմք զի ես իմովանն պատրաստ եմ կամակար մօք և անդադար եղանել ի վարժարանէ աստի. սակայն Վ. Հ. Սարգիս Վերատեսչ Վարժարանիս արդել զիս ի կատարելոյ առ այժմ գայս ակնարկութիւն Գ. Տէրութեանդ, ասելով թէ ինքնին գրեացէ առ Ձեզ զայսմանէ ի մասին, և թէ մինչեւ ցնորոգ ինչ կարգադրութիւն յանձն իւր առնու զամենայն պատասխանատուութիւն գիրացս առաջի Ձեր և այլ ուրուք և իցէ. մանաւանդ զի (ասէ) յորդորական է նամակ Աբրահօրն և ոչ պատուիրողական.

« Հաստատութեան վերոգրելոցս առաքեմ

« Հ. ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. »

Թէպէտ և այսպէս գրել տայ նմա Հ. Սարգիս վերոյիշեալ պատասխանին, բայց իրրեւ վերտին ակնարկեալ ի թուղթն Գեր. Հրոմիւզի, տեսանել անդ վճարեալ վրէժխնդրութեան

ատ ինամել խոպատ. վասն որոյ ասէ ց՟Հ. Գարբիէլ. «Մրեմի՛
« երթայր, պաշտպանեցի քեզ ցարդ՝ յոտակոծ զղջաստութիւն
« հակառակորդացդ. բայց տեսանեմ ես արդ զի վճարեալ է
« չարութիւն ատ. ինոցանէ. վասն որոյ խորհուրդ տամ քեզ
« երանել ի վարժարանէս, և բնակիլ առանձին ուրեք, եթէ
« ոչ կամիս դառնալ ի վանս, մինչեւ այլ արասցէ Տէր Մխա-
« բանութեան. և ես հոգացայց զամենայն կարեւոր պէտս
« քո, և դու պարապեսջիր ի ճառնադրութիւնդ յոդուտ
« ազգիս, և զորոյ ծախսն ապադրեսցեն հոգացայց ես
« յօժարակութենէ առաքելական ազդայնոց։»

Ասէ ցնա Հ. Գարբիէլ. «Տեսանեմ ես զայս չարութիւն
« նոցա յերկուց ամաց հետէ, և դու ասէիր ինձ համբերելոց,
« համբերեցայ։»

Յայտնէ Հ. Սարգիս զայս խորհուրդ իւր Արքին Պէյի, որ բնակի յայնժամ ի Փարիզ, և որ վարկ մեծ ունի ց՟Հ. Գարբիէլէ. զոր նա զխորհուրդն նորա, ճանաչելով քան զԳեր. Հերմոզ. բայց ընդէր ասէ յայլ ուրեք բնակիլն Հ. Գարբիէլ, և ծանրութիւն ծախուց ի վերայ քո լինի. վերնայարկ բնակութիւնն իմոյ, ասէ, պատրաստ է նմա, և զայս ոչ թէ չնորհ լինէ հաստարիմ առնել նմա, այլ չնորհ լինէ ի նմանէ արարեալ ինձ հաստարիմ. մանաւանդ զնելով իմ ի մեծ արդիւն հանել զորդիս իմ ի Մ. վարժարանէն և զնել զնոսա ի զպրոց Վաղիսացւոց, ահա յանձնելոյ զնոսա ի հնամս նորա։

Մինչդեռ այս այսպէս խոհեմութեամբ և խաղաղութեամբ վճարի ի Փարիզ, Գեր. Հերմոզ անխոհեմութեամբ և խռովութեամբ վարի ի Վենետիկ։ Վասն որ երթայր ի Վերսալիա ի Նուէրսիոն և ի գործ դնել զԴրաման Պապին, և առնել արտասխանի Քղմոյ Հ. Գարբիէլի ազատելոյ և ի հոգս յանցանութենէ։

Ի 12 յունիս 1854 ամի ընդունի Հ. Սարգիս նամակ մի ի Գեր. Եղեսարդէ, յորում ծանուցանէ զօրն և զընթացս ուղեւորութեան իւրոյ ի Փարիզ, օրինակ գայս.

„ Գերապատիւ Տեառն Տեառն Վ. երանելոյ վարդապետի խնդալ ։

„ Ընդ որում երկրայիմ զի գրեալ իցեն ի վանաց զնեփաւորութիւն իմ այդր ընդ Պ. Հ. Վ. ահանայ, և զկաս էին գալստեան իմոյ ։ Յուսամ զի Վ. երանութիւնդ յիշելով զառաջին սէր իւր ընդ իս, զոր ոչ երբէք մոռացեալ եմ և ոչ մոռանալոց, հնարելիցէ զիս քան իւրումն անարգանսն ծառայ և մարդասէր բարւոյ ։ Ի 11 ամսոյս ուղոյ լինիմք ի Զիւխթաւէլ եայլ գնեւարդակ չոգենաւս հասանել դէպ ուղիղ ի Փոթն յերկոսի յաջորդ աւուրն. իսկ անտի այդր ուղին ծանօթագոյն է ձեզ քան ինձ ։

„ Կարօտագին անձկանօք սեասլեան Վ. երանութեան և համբուրէն երեսաց ։

„ Մնամ

„ Գերապատիւ Տեառնդ

„ Ի Շամախ. 5 յունիս. 1854.

„ Ն. Մ. և հոգևկցոյդ եղբայր

„ Հ. ԵՒՍԵՄԻ ՀԻՒՄԻՒՋԵԱՆ

„ Արքեպիսկոպոս Շիրակայ. ”

Ի 13 յունիս 1854 ամի ընդունի Հ. Սարգիս նամակ ի Գեր. Հիւսիսէ, յորում ծանուցանէ զերթ եղեալ իւր Գեր. եպեսկոպոս ի Փարիզ, և դնապատկեր, օրինակ զոյս.

„ Կամիմ ծանուցանել Վ. երանութեանդ թղթովս՝ զի պարտաճ եղեալ Մխիթարեանս գալուստ Գեր. եպեսկոպոս այդր ի պատճառս երից վարժարանիդ որք կան ծանօթեն Ձեզ, ի 11 ամսոյս ուղևորեցայ ի Շամախոյ ընդ

Պ. Շ. Վ՚ահանայ դալ այդր ընդ Թուլօն : Ի նմանէ լսէլիք զկարեւորսն ամենայն, և թէ ուրչափ ինչ կրեալ և կրէ Մխիթանեանքն ի պատճառս իրացդ այդոցիկ :

« Մերոյ ոչնչանալ ամենեցուն մաղթեմ

« Ողջ լինել

« Յարդոյապատիւ Վերապատուելիմեանդ

« Վենետիկ . 9 յուլիս . 1854 .

« Ն. Ծ. ԳէՒՐԳ Վ. Շիհմատինջ

« Արքեպիսկոպոս և ընդ . Ասրոյ . »

Ի 15 յուլիսի 1854 ամի ժամանէ ի Փարիզ Գեր . Եղուարդ ընդ Պ. Շ. Վ՚ահանա . ընդառնի զնա Շ. Սարգիս ըստ պարտուց իւրոց և ըստ առաքեանն նորին :

Իրրև լսէ անդէն Գեր . Եղուարդ զկամակատար մուտ հասանելոյ Շ. Գարրիէլի ի կատարումն հրամանի Մեծաւորին իւրոյ, և զսիրով հրաւէր նորին ՅԱրթին Պէյ՝ ուրախանալ և զոհանալ յոյժ զՏեառնէ, իրրև ընդ հրաշ ինչ եղեալ ինամանել, ազատելով իւր ի հոգւոց անտի և ի ցաւոց արդեօք . և դնելով ի մտի, թէ եղանելով Շ. Գարրիէլի ի վարժարանէն՝ դադարէր ամենայն կռիւ, և Սրբազան Պապն Հռոմայ՝ ըստ ի համաչելոյ անտի զգաստութեան Մխիթարեան Միաբանիցն, և այլ բազում ստանձնաւորութիւն ունէր տալ նմա : . . . Մխիթարեանք Վենետկոյ փութասէր յաղթանակ ունէին ասանել . Գեր . Հաստեան արդէն էր յաջողեալ իւրեանց անկանիլ . փակեալն ինամանէ զպրոցն Տրապիզոնի վերադին բանալ . աքսորեալքն ի Պօլսոյ Մխիթարեան Հարքն ունէին վերադին դառնալ անդ հանդերձ փառօք . . . .

Իսկ ևթէ Շ. Գարրիէլ յամառեալ չեղանէր ի վարժարանէն, Մխիթարեան միաբանութեան պարտ էր գրուիլ, և վանքն Հռոմայեցւոյ լինել . այլ ասէր Վ. վարժարանն . . . վասն

այսորիկ՝ զնոյն չուրախանայր և չգոհանայր ի Տէառնէ Գեր. Եղուարդ ընդ կամակար մօք հպատակութիւն Հ. Գաբրիէլի ի կատարումն հրամանի Մեծաւորին իւրոյ . . .

Յոյս այս և երկիւղս այնպէս տիրեալ էին ի մէջ Հերձուածողաց, մինչեւ ի մէջ ժողովրդեան Պօղոյ անգամ լուր ինչ տարածեալ էր, և միամիտ մարդկան հաւատացուցեալ էին, որպէս թէ Գեր. Հաւատնի չկոչին ի Հռոմ և չանկանիլն յաՊապէ, մի միայն պատճառ՝ Հ. Գաբրիէլի յամառելն և չելանելն ի Մ. վարժարանէն . . .

Անյանգստութիւն բանից և կարծեցաց այսոցիկ չկարօտի բնաւ ապացուցի . . .

Եւ տակաւին կամեցեալ Հ. Սարգսի զի կասեցին ասողքն և հաւատացողքն ի մեռոյ յոյսոյ և յերկիւղէ անտի և ամօչեցին, խորհուրդ տայ Հ. Գաբրիէլի ելանել ի վարժարանէն .

Պատասխանի Գեր. Հիւրմիւզի տուեալ թղթոյ Հ. Գաբրիէլի, յորում ցուցանէ զկնիք բնաւորութեան իւրոյ և զվնասակար վարչութիւն իւր, օրինակ գայս .

« Սրգոյ և վերապատուեալ Հայր .

« Վէնետիկ, 19 յուլիս. 1854 .

« Ընկալեալ զիմում վերապատուութեանդ՝ գրեալն ի 10 ամսոյս ի պատասխանի խնդրոյ, որով գրէի քեզ բան հրամանին եղելոյ ի Սրբազանէն ելանել ի վարժարանէդ, հարկ է ինձ ծանուցանել դարձեալ՝ զի յառաջակայս խնդիր ցուցանէր ի քէն երաշխաւորութիւն առ իս՝ ոչ զօրէ ապատանել զքեզ և ոչ իսկ ի պարտուց կրօնաւորական հնազանդութեան, եա առանձ յանկնդիր լինելոյ հրամանին որ ոչ իմ միայնոյ է, այլ ի բարձրագունէն յիշխանութենէ որ ի վերայ երկիր՝ հասեալ առ իս, որում և ես և միարանք ամենեքեան պարտիմք հպատակել բան օրինաց իսկ առհասարակ պարտեան մերոց : Եւ զի միտիւր ցայժմ պատճառիդ

ի չհպատակել այնմ, վասն այնորիկ և նա խոտոն վիճակեցաւ զհրամանն յառելոյ յորդորել զքեզ ի կատարումն նորին. զոր և դարձեալ հաստատեմ՝ պատուիրելով զօրութեամբ սրբոյ հնազանդութեան ելանել անպատճառ.

“ Մաղթելով ողջ լինել ձեզ,

“ Ձեռամ

“ Արքայ վիրապատուհեանդ

“ Ն. Ծ. ԳԻՄԱԳ Վ. ՀԻՒՄԱԿԻՑ

“ Արքեպիսկոպոս և քեզ Արքայ. ”

ԳԻՄԱԿ. ԾԳ.

Բողոք Հ. Գաբրիէլի զգևացից Գեր. Հիւրմիզի. — Թևոյիր Հ. Գաբրիէլի ի Գեր. Հիւրմիզի. — Պատևուոբիեւի կատարելոյ կարևոց նախադևձոյցաց Հ. Գաբրիէլի Ա. յվազեան. — Բաժանումն Հ. Գաբրիէլի ի Մխիթարեան Մխիթարեսն. — Տրամադրեալ Մխիթարից քեզ բաժանումն Հայր Գաբրիէլի. — Ընտանեաւն քեզ այլ ոմն Հ. Գաբրիէլ. — Տրամադրեալ և յանգոյիր աշակերտաց Մ. վարժապետիւն քեզ հրաժարականաւ ողջոյն Հ. Գաբրիէլի, և յիշատակ նորա ոմն նուագ. — Բնակոյիր Հ. Գաբրիէլի ի տան Ա. յրքեան Պէյի. — Հոգ և խնամ Հ. Ստեփան ոմն Հ. Գաբրիէլ. — Յիշատակոյիր և քննոյիր քեզ այլ.

Գանգատ Հ. Գաբրիէլ առաջի Գեր. Եղեալ պղծոյին Մեծաւորին խոյտ ընդ ինքն, ընթեռնուլով զվերոյիշեալ Բողոքն նորա ոմն ինքն. — Վկայ Գեր. Եղեալ անպատեհ պրա-

Թեան հարուցանէն իւրոյ և ստգտանել պնա։ Առ Հ. Գաբրիել, Թէ այնուհետեւ յայտիսի Մեծաւորէն չկարէ ինքն հրամանս ինչ ընդունել. եթէ ունի ինչ ի ն նամանէ խնդրել, վկայական ի քահանայութեան իւրոյ, ուղիղ վարուց վարդապետութեան։

Յայտնի ինչ էր, Թէ այս խրատական լուն բոզոք էր ընդդէմ Արքային ու Միաբանութեանն, և ոչ բնաւ ի Միաբանել նմանելոյ բաժանելոյ խնդիր(*)։... Այլ Թէ Գեր. Եղուարդ պինչ կցէ ի բանից սուտ խնայեալ, և պինչ գրեալ ու Եղբայր իւր ի Վենետիկ ոչ գիտեմք. զայս միայն գիտեմք, զի Մեծաւորն գիտաց առաքել Հ. Գաբրիել վկայական ի բաներին, ասելով ինձին, Թէ «Գիտեմք զի Տէր Գաբրիել քա-«հանայ է օրինաւորապէս ձեռնադրեալ, և չունի կանոնական «ինչ արգելք. և Թէ՝ վարդապետ է աստուածարան-«Թեան, և զանձ ինչ նոյն ուսման դատողութեան արա-«բեալ է ի վանս գովելութեամբ։»

Այսու ևս բաւական խնայեալ լինի, Թէ ո՛րպիսի սիրով և ուրախութեամբ պատճառեալ էր Գեր. Հիւրմիզդ զդանգատն զոր արարեալ էր Հ. Գաբրիել առաջի Գեր. Եղուարդայ, ի հանել ևս զինքն ի Միաբանութենէ. և այս բանս առաել ևս առաջի, յորժամ ստոյգ լուր ի վանս յանկարծակի, Թէ Հ. Գաբրիել կամիս զատեալ ելեալ էր ի Միաբանութենէն։

Զանձն բանիս ոչգտոյին չհամարձին ունինք ի միտս առնել, վասն զի զրեն հարցանեն զՀ. Գաբրիել և խնդան Թէ զինչ էր եղեալ. և ապաչեն պատասխան զի մի հատցէ զինքն ինքնին ի Միաբանութենէն, այլ Թողցէ զի Մեծաւորն խորհրդականաբար

(*) Ըստ բանից Հ. Գաբրիէլի բոլոր խնդացաք մեք զայս խնդիր նորա բնդդէմ Արքային, Գեր. Հիւրմիզդ. այլ Թէ հրաժարական խնդացի այս այլոց, ոչ ունիմք ասել. Գեր. Եղուարդ միայն կարէ երաշխաւոր լինել այսմ, որում յայտնէ և յանձնէ Հ. Գաբրիել զինդիր իւր . . . այլ ունիմք տպատանել զանգատն և զինատակաբ զնացս Գեր. Հիւրմիզդի, առաքելով Հ. Գաբրիէլի զերաժարական բնդդէմ Ամենապատուելեան ուխտին իւրոյ, զի առանց վանական ժողովոյ չկարէր նա զայն առաքել ընդ. և զի ոչ միայն առանց վանական ժողովոյ առաքեաց զայն, այլ և ոչ առաքելակցէ ժողովով, որպէս և բազաքացին բազաքացի ի վարանիցն առ բնկերս իւրեանց ի Փարիզ։... Ընդ ունիմք և զերաժարական վարչութիւն Գեր. Հիւրմիզդի։...

(Յառաջիկայ Հեղինակին)։

իւրովք, եթէ կարիցէ, հանցէ զինքն իվանաց. ապա թէ ոչ՝ ընդհանուր կամ վանական ժողովոյն ապաւիցէ։ Զքանս նամակաց նոցին զերկուց միայն անուն առառնօր յառաջ բերցուք։

“ . . . Լուեալ էր մեր դարձեալ՝ եթէ առիպիցէ Հայրու-
“ թիւնդ զԳեր. Եղուարդ վանն բանի գրոյն արձակման, և
“ թէ հարկ լոյծ այն վանն պատարագելոյ արտաքոյ վարժա-
“ բանիդ, այլ ժողով առաջնակայից որոշեալ լոյծ իւրմէ հար-
“ կին տալ գեր վկայութեան, և ոչ թէ գեր արձակման։
“ Որդ զվկայագիրդ զայդ յառինելոյն ոչ ոք գիտեր ի մէնջ
“ մինչեւ էր գրեալ սիրելոյ Հօրդ։ ”

“ Գերապայծառն առացեալ է ի ժողովի առաջնակայից թէ
“ մեք ոչ հաւանեալ եմք զՀ. Գաբրիէլ ի Մխիթարութենէս, այլ
“ միայն առաք նմա գեր վկայութեան զոր ինքն կրկին և երկր-
“ կին խնդրեալ էր Թախանձանաք ի Գեր. Եղուարդայ, նկ թէ
“ եզաք ի նմա Տէր և ոչ Հայր, զի ինքն առացեալ է Գեր.
“ Եղուարդայ, Սրբազնագոյնի Փարիզու և Նուիրակի Պա-
“ պին, թէ այսուհետեւ արտաքոյ է Մխիթարութենէս, և
“ թէ՝ յայնպիսի գործս ձեռն արկեալ է, զորոց ոչ կարէ
“ Մեծաւորն երաշխաւոր լինել և պատասխանատու։ Այս և
“ այլին նման բանք և պատճառանք։ Սակայն ես և որ ընդ իս
“ էին Սիրելիք զայս գիտեմք, եթէ ոչ ժողով Առաջնակայից
“ և ոչ ժողով վանական կարէ և կամի հաւանիլ ի միաբա-
“ նութենէս զՀայրդ սիրելի և անձկալի, քանզ Մեծաւորն ոչ մի
“ միայն վկայագիր, այլ և տան վկայագիր գրեցէ ատրա-
“ նոք։ . . . Որքա զոր գործեն՝ մեծաւ ծանկութեամբ
“ գործեն ի խաւարի, և երկնչին զի մի՛ գայցեն ի լոյս գործք
“ իւրեանց։ ”

Զմի մանն հաւատացեալ այսորիկ առ ի բարւոք հասկանալ պարտ է գիտել, զի Հ. Գաբրիէլ թէ Արքեպիսկոպոսին Փարիզու, և թէ Նուիրակի Պապին գայս ասացեալ էր. “ Եթէ մեծաւորս
“ կամիցի զիս հալածել նա և յետ երանելոյ իմ ի վարժա-
“ բանէն, հարկ լոյծ զի ի Միաբանութենէն նա զատիցիմ
“ և յանիցիմ կարգաւորապէս։ ”

Բանք այլ ինչ նամակի :

„ Արդարև անհնարին և անասնելի է տկարութիւն բա-
„ րոյական այժմու վարչաց ուխտիս . զայս ի վաղուց տեսեալ
„ մեր , երկիցս ի վանական ժողովի առ ժողովիլ ընդհանուր
„ բազմութեամբ , և խոստումն և հաւանութիւն ընկալաք յընհա-
„ նուր ժողով գումարելոյ . այլ մեղմիկ ընթացիւք խրեանց
„ հանին ի գերեզ զարդիանս խոստման և հաւանութեան
„ խրեանց : Վասն այսորիկ խոկ յանկացաք տեսանել դէպ
„ առ ժամանակ մի առաւ ի միջի մերում գՀայրդ սրբոյն և
„ անձկալի , և յայնժամ կարէաք բազուկ իմք ակն ունել .
„ զի գալստեամբդ հալածեալ մերժէր իրրեւ զխաւար առաջի
„ լուսոյ խորհրդակցութիւն հակառակամարտ ,
„ և տուգ ինչ ոչ առնուին բարոյական և ուսումնական
„ կեանք Մխիթարեանս : Այլ իրրեւ անուրջք անէակք
„ տեսեան անցին ամենայն գեղեցիկ ակնկալութիւնք մեր .
„ և արդ ի միշտ և ի նեղութիւնս մնալիք , և ածեալ զմտաս
„ զանցեալն և զայժմուս և զլուսանգս ապեսին որ առաջի
„ կան , և տեսեալ ցաւագին աչօք զկորանել և զթոզել գնալ
„ ի բաց որոյ առաւն ի ձեռս բազդ Մխիթարեանս , և որք
„ կարգեցանն ընդ առաջնորդս և ընդ Ղեկավարս Մխիթա-
„ րեան Լատտափայոն , որոմբ զառնապէս և կամք զար-
„ հուրեալք յապառնեցն : ,,

Դարձեալ բանք և այլոյ մերոյ :

„ Յառապին լուր անցից Սիրելոյ Հայրութեանդ չանթահար
„ կոծանենաց զմեզ , և գետս ապի արտասուաց իմոյ յաչաց
„ մերոց :

„ Այսպէս ուրեմն որքացաք յերից սիրելի Հօրէդ մերմէ ,
„ այսպէս ուրեմն ոչ խնայեցէք ի մայրս մեր հասարակաց ,
„ յերկարս պատուականս և յորդիս սիրասնունդս , որք միշտ
„ սիրեցին զբիւր սիրոյ արժանի Հայրդ , և սիրեն և սիրեացեն
„ յապառ ի կեանս և ի մահս :

„ Երկիւղածութեամբ գՀայրդ երկայրաբեր և որդեաբեր
„ իւրեան որում սիրեցէքն զմեզ և սիրեցայք ի միմեանս , ի սէրն ,
„ զոր դուք ինքնին չամրեցէքն մեզ սիրել զՄխիթարեան ,

„ մի այդպէս վասն երկրաքարշ կրից և անմիտ նախանձու և
„ առելութեան երկուց և երից, մի այդպէս յայս աղէտս
„ թշուառութեան իջուցանել զմեզ։ Այլ էրնախ խնդրս մեր
„ միաբեք զսուր և ապա հատանեցէք ի բաց զհատորդ սրտից
„ մերոց։

„ Ի Հայրդ սիրելի և անձկալի աչք մեր յուսային. վասն
„ սիրելոյ և անձկալուդ Հօրդ սիրտք մեր կարօտապէն բա-
„ րեխնդին. այդպէս ուրեմն երկնէ ի զերեւս ամենայն ակնկա-
„ լութիւնք մեր. այդպէս ուրեմն գադարեսցեն սիրտք մեր
„ ի բարեխնդալոյ։

„ Մի Հայր սիրելի և անձկալի, խնայեա յորդեակդ,
„ մի արհամարհանսն զմեզ, յիշեա զերկուսեակ որովք երկնե-
„ ցեր զմեզ յայս վիճակ ցանկալի և յորդեութիւն մեծի
„ նահատակին Մխիթարոյ։ »

Որպէս երեսատարդ քահանային որ ի վանս, նոյնպէս և աշակերտաց որ ի Մ. վարժարանին հանապազ էր աչք ու Հ. Գաբրիէլ ի բազում դէպս տեսանէր։ Երբեմն լինանն տղա թէ յետ քանի մի տարւոյ պարտ էր երեսին ի վարժարանէն սիրելոյ Հօր և գաւառակի իւրեանց, գտանել բաժանիլ ինքեանց, յայնպիսի խոր տրմութեան մէջ ընկղմին աննեքեան, մինչեւ չկարէ մխիթարել զնոսա ինքն իսկ Հայր Գաբրիէլ։

Ժամանակ և աւուրք էին տարիական և հանդիսական քննութեան Նոցա, սակայն հարկ լինի տառանձինն ի դասատուն առնել զքննութիւն, և ի գահլէն հանդիսիս տալ զհրաժարական ողջոյն միմեանց, դասախոսակին և տանից։ Առնել տցա զկենդանագիր դասախոսակին իւրեանց և զարդարեալ գայն բոլորիւք ծաղկանց դնեն ի հանգոյս մեծի գահլէին, ուր ժողովին վերակացուք, Գեղ. Եղուարդ, և Արքին Պէյ հանդէպ ընդունելոյն։

Առնէ անդ Հ. Գաբրիէլ պատուոյ խօսակցութիւն ինչ, յորում յետ յայտնելոյ զանձատաց շնորհակալութիւն իւր վոխարէն ցոյն վայր սիրոյ նոցին առ ինքն, յորդորէ զնոսա ի առաքինի սէր և վեծարանք կալցին առ արժանապատուոյն

յոյզդա իւր. „ Եւ այնպէս, ասէ, անարատ վարք ձեր
„ առաել վառաւոր և անթառամ պսակօք պարտէ զճակատն
„ իմ պճնել, քան այդ գեղեցիկ բայց դիւրաթառամ պսակն
„ որով զառաելն իմ կամեցեալ էք պսակել :
„ Շնորհամբ ես, այո՝ հնարամբ ի ձէնջ մարմնով սիրելիք,
„ վասն զի այսպէս պահանջեաց ազգասիրութիւն իմ և ճշմար-
„ տասիրութիւնս, (որոմ գուք և ազգն վկայէ) և այլոց
„ զանազան դիտաւորութիւնք, բայց ոչ հնարամբ երբէք
„ սրտիւ և հոգւով. վասն զի ոչ գոյ իշխանութիւն ինչ, ոչ
„ գոյ ասեմ բռնութիւն ինչ որ կարիցէ զառել հնարագու-
„ ցանել զձեզ ի մէնջ յառաքելին և յուսումնառէր Յիսուսէն
„ աշակերտաց որպիսի դուք էք, և ոչ ի Գերյարդոյ վերաառես-
„ չէն և ի քաջազօտի վարժապետէն ձերոյ, որոց հայրապետի
„ խնամքն և չանքն զոր ունին առաելոյ առ ձեզ, յուսամ
„ զի վաստակ տայ ձեզ մտանել զայդ իրաւացի տրամութիւնն
„ և արիւք յաշխատ զաղթիատցեալ արտառաս :
„ Եւ եթէ գառն և ամենագառն ինչ է ինձ և ձեզ վճռե-
„ գամոյն այս լեռի բաժակն, որմէ պարտ է քաղցրացու-
„ ցանել, եթէ ոչ Քրիստոսի Տեառն մերոյ առատածախրաշ
„ վարուց և բանից պատմութեամբն, զոր ահա Թողում ձեզ
„ սիրոյս իմոյ մի միայն յիշատակ : Այսու զօրանամ ես ընդ-
„ դէմ ամենայն անիրաւութեան, այսու ուսարուք և գուք
„ զկեանս ձեր դնել ի վերայ ազգին և ճշմարտութեան, ,,

Ապա բաժանէ աշակերտաց իւրոց մի մի օրինակ, երկու հատոր Քրիստոսի վարք, ըստ խորհրդոյ և հաճութեան Հայր Սարգսի վերատեսչի վարժարանին . . .

Եւ յիրաւի՝ թէ աշակերտաց և թէ վերակացուաց սիրոն վշոտք և աչք արտառաւք լցեալ՝ ազեխորով տեսարան ինչ յանդիման առնէ օտարաց. և այնպէս մինչեւ հնհեհանքն աշակերտաց չթողուն վանն սիրելի հօր իւրեանց որ ունէր բաժանիլ յինէեանց, քանի մի յօրինեալ հրաժարական բարեմաղթութիւն կարդալ համարձակ . և վերակացուաց տիրաց լռութիւնն քան զամենայն առնարարանութիւն պերճախօս երեւէր հանդիսականաց, որոց մի էր Գեր. Եղուարդ . . .

Ի նմին ևս ժամ ընդ երեկս փոխադրէ Հ. Գաբրիէլ զրնակութիւն իւր ի տուն Արքին Պէյի, հոգալով անդ յառաջադոյն Հ. Սարգսի զամենայն կարեւոր պիտոյս նորին, ապա արծաթի ի ձախս աշխատութեան նորա, տպագրութեան Մաշտոց Աղաւնւոյ, տան հազար ֆրանք խնդրեալ և ընկալեալ զայն ի Պարոն Եդուարդ Ռաֆայէլէ, յեղբօրորդւոյ հանգուցեալ Աղէքսանդր Ռաֆայէլի. և զայն պայմանս իրրև դրամագլուխ ի ճշանչնաւոր ձախս տպագրութեան Մաշտոց Աղաւնւոյ, և ի յիշատակ առատաձեռն բարերարին, Եդուարդայ. Թէպէտ և դժբաղդութեամբ Հ. Սարգսի ոչ հանապազորդի այն, պահանջով Հ. Գաբրիէլի յայն, ձախելով նորա յառաջնում ամիսք հազար ֆրանք ի տպագրութիւն այնորիկ, և յանձնելով զվաճառ նորին անձին վայ ի Պոլիս, յորմէ երկու հազար ֆրանք հաղիւ ի ձեռս բերի:

Յաւէլ յոյժ Հ. Սարգիս ընդ պահպանութիւն խոստման իւրոյ առ բարերարն Եդուարդ Ռաֆայէլ, և տնաշէն երեսել նմա. յաւէլ և Հ. Գաբրիէլ ընդ յայտարարութիւն իւր որ յառաջնում Թերթի Մաշտոց Աղաւնւոյ, Թէ ունէր հանապազորդել յայն զանուն բարերարին . . .

Թող և զայլ տան հազար ֆրանքս զոր ձախէ Հ. Սարգիս վերայ ի տպագրութիւն և ի ձեռնհաս նոր հայկական տառից, լատ պիտոյ և լատ ցանկութեան Հ. Գաբրիէլի, և անտի ևս մխիթարութիւն ինչ գտանէ, ի պատճառս անհոգութեան Հ. Գաբրիէլի, զորմէ ձանուցաք ապա ի վերջին հատոր պատմութեանս, կամ Թէ ասել, ի պատմութեան Հայկազնեան վարժարանին . . .

ԳԼՈՒԽ. ԾԴ.

Նոր ուսուցչապետ և. պատուխորուկ վանիկանց Մ. վարժապետելին. — Հնադիտելոց քաղաքավարուխիւն Գեր Հիւրիզի. — Ծուղր Գեր, Հիւրիզի առ Հ. Սարգիս. — Ա.տաքուելի Հ. Պետրոսի ի Փարիզ իրեն ուսուցչապետ. — Ա.նուշան պատասխանի Հ. Սարգսի առեալ քղթոյ Գեր. Հիւրիզի. — Ծուղր Հ. Սարգսի առ Հ. Ղևոնդ. — Պատասխանի Հայր Ղևոնդի առեալ քղթոյ Հ. Սարգսի. — Ընդհանուր քանիք ի նիւթի և. քննութեան ցայլ :

Թէպէտ և Գեր. Հիւրիզի յայտնի էին ի սկզբանէ անտի, կարգել ուղիղ Մ. վարժապետին դՀ. Պետրոս Թրենց, զոր և վասն այնորիկ ածէ ընդ նմա ի Փարիզ վեց ամսոք յառաջ. քանզ տեսեալ զդժուարութիւնն ընդ այն խէ, միտալ պատուիրէ :

Թէպէտ և առնէ բնութեամբ և գրով ինչ ընդդէմ կամաց Հ. Սարգսի չկարդէ զոք ի պարտաւոն ինչ անել, առևտրի գործով ընդհանրապէս առնէ, որպէս տեսանի այժմ :

Հարցանէ Գեր. Եղուարդ զՀ. Սարգիս թէ զո՞ր ոք իմանայ կամէր նա ընդրել փոխանակ Հ. Գարբիէլի : Առէ նա զՀայր Ղևոնդ Ալիշան, զոր և արդէն առաքեալ էր նմա Գեր. Հիւրիզի, վեց ամսոք յառաջ, տեսանելով զդժուարութիւնն կարգելոյ անդ զՀ. Պետրոս :

Առէ ցնա Գեր. Եղուարդ, թէ երկու անձինք քան նմա յարմար ի պարաւոնն յայն, Հ. Ղևոնդ, և Հ. Գաբրիէլն, զորմէ գովութեամբ խոսի, և որում երթեւ ի փարիզ վկայէ :

Հառանի Հ. Սարգիս կարծեաց նորա, և խնդրէ ի նմանէ գրել առ Հայրն իւր ի վանս, զի առաքեսցէ զնոսին ի նոյանէ. Գրէ նա պատճառանէ քան խնդրոյ Հ. Սարգսի :

Տեառնէ գրգեալ Հարիսեայ քաղաքավարութիւն Վեր. Հիւսիսի և խնդիրս յայս. քանզի վտանգակ Հ. Վ.եռնդի առաքելոյ, Հ. Աբրահամու առաքելի զոյն, և նորա համեմատեալ գրացարձակ իշխանութիւն վերատեսչութեան Ռաֆայէլեան վարժարանին ընդ առաջնորդութիւն Մերուժեան վարժարանին՝ չառնու յանձն զառաքելութիւն Աբրայիս, թէպէտ և չհամաձայնի այն ընդ դնացս իւր, հայեցեալ ի կոյր հնազանդութիւն զոր պահանջէր ի Հայր Գաբրիէլ վիճառ նախանձայուզութեամբ իբրև խորհրդական Աբրայիս . . .

Հարկաւորի ապա առաքելի զոյն Հ. Վ.եռնդի, հանդերձ ընկերաւ, Հ. Պետրոսի :

Խնդրեալ Հ. Վ.եռնդի զհնարիսեայ քաղաքավարութիւն Աբրայիս՝ հրաժարի ընդունել զառաքելութիւնն զոյն, պատճառելով զանգութիւն մարմնոյ իւրոյ և զգայուն տրտմիւ . . .

Յայնժամ առաքէ զՀ. Պետրոս միայն ի Փարիզ վտանգել Հ. Գաբրիէլի, թէպէտ և ընդդէմ էր այն խոտման իւրոյ, թէ « Առանց խորհրդոյ և հաւանութեան քո ոչ առաքեցից զոք այդր : » Սակայն առաքէ նա, և զայնպիսի զի, որոյ անյարմարութեան ի պաշտօնն յայն՝ վկայեալ էր ինքնին միանգամ և երկիցս զրով իւրով առ Վեր. Սամսեան :

Թուղթ Վեր. Հիւսիսի առ Հ. Սարգիս, յորում Հանոյ Թարգմանել զհնարիսեայ քաղաքավարութիւն իւր ամենայն պատճառանօք, որ ունի օրինակ զայս .

« Յարգոյապատիւ և վերատեսուչի Տեառն Հ. Սարգսի վարդապետի սիրոյ և միաբանից ողջոյն .

« Նախ քան զամենայն չնորհս մատուցանել Վերատեսութեանդ ձեռն առաքելոյ Քերոյ Գ. Եդուարդոյ ի կատարումն բուռն հրամանի Աբրայելին, և ի գերծուցանել զինարանութիւնս ի դժուարին հոգոյ անտի յորմէ հետէ առ-

նապէրն գնա, գամ ի ծանուցանել Զեզ թղթովս, զի բազում խորհեցեալ ժողովոյս մերոյ առ վասն անձին յղելոյ այդր յԵւրոպ՝ որ անկղծ պահելով գրաբևկարգութիւն վարժարանիդ պայծառացուցէ զայն որչափ մարթին է, որոշեցաք հոգակ ուրուն յղել զՎ. Հ. Պետրոս, և ակն ունիմք, որպէս և ինքն հաստատութեամբ եղեալ է ի մեզ, զի զամենայն ձիդն լաւ արասցէ անխոնջ վաստակօք ի գոհ առնել զՔեզ։

„ Մաղթեմ ողջ լինել

„ Յարգոյդդ պատուիրեալ Վերապատուութեանդ

„ Վենետիկ. 25 օգոստ. 1854.

„ Ն. Ծ. ԳԻՈՐԳ Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

„ Արքեպիսկոպոս և ընդ. Աբբայ. ”

Ընկալեալ Հ. Սարգսի զթուղթն Գեր. Հիւրմիւզի՝ զարմանայ և ցաւի յոյժ ընդ որոշումն այն, և դանգատի զայնմանէ առա. Ջի Գեր. Եղուարդայ, թէ որպէս յղեալ էր զմիամիտ անձն այն, որ յայլմէ կողմանէ զինչ կատարելութիւն և առնիցի, սակայն այսմ պաշտօնի անյարմար լինել նորա ի վաղուց ծանուցեալ և փոքձեալ ինչ էր, որպէս ի Պատաւիոն զամս ոմանս, և որպէս Պօղոս դպրոցին օգնական անդամ լինել Հ. Անանիայի անյարմար գտեալ էր ինքն իսկ Գեր. Հիւրմիւզէ . . . և որպէս ի դպրոցն Տրապիզոնի, զորմէ գանգատ նոյն ինքն Գեր. Հիւրմիւզ ի թուղթն իւր ասացէս.

„ Գիտեաք թէ բարեմիտ կամ միամիտ ումն է Հ. Պետրոս, „ այլ ոչ թէ և այսպէս անխոհեմութեամբ գործոյ, ոչ յայլ „ հայելով և ոչ յահեակ, ոչ կարծելի։ ”

Գնայ Հ. Պետրոս ի Փարիզ, և խոստանայ Հ. Սարգսի ջերմեռանդ երթէք բան բանս նորա . . . բայց գիտելով Հ. Սարգսի թէ պահել գիտացումն չէր ի ձեռս պատուական անձին այնորիկ . . . և հաստատութիւն այս ճանաչման որպա, ահա կամակորութիւն մոտ նորա, որ ի գիտս մշտնջենաւոր շարժ. ման, յոր պարապի նա երթիւն ի Պատաւիոն, ի նոյն կարծս

գոլով տակաւին՝ պարտական յայն և այժմ ի Փարիզ, ըստ պատմելոյ ոմանց յընկերաց իւրոց, Ջանայ նա արծաթ հայթայթել ի ծախս մեկնելոյն այնորիկ . . .

Ձուր Ջանք և անօգուտ վաստակ . . .

Առնէ կրտսեան ժամանակի և մաշած մուշ նորին . . . և այսմ պատճառաւ, անհմտութիւն և անխոհեմութիւն առաջնորդին, չճանաչելով նորա զկարողութիւն մուշ իւրաքանչիւր հպատակին, և անկոյթ լինելով գաշխատասիրութեանց նոցին: Ո՞չ ապաքէն այսորիկ են պատճառք անպտղութեան Ջանից և վաստակոց միաբանութեան . . .

Առնէ բախտին ազգիս Հայոց . . .

*Հարցանէ ցնա Հ. Սարգիս, թէ զինչ լինի ի Մեծաւորն ձեռ առաքէ ի Փարիզ . . . Յետ պատմելոյ նորա զկեղտոտ զոր վերագոյն ծանուցաք, ապա պատմէ և ասէ. "Գերա-
" պայծառն առաջ ինձ յայտնապէս, թէ իւր կամքն գՀայր
" Ոսկեայել ուղարկել էր այսր, բայց զինչ առնէ, այսպէս
" եղեւ : "*

Տեսեալ Հ. Սարգսի զայս ամենայն անուղղութիւն վշտանայ յոյժ, և զրէ Բուզի մի ձիգ առ Գեր. Հիւրմիւզ, յորում ցուցանէ զմեղմիս դնացս և զիշեցուկար վարչութիւն նորա. յիշեցուցանէ նմա զնշանաւոր բանս Բզմոյ իւրոյ, և զուշակէ և զեղն իւր ի Մ. վարժարանէն, օրինակ զայս.

" Գերապայծառ Տէր.

" Յետ քան խնդրանաւ առնելոյ զձեզ առ Ի՛ բանից բերանոյ, և Ի՛ պրոբեամբ այդր ամենայն իրաւանց վերոյ, հայցեցաք յանխրատ պահանջմանն Գերապատուի Վաւերոյին, Պատնտոփ, և հաւանելոյ Ձեր ընդհանուր կամ դոնէ վանականն ժողովով քննել և որոշել զինդիրն, ահա յ3 մայիսի անցելոյ ընկալաք Բուզի ի Զինչ յորում ծանուցանէք ինձ զայս .

" — Վասին կամ ի վերատես առաջի ձեռս ժողովոյ գերապատ-
" կանան եղեց առ ձեզ ամենայն, գիտացեալն ի մինչ

« այդը . և տայցէ ձեզ Տէր լոյս և խնամութիւն , զի որ լինիք
« խնամս իմ էք իբր և խոտհարանութիւն և յօդուտ Մխարանու-
« թեան : »

« Եւ յետ տասնից ձեր առ առաջս բազումս խնամել զելից երթայն , քննութեան և որոշման ձերոյ այդը , և ահա ի 10 յունիսի անցելոյ ընկալաւ Հ. Գաբրիէլ Թուղթ ի Զէնջ , գրեալ յ2 նոյին ամսոյ , յառաջ նշանակելի Ընտրութեանդ Առաջնորդութեան Ախտես :

« Արար Հ. Գաբրիէլ պատասխանի Թղթոյ ձերոյ ի նմին իսկ աւուր :

« Յետ երկուց աւուրց անտի ի 12 յունիսի , ընկալայ Թուղթ ի Գեր . Եղուարդէ :

« Եւ յետ միոյ աւուր անտի ի 13 յունիսի ընկալայ Թուղթ ի Զէնջ , գրեալ յ9 յունիսի :

« Զայսոսիկ այսպէս կարդաւ և համաօսմբ յիշատակեալ նկից արդ ի յիշատակութիւն քննութեան վերոյիշեալ բանից նամակաց ձերոց , իբրև կարեւոր պատասխանի նոցին , և իբրև վերատեսն հաւատմունքեան Յայտարարութեանդ մերոց , արտեղոյ ընդդէմ գրութեանդ ձերոց որ ի խնդիր վարժապետին , և ի վարչութիւն Մխարանութեան : Վասն որոյ՝

« Հարցանեմ նախ՝ Թէ ո՞չ ապրէն հաւանեցայք դուք առ կարեւոր խորհրդոյ մերոյ և խոստացայք մեզ քննել և որոշել զխնդիրն ընդհանուր և լաւ գոհ մնալ վանականն յորմով , և առաքել առ Արբուքեան գրագրութիւն հաւանութեան բանիցն որ յԱրշարունեան Արտուանեան , հանդերձ բանաւոր պատճառաւք և խոնարհական Թղթով առ Արբուքեան ի Հռոմ , . . . Ահա ընդէր խորհրդակատարդ մեր քննեցէք և որոշեցէք դուն , և խորհրդով առաքելոյդ մերոյ գրեցէք ի Հռոմ , և ոչ առաքեցէք առ Արբուքեան գրագրութիւնն զոր ոչ կարեն ինքեանք ձերով . . .

« Եւ ոչ ապրէն խորհրդակատար այդրիկ են որ ցայսօր մեր անարգութեան և չշատութեան հաւատցին զԱխտեսութիւնս , մի՛ զի արդարև խորհրդով նոցա արարիք դուք

զամենայն . . . և զաւր առեալն խորհրդով նոցին առնէք զոր առնէք, և զրով ակնառնիք չոչոց և խնամոցելոյն ի Տեառնէ, և զայսպիսի արարս ձեր ի փառս Աստուծոյ և ի պահպանութիւն և յօգուտ վիրապանութեանդ կարծէք . . .

« Ա՛ռեալ եղէք, ընդունայն և վնասակար խորհուրդ . . .

« Երկրորդ՝ թէ ուսոյ ընկալայք զաւր պատասխանի խնամ, թէ չէ մարթ զհրամանն Պապին ընդ ժողովով արկանել . ի Պառնասոլ՞ն, զոր ամբարիշտ ոք ճանաչէիք զաւր, թէ ի Պապէն, զոր արձան ինչ անզգայ համարէիք զաւր . . . և չեա այսպէս ճանաչելոյ ձեր զնոսա՝ կամեցայք զաւր կատարել զամենայն հրամանս նոցա, որք ի կործանումն են վիրապանութեանդ և ի վնաս ազգիս առհասարակ, խորելով զձեզ սնոտի յուսով և թիւր տրամաբանութեամբ, թողով ձեր զխիզճ մտաց ձերոց ի վերայ խղճի մտաց Պապին, որպէս և առակք ինձ ասեն և ընկալայք զինեն զարժան պատասխանին . . .

« Եւ եթէ կուրախար հնազանդեցայք զաւր և հնազանդիք առնել զոր ինչ հրամայէ ձեզ Պառնասոն յանուն Պապին, պարտ էիք ամենայն միաբանելոյ նոյնպէս հնազանդել նմին և իրրև զձեզ կատարել զամենայն կամս նորա. և թէ արդ իրաւամբք և իշխանութեամբ կարէք զաւր հրամայել և կամ յորդորել զՀայր Վարդիկ երանել ի վարժարանէս, յաւուրս սրոյ հիւանդութեանն, զոր խոստացեալ է նա Աստուծոյ . . .

« Զեզմանելով ձեր իշխանութեանդ ձերում՝ եղծեցէք զակզբունս կրօնիդ, և զարդիւնս վանացդ հիմնադրին և աշակերտաց նորին առհասարակ, հանդուգնեցեալ և կինդանի եղելոց . . . ապա չեանիք զաւր բնաւ իրաւունս և իշխանութիւն հրամայելոյ կամ յորդորելոյ զնա յանուն սրոյ հնազանդութեան, զոր խոստացեալ է նա Աստուծոյ, երանել ի վարժարանէս . . .

« Ահագին ի միտս սրոյ անհնազանդ Հոգւոյդ նա սիրտս Հրամանիդ ձերոյ, յանձն կամիցիս միտս և սրտագոյժ երանել ի վարժարանէս, զոր ի ծանոյց ձեզ զրով

վաղվաղակի ինձին խոկ առաք յոր ընկալաւ զմոռոյ հրամանն ձերոյ ։ . . .

« Թէպէտ և կարի ես արդեաւ զնա կալանել առաք, սրպէս և արդեալ զանձ երկուս, չհանալով և ակնառնելով զդառնութիւնն ձերոյ, բայց երբեք առաք զվճարումն վրէժխնդրութեան ձերոյ, . . . մանաւանդ թէ երբեք ծանեալ զնոսա պատճառ, որով կամք արդարացուցանել զձեզ առաջի տիեզերաց, թէ ցրուեցէք Գառն զԱխտանութիւնդ ելէք ոչ հանելովք զՀ. Գաբրիէլ ի վարժարանէս, վասն այսորիկ Թոյլ եաւ ես նմա կալանել առաք, զի մի տացէ արկէն ցրուելոյն այս վախճարութիւն արար . . .

« Հարկ է ինձ, ասէք, ծանուցանել դարձեալ, զի յառաջ « չհակայս խնդիր ցուցանէն ի վէն երաշխաւորութիւն առ իս « ոչ զօրէ ազատ առնել զքեզ և ոչ իսկ ի պարտուց կրօնաւո- « րական հնազանդութեան, եաւ առաել յունկնդիր լինելոյ « հրամանին որ ոչ իմ վարդոյ է, այլ ի բարձրագունէն « իշխանութեանդ որ ի վերոյ երկրի, հաւատալ առ իս, որում « և ես և վարդապետս ամենայն պարտիմք հպատակել ըստ « օրինաց իսկ առհասարակ ընթացս ։ »

« Հարցանեմ ես նախ՝ թէ զինչ հարկ ի վերոյ կայր ծանուցանել դարձեալ զնոյն հրամանն ձեր առ ես, և զայն առաել ինձ խառնելով և կարծելով իշխանութեամբ, զինելով ձեր իսկ, զի յետ մոյ առաք պրկանգ առ ես, ընդունելիք Թուղթ առաք, ի Վեր. Եղեսարդոյ, զոր եկն ի Հռոմէն ձգելս զինէք, և զեռանալն ի Փարիզ դիտաւորեալ, բայց նմէ առ ի ցուցանել զանհրաժեշտ կինէք ընտրութեանդ, զոր և նկատեալ եմք ինձին քոյ. և զայս յետ այնչափ նկուն լինելոյ ձեր ի ինձ ընդհատել վճռեալ էր ի ձեզ ։ . . .

« Կրկրեալ թէ ընդէր յառաջագոյն խնդիր ցուցանել ի ինձանէ հրաժարութիւն առ ձեզ ոչ զօրէ ազատ առնել զիս և ոչ իսկ ի պարտուց կրօնաւորական հնազանդութեան : Ոչ առաքէ ըստ բացայայտ բանից Պօղոսեան հրաժարութիւնն իմ առ ձեզ առաջանայն էր, մինչև զրէր, և այն

իւնսոյ և խնդրէի ի ձէնջ յղել այր զայլ որ ի տեղի նորա ժ-ուարիլն և ծանր գոլով Հ. Ամբրոսիոյ միայն հոգ տանել չիտաւն և հիւնդ մնալոյն ։

« Եւ արդ՝ եթէ ոչ զօրէ առժամայն երաչխաւորութիւնն իմ առ ձեզ զանն կարեւոր պատճառաց տալոյ տանել գնա յանդիման եղանելոյ ի վարժարանին, տալ յայտ զի կամիք զոր և կամիք անտես առնել և ցրուել զմնացեալսն վարժարանին, չտալով ժամանակ մինչև այլ որ նիւթ առնէր զտեղի նորա, և ոչ ձեր ինքնին հոգալով զայնմանէ յաւաչապէն, և արհամարելով արհամարհք զիս և զերաչխաւորութիւնն իմ առ ձեզ ոչինչ համարիք այսպէսն պրոթեստոմք, և բռոթեստոմք եւս, չժանեալ ինձ բնաւ երկնոյ պրոթեստոմք զառնոյ հրամանք ։

« Եւ երդոյց՝ թէ ասաւ ինչ այդ նոր Հանդչումն և զհանգիստն ձեր զրադարձուցանելոյ ինչ անկարելի որ ի վերոյ երկրի, և զիրաւեալն նորին առ ձեզ հասանիլ . . . . Տեսի ինչ տեսիլ արդեօք յաւուրս յայտնելի երկրիս զՊետրոս ի Թուխտ երկին, և ձայն ի յամպոյն լսելի, թէ դու ի սրդի իմ սիրելի, Պատնասէն, զիս լսատրուք, կատարեալ Հաղորդելագործութիւնն ամենայն հրամանի գործս . . .

« Ո՛վ պարանչելի տեսլեանդ, և ո՛վ երջանիկ վարժապետ, որոյ զգեսին երկիս զգենուին տեսլեայդ տեսանել և երանելոյ . . .

« Յայտնի Հանդամանս գոլով ձեր սրդ՝ ընդունայն Հաստատիմ առնել քննութիւն և այլ բանից այսր Թղթոյ ձերոյ, բայց եթէ ի խնդրանսդ սրդեաք յայտնի լինելոյ ։ Վասն սրդ՝ և առ այս բանս ձեր, թէ « սրտմտ եմ և վարանիքս « ամենայն պարտիւք հպատակել բան օրինաց իսկ առհասա- « րակ ընդրութեանս մերոյ, ո՞ւստի եւ, թէ ոչ դուք և ոչ կարծելոցդ վարդապետք գիտացիք և գիտէք բնաւ թէ սրբեալ և յիւր պարտիւք հպատակել, չդանազանելով ձեր ազգասի- րութեամբ և կամակորութեամբ զինքն իւր հաւատոյ, իւր պարտիւք ամենայն ուղղութեամբ առհասարակ հպատակել հրամանաց Պատրն, (առ այս հարկ և օրէնք առհասարակ ընդունին

մերոյ .) . . . և ի խնդիրս քաղաքական և ազգային իրաւանց , յորս պարտին հպատակիլ հրամանի Պապին հպատակք նորա միայն , Հռոմէացիք և այլ ժողովուրդ որ ընդ իշխանութեամբ նորա :

« Իսկ արդ՝ խնդիրս այս աշխարհական և ազգային է , ապա ոչ պարտիմք մեք հպատակիլ յայսմ հրամանի Պապին , մանաւանդ թէ սխալիմք ընդեմ մերոյ ամբարիշտ Պատրիարքին , ապա չիմայր ձեզ բնաւ տեղի և իրաւունք տալոյ մեզ զհպատակիլ ի կատարումն նորին , և հաստատելոյ զայն , պատուիրելով զօրութեամբ սրբոյ հնագանդութեան ելանել անդրադառն :

« Իսկ յաղագս այսր բանից թղթոյդ թէ « և զի մինչև « յայժմ պատճառէիր ի չհամակիլ այնմ , » հարցանեմ ես նախ՝ թէ ևրբ մինչև յայժմ գրեալ էիք առ Նա եկեալ ի վարժարանէս և Նա պատճառեալ էին ի չհպատակիլ այնմ . . . Ա՛չ ապաքէն այս առաքին նեղապն է զի գրեցիք առ Նա եկանել ի վարժարանէս , և Նա կամակոր մնաք հպատակելոյս հրամանին : Ապա անկրա գրպարտութիւն է այդ դնանել :

« Երկրորդ՝ չեկանել Նորա անյապաղ ի վարժարանէս , որ արդելմամբ և երաչխաւորութեամբ իմով եղեւ , և այն ժամանակայ , մինչև ցայդ այսր ատեաք փոխանակ Նորա , պատճառաւք էին , և ո՛չ ճշմարիտ և կարեւոր պատճառ . . . .

« Եռելրակն Պապին որ ի քաղաքիս և որ խնամ է և հաստատակ մեզ էրրեւ զՊատուիրեան , կամէր զի յետ ստանալոյ զնեռութիւնս վարժարանիս , յանձնեսցի Եղբարցն , զկանոնել Հ. Վարդիկեան առաջ գնալ ի Հռոմ . իսկ դուք կամէք զի ընդ առնուլ Նորա զՊատրիարքն էլցէ ի վարժարանէս . . . և այս կամք Եռելրակին յառաջ քան զհրամանատուութիւնս Նորա առ ձեզ : Եթէ այսպէս առնէր Նա Եռելրակին , և Պատուիրեաց իսկ , ապաքէն զկնի Նոցա Հանդերձ գոհանայիր և քաղցր բանիւք : Ապա յայտ է զի առաջ խնդրէր դուք և յայժ հակառակ քան գնաս : . . .

“ Ով հայրական և քաղցր Աստուածասիրութիւն : . . .

“ Եւ ապա այսու հասանել և այլ բանք և արարք ձեր հասեալք ատա յանկարծ մեր, թէ “ Առնելոց է զ զատարին “ իձեռինդ, և հատանելոց է զ գանձնեսուան որք հակառակ “ կայցեն կամացդ : ” Որպէս և արարէք խակ, երկուս ի Հնդիկս առաքելով, և մի ի Պօղոս գանազան պատճառանաւք. զի երկուքեանն իւրեանց հակառակ էին կամացդ, և միւն անհոգի էր . . . և որպէս եղեալ էիք ի մեծ խորհրդով խնամասէն և քոյ խորհրդակցացդ հետացուցանել ի վտանգէ զայսպէս գանձեալն հակառակողս կամաց ձերոց . . .

“ Ով խնամասէն և օգտակար վարչութիւն . . .

“ Ի վերջին նամակի ձերում ատ ի ասէք այսպէս. “ Զի “ պատշաճ համարեալ Վարդանութիւն գալուստ Գնի : “ Եղուարդայ այդր ի պատճառս երայ վարժարանին, զոր “ քաջամանաւք են ձեզ. ի նմանէ լսելիք գիտութիւն ամե- “ նայն, և թէ պշտաի լինէ կրկնոց և կրկ Վարդանութեան “ ի պատճառս երայդ այդոցիկ : ”

“ Առաւ ես ատ այս և հասանելս, թէ պատշաճ համարեալ է ձեզ և խորհրդակցացդ միայն գալուստ Գնի. Եղուարդայ այդր, և ոչ Վարդանութիւն այդր և այլոր . . . և հասա- նութիւն բանիցս, ահա անձանձրոյթիւն բազում միտդ այդր և ի Պօլիս, միանգամ ցժամանել նորին այդր, և երանագի գանգատանոյնն որ ընդ այն . . . Բազում ասել և գժանդրութիւնք նորին որ ի մէնջ եւս, յառաջ քան զգնալն նորա ի Գնի. Եղուարդէ : Ողորմելոյն և Տարեհոգոյ բազաքակա- նութիւնք որով վարեցաւք ընդ նա ի սկզբան հետէ :

“ Ի նմանէ լսելիք, ասէք, գիտութիւն ամենայն, և թէ “ պշտաի կրկնոց և կրկ Վարդանութեան ի պատճառս երայդ “ այդոցիկ : ”

“ Առաւ ես և ատ այս, թէ այո՝ լուար միտ ի նմանէ գիտու- թիւն ամենայն, և բնիկ արարեալ նմա գիտութիւնդ ամե- նայն, զգալեացդ արարեալ Աստուած զամենայն, զոր և ցուցանել կարծեր ես ի քեզ ի մարդկան, և ի մեզ ի մարդկան :

« Նախ՝ ապրեսցես և անօգուտ, մնասեսցես քո ի վեսպասիան երթ ձեր ի Հռոմ ի 1849 ամի, զորոյ հետեւանեն քո և ապրեսցի ձեզ յաւաջադոյն, հանդերձ օրինակաւ և փոքիւ, այլ դուք արհամարհեցիք զայն, ասելով թէ « Ձէլէպին և « մերքն ի Պօլիս կամին զայն . » Թէպէտ և յետոյ զղջացեալ ընդ այն, հանդերձ վկայութեամբ քոյոցդ, այլ յոյժ անապան . . .

« Երկրորդ՝ վեսպասիան խորհուրդ ձեր և կամքդ փոխապրեայ զՄ. վարժապանն ի Հռոմ . . . ընդ որ բազքեցի ես խակոյն պրեֆեսքս առ ձեզ, Թէպէտ և ուրոյզք դուք զայն, սակայն ունիմ ես ի ձեռին զգրաւոր հաւաստիս և զվկայսն ի միջի : Եւ ահա ի խորհրդոյ և ի կամաց ձերոց անսխ չարժեալ և համարձակեալ Պաւնապօի՝ կամի զփոխապրեալն Մ. վարժապանին ի Հռոմ, և բանադատ զձեզ առնել զայն, և կատարել զամենայն անիրաւ կամս իւր, անձնատուր ինելով ձեր արդէն անտրտունջ Յայտարարեալքեամբն ձերով առ Պապն ի Հռոմ . . .

« Երրորդ՝ անօգուտ և վեսպասիան և անիրաւ իսկ խորհեցեալն պատճառ ձեր արարեալ ի Հռոմ և յլեալ ինձ առ ի Փարիզ օրինակ մի անտի, յորմէ յոլովք և ի պետքին գաղտնեան ձերոց յայն, զոր գնեալ իմ գրեցի առ ձեզ այսպէս . « Զի « ի այն օգուտ Մխիթարեանցն և ոչ պատճառ հեղինակի « նորին . չգիտեմ որոյ միոց ծանուցի ի այն : » Սակայն ի միում այսր անհատէն՝ Յարգմանեցիք զոր զայն ի Հայ աշխարհի լեզու և յանէիք ընդ անտանել և վեսպասիան պատասխանին ձեր որ առ Զարմանեանն, ընդ որ առաքեալ ես զդրացեալ ոգին Հայոց ընդդէմ Մխիթարեանցն : . . .

« Չորրորդ՝ անօգուտ և վեսպասիան պատասխանին ձեր, Ընդդիմախոսութիւնն առ Զարմանեանն, տպարկեալ այլ ի վեսպասիան և յլեալ ի Պօլիս Հրատարակիչ այր և այլոց ի միջի այնոցիկ, յորմէ յոլովք առ ես մեզ օրինակ մի գնեցաք և ի ձեռին ունիմ զայն, զոր ընդ ամենայնի ես ի Հրատարակիչ

զայն, այլ անհետ առնել ի միջոյ, խոստանալով հաւատալ զհաղորդեալսն նորին ամենայնիւք ի նմանէ, և հաստատեալ զծանօթ սպասաւորութեան նորին, եթէ ցաւիւք ընդ այն. և յետ աւուրց ինչ անտի լուաւ զի հրամայեալ էին զայն մերկն ի Պօղոս պանծանաք իմն, իրրև յաղթութեան ինչ տարեալ ի վերայ Քրիստոսեայ հերետից . . .

“ Դուշակեցի ես յայնժամ զգաւառից Հաճեանն որ անտի, և ճնայի որ լաւ օրէ այնմ, որպէս և տեսաք այն վտարեալ ի սրտիկն Զմիւռնիոյ և Պօլսոյ, ընդ որ զարհուրեալ ձեր այդր և առջացեալ ընդ արտաք՝ վտարացեալ զարման առնել չարեացն, սխալանացդ, Յայտարարութիւն ինչ խոհրդով վանական ժողովոյ արարեալ ի պատասխանի սրտիկն Զմիւռնիոյ, և տպարեալ զայն առաքեցեալ ի Պօլիս հրատարակել անդ ի բժշկութիւն զայթագղեալ մտաց : Սակս գնացի և առժոգ առ ի Փարիզ օրինակ մի անտի ընդ ինքեր ցաւիւ և ի գիտութիւն :

“ Բայց յառաջ քան զայս կանխեցաք մեք առ ի Փարիզ առնել պատասխանի բանից սրտիկն Զմիւռնիոյ, առ ի պահել զպատիւ Միաբանութեանս և Մ. վարժարանին միանգամայն, տալով զայն գրուածն ծանուցարկ ոմանք ի միաբանից և ի զատաչս առնուլ չարեացն :

“ Ընդ երթեալ մերոյն ի Պօլիս գայթագղութիւն Հայր Փարիզի որ ի սրտիկն Զմիւռնիոյ՝ տպին և ամփչեն ընդ երեսս կարծեցեալ պարծանաց իբրեւ որ ընդ ինքեանս առնեն ընդ հաղորդեալսն ամենայնիւք ի նմանէ, և յանդգնին առնել գայթագղութիւն մի յանուն հանճարեղ միաբանութեանս ընդդէմ գայթագղութեան Հ. Փարիզի, և ոչ հրամարեին գայթագղութիւն ձեր, այլ անհետ առնեն զայն, յանդգնութիւն և նախատինս հասուցանել զայն ինքեանց : Եւ ոչ այսչափ միայն, այլ և տեղի կամացուանց տան հանդիսաւորագոյն գայթագղութիւն Հ. Փարիզի, իրրև Հաստատութիւն ինչ հերձուածողաց հանդիսել զայն, Եկայք և տեսէք զի այն որ ի գայթագղութիւն Հ. Փարիզի ան հանդիսութիւն ձերոյ . . .

« Եւ ձեր զայս ամենայն արարեալ և տեսեալ՝ լուցէք, և
« ոչ յանդիմանեցիք զյաղնգնութիւն մերոյն ի Պօղոս : Եւ ոչ
« այսչափ միայն, այլ և գրեցիք առ առ Հ. Գաբրիէլ ջառնել նորա
« բնաւ նորոգ ինչ յայտարարութիւն ի չառագումել գինեն,
« ասելով ի դուռս գյայտարարութիւն ձեր, զոր Թաքուցանեն
« մերքն ի Պօղոս. ապա թէ ոչ՝ սպառնայիք նմա հառաջել
« ի Միաբանութենէդ . . .

« Հինգերորդ՝ վնասակար և կործանիչ Միաբանութեանդ
« Յայտարարութիւնն այն, թէ արդարն և առաքինեալն
« ի Պառնապօէ, յոխերիմ թշնամւոյ Միաբանութեանդ, հան-
« դերձ խորամանգ պայմանաւ, « Զի եթէ ոչ առցագրեսցէ
« զայնոսիկ ի Միաբանիցդ՝ ելցէ պատուով ի Միաբանութենէդ ։։

« Խնացեալ մեր զայս՝ զարհուրեցաք և վաղվաղակի ապդ
« արարաք ձեզ չառնուլ բնաւ յանձն զվնասակար և զկործանիչ
« Միաբանութեան առաջարկութիւն նորա, հանդերձ բողոքա-
« կան գրով, յոր առցագրեցաք մեք առ երեքեան, յայտ
« առնելով ձեզ թէ « Ընդունիմք մեք զայն և զայլ ինչ յայ-
« տարարութիւն առնել և մատուցանել Արքայանին յառաջ
« քան զառնառնել և քննել մեր զայն ։ ։

« Յետ բազում աւուրց անտի առաքեցիք մեզ առ զայն
« յայտարարութիւնն վրայ. լեզու, հանդերձ յաւելուածով
« առաւել եւս վնասակարով. և զայն ի տես մերն, և ոչ
« ի քննութիւն և ի հառանութիւն և մեր երեցունց որ առ
« ի Փարիզ ։

« Ընդերկեալ մեր զայն զարմացաք և տարակուսեցաք
« զառաջինն ընդ հառանութիւն և ընդ հառաստութիւն նորին
« ի Միաբանիցդ, և յետ բազում մտածութեան որոշեցաք
« վերստին բողոքել ընդ այն, յոր առցագրեցաք մեք երեքեան,
« հանդերձ Հ. Ղեւոնդիւ, որ ի ժամանակի անդ առ էր առ մեզ
« ի Փարիզ. և ապա ուր ուրեմն լուաք զի բռնութեամբ առցագ-
« րել առեալ էիք զայն Միաբանիցդ ի վանս, և հնարիւք
« ի Պօղոս, առնելով նոցա թէ գործակալք ձեր ի Հռոմէ հաս-
« տատեալ էին զայն և առեալ Արքայանին. և թէ՝ այնու ինքն
« Ջուլիանոս յառաքեալ ։

«Ա՛լ հնարիցս քաղաքավարութիւն և մեծի ակնակալութիւն . . .

«Տեսանել Պառնապի զի անկայք զուք յոտոգայթս իւր, համարձակի յայնժամ ոչնչացուցանել զՄխարանութիւնդ, թելադրէ և առաջարկէ նա ձեզ այլ ինչ յայտարարութիւն, խոստովանել և վկայել Մխարանութեանդ թէ, «Եկեղեցին «Հայոց սրտացոյց է ճշմարիտ եկեղեցւոյն Քրիստոսի :»

«Ընդ ամենայնի, և առելութիւն ազգին Հայոց ընդ Մխարանութեանդ յատկանական : . .

«Ահա մեծի յոյժ վշտակրաւ ղառիւն, և ողբալի վիճակ Մխարանութեանդ . . .

«Զարանին տակնուվրայ Մխարանդ անհնարին յոյժ ընդ այս մեծիկն առաջարկութիւն ամբարիշտ Պառնապի, բայց անձնանուէր զօրաւորագոյդ ի Հռոմի հաստատիլ և զայն յառաջագոյն, Քանզի զուք հանդել զՄխարանդ զանազան հնարիւք, զանազան մեծամեծ յուսով, թէ չհրաժարակեցի այն, այլ պահեցի ի ծածուկ առ Պապին, զոր խոստման նորին, և զանազան առատիկ ապառնիւքեք, նզովիւք Պապին : . . թէպէտ և այսպէս առարարեն նոքա զայն, բայց հանդերձ անիծիւք, անիծանելով զօրն զայն և զպատճառն այնորիկ, . . . և որոյ ոմն, Հ. Գարնգին, իբրեւ չար ընդդիմանալ առարարել զայն, առելով թէ չնորհ նմա խրոխտ մտացեալ էք զուք ցնա. «Փախեմ ի վերայ խղճի մեղաց :»

«Եւ ահա վայելուչ բանք ի բերանոյ յաջորդին Մխիթարայ : . .

«Այսպիսի հնարիւք և վարչութեամբ առարարել ազգ զուք զայն և վարանելոյդ ի Պօղոս, բայց ի միոյն, յանհնին կոչելոյ ի կարծեցեալ մեռելոց : . .

«Վեցերորդ՝ տեսեալ Պառնապի զի յաջողեալ նմա յաճեցին, քանզի զներքին հիմն կրծելոյ, Քանզ նա և զարատին չնորհեալ նորին կարծանել, զՄ. վարժարանն ի Փարիզ, ի Հռոմի վերադրել, և զայն կարծէ նա նոյնպէս զերծան յաջողել, յերկիւղ զանձին և զիւրայոցն խորհուրդ

և վասն ձեր զոր ունիք զոհ երթալ զայնմանէ, . . . և տալով ձեր նմա տալ յաշտարակութեան ձերում վերատունս կարգաւորութեան վարժարանին : Վասն որոյ ցուցանէ նա Պապին զօգուտն որ անտի վասն Ծաւալացին, սեխականելով նորա զինչս վարժարանիս, վերատունս ազքատաց տղից . և չարժէ զանիգդայ սրձանիլ հրամայել ձեզ բացարձակ փոխադրել զՄուրատեան վարժարանն ի Հռոմ :

“ Թէպէտ և այն ըստ ցանկութեան ձերում լինի, նախ՝ առ ի հաճոյ լինել Պառնապոյ, և երկբայ ի վարել զվարժարանս ձեր ինքնին, ընդեմ անտի գանուն իմ և դիւրատակ անդամ : . . . Բայց երկնչիմ զոհ վրխալ յերկբայելն, խառնելով յայն Ծաւալացին, ըստ պայմանի յաշտարակութեան ձերում առ Պապն. վասն որոյ Լանայք զոհ հրաժարիլ անտի, պառնաւելով դիւրամատչելի ժառանգի բարերարին, Յովհաննու Մուրատի. և ի ցուցանել ձեզ Նուիրակին զհաստատութիւն Յովհաննու Մուրատի, ամենիքն զոհ յայնժամ անտի : . . .

“ Բայց խնդրեալ Պառնապոյ զհաստատութիւն Տէրութեանս ընդ փոխադրութիւն վարժարանիս ի Հռոմ, ևս ի պահանջեանէ անտի, վանդամայն և իմանալ զպատճառն այնորիկ, զոր ունիք առ Տէրութիւնս, վասն որոյ Լանայ նա հանել առ ինձ ի վարժարանէս, և նախ՝ զՀ. Գարրիէլն, պատճառ առեալ զյաշտարակութիւն որ ի Լուգդի Զվիտալոյ : . . .

“ Եւ ձեր չիամերձեալ պատասխանել անդրամին, թէ նախ՝ յիշատակութիւն առնել գայնմանէ արդեօք էր ի Պապէն ընդ այլ այնպիսի գրուածոյ առ հատարակ, որ առն և անտի . . . և երկբայի՝ զի առեալ էր ձեր ի մէնջ առն բացատրութիւն մտոյ յաշտարակութեան այնորիկ : . . . Բայց առ և զայլ իրաւանցս, զրնակաւն և գրաբայական վարժարանիս, հանդերձ գայթագղութեամբ աշխարհի, զոր պարտ էր ձեզ յիշեցուցանել անդրամին : . . .

“ Ահա ևթէ ասիցէք, զրպէս և առայժմ ինձ առն, թէ “ Պապն չիտամի լսել զիրատունս մեր, այլ կամի գիատարուածն “ բացարձակ հրամանի իւրոյ, » Ահա՛ և առ այս, զրպէս

և առցի ձեզ առ . « Եթէ այդպէս է , ապա բնաւոր որ է « Պաւլն և ոչ հայր հաստատեցաւ , և ապա չէ պարտ հպատա- « կել հրամանին նորին : » Առեցիք զոր յայնժամ և ոչ եռաք ինձ պատասխանի , որպէս և այժմ չկամեցայք զոր տալ պատասխանի անդրադարձին , յիշեցուցանելով նմա զայս . ապա յայտ է թի չէ ձեզ փոյթ զայս առնելոյն ցաւոյ , այլ միայն փոյթ է ձերոյս անձնասիրութենէ զո և քոյոյդ : . . .

« Եօթներորդ , անհատոյն արարն ձեր , զրով հրամանդ առ Հ. Գաբրիէլ , որով յայտ արարիք զզգացումն սրտի և գճանաչումն մտաց ձերոց զոր ունիք : . . .

« Ալ անձնասիրութիւն չար և անարդ նախանձ , ցոր վայր իշխանութեան տարեալ հասուցանէք զմարդն , նա և զամ- բարձեալն ի բարձրագոյն ատիճան : . . .

« Զայսոսիկ նախատեալ իմ յեօթն ամօք յառաջ և ապ- արդեալ ձեզ բանիւք բերանոյ և գրով բազում անգամ , զուշակելով գհետեւեանն որք անտի , գնախատինս Աստծոյ , և գիշեալ ազգիս , որպէս եղեն ցարդ և յիցին ապա , և բանա- զանին արդարք են վերայիշեալ զործոց և վարուց ձերոց . և ահա վասն այսոցիկ պակուր իւիչ կրնաց և կրէ Մխիթա- րիչն , և ոչ ի պատճառս իրաց այսոցիկ , որպէս ասէք ի Թղթի ձերում .

« Ալ թէ գինէ զգացումն սրտի , և գորպիսի ճանաչումն մտաց ետ բաժանումն ի միմեանց զառաքելին Հ. Գաբրիէլի և աշակերտաց վարժարանին , ծանոյց ձեզ գրով և ծանուցէ բերանով հարազատն քո Գեր . Եղուարդ , զոր զգոյս վեր- նախնամ տեսչութեան առաքելոց այսր վկայ լինել ճշմարտու- թեան : . . . Եւ թէ քանի վտակ յառել Հ. Գաբրիէլի այսպիսի ել ի վարժարանէս , վկայ են համօրէն ազգայինքս որք առն ի Փարիզ , հանդերձ արժանեաք , բազում պատասխանութեամբ յԱրքին Պէյէ , իրրեւ առն երէց և պատրաստ մանկանց նա- րա : Սակ ձեզ թէ գինէ շահ օգտութեան և պատիւ տէառն , վասն և նախատինք վիճի : « Զնուաստրէշս իմ վտառատ « ցկոյ , և որ արհամարհեն զիս , անարգեսցի : »

« Այրս այս ազգաւէր և հմուտ քաղաքական վարչութեան, Արքին Պէյ, ծանեաւ ի փոքր ժամանակի զյարգ և զարժանիս Շ. Գարրիէլի, ուստի որոյ և առաջնորդանաց գնաց ի տուն իւր բազում ուրախութեամբ սրտի, իրրեւ զանձս մեծի հանդիպեալ :

« Իսկ գուք, զամս իրրեւ երեսուն ճանապէլով գնաց, և զարդիւնս վաստակոց նորա տեսանելով, յերկիս դառն աշխատութց կրօնիդ, և ի գրաւոր աշխատութիւնս նորին, որ ի վառս Մխայեանութեանդ և յօգուտ ազգիս, մերժեցէք և զոհեցէք գնա անիրաւ կամաց ամբարիշտ Պառնապօի, մանաւանդ թէ անարդ նախանձու ոմանց այսի . . .

« Ով որ այսուհետեւ ի մխայեանիդ որ միաս ունի և զգայողութիւն սրտի, կամելի վաստակել վասն բարեաց հասարակաց, յիշելով զհասուցումն որ հասուցէք գուք այսօր ի վարձս վաստակոց նորա : — Անմիտ և անզգայ ոմանք միայն . . .

« Վասնոր կարեւոր և հարկ իսկ համարիմ յուշ առնել Ձեզ զառաքեալսն որ ասեն ցՁեզ, և բերանով առցեն Ձեզ :

« — Մխիթարեան միաբանութիւնդ սրտաճաքիս ծառայ « և անարդ զերծ եղեալ յամենայն խորհրդոյ և վարմունք « սրանց՝ մուացան խաղաց զգաչուն իւր և զգառն միան- « գամայն :

« — Վարս այս կայ ի գլխոսին և ի կանդնուածն բազմաց « խնդ Հայոց, և ի՞նչպէս հանդուրժութիւն, զի յայտնեցցի « ի բազմաց սրտից խորհուրդք :

« — Վերկս արկեալ է գուք զգայիս և ոչ խնամոյք, « միտչիւ փուչք նորին յանկարծ ձեր հասանիցին :

« — Ձանազարհ գնացն կարէք խոտորել, բայց զինքնացս « նորին չկարէք խոտորել :

« — Տեսանեմ ես, զի գոյ արդարութիւն մի, որում արդար « է ընդել :

« — Տեսանեմ ես, զի բարի ինչ ունի երանել ի չարեաց « սուտ, վասն կարօտելոյ ազգիս :

«— Եթէ ժամանակաւորք զանոն մեզ պիտանացնա մեք, «յետինքն պիտին հատուցանել զայն։»

«Ահա յիշատակեալք իմ և առացեալք երբեմն կատարելոյն ոտիք և կատարին օրըստօրէ, և գուք տակաւին ոչ գիտատ-նայք, յիցեալ յետին Յաղթող Հռոմի, որ եւ իձեռս ձեր և ի սիրտս մատնեսցին. և Բոլոր էք վախճան մտոյդ ի վերոյ խղճի մտոյ անդրդոյ տիեզերին, որ ոչ դիտոյ և չիմանայ ինչ յոր կողմն և շարժիցի ոք գնա։ . . .

«— Եւ մեք Հռոմէական զօրութեան գոք կարօտք և «նոքա յաղթեալ է մեզ բնդդէմ այլազան դա և կատարի «ի չնաման դառալ։» Ասէիք գոք զայն երբեմն . . . այժմ և ոչ ճառալ ինչ կարէք, և ճիկ անդամ գոք հանէք։ . . . Ա՛վ մեծ յաղթութեանդ և փառաւոր յաղթողդ որ յայլազան միաւորեալ ատի, . . . իզոհելոյ ձեր զանձինդ անդրդոյ տրձանին, մանաւանդ Թէ շարժելոյ տրին, Զաւնապէտ։

«Այս առաքելական արհաւիրս և ճշմարտախրատութեան կարօտէիք գոք, որով մեզի յաղթէր ձեզ, և ոչ Հռոմէական զօրութեան, որով յաղթեալ է անդրդոյ մեզի . . .

«Եւ արդ յայս առնեմ Ձեզ վիրոյն, Թէ արդք ձեր մինչեւ ցարդ, հայեցեալ իսկզբան կրօնիդ, և վիրաւոր ազգաւոց ազգս, անդամակ և միաւորեալ էին և են մեզ, մանն որոյ բազմիցի և բազմեալ մեզ. և Թէ՝ հրամանեն ձերոյ և կարծեցեալդ բարձրագոյն իշխանութեան ի վերոյ երկրի, ոչ պարտիմ հպատակիլ, երբեւ ոչ հպատակ քաղաքական օրինոյ Զաւղին; և երբեւ Աղգիդ աշխարհական գաղտի ազգաւոյ ազգիս։

«Այլ Թէ հպատակեցայք գոք նմին կարծելով՝ միաբանեալք միաձայն, ոչ գոլով այնր բան սկզբանէ կրօնիս, մանն որոյ ոչխարակ եմք գհնազանդութեան, և ոչ բան սկզբանէ Հռոմէական միաբանեալ, որում հպատակեալ եմք. և Թէ՝ կամ և կացից ես առաւ, ոչ երբեւ Տեառն գործարանեն կարգեալ ի Հնդ, այլ երբեւ գէտ և արհամարհ երանելոյ ազգաւոյ ազգիս, որպէս երբեմն ի բանտէ ոտ ի Պաւղոս, միանգամ ինքնակամ հպատակեցան Հռոմի գոյ առաւ գոք . . .

„ Եւ ես յայնժամ ազատեալ յամենայն ակնածութենէ Ձանուցից աչխարհի ճշմարտութիւն, հրատարակելով զպատմութիւն վարժարանիս, և զայն ոչ իվրիժխնդրութիւն անխրատութեանցն եղելոց առ իս ասել և անել . . . քաւ լիցի . . . հաւանեալ բանիցն, թէ „Իմ է վրէժխնդրութիւն ասէ Տէր : „ Այլ իխրատ և իզգուշութիւն ազատիչ բարերարացն աղիս, զի գիտացեն թէ ոչ թոյլ պարտին օգտակար առնել և անկարող պահել զբարերարութիւն իւրեանց յաշխարհէ : . .

„ Այսու խորհրդով և հաստատութեամբ մնաց

„ Մնամ

„ Պերապետ Տէրութեանդ

„ Փարիզ . 31 *օգոստ* . 1854 .

„ Ի. Ծ. Շ. ՕԱՐԳԻՍ ԹԷՈԹՈՐԵԱՆ . „

Թուղթ Շ. Ազդակ առ Շ. Գ. Ալիշան, յորում հրատէրէ գնա գնալ ի Փարիզ կալնուլ զպաշտօն ուսուցչապետութեան և գառաքելութեան ի տէրէ Շ. Գաբրիէլի, օրինակ զայս .

„ Յարգոյապատիւ և Սիրելեալ Հայր .

„ Հանդամանք վարժարանիս ոչ զանխոտել են ի Քէնջ, վասն որոյ և առիթդ հասարիմ ծանուցանել ձեզ զայն, այլ վկայեալքն և եմ, զինքդրեալս առեմ զոր և խնացեալ էք յայնոսա, և զոր վերտոն և ուղղակի խնդրեմ ես ի Քէնջ, յօժարութեամբ յանձն առնուլ Ձեր գաշխատութիւն զալ այսր ի վարժարանս վաստակել ընդ մեզ ի փառս Աստուծոյ և յօգուտ ազգիս, յոր և վաստակք մեզոն, նախրեալ զանձնեզ ի ծանկութենէ, և յոր վաստհացեալ հանդարտկեցոյ հրատիրել զձեզ ծանրութեամբ :

„ Զանելով այլ ևս ի ժամուս յոյս ի սիրտս ազգիս առ

սիրելիս այդը, և ցաց իցանկալի տեսանիլն ձերոյ առ մեզ այսր ընդ հուպ, որով

„ Մնամ

„ Ձերդ յարգասէր Հայրենեաց

„ Ի Փարիզ. 10 մայս. 1854.

„ Ի. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՒՈՒՄԵԱՆ. „

„ Պատահանի Հ. Վ.եանդի տեսեալ Թղթոյ Հ. Սարգսի, յորում գանգատի զխորչումիննէ Առաքելոցին և յայտնէ պչկամութիւն նորա յանձն առնուլ իւր զպաշտօնն զոր, վասն որոյ հրաժարի յոչ կամելոյ ի հրաւիրմանէ անտի, հանդերձ խրախճից մտօք, և հայցմամբ Բարեբեանն, օրհնակ զայս.

„ Մեծարգոյ և Սիրելի Հայր իմ.

„ Ընդհակառակ զիր ի 10 ամսոյս, նորոգեաց յիս տրտմութեամբ զլիշատակս անցելոց ընդ Մ. վարժարանիդ, և զկնի՝ զոր զեաւեմ քաջ զի կրէք թևսպեհս և լաւեաց, յետ այնքան կրից և վտանգաց ձերոց, յայդմ հասակի, որոց վարձս և սեմանս՝ միայն Առաւած և ազգն: Յորոց իսէր և ինձ ձիւնդ՝ այո՝ պատճառ և արժան էր ինձ լսել առաջարկութեանն եղելոց առ՝ երթալ այդր ի վաղուց, այլ տարագ առաջարկութեանն (առանց ամենևին դանագանելոյ թէ և այսի հաստեցեալ է Ձեր ընդ երթս իմ,) ևս առաւել տարագ վարձաւ և պատճառ եղելոց զինէն առ, և տկարութիւն մարմնոյ, որք ամիսս ևս զիս ի շաւղ դառնալին զորութիւն իմ և դադարեցութիւն. այս ամենայն, և կամաւ տարագելին (յանգիման աչաց ունելով զվարչութիւն ոմանս,) հարկեցոյցին զիս դանագանել առ առաջարկեալն զդադարութիւնս ընդդէմ, զոր Յոսէ թէ և նա քաջ գիտէր, այլ չկամեցաւ գիտակ երեւիլ, մինչև քննել ժողովով զբան իմ, օրինաւոր հանդիպեցաւ, և հաստեցաւ ինայ ինձ առ:

« Այս ամենայն զգուշութիւնք, որպէս տեսանէ Վերապատուութիւնդ են վասն օգտի աղքատաց և եթ, որում սրտիւք Ջանացեալ ի Մխիթարութիւնս և Ջանայ, և չունի բնաւ խորհ յանձին թէ կամաւորապէս և կամ անհոգութեամբ պակասեալ իցէ ի մատակարարութիւնն, եւս առաւել յանխրատ կամ յինքնաշահ անտեսութիւնն դրամանց :

« Իսկ թէ այդր պակասութիւն իցէ լեալ իցէ կամ ինչիցէ, Ձեզ անկ է հարկել այնմ, որ տեսաչ կացէ այդր, և չթոյլատուլ դի վաղվաղակի կամ յոյժ իցէ գան զառհասնելն ի բարերար

*կատակողէն վարեցոյն արծաթն կարգեալ վասն արբոյ և ապքա-
տաց ապգիս ։*

« Ողջ մնել մաղթեմ Յարգոյապատիւ Հայրութեանդ

« Վենետիկ. 2 յունվարի. 1855 .

« Ն. Ծ. Գէորգ Վ. Հէհրմիէզ

« Արքեպիսկոպոս և ընդ Աբբայ . »

*Պատասխանի Հ. Սարգսի տուեալ թղթոյ Գեր. Հէրմիզի ,
յորում ծանուցանէ զառաքումն երկրորդ փոխանակագրին
հինգ հազար Ֆրանկաց , և ապղ առնէ , եթէ յետս դարձուցի
այն , յետս առաքեցէ ինքն զաղբատ մանկունսն առ ծնողս
իւրեանց , հանդերձ ապղարարութեամբ յայտարարութեան ,
և յիշատակութեամբ արհամարհութեանց . օրինակ զայս .*

« Գերապայծառ Տէր .

« Զնամակ Ձեր եհաս ինձ , գրեալ յ2 յունվարի տարւոյս , ընկա-
լայ ի 6 առին ասեայս , և ընթերցեալ զայն՝ ոչինչ զարմացայ ,
տեսանելով զվատածն իմ առյդ , վասն երկրորդ փոխանա-
կագրին , զոր ապատնաչք յետս դարձուցանել անխափան ։

« Արդ ասեմ և ես ծանուցանել Ձեզ յաւուր սրտի , զի
այսօր իսկ արարի ի վերայ Ձեր փոխանակագիր մի հինգ
հազար Ֆրանկաց , և որպէս գրեալ էի առ Գեր. Եգուարդ ,
թէ « Եթէ ոչ ընդունիցի հարազատ զփոխանակագիրն իմ ,
« այլ յետս դարձուսցէ , դարձուցից և ես անյուշտ ի սկիզբն
« զալոյ ամին զբոլոր աղբատ մանկունսն առ ծնողս իւրեանց
« հրատարակելով թէ չկրեն մեզ արծաթ ի վենետկոյ ի ծախս
Նոցա ։ »

« Արդ վերատին և կրկին երկրորդեմ զայն բանս , և դնե-
լով դնեմ վկայութիւն , զի եթէ յետս դարձուածիք զայս
հինգ հազար Ֆրանկի փոխանակագիրս , զոր արարի այսօր
ի վերայ Ձեր ի ձեռն Կոմն անդանաւորի , դարձուցից և ես
յետս անխափան զաղբատ մանկունսն առ ծնողս իւրեանց ,

հրատարակելով թէ իւիժի անձկոտքեան կոյ վատասիրտրոտ-
թեան վարժապետին, զոր բանից գրութեան ձերոյ առ իս։

„ Իսկ թէ ով և ընչ պատճառ անձկութեան վարժապետին,
առնելով տրտում եկամուտ հարիւր հազար ֆրանք, և յղեալն
այլ ի Ֆախս տրին յիսուն հազար ֆրանք միայն, ցուցից ես
զայն ըստ ժամանակին։

„ Զհաշիւս 1851 ամին յղեցից յայնժամ, յորժամ Դուք
առնիցէք պատասխանի լրատացի առաջարկութեան որ և
հաստացանիցէք զրամանդակ պարտս վարժապետին, որպ
կարացից և ես վաճել զհաշիւս։

„ Իսկ թէ ոչխարք լեալ իցեն միանչեւ ցարդ զգուշութեանբ
զոր պարտեալ, ասէք, վասն օգտի տպրատուց և երբ, որում
պտի ետուր չանացեալ է Մխիթարեանց և չանայ, տեսցի
յայտնապէս ի յայտարարութեան անդ զոր տրտից ի գառնալ
մանկանդ յետս, և ի պատմութեան վարժապետին, զոր տպար-
բեցից հանդերձ հատուածօք, նամակօք զրեալք յինէն և
ի Զէնջ մինչեւ ցայսօր, և վկայեցէք աշխարհ և ազգն ոզջոյն,
թէ ո պակասեալ իցէ ի մատակարարութեան վարժապետին,
և ես արդեօք որ տեսուչ կամ այլ, որպէս ասէք, թէ Դուք
որ ի սկզբանէ հետէ արհամարհանօք վարեցայք ընդ իս, և
առ ոտն կոխեցէք զամենայն ազգայնութիւնս իմ առ Ձեզ
որ գինացից Հ. Անանիայի ի Զօլիս, Հ. Եսայեայ ի Պատմոն,
զորմէ գրէ Գեր. Եղուարդ առ մեզ առ, թէ „ Աբանիլիք
„ իմն եղեն ի Տեառնէ զի եւ Հ. Եսային ի պաշտօնէ զրժա-
„ կեալեան։ ոչ և Հ. Յակինթոս առ ի Փարիզ, ընդ որոյ
հաշիւն զաք ինքնին զարհուրեալ՝ ոչ Թողէք գառնալ նորա
այլ վերատին . . . Բէպէտ և ոչ կամեցայք առնել պատաս-
խանի գրութեանդ իմոյ, սրհամարձեալով զայն սովորական
քաղաքավարութեամբ ձերով . . .

„ Մնամ Գերապայծառ Տէրութեանդ

„ ի Փարիզ. 9 յունվարի. 1855.

„ Ի. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՐՆԱՆ. „

ԳԼՈՒԽ ԾԷ.

Հակառակորդիւն Գեր. Հիւրմիւզի ընկդիմ Հ. Սարգսի ի վերջին տալոյն հառաւիկ. — Գաղտնի առնել այնմ գլխոյն փորձ փորձ Հ. Սարգիս. — Բողոքական ոչոր Հ. Սարգսի առ Հ. Աղեքսանդր ի Պոլիս զգնացից Գեր. Հիւրմիւզի. — Բողոքական ոչոր Հ. Սարգսի առ Հ. Տիմոթէոս զգուշացնելիւ Ծնողաց ոչուակաւոր վանիկանց վարժարանին. — Պատասխանի Գեր. Եղուարդայ առեալ ոչոյ Հ. Սարգսի. — Պատասխանի Հ. Աղեքսանդրի առեալ ոչոյ Հ. Սարգսի.

Սակայն ի վերոյ այսր ամենայն բանից հշմարտութեան և կրկին կրկին ապշարարութեան Հ. Սարգսի, կատարելով կատարէ Գեր. Հիւրմիւզ զկամս իւր, պատրաստել զոլով յամենայնի, ինքրեան իրախուսել ի խարհրդականին իւրմէ, ի Հ. Ոսկեայէ, և յորոշեան զինեալ ի բարեկամին Մխիթարեանց իւրոյ, ի Պատնայոէ, հաստատելով զպատճառն իւր երթալն, թէ „ և մի Հռոմէական զօրութեան „ զոմբ կարօտ և նմին յաջոդել է մեզ ընդդէմ այլազգի „ զառագ և կատարի Քշնամեաց զոտալ : ”

Ցետս զրկեալ զխոհանոկապին հինգ հազար Ֆրանքաց, հանդերձ նախատանօք և զրպարտութեամբ զՀ. Սարգսէ, և ձեռնթ աղքատաց ազգին երիք հարիւր Ֆրանք առաքեալ, հաստատելով և զվերջին ապացոյն իւր, թէ „ Այս ամենայն „ զգուշութիւնք որպէս և անհանէ վերապատուութիւնդ են „ վասն օգտի աղքատաց և եմ, որում արտ մոտ Հանապազ „ է Մխիթարեանն և Հանդ : ”

Տեսեալ Հ. Սարգսի թէ վճարեալ էր այնու ընդ ինքն և ընդ Առաքեալ իւր, Գեր. Հիւրմիւզ, խորհի զվերջին փորձել

փոյթ, Թէրեւս գործման գտանել մօտալուտ չարեացն, բաղձել զդնացիկ Աբրայէն առ Մխիթան նորա որք ի Պօլիս, վասն որոյ գրէ Թուղթ մի առ Հ. Աղէքսանդր ի Պօլիս, և խնդրէ ընթեռնուլ զայն յանկնջս համօրէն եղբարցն անդ և առնել պատասխանի, օրինակ զայս.

« Վերապատուելի Հայր.

« Ի քոյն ամաց հետէ, յետ դարձին իմոյ ի Հնդկաց, ոչ գոլ ես բնաւ հանգիստ մտաց և մխիթարութիւն սրտի ի հոգեհարազատ եղբարցս . . . Իցէ թէ այսչափ միայն, և ոչ յաւելուին ինձ ցաւք ապա և յԱստուածընդդէմ նոցին, որ խնդրանէ անտի աստուածութեան իւրոյ մինչեւ ցարդ՝ Հանց և Հանապ միշտ զարդիւնս վատակաց իմոց ոչնչացուցանել, և զանուն աղտոտել յամենայն ուրեք, որում չկարացեալ իմ հանդուրժել բաղձեմ արդ առ օտարս ի լսել զիրաւունս իմ և ի գտանել զարժան . . .

« Արդ՝ ամբ ինն է զի կամ ես առաւ, ոչ իրրեւ Տեառչ վարժարանիս, այլ իրրեւ Դէտ և պահապան ի զգաւշութիւն իրաւանց աղքատաց ազգիս, ազգ առնելով Աստուածընդդէմ զաւղելութիւն և բաղձելով զանուզղելիսն ճառակարտուղութեան վարժարանիս, ինչափ և նա արհամարհից միշտ զազգարարութիւն իմ և զբողոքս միանգամայն :

« Աղդ արարի նմա բազում անգամ, թէ չէր բաւական Հ. Եսայի Մղրաքեան, և չէր բարւոք Թողուլ ի ձեռս նորա միայն զդործակալութիւն կալուածոց Մ. Վարժարանին, այլ պարտ էր տալ նմա ընկեր և զայլ ոք ի միոց անտի : Արհամարհեաց նա զազգարարութիւն իմ, միոյ բաւական համարելով զնա յայն, և միոյ պատճառելով զպատկառութիւն անձանց ի պաշտօնն յայն : Մինչեւ լսեալ թէ Հ. Եսայի ինքնին Թողու զպաշտօն գործակալութեան և գնայ ի Հնդիկս, առանց Թողոյ զրուի յիշատակութիւն առցուածոյ վարժարանին, վասն որոյ առգնապէտ նորոգ գործակալի, Հ. Անանիայի, գրէ առ իս այսպէս.

„ — Զքոզլով Հ. Եաչի և յիշատակ անգամ զկարեւոր
„ գործառնութեանց իւրոց, այլ զամենայն ինչ խառն ի խառն
„ և անկարգաբար թողեալ՝ մեկնի ասել գնալ ի Հնդիկս։ ,,
„ Եւ ոչ այսչափ միայն, այլ և վաճառէ նա ասի զնոսա ինչ
գեառոյ, և արծաթն այն չկրնայ ի միջի, զոր իմացեալ և
օտարաց խօսին հրապարակաւ հանդերձ մեզադրանօք և նա-
խատանօք զանխոհեմութենէ միտրանութեան։ Եւ հատա-
տութիւն այսմ, ահա բանք Թղթոյ Գեր. Եզուարդայ, թէ
„ Աքանչելիք իմն եղեն ի Տեառնէ զի եկ Հ. Եաչի ի պաշտօնէ
„ գործակալութեան։ ,, և թէ՝ „ Այժմու գործակալք երկու
„ ի տակաւ ժամանակի յոյժ բարեկարգեալ են զհաշուեմա-
„ տեանս։ ,, և թէ՝ „ Վասն վաճառելոյն զոր ասէք և վասն
„ որոյ կասկածէիքն զնախորդ գործակալէն եւս, զի երկու
„ գոլով գործակալացն արդ, ոչ եւս Ձեզ տեղի վաճառելոյն
„ ի կողմանէ միւսոյն։ ,,

„ Ի բանից նորին ասի կարէք գուշակել զողբալի վիճակ
առաջնոյ Մ. վարժարանին։

„ Այսչափ ինչ հաւատոյս ծանուցեալ զգործակալութենէ
առաջնոյ Մ. վարժարանին որ ի Պատաւիա, եկից այժմ
ծանուցանել զմատակարարութենէ նորին որ ի Փարիզ։

„ Արդ մատակարարութիւն Մ. վարժարանին որ ի Փարիզ՝
յանձնեցաւ Հ. Յովհաննու Սարկուեճի ի Գեր. Հիւրիւզէ
ի 1846 ամի։ Զամս հինգ վարեաց նա զպաշտօնն զայն, և
ծախեաց իւրովքն հարիւր հազար ֆրանք վասն երեսուն և
եթ մանկանց վարժարանին։

„ Ընդ ասրամեկլի ծախան բողոքեցի ես բազում անգամ
առ Գեր. Արքայն ի վաճառս, և ոչ թէպէտ զանգատէր ընդ այն,
այլ ոչինչ գործնեան տանէր այնմ. թէպէտ և խորհուրդ
կարեւոր եւս ունիմ ի դէպս ինչ բարեպատեհ, այլ ես արհա-
մարեաց զայն։ . . . Եւ ահա այսպէս եղեւ մատակարարու-
թիւն վարժարանիս մինչեւ ց1850 ամի,

„ Ասացեալ ի դէպ էր և ինձ ասել լսոյս բանից գրութեան
Գեր. Եզուարդայ. Աքանչելիք իմն եղեւ ի Տեառնէ զի կոչե-
ցաւ Հ. Յովհաննէս ի վաճառս. քանզի յայն ամ ազդեցին Գերա-

պայծառ. Արքային բանք բողոքմանս, որ ընդ սարսափելի ծախս վարժարանիս, յորժամ եռաս նա զծախս տպարանի վանացս արտաքսել առաջ Հ. Յովհաննու, ընդ որ սարսափեցաւ և ինքն եւս, և որոշեաց չդարձուցանել զնա այլ վերստին ի պաշտօն յայն մատակարարութեան, այլ առաքել այդր ի Զօլա յայլ ինչ գործ կարեւոր կարծեցեալ (*).

« Իրիւս էանց պաշտօնն այն մատակարարութեան վարժարանին ի ձեռս Հ. Գաբրիէլի, Լանաց նա ամենայն խնամով ծախել զարծաթն զոր հինգ վաթս արաց ծախք վարժարանիս ետուեալ էին վաճառն հատար ֆրանք, և այն վաճառն վաճառեն մանկանց վարժարանիս, յղեալ արծաթն այլ ի Պատուխանէ, յեկամտից կալուածոց քառասուն և ութ հազար ֆրանք, և ի Բազակաց մանկանց երկոտասան հազար ֆրանք.

« Ահա տեսանի առ զանազանութիւն ինամոցն հինգամեայ ծախուն վարժարանիս, որ ձեռամբ Հ. Յովհաննու եղեն, և իւրիցն հինգամեայ ծախուն որ ի ձեռն Հ. Գաբրիէլի եղեն, թէպէտ և ոչ ինչ զանազանութիւն տեսանի ընծայուածն Գեր. Արքային, զի չեցոյց նա երբէք զոհութիւն ինչ ընդ խնամով մատակարարութիւն վերջնոյ մատակարարին վարժարանիս, թողեալ զզանազանութիւն բարեկարգութեան վարժարանիս և յառաջադիմութեան աշակերտաց տրին, զոր միայն օտարք գովեցին և անճոռնի տիպիւ հայեցան ի սա.

« Եւ այսպէս մատակարարեալ և յառաջադիմեալ վարժարանիս մինչեւ ցյուլիս անցելոյն, յորում եհաս անդամահ և վեհաւակար հրամանատարն ի Գեր. Արքային առ Հ. Գաբրիէլ: Յետ այնորիկ անկանոյ ինչ խանգարեցաւ, խաղաղութիւն և անհանգստութիւն վարժարանիս առհասարակ. զի եղեն ի վարժարանէն աշակերտք ոմանք ի Բազակատոյ անտի վիրաւորեալք,

(*) Ահա ըստ այս վեհաւակար գրութեանն Հ. Նաւասեայ և մատակարարութեան Հ. Յովհաննու, և ըստ յանդիմանութեան և ապերախտութեան նոցա՝ զրկ Հ. Արքիս դյանգիմանական թուղթն առ նոսա. և դոյն չեն քաղաքավարութեան և կրթայրական ազգարտութեան: Տես և թ. Տարոր պատմութեանս էջ 324. և թ. Տարոր պատմ. էջ 122. (Մանթուխին Հեղինակին.)

և պակասեցաւ ելանուտ տալին երկոտասան հազար ֆրանք իտարեկն :

« Ասպա անմարթ էր մեզ այնուհետեւ ընել զտարեկան ծախս վարժարանիս առանց ընդունելոյ ի Պատուխանէ առաւել քան արծաթ , որում և խելամուտ արարի զԳեր. Եդուարդ որ առա գոյաւ ի ժամանակի անդ , և որ խոստացաւ ինձ խելամուտ առնել այնմ բնութեամբ զհարազատն իւր և զառաջակայս նորա ի վանս , հանդերձ այլ կարեւոր յանձնարարութեամբ , զոր յանձն էառ կատարել , թէպէտ և ոչ քան կատարեաց :

« Յետ աւուրց քանի անտի յառա դարձուցաւ ինձ փոխանակագիրս հինգ հազար ֆրանկի , հանդերձ առաքանօք իրրեւ երեք հարիւր ֆրանկով , և նախատանօք և զրպարտութեամբ որ ի բացատրութեան նոտարի , ըստ թելադրութեան Գերա պայծառ Արքայի , յայտ առնելով հատարակաց թէ « յոյժ « առաւելութեամբ քան զսահմանեալ ծախսն անպակաս ան « ցուցեալ էր արծաթ ի պէտս վարժարանիս , ո և որպէս թէ յանդգնութեամբ և խարդախութեամբ առաքեալ էր ի վերայ նորա զայն փոխանակագիր հինգ հազար ֆրանկի : Եւ այս պէսի յայտարարութիւն ի ձեռս բազմաց անցեալ եհաս ի ձեռս իմ այր , հանդերձ կարեկից ազդարարութեամբ Կաին անդրանուարի և ծանօթի մերոյ յինն ամաց հետէ , որոյ ձեռամբ անցուցեալ եմք ի վենետկոյ առ հինգ հարիւր հազար ֆրանք , և առի անդ երկու հարիւր հազար ֆրանք , զարծաթն Ադանաբեանց . . .

« Եւ ոչ միայն զայս առնէ Գեր. Արքայն , այլ և դադարեցուցանէ զանցուածն առ զամսական ծախսն վարժարանիս չորս հազար ֆրանկն զկարեւորն և զանհրաժեշտն . . .

« Տեսանէք արդ՝ թէ զիւրդ զարդիւնս չորեքտասանամեայ պատուական աշխատութեանս Լանաց և Լանայ նա ոչնչացուցանել և զանուն իմ ապարանել յամենայն տեղիս , իրրեւ վատնիչ և խորխիչ իրաւանց ազգիս . քանզի բանք յայտարարութեան նորա զայն առն կարծել օտարաց և ծանօթից մերոց մաս և անդ . . .

« Հ. Պետրոս Մխիտարեան գնաց երթալն տեղի պարտի

ի Տրապիզոն, և արար անդ չինուած առանց հրամանի Աբրայիմ, մինուանդ թէ ընդդէմ հրամանին նորին, և ծախեաց յայն քան և հինգ հազար ֆրանք վասն որոյ արար փոխանակութիւր և առաքեաց զայն ի վերայ Աբրայիմ ի Վենետիկ, ոչ յիտս դարձուա այն առ ի պահել զպատիւ նորա ։ Իսկ փոխանակա-

դիրն իմ հինգ հազար ֆրանքի յետս դարձաւ առ ի չպահել զպատիւն իմ, նա և ի պատուել զիս ընդ այն՝ դադարեցուցանէ զամսական ծախսն վարժարանին՝ առ ի տուապնցուցանել զիս կարօտութեամբ արծաթոյ և զանգատանօք աշակերտաց ։

« Գիտեաք թէ յերեսի՝ յոյժ առատութեամբ քան զսահմանեալ ծախսն անցուցեալ էր արծաթ ի պէտս վարժարանիս. և թէ՝ ըստ բանից յայտարարութեան իւրոյ, յանդգնութեամբ և խարդախութեամբ առաքեալ էի ի վերայ նորա զփոխանակադիրն զայն հինգ հազար ֆրանքի. չէր պարտ նմա ակնարկիլ զինէ ակնածել, եթէ ոչ յանկնկալութենէ յապարգոյ արդեանց, զոնէ յանցելոցն անտի, . . . ունելով իմ ի վանս արդիւնս վաստակոց երկուց հարիւր հազար ֆրանքաց, զոր յիշատակեալ եմ նմա երբեմն և առեալ գյանկ զկնի նոցին կարգաւ . . .

« Սակայն չկրնէ բնաւ զայս ամենայն Գեր. Աբրայիմ, և չակնածէ երբէք յայնչափ արդեանցս անտի, վասն զի ինքնահաճ կամք և անարդ նախանձ արհամարհել և մոռանալ տան զարդիւնս վաստակոց և զիրաւունս այլոց ։ . . . Թողից ասել զանկարելութենէ խորհրդակցոյս խորհրդականաց նորա ։

« Եւ արդ՝ զինչ պարտ իցէ ինձ առնել, քայց եթէ դադարել այսուհետեւ ի գրութենէս առ Գեր. Աբրայիմ, և փութալ կատարել արդեամբ զդրեալն որ առնս. այս է, դարձուցանել յետս զաղքատս մանկտուն յապրիլի տարւոյս, հանդերձ յայտարարութեամբ առ ծնողս նոցա, թէ չառաքէ Գերապայծառ Աբրայիմ արծաթ ի կարեւոր ծախս վարժարանին, պատճառելով թէ « յանձկութեան կայ մատակարարութիւն նորին . » և ապա հրատարակել զգաստութիւն Մ. վարժարանին, սկսեալ ի սկզբանէ ամսոյ մինչեւ յայսօր ժամանակի, պատմելով զամենայն անցեալն որք անցին ընդ նա, զի ծանիցէ

*ամենայն աշխարհ, թէ ոչք եղեն խոժոռ և վնասակար յա-
ջողութեան և յառաջադիմութեան նորին, և զասիցէ զար-
ժանն։*

*« Այս՝ արարից ես զայս ամենայն և անխափան, քանզի
վճարեալ է առ ինձանէ անխրատութիւն . . .*

*« Իսկ նախատակ ծանուցանելոյ իմ ձեզ արդ՝ զի մի՛ մեղադրի-
ցէք զիս ապա, թէ ընդէր ոչ ծանուցի ձեզ զայս յառաջա-
գոյն, քանզի ծանուցի ձեզ զայս յառաջագոյն, և զի զնկուաչ
զայս ծնողաց մանկանց. վասն որոյ ազաչեմ զձեզ ընթերչիք
զԹուղթս յանկանչս եղբարց այդր, և ծանուաչիք ինձ զոյն
անյապաղ. զի Ձեամ ես լսել միայն, թէ ընկալեալ էջէք
զԹուղթս, և ընթերցեալ ձեր ամենեցուն այդր, այնուհետև
ձեռն ի գործ արարից . . .*

« Յաւարին արտ. ողջունակ զհամօրէն եղբարս այդր,

« Մնամ

« Վերապատուելի Հայրութեանդ

« ի Փարիզ. 13 մեծ. 1855.

« Խ. Ծ. Հ. ՍԱՄՊԻՍ ԹԼՈՒՄԵԱՆՑ. »

*Պատասխանի Գիր. Եղբարդոյ տեառն Թլփոյ Հօր Սարգսի, յորում մեծաց ազգապարտութեան նորա, յանկոր-
ծանխորժելիսն, որ ի գնացից հայրապատին էրոյ, այլ գիտից
գրաւորական էրոց գրել որ տխորժելի էր նմա և յարգոյ՝
օրինակ գայր։*

*« Գերյարգոյ Տեառն Վերապատուհ վարդապետի սիրելոյ
ողջոյն ի Տիրոջ։*

*« Ըստ ազգապարտութեանդ Վերապատուութեանդ՝ չգիտեմ
ինչ ամենևին զանխորժելոյց, այլ գիտից առանձնական և
գրաւորական էրոց՝ յոր կարծիցի ինձ բազմամեայ սէրդ։*

« Յաղեսցի ինեմ այսր ի Վենետիկ՝ Գորոն Աղանար

*կալաւ զնա առ իւր օր ՚ի, և ընդ այլ պրաւորական խնդիրս
իւր կամեցաւ յինէն նախ առաջին զՀաւատերգութեանն
Վիրգիլեայ հանդերձ ծանօթութեամբն : Վասն որոյ ի ժա-
մանել իմում այսր ակաւ պատրաստել զծանօթութեանն, և
զառ խնդրոյ իւրում գտանել ՝ զՀաւերձ առ Մաւիս Տիկին,
(զոմանք զՀաւերգութեանն վաղ իսկ թարգմանեալ էր իմ.) և
ընդ ուղեւորի ասէր այն ինչ եղեալ զայն ի ճանապարհ, և
ահա ընկալայ զդոյժ մահու նորա, որ ի 21 անցելոյ ամսոյն
ամենայն բարի պատրաստութեամբ և առաքս խորհրդով փո-
խեալ է ի կենաց սոսի յաւուր տարելդարձի ծննդեան իւրոյ :
Եւ զոմանք ընկալեալ էր իմ սոսի հրամանն վասն նորա՝
կանդնել մատեան ի սոսն իւրում, ամենայն գիրս ամենայն
մարթ էր հաղորդել նրա և կամէր ինքն և ամենայն ընտանիք
նորա. վասն որոյ և ի մահուան գիրքին լեալ է նմա հաղոր-
դել :*

*« Վասն Վերապատուութեանդ զի զառաքս Փերդոսի նմա
խոկ նախրեալ էի. արդ ի տեսանել իւրում զարագրութեան
նոցին՝ պատուէր առեալ էր շարայարել զհետ զՀաւերգու-
թեանն Վիրգիլեայ, կամելով անելիկրայապէս հատուցանել
զծախս երկարանչելոցն : Բայց արդ ինչուա զարգասեալ
ամենայն, ընդ որ առաւել ինչ է արտութեան իմ առ մեծա-
արտութեանդն զոր զդամ ընդ մահ նորա : Պարտ էր այժմ
Վերապատուութեանդ զառնել ի Պատուական :*

*« Վասն զարձեալ Վերապատուութեանդ զի նա ինքն հան-
դուցեալն յանձնեալ էր ինձ և զԹարգմանութեան Եղիսաբեայ,
զոր և խոստացայն նմա ի յետին գրիս՝ (զոր չկարեաց ընդ-
նել՝) յղել առ նա ընդ հուպ ընդ այլսում ուղեւորի : Բայց
նա ևթող զաշխարհ, և ոչ անակնկալ ինչ էր ինձ մահ նորա.
զի ի վերջին տեսութեան իմում զոմն ոչ քաջառողջ, զոր
և ինքն զգացեալ զվաղնդ կենաց իւրոց, պատրաստէր ի մահ,
և կամէր խոկ առնել զկտակ իւր, բայց երկնչէր չժամանել
վասն հարկի Թղթակցին ընդ Վենետն : Վասն որոյ իբրեւ
տեսանեմ զի վճռեցաւ. առնէր զայն՝ Թողէ առ այժմ վասն
ապահովութեան զոր վաստրակն առ Մաւիս տիկին իբր զի-*

տակ ամենայն գիտաւորութիւն եանց և տրամադրութիւն եանց իւրոց, տալով նմա իշխանութիւն կատարելոյ զայն ամենայն։ Զոր և արար ի ձեռս Գօտարի, ակնարկելով նա զգիտաւոր տրամադրութիւնս իւր ի գրի անել։

« Վասն Կեսարացւոյն մի՛ ինչ երկրայիցէք վերապատուութիւնդ, զի ըստ խոստմանս իմում ի կատարել երկոցս գոլոյ նորին՝ զոր ի ձեռն ունիմ, կատարեցից զայն։

« Տեառն Վերապատուութիւնդ զի չէ արժանի այդ պատասխանից. այլ ի ձառանէ Սրբոյդ ոչ ինչ ի գժտարընդունելի։ Յառաջ զի սրտ ի կատարեալ առողջութեան ախտիցդ, յոր և մաղթեմ ախտել ձեզ յամենայն ոմն,

« Գոլով

« Գերյարգոյ Ձերսրութեանդ

« Ի Շուամի. 3 փետր. 1855.

« Ն. Ծ. և հոգևկցորդ եղբայր

« Հ. ԵՒՒԱՄՊ ՀԻՒՄԻԹՋԵԱՆ

« Արքեպիսկոպոս Շիրակայ. »

Թուղթ Հ. Սարգսի առ Հ. Տիմոթէոս Փենկերեան ի Պօլիս, յորում գանգատի զծնողաց Բոշակաւոր մանկանց Մուրատեան վարժարանին, որք ոչ միայն զլանան հատուցանել զիստակացեալ տոքրիկ Բոշակ մանկանց իւրեանց, այլ և չարախօսեն և Բուղթս ծանուցանս գրեն առ նա օրինակ զայս.

« Վերապատուելի Հայր.

« Յառէմ ես, զի ծանր Բուէ յոյժ ունայ յազգայնոցս այդր, նա և կարոտացայ այսր հատուցանել հազար ֆրանք ի տարեկան Բոշակ մանկանց իւրեանց ի վարժարանիս, թէպէտ ի վարժարանի այլոց ազգաց հատուցանեն առաւել քան զերկու հազար ֆրանքս, հանդերձ ընծայիւք և շնորհակալութեամբ. և ոչ այսչափ միայն, այլ են ունայք յազգայնոցս

այսի որք չնչին ինչ թոշակ խոստանան հաստեցանել մեզ ի ծախս մանկանց իւրեանց, և զայն ևս պղտան ապա, հանդերձ չարախօսութեամբ և ամարդի դրութեամբ առ մեզ պատասխանեաւ իւրեանց. որպիսի ոմն է***, որոյ երկու որդիք հետզհետէ եկեալ դաստիարակեցան ի վարժարանս, խոստանալով հօր նոցա հաստեցանել իւրաքանչիւր մանկան ոսկի հարիւր Ֆրանք ի տարեկն։

« Անդրանիկ նորա գամն հինգ դաստիարակեցաւ առանձնայն խնամօք, և վարժութեամբ ևս յերաժշտութիւն, որոյ ծախքն արտաքոյ են տարեկան թոշակին, և զայն ևս ոչ ամբողջ հաստոյց հայր նորա, այլ զմիոյ տարւոյ թոշակն միայն։

« Եւ իրրև զառնայր պատանին առ ծնողս իւր այրր, խնդրեաց իմանալ ինչ ինչ զազգիտարէն գրեանս իւրեանս ի պէտս իւր, առաւել քան զերկու հարիւր Ֆրանքի, խոստանալով առաքել մեզ զարժաքն ընդ հասանել իւր ի Պօլիս. և իրրև յապաղեաց ևս առաքել մեզ զայն, գրեալ խնդրեցաք ի նմանէ, արտ նա պատասխանի թէ հաստեցեալ էր զայն Հ. Յովհաննու այրր. և առ նա գրեալ մեր հարցաք, ոչ ևս նա մեզ պատասխանի։

« Ահա այսպիսի է պտուղն որ ի կրթեցեալ թոշակաւորս մանկանց վարժարանիս . . . .

« Մնամ Վերապատուելի Հայրութեանդ

« Ի Փարիզ. 24 փետր. 1855.

« Ի. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԼՈՒՄԵԱՆ. »

Պատասխանի Հ. Ալեքսանդրի առեալ բոլորական թղթոյ Հ. Սարգսի, յորում արգարացուցանէ զնա յամենայնի, և զարդէ յոյժ զԻնր. Արբային, և ազաչէ զնա չառաքել յետս զաղբատ մանկունս վարժարանին, և չհրաժարակել զպատմելիսն, հանդերձ խոստմամբ գրել Վարդանեայ որ անդ ի Պօլիս գանգատ առ Ինր. Արբայն իմանա, օրինակ գայս.

„ Վերապատուելի Տեառն և Հօր Սարգսի վարդապետի ողջոյն կարօտանաց :

„ Մինչդեռ առի գրիչ ի ձեռին ի գրել քեզ, երկրաշարժ գարհուրելոյդ զամենեսին, և ի ժամ գրութեանս մերթ ընդ մերթ ցնցի բայց թեթեւ. առաջինն որ էր ուժգին տեւեաց երբ 18 վայրկեան :

„ Եկից արդ ի պատասխանի նամակի Վերապատուութեանդ որ ի 13 փետրվարի :

„ Յառաջին մասին գրէք դանգատանս, զի ի գարձէ ի Հնդկայ և այսր Վերապատուութեանդ չգոյիք բնաւ հանգիստ և մխիթարութիւն. այդր չէ պարտաւորել զՎերապատուութիւնդ, զի յայտնի է առակն թէ՝ Բարեւ գործեա և գոյեա չարիս :

„ Գիտէ Վերապատուութիւնդ զի վասն իմ և ոչ մի գաւառի գինի արբին, այլ նամականին կան վկայ ապազայից վասնզոյն :_ Վասն որոյ զոր առնեմքս կամ արարք է վասն Աստուծոյ և ևթ. ապա թէ ոչ՝ ևթէ էր մեզ ապառել զփոխարէնն յաշխարհի աստ, վայ էր մեզ. սակայն Աստուած ինքնին գիտէ զարդիւնս իւրաքանչիւրոց և ըստ այնմ հատուցանէ : Վասն այսր բանիդ չկարեմ այլ ինչ ասել :

„ Յերկրորդումն գանգատիդ գիտասխարութենէ եկամտոյն, և յայտ եւս ես ընդ ձեզ եմ, և կարի քաջ ունիք իրաւունս, բայց յուսահատեալ եմ թէ քահանայքս չկարեմք առաւելագոյն ինչ գործել. զի զինչ զգպրատան եկամտոյն խորհիցիք. ոչ ապաքէն և զեկամուտս վանացս նոյնպէս չարաչար մսատակարարեն : Ունին իրաւունս աշխարհականք, որք չկարեն հատուցել թէ Մխիթարեանքն մի այսչափ ամաց, չունիցի պարէն եկամտից ըստ բաւականին :

„ Այլ զինչ պարտ իցէ առնել. պարտիմք զոհ լինել զի միշտ գլուխքն անիւնս մատցեն. ապա թէ ոչ՝ գիցուք թէ այժմ կամ թէ առել ցորչափ կենդանի էք, զանն գայրն յարմարատար, և առնեցի ինչ բարւոք ընդ ձեզ. յորժամ մեռանիցիք, զոր Տէր հնարէ արասցէ, գինչ լինիցի, բայց եթէ մերթ բարւոք մատակարարիցի և մերթ չարիս :

«Նոյնպէս ունէր ամենամեծ իրաւունս վասն մատակարարելոյն Հ. Սարգսեանին, զորմէ և ես ըստ բաւականին խօսեալ էի ի վեր յամին 1846, և ասացեալ իսկ թէ նա յանձնայն պաշտօնս իւր եղոյց ի հաշիւն տալոյ հիւսպէ։

«Անտի՝ բոյց յետոյ ուրեմն զնդիս վարժարանէ և ի Տառնէ։

«Յետ այնորիկ ապա ընդ անտառաբնեամբ վ. իրապատուելոյն և Վ. Հ. Գաբրիէլի չգոյր ինչ և չինաց ինչ գանգատելի զնախայց, և այսմ երկամաւ չափ պատրաստ եմ վկայել։ Վասն որոյ զամենայն ինչ զոր գործեն ի վանս, ըստ այսմ նկատեսան, անիրաւ գործեն. ուստի և երբոյր մանիր գանգատանաց զդարձէ փոխանակարգոյն արդարացի են, և անվայել և անխոհեմ գործ գործեալ ի վանաց, քանզի պատճառ Մեծաւորի կամ գործակալի Փարիզեան վարժարանին է նոյն ընդ ազգէն Մխիթարեանս. վասն որոյ խոյտառակել զնա է խոյտառակել զհամօրէն ասեմ. և պարտ էր ոչ վանին հինգ հազար, այլ թէ և տասն հազար էր, պարտ էր վճարել պարտեաց, որպէս հաւանեցին զդրամն խարէութեամբ առեալս ի Թրեստ ի Հ. Արիգոսէ, զոր կարէին ժխտել իրաւամբ, զի չունէր ինչ հրամանագիր ի ձեռին իւրում ի վանաց։ Ի վերոյ այսր ամենայնի վասն պատուոյ Մխիթարեանս յանձն առին և վճարեցին։ Պրչամբ եւս առաւել պարտ էր պահել զպատուիրեսն ի Փարիզ քաղաքի։ Սակայն Վ. իրապատուելոյն միայնակեաց ընդ իս՝ Թէ՛զ ասէ զայսոսիկ ոչխարամբեսն վանականացս և ոչ չարութեան պրծի, և ոչ ինչ վարկ ինչ ժամանակ յուղղել զամենայն և դնել ի հաստատուն կարգի։

«Չայցցանէ պատրաստակեաց և զկր միայնական ի վանս ի գանգատանաց, յոսամ Թէ անդրադարձցին սխալեցեալ իւրեանց։

«Արդ ի ծանեալ ինձեալ ոչխարիս Վ. իրապատուելոյն, մի վասն վրէժխնդրութեան անխոյս յանձնել մանկտեան և մատանել յարիւն նոցա, որոց ցարդ եղերութ հայր հայրապետիլ, և վասն նոցա ոչ խնայելեաք ի կիրան ձեր և յոտսյոյժ

և ի կեանս ձեր ողջոյն։ Գանել ի գարձին նոցա ինձ և շխոթ մեծ ծագիցի ծնողս նոցա և յոգին ողջոյն, և ամէն և նախատինք մեծ, սակայն մարմի այնմ կեան քանի մի տարոց լինել ի մոռացօնս, այլ միտս խորհրդեալ Տանկրատայն ցկեանս խրիմանց տեսանել։ Նոյն յոտում ինչ Վերապատուութիւնդ առ այժմ ի բաց Թողեալ զվերջինն զայն գաւառիկ փոքր, զիմաստութիւնդ փարեալք։

„ Մեզ ապարէն պարտ է կարեկցիլ ընդ վիճակ վանացս. քանզի գոր ի մեր ժամանակս ծերագոյնք ձանիչ առեալ են, նոքա այժմ խորհրդակիցք են։ Ես ի վերջին նստոյդ երբ եղէ ի վանաց ունէի հասակ չատ տարեաց, այլ տակաւին ես ոչ հնոք երեւէի յիս խորհրդակցութեան. արդ աշակերտն աշակերտին ինոյ խառնել ի խօսս։ Վասն որոյ նախ Վերապատուութիւնդ և երկրորդ մեք որ յառաջագոյնքս եմք հասակաւ պարտիմք խնայել Միաբանութեանդ, և մի՛ վասն մանուորաց տապալել զաշխատանս այնքան ամաց հայրենական ծերոնեաց մերոց։

„ Վասնզի գիտեմ Վերապատուութիւնդ՝ համարիմ թէ այս բանք իմ քաղցր հնչեացեն յունկն ձեր, զի և դուք ճանաչէք զկերտս իմ, և միխիթարեացեն զձեզ այնու զի չէ ամենեին յանձանձօք և երախտիք և վաստակք սիրելի Վերապատուութեանդ որոյ յիշատակ անմահ մնասցէ։

„ Եթէ ոչ էր ժամանակս այսպիսի և վիճակ քաղաքիս այսորինակ, արդարև մարթ էր մեզ միտս առնել ի վանս և անդ կացուցանել. սակայն չկարեմք քայլ մի առնել հետանալ, մինչեւ հաստատացի վիճակ մեր. զի զոր ցարդ վայելեմք ես վասն պատուոյ անուանն Տաճատութեան մերոյ։

„ Բայց ես հաւանականապարտ եմք թերեւս յառաջիկայ ամառանս տեսանել անդէմ Տէր առաջ պահեցէ. քանզի դէպք իմն երեւին յաշխարհս զիզձս իմ զայս։ Կարծեմ չէ անգէտ նմանիլ քան այժմ մասին Հրէից, որոյ գժգոհեալ ընդ վիճակաւն և իբր չուեն մարքառեալ, իմանալ պատուոյ ընդդեմ այլոց ազգաց վիճակեալ միշտ յաղթականին. այսպէս և մեք այժմ պարտիմք ծանել զանարգանս իրերաց և ջանալ

շատ ի շնամիաց ծիծաղել զմեզ : Ոմանց որոյ որ ինչ և հանցէ վերստաւուելնդ տոպրուելեամբ լցայ, եթէ ինձեն ամանք որք ընդ իրաւանս ձեր հանդիպացին, բայց և բազում այն է զի հալածանս յարուցանեն ի վերայ մեր :

« Ա՛հ, Վերապատուելի Հայր, չեմք ի Փարիզ. սասանեալ մարին և մաշելեան կեանք մեր յանկերթի և յանտակայ ժողովրդենէն, յանհարթուելնէ քաղաքին և քաղաքականուելեան. չարչարիմք, վտանկիմք առանց հանգստեան և միխիթարուելեան. այնչափ տապից զայս տուգանելն, զի միայն վասն գտանելոյ փոքր ինչ առողջուելեան վտխաքիմ գալ այդր. զի յամենայնեւնդպատրաստեամ այսխառողջացեալ և զերացեալ, և առ հիւծիմ և մաշիմ :

« Զնամակ ձեր նոյն ամենեցուն մեր ընթեռնուլ, և համաձայն ամենեքին ձայնակից ինձ, մանաւանդ քան յիսուն մասին, վասն որոյ և քան այսմ պատճառաւ գրել ի վանս :

« Ներեցէք եթէ ցաւեցուցի զգլուխ ձեր և զաչսդ անհարթ գրութեամբս . . .

« Ողջ լերուք ի տէր մեր և ի պարծանս :

« Ամեամ Յարգոյ Վերապատուելեանդ

« Ի Պօլիս. 1 մարտ 1855.

« Խ. Ծ. և հզպայր

« ԱՂԵՔՍԱՆԴՐ ՊԷՇԻՔԹԱՇ. »

ԳԼՈՒԽ ՃԸ.

Երր Գեր. Հիւրմիզի ի Փարիզ. — Ժողր ազգապատուհական ուրա առ Հ. Սարգիս. — Ժամանիլ Գերապայծառ Հիւրմիզի ի Փարիզ, եւ ընդունիլ Հ. Ղազարեանէ եւ Հ. Պետրոսէ. — Ընդունելութիւն եւ ուխտաւորութիւն Գեր. Հիւրմիզի առ Հ. Սարգիս, եւ պատասխանի տալն. — Այցելութիւն Գեր. Հիւրմիզի առ Հ. Սարգիս, եւ պատասխանի տալն. — Մեղադրական բանիք Հ. Սարգսի առ Գեր. Հիւրմիզ. — Պատճառ գնացող Գեր. Հիւրմիզ ի Փարիզ. — Գժուարութիւն եւ ապա հաւանութիւն Հ. Սարգսի գնալ. — Այցելութիւն Գեր. Հիւրմիզի առ Հ. Սարգսի. — Ընդդիմութիւն եւ ապա պայման գնալ. — Հաւանութիւն Գերապայծառ Հիւրմիզի գնալ Հ. Սարգսի, եւ առժամանակ կեաց խաղաղութիւն. — Երթ պատճառ յանապատական Գեր. Հիւրմիզի, եւ խռովութեան վարդապետին.

Թէպէտ և Հայր Ալեքսանդր և ամենայն ընկերք նորա որ ի Պօլիս իրաւունս տան Հ. Սարգսի ամենայնի, և յուսացեալ զնա զգաստացուցանել զԱբրայի վարմանէն գրով իւրեանց, սակայն ինքն ժամանակի տեղեկանայ Հ. Սարգիս ի թղթոց ամենց որք ի Պօլիս և ի Զատուխտն թէ Գեր. Աբրայի դիմեալ գոյ ի Փարիզ առ իւր հանել զինքն և զՀ. Ամբրոսիոս ի Վ. վարժարանէն, և ի տնի իւրեանց կալցել զՀայր Ալեքսի, և զՀ. Պետրոս։

Յետ երկոց աւուրց անտի, յ9 մարտի 1855 ամի ընդունի Հ. Սարգիս թուղթ մի ի Գեր. Աբրայէն, գրեալ այն ի Զատուխտն յ3 մարտի զայց առեալ ի տան նամակաց ի 5 նորին ամսոյ, զոր յանուցանէ նմա թէ ունի գոյ ի Փարիզ առ

*ի գործեան առնել տարաձայնութիւնն որ ի մէջ Նորա և Ա-
թաթուրեան էրզրում, օրինակ գայր .*

« Յարդոյատառ և Վերապատուելի Հայր .

*« Ի բարձումն ցաւալի տարաձայնութեանցն Ձերոյ ընդ Ա-
թաթուրեան՝ հարկ եղեւ ինձ, ըստ պարտիս ժողովոյս՝ յանձն առնել և զայս ուղեւորութիւն և գալ այդր միաւա-
գամ . եմին իրր այսօր կամ վաղիւ ուղեւոյ լինիմ առ ա-
ւետիս Տէր .*

« Ողջ լինել մնաքեամ

« Յարդոյատառ Վերապատուութեանդ

« ի Պատում . 3 մարտ . 1855.

« Ն . Ծ . ԳէլԱԳ վ . Հիւրմիւզ

« Արքեպիսկոպոս և ընդ . Աբեայ . »

Ցաւալի տարաձայնութիւն Հ. Յարգի ոչ ընդ Ա թաթու-
թեան այլ ընդ Աբգարի էր, սակս կամելոյ նորա փոխադրել
զՄ. վարժարան ի Հռոմ, մնանել զայն ի ձեռս Մաւրոյին.
և երթ նորա ի Փարիզ ոչ ըստ արուեստ ժողովոյն լինի, այլ
ըստ արուեստ իւրոյ :

Ի 10 մարտի 1855 ամի ժամանէ Գեր . Հիւրմիւզ ի Փարիզ,
հանդիպի երկու անձամբ, Հ. Ռոխայէլի Թրենց, և Հայր
Պետրոսէ Մխեանեան, և գնոյ բնակի ի Մ. վարժարանն :

Տեսանէ Հ. Յարգի գնա յանկարծակի՝ ասէ . « Բարի է
« գալուստն ձեր, բայց պի է երթալ և լրոյ, (ցուցանելով
« զՀ. Ռոխայէլ և զՀ. Պետրոս) երթեալ ի վիրոյ աւազակի
« հանելոյ էք այդր . . . քարուք գրեաց, ասէ, ոճն ի վա-
« նայս երթեալն, թէ « Ա.յժմ ժամանակ է խաւարային
« իշխանութեան : » —

„ Յիշեալ յիշեմ ես արդ, ասէ, զանցան որք անցին ընդ
„ իս 27 ամօք յառաջ ի Մատրաս, զոր և ի դէպ է յիշատակել
„ ձեզ այսօր, զյանկարծակի յարձակումն Մուրատեանց
„ ի վերայ իմ, և այն ոչ երեք անձամբք, այլ չորեք և երեք
„ սպառազինօք և զինուորօք առնելին, սուսերօք և բրօք.
„ յորոց յանդուգն յարձակմանէն և յայնպիսի սպառնալեաց
„ երկուցեալ իմ զառաջինն՝ փակեցի զդուռն սենեկիս ընդդէմ
„ նոցա, և ի պատուհանէ անտի հարցի ցնոսա զպատճառն
„ այնր յարձակման ի վերայ իմ. և իրրեւ ծանեայ թէ զար-
„ ծաթն հրամայէր զպրոցին կամէին հանել ի ձեռաց իմոց,
„ յայնժամ բացեալ զդուռն նմի արտաքս առնեմ, և առայի
„ ցնոսա. Ընկալեալ եմ ես ի ձէնջ զերաւուն սպրատաց
„ ազգին իմոյ, պաշտպանեմ զայն յամենայն կեանս իմ.
„ սպա չունիմ ես տալ ձեզ ինչ, կամ յետս դարձուցանել
„ զընկալեալս ի ձէնջ։ ,,

Ասէ ցնա Յովհաննէս Մուրատեան, թէ ինքն իրրեւ բարե-կամ Մխիթարեանց՝ խորհուրդ տայ նմա դարձուցանել զարծաթն յետս և չմտանել ի բանսն։

Ասէ ցնա Հ. Սարգիս. „ Ա՛հ, դո՛ւք իցէք բարեկամ միա-
„ բանութեանս այդպիսի գնացուք ընդ իս. ես ի պաշտպա-
„ նութիւն իրեանց ազգատոհմ ազգին իմոյ պատրաստ եմ ոչ
„ միայն ի բանս մտանել, այլ և տանիլ ամենայն նե-
„ զութեան և վշտաց։ ,, Զայս առեալ դնայ մտանել ի բանսն։

Ի պահասել անդ սենեկի և մահճայ՝ կարելիք լինի նմա զինուորն որ աճէ գնա անդ, և գնոյ պատմէ զայն Մուրատեանց։ Ասէ ցնա եղբարդ Մուրատ. „ Արժանապէս մեզի
„ անդ չուտասկանեն։ ,, Ընդ որ Գալիպոլեալ զինուորին՝ պատմէ զայն ամենայն ըստ ամենայնի կարգաւ, Գալիպոլիսն ընդ անդը-
քաթիխն նորա։

„ Ահա՛ ասէ Հ. Սարգիս, ի դէպ է մեզ այժմ յիշատակու-
„ թիւն անցելոց անցելոց. քանզի ըստ այսմ օրինակի յոր-
„ ձանիլ կ՚ը զուք ի վերայ իմ, և ըստ նոցին անդիմա-
„ դիան վարիք ընդ իս, ետուով ձեր գհետանդութիւն իմ մին-

“ չեւ հասանել ի դրուն մահու, պատճառաւ ասաքելոյ
“ այր զՀ. Պետրոս, դարձեալ ածէք զնա այր կամելով
“ մեռուցանել զիս . . .

“ Այլ կարծեմ ես ասէ, մանաւանդ թէ հաւասարեմ, զի
“ երկինք մղեալ են զձեզ գալ այր աւ ի յայտնել զՀշմարտու-
“ թիւն և ի ընալ զարդարութիւն : ”

Առ ցնա Գեր. Հերմիաց թէ ածեալ էր ընդ իւր զՀ. Պետրոս
աւ ի հաշտեցուցանել ընդ միմեանս :

Առ ցնա Հ. Սարգիս. “ Զինչ խառնութիւն կայր իւր ընդ
“ նմա, և պէտս հաշտելոյ. ոչ ապաքէն խաղաղութեամբ և
“ համբերութեամբ ի միմեանց, ասելով թէ չունի
“ ինքն զնա հակառակութիւն կալոյ նորա ի վարժարանն,
“ բայց հայելեալ ի հանգամանս վարժարանին, չէր մարթ
“ ունել զնա անդ : Դարձեր, ասէ, դու ի վանս և Համոյիր
“ վերադին դառնալ ի Տրապիզոն, և յառաջ ապրիր անդ
“ զպաշտօնդ զոյն կարեւոր :

“ Ապա չկայր ասէ, պէտս ինչ հաշտութեան ընդ միմեանս,
“ և ինամասուն, կարգելով զնա աստ ընդդէմ կամաց իմոց,
“ այլ և ընդդէմ բանից խոստմանդ աւ իս, թէ “ Մինչեւ
“ ցարդ ոչ ինչ ընդդէմ կամաց քոց արարի և առնեմ : ” Եւ
“ թէ “ Եթէ չիցէ քեզ հաճոյ Հ. Պետրոս յետս կոչիցիմ
“ զնա և զայլ ոք ընդ որ և հաճիս ի քաղաքիդ ասաքելից ձեզ այդր : ”
“ Թէպէտ և ի ժամուկ գրէք աւ Հ. Պետրոս և պատուիրեալ
“ պատուիրէք չելանել ասոր հանդերձ այլ անպատեհ ազգա-
“ տրութեամբ . . .

“ Եւ իմ տեսանել զանկարելիութիւն նորա ի պաշտօն վար-
“ ժարանին, մանաւանդ թէ զիշխանութիւն նորա երկեր
“ խոտորեալ զբ ամբաստանեալ ի Հաստեղն և արգելեալ
“ Հռոմայ դառնալ ի Տրապիզոն, բերէր արդեօք աստ և
“ վարժարանիս, որում և խելամուտ արարի զԱստուածա-
“ Նպատակ և որում հաւանեալ նորա գործոյդ զնա բնդ իւր
“ ի վանս. մանաւանդ թէ տեսանել նորա զծանր հիւանդու-
“ թիւն իմ որ ի պատճառս գործեան այր Հ. Պետրոսի,

„ վտիճատու հետացուցանել զնա առն ժամ մի յառաջ ,
„ խնայելով ի կեանս իմ . այլ ձեր ընդ հակառակն վերառին
„ աճելով զնա ոյժ , կամիք յայտնապէս մեռուցանել զիս ,
„ պատրուակս հաշտեցուցանելոյ զմեզ ընդ միմեանս (*) :

„ Առացեալ էր ձեր արդեօք զպատահանին համեմատին
„ և կարծեաց ձերոց , զոր եառաք երբեմն հարցման հանգու-
„ ցեալ Գեր . Սոճալի , ի հարցանել նորա ցձեզ զրով , թէ
„ զիարդ թառէր ձեզ առաքեալն Հ. Պետրոս ի Պօլիս վարժա-
„ պետել մանկանց զպրոցին որ ընդ ձեռամբ Հ. Անանիայի :
„ Ո՞չ ապաքէն արարիք դուք պատասխանի Թղթոյ նորա
„ ոյսպէս . — „ Դուք լաւագոյն եւս քան զմեզ համաչէք
„ զբնաւորութիւն ևկաւորիդ , որ վտրր մի յամառ թառի և
„ չմարանի ընդ այլս : „ Ապա զիարդ կամիք դուք այժմ
„ կարգել զնա առ վարժապետ ընդ ձեռամբ իմով , այն զի
„ վտճ գոյով իմ արդէն բնաւորութեան նորա զանս հինդ
„ ի Պատահան : „

Յայնժամ առէ Գեր. Հիւրմիզ . „ Եթէ ոչ ընդունիք զՀայր
„ Պետրոս , ընկալիք զՀ. Ոսկեյէլ : „

Առէ ցնա Հ. Սարգիս . „ Ո՞չ ապաքէն յոյժ արարեալ եմ
„ ձեզ գրով , և այն ի մտոյ . զիարդ կարեմ ես ընդունել
„ զնա իրրեւ պաշտօնեայ ի վարժարանս , որ կամի առարա-
„ յուցանել զայս . և կամ զիարդ հարկ ի վերայ կացցէ ընդու-
„ նել իմ զմին ի տղայոց առ պաշտօնեայ , չունելով իմ
„ պէտս ոչ մատակարարի , և ոչ ուսուցչապետի և գաղտա-
„ րակի առ :

Առէ անդէն Հ. Պետրոս . Թէ „ Լաւևք մեք արարեալ և
„ ի հետամանէ , զի յայժմոյ վարժարանիս կարուստ
„ մեծ վինի յոչ պէտս առին : „

Առէ Հ. Սարգիս . „ Կարօտ այդ գաղտնութիւն հատա-
„ տուց ապացուցութեան . բայց զարմանամ ես , առէ , զի

(*) Կարծիցէ արդեօք ի բանից աստիս , թէ այնչափ ատելի ար հասարակաց էին Հ. Պետրոս յաչս Հ. Սարգսի մինչեւ տեսութիւն նորին անգամ մեռ բերէր նմա , ոչ բնաւ այդպէս , հայեցեալ ի բանս բազմաթան առաս որ գվախճանէ գաւետեան Գեր. Հիւրմիզի ի Փարիզ , և յարդիւնան արք անտի . . .

(Ստանթատիւն Հիպինակին .)

“ Նախ քան զքննել և զապացուցանել զառաւելն առնէք։
“ Որով իրաւամբք և իշխանութեամբ կարէք զուք առնել
“ փոխարէնս, և այսպիսի պատճառաւ փոխարէնն
“ պաշտօնէից վարժարանին։ Ասէք զհաւանութեան Մխիթա-
“ նեան ի ձեռնարկս յայս։ “

Առ Հ. Պետրոս. “ Գիր. Արքայն ունի իշխանութիւն հա-
“ հանութեամբ խորհրդականաց իւրոց առնել զոր ինչ պատ-
“ շաճ և հարկ համարի։ ”

Առ ցնա Հ. Սարգիս. “ Ո՞չ ապաքէն զոր ինքդ էիր ամօք
“ ինչ յառաջ, որ ասացեր առ հրապարակաւ, թէ “ Առա-
“ ջարկէ Արքայն ինչ խորհրդականաց իւրոց. և ի չհաւանիլ
“ նոցա ընդ այն լուէ ի ժամուն, բայց ապա առնէ զոր կամի.
“ և ի հարցանել ցնա թէ ընդէր արար զայն, պատասխանէ
“ թէ առաջարկեցի ձեզ զայն, թէպէտ և յայտնապէս տեսա
“ ձեզ խորհրդականքն զի ասէ, այլ լուեալ տրտմեցաւ։ — ”

Առ Հ. Պետրոս. “ Այո՝ ասացեալ է ինքն զայս, բայց
“ ասացեալ է եւս, թէ որովհետև օրինաւորապէս ընտրեալ
“ է նա Արքայ՝ պարտ է հնազանդել նմա առանց ընդդի-
“ մութեան։ ”

Առ ցնա Հ. Սարգիս. “ Այդ տրամաբանութիւն քեզ միայն
“ է սեպհական, և ոչ ոք հնազանդութիւն քեզ միայն պատ-
“ կան, այլ ես հաւատակից մարդկան։ ”

Հարցանէ ապա Հ. Սարգիս ցԳիր. Հիւմիւղ, թէ “ Որով
“ իրաւամբք և արդարութեամբ գործեցաւ էր նա յետս
“ զիմոնականացեալ իւր հինգ հազար ֆրանքի, համեմատ
“ պրպտութեամբ և նախատանաւք, ծանուցանելով հատա-
“ րակաց, թէ յոյժ տառապութեամբ քան զիարդ վարժա-
“ րանին անցուցեալ էր ի Փարիզ առ ինքն արծաթ, որով և
“ վառահամրաւեալ էր զինքն աշխարհի, իրրեւ զհատու որ և
“ զխարեայ, և զան այնորիկ հարկաւորեալ էր ինքն փոխ
“ արծաթ գտանել յայլոցն համեմատ վաշխուք և տուգանաք
“ իրեք հարիւր ֆրանք, յառնել նա ետուն պարտապանքն զի-
“ նի։

“ Եւ ոչ այսչափ միայն, այլ իրր խոտոր իւր գործոցն.

„ յանել զամենայն ծախսն վարժարանին զչորս հազար
„ Ֆրանքսն, վասն որոյ պարտաւորի ինքն եւս միջնորդա-
„ թեամբ և երաշխաւորութեամբ ուրուք ի բարեկամաց հայ-
„ թաթիլ արծաթի վից առ հարեւր վաշխու, առ ի պահել
„ զվարժարանն յոտին ամուր ինչ, մինչեւ ազդ առնել ծնո-
„ ղաց թշակաւոր մանկանց յորոշել զվճարակ որդւոց իւրեանց,
„ յեռս առաքել թէ յայլ ուրեք զնուիրել ինոսա, իսկ զոլ-
„ քան մանկունս առաքել յեռս զկնի երկուց ամաց, յամ-
„ սեան ապրիլի: ՚՚

Առէ ցնա Գեր. Հիւրմուզ. „ Վերապատուելի Հայր, ես և
„ համօրէն Միաբանութիւնս քոյիկ ճանաչեմք մեք զյարդ
„ քո և զարդիւնս վաստակոցդ, ընդ որ մի՛ բնաւ տարակու-
„ սիր: Գիտեմք և զինայելդ յարծաթն աղքատաց ազգիս,
„ և այն այնչափ մինչեւ և միոյ փողոյ հացիւ չառանաս դու՝
„ յորժամ արտաքոյ ասեն քաղցեալ լինես: Ապա ոչ երբէք
„ կասկած ինչ զքէն ունելով զվոխառնակատիկդ յեռս զար-
„ ձուցի, և զամենայն ծախսն վարժարանիդ զազարեցուցի
„ առաքել քեզ անխոտան. այլ վասն այլ ինչ պատճառաց
„ արարի զայն, զոր յետոյ առացից քեզ. Քէպէտ և ոչ բար-
„ րոք եղեւ այն խոստովանիմ ես, վասն որոյ պարտաւոր եմ
„ դարման առնել այմ, անձամբ գնալ առ սեղանատերն
„ յորդորացուցանել զքեզ յայն առաջի նորա, որով և
„ առաջի այլոց, և հաստացանել զզարուստ զոր արարեալ ես
„ վասն ծախուց վարժարանիդ, հանդերձ վաշխին և առա-
„ ժիւն: ՚՚

Վկայէ և հաստատուացուցանէ զառացեալն նորա Հայր Յակոբ Ալեպացի Քրէնց:

Առէ Հ. Մարկոս. „ Այո՛ քան առաջին, քէ նախ զունչս
„ կարել ապա ծալիկ նմին մաուցանել: ՚՚

Այս ամենայն խոստովանութիւն նորա ընդ միմեանս լինի յանդիման Հ. Յակոբայ և Հ. Պետրոսի. և իրրեւ մեկնին նորա ի սենեկէ անտի, խոսի առնէին Գեր. Սրբոյն ընդ Հայր Սրգոն, և յայտնէ նմա զպատճառն յեռս զարձուցանելոյ իւրոյ զվոխառնակատիկ նորա, և զալստեան իւրոյ ի Փարիզ:

Հանել ի ծոցէ իւրմէ թուղթ մի, յորում մի ըստ միոջէ ցուցանէին մանրամասնաբար հաւատով ասից Հ. Պետրոսի, զոր յիշատակեցաք ի վեր անդր։

Ընթեռնուր Գեր. Հիւրմիւզ զայն թուղթ յականջս Հ. Սարգսի և ասէ ցնա ահա վասն այնորիկ եկեալ է ինքն առ ի դարման առնել չարեացն այնորիկ։

Իրրեւ տեսանէ Հ. Սարգիս թէ չկարէ այլ եւս արդարացուցանել զամբաստանութիւնն, յայնժամ յիշեցուցանէ նմա մի առ մի զդէպսն զորժամէն Մոբսուեան վարժարանին, Հ. Աղիքսանդրի ի Լոնտոն. Հ. Անտոնիոսի, և Հ. Եսայեայ ի Պատաւիոն. Հ. Յովհաննու ի Փարիզ. Հ. Պետրոսի ի Տրապիզոն. Հ. Ռափայէլի ի Վենետիկ ի Ռաֆայէլեան վարժարանի. Հ. Անանիայի և Հ. Մանուէլի ի Պօլիս, որոց ձախողակի վարուցեալ էր զարծաթն Մոբսուեան և Ռափայէլեան վարժարանաց. եթէ և ինչ մի նոյնպէս եղեալ իցէ յայսմ առթի, ո՞չ ապաքէն շատ օրինակ ի նոցանէ առեալ է... և եթէ նոքա ընդ նոյնպիսի դէպս իրենանց անպատիժ մնացին, ընդէ՞ր այլք այդ պատժիցին (*)։ Ապա ի զուր է և ժամակար այլ ազգ դառնալ և դառապարտել զայլս, և այսպիսի վատահամբաւութեամբ հանել ի վարժարանէս։

Աս Գեր. Հիւրմիւզ, թէ հարկաւորեալ է ինքն ի Մխարանութենէ իւրմէ առնել նորոգ կարգադրութիւն ի Մ. վարժարանին, հանել անտի և զՀ. Ամբրոսիոս և իւրովի նորա զայլ որ կարգել. և եթէ չկարացէ առնել զայն՝ չկարէ այնուհետեւ հրամայել ինչ երիտասարդ քահանայից ի վանս. քանզի ասիցեն նոքա յայնժամ, թէ Զկարացիք դուք առնել ինչ կար-

(*) Պատճառ կամելոյ Հ. Սարգսի անպատիժ թողուլ և զՀ. Ամբրոսիոս ընդ անհաւատարմութիւն նորա, լինի երկիւղ ժխտոցին չարեաց, խռովութեան աշակերտաց, և եւանելոյ նոցա ի վարժարանէն, քաժանելոյ Հ. Ամբրոսիոյ և եղբօր նորա Խոքենայ ի միաբանութենէն, և անտի գայթագղութիւն... զոր զուշակէ Հ. Սարգիս և առաջի դնէ Գեր. Հիւրմիւզի, որ թէպէտ հաւանեալ գառաջինն՝ պէքանի կամաց Հ. Սարգսի, բայց զրդռնալ ապա յայլուսս յաւարտ, յորմէ և ծագին չարիք մեծագոյն... ապա չէր աշխատութիւն Հ. Սարգսի կամիլ անպատիժ թողուլ և զՀ. Ամբրոսիոս, այլ խոհեմութիւն, զփոքրագոյնն ի չարեաց ընտրել։ ...

(Մանրութիւն հետեւակին.)

պատրաստեալ ի վարժարանին, և մեզ գնդրեց հրամայէք բա-
ցարձակ։

Առ ինս Հ. Սարգիս. « Մխիթարեալքն չունի իրաւունս
« հարկաւորելոյ զձեզ առնել նորոգ կարգադրեալն ի վար-
« ժարանիս, յոր տեսանելոյ զրպարտութիւն տալին,
« համեմատեալ զայս ընդ նախնեացդ հինգամեայ ծառան,
« արարեալ ձեռամբ Հ. Յովհաննու։

« Իսկ ևթէ իցեն ունայք ի Մխիթարեալքն որք համարին
« թէ կամիմք մեք տիրել վարժարանիս և ձեալ առ միշտ և
« մնայն, զրկելով զայլս ի վայելից տուր, խոտանամք մեք,
« եւ և Հ. Ամրոսիոս զհրաժեշտ մեր առեալ գնի՛ տասնեւեօթ
« ամաց, յոր ուսարկեալ այր զառաւն զրկեցաւ ուսման
« խրատուց և կառավարել ի վարժարանէս։ »

Առ Գեր. Հիւրմուզ. « Այժմ այդպէս առէք, բայց ի յա-
« ռալ ժամանակին՝ զայլ ինչ պատճառեցէք։ »

Առ Հ. Սարգիս. « Գրով ևս և այժմն իսկ առնք ձեզ
« զայս խոստանիմ, հրաժարելոյ մեր երկոցունցս ի պաշտօ-
« նուց առ առանց ինչ պատճառի, խնդրելով մեր ինքնին
« արձակ առնել զմեզ ի հոգոց ասի։ »

Իբրեւ չիաց Գեր. Հիւրմուզ ընդ այն ինչ ասել, առ
զրպնդանալ արձակութեամբ իւրով, թէ « Յանցեալ ամի
« զայ ինքն այր, և առանց ինչ վնասելոյ զառնայ յետս
« ձեռնադնայն. զայս նոյնպէս յորում հարկաւ փոխուիլն
« ինչ առնել ի վարժարանին նկատեալ էր, չկայ՛ ամօթ զարձեալ
« առանց ինչ առնելոյ յետս զարձի ձեռնադնայն, և չգիտէ
« թէ զինչ պատասխանի տայցէ վարդապետն։ »

Առ ցեւս Հ. Սարգիս. « Եթէ յանցեալ ամի եկեալ էիք
« առ քանզի կրծանել զվարժարան, բարեաւ էր ձեռնա-
« դնայն զառնալ յետս, քան թէ յառաջ առնել զյառաջա-
« դրեալ չարիսն։ Զարձեալ՝ խոհեմութիւնն իսկ ուսուցանէ
« մեզ՝ զիջանելոյն ի չարիս պարտ է ընդունել։ Այլ հանել
« առէք Հ. Ամրոսիոսն՝ է եղծանել զվարժարան, և առ-
« նել ձեռս մեծ. զի զրուելոյն մանկունք վարժարանին,
« որոյ վայելն մեծագոյն չարիք. իսկ պահանել ձեր ի կրաս-

„ բուն կամաց Մխիթարեանք, է վարդապնն ի չարխ,
„ մանաւանդ թէ ոչինչ չարիք, տալով Մխիթարեանք
„ պրանաւոր պատճառան, վկայելով թէ այդք ձերով տես-
„ սեալ պարկեշտութիւն վարժարանիս և անձամբ քննե-
„ լով զարեկան հաշիւ ծախուց տրին, որ յոյժ տնտեսու-
„ թեամբ էր՝ զարձեալ յետս առանց վոխոխութիւն լինչ
„ առնելոյ ի պաշտօնեայս վարժարանին զամիս լինչ, մինչև
„ ցաւարտումն ընթացիկ ուսման աշակերտաց նորին։

„ Սակայն ի վերայ այսր ամենայնի, եթէ դժուարիք դուք
„ արդարացուցանել զձեզ առաջի Մխիթարեանք՝ ևկից
„ ես ընդ ձեզ ի վանս արդարացուցանել զձեզ առաջի ընդդի-
„ մակցացը։ „

Հասանի Գեր. Հիւրմիւզ ընդ այս վերջին բանս Հ. Սարգսի, և հաստատէ զայն Հ. Ռափայէլ ասելով թէ բարեաւ լինի գնալն Հ. Սարգսի ի վանս իւրեանս ընդ երկաստարդ ուսմանայս յարդարացուցանել զԳեր. Աբրոյն։

Երբեք այսպէս արդի և հաստատ հաճութեամբ հաւանութեամբ երկուց կողմանց, յայնժամ ասէ Հ. Սարգիս ցԳեր. Աբրայն զի զարձցի յառաջադոյն ի վիճակի Հ. Ռափայէլ և Հ. Պետրոս, իսկ ինքեանք յետ վանի մի աւուրց անտի երթիցեն ի Միսիան անդ ի վանս։

„ Այո՛ ասէ Գեր. Աբրոյն, հանգստեամբ ճանապարհորդեցուք մեք, հանդիպեցուք ի Վեն և կացցուք անդ աւուրս երկուս առնուլ զօրինակ ձեռագիր խորհրդատետրին որ ի պատուն անդ գտաւքին, և ելեալ անտի դնտեսուք ի Վիեննայ։ „

Թէպէտ և Հ. Սարգիս կարծէ թէ այնու որոշմամբ վճարեցաւ ամենայն լինչ խաղաղութեամբ, բայց ընդ հակառակն լինի այն. զանազի յանուն ի դարձեալ Գեր. Աբրոյն յառաջին կամելեր, կամի վոխոխութիւն առնել պաշտօնէից վարժարանին, զոր խորհրդոյ Հ. Ռափայէլի, և զոր խրախուսեալ Նուիրեալն Կի Պասին, առ որ հրամանն էր ի Մխիթարեանն Հռոմայ օժանդակել Գեր. Հիւրմիւզի ամենայն Հնարիւք առ ի հասանել նպատակի իւրում, հանել ի Վ. վարժարանէն զանձինս որք

հակառակ են փոխադրութեանն նորին ի Հռոմ, և որոյ գոհալ և պատրաստեալ էր կարծեցեալ զօրաւոր լինչ գնդատալ ի ձեռս Գեր. Հիւրմիւզի ընդդէմ Հ. Սարգսի, առ ի հանել և գնա ի Մ. վարժարանէն. այն էր առաւ լինչ ամբաստանութիւն անզգամի ուրումն Գաղղիացւոյ Պօսէ անուն, ընդ որում ամաք լինչ յառաջ խորհեալ էր Հ. Գաբրիել հաստատել դպրոց մի արեւելեան լեզուաց, և ի հյաջողել խորհրդոյն, սակս չափաւոյ պահանջման անզգամին, թշնամանայ ընդ Հ. Գաբրիելի, և առ ի վրէժ խնդրել ի նմանէ, չարախօսէ գնոյնէ առ Եուխրատ Պապին, թէ կամի Հ. Գաբրիել դպրոց մի հաստատել ի Փարիզ հակառակ Մ. դպրոցին. և թէ՝ Հայր Սարգիս խոստացեալ է օգնել նմա արծաթով Մուրատեան վարժարանին:

Զայն չարախօսութիւն անզգամին Եուխրատին գրով առնու ի նմանէ և առ զայն ի ձեռս Գեր. Հիւրմիւզի, իբրեւ յանցանք Հ. Սարգսի և բաւական պատճառ հանելոյ գնա ի վարժարանէն:

Եւ զայն գրով չարախօսութիւն ցուցանէ Գեր. Հիւրմիւզ Հ. Սարգսի, և առէ ցնա այսպէս. „ Եւ ընդ այս գիւղ ունիս „ դու առնել ինձ նեղութիւն:„

Առէ ցնա Հ. Սարգիս. „ Զհաստատել Հ. Գաբրիելի դպրոց „ ի արեւելեան լեզուաց ի Փարիզ, բայլ լինչ ճանապարհով իմ „ ոչ ուրանամ, բայց գործակից համ որում և իցէ ժամանա- „ կութիւն նմա ոչ արտրեալ և ոչ խոստացեալ եմ երբէք, „ ոչ գրով և ոչ բերանով: Այլ են վկայքն, և ոմն որ գոյ առ „ ի գրուածս, թէ խոստացեալ եմ նմա արծաթ, ըստ բանից „ գրութեան անզգամ Պօսէլի, զոր իբրեւ կարծեցեալ հա- „ ստատ յանցանաց ունիք ի ձեռինդ:„

Զկարացեալ Գեր. Հիւրմիւզի այլ լինչ առնել ընդ այս Հօր Սարգսի, զանհնարին բարկութիւն Եուխրատին որ ընդդէմ նմա ծանուցանէ, և առէ գնալ ինքնին առ նա արդարացուցանել զինքն:

Առէ Հ. Սարգիս, թէ չունի ինքն վերաբերութիւն լինչ ընդ Եուխրատին, վասն զի իբրեւ քաղաքացի ոչ հպատակ է

Օանձնեան սէրուբէան, և ոչ Հռոմէոյ, իսկ իրրեւ եկեղեցւոյն ոք, հնազանդ է Արքեպիսկոպոսին Փարիզու, զոմանելով ի թեմի նորին։

Առ Գէր. Հիւրմիւզ. "Ապա պիտի դիմեալ է Պօռէ առ
"Նուիրակն եթէ չուզեն նա իշխանութիւն ի վերայ հպատա-
"կաց այլ սէրուբէանց։"

Առ Հ. Սարգիս. "Դիմեալ է Պօռէ առ նա ոչ առ օրի-
"նաւոր դառնալ, այլ առ հակառակորդ մեր, յանգել որ-
"դէն զհակառակութիւն նորա որ ընդ մեզ, որպէս զի առնիցի
"առիթ չարչարելոյ զմեզ, և Պօռէի վրէժ առնելոյ ի Հայր
"Գարրիէլէ։"

Տեսակ Գեր. Հիւրմիւզի թէ չկարաց չարախօսութեամբ Պօռէի յանցաւոր առնել զՀ. Սարգիս և դառնալ զնա բռնութեան խրատ, յիշատակէ նա գրգռել զերս ամբաստանութեան։

Առ դնա Հ. Սարգիս, թէ ընդէր ոչ ինքն կոչէ զնա և ցուցանէ զյանցանս նորա, և հրամայէ նմա լռանել ի գործառնէն։

Առ Գեր. Հիւրմիւզ. "Զեզ իրրեւ վերատեսչի գործոց-
"նէն անկանի առնել գոյն։"

Առ Հ. Սարգիս. "Ինձ անկանէր այն, եթէ չէր ձեր իրրեւ
"Մեծաւոր Միաբանութեան եւ անձամբ ներկայ առ և
"վանն անկարգութեան նորա, բռնհաւատացն որ ինձ-
"մէնք։"

Առ Գեր. Հիւրմիւզ, թէ ոչ արժան համարի ինքն իւրոյ ընդ նմա, տեսանելով զհամարձակութիւն և զժպրհութիւն նորա ի ծայր հասեալ։

Առ դնա Հ. Սարգիս. "Ես բռնհաւատիս հետ նոյն
"ձեզ խորհուրդ կարեաւ, հասանելոյդ զուք ընդ այն զա-
"ռաջինն, ապա ձերժելիք գոյն լսելով խորհրդոյ այլոց։
"արարէք զոր ինչ հաճոյ իցէ ձեզ, քանզի ևս ես ի միա-
"սակս հետեւանաց անտի։

Առ Գեր. Հիւրմիւզ և չասէ ինչ ընդ այս բանս նորա, յանձնեալ միշտ ի կամս նոր։

ԳԼՈՒԽ ԾԹ.

Գրով և բերանով բոլոր աշակերտաց Մ. վարժապետին առ Հ. Սարգիս. — Խնդիր Հ. Սարգսի ի Գեր. Հիւրմիւզ և արհամարհուրիւնի ասելոյ. — Խնդիր աշակերտաց ի Գերապայծառն Հիւրմիւզ, և արհամարհուրիւնի ասելոյ. — Խռովուրիւն և բոլոր աշակերտաց բնդդէմ Գեր. Հիւրմիւզի, և չխորհուրդ ելոյ նորա. — Ծուղր ազդարարուրեան ի Կոստանդնուպոլսոյ գևպատասխ Գեր. Հիւրմիւզի. — Ծուղր ազդարարուրեան Հ. Սարգսի առ Հ. աղերսանդր գհամառարար գնացից Գերապայծառն Հիւրմիւզի. — Ծուղր ազդարարուրեան Հ. Սարգսի և Հ. Ալբրտոսիոսի առ ժնողս աշակերտաց վարժարանի. — Ընդունելուրիւն և ողջոյն աշակերտաց Հ. Սարգսի և Ալբրտոսիոսի առ Գերապայծառն Հիւրմիւզ. — Գանգատ Գեր. Հիւրմիւզի առ Ալբեպիսկոպոս փարիզու բնդդէմ Հ. Գաբրիէլի և Հ. Ալբրտոսիոսի. — Հարցումն Ալբեպիսկոպոսի փարիզու ի Հ. Գաբրիէլէ և ի Հ. Ալբրտոսիոսէ. — Հարցումն նորա ի Հ. Սարգսէ.

Առակաձեալ աշակերտաց Մ. վարժարանին ընդ փոփոխութիւն վերակացուաց նորին՝ գրեն Ծուղր առ Հ. Սարգիս օրինակ զայս.

“ Վերապատուելի Հայր.

“ Մինչեւ հիմայ ունեցած կառավարութիւննիս բնավ
“ արդարին յայտնապէս կըսեյնեն, թէ ամէն ասելք առ
“ ոչ կըրնանք ուզենալ, և ոչ գոնել կըյտանք : Ինձմանք
“ թէ նոր վերատեսուչներ մեր վրայ պիտի կարգեն, և անոնք
“ ալ այս հիմնական կառավարութեան վնասակար փոփոխու-
“ թիւններ պիտի բնեն : Ինձմանք ալ, թէ այս նորնց փոփո-

„ խոթխոթեն իրր օրինաւոր պատճառներ, մեզի համար
„ անթարեպաշտ ըլլալը գանգատիլ կըլսուին եղեր ծնողներէս
„ այլ և այլ նամակներով, և այն նամակները իրր վաստ
„ կըսեին եղեր մեր հոգւոց կորուստներէն, եթէ մի և նոյն
„ կառավարութիւնը շարունակէ։

„ Արդ՝ այս անուղի փաստերով կամ զհրամանքներդ կու-
„ զեն խաբել, և կամ իրենք թէ նոյնի մարդկանց սուտ վկայու-
„ թիւններով խաբեալ են. վասն զի մեր ծնողքը ոչ միայն
„ չեն գանգատիր մեր այժմու վիճակի վրայ, այլ նա և ուրա-
„ խակցութիւն կրննեն մեզի անդադար, որ այսպիսի բարե-
„ բաղդութեան մը հանդիպեցանք, և դրեթէ շատ անգամ ալ
„ մանաւանդ նամակներով հրամանքնուդ իրենց երախտա-
„ պարտութիւնը կը յայտնեն։

„ Իրենց ուզածն է Հայրենեաց օգտակար գաւակներ զմեզ
„ ընծայել. իսկ արդ մեր հիմակուան ընդունած թէ՛ բարոյա-
„ կան և թէ՛ ուսումնական յոյսերը, մեզի բաւական կը
„ կարծեն և կուզեն ալ որ միշտ այնպէս յառաջ երթայ.
„ ուրեմն հրամանքնուդ մեզի սուտ գաւտիարակութիւնը
„ ամենևին զանգատ մը ալ չի վերցներ, ոչ մեր և ոչ
„ մեր ծնողաց կողմանէն։

„ Ահա այս էր մեծին Մուրատայ խնդիրքը, որուն կա-
„ տարման համար հետաւոր երկրներէ զմեզ հոս բերիք։
„ Ուրեմն Սամուէլի Մուրատայ ըմբռնած և ցանկացած համ-
„ բան է որ մենք բռնած կերթանք հիմայ, և հրամանքնիդ որ
„ Թարգման հաւատարիմ կացիք Բարերարնուս կամացը,
„ զոր նախատեսի գտանելէն ետեւ, ալ մեր ուզածն ալ
„ ուրիշ բան չէ։

„ Ասկից ուրիշ ճամբայ զմեզ հետեցընելու որ ըլլան զոյն
„ մենք չենք կրնար ճանչնալ իրր իրաւացի ճամբայ, և մենք
„ միշտ պատրաստ ենք հրամանքնիդ ընդունած բարեաց
„ երախտագէտ, և ոչ միթէ ապաշնորհ գտնուելու, և ոչ
„ ալ կրնանք ալ այն փոխոխութիւններէն ետեւ մենք հա-
„ կընտել և կիսակատար գաւտիարակութիւն մը առած եր-
„ թալ։

„ Առաւ վերադառնալ Հայր, կաղաչենք զՔեզ որ այս
„ փոխարէնս առջեւը առնէք, իբր երկրորդ Մուրատ, և
„ հետեւարար շուտ ազգին բարեաց փափաքող Հայր մը:

„ Ի Փարիզ. 15 Մարտի 1855.

„ Երախտապարտ աշակերտք

„ ՄԻՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ. "

Գնան նոքա առնելքան ապա առ Հ. Սարգիս և հարցանեն թէ ինչո՞ւ համբ Գեր. Հիւրմիզդի առնել փոխարէնս պաշտօնէից վարժարանին, քանզի անհանգիստ են յոյժ և խռովեալ ընդ այն:

Առ ինոսա Հ. Սարգիս, թէ չգիտէ և ինքն որոշ ինչ ընդ այն ի ժամուն. և թէ չէ պարտ նոցա ընդ այն խռովիլ և կորուսանել զժամանակ ուսման իւրեանց: Եւ իրրեւ ազաչեն զնա հանդուցանել զիւրա իւրեանց, հարցնել տեղեկանալ զայնմանէ ի Գեր. Հիւրմիզդ և ծանուցանել նոցա, խոստանայ նա կատարել զինդիր նոցա, յետ երկուց աւուրց անտի:

„ Ետն այսպիսի հարկաւորի Հ. Սարգիս քննել զիւրա Գեր. Հիւրմիզդի, հայելով ի փոխարէնն պաշտօնէից վարժարանին. և իրրեւ չկայանէ նա զկամելիր, ասէ ցնա Հայր Սարգիս, թէ „ Պարտ էր հանդուցանել զիւրա աշակերտացն, „ ասել նոցա, թէ չունի լինել փոխարէնն պաշտօնէից „ վարժարանին, քանզի անհանգիստ են նոքա, և հարցանեն „ անդադար: "

Առ Գեր. Հիւրմիզդ. „ Դժուարին ինչ կայ առնել նոցա „ պատասխանի, առ ինքն առաքեցեալ զնոսա, զի զիւրին է „ յոյժ համառօտ բանիւք լսեցուցանել: "

Առ Հ. Սարգիս. „ Մի զիւրին ինչ համարիցի լսեցուցա„ նել նոցին, խռովեալ նոցա յոյժ ընդ կարճիս փոխարէ„ նիս պաշտօնէից վարժարանին: "

ա Իբրեւ արհամարհէ Գեր. Հիւրմիւզ զրանս Հ. Սարգսի ի խնդիրն յայն, յայնժամ վկայ կոչէ նա զրաս անդ գտանել, թէ որ ինչ անախտիժ ինչ ծագելոյն անտի, չէ ինքն ամենեւին պատասխանատու. և ոչ այսչափ միայն, այլ և կոչէ առանձին ի սենեակ իւր զՀ. Ռափայէլ և ասէ ցնա խնդրուածս առնել զԳեր. Հիւրմիւզ հետեւանացն որ ի փոխանակելոյ պաշտօնէից վարժարանին. և համոզել զնա կալ ի կամաց անտի:

Իրաւունս ասէ նմա Հ. Ռափայէլ քան կեղծաւոր բարուց իւրոց, և ցաւի զի չկարէր համոզել զԳեր. Հիւրմիւզ կալ ի կամաց անտի իւրոյ:

Տեսեալ Հ. Սարգսի զհամախոհութիւն կամաց նորա ընդ կամաց Գերապայծառ Հիւրմիւզի, ասէ ցնա. „ Ահա կատա„ րեցի ես զամենայն պարտս իմ, ազգ առնելով և քեզ ա„ ռանձին: „

Յետ երկուց աւուրց անտի գնան աշակերտքն առ Հ. Սարգիս և հարցանեն ցնա զորոշումն կամաց Գեր. Հիւրմիւզի որ ընդ փոխոխութիւն պաշտօնէից վարժարանին:

Ասէ ցնոսա Հ. Սարգիս, թէ Գեր. Արդեօք ինքնին կամի խօսել ընդ նոսա զայնմանէ, զանի որոյ երթիցին առ նա և խնացին ինամել զայն. բայց պատուիրելով պատուիրէ նոցա զի խոնարհութեամբ և քաղաքավարութեամբ խօսիցին ընդ Գեր. Հիւրմիւզի, իբրեւ ընդ Արքեպիսկոպոսի և Առաջնորդի Մխիթարեանց. եթէ զրացի նա չյայտնել նոցա զկամս իւր որ զկարգադրութիւնն վարժարանին, ապաչեցին զնա խոնարհութեամբ չառնել փոխոխութիւն պաշտօնէից վարժարանին, զոնէ ի ժամանակս իւրեանց, ի միջոցի մինչ տարւոյ, որպէս զի մի խափան լիցի յառաջադիմութեան իւրեանց փոխոխութեամբ պաշտօնէից: Ուրախանան աշակերտքն վարիլ ըստ պատուիրանաց Հ. Սարգսի:

Գնան աշակերտքն առ Գեր. Հիւրմիւզ և հարցանեն ցնա խոնարհութեամբ, թէ ունի՞ նա կամս փոխոխելոյ զպաշտօնեայս վարժարանին թէ ոչ. զի յոյժ անհանգիստ են ընդ կարծեան այն

Պատասխանի տայ նոցա Գեր. Հիւրմիւզ խոստովեաւն, թէ չանկանի նոցա գիտել զայն, հաճութեան կամաց իւրոց թողեալ է այն, նոցա անկանի հպատակիլ միայն, ստանց հաւատարձակելոյ հարցանել ցնա զայնմանէ :

Վերադարձեալ աշակերտաց ընդ գոռալ գնացս նորա՝ համարձակին տալ նմա պատասխանի խիստ և եղեալ ի նմանէ ազատակաւ, թէ ոչ հպատակին այնուհետեւ կարգաց և կանոնաց վարժարանին, և թէ կամին դառնալ ի հայրենիս իւրեանց, քանզի Գեր. Հիւրմիւզ կամի անիրաւութեամբ հանել ի վարժարանէն զրաժարգիւն վերակացուս և փոխանակ նոցա զանարժանս կարգել, և այլն, այլն :

Տեսեալ զայն Գեր. Հիւրմիւզի շտապել և երթալ ի սենեկի իւրմէ տագնապաւ ճեմէ ի սրահի անդ և չգիտէ թէ զիարդ կարիցէ հանդարտեցուցանել զնոսա :

Լսեալ Հ. Սարգսի զաղտուկ աշակերտացն եւթանէ ի սենեկի իւրմէ ի սրահն, ուր տեսանէ զԳեր. Հիւրմիւզ խոտվեալ դիմաք, որ և ասէ ցՀ. Սարգիս. “ Ա՛յս իցէ կրթութեան աշա-
“ կերտացդ, զանդի կամին, ասէ, բռնադատել զինքն
“ խոտանեալ իւրեանց զրով չառնել վոխոխութեան պաշտօ-
“ նէից վարժարանին : Ապա իրաւունս ունի ասէ, Հաստա-
“ հակաւակիլ ընդ դպրոցս : ”

Ասէ ցնա Հ. Սարգիս. “ Եւ զի՞նչ կամիք դուք. կուրտարտ
“ հնազանդի՞լ ձեզ ամենեցուն (*)... Եթէ այդպէս կամիք,
“ ապա ընդէ՞ր զանգատիք ընդ բռնատրութեան Հաստնին և
“ ոչ կամիք հնազանդիլ նմա : ”

Զայս ասացեալ՝ իջանէ ի դահլիճ հանդստեան և կոչեցեալ անդ զաշակերտան, նախ յանդիմանէ զնոսա ի չպահելն զպատ-

(*) Հ. Սարգիս ընդ բանիս հնազանդութեան հաստնեալ, զնոյն ուսուցանէ և այլոց, իսկ զկոյր հնազանդութիւն արհամարհեալ, զայն և ոչ յայլոց պահանջէ :

Բայց զպատիւ և զյարգանս, որոց արժան և պարտ է մատուցանել, և պատուիրէ զայն այլոց, որպէս և առաւելոր պատուիրէ զայն աշակերտաց իւրոց, մատուցանել Գեր. Հիւրմիւզի, այլ թէ պահանջել իցէ նոցա յայն, ոչ է պարտաւորէնն անհնազանդութեան Հ. Սարգսի այլ անխոհեմութեան Գեր. Հիւրմիւզի, որով պատճառ լինի յանդգնութեան աշակերտաց վարժարանին և ջնասուց նորին :

(Շարունակութիւն հետեւակին :

ուէր իւր, խոնարհութեամբ և ոչ յանդգնութեամբ առնել զինդիր իւրեանց, ապա հրամայէ նոցա նստուցանել ի գառամատուն և պարապիլ յուսումն իւրեանց։

Հպատակեալ աշակերտացն հրամանի նորա նստին անդ հանդարտութեամբ, թէպէտ և չպարապին յուսումն, խոովեալ զոլով մտաց նոցա յոյժ, և ձեռնդիր որշ ինչ պատասխանոյ ի Գեր. Հիւրմիզդէ։

Գնայ Հ. Ամբրոսիոս առ Հ. Սարգիս և ասէ ցնա թէ չկարէ ինքն հանդարտացուցանել զաշակերտան, պարտ է առնել նոցա որշ ինչ պատասխանի ընդ հնդիր իւրեանց։

Գնան նորա ի միասին առ Հ. Ռափայէլ և առնեն ցնա թէ պարտ էր հանդարտացուցանել զաշակերտս առանց որշ ինչ պատասխանի։

Ցուցանէ նա զինքն անխրթի ընդ այն և առնդ. և յառնել Հ. Ամբրոսիոսի, թէ հիւանդանան մանկունքն նմա չհանդարտացուցանեն զնոսա, ասէ Հ. Ռափայէլ. «Թող մեզի նմա չկամին հնազանդիլ։»

Ի նմին ժամու մտանէ անդ Գեր. Հիւրմիզդ զայրագին դիմօք և հարցանէ թէ զինչ խնդրեն մանկունքն։ Ասէ Հ. Ամբրոսիոս, թէ որշ ինչ պատասխանի։

«Բարի է, ասէ Գեր. Հիւրմիզդ, տաց նոցա որշ ինչ պատասխանի։» Եւ լեալ անտի ինքանէ ի գամ[illegible] մեր մեզի մանկունք ձեռնդիր որշ ինչ պատասխանոյ. խօսի առ նոսա պայս. «Ես ոչ կամիմ, ասէ, առնել ինչ փոխարէն «թէեն ի մարժարանիս, ոչ զձեզ ծեծուիլ առնել, ոչ զձեզ «Ռափայէլն առնել, և ոչ զձեզ պարտաւորել յառաւօտ «վինչեւ ցկրկին ազօթել, և յաւուրն սուն պատարագ «առնանիլ։»

Ընդ բանս խոսանան Գեր. Հիւրմիզդի հանարձին մանկունքն թէ և ոչ փոխարէն պաշտօնէից վարժարանին կամ առնել, վասն որոյ ազատական ամենեքեան, թէ չնորհակալ են, և հանդարտին ի ժամուն, և Գեր. Հիւրմիզդ դնոյ ի տեղն ձայնել, որում ասէ Հ. Սարգիս. «Գնամք առնուլ զեղ մա-«հու։» Եւ յերթալ՝ քանդի ճայէ նա ատելի ինչ և յոյժ

*դառնութեամբ. իսկ Հ. Ամբրոսիոս գրեթէ ոչինչ ճաշէ, կո-
րուսանել բոլորովին զախորժակ իւր, և ոչ բանոյ գրելոյն խօ-
սել անդ ինչ, բաց ի պատեհութենէ խօսից ինչ, ասէ.*
« Զիարդ եղծաւ ապականեցաւ գեղեցիկ վարժարանն : »

Ընդ այս բանս նորա չասեն ինչ նոքա, Գեր. Հիւրմիզդ և Հ. Ոսահայէլ, այլ ճաշեն ախորժանօք : . .

Ի 16 մարտի ընդունի Հայր Ամբրոսիոս ի Պօլսոյ ի Պարոն Յովհաննէս Ալտունեան գիր մի, յորում ծանուցանէ, թէ որչափ աշխատի ինքն ի վկայել ճշմարտութեան, ի գովել զրաբնակարգութիւն և զառաջադիմութիւն Մ. վարժարանին ի Փարիզ, այնչափ ընդ հակառակն Մխիթարեանքն ի Պօլիս չանան անդադար պախարակել զայն, և չարիս խօսել զՀայր Սարգիս և զՀ. Ամբրոսիոսէ առ ամենեսեան. և ասէն թէ
« Գեր. Աբրոյն Գնացեալ է ի Փարիզ առ ի բարեկարգել
« զՄ. վարժարանն, հանելով անտի զՀ. Սարգիս և զՀայր
« Ամբրոսիոս, և կարգելով ի տեղի նոցա զՀ. Ոսահայէլ և
« զՀ. Պետրոս : »

Խնդրեալ զայս Հ. Սարգիս ի վաղիւ անդր ոչ գնայ ի սեղան ճաշել ընդ Գեր. Հիւրմիզդի, այլ գնայ ապա ի սենեակ նորա ասելոնա զպատճառ չճաշելոյ ընդ նմա ի սեղանն, զոր և նա կանխեալ հարցանէ զրուցաքան առնէ պատասխանի Հ. Սարգիս, այսպէս.

« Ջինչ է այս, Գերապայծառ Տէր, զոր լսեմ ի Պօլսոյ,
« ի հաւատարիմ առնէ և ի բարեկամէ ձերմէ, թէ ևկեալ
« էք դուք առ ի հանել զիս և զՀայր Ամբրոսիոս ի վարժա-
« րանէս, իբրև զվնասակար անձինս ի գործ յայս պաշտա-
« ման մերում :

« Եւ արդ եթէ այդպիսի ճանաչմամբ և դիտաւորութեամբ
« ևկեալ էք դուք այսր, ապա չէ արժան այսպիսի վնասա-
« կար և անարժան անձինք սեղանակից ձեզ լինել : Եթէ ոչ
« ճանաչէք դուք զպատիւ ձեր, թողուլ մեզ ճաշել ընդ ձեզ :
« ճանաչեմք մեք զայն՝ հրաժարելով մեր կամաւ սեղանակից
« ձեզ լինել . . . Թողից ասել, կերակուրն այն փոխանակ
« սեանդ ասոյ դեղ մահու լինի : »

Լսէ Գեր. Հիւրմիւզ և չասէ ինչ ընդ այս բանս Հօր Սարգսի, այլ միայն ուրանայ ըստ սովորութեան իւրում, թէ չէ իւր այնպիսի ինչ գրեալ առ իւրան ի Պօլիս :

Առէ ցնա Հ. Սարգիս . « Ապա ուստի՞ խնայեալ իցեն « ի Պօլիս զգալուստ և զիւրաւորութիւն ձեր առ ի Փարիզ, « և յանուանէ յիշատակել զինքն, և այլն , »

Թուղթ Հ. Սարգսի առ Հ. Աղեքսանդր ի Պօլիս , յորում ծանուցանէ զգալուստ Գեր. Հիւրմիւզի ի Փարիզ և զյաւելից հետեւանսն որք անտի , և զորոնք աշակերտացն , և զազգարոյր թուղթն Հ. Գաբրիէլի առ Հ. Աբրահամ ի Վենետիկ , որ ունի օրինակ զայս .

« Վերապատուելի Հայր .

« Այժմ խոկ ընկալայ զգրեալդ ի 1 ամսոյս և մխիթարեցայ փոքր ինչ ընդ վկայութիւնդ զոր ետուր արդարութեան և ճշմարտութեան .

« Պատուդ թղթոյդ այս եղեւ սիրելի Հայր, զի առ ժամս խոխանձաց զապրատիկն հետեւանսն անտի և կործանիլ Գալատեան Գերապայծառին և երկուց արբանեկաց նորին , Հ. Ռափայէլի և Հ. Պետրոսի , և մեր ի վայր չքնելոյ զխորագաղութիւն բարեկարդ վարժարանիս : Գանգի ահա պատրաստեալ էի զչքնաթաղան թուղթն առ իւրաքանչիւր ծընողս մանկանց վարժարանիս , միանգամայն և զպանեգատանաց թուղթն մանկանց զոր պրեցին առ ծնողս իւրեանց այդր :

« Սպասեմ արդ հասանելոյ միաբանական թղթոյդ զորմէ ասէք ....

« Եւ գանգի Գերապայծառ ոչ ցուցցէ մեզ զայն անշուշտ, գանգի ի ծայր հասեալ է հակառակութիւն նորա ընդ իս , զրինաւ նորին խնդրեմ յղել առ իս ուղղակի :

« Ահա գնեմ ի դրիս գրինաւ նամակին զոր Վերապատուելի Հ. Գաբրիէլ ինքնին գրեաց այսօր առ Վ. Հ. Աբրահամ

և առ այլն ի վանս. տեսցուք զինչ երթայ ինոցանէ պատասխանի :

“ Տէր տեսցէ և ողորմեսցի : . .

“ Մնամ

“ Վերապատուելի Հայրութեանդ

“ Ի Փարիզ. 17 մարտ. 1855.

“ Խ. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՂՈՍԵԱՆ. ”

Երջանկերակաւ բոլոր Հ. Սարգսի և Հ. Ալեքսոսի առ Ցնորս վանիկանց Մ. վարժապետին, որում Ցանուցանելի զգայուռս Գներ. Հիւրմիւզի ի Փարիզ և զվնասակար կաղս նորա, զխռովոշխեն վանիկանց նորա, և զերկիւղն որ ունին, և զիրանալն նորա առ նոսա.

“ Մինչ դեռ Մուրատեան վարժարանը խաղաղութեամբ և
“ ամենայն բարեկարգութեամբ կը յառաջանար, ինչպէս որ
“ կը վկայեն զրով և բանիւ վարժապետք և աշակերտք,
“ ազգային և օտարք, մեր Վեհափառ վանքի Մեծաւորը
“ քանի մը նախանձառոտց զրպարտութիւններով, և ուրիշ
“ ներքին պատճառներէն զրգռուած յանկարծակի Փարիզ
“ եկաւ այսօրերս, ոնոտ զպրոցը, հաւանեցաւ իրեն բացատ-
“ րութիւններուն, սակայն տրտիս զի իր մեծութեանը նուա-
“ զութիւն մը չըլլայ այս երկրորդ անգամ առանց փոխոխու-
“ թեան ետ դառնալը, կուզէ զմեզ հանել, մեր տեղ վերատես-
“ ուչ և դաստիարակ դնել հետ բերած վարդապետները,
“ որոնց այս պաշտօնները, և մնատւորդ այս ազգային
“ վարժարանիս մէջ ամենեւին անյարմար ըլլալը շատոնց
“ խնացուած է դանազան և երկար փորձերով :
“ Վարժարանիս աշակերտները կսակծի երթալով այս
“ ըլլատս փոխոխութեան վրայ, ամէնքը միատան իրդրնցին

„ օրինաւոր կերպով որ ըսուի իրենց թէ իրաւունէ այսպիսի
„ վտանգաւոր թղթակցութիւն մը պիտի ընդունիլ թէ չէ. և երբոր որոշ պա-
„ տասխան մը չառնին յայտնապէս բողոքելին թէ մեր
„ հիմնական վերաբերութիւնները չէք փոխեր, կամ մենք ալ
„ հոս չենք կրնար կենալ ևս ճամբեցէք գիմեզ։

„ Եւ թէպէտ մինչև ցայսօր ալ մեծաւորին որոշ պատա-
„ խանի մը չենք՝ այս կամ ուշ, բայց մենք տղոցը տասիկ
„ անհանգստութիւնը հանդարտեցնելու համար ահա հրա-
„ ման տալիք որ ամէն մարդ ուզածին պէս գրէ հասկնալ
„ ծնողացը իրեն փափաքն ու միտքը, միանգամայն մենք
„ ալ խօսք առինք Մեծաւորէն որ մէկ ամիս ժամանակ տայ
„ մեզի, մինչև գրենք բերաքանչիւր ծնողաց, որ ամենաւար
„ կերպով մեր խնամոցը յանձներ են իրենց զաւակները, և
„ անոնցմէ պատասխանի ընդունինք։

„ Այդ որովհետև հրամանոդ վարժարանիս ձրիավարժ
„ աշակերտներէն է, կը խնդրենք որ ժամ մի յառաջ պա-
„ տասխանի տալով խնայնէք մեզ ձեր կամք։ Եթէ ուզէք
„ բանագատել տղան որ հոս մնայ, իրեն ասելի եղած վար-
„ պետութեան ձեռքը (*), վախենք թէ ոչ միայն վնասակար
„ կրթութեան և լաւ ուսման, այլ տէր մի՛ արասցէ հիւան-
„ դանոյ արուն ներգործել։

„ Փարիզ. 10 ապրիլ. 1855.

„ Խոնարհ ծառայք Ձեր

„ Հ. ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՒՐԵԱՆ

„ Վերատեսուչ.

„ Հ. ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՑԵԱՆ. „

(*) Առիթն արդեօք, թէ վարդապետը այդպիսի այն բնչ գնացեալ ի Փարիզ. և գեռ ոչ ի պաշտօն կարգեալ՝ ընդէ՞ր այդչափ ատելի եղեն աշակերտաց վարժարանին։

Առեմք, թէ վարդապետը այդպիսի ամուս միով յառաջ գնացեալ էին ևս ի Փարիզ և ատելիք եղեալ նոցա, մին կնդծատրեալ քարեպաշտութեամբ իւրով, և միւսն վերջին մխամտութեամբ իւրով։

(Առանձնութիւն Հետիոտին։)

Ջանայ դարձեալ Հ. Սարգիս Վերաւին խօսել և ազերսագնաց աղաչել զԴեր, Հիւրմիւզ, զի դադարիցի ի խորհրդոյ և ի գործոյ անտի, փոխելոյ զպաշտօնեայս վարժարանին, յաւգտակար քան զլրանալ մի և կէս տարւոյն, երկրորդելով վերաւին զգրով խոստումն իւր և զՀ. Ամբրոսեայ, հրաժարելոյ կամաւորապէս ի պաշտօնէ անտի իւրմանց, առանց ինչ պատճառի, և հանդերձ չնորհակալութեամբ, յիշեցուցանելով դարձեալ զվճռակար հետեւանն և զանդարմանելի չարիսն որ ի վտիտութենէ անտի, եթէ կամիցի և յամառիցի առնել զայն։

Թուի թէ համոզէ Դեր. Հիւրմիւզ ի բանից Հ. Սարգսի, առեալ ցնո թէ խորհեցեալ ընդ իւրան ընդ Հարց Ռափայէլի և Պետրոսի, և որոշեցեալ զինդիրն այն. վասն որոյ նաեւ Հայր Սարգիս խոնարհի իւրում յոտառ խոզաղութեան, և ձեայ որոշման խնդրոյ ի Դեր Հիւրմիւզէ, և ծանուցման նմա զայն յետ միոյ ժամու։

Ժամն երկու և առաւել ձեայ Հ. Սարգիս ազդարարութեանն որ ի Դեր. Հիւրմիւզէ, ծանուցանել նմա զորոշումն խնդրոյն ընդ խորհրդականաց իւրոց երկուց Հարց Ռափայէլի և Պետրոսի. իրրեւ յամէ այն՝ ելեալ ի սենեկէ իւրմէ զնայ ի սենեակ Դեր. Հիւրմիւզի հարցանել և խնդրել ինչ ի նմանէ. և իրրեւ չգտանէ զնա անդ՝ հարցանէ զՀ. Ամբրոսիոս թէ ուր իցէ զնացեալ Պետրոսեծառն. ասէ նա, թէ առ Արքեպիսկոպոս Փարիզու զնացեալ էր հանդերձ Հ. Ռափայէլիւ։

Դարձեալ Հ. Սարգիս գյետամիտ խորհուրդ նորա, և ձեայ ելից անտի։ . . .

Իրրեւ դառնայ նա ի տուն հարցանէ ցնա Հ. Սարգիս թէ ուր էր գնացեալ։ Պատասխանէ նա իրրեւ թէ առ Արքեպիսկոպոս Փարիզու։ Հարցանէ ցնա Հ. Սարգիս, թէ կոչեցեալ էր ինքեան, թէ ինքնին էր գնացեալ։ Ասէ նա թէ կոչեցեալ էր. Թէպէտ և առաւ էր, քան վկայելոյ գոնապանին։

Առ ինչ կոչեցեալ էր նորա պինդն հարցանէ ցնա Հայր Սարգիս։ Պատասխանի Դեր. Հիւրմիւզ իրրեւ թէն.

«Գնա՛ զոս ինքն առ նա և լուիցէ ինձանէ զայն։» Ասէ ցնա Հ. Սարգիս. «Նուագդ զայն նախ ի ձէնջ և ապա ի ինձանէ։»

Զասէ նա ինչ բնաւ, այլ իրթե զեղգր ար ի գառապետի ձեմ ի անկանիլ։ . . .

Թէպէտ և տեսանէ յայտնապէս Հ. Սարգիս ի ետ ար ի ինամել, անմտաբեն և չարաբեն, սակայն Հանդգ նացեալ ազերսանք տալել ինա Հաստատանել զրան ի վերջին ծայրն . . . զանհնարին նախատինան և զինա Վիրապանաբեան և տգեղն մահուանցն . . . և երանի յերե ւոյ նորա ցաւագին զրան ի մ զառնաբեանբ, Հանդերձ ազգապատաբեանբ առնա ի երկնաւոր զրով իւր մանկանց վարժապանին՝ զրար անձին Հանուրն զրել ծագի չքնաղապատկան ա ձեռս նոցա, ծանուցանելով զիմաստ զրոց իւրեանց ի վարժապանին, և Հաբցանելով ինացանի ի ետ ձրագն Հանի՛ զրեն իւրեանց ի Ս. վարժապանէն և յայլ զպրոց դնել զնա, ի ինչս առ նա զարձուցանել։

Հասանի Գեր. Հետիզ այն ազգապատաբեան Հ. Սարգսի, և ծագս զրել։

Յետ մոյ ժամս անտի, ընդունի Հ. Գաբրիէլ ծագի մի յԱմերիկակազմեն Փարիզս, որ կոչի զնա և զՀայր Սիրոտա խօսել ընդ նոսա։ Գնայիւղ նոցա առնա լնի ինամի յանդիմանաբեան իւրա Հանդերձ ապատնաբար բանադրանաց։ . . .

Առնեն նոքա խոնարհաբեան և Համարձակաբեան զրաժան պատասխանին յանդիմանաբեան նոցա և ցաւոգանին զնա ի խառնաբենի անտի, ցուցանելով ի՛ չէն ինքեանք պատճառ խոտորաբեան ար ի Ս. վարժապանին, բայ ամբաստանաբեան Գեր. Հետիզի։ . . .

Եւ յետ երկուց ժամուց անտի առնի Արքեպիսկոպոս Փարիզու զամուսկայ իւր Հանդերձ բարեացուխն ի Ս. վարժարան ա Հ. Սարգսա, Հարցանել ինամի զպատճառ խոտորեան ի Ս. վարժապանէն։

Հարկաւոր ցոյժմ Հ. Սարգս յայտնել նոցա զձշմարտաբեան, ցուցանել զրան զպատճառ խոտորաբեան ազգիդ-

ատց վարժարանին, զանկրաւ կամն Գեր. Հիւրմիւզի, որ կա. մէր առնել փոխոխութիւն վերակացուաց վարժարանին առ ի հաստանել նպատակի իւրում փոխադրելոյ զՄ. վարժարանն ի Շառվմ (*) ....

Ինծոյնալ զայն Ամառակալին և Քարտուղարին՝ առնն ցմիւռնա, թէ «Գալիքան գոյ և ի մէջ ատցա :»

Ապա առնն ցՀ. Սարգիս, թէ կամք Արքեպիսկոպոսին Փարիզու այն է, զի երաշխաւոր լիցի Ազգին խաղաղ պահել զվարժարանն, հանդարտեցուցանել գաշակերտան նորին : ... Իրրև խոստանայ զայն Հ. Սարգիս, մեկնին նոքա անտի քաղաքավարութեամբ :

Ի վաղիւ անդր առաքէ դարձեալ Արքեպիսկոպոս Փարիզու զՔարտուղար իւր առ Գեր. Հիւրմիւզ հարցանել թէ ի խաղաղութեան էր Մ. վարժարանն :

Առ ցնա Գեր. Հիւրմիւզ, թէ անմարթ է լինել խաղաղութեան ի վարժարանին, ցորչափ անդ է Հ. Ամբրոսիոս, վասն որոյ հարկ է հանել զնա անտի, և այն ի ձեռն Ազգին, Հայր Սարգսի :

Գնայ Քարտուղարն առ Հ. Սարգիս ի տեղեակ նորա և ծանուցանէ նմա զկամն Գեր. Հիւրմիւզի :

Հարցանէ ցնա Հ. Սարգիս նախ զպատճառն հանելոյ զՀայր Ամբրոսիոն անտի. և ի պատասխանել նորա թէ չէ պարտ հարցանել զպատճառն կամաց Վեհապետին, առ ցնա Հայր Սարգիս, թէ քան սահմանադրութեան իրեանց, չկարէ Վեհապետն պատճել զոք ի հպատակաց իւրոց առանց տեղի նմա զպատճառն այնորիկ :

Երկարտ՝ եթէ այն են կամք նորա, ընդէր ինքն իրրև Վեհապետ նորա և ազգակի ոչ հանէ զնա ի վարժարանէս,

(*) Ասիցեն արդեօք, թէ ինչո՞ւ Գեր. Հիւրմիւզի որ ընդ Հ. Սարգսի լինի վասն տեղափոխութեան Հ. Ամբրոսիոսի և փոխոխութեան նորին. ընդէր ասցի այն փոխադրութեան Մ. վարժարանին ի Շառվմ : Ասեմք, թէպէտև ինչո՞ւ արտաքս ինչն տեղափոխութեան լինի, այլ ի ներքուստ ինչն փոխադրութեան վարժարանին, և հաստատութիւն, ոչն պաշտպանութիւն Գեր. Հիւրմիւզի ի Շառվմոյ ձեռամբ Նուիրակի Պապին, և Արքեպիսկոպոսի Փարիզու : Ապա իրաւամբ ասեալ է ասուն ինչն փոխադրութեան վարժարանին :

(Շարունակութիւն Հետեւակին :)

այլ անուշպակի, ի ձեռն ուղղին կամի առնել զայն հանել գնա առաւ։

Երրորդ՝ վնաւթ կարէ նա զայն առնել, խոստանալով ուղղին չառնել ինչ վոխարէն պաշտօնէից վարժարանին, մինչեւ չգտանիցէ ինքն զառաքեալն չրջարերական Քրիստոյ իւրոյ զրկոյ առ ծնողս մանկանց վարժարանին, որոյ հրաշխատուր է ինքն, խնամել զկաս նոցա եւ ձրիպէս կամին նոքա, ի դէպս վոխարէնի պաշտօնէից վարժարանին, դարձուցանել զմանկունս իւրեանց ի Պօլիս, եւ յայլ ուրեք ի Փարիզ զնտղել գնոսա։ Սակս չկարէ նա առնել ինչ վոխարէնի պաշտօնէից վարժարանին, մինչեւ ոչ ընկալցի ինքն զառաքեալն Քրիստոյ իւրոյ։

Զարմանայ Բարտուզարն ընդ անհաստատութիւն մտաց Վեռպայծառ Հերմիզդի, և ասէ ցՀ. Մարկոս, եթէ կարէր նա զայն իրաւախոհութիւնն որ ի մէջ իւրեանց, յանդիման իւր յիշեցուցանել Գնր. Հերմիզդի։ Առ Հ. Մարկոս եթէ այո, և առնուլ գնա ընդ իւր գնայ առ Գնր. Հերմիզդ, և յիշեցուցանէ նմա զիրաւախոհութիւնն որ ընդ մէնեանս։ Երթեւ խոստովանի զայն Գնր. Հերմիզդ, ասէ ցնա Բարտուզարն.

*„ Արեմն պարտ է քեզ ապաւել մինչեւ նկիւցէ պատասխանի
„ իմմանէ մանկանց, ապա առնել զիրաւախոհութիւն պաշտօնէից վարժարանին, մինչ հարկն պահանջիցէ։ „*

Զայս առացեալ մեկնի նա անտի գնայ պատմել զայն Արքեպիսկոպոսին Փարիզու։

Իսկ ես ոչ այնպէս վճարի, եթէ ոչ մանկունք իւրեանց ինքեանք վարժարանի, ձեռնով պատասխանատուի Քրիստոյ իւրեանց առ ծնողսն, նոյնպէս և Հ. Մարկոս ձեռնով պատասխանատուի Քրիստոյ իւրոյ առ իւրան ի վենետիկ և ի Պօլիս, ապա Գնր. Հերմիզդ ոչ իշխանի բնաւ չարժեալ միշտ ի կրկին վրէժխնդրութիւնն. և տեսանել թէ ի ձեռն Արքեպիսկոպոսին Փարիզու չկարաց ինչ վճարել բան ցանկութիւնն իւրեան, դիմի առ ոստիկան քաղքին և ամբաստանէ զիւրոյն, զպաշտօնէից վարժարանին, իբրեւ զգրգռողս մանկանց և վնասակարս ընկերութեան, և ապաչէ զնա առաքել զինուորս ի պատճէ դիւանացարսն։

Ասիկանն բարեվարդութեան քաղաքին ոչ արժան դատի կատարել զինդիր կրնաք լեալ առն, զոր ի գլխոց և ի շարժմանէ ձեռաց նորին ճանաչէք, և ընդ այն գայթագղի և ոչ կամի խառնել բնաւ ի խնդիրն յայն, ասելով թէ չանկանի նմա այն, այլ Ասիկանին Ոսմանց, առ որ առաքէ գնա, հանդերձ գրով ապդարարութեան։

Զայս անպատուհ գնացս Գեր. Հիւրմուզի և գայթագղել Ասիկանին ընդ այն, ըսէ Հ. Սարգիս ապա ի բերանոյ Քարտուղարին Ասիկանի, հանդերձ կարկկոութեամբ առ ինքն,

Ելեալ անտի Գեր. Հիւրմուզի գնայ առ Ասիկան ոսմանց և ամբաստանէ զերծոյն որք ի Մ. վարժարանին և զայլ պաշտօնէից նորին, հանդերձ ծանր ծանր յանցանաք։ Վասն որոյ առաքէ Ասիկան ոսմանց զոմն յերոց անտի առ Հ. Սարգիս հարցանել ինչ ինչ ի նմանէ և քննել զիւիսակ վարժարանին, գրաւելութիւն և զանանութիւն նորին։

Գնա առաքեալն յառիկան Ոսմանց ի Մ. վարժարանն նախ առ Գեր. Հիւրմուզ և ետես ընդ նմա, ապա կոչէ զՀայր Սարգիս յանդիման նորա, և հարցանէ գնա, թէ ճանաչէր նա զԳեր. Հիւրմուզ իրրև Առաքելոց Միարանութեան երէց, և թէ խոստովանէր զինքն հպատակ նորին։

Պատասխանէ Հ. Սարգիս թէ այո՛։ Ասէ գնա նա, ապա ընդէր ոչ հնազանդեա նմա։

Ասէ գնա Հ. Սարգիս, թէ ինքն իրրև Ամբոխակալ Միաբանին, և իրրև ուղիղ Մ. վարժարանին, և առաել իւիւ իրաւունս ունելով իբ յայն, ունի պանդանութիւն ինչ երկնից ընդ նմա, զոր և բաղդելոյ է առ ընդհանուր ժողով միարանութեան իբոյ արձել անդ բան առհմանութեան իբնանց, և միաբանն ոչ կամի գայն պատճառաւք. զոր ասէ զոյ հակառակի ինքն անկրաւ կանոնց Միաբանին զոր ինքն ամբար հանդէպ Միարանութեան և ազգային ազգին իբոյ, զոյ պաշտպանել իրաւունս ունի ինքն բան առհմանութեան Միարանութեան, և բան գիտաւորութեան Կարկրաբին . . . Թէ զանանձին իրաւունս իբ յայն։

Հարցանէ նա ապա զՀ. Սարգիս, թէ գանի և ոչ են վար-

ժամուք ի վարժարանին. և թէ ի ձեռս ոքոյ էր մատակարարութիւն վարժարանին և հարկ ծախուց նորին, գանգի Գեր. Հիւրմիզ ոչ միայն ամբաստանէ զպատուականէից Մ. վարժարանին, այլ Արքեպիսկոպոս Փարիզու, և առ Նափոլեան Հռոմայ, և առ ատենիան քարեկարգութեան քաղաքին, այլ և առ ատենին ուսմանց, ցուցանելով զնոսա ապատամբ յօրինաց, վատնիչ արծաթոյ ազգատուց, զաշակերտս նոցա անկրթի և զվարժապետս նոցա անկրօն և անհաւատս, վասն այնորիկ խնդրէ նա տեղեկանալ զհանգամանաց վարժարանին առհասարակ:

Ասէ ցնա Հ. Սարգիս, զի տեղեկացի նա զայնցանէ ի Հայր Ամբրոսիոսէ, զոր կամի կոչել անդ:

Ասէ նա, թէ կամի նախ այլ առնել տեղեկաց և դատաստանց մանկանց, ապա տեղեկանալ զայնցանէ. վասն որոյ երթալ նորա ընդ Գեր. Հիւրմիզդի և ընդ Հ. Սարգսի այլ առնէ ամենայն տեղեաց, և գոնէ զամենայն ինչ ի կարգի, ընդ որ հաճեալ հաւանի:

Ապա դնայ խոսեալ Հ. Ամբրոսիոսի, հարցնալ տեղեկանալ զանուանց օտար վարժապետաց և զպաշտամանց նոցա, և խնդրեալ քննել զհայր մատակարարութեան վարժարանին, զոր և գոնէ ի կարգի: Իրրև առաքէ նա զայն ամենայն հանդերձ բառականութեամբ և հաճութեամբ, դնայ ընդ Գեր. Հիւրմիզդի խոսեալ Հ. Սարգսի, և հարցանէ անդ ի Գերապայծառ Հիւրմիզդի զընդհանուր մատակարարութենէ Մ. վարժարանին, և ի չկարել և ի չկամիլ նորա տալ նմա պատասխանի, ասէ ցնա հանդարձակ, "Ներեսջիք ինձ Գերա-
" պայծառ. խնդրէք զոք յՄոսիկանէն ուսանց պաշտպա-
" նեալ վարժարանիդ, և չկամիք տալ նմա հայր մատա-
" կարարութեան ձերոյ:"

Յայնժամ պատհ առեալ Հ. Սարգսի ասէ. "Այո, պարոն,
" իրաւունս ունիք զոք յայսմ, և ես ինծին ձեր կարծիս եմ,
" և զայսմանէ վճիռ ես յերկուց ամաց հետէ ընդ ամս, և
" առ ոչ մնաց ինձ: " Տարտամեալ Գեր. Հիւրմիզդի չկարէ տալ ինչ պատասխանի ընդ այն:

Իբրեւ կատարէ առաքեալն յոտիկանէ ոտանց զպատրաստութեան խոյ հրաժարի ի Հ. Սարգէ հանդերձ քաղաքավար բանիւք, ներումն խնդրելով ընդ աշխատութիւնն նորա, և մեկնեալ անտի գառնայ առ Ասիական ոտանց տալ նմա տեղեկութիւն զՄ. վարժարանին։

ԳԼՈՒԽ Կ.

Գալիգառ Գեր. Հիւրմիզի առ պաշտօնեայս Տաճկաց և Գողդիացոց պետրբիւռլ քննիւք Հարց Սարգսի և Աբգրոսեանց.— Պատասխանի և արդարանալ նորա. — Գոռոզ ազդարարութեան և. բողոքիւն Հ. Սարգսի առ ատենակալսն ի վաճառ և. ի Պոլիս առ վիճարանս անդ։ — Երջանկութիւն բոլոր Հարց Սարգսի և. Աբգրոսեանի առ ծնողս վանիկանց ի Պոլիս. — Լուրբիւն ատենակալացն ի վաճառ. — Թնդարդութիւնք պատասխանի ծնողաց վանիկանց. — Պատասխանի վիճարանիցն որք ի Պոլիս. — Հաւատարիք ի յանդիմանութեան վիճարանից առհասարակ. — Հատատուրբիւն անկարելի գնացից վիճարանիցն որք ի Պոլիս քլիւ Հ. Սարգսի և. Հ. Աբգրոսեանի.

Ա՛ր գտաւ Գեր. Հիւրմիզ յանդատանէ գնացից իւրոց, զիմէ նա և առ գործակատար Վեսպանին տաճկաց, Հալէպ էֆէնտին, և խնդրէ ի նմանէ օգնութիւն առ ի վարել զՀայր Սարգիս և զՀ. Աբգրոսիոս ի Մ. վարժարանէն։ Մեղադրէ գնա գործակատարն, ասելով թէ ընդէր զինն առ և անդ զիմելոյ ապա առնա զիմէ, հպատակ գոլով իւր Օսմանեան պետութեան։ Զկամի նա խառնել ի գործն յայն, ջանելով իշխանութիւն հրամայելոյ Դաղիացւոց պետութեան, այլ միայն գրեալ ծանուցանէ զայն դրանն և ինասցէ պատասխանւոյ անտի։ Խնամոյ գայս Հ. Սարգիս ի Հալէփ էֆէնտին։

Զ՛որգ գտաւ Գեր. Հիւրմիզ դրանս ինչ գոր ոչ կարէ,

խորհրդով և Թեղատրութեամբ Նախկին Պատին, և արքունեկութեամբ Լատին ազգին, և միջնորդութեամբ պաշտօնէից վոյ, յորոց հայցէ պաշտպանութիւն : Եւ ոչ այլոյն վնասն, այլ և Հանոյ անհամբաւ և կամակատն անձինս ցուցանել զՀ. Սարգիս և զՀ. ամբրոսիս յաչս պաշտօնէից տէրութեան, և մանաւանդ զՀ. Գաբրիէլ կամակատար ի կաթոլիկութեան, և զՀ. Ամբրոսիս իբրեւ օտար ի կարգաց և ի կանոնաց վարդապետութեան լեալ : Եւ միջնորդութեամբ Արքեպիսկոպոսին Փարիզու դառնէ վտառապան մի առ ի խօսել յառնէ ընդդէմ Հ. Սարգսի և Հ. Ամբրոսիսի :

Իբրեւ հնանայ Հ. Սարգիս զոյս ամենայն հնարք Վերապատուս Հրիմեան, և տեսանէ թէ վճարեալ էր չարութիւն որ ի նմանէ, առնէ զմիջին պարոս իւր, Թերեւս կամեցեալ, զնա ի չարութենէ անտի, զրէ Թուղթ ապերախտութեան և բողոքման առ առաջնակարգ իւանս, առաքեալ զայն առ Հայր Արքեպիսկոպոսն ձարեան ի Վենետիկ օրինակ զոյս .

„ Վերապատուելի Հայր .

„ Գարեաս Վերապատուին պատերազմութեամբ վտանգիս զանձինս վարժարանիս, որպէս և գիտէք, (անդադար առ. թէ խորհրդով առաջնակարգէ իւրոց առնէ զայս .) վրդովեաց խաղաղութիւն վարժարանիս ներքին և արտաքին, և ազատանալ կրծանել զոս և քանդել, ոչ անտրտում բնաւ ոչ խորհրդոյ, ոչ ազգանաց, ոչ ազատնակաց, և ոչինչ պատճառաց, այսինքն զի Թողէ անխոտոր ճարի մի և կեաս, և յետ այնորիկ արտաքէ զոր ինչ և կամի, այժմէն առաջել իմ և Հ. Ամբրոսիսի զերազանցութիւն, առանց ինչ ընդդիմութեան, ճանաչանդ թէ չնորհակալութեամբ հանդերձ :

„ Այլ՝ իբրեւ Առաջնակարգ և խորհրդակից Վեհարանին և այլոց համօրէն եղբարց այդր՝ ազգ առնեմ Ձեզ, զի ևթէ կատարեալ նա բնութեամբ զկամն իւր, և ճանաչանդ զՁերդ, զրկեա ամէ, ի վերոյ վարժարանիս, անտարակոյս եմ նա առաջ

Աստուծոյ և մարդկան իշխարհս հետեւանացն որ անտի, և զսէր եղիցիք պատուհասանաւոր ամենայնի, փոխանակ զի ոչ բոլորեցիք բանիւ և գրով ընդդէմ այսպիսի յանդուգն և վնասակար ձեռնարկութեան։

„ Եւ որովհետեւ խնդրեալ իմ և ընկալեալ լինիմ զաւետս ինչ մինչեւ գրեցից առ ձեռս մանկանց զարժանն և առից ինչ ոգոյանէ պատուհաս, ահա ունիք և զսէր առեալ եւս ժամանակ քոյ խորհելոյ և կշռելոյ զամենայն հետեւանս իրացդ, և բան այնմ շարժելոյ, այսինքն, բոլորելոյ զօրաւոր և հաստատուն բանիւք ընդդէմ որ և իցէ փոխուխութեան և կանոնաց վարժարանիս, և զմի օրինակ բոլորոյդ պարտիք առ իս ելել, զի գիտացից։

„ Եթէ ոչ լսեցէք այսմ վերջին և կարեւոր ազդարարութեան իմոյ յամառութեամբ, կամ անհոգութեամբ, կամ յուսահատութեամբ, կամ արհամարհութեամբ, . . . ահա վկայեմ առաջի երկնի և երկրի, զի և զսէր կամակից և զործակից է ինձ Մեծաւորին ձերոյ ի կործանել զվարժարանս և զԻսրաէլութիւն վանդամոյն, որով և ես հրաժարակեցից վարժապետի զամենայն ինչ, ընդ որս և զիմ ուզիս զայս բոլորոյ որ առ Ձեզ և առ ամենայն վանականաց։

„ Իրրեւ ի հաւատոյս ինչ վերադրեալ բանիցս յղեմ ահա և զքանի մի ի թղթոց զորս գրեալ են մանկունք վարժարանիս առ ձեռս խրեանց, մի գուն զմի տարտամիցիս, և զոր ես յաւգտի համարեալ առ ձեռն մինչեւ ընկալայց ես առաքեալն ի Զէնջ այսմ, և ի վերոյն որք ի Պոլիս։

„ Զայս միայն առացից, զի երբեմն չեմ հաւատեալ ես և Հ. Ամբրոսիոս զի մեք ինչ ոչ եմք ինամեալ մանկանց ոչ իմաստս և ոչ գրառս անգամ թղթոցն։

„ Մնամ

„ Վերադարձեալ Հայրդ Հայրենիս

„ Ի Փարիզ : 20 մարտ . 1855 .

„ Ի. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԼՓԻՒՃԵԱՆ . „

Չպատճէն վերոյիշեալ Թղթոյն առաքէ Հ. Սարգիս ի վանս, ուղեալ զայն ի վերայ Հ. Հմայեկայ զի ձեռամբ նորին ծանուսցի անդ առհասարակ :

Գրէ Հ. Սարգիս Թուղթ առ Հ. Ալէքսանդր ի Պօլիս, համառօտ կերպ չքաղաքական Թղթով մանկանց առ ծնօղս իւրեանց, օրինակ զայս :

« Վերապատուելի Հայր .

« Թէպէտ և նախընթաց Թղթովս ծանուցի Ձեզ թէ առ այժմ ոչ յղել զՊուղթս մանկանց առ իւրաքանչիւր ծնողան, սակայն անհամբերութիւն և իրաւացի անհանգստութիւն նոցա ստիպեն և բռնադատեն զիս առաքել զՊուղթսն, հանդերձ չքաղաքական Թղթով մերով :

Բայց դիտելով յայտնապէս զառաքելի հրամանն որ բարբոքեցին ամենայն ուառակք ի վերայ Ձեր և ի վերայ Միաբանութեանս, ահա իրրեւ վերջին պարտք խղճի մերոց և վայրաքիւն առակի Աւետեաց և մարդկան, թէ անպարտ եմք մեք յամենայն ինառաց և ի չարեաց որք անհրաժեշտ լինելոց են, յեմք զառաջին օրինակս Թղթոցն նախ առ Ձեզ, և երդմնեցուցանեմ զձեզ ընթեռնուլ միտրան, քաջ խորհիլ և մանր հշուել զամենայն հանգամանս իրացն այսոցիկ, և զարման առնել. այս է, գրել վաղվաղակի առանց կորուստներոյ վայրկեանի Թուղթ բարեաց զօրուար, հանդերձ առարգրութեամբ ամենեցուն, ընդդէմ որ և իցէ փոփոխութեան այժմ անձանց և կանոնաց վարժարանիս մինչեւ ցաւր մի և կէս, զոր առաջարկութեան իմում և գրով խառնուիս ի կարգանել իմիք և ի կատարել Հ. Ամբրոսիոսի, ինքնայօժար հրաժարելով զոր ի պաշտամանեցս իրրեւ ի ծանր բեռանց և լրանալ այնր ժամանակի, զինեն մերոյ ամի, և յղել ամենայն փութով առ իս և առ Վերապայծառ կրկին օրինակս, որպէս զի զարգարեմ նա յանխոհեմ և ի վնասակար ձեռնարկութեանցն զրոս ի ծայրն հասոյց . . .

« Եթէ այսպէս առնիցէ, յայնժամ միայն ի հարկէ կարող

է. քահանայ զիմաստն առ ծնողս մանկանց : Իսկ եթէ ոչ լսիցէ այսմ վերջին և կարեւոր ազդարարութեան խնդ, և լռութեամբ ձերով կամ տարտաձայնութեամբ և կամ թուղթեամբ հաստատեսջիք ընդ դուրս Առաջնորդին ձերոյ... ահա վկայ վերստին կոչեմ զերկինս և զմարդիկ առհասարակ, զի զՁեզ եւս զամենեսեան զորժակից համարիմ մեծաւորին ձերոյ (*), ի կործանել զմարմնոյն և զՄիաբանութիւնս միանգամայն, և ընդ ցաւալից յայտարարութիւնս իմ հրաժարակեցից և զիմաստ գայս :

" Եռյնպէս արարից, եթէ գայիցէք զիմաստ գայսոսիկ և ոչ առնիցէք պատասխանի ամենայն փութով, և ես այլ ճանապարհաւ հասուցից, ծնողաց մանկանց զերկրորդ օրինակս գիմացս, յայտ առնելով զիս և զպատճառս խոտանման առաջնոյն :

" Եթէ ասիցէք թէ մեք մեք թելադրեալ լցեմք մանկանց զիմաստս կամ զբառս անգամ գիմացն, երդմամբ չափ հաստատեմք և Հ. Ամրոսիոս զի ամենևին անհաւանք եմք և ոչինչ յայտիցէ անարգ և անարժան գոլոյ :

" Մնամ

" Անհամբերութեամբ պատասխանեայ գիմացս,

" Վերապատուելի Հայրութեանդ

" Ի Փարիզ. 21 մարտի 1855.

" Ի. Ծ. Հ. ՍԱՐԳԻՍ ԹԼՈՒՄԵԱՆ. "

(*) *Արք միանգամ ոչ լիշեն պատճառս գնալոյ Գեր. Հիւրմիզի ի Փարիզ առաւիւմ յառաջ և պարծի նորին առաքելով, սակս բողոքելոյ միաբանից չառնել նորա ինչ անգ փոփոխութիւն պաշտաձէից, և արք ոչ գիտեն պատճառութիւն բաղմաց ի միաբանից ընդ միջին անգամ գնալոյ նորա անգ, համարիցին արգելօք հակառակ խնդրատուծոյն գրանս թղթոյս, տեսանելով առ գՀ. Սարգիս երբեք պատար ոչ ի միաբանից անտի, Մեծաւոր նոցա և ոչ իւր եւս կոչելով գԳեր. Հիւրմիզ, և երբեք գնամախտն նորին համարելով գնոսա :*

Թագուհի առել զանհնարին ցաւոց և գխռովինել մտաց Հ. Սարգսի որ յայսմ ժամանակի, զաչակելով գիշատ ագրատաց ազգին, և գնախատինս միաբանութեան որք յանդգնեն և ի լեռատակար գնացից Գեր. Հիւրմիզի, որ օժանդակութեամբ նուիրակի Պապին և Արքեպիսկոպոսի Փարիզու պատրաստի գատ գնել զինգ Հ. Սարգսի և արտաքսել գնա ի Վ. մարժարանէն, առ ի կատարել գկամս Պապին, գխռովել

Բազբակաց թղթոյ Հ. Սարգսի որ առ Հայր Աբրահամ ի Վենետիկ և առ Հ. Հմայեակ ի վանս, ոչ առնեն նոքա ինչ պատասխանի, քանզի հակառակ էր խնդիրն այն Հ. Սարգսի անձնասրտութեան։ Աբրահամու որ հետաքննեալ խրատ ևս սպառնալիօք հարկ կարացեալ էր պահել ի ձեռին իւրում զեաչութիւն Ռափայէլեան վարժարանին. քանզի տեսեալ Վեր Հիւրմիւզի զրացարձակ իշխանութիւն նորա անդ, և լեալ զգանգատս ունոյց որ գնեմանէ, կամի հանել զնա անտի, և զՀ. Ռափայէլ ի տեղի նորա կարգել, ընդդիմանայ հրաժարել անտի հանդերձ սպառնալիօք, եթէ հանցէ զինքն ի պաշտօնէ տեսչութեան, ոչ կացցէ ի վանս։

Երկուցեալ անտի Վեր. Հիւրմիւզի Բազբ զնա անդ միանգամայն և դեռ. յոյս ունի կարգել զՀ. Ռափայէլ տեսուչ Մ. վարժարանին. արդ եթէ չկամէր Հ. Աբրահամ զմոխրութիւն պաշտօնէից Մ. վարժարանին, երկնչէր կորուսանել զպաշտօն իւր ի գառնալ յետս Հ. Ռափայէլի, վասն որոյ լաւ նա և չառնէ ինչ պատասխանի բազբական թղթոյ Հօր Սարգսի։

Իսկ Հ. Հմայեակ և որք ի վանս շաղաղրեցք և դերիք ունէք երկուցեալ ի բռնաւոր առաջնորդէն իւրեանց լուն խոպան և չառնեն ինչ պատասխանի բազբական թղթոյ Հ. Սարգսի, քաց ի սահական անձնէ միոյ, որոյ զամս երբեք սուն հետացեալ ի վանից ոչ պիտէր գալուստ անյոյս որք անցին ընդ Մխիթարութեան ի գառնալս անդրանիկ գրութեան և ինքնայայտարարութեան առաջնորդին իւրոյ, վասն որոյ խափանեալ լինի ինքն անցանել և յԵջմիածին ի քննութիւն ձեռագրիւ մատենից անդ, և վասն որոյ նախատակաւ յայտարարեցաւ ի Տիխոս Ռամկի Ներսէս անուանեի։

Սա այս պիտոյն և գառնալ անձն դրէ Բազբ միս առ

դՄ վարժարանն ի Հռոմ և ի հաստատել նորատակիր իւրում, ի յայտնանակել զչիւռունութիւնն Վեր. Հասանէ. և Բազբուէ ասել զիհատամիտ խորհրդոյ միտրանէց որ ի Վենետիկ և որ ի Պոլիս և զանգգայութիւնդ նոցա, որոց թէպէտ զդիացիսոյ ընդ ոչն ապա անուանել զիւռուն և դեռախուսիւնն, այլ անտգամ յոյժ անդորուն։

(Առաջիկայն Հետիւնակին։)

Հ. Սարգիս իրրեւ պատասխանի բողոքական Թղթոյ նորա առ Մարտինն, լռանմոութեամբ և յանդուգն համարձակութեամբ, ոչ յիշէ բնաւ զմիջնորդութիւն Հ. Սարգսի և զնպաստ նորա առ նպատակ ճանապարհորդութեան իւրոյ ի Հայաստան, և եթէ արդիւնք ինչ վատակոյ ունէր ինքն յայն, չնորհ էր այն Հ. Սարգսի : Սակայն կոյր հնազանդութիւն առաջնորդին մոռանալ տայ հպատակին զամենայն արդարութիւն և դիրառնոյ ընկերին ի մարդասիրութեան, թէպէտ և հակառակ է այն բանականութեան : Որով ոչ արժանի անգամ համարի Հ. Սարգիս առնել պատասխանի, յանդիմանել զանմոութիւն նորա, այլ ցաւի միայն ընդ տղայի միամիտ մարդասիրութեան, որ բազկանոյ յոյսիւն և յայնպիսի անձանց :

Ի 22 ապրիլի ընդունին Հ. Ս. և Հ. Ամբ. պատասխանի շրջաբերական Թղթոյ իւրեանց ի ծնողաց մանկանց վարժարանին, բայց յերից անձանց եւթ, յերեսուն և վեց անձանց անտի, այս է, ի Պօղոս Զէլեպեան Տիզեան, զրոյ ձեռին և թելադրութեամբ Հ. Ալիքսանդրի, յԱրրահամ Աղայէ Ալահվերտեան, որ և զրոյ ձեռին և թելադրութեամբ Մխիթարեանց, և ի Պարոն Մոսէս Չաուշէ, նոյնպէս թելադրութեամբ Մխիթարեանց որք ի Պօլիս :

Նոյնն թելադրութեամբ զրեն նոքա և առ որդիս իւրեանց ի Փարիզ, զոց խնայեալ յայտնապէս զիարդութիւնն պատահեն անդէն և անդ զիարդեան զայնոսիկ առաջի Վեներապատիւ Հիւրիւղի համարձակ բանիւք և յանդիմանութեամբ :

Ընդունի վանդամանի և Հ. Սարգիս պատասխանի բողոքական Թղթոյ իւրոյ ի Հ. Ալիքսանդրէ զոր վերագոյն յիշատակեցաք, և որ ունի օրինակ զայս.

« Վերապատուելի Հայր.

« Արդարև զժուարութիւն ծագեալ ի մէջ Գեր. Արրահօրն և Ձեր ոչինչ այնպէս միտքս հանգուցյ վարժարանիս վիշտ

ի ծառկութեան ձեռով, որպէսզի եղեւ այժմ պրշութեամբ աշակերտացդ առ ծնողս իւրեանց յորս են և արք երեսիվք. զի ընթերցեալ գնասցեն առացեալ են. « Վայ, խլեզուս « խելառ չօճախներո՞վ կուգեն կոր զերկինք պաշտպանել : » և զի՝ *« Թէ որ վանքն մարդ են նէ նայիլ Աբրայեն չեն հետ « զանդիր. իրենց ինչ թէ վարժարանը աղէկ է եղեր, պէշ է « եղեր. վանքին պետութ բանն է. մենք ամէն անգամ որ « գանգատ մը ունենանք, Աբրահօր կը գիմենք, ասիճն « Աբրայն է պատասխանատու և ոչ իրենք. իրենք Աբրայեն « պետ պատասխան տան Աբրայն ալ մեզի : »*

« Զայսպիսոյ առհասարակ յեղյեղեալ են որպէս լուայ, և ինձ իսկ խօսեցան ամենք ի գալ իւրեանց հիւանդասուն, որք ամենեքեան սերտ բարեկամք են վարպետութեանս. ասեն եթէ չէր վերապատուութիւնդ երդմնեցուցեալ զիս յանձնել գնամեկան առ իւրաքանչիւր ծնողսն, առնուլ ծածկէի. բայց արդ բանադատեցայ, մանաւանդ երբ տեսի եթէ և մերք որք առ առհասարակ զկողմն ունին Աբրահօրն. քանզի կոչեալ առ իս զմերան մուտք ի խորհուրդ և ընթերցեալ զթուղթ ձեր որ առ իս և զամենից ի մանկանէ, և խորհեալ և խօսեցեալ ընդ երկար, այսոքիկ եղեն վճռոք ժողովոյ :

« Նախ՝ թէ ի վանից ոչ գոյով մեզ հաղորդեալ զամենայն զոր գործեցին ի մէջ Մ. վարժարանին և գիւաւորաց Մխիթարեանս, ապա և մեք չկարեմք խօսիլ անկիրթեամբ յայսպիսի վէճս կամ գալ :

« Երկրորդ՝ ամենևին չկամիմք և չկարեմք հաւանիլ սեփականելոյ իւրաքանչիւր անձանց Մխիթարեանս գպաշտօնն յոր կարգեալ է երբեմն. վասն զոյ և անիրականութիւն մերժելի է գիւաւիլն, զի Մխիթարեանս մեր հաստատութիւն է և ոչ ազնուականութիւն որպէս զի սին մեծասցի, և միւսն կացցէ մեռացէ ի նմին նուաստութեան. վասն զոյ պարտին իւրաքանչիւրք ի պաշտօնատարաց փոխել զատ հաճոյս Մեծաւորաց կամ առաջակայից Մխիթարեանս զատ պարագայիս, և ոչ զի ունի իրաւունս պարտաւորեալ յանմնդրոյ և մեռոյ ինոյն ցորչափ ինքն կամի :

« Երթայր՝ որ առաել ևծատոյնն էր, խորհանչիր որ ի մէնջ սխալանք գոյր խառացեալ հնազանդել ընդհանրական Արքային պատուիրանաց իւրոց ամենեքեան չընդդիմանալ այնմ ամենայնի ի հրամանաց նորա, զոր գիտէիր եթէ չեն հակառակք սահմանադրութեանն մերում, կամ օրինաւոր ժողովոյ խորհրդականացն. ուստի և գիմադարձն հրամանացն այնոցիկ ապստամբ համարիր, և զայս կնքեալ անուն ոչ կարեիք մեք յանձին բերել առաջի Աստուծոյ և առաջի աշխարհի։

« Զորրորդ՝ մարթ էր և մեզ իրաւախոհ լինել ցոյնսն վճռել ինայր ի մէջ Մխիթարեանն և ևծատրոց վարժարանիդ. բայց արդ գրութեամբ նամակագնեցն առ ծնողսն ի ձէնջ և ի մանկանց հրատարակեցան, նախատինքն և մեղադրանք իրք անհնազանդից ոմանց, անմարթ է մեզ այսուհետև գոյլոյ ակրուք զկողմն ունել բայց ի Պրօտհօքն։

« Ահա այսոքիկ եղեն բանք զոր ամենեքեան միարան իսօսեցան և հաստատեցին, ուստի որոյ ցաւք և վիշտք անհնարին պաշարեցին զիս, զի մինչ ի սպան նախատելիմբ ի թշնամեաց։ . . . Ա՛հ, ոչիշափ ջան եղի և ճառակեցի ցարդ խաղաղել զվարժարանդ և զարատն ի բաց արկել ի համբաւոյ դորա յօրէ անտի յայտնելոյ Թշուառ յօդուածոյն, որ ած երեր զմեզ յայս ամենայն թշուառութիւնս, և արդարացուցանել զհեղինակն, սակայն իզուր եղեն ամենայն, և մինչ ցայսվայր նախատանաց ժամանեաց. այսուհետև իրարանչիւրոց յայտնեացին սկզբունք մարդասիրութեան, քաղաքականութեան և կրօնի Աստուածպաշտութեան, և ինձ չմնայ այլ ինչ առնել, բայց եթէ արտասուօք և աղօթիւք կոչել զաւուրք հոդին զլուսաւորիչն մեզ ի Թադնելոյ։

« Վերապատուելի Հայր, իմ առանձին կարծիք այս են, վարժարանիդ անվնասապէս ունին կախումն զմանաց, որով և զընդհանրական Արքայէն, մանաւանդ Ռաֆայէլեանն բոլորովին, Եկամուտքն առհասարակ է և լոյի ի ձեռս Մխիթարեանց միշտ, ուստի ոչ զգալ ի առանձին ինչ տեսանել։

« Զաշտնաւորք վարժարանացն ընտրեալք եին և որչեալք նոյնպէս ի Մխիթարեանէն, որոյ ներկայացուցիչ է ժո-ղովն Առաքելոյն, և նորին Աբբայն, առանց հարկաւ կոխելո դհրամանաց նորա, մոցն ի հրամայելն, և պարտին եղանել ի հրամանելն : Ընդունայն է և անառնի ընդդիմանալն :

« Յորչափ գլուխ դրամոյն ի ձեռս միխիթարեանն է, և ազգն ողջոյն սէր վարժարանաց զմխիթարեանն համարէ, ոչ ոք կարէ նոցա ջնասել կամ կործանել, բաց ի վատահամբաւեանէ առ ժամանակ մի յետոխութիւն թշնամեաց. դարձեալ և այնպէս եղերելի անուն և ևթ այնորիկ որ պատճառն եղեւ նախատանաց և չխոթից :

« Գրէք ևս ինձ եթէ յղելով զդիւրս մանկտուոյն, « յայտնա-« պէս առակաւ հրեղէն բարբաքեայն ի վերայ ձեր և Մխիթարե-« եանն : » Եւ ես ասեմ զայդ պատասխանի, Ո՛չ. Հայր, դի առ ժամ այդ հրեղէն բարբաքեայս ի վերայ ձեր. քանզի ասացից անկեղծա-բեանցս խնամ, արդէն գոլով զայրացեալ և դժգոհեալ ի վե-րայ ձեր այնպիսի, յորոց խնդրեցեք առանել զանկն տարեկան, ոտքս և արդ տեսանել և զձեռն որոյ խրեանց, և զդէմ ապատամբեանն, համարելով եթէ ի դրդռանէ ան-տի իցէ վիճաբանացդ զոյս կամին վտնել, կատակաւ խօսին և հայհոյեն, և իրաւունս ասն Աբբահօրն :

« Դարձեալ առնուլ և դնռանիկ ձեր յընթերցուին և այլոց ոերանն զառակացն ձերում (Հ. Ալանին,) և հասեալ ի տեղին եթ « զամենևեսին զձեզ զարժարանիցս հանիարեալ վիճաբանին ձե-« րոյ, ի կործանել զվարժարանս և զմխիթարեանեան միաբա-« զանսն, ո կացեալ այժմ առ անկարձիս բանտարան զիս գրել և հարցանել՝ եթէ « Առ ինձ կործանողին գրա, և « վասն էր. մինչ, առ, առանց Հ. Ալպոսի և առանց Հօր « Ամիրտեոսի կործանեալ վանքն և հիմնայատակ գանգեալ « Ռափայէլեան վարժարանն : Եթէ ինքնակոչ, սէր մի տրա-« ցէ, մեռանիցին, կործանողք վարժարանի, և մի իցէ « ետան որ զհետ գոյցէ վարժարանին, եթէ միւնոյն վիճա-» ի պատուհասանաց վտիճից : Ահ ինչ բան չէ : »

« Զայսոսիկ գրեցի ի պատասխանի Ձեր :

„ Բայց ես գտնեմ՝ թող յայտնէ ինձ այլ կարեմ առնել։

„ Աղաչեմ զամենեսին ոչ լինել ըղձամեամ

„ Յարգոյ վերադառնալ

„ Իպսիս. 2 ապրիլ. 1855.

„ Ի. Ծ. և եղբայր

„ Հ. ԱՂԵՔՍԱՆԴԻՐ Վ. ՊՇԵՒԹԱՇԵԼԵԱՆ. „

Ահա հակառակութիւն բանից և գործոց միանգամայն տեսանի ի վերջին յայս թուղթ Հ. Ալեքսանդրի. քանզի յառաջին թուղթ իւր առգաստէ զդնացս Ալբրային որ ընդ Հ. Սարգսի, և վայէ անկարողութեան Մխիթարեանց ի մատակարարութիւն վարժարանաց, այլովքն հանդերձ. և զի ասէ, թէ „ հանճարոյն են ամենևքին իւրքն ի Պօլիս և ձայնակից իւր, „ և քան այնմ արուեն գրել ի վանս գանգատս։ ոչ իսկ ի վերջին թուղթ իւր արգարացուցանէ նա զԱլբրայն ի գնացս նորա որ ընդ Հ. Սարգսի, և հատուած զայն վճռով ժողովոյն իւրոյն ի Պօլիս։

Ալ վերջին թղթոյ Հ. Ալեքսանդրի չառնէ Հ. Սարգիս ունդն և ուղղակի պատասխանի, հանդերձ զայն իրրև յանկարծ ձեռաց թռուցեալ. բայց առնէ նա պատասխանի պատ սեռագրակի, ասելով զայն ի սէին, իրրև ի խնդրոյ ճշմարտութեան և ի յանդիմանութիւն սուտ բանի. որ ունի օրինակ զայս.

„ — Ալբրայ, ասէ, գժտութեան ծագեալ ի մէջ Ֆերդ „ պօնտ Ալբրահար և Ձեր ոչինչ այնպէս միտաէր համրաւոյ „ վարժարանիդ միշտ ի ծածկութեան մնալով, որպէս եղեւ „ այժմ պրիմիանդ աշակերտացդ առ ծնող իւրեանց յոյս „ են և որք երեսիք, զի ընդհատեալ գնամեալն առցեն „ են, „ Այո, խելք ոչխարաց չուռնիւթով կազմեսիք զի-

„ „ բնիք պաշտպանել. թէ որ վանքն մարդ ննայ նոյնել Աբրա-
„ „ յին չէն հնազանդիր. իրենց ինչ թէ վարժարանը ազէկ է
„ „ եղեր, գէշ է եղեր վանքն պիտոյտ բանն է. մինք ամէն
„ „ անգամ որ գանգատ մը ունենանք, Աբրահօր կը գիմինք,
„ „ որուն Աբրահայրն է պատասխանատու, և ոչ իրենք.
„ „ իրենք պիտի Աբրայէն պատասխան տան, Աբրան ալ
„ „ մեզի: „ —

„ Զայսպիսիս առհասարակ յեղյեղեալ են որպէս լսեայ, և
„ ինձ իսկ խօսելոյն ունիք ի գալ իրենց հիւանդանոց, որք
„ ամենեքեան սիրտ բարեկամք են մատուցութեան:„

„ Այլ մնք ասեմք, թէ այդ ամենայն բանք ի ձէնջ հնարեալ
և թելադրեալ են. և հաստատութիւն բանիցս, ահա գրով
վկայութիւն որուն ի բարեկամաց մատուցութեան, զոր յիշա-
ստակեսցուք ապա. և արդեամբք գործոյ նոցին իսկ երեւելի
արանց, որք հանին առհասարակ զորդիս իւրեանց ի վարժա-
րանէս և ոչ հաւատացին Թողուլ գնասս ի ձեռս Աբրայէն
այնուհետեւ: . . .

„ — Քանզի կոչեալ առ իս զձերն մեռաք ի խորհուրդ,
„ ասէք, և խորհեալ և խօսեցեալ ընդ երկար, այսոքիկ
„ եղեն վճիռք ժողովոյ: Նախ՝ թէ վանաց ոչ գոլով մեզ հա-
„ զորեալ զամենայն զոր գործեցին ի մէջ Մ. վարժարանին
„ և զխաւարայց մատուցութեանս, ապա և մեք չկարեմք
„ խառնել անդխառնելիքս յայսպիսի վէճս կամ գաղել:„

„ Այլ մեք հարցանեմք ընդ այս. ապա զիա՞րդ վճիռ հասէք
և գՀ. Սարգիս գատապարտեցէք:

„ — Երկրորդ՝ ամենևին չկարեմք, ասէք, հաւանիլ սիսա-
„ կանելոյ խորքանչիւր անձանց մատուցութեան գործոցն
„ զոր կարդեալ են երբեմն. վասն որոյ պարտին խորքան-
„ չիւրք ի պաշտօնատեղւոյ փոխիլ ըստ հանգոյս մեծաւորաց
„ կամ առաջակայից մատուցութեանն ըստ պարագային, և
„ ոչ որ ունի իրաւունս արդարութեան յանմահելոյ և մնալոյ
„ ի նոյն տարշաւ ինքն կամի:„

„ Այլ մեք հարցանեմք ընդ այս. ապա զիա՞րդ կամիցեալ
և կարացեալ գաւաք հաւանիլ սիսակասնելոյ Հ. Վահեայի

Բաղումեան զպաշտօնն յոր կարդալ ի երիսն ի տեսչութիւն գործոյն այդր ի Պօլիս, և այն ընդդէմ կառոյց ձերոց, վկայելով պակասութեան նորա յայն, և բողոքելով ընդ այն առ Աբրայն . . . և մանաւանդ Հ. Աբրահամու Ձարեան որ ի Ռաֆայէլեան վարժարանէն ի Վենետիկ, և զոր կամեցաւ ընդհանրական Աբրայն փոխել ի պաշտօնէ անուն Տեսչութեան, հետէ նա կառոյց նորա և ապառնայ ասելով, եթէ հանոյ զինքն ի պաշտօնէ անտի, ոչ կացցէ ի վանս, և այնպէս մեզ ի պաշտօնն յայն վինչեւ ցայսօր : . .

“ — Երթայր՝ որ և առաւել ևս ժողովն էր, ասէք, իբրա-
“ քանչիւր որ ի մէնջ ուխտիք զոլով խոստացեալ հնազան-
“ դել ընդհանրական Աբրային պարտաւորեմբ ի խղճէ ամե-
“ նեքեան չընդդիմանալ այնմ ամենայնի ի հրամանաց նորա,
“ զոր գիտեմք եթէ չեն հակառակ սահմանադրութեանն
“ մերում, կամ օրինաւոր ժողովոյ խորհրդականացն, ուստի
“ և դիմադարձն հրամանացն այնոցիկ պարտաւոր համարի, և
“ զայս կնդր անուն ոչ կարեմք մեք յանձին բերել առանձի
“ Առաջոյ և առանձի աշխարհի : ”

“ Հարցանեմք մեք արդ . Հ. Աբրահամ Ձարեան իրրեւ որ իձէնջ ուխտիւք գոլով խոստացեալ հնազանդիլ ընդհանրական Աբրային , ոչ պարտաւորեցաւ ի խղճէ ընդդիմանալով այնմ ամենայն հրամանաց նորա , և դիմադարձն հրամանացն այնոցիկ ոչ համարեցաւ պարտաւոր :

“ Իսկ Հ. Սարգիս Թէոդորեան ընդդիմանալով այնմ ամենայնի ի հրամանաց նորա , զոր դիտէ նա հաւատեալ թէ հակառակ են սահմանադրութեան կամ օրինաւոր ժողովոյ խորհրդականացն պարտաւոր համարի ի ձէնջ . . . յանդգնաբար և արդար ժողովոյդ : Իսկ եթէ այն ամենայն հրաման ընդհանրական Աբրային հակառակ էին սահմանադրութեան կամ օրինաւոր ժողովոյ խորհրդականացն , ցուցցուք մեք զայն ապա հաւատով :

“ — Ձորրարէք՝ մարթ էր և մեզ, ասէք , իրաւախոհ լինել
“ ցարչապ վէճն Ձեայր ի մէջ միաբանութեան և ժիծաւորաց
“ վարժարանիդ . բայց արդ զրութեամբ նամականուէն առ

“ ծնողան ի ձէնջ և ի մանկանց հրաժարակեցան նախատինքն
“ և մեղապրանք իբր անհնազանդից ումանց, անմարթ է մեզ
“ այսուհետեւ զայլոյ ուրուք զկողմն ունել քայց ի Աբրա-
“ համ: ”

“ Ո՛չ ապաքէն մինչդեռ վէճն ի մէջ Մխարանութեան և մե-
ծաւորաց վարժարանին էր դրեաց առ ձեզ Հ. Սարգիս իրաւա-
խոհ լինել, և դուք նոյնա իրաւունս յամենայնի, և
խոստացաք գանգատել ի վանս. ընդէր պակասեցայք դուք
ի խոստումն ձեր. և ո՛չ ապաքէն պակասելով ձեր յայն, անխ-
րատութիւն Աբրայէն ի ծայրն եհաս. և ունելով ձեր այժմ
զկողմն նորա յայտ առնէք թէ գործակից էք նմա:

“ — Ահա այսքիկ եղեն բանք զոր ամենեքեան միաբան
“ խօսեցան և համաձայնեցան ասէք:

“ Եւ ահա այսքիկ են և պատասխանին մեր առնել բանից
“ վճռոյ ժողովոյն ձերոյ: ”

Արարօք պատասխանի և առանձին բանից վերջին թղթոյ Հ. աղեքսանդրի, որ ունի այսպէս.

“ — Վերապատուելի Հայր, իմ առանձին կարծիք այս
“ են, ասէ, վարժարանիդ անվիջապէս ունին կախումն զա-
“ նազ, որով և զընդհանրական Աբրայէն, մանաւանդ
“ Ռաֆայէլեանն բոլորովին կախի զԱբրայէն: ”

Ասեմ ես առ այս կարծիս նորա և հաւաստեաք, թէ վար-
ժարանքս չունին կախումն զվանացն և զԱբրայէ նորին անմի-
ջապէս, այլ միջնորդութեամբ, որպեսզի վաստակոց ումանց
ի միաբանից, որպէս Ռաֆայէլեան վարժարանն արդեամբք
վաստակոց Հայր Նիկողայոսի Եուզպեան ունի կախումն
զԱբրայէն, որպէս յայտ է ի բանից կտակի Աղա Եզուարդ
Ռաֆայէլի, այլ և ի բանից կտակի Հ. Նիկողայոսի Եուզպեան,
թողեալ նորա զիրաւունս իւր Աբրայէն:

Նոյնպէս և Մ. վարժարանն արդեամբք ոգւոյ չափ աշխա-
տութեան Հ. Սարգսի Թէոդորեան, որպէս յայտ է ի գաղնա-
գրին որ ի մէջ կտակատարաց բարերարին և գործակալի
Մխարանութեան. և մանաւանդ ի հրաժարական գրի Մխա-
նութեան առ Հայր Սարգիս և առ Պ. Պօղոս Նուպարեան

ի Մատրա . . . որով Հրաժարի միաբանութիւն յամենայն իրաւանց իւրոց որ ի Մ. վարժարանին :

Ապա արդեամբք ոմանց ի միաբանից ունին վարժարանքն կախումն զվանից և զԱբրայէ նորին, և ոչ ըստ առանձին կարծեաց Հ. Աղէքսանդրի, և ըստ վճռոյ ժողովոյ իւրոցն, որով դատապարտի Հ. Մարգիս իբրեւ ապստամբ յընդհանրական Աբրայէն, և իբրեւ դիմադարձ հրամանի նորին :

Թէպէտ և Հ. Մարգիս ընդ այս առանձին կարծիս նորա և ընդ անիրաւ դատաստան նոցա ոչ զարմանայ և ցաւի բնաւ, դիտելով չափ և մարձ իսկ դոլով չար անձնասիրութեան և անարդ նախանձու, որք իբրեւ սնոտիական յատկութիւնք են ի Միաբանութեան, զի փառք մանաւորաց անդ առաւելագոյն ածէ ի վերայ փառաց հասարակաց . այլ ցաւի յոյժ ընդ չափազանց վատահութիւնն որ ի միաբանս իւր, չկասկածելով բնաւ ընդ հաւատարմութիւն նոցա, հայեցեալ յանուղիղ մտադրութիւն աղքատաց ազգին, և չապահովելով զայն ի ժամանակի իրաւախոհութեան իւրոյ ընդ կատարածն բարերարին, ունել իբր յայն իշխանութիւն սեպհական, քան արդեանց վատակոց իւրոց, և քան իրաւանցն զոր ունէր, որով չմնայր տեղի անիրաւ խորհրդոյ Աբրային մատնելոյ զվարժարան Վաւաղային, և բռնութեամբ հանել զինքն անտի :

Աւաղ չափազանց վատահութեան նորա որ ի միաբանս իւր, և վրիպանաց նորա որ ի նախահայեաց տեսութենէն : Ապա աւելորդ համարիմք և այլ առանձին կարծեաց Հ. Աղէքսանդրի առնել պատասխանի զի ընդունայն և սնոտի են բոլորովին . . . .

“ — Տեսեալ զնամակ ձեր յընթերցումն և յայլոց ոչ մի “ պատկեր ձերում, ասէք, (Հ. Աբրէնի,) և հասեալ խոհին “ թէ “ զամենեսեան զձեզ գործակից համարիմ մեծաւորին “ ձերոյ, ի կործանել զվարժարանս և զմիաբանութիւնս “ միանգամայն, ո՞ կացեալ այժմ առ անկողնիս բռնագատէ “ զիս դրել և հարցանել, թէ “ առ ինչ կործանեացին զո- “ “ չա, և ումն էր. միթէ, ասէ, առանց Հ. Մարգիս

“ “ և առանց Հ. Ամբրոսիոսի կրծանեալ է վանքն և հիմա-
“ “ յառակ քանդեաւ Ոսափայելեան վարժարանն : Եթէ
“ “ ինքեանք, սէր մի՛ արասցէ, մեռանիցին, կրծանեացի
“ “ վարժարանդ. և ո՛ր իցէ միւսան որ պահ գայցէ վարժա-
“ “ բանին, եթէ միւն կամ միւան ի պաշտօնատարց փոխիցի :
“ “ Իմ խելքիս բանը չէ՛ : ” — Զայսոսիկ գրեցի ի պա-
“ տուիրելոյ նորա : ”

Առ այս բանս և պատուէր դասակցին Հ. Սարգսի՝ այս է մեր պատասխանին, թէ Նա ինքն դասակից է պատճառ. ամենայն չարեաց հասելոց Մխիթարեան միաբանութեան և Մուրատեան վարժարանին, անպատուհ և ձեռամակար գրութեամբ իւրով Ընդդիմախօսութեամբ ասեմ առ Զարմանառեանն. և թէ՝ զայսոսիկ գիտելով նորա Յայտարարութեամբք Մխիթարեան որ առ ազգն Հայոց, և որք առ Պապն Հռոմայ, չկարէր նա բնաւ անգիտանալ զպատճառն կրծանանան վանաց և վարժարանաց և տարակուսանօք ասել, թէ իմ խնդրիս բանիր չէ՛. և թէ այո՛ խնդրի բանիր նորա, անպատուհ և ձեռամակար գրութիւն է միայն, որով առաւել նա անարգելի արար զՄխիթարեան իւր Հռոմայ, և առելի ազգին Հայոց յաւխտան :

Թողից ասել զյեղյեղուկ մտաց նորա, երկնցուցանելով երեսին զմխիթարեան և թելադրելով նմա տալ զիր հրամանի առ Հ. Սարգիս ի Մարսա՝ յետս դարձուցանել զարձին հրետակի զպրոցին և հրաժարիլ յամենայն իրաւանց աղքատաց ազգին. և այս յետ վաստակ յաղթութեան նորին յԱնդղիացւոց առնի :

Եւ արդ՝ հարցանեմք ձեզ, եթէ հաւանեալ էր Հ. Սարգիս խելաց դասակցին իւրոյ, և հպատակեալ հրամանի Մեծաւորի Մխիթարեանց, ընդ՞ր արդեօք անուն անգամ Մ. վարժարանին յաչխարհի առ. և թողուաք առնել զանարգ նախանձու նորին, քանզի հանէ նա զանուն Հ. Սարգսի ի բաբելաղթութեան տալէ իւրոյ անտի, և այն յետ յաչխութեամբ դարձի նորա ի Հնդկաց :

Գոհ է յոյժ Հ. Սարգիս զի չունի դասակից պաշտպան և պրպանեակ իւր ուրիք : . . .

Անքնայուք զպատուախանիս հաւատոքք ի հաստատութիւն բանիցս ճշմարտութեան, նամակաքն որ ի Պօլսոյ գրեալք ի հաւատարիմ ազգեն ի բարեվանաց Միսրանութեանդ, յորոց գիմին միայն բերդուք առաքեալ, և որ ունի օրինակ գայս.

“ Վ. Սրբազնութեանդ Հայր.

“ Այս ձեր երկրորդ հարցմանքին բաները լսելով ինչ ապշմանի սրտմտութեան մէջ ընկղմիլս չեմ կրնար խօսքով ձեզի հասկըցնել : Տղոց ծնողքը իրենց զաւակներուն գրելին ինչ գաւի մէջ ըլլալնին յայտնի է, իրենք ալ շատեր են, չեն գիտեր ինչ գրեն, որովհետեւ ամենէն աստին ապիճանի մարդիկն ալ իրենց վիճակի մէջ չեն Թողուր :

“ Հարուստներուն տները գիշեր ցորեկ քահանաները, աղքատներուն տներն ալ սիրայօժար Հայրապետը պատարագելով հասնելու հետ են, ու շատ մարդկանց ալ գրելիքներուն օրինակ կուտան որ մենք մեր տղաքը Միսրանութեան յանձներ ենք, Արքահայրը ինչ որ կըհրամայէ նէ, մեք անոր գոհ ենք բանն. ոմանց ալ, թէ որ տասնակ չգրէք նէ, ձեր տղոցը ձեռս կըլլայ, ետ կըղարկեն ըսելով աչուընին կըվախցընեն, ու կըսեն որ տղաքը տասնակ Թղթեր գրել չեն կրնար, անոնք օրինակ պատրաստեր ու բունն գրել տուեր են :

“ Ինչ ևս իցէ, Վերապատուելի, Առաւած ատ բաներուս վերջը բարի ընէ : Ձեր Թշնամիները կարծիքէս աւելի կրքոտ են եղեր : Ա՛ս օրերս մէկ մեծ ժողովք մը ըրեր ու որոշեր են որ ամէնուն բերնէն Թուղթ մը շարադրեն, Հ. Ամբրոսիոսը չենք ուզեր ըսելով, բոլոր հայրերը ձեռք պիտի դնեն ու գրկեն, ձեռք չդնողին տուն ետ բերել պիտի տան եղեր : ”

Ահա հաստատութիւն կարծեցայ Թէ պատճառք գայրանալոյ ծնողաց մանկանց ընդդէմ Հ. Սարգսի լինին պարշտպանք և արբանեակք Գեր. Հիւպիւզի ոտք ի Պօլիս . . .

Եւ նամակաք ոտք իվանաց, և յորոց գիմին յառաջ բերդուք առ, և որ ունի օրինակ գայս.

“ Այլ ես զարմանամ ընդ յեղյեղեալ բանս Մեծին. ոյք
“ յցեն այդ միաբանք որք համարձուն հաւանութեամբ ստո-
“ րագրեցին զՅայտարարութիւնն տուեալ ի Հռոմէ. որ ինչ
“ դոյժ խարհրդով միաբանութեանն դործեցաւ ։

“ Մինչ միաբանութեանն էր խորհուրդն ստորագրութեան
“ երրորդի Յայտարարութեանն որ բոլորական քուէիւք բա-
“ ցահեցաւ ի վանական ժողովի, և ապա բնի ստորագրեցաւ,
“ զոմանս ահագուցեալ Պապական բանադրանօք, զայլս
“ տհաճեցուցեալ ծանր ծանր ածականօք, զանուն ապստամբի
“ եղեալ ի վերայ ։

“ Մինչ Միաբանութեանն է խորհուրդ փոխադրութեան
“ վարժարանին ի Հռոմէ ։ . . . . . .

. . . . . .

“ Զի զամենայն ինչ ի ծածուկ յարմարեալ, չասեմ չարու-
“ թեամբ, այլ միամտութեամբ, ի ծուռումն կամին զՄխիթա-
“ րեանս ոչնչայն արկանել ։

“ Եւ արդ կամելն հանել այսի զվերատառնելի Հայր
“ Գաբրիէլ, ոչ այլ ինչ է, բայց զառաջինն առնել քայլա-
“ փոխ փոխադրութեան վարժարանին ։ Թող ինքնանք պատ-
“ ուական զանցս Հ. *** և Հ. ***, և զայլոցն առնեցուն
“ զարտուն և զգանգատ, և ապա, թէ հանդարտեսցին,
“ առացեն խղճիւ, զի “ առնայն ինչ խորհրդով Միխիթա-
“ րեանս գործեցաւ ։ ” Բանք այսպիսի դառնացուցանեն
“ զոգի, զի և զհեգութիւն և զլռութիւն խաղաղասիրայ
“ ընդառաջեալ՝ առնեցուցանեն ի զինջ գալ ընդ անչափն խրճանց
“ խաղաղասիրութիւն ։ . . .

“ Եթէ յաջողեսցին երկինք զժողովն ընդհանուր ի գարման
“ անդարմանելի վէրացուցս և տարաձայնութեանց, յայնժամ
“ ի յայտ եկեսցեն առնայն ճշմարտութիւնք, և չգիտեմ եթէ
“ ո՞ պարտաւորեսցի ։ . . . . . ”

Եւ ահա հաստատութիւն անպատճառ դնացից ընդհանրա-
կան Ս. Բրայնն ընդ հպատակս իւր։ Անաչառ և արդար իցեն
վճիռք ժողովոյն որ ի Պօլիս ընդդէմ Հ. Սարգսի ։

ԳԼՈՒԽ ԿԱ.

Յայտարարութիւն կաթուղ և բանուորական Գեր. Հիւրմիւզի ընդդէմ Հ. Սարգսի Թ՚ողոքական. — Բողոք և աղերս Հայր Սարգսի առ Գեր. Հիւրմիւզ, հանդերձ յանդիմանութեամբ. — Գոռոզ գնացք Գեր. Հիւրմիւզի ընդ Հ. Սարգսի, և արժան պատասխանւոյ տրտունջի առ նա. — Թողոք հրաւիրեալի Գերապայծառ Հիւրմիւզի առ Հ. Սարգիս, երթալով ի վարժարանն և դառնալ իւրեան. — Հրաւիրութիւն Եռերդակի Գաղղիացոց առնելիւ առ Հ. Սարգիս երթալով ի վարժարանն. — Մեկնութիւն կաթուղիկէ եկեղեցւոյ բանաւորական Գեր. Հիւրմիւզի.

Ի 5 Ապրիլի, յաւուր աւուտ հինգշաբաթու, խնդրէ Հայր Սարգիս ի Գեր. Հիւրմիւզէ զի պատարագեցէ նա և հաղորդեսցէ զիւրեան տէր ի վարժարանին ըստ նախընթաց ամին։ Հաւանի նա ընդ այն գառնջինն, բայց զկնի քառասրդ մի ժամու գնայ առ Հ. Սարգիս ի սենեակ նորա և ասէ ցնա՝ Թէ խղճէ ինքն ընդ այն պաշտօն։

Ասէ ցնա Հ. Սարգիս Թէ ընդէ՞ր խղճիցէ նա. մինչ է կաթոլիկ ընդ հաւատս նոցա, վասն որոյ խղճէ հաղորդել զնոսա։

Ասէ ցնա Գեր. Հիւրմիւզ, ոչ Թէ ընդ այն, այլ զի չկամին նոքա հնազանդիլ հրամանի իւրում։

Ասէ ցնա Հ. Սարգիս, Թէ կարծիք իւրեանց ի խնդիրս հաւատոյ նոյն են ընդ նորին. այլ միայն ի խնդիրս ազգային իրաւանց՝ պահանջան են կարծիք նոցա ընդ նորայն. և այնմ չէ պարտ լինել նմանի խղճի մտաց իւրոց։ "Վասն որոյ աղաչեմ, ասէ, մի տալիք տեղի գայթագղութեան աշակերտաց " վարժարանիս, չհաղորդելովդ զմեզ ըստ սովորութեան ան- " ցեալ ամին։ "

Յայնժամ զկնի նմա Գեր. Հիւրմիւզ, յանձն առնու հաղորդել զնոսա ի պատարագին։

Յետ բանից այսոցիկ հարցանէ ցնա Հ. Սարգիս, թէ առ ինչ էցէ չկամիլ նոցա հնազանդիլ հրամանի նորա, առաջիք ինձ ազաչեմ : . . .

Ասէ ցնա Գեր. Հիւրմիւզ, թէ կամք և հրաման իւր են, զի եկանիցէ նա ի Մ. վարժարանէն :

Զարմացեալ Հ. Սարգսէ ընդ անակնկալ կամս և հրաման նորա, հարցանէ ցնա զպատճառն. քանզի մինչեւ ցայն վայր միայն վասն Հ. Ամբրոսեան էր այն հրաման, և ոչ բնաւ վասն իւր :

Ասէ ցնա Գեր. Հիւրմիւզ, թէ միտքն դոլով նորա ընդ Հ. Գաբրիէլի Ադվազեան, ի բանալ դպրոց մի արեւելեան լեզուաց, և խոստանալով նպաստել այնմ քան և չորս հազար ֆրանք յարծաթոյ Մ. վարժարանին, ըստ վկայելոյ Գաղղիացւոյ, յորմէ խնդրեալ Նահապետի Գալֆեան՝ ծանուցանէ զայն Ծառայոյին ի Հռոմ, և յորմէ գայ առ Միսրանեան թուն հրաման հանդերձ հաւանութեամբ կոմսաց Արրտազանին, հանել զնա ի Մ. վարժարանէն անյապաղ, և միաբանութիւնն չկարէ, ասէ, հակառակիլ հրամանի Ծառայոյին և բացարձակ կամաց Արրտազանին. վասն որոյ հրամայէ նմա ինքն եկանել ի վարժարանէն :

Ասէ ցնա Հ. Սարգիս, զի տացէ նմա գրով զայն հրաման, հանդերձ ստացեալ պատճառաւն, այսինքն, թէ Ծառայոցն և Արրտազանն կամին և հրամայեն եկանել իւր անտի վասն այնր պատճառի, և թէ՝ Միսրանութիւն չկարէ հակառակիլ այնմ :

Տառանեալ Գեր. Հիւրմիւզի ընդ այն առակիկ մի, ապա ասէ թէ չկարէ տալ նմա զայն գրով. և յառնել Հ. Սարգսէ, թէ չեկանէ ինքն անտի առանց այնպիսի գրութեան, ասէ ցնա Գեր. Հիւրմիւզ, թէ ճանապարհաւ օրինաց հանցէ ինքն զնա անտի : Ասէ ցնա Հ. Սարգիս թէ հանապազ է այն գրով առեալ հրամանին, և ինքն սրտացէ այնուհետեւ զգաստս իւր. և յիշեցուցանէ նմա զերթեալն խոստումն իւր առ ինքն, ասելով այսպէս.

« Ո՞չ ապաքէն դու ինքդ էիր, Գեր. Տէր, որ յանցեալ ամի

„ և յայտնել առաւել և ևս յոյն անհնկի սացեալ ինձ, թէ
„ միայն Հ. Գաբրիել ելցէ ի վարժարանէս, և թէ՝ խոստանամ
„ քեզ, սացեալ, բանիւ և գրով, զի եթէ կամիցի Հռոմ և
„ յայլ ինչ իրս խառնիլ, ընդդիմացայց նմա մինչև խոպան.
„ Արդ ուր են այն բանք ձեր և խոստումնդ: Եւ ես ոչ սաս-
„ ցի ձեզ յայնժամ թէ պահանջասցի Հռոմիս ոչ վերջացի
„ երթիք մինչև չքանդեսցի վարժարանս և միաբանութիւնդ
„ միանգամայն: Եւ ոչ սպասէն այսպիսի ատեան և անիրաւ
„ պատճառս հանիք զոր զՀ. Գաբրիել ի վարժարանէս:
„ Զանգգամութիւն Պօաւէի և զգրպարտութիւն նորա ծա-
„ նուցի ձեզ և հերքեցի զայն հաւատոնք և վկայիք . . .
„ այլ զոր սակաւին հաւատս ընծայիք նմա. ապա յայտ է
„ զի կամիք հաստատել զսուտն նորա առ ի վրէժ խնդրել
„ յինէն, շարժեալ ի կրից անարդ նախանձս:
„ Զգաստացարուք ազաչեմ զձեզ, զի ի խորհրդատէ
„ ի խորհուրդս անկանիք և ոչ իմանայք: . . . Երէկ այսպիսի
„ հնարիւք և ցանկութեամբ ձերով եհաս Պատնապէն ի վտա-
„ նութենէդ Հ. Գաբրիել, այսօր զինս, և վաղիւ զայլ ոք,
„ մինչև Ցասմիք զոք մեզ. վասն որոյ վերստին և երես
„ անվեհար ազաչեմ զձեզ խնայեսմիք Մխիթարութեանդ, մա-
„ նաւանդ թէ կարօտելոյ ազգիս, զորոյ շինչանէք զվերջ-
„ նակ ճրագն:

Զայսոսիկ բանս համարձակ և ցասդմն սրտիւ խօսի նմա Հ. Սարգիս ի սենեկի իւրում և յոտին, և ի չգաստանալն ինչ Գեր. Հիւրմիւզի. առ ցնա Հ. Սարգիս. „ Գնացիք
„ ապա հանդարտել սակաւիկ մի ի մտաւոցանել զգաստա-
„ րարն:

Առ ցնա Գեր. Հիւրմիւզ, թէ հանդարտ է ինքն և չունի ինչ խոտորութիւն մտաց:

Առ ցնա Հ. Սարգիս՝ բարի է, և այնպէս մեկնեսի ի վանից:

Գնացեալ ապա Գեր. Հիւրմիւզ ի մաուռն պատարագէ և հաղորդէ զերկուս քահանայսն որք էին ի վարժարանին, և զերկուսն որք ընդ իւր ածեալ էին անդ: Ետ աշակերտաց վար-

Ժարանին խոստովանին և հաղորդին յետ երկուց աւուրց անոի ի 7 ապրիլի յաւուր զատկի շարաթի ի ձայնաւոր պատարագի, զոր մատուցանէ Հ. Ամբրոսիոս, և հաղորդէ զաշակերտան։

Ի 8 *ապրիլի, յաւուր ուրբաթի յարութեան Քրիստոսի, գնան Հ. Սարգիս և Հ. Ամբրոսիոս ի սենեակ Գեր. Հիւրմիւզի, և շնորհաւորեն նմա զուրբն այն խոնարհ համբուրիւ ձեռաց, և այսպիսի բանիւք մատուցանեն. "Գերապայծառ Տէր մաղթեմք "մեք ի յարուցեալ Քրիստէն մերմէ խաղաղութիւն ի միտս "նուիրեանդ, և ձեզ երկար և քաջառողջ կենդանութիւն "հանդերձ ամենայն բարօրութեամբ։"*

Տեսեալ Գեր. Հիւրմիւզի զնոսա այնպիսի խոնարհ յեղանակաւ դալ ի յարգութիւն իւր, ի բաց դնէ զամօթածան երկչոտութիւն իւր, և ուռուցեալ ձայնիւ առնէ պատասխանի մաղթանաց նոցա այսպէս. "Խաղաղութիւն յայնժամ լիցի "Մխիթարեանս, և բարեմաղթութիւն ձեր ինձ ընդու"նելի, յորժամ հնազանդեսջիք զօք հրամանի Մխի"նուրեան։"

Ոչ կարծէր բնաւ Հ. Սարգիս թէ յայնպիսի աւուր այնպիսի պատասխանի ընդունելոց էր բարեմաղթութեան իւրում. Յայնժամ ձանրութեամբ լեալ ասէ ցնա. "Խոնարհք քաջ, "Գերապայծառ Տէր, զի առանց իրաւանց և արդարութեան "ոչ զոյ խաղաղութիւն յաշխարհի, և ոչ լիցի այն ի միտս "նուիրեանդ երբէք ցորչափ անիրաւութիւն տիրեալ է անդ։

"Զինչ խնդրեալք զօք Մխիթարեան ասելով անդա"դար։ . . . Ոչ ապաքէն երկու և երեք անձնասէր խորհր"դակիցք են միայն ստացեալ միաբանութիւնդ։ Զիա՞րդ "միաբանութեանդ յայսպիսի ծանր և կարեւոր խնդիրս "պարտ էր ընդհանուր կամ վանական ժողովով ծանուցա"նել, զոր ամենադրութեան կրօնիս. ուր են ընդհանուր "կամ դոնէ վանական ժողովդ վճիռքն։ . . .

"Ահա հարցմանց իմոց առնէք զօք միշտ պատասխանի
։։ *Թէ* ։։ *Արքայ եմ ես, ինձ անկանի ի կողմանէ Մխիթար-*

“ թեան և լսա հրամանի Հռոմայ Պապին խորհել, խօսել և
“ գործել ։ ՚՚ Եւ յորժամ հարցանեմ ձեզ, թէ ըստ խղճի մոացդ
“ հաւանիք դուք թէ հրամանքն այնոքիկ իրաւացի և օգուտ-
“ կար են ժողովրդեանդ, յայնժամ պատասխանէք դուք.
“ “ Ես զխղճմտոց իմոց թողեալ իմ ի վերայ խղճի մոաց
“ Պապին ։ ՚՚ Թէպէտ և դուք եւս, թէ՛ բանիւք և թէ՛ գրով
“ ասացեալ էք բազում անգամ թէ “ Խնդճ Պապն չդիտէ ինչ
“ բնաւ, Պառնապօն է որ գործէ զամենայն ինքնօրէն ։ ՚՚ Եւ
“ ոչ այլապէս միայն, այլ և վառիարատոյն կարծիս զնոցանէ
“ ունելով, զի ասացիք ինձ երբեմն, թէ “ Պառնապօն ամբա-
“ րիշտ ումն է, իսկ Պապն երբեմն անզգայ ինչ արձան ։ ՚՚ —

“ Բազումքեցաք մեք, ասէ, միանգամ և երկիցս առ ընդհա-
“ նուր ժողով Վխորանութեանս, առ ի լսել և յորոշել զի-
“ րաւունս մեր. ընդ՛ր ոչ արարիք զուք զայն, զոր ամենայն
“ իննեերորդ ամին պարտ է առնել ըստ սահմանադրութեանս ։ ՚՚

Պատասխանէ Գեր. Հիւրմիւզ, թէ դրեալ է ինքն առ իւրան ի Պօլիս գալ նոցա ի վանս որոց մարթ էր գալ, ի կատարել զպատուէրն զայն Սահմանադրութեան, այլ ոչ զի չարժի անտի պատճառելով զդժուարութիւն վերստին դառնալոյ անդ առանց նորոգ հրամանի Հասանելն ։

Հարցանէ ցնա Հ. Սարգիս, թէ ընդ՛ր և առ նոսա զքո ի Փարիզ ոչ դրեալ կոչեաց ի վանս վասն ընդհանուր ժողովոյ. այն զի և նոքա իսկ էին բողոքեալ առ ընդհանուր ժողովն ։

Պատասխանէ Գեր. Հիւրմիւզ, թէ նախ պարտ էր առ հետաւորն գրել և իմանալ զհաւանութիւն գալստեան նոցա, որոյ պիտոյ էր առնել ժամանակ, ապա առ մօտաւորն ։

Հարցանէ ցնա Հ. Սարգիս, թէ ընդ՛ր և զայն եւս ոչ ծանուցանէ նոցա ի Փարիզ, թէ դրեալ էր առ նոսա ի Պօլիս, և նոցա ցուցեալ զդժուարութիւնն զայն ։

Լռէ Գեր. Հիւրմիւզ, և չառնէ պատասխանի ընդ հարցումն այն ։

Հարցանէ ցնա Հ. Սարգիս, թէ յառաջ քան զդալ իւր ի Փարիզ, արարեալ էր զոմն վանական ժողով վասն գալստեան և գործառնութեան իւրոյ անդ ։

Պատասխանէ Գներ. Հիւրմիւզ, թէ չէր արտրեալ իւր զայն, և պատճառն, վասն զի քանի մի ամանք ի միաբանից անտի հակառակ են միշտ ամենայն պրպտման իւրոյ :

Զհանդուրժեալ յայնժամ Հ. Սարգսի ընդ այս բանս նորա, ասէ ցնա հանդարձակ, ապա ուրեմն արդարանայ ինքն ի բանս իւր առացեալ բերանով և գրով, թէ « Այդ ապօրինաւոր և « ինքնագլուխ վարչութեամբ ձերով քայքայել է միաբանու- « թիւնդ բարեյապէս, երկնչիմ թէ գինն ասկս ժամանակի « քայքայեսցի այդ և բնականապէս : »

Հարցանէ ցնա Հ. Սարգիս ապա, թէ գի՞նչ էցեն յանցանք Հ. Ամբրոսիոսի, որ անդ կայր, զի ելցէ սա ի վարժարանէս. ընդ՞ր ոչ յայտնէք սմա, ասէ, զյանցանս իւր, և այնպէս հրամայէք զի ելցէ ի վարժարանէս, ըստ կանոնի առհաւանապրութեանս մերում :

Պատասխանէ Գներ. Հիւրմիւզ, թէ կամք միաբանութեան իւրոյ են զի ելցէ սա անտի, և ինքն հարկաւորեալ է կատարել զկամս միաբանութեան իւրոյ :

Առէ ցնա Հ. Սարգիս. « Կամք քո են և ոչ միաբանու- « թեան զի ելցէ սա ասէ, և ցանկութիւնդ եղծանելոյ « զվարժարանս, զայլ որ կարդել էտեղի սորա. և դու զամե- « նայն ինչ առնես ըստ քմայդ, և սոյն զայն կամաց միաբա- « նութեան, առ ի արդարացուցանել զքեզ առաջի աշ- « խարհի, որպէս և վկայեն հաւատացեալքն որ ի վանաց և « ի Պօլսոյ :

« Այլ ես զգարուս իմ հասուցի, հայեցեալ ի միաբանու- « թիւնս իրրեւ անդամ նմին. իսկ զգարուս իմ, հայեցեալ « յաղգս համօրէն, և իրրեւ առանձին որ, ջանացայ ես զամն « չորեքտասան և որով չափ աշխատեցայ ի ձեռս բերել և « պաշտպանել զիրաւունս ազգասոյց տպիս, և ինոյն հանու- « պատրաստել զամս քառասուն պաշտպանեցի, և պաշտպա- « նեցից զայն յամենայն կեանս իմ : Կամիք, ասէ, հասու- « նել զիս իմիաբանութենէդ, հասէք : »

Առէ ցնա Գներ. Հիւրմիւզ, ինքն ոչ կամի հասանել զնա :

Առէ ցնա Հ. Սարգիս. « Ապա ինձ ձեզ զինուք հանել զիս

«ի վարժարանէս. արարէք, և ես ձեռամ այնմ, որպէս գի և «ես զվերջին պարտս իմ հատուցից։

Զառնէ Գեր. Հիւրմիւզ ընդ այս բանս նորա պատասխանի։

Զայս ամենայն խօսեցեալ Հ. Մարգին՝ հրաժարի ինձմանէ ի տրամաբեամբ և ցաւոք սրտի. և յետանել անտի ասէ ցՀայր Ամբրոսիոս մնանել առ իս թէ աշակերտք վարժարանին խնդրեն գնալ ընդհատուրել նմա զօն զաւակին, վասն որոյ ասէ հրաման ածել զնոսա առ նա։

Առ Գեր. Հիւրմիւզ արհամարհանօք լինի թէ աւելորդ ինչ է այն։

Խնացեալ զայն աշակերտացն՝ առաւել եւս զղուին ինձմանէ . . .

Հաստատութիւն վերոյիշեալ բանից ճշմարտութեան զոր խօսի Հ. Մարգիս, ոչ միայն բաղում են հաւաստիք ընդ այն, նամանաւանի պրեալ առ նա և առ ընկերս նորա ի զանազան անձանց միաբանութեան որ ի վանս և ի Պօլիս, յորոց զմին վերադոյն յիշատակեցաք, այլ և գնացք Գեր. Հիւրմիւզի որ ընդ նա ապա, և զոր յիշատակեցուք ի սմին կարգս։ Վասն այսորիկ չգիտեմ բնաւ տեղի տրամադրելոյ ընդ ճշմարտութիւն, և գայթագղելոյ ընդ համարձակութիւն բանից Հ. Մարգսի որ առ Մեծաւոր իւր։

Գնաց Գեր. Հիւրմիւզ ի սենեակ Հ. Մարգսի և պահանջէ ինամիւ յետս դարձուցանել զղիր դրժամարտութեան իւրոյ որ վասն վաճառման պարտացն։

Առ գնա Հ. Մարգիս, պատրաստ է ինքն յանձնել նմա զայն, բայց քանզի օրինաւոր համապարհս պահանջեցաւ ինամիւ այն, ի ձեռն Մատիկանի ուսումնոց, կամի և ինքն օրինաւոր եղանակաւ յանձնել նմա զայն. քանզի վանական ժողովով և երկամսեան վարդապետաց առաքելութեամբ էր առեալ նմա այն, համեմատ երկու աշխարհիկ արանց վկայութեամբ, և հաստատութեամբ Հիւպատին Գաղղիացւոց ի Վենետիկ։

Թէպէտ և այս պահանջումն Հ. Սարգսի լրատացի և օրհնաբեր դասի յամենեցունց, սակայն Գներ. Հիւրմիւզ խոռմի և զայրանոյ ընդ այս, և ապառնալեօք առնէ պատսխանի, Թէ պահանջեացէ ինքն զայն ի նմանէ օրինաց հանուապարհաբ։

Ասէ ցնա Հ. Սարգիս, Թէ հանգոլօր էր եղանակն այն պահանջման իւրում ի նմանէ։

Յետ քանի մի աւուրց անտի ի 14. տպրիլի, և յամի նշանաւորի, ի յիաներորդ ամի լինելոյ Հ. Սարգսի ի Մխիթարեան Մխիթարայ, Գնայ Գներ. Հիւրմիւզ առ նա ի սենեակ նորա, և հարցանէ ցնա նախ՝ Թէ յանձնէ՞ր նմա զգիրն այն դրժաւարութեան իւրոյ Թէ ոչ. և ի պատասխանել նորա, Թէ լսա պահանջեալ պայմանի միայն յանձնեացէ նմա զայն, յայնժամ հանել նա ի ծոցոյ իւրմէ նամակ մի կնքեալ և տայ զայն ի ձեռս Հ. Սարգիս. և ի հարցանել նորա ցնա Թէ ուստի էցէ այն, ասէ նա՝ Թէ յԵրեմէ, և մեկնի անտի։ Բանայ Հայր Սարգիս զնամակն և ընթեռնու զայն, որ ունի օրինակ զայս.

„ *Յարգոյապատիւ և Վերատեսուչի Տ. Հ. Սարգսի վար-*
„ *դապետի ողջոյն սիրոյ և միծարանոյ։*

„ *Յաւուր Աւագ Հինգշաբաթու ի խոսկեն իսեամ ընդ Վե-*
„ *րապատութեանդ, և ի պատուիրել ի բերանոյ մեկնել*
„ *ի Մուրատեան վարժարանէս, խնդրեցէք յինէն, զրով*
„ *տալ զնոյն հրամանն։ Վասն որոյ ծանուցանեմ Ձեզ սիա և*
„ *Թղթովս զի ազատ էք յայսմ հետէ ի պաշտամանէ Տեսչու-*
„ *թեան Մուրատեան վարժարանին, և պատուիրեմ ձեզ յա-*
„ *նուն սրբոյ հնազանդութեան տալ ինձ զգիր գործակալու-*
„ *թեան ձերոյ և զամենայն թուղթս և զգրուածս պատշա-*
„ *ճեալս վարժարանիս և իրաց նոցին և վարչութեան։*

„ *Եւ զարձեալ վաղուն տալ զամենայն հաշիւս, ևթէ իցեն*
„ *պատրաստք արդէն և պարտն ի. տալս Թէ ոչ՝ պատրաս-*
„ *տութեամբ տալ ինձ ամենայն ինչս ի ձեռն Տեսչին, և*
„ *Ձեռն ի դպրոցիս առ դիւրութիւն, բայց պայմանաւ սկզբ-*

„ Ձերոյ իրաւանց և իշխանութեան ընդհանրական Աբբայի
„ վարանութեանս լաւագոյն գան ղոր ցարդ, և ապա մեկ-
„ նեալ ի քաղաքէս երթալ ի վանս մեր ի Վենետիկ :

„ Հրաժեշտ ձեր՝ ընդդէմ խոստանալ՝ ի յանձնելոյ ինձ
„ զթուղթն դործակալութեան, բռնադատէ զիս ձեռն արկա-
„ նել ի ճանապարհ օրինաց, և վաւերական օրինակաւ յետս
„ կոչել զկարողութիւնն զոր ոչ կամեցայք յանձնել ինձ
„ քաղցրութեամբ :

„ Դուք ինքնին պատասխանատու եղիջիք ամենայն հե-
„ տեւանաց անհնազանդութեան ձերոյ, եթէ շշուկ լինիչ, որ-
„ պէս մարթի է, լինելոյ :

„ Իսկ եթէ ամենայն ինչ ի կարգ մտցէ, պատրաստ եմ ես
„ ի ներել և ի մատուցանել ձեզ զամենայն օգնականութիւնս,
„ որոց պէտս ունիցիք ի Փարիզ և ի ճանապարհորդել ի վե-
„ նետիկ, իբրեւ այն ինչ հաստուցանիցէք զհաշիւն, և յա-
„ ւուրն յոր սահմանեցից՝ թէպէտ և չիցէք դեռ եւս կարա-
„ ցեալ տալ զհաշիւն ի միջոցի սահմանելոցն ութ աւուրց,
„ ոչ կամելով բնաւ տեղի տալ իմիք չքմեղանաց անհնազան-
„ դութեան :

„ Ողջ մնայեմ լինել

„ Ձերդ յարգանօք ի Քրիստոսէ սիրելի

„ ի Փարիզ. 14 ապրիլ. 1855.

„ Նուաստ ծառայ

„ ԳԷՈՐԳ ՀԻՒՐՄԻՒԶ

„ Արքեպիսկոպոս և ընդհանրական Աբբայ. „

Անհնարապրութիւն տեղական բարուց Գեր. Հիւրմիւզի, որ ինամակի նորին տեւանի, Ո՛չ ապաքէն արդարանայ Հայր Սարգիս ի կարծիս իւր և դառնան որ գինացից նորա

ի սկզբանէ անտի հաստատելոյ յԱրքայութեան, թէպէտ և
ջանայ նա ծածկել զայն մերթ զլացութեամբ, և մերթ կեզծա-
ւորութեամբ, խառնականելով յոչ կամաց զարժանիսն այլոց,
և մերթ անխղճմտութեամբ, թողուլ զինքն իբր ի կամս
Պաւլին : Բայց իրրեւ գոռանէ նա զօրաւորին խորհրդոյ իւրոյ
և վրէժխնդրութեան զՊաւնատոն ի Հռոմ, և զարթանեալ
նորին զնուիրակն ի Փարիզ, յայնժամ յայտնէ զանպահական
բարս իւր : Վասն որոյ ոչ զարմանայ և ոչ խռովի Հ. Սարպիս
յընթեռնուլ զնամակ նորա, ճանաչելով արդէն յինն ամաց
հետէ զանարդ նախանձն նորա, և զոգի վրէժխնդրութեանն
որ ընդ անաչառ գրութիւն իւր առ նա ի յանդիմանութիւն
անպատեհ գնացից նորա, և տեսանելով զքաջալերութիւն և
զժանդակութիւն որ ի նուիրակէ Պաւլին և յԱրքեպիսկոպո-
սէ Փարիզու ի գործ յայն բռնաւորութեան նորա :

Այն ինչ առարեալ Հ. Սարպէի զընթերցումն վերադիչեալ
նամակի Գեր. Հիւրմիւզի, ահա գայ մի ի պաշտօնէից առե-
նին, հրամիրակ առեալ, և յանձնէ ի ձեռս նորա գրուած
ինչ գաղղիարէն, գյայտարարութիւն առնելն, և մեկնի
ի նմանէ լուռ եամբ :

Ընթերցեալ և զայն Հ. Սարպէի, տեսանէ զի Բարեմաղո-
թեան լինի այն և հաստատութիւն նամակին Գեր. Հիւրմիւզի,
և ընդ այն եւս ոչ զայմանայ և ոչ խռովի, գիտելով թէ վճա-
րեալ էր վասն իւր անիրաւութիւն ինամանէ :

Գնաց միայն առ փոխանորդն Յովհաննու Մուրատ, հար-
ցանել զկարծիս նորա, թէ պարտ և արժան էր առնել պա-
տասխանի թղթոյ Գեր. Հիւրմիւզի, թէ ոչ : Ասէ ցնա փոխա-
նորդն, թէ չէր արժան առնել այնմ պատասխանի, այլ
արհամարհել զայն. քանզի անզգամութիւն է, ասէ, արար
նորա և ամօթ երեսաց իւրոց : . . . Բայց խորհուրդ տայ նմա
զրել զարձեալ թուղթ առ Յովհաննէս Մուրատ, ծանուցա-
նելով նմա զցաւալից վիճակ գործոյ հօր իւրոյ, և զպարտս
իւր, զոր խղճի մատոյ :

Անդադար Հ. Սարպիս խորհրդոյ նորա և առնէ զայն, թէպէտ

և ոչ ակնառնի մխիթարութեան անուն, տեսանելով արդէն զարդիւնան որ ի յետոյում խորհրդոյ նորա, զդրամ հրաժիշան որ առ Նուխրաին, թէ չընդդիմանայ ինքն կամաց Պապին ի փոխադրել զՄաւրատեան վարժարանն ի Հռոմէ, այլովքն հանդերձ. սակայն առնէ նա զայն ի հաւուցանել զվերջին պարտս իւր, զոր և յիշատակեացուք ապա։

Գնեցաւք առաքեալ թէ ունէր Գեր. Հիւրմիւզ տեղի և իրաւունս գրելոյ առ Հ. Սարգիս զվերոյիշեալ նամակն, և զայնպիսի նամակ։

Եթէ ամրաւանութիւն Պապալի, ասեցէ նա, ետ նմա տեղի և իրաւունս գրելոյ առ նա զայն, ոչ ապաքէն հերքելով հերքեաց նա զայն իրրև զչարախօսութիւն առն անզգամի, և զայն հանդերձ հաւաստեօք և վկայիւք, և Գեր. Հիւրմիւզի բաւականացեալ ընդ այն լուեաց։

Ապա անիծեալ ոխակալութիւն նորա զի խիստ էր ետ նմա տեղի և իրաւունս գրելոյ առ նա զայնպիսի նամակ, իւրէժխընդրութիւն։

Եւ թէ ունէր նա տեղի և իրաւունս կասկածելոյ զհաւատարմութիւնն Հ. Սարգսի, պահանջելով ինձանէ զդէր դործակալութեան նորա, և զհաշիւ ծախուց Մ. վարժարանին, և զայն այնպիսի խառնութեամբ։ Ոչ ապաքէն աս այս Հայր Սարգիս էր, որ զամս լինն բողոքելով բողոքէր զանուղիղ և զանիրաւ մատակարարութիւնն իրաւանց աղքատաց ազգին. և ոչ ապաքէն նա ինքն Գերապայծառ Հիւրմիւզ էր, որ ամաք լինչ յառաջ վկայելով վկայէր հաւատարմութեան Հ. Սարգսի ի թուղթն իւր որ ունի օրինակ զայս.

„ Ընկալայ զթուղթն Վերապատուութեանդ զրելն ի 20 ամսոյս, ոչ յարգարութիւն լինչ անձինս, այլ ի հանդարտութիւն և ևթ արտ ձերոյ ի հոգոյդ, հարկ համարիմ նշանակել համառօտիւ նախ՝ զի մխիթարութիւնս ոչ առ հարկի կարօտութեան իւրոյ, այլ վասն իւրացն պատշաճողութեան հաւանեցաւ առաքելութեանդ ձերոյ։ . . .

„ Երկրորդ՝ չկաք լինձ բնաւ երբէք կասկած լինչ այնպիսի

ի միտս առնկեալ զվերապատուհանէդ, զի վասն այնորիկ չյղէլ առ ձեզ զդարձակալութեանն զկր. և յոյժ խակ անառակ է և դժպատեհ կառավածել, զի որ զկրկուս միլիոնս ֆրանքաց ի ձեռին առնելով վարեցաւ ամենայն հաւատարմութեամբ, և որ այնչափ նախանձայոյզն է օգտի և փառաց վարժարանիդ, ի վաճառման պալատանդ զոյն անհատատարիմ։ Ելին իրի խակ՝ ընդ որոշել իրացն միննչեւ ընկալեալ զվուէրդ՝ ահա զի զդարձակալութեան ի ձեռին ձերում կայ։ »

Այլ և առաւ միով յառաջ բանիւ բերանոյ վկայէ նա առաջի իւրոցն այսպէս.

« Վերապատուելի Հայր, ես և համօրէն միաբանութիւնս « ճանաչեմք քաջ զյարդ քո և զարդիւնս վաստակոցդ, ընդ « որ մի՛ բնաւ տարակուսիր։ Վստահ եք զվանայելդ յարժանն « աղքատաց ազգիս, և այն այնչափ, մինչեւ միոյ փողոյ հա- « ցիւ շատանալս զոս յոյժ արտարոյ ասէին գտանել գոս- « նէս։ Ապա ոչ երբէք կասկած ինչ ունելով զքէն զվոխա- « նակադիրդ յիսս դարձուցի, և զամսական ծախսն վարժա- « բանիդ զադարեցուցի առաքել քեզ անխափան, այլ վասն « այլ ինչ պատճառաց արարի զայն, զոր ապա տացից քեզ։ « Թէպէտ և ոչ բարւոք եղեւ այն՝ խոստովանիմ ես, վասն « որոյ պարտաւոր եմ զարման տանել այնմ, անձամբս գնալ « առ սեզանաւորն յարդարացուցանել զքեզ յոյն առաջի « նորա, որպէս և առաջի այլոց, և հաստուցանել զպարտսդ « զոր արարեալ ես վասն ծախուց վարժարանիդ, հանդերձ « վաշխեաւն։ »

Ապա զիմաբրդ կամ ընդէր այս ամենայն ի մուտացոնս ինձ այժմ։ — Վասն զի կրկք վրէժխնդրութեան մուտանալ տայ նոցա զամենայն։

« — Ի խօսելն իմում ընդ վերապատուութեանդ, ասէ, և « ի պատուիրել ի բերանոյ սեզնել ի Մարսեան վարժարա- « նէն խնդրեցէք գինին զրով տալ զնոյն հրամանս։ Վասն

„ որոյ ծանուցանեմ Ձեզ ահա և Պղծուն դի ապատէք յայսմ
„ հետէ իպաշտամանէ Տեառնէ Մուրատեան վարժապե-
„ նեն, և պատուիրեմ Ձեզ յանուն սրոյ հնազանդութեան
„ տալ ինձ զձեր գործակցութեան ձերոյ, և զամենայն
„ Թուղթս և զգրուածս պատշաճեալս վարժարանիս և իրոյ
„ նորին և վարչութեան։ ՚՚

Առեմք մեք, ո՞չ ապաքէն Հ. Սարգիս այսպէս էր խնդրեալ ի Գեր. Հիւրմիւզէ, զի տացէ նա գրով զոյն հրաման, հանդերձ ապացեալ պատճառաւ, այսինքն թէ Հռոմի կամի զանել իւր ի Մ. վարժարանէն, և թէ միաբանութիւն չկարէ հակառակիլ այնմ։

Ապա ընդէ՞ր ոչ բուռ այսմ տայ նա զհրաման եղանելոյ նորա անտի։ — Վասն զի սուտ էր՝ թէ հրամանն այն ի Հռոմէ էր, այլ ի վրէժխնդիր կամաց իւրոց։

Եւ ապա որո՞վ յուսով ակնուներ նա հնազանդել զնո՝ անկաւ հրամանի իւրոյ. հպատակի կոյր հնազանդութեա՞մբ, զոր բռնաւոր առաջնորդն ասէր անուանէ։ Հ. Սարգիս հասանէ բանիւ հնազանդութեան, և հակառակ է կոյր հնազանդութեան, որպէս և յայտ արարեալ է բանիւ և գրութեամբ։

Թէպէտ և ծանուցեալ էր արդէն, թէ ի ձեռս Գեր. Հիւրմիւզի սոյր հնազանդութիւն ասացեալն բռնաւորական գաւազան, սորայր և կացին էր քանդման միաբանութեան, որպէս և հաստատ գրեալն ուրուն ի վանից այսպէս.

„ Վասն յառաջ ապառնիսն լեալ են ասել ածել վանից,
„ և սորայր ի ձեռս մտցել զմիաբանութիւնն, և սորայն
„ ոչ ասել զկայ, մինչև հասցէ առ արմն, որ է գլուխ,
„ սակայն մեծ է Տէր։ ՚՚

„ — Եւ գործեալ վանքն սոյ զամենայն հաշիւս, սակ,
„ եթէ իցեն պատրաստ որպէս պատուն է. ապա թէ ոչ
„ պատրաստեալ տացեք ի միջոցի սեպ աւուրց, զորս ինքն
„ սահ ձեզ մեալ ի գործոյս տուդերութիւն. բայց պայմանաւ
„ ակնածելոյ իրասանց և իշխանութեան ընդհանրական Ար-

«բայի Մխոյանուհեանց յաւուրսն քան զոր ցարդ, և ապա «մեկնեալ ի քաղաքէս երթալ ի վանս մեր ի Վէնեսիկ։»

Ապաքէն ի դէպ եւանէ ամս ասացեալն, թէ «Չի այր «սամփակ եա, բառնա՝ զոր ոչ եդիր, և հնձես՝ զոր ոչ «սերմանեցեր։»

Եւ յիրաւի, քանզի իրրեւ այր սամփակ վարի նա առանձինն ընդ նմա. ոչ իմանայ թէ ասոյն և զինչ պահանջէ. ոչ յիշէ բնաւ դյեռասիտ խորհուրդ միարանութեան իւրոյ, զհրաժեշտն առեալ ի պահանջմանէ իրաւանց աղքատաց ազգին, զորոյ հատատիան ունի Հ. Սարգիս ի ձեռին, և զոր ի տխուր արձանագուցեալ Թողէ յիշատակ արժանաց միարանութեան որ ի հատատութիւն Մուրատեան վարժարանին։

Նոյնպէս ի դէպ եւանէ ամս ասացեալն՝ թէ «Քառաց չար, «զամենայն պարտս թողն քեզ, վասն զի աղաչեցեր զիս. եւկ «արդ ոչ էր պարտ և քեզ ողորմել ծառայակցին քումմ, «որպէս և ես քեզ ողորմեցայ։»

Արդարեւ իրրեւ ապերախտ ոք ոչ յիշէ նա զերախտիսն Հ. Սարգսի որ առ ինքն ի ժամանակի ընտրութեան իւրոյ յԱրքայութիւն. քանզի եթէ չէր տուա առեալ վկայութիւն, ոչ երբէք ընտրեալ լինէր նա ընդհանրական Արքայ Միաբանութեան, ճանաչելով զնա զուարզ, ինքնահաճ, և կամակոր ոք, զոր և յիշեցուցանէ նմա ապա, ասելով, թէ զեղջ էր մաց իւրոց ընդ վկայութիւնն այն։

Սակայն այժմ պարծի նա այնու, ունելով երես զօրավիգս բռնաւորութեան իւրոյ, զբռնաւորն որպէս ի Հռոմէ և ի Փարիզ, և որոց եղեւ և լինի հատուցումն ըստ գործոց իւրեանց.

Արքեպիսկոպոսն Փարիզու ազէտալի մահուամբ վճարի։

Պառնասոն և Նոեյրակն ի Հռոմ անհնարին տագնապին։

Իակ Վեր. Հիւրմիզ զարժանն ընկալաւ, առելի եղեւ ազգին և ոչ սիրելի Պապին։

(*) Մի արդեօք վրէժխնդիր ոչ‌ոյ և անազգոյն մտաց հատուցին քանզի առանձինն, ասացուք զայսմանէ կարեւոր ինչ ծանօթութիւն։

Արքեպիսկոպոս Փարիզու յետ տեղեկանալոյ ձեռամբ սիթառակալաց իւրոց, թէ Հ. Սարգիս չէր քնաւ պատճառ խռովութեան որ ի Վ. վարժարանին, և յետ կո-

Ա՛ւ ասելդ համարիմք յիշատակել առ և զայլ Տառած մի բանից Թղթոյ Գեր. Հիւրմիւզի որ առ Հ. Մարկոս, և որ ունի օրինակ զայս.

„ Ընթերցեալ զիռոգին Վերապատուականի գրեալն „ ի 10 ամսոյս, չգիտեմ զինչ և զիարդ առաքեսցեն, „ որով մարթացայց, ոչ զանձն իմ արդարացուցանել, այլ „ հանդուցանել զկիրս Քոր վշտացեալ. Ինձ միշտ մեծարոյ „ են խորհուրդք ձեր և Թելադրութիւնք. և զոր կարեմն և որ „ շատ յիսն է իշխանութիւն՝ Հանամ առնել և Հանացայց, „ Զայս Թէ չկարեմ արդ հատուցիմ առնել Քեզ, ժամա- „ նակն Թերեւս ցուցցէ և հատուցմունգատուցէ զամենայն.

„ Խոստանիմ և ես զի զյորդ արծաթոյն կորզելոյ առ „ ի Քենէ՝ ոչ ոք կարէ գիտել իրրեւ զՔեզ՝ և ես Թէպէտ և ոչ „ Քեզ շատ գիտեցեմ, սակայն զէթ վասն երաշխաւորու- „ Թեան հարկ է ինձ խնամ առնել այնմ և խնայել.

„ Զայսոսիկ համառօտս առեալ պատասխանի՝ զՅիսուսեան „ ի տեսանելս զմիմեանս ի բերանոյ ցկոյ յերկար.

„ Վիեննիկ. 22 ապրիլ. 1850. „

Աիսրանիցէն երթէք և գնացէք այսոքիկ բանք Թղթոյ Վերապատուական Հիւրմիւզի, ընդ բանից Թղթոյ իւրոյ գրելոյ ի 14 ապրիլ 1855 ամի. ասէ եր ուրեմն ճեռագիրն զոր ընդ առ է ի բերանոյ յերկար.

Ահ յեռասիսի խորհրդոյ և անհասկնոյ խորամանկութեան.

չելոյ գնա առ ինքն և երկար խոսելոյ ընդ նմա, և վկայելոյ Թէ գանգատաւ Վեր. Հիւրմիւզի ոչ էր գնահատէ, այլ գՀ. Ամբրոսիոսէ, զոր և բանի տրտատել ի անձն. կէ խրմէ... սակայն ի վերոյ այսր ամենայնի տայ նա տպա գրով վկայութիւն զՀեռա գիտացութիւնն իւրոյ յընթերնուլ գայն յատենի, Թէ Հ. Մարկոս էյէ պատճառ խոտորութեան որ ի Վ. վարժարանին, որով և գՀր. Տառանեն գատաւորն արտաքսելոյ գնա ի Վ. վարժարանէն.... Զիդէ այս առա գկայութիւն...

Ոչ է այս վայել և արժան առանձին իւրում... և գայս ի կատարել գիտաց պարտին, գաշխատանել Վեր. Հիւրմիւզի, քան խոտորութեան իւրում ատա.

Ապա են առանձին բանք ձշմարտութեան և արդարութեան, Թէ գոյ Տառա. գութիւն իւրաքանչիւր քան գոյնոյ իւրոյ.

(Առանձին Հեղինակին).

“ — Հրաժեշտ ձեր, ընդդէմ խոստանալ, ի յանձնելոյ ինձ
“ պիտոյիցն գործակալութեան, բանադատէ զիս, ասէ, ձեռն
“ արկանել ի ճանապարհ օրինաց և վաւերական օրինակա-
“ կեսս կոչել զկարեզութիւնն, զոր ոչ կամեցայք յանձնել
“ քաղցրութեամբ։ ”

Որովհետև օրինաւոր ճանապարհաւ պահանջեցաւ ի Հայր Սարգսէ պիր գործակալութեան իւրոյ, ի ձեռն ատենիկանի ոսմանց, կամի սա նոյնպէս օրինաւոր եղանակաւ յանձնել նմա զոյն, վանական ժողովով և եպիսկոպոսաց սոպրապրութեամբ, որով սուեալ էր սմա այն։ Հրաժեշտ իցէ այս ի յանձնելոյ նմա զոյն, թէ օրինաւոր պահանջուածն։

Սակայն օրէնք Գեր. Հիւրմիւզի գոլով բանութիւն, պատահս իմնդրէ լեալ զոյն, որով և ստիպեալ ցուցանել զՀայր Սարգիս հասարակութեան։

“ — Ասէ ինքնին պատասխանատու եղիցիք ամենայն հե-
“ տեւանաց անհնազանդութեան ձերոյ, ասէ, եթէ շուկ
“ ինչ՝ որպէս մարթի է՝ լինիցի։ Իսկ եթէ ամենայն ինչ
“ ի կարգ մտցէ, պատրաստ եմ ես ինձեզ և ի մասուցանել
“ ձեզ զամենայն օրհնականութիւնս որոց պէտս ունիցիք
“ ի փարիզ և ի ճանապարհորդել ի վենետիկ, իբրև այն ինչ
“ հասուցանիցէք զհաշիւն, և յետուն յոր ամենանեցից,
“ թէպէտ և չիցէք զեւս ևս կարացեալ տալ զհաշիւն ի միջո-
“ ցի ամենանելոցն ևթ տարւոց, ոչ կամիլով բնաւ տալ
“ տալ իւիք չքմեղանաց անհնազանդութեան։ ”

Ո՛չ ապաքէն տատանեալ ի դէպ եղանէ նմա տացեալն, թէ
“ Այր որ յԱստուծոյ ոչ երկնչի, և ի մարդկանէ ոչ ամա-
“ չէ, ո՞ եւ յիրաւի՝ քանզի եթէ զոյր ի միտս նորա երկիւղա-
ծութիւն, չկարէր նա գրել զայսոսիկ բանս առ Հ. Սարգիս,
որ Աթոռակալ էր Մխիթարեանց, որ ժերտզոյն էր ի մէջ
խորհրդականաց, և որ հիմնադիր էր Վենետկեան վարժա-
րանին։

Եւ եթէ ունէր նա ամօթ երեսաց, ոչ կարէր գրել զայսոսիկ բանս առ Հ. Սարգիս, որ զամս շրջիբտասան ազգակ շատ ոչ-խատասիրեաց երկու միլեան ֆրանք յանձնեալ էր ի ձեռս

վարանումնեան, և երկու հարիւր հազար ֆրանք ընծայեալ էր նմա, և յընծայէ անտի էին մատանին և ոսկի շղթայն զոր կրէր նա ինքն։

Սակայն չունէր նա խիղճ մտաց, զի թողեալ էր զայն ի վեր- բայ խղճի մտաց Պաղլէն, որ վասն իշխանութեան իւրոյ տանջէ զհպատակս իւր մահու չափ, և ոչ խղճէ. և ոչ ամօթ երեսաց, զի ծածկէր նա զայն մերթ քողով կեղծաւորութեան և մերթ զլայութեան։

Երիք աւուրք յառաջ պահանջէ նա ի Հ. Ամբրոսիոսէ իրրեւ ի մատակարարէ գհաշիւ ծախուց վարժարանին, և զայն ձեռամբ և առաջի պաշտօնէից ոստիկանին ուսանող, և քնդ այն բառնալոնաց ինքն. ապա ի Հ. Սարդէ պահանջէ զայն հանդերձ խառնութեամբ։

Իակ թէ զինչ նշանակէր այս անպատեհ և անիրաւ պրա- թիւն Գեր. Հիւսմուզի, եթէ ոչ յայտարարութիւն ամենա- տեսակ բռնութեան և անիրաւութեան առ Հ. Սարգսէ։

ԳԼՈՒԽ ԿԲ.

Թուղթ Հ. Սարգսի առ Յովհաննէս Մոբսէս ի պատուիրելոյ զբաժանումն Հայոց. — Բողոքական թուղթ ազգայնոց որք ի Փարիզ առ Յովհաննէս Մոբսէս ի Լոնտոն. — Կոչ Հայր Սարգսի յաւուրն գաղղիացւոց. — Ջնջուբիւն ընդ այլ. — Հրաւիրագիրս առնելի առ Հ. Սարգիս. — Պատասխանի նորին առ այլ. — Յանդիմանել Հ. Սարգսի առնելի. — Խորհրդաժողովի և բանք նորա. — Առնելս խօսուբիւն փոխանակաբար Գեր. Հիւրմիզի. — Բողոք փոխադրելի Մոբսէսի. — Ընդդիմադրիլ յՕսմանեանսն Գեղարդեցւոյն խնդրոյն. — Կասիլ գաւառական յորոշեալն խնդրոյն. — Հնարիւնց խորհրդակցիլ Գեր. Հիւրմիզի, և գաւառականացն փոխադրելի նորին. — Որոշեալն գաւառացն առնելի. — Պատճէն վճռոյն. — Բողոք Հայր Սարգսի ընդ այլ.

Թուղթ Հ. Սարգսի առ Յովհաննէս Մոբսէս, յորում յորդորէ և աղաչէ զնա ի պաշտպանել զիւրացեալ հօր իւրոյ, օրինակ զայս.

« Բազմապատիւ Տէր,

« Ձեռս գրելոյ իմ առ Ազնուութիւնդ ի 12 ամսոյս, յորում ցուցի ճշմարտութեամբ զիրաւունս և զպարտս ձեր միանգամայն, հայեցեալ ի պաշտպանութիւն իրաւանց ազգաւոցս ազգիս համօրէն, և իմշռնչելոյ յիշատակ բարեաց հանդուցեալ հօր ձերոյ, Աղա Սամուէլ Մոբսեսի, և այն ինչ ապաւէն մնծաւ անհամբերութեամբ ցանկալի տեսութեանդ, վճռահայեալ յայն առաւել ևս գրութեամբ սիրելի որդւոյդ

որ առ Պարոն Մօտ փոստաթանդ, թէ ի վաղիւն ի 19 ամսոյս ունէիք գալ այսր, ահա լուայ յերէկ ի Պարոն Մօտէ կրկին և երեքկին լուրս ցուսալից :

« Մի՛ զի խօթացեալ էյէք յանկարծակի և վասն այնորիկ խոհանեալ էք ի գալոյ այսր :

« Երկրորդ՝ զի երկբայիք դուք ընդ յաջող ելս գաղթին ձերոյ, . . . թէպէտ և գիտէք զկարծիս օրէնադէտ փոստարանին որ ընդ ապահովութիւն նորին, և զապացոյցս և զհաւաստիան զոր ունիմ ի ձեռինս, և զոր ցուցից քեզ ի գալդ այսր :

« Եւ երրորդ՝ զի կասկածիք դուք ընդ համախոհութիւն և ընդ յարատեւութիւն իմ ընդ քեզ ի պարշտպանել զիրաւունս աղքատաց ազգիս, և ի միանձնեանս զիշատակ բարեբարին . . . .

« Ահ, սիրելի Աղա Յովհաննէս, մինչեւ ցերբ այդպիսի ցուալից և ջնասակար կասկածանօք վարանիք և ցաւեցուցանէք զսիրտ իմ, չճանաչելով զձշմարիտ բարեկամդ :

« Ձէր բաւական արդեօք նախընթաց թուղթն իմ առ ձեզ ի փարատել իսպառ զամենայն կասկածդ որ գինէն, Թողից յիշատակել առ գրեթանով և զանուստ խոստումն իմ առ ձեզ որ ի Պուլղոյն, յամին 1850, և գրով խոստումն իմ այդր, և և ահա այս վերջին թուղթն առ ձեզ զոր գրեմ այսօր ի 19 ապրիլի ամսոյս, և զոր ընկալջիք և ընթերջիք վաղիւն ի 20 որին ամսոյս, յաւուր նշանաւորի, ի տարեդարձի մահու հանգուցեալ Բարերարին ազգիս, հօր ձերոյ, վկայ լիցի առաջի երկնի և երկրի զի հաւատչի ես զպարտս իմ, եղէ և եմ և եղէց յամենայն կեանս իմ համախոհ և համագործ ընդ ձեզ ի բանիլս յայս ի պարշտպանել զիրաւունս որք և ազգաս ճանկանց կարօտելոց ազգիս, և զջանջլենաւորութիւն յիշատակի բարեաց հանգուցեալ հօր ձերոյ Աղա Սամուէլ Մուրատի :

« Վասն այսորիկ աղաչեմ զձեզ բազում Թախանձանօք փութալ գալ այսր ժամ մի յառաջ, որպէս զի խորհեցուք ի միասին և գործեսցուք զարժանն, որ ի փառս Աստուծոյ և

յօգուտ տառապելոյ ազգիս, և ի պատիւ տանդ Մուրատեան, որով եմ և

« Մնամ միշտ

« Բազմապատիւ Տէրութեանդ

« ի Փարիզ. 19 ապրիլ. 1855.

« Խոնարհ ծառայ և աղօթարար

« Հ. ՍԱՐԳԻՍ ԹԷՈՒԼԵԱՆ. »

Թէպէտ և առնէ Յովհաննէս Մուրատ բանիւք ինչ պատասխանել, բայց չշարժի նա բնաւ ի տեղւոջէ իւրմէ, և չառնէ ինչ ըստ պարտուց իւրոց, մանաւանդ թէ ղընդհակառակն առնէ, հրաժարելով արդէն զրով առ Նուիրակ Պապին խառնիլ ի խնդիրն յայն, և մատնելով զՀ. Սարգիս իւրեւ զհակառակ փոխադրութեան վարժարանին ի Հռոմ, որով առաւել եւս համարձակութիւն տայ Գեր. Հիւրմիւզի բռնութեամբ հանել զՀ. Սարգիսն ի Մուրատեան վարժարանէն :

Առնէ Յովհաննէս Մուրատ նոյնպէս պատասխանի թղթոյ վաստակաւնին իւրոյ, որ յորդորէր զնա փոյթ ածանել զկնշատակ հօր իւրոյ, զժառանգութիւն ազգասէր հօրն, կարծելով զնա հայրասէր և ազգասէր ոք, խորհել ի մեծաբանութենէ նորին որ ի խնդիրն յայն վարժարանին :

Իսկ Հ. Սարգիս թէպէտ և ճանաչէր քաջ զկատարեալ խորհուրդ և զնենգակից խորամանկութիւն Յովհաննու Մուրատի, և փորձ իսկ գոլով այնմ բազում անգամ, սակայն ըստ խորհրդոյ վաստակաւն Մօլէի, մանաւանդ թէ ըստ իրաւանց արդարութեան առ իւրաքանչիւր զարժանն, ի տէր տրձանացուցանել զայն՝ որ է առնա զվերոյիշեալ թուղթն. և ոչ այլոյ ումեք, այլ և ի հաստատութիւն համախոհութեան իւրոյ ընդ նմա ի խնդիրն յայն, յանձնէ ի ձեռս վաստակաւն Նորա Մօլէի իւրեւ առնդ զմուրհակս Մուրատեան վարժա-

*բանին ըստ ցանկութեան և ըստ խնդրոյ նորին, առ ի չթո-
ղուլ նմա տեղի ինչ կասկածանաց զհամախտահարութենէ իւրմէ
ի խնդիրն յայն։*

*Յայնմ ժամանակի ազգայինքս որք ի Փարիզ լսեալ և տես-
եալ զանիրաւ գնացս Գեր. Հիւրմիւզի որ ընդ Հ. Սարգսի՝
մանաւանդ թէ ընդ իրաւունս ազգաւոյ ազգին, խորհին և
գրեն նմա թուղթ բողոքական առ Յովհաննէս Մուրատ
ի Լոնտոն (*), յորում յորդորեն և ազաչեն զնա պաշտպանել
զիրաւունս ազգաւոյ ազգին և պահել զյիշատակ հանգու-
ցեալ հօր իւրոյ Սամուէլ Մուրատի, կարծելով զնա արդէս
անաւանդ նոյնպէս և ազգասիրութեամբ նման հօր իւրոյ,
այլ վրիպեցան ի կարծեաց իւրեանց, քանզի ոչ միայն չէ նո-
բնաւ նման հօր իւրոյ ազգասիրութեամբ, այլ և ոչ քաղա-
քավարութեամբ, չառնելով նոցա պատասխանի անգամ ար-
ժանապատիւ։*

*Անցանէին աւուրք երիտասարդ, և չառնէ ինչ Հ. Սարգիս
ըստ հրամանի Գեր. Հիւրմիւզի, յանձնելոյ նմա զհաշիւ ծախուց
վարժարանին, և գառնալ ի Վենետիկ ի վանս, այլ միայ
վերջին անիրաւութեան նորա, յոնութեամբ հանել զինքն
ի Վ. վարժարանին. թէպէտ և այն գժուարին յոյժ և անհա-
ւատ խոկ թուէր նմա, հայեցեալ յիրաւունս իւր ի վարժարա-
նի, և յաստիճան իւր ի միաբանութեան։ Սակայն անարգ
նախանձ և կիրք վրէժխնդրութեան հաւատարիմ առնեն զայն,
որ ի հետացումն մտաց և ի գայթագղութիւն հատարակաց ամե-
նեցուն։*

*Եւ ահա հասանէ օրն այն, ի 27 ապրիլի, յաւուր նշանա-
ւորի, ի տարելարձն մահու Մեծին Մխիթարայ, յորում
կոչէ Գեր Հիւրմիւզ զՀ. Սարգիս ի դասատուն, հրամանա-*

(*) Զայս թուղթ ազգայինքն որք ի Փարիզ ինքեանք չտեսին և ան-
գիտան ստորագրին, բայց ի մէջէ ունիմք, անգամս հանարեալ զայն. այլ
ի խնդրոյ Հ. Սարգսի և ի չնորհ ալեաց նորա, յաւելու և նա զանուն իւր յայս։
Հանգուցեալ Ե. Պարթիպպանեան յօրինէ ապա ևս ուղղագրէ զայն ի Փա-
րիզ, յոր ապրանէ զգնացս Գեր. Հիւրմիւզի, և ջատագովէ զՀ. Սարգիս։
Ասքինէ նոյնպէս և Պարոն Ջունդ ևս ևս, և ստացեալ զայն ի Պալիս։ —
(Տան-Քուբէն Հիպիւսկին։)

զերամ յառնել Վաղիքացւոց, յանդիման լինել նոցա անդ
ըստ ժամադրութեան։

Ել արժանաժառանգ յաջորդ ուծից Մխիթարայ, և երջա-
նիկ վիճակ վարանեալեան նորա։ . . .

Առանձայ Գնր. Հերմիոգ, մանաւանդ թէ ուրուանոյ վիրաւո-
և գրանդիմանութիւն առաքելոյն. « Ինչ՝ որ ի ձէնջ ևթէ երբ
« ինչ լցեն ընդ ընկերի երթալ առաջի անիրաւաց
« և ոչ առաջի սրբոց։ . . . Զերկրաւոր առեանս եթէ յանձն
« առնուցուք, զանարգս նիւթեղեայ գառուարձանացն։
« Ահա ամօթոյ ձերոյ առեմ, այնչափ ոչ գոյ որ խնամոյն
« ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել ի միջ եղբօր երթ,
« այլ եղբայր ընդ եղբօր գայր, և գայն ի միջ անհաւատից։
« Եւ արդ ամենեին խոչ վարձատրութիւն է ի ձեզ, զի գա-
« տաստանք խոչ զոն ի միջի ձերում. ընդէր ոչ գոլ զրկիք,
« և ոչ գոլ առեալ նեղիք, այլ գոլ զրկիք և նեղիք, և
« արդ գերբարս եւս։ »

Ահա այսպիսի որ լինի Գնր. Հերմիոգ, քանզի յԱռաջոյ
ոչ երկնչի, Թողով զեկեղ մաց երթոյ ի վերայ խղճի մաց
Պապին, որ վասն աշխարհական իշխանութեան երթոյ գնա-
տակս իւր մահու չափ առնէ, և ընդ այն ոչինչ խղճէ. և
ի մարդկանէ ոչ առնէ ծածկելով զդէմս իւր քոլով երանոյ
իշխանութեան երթոյ, քան օրինակի Պապին։ Եւ ահա այսպիսի
անձինք լինին Մխիթարեան Միաբանք որք ի Վենետիկ և որք
ի Պօլիս, անանց լռելով, և անանց Հաւատովելով զանիրաւ-
գնացս առաջնորդի երթանց ընդ Հ. Սարգսի։

Հրաւիրակն Վաղիքացւոց առնէ նորոգ խնդ հրամանագիր
մատուցանէ Հ. Սարգսի, որ ունի գնոյն իմաստս և որոշեալն
երթս գառաջնոյն, և որ ունի օրինակ գայս.

« Արտհետև Վերապատուելի Հ. Սարգիս Վ. Թէոդորեան
« յանուանել է և ոչ կամի հրաժարել ի պաշտօնէ վերատես-
« չութեան վարժարանիս, զոր Գնր. Հերմիոգ արդէն առեալ
« է ի ձեռաց նորա, որպէս և գայլ իշխանութիւնս որք
« առեալ էին նմա, և արտհետև ընդդիմանալ Վ. Հ. Սարգսի

„ եթանել ի վարժարանին առաւել եւս ոչ արդարանայ, վասն
„ զի Վեր. Հիւրմիւզ իրրեւ ընդհանրական Աբբայ եւ մի միայն
„ Առաջնորդ Մխիթարեանց, որք տէր են ամեն վարժարա-
„ նին, իրաւունս ունի արտոքսել ի տանէն զոր եւ կամիցի,
„ ապա թէ ոչ՝ իշխանութիւն Վեր. Հիւրմիւզի ընդ ամե-
„ նեսեան, եւ Մխիթարեանց, իրրեւ տէր վարժարանին,
„ եղծանին իրաւունք: Վասն այսորիկ պարտ է Վերապատ-
„ ուելի Հ. Սարգսի Թէոդորեան անընդմիջապար եթանել ի վար-
„ ժարանէն, եւ զառանձին կամ կարասխս իւր հանել անտի,
„ ապա թէ ոչ՝ ձեռամբ բարեկարգութեան Առաքեանին,
„ եւ եթէ պիտոյ լիցի, զինու զօրութեամբ պարտ է հանել
„ զինքն ի վարժարանէն: „

Առնէ նմա պատասխանի Հ. Սարգիս, թէ ինքն ի վարժա-
րանէ անդ ոչ էր վարձաւոր, վասն որոյ եւ չեղանէր անտի,
մինչեւ օրէնքն որոշեացէ զդատ իւր:

Յայնժամ ծանուցանէ նմա հրաւիրակն, թէ յերկրորդում
աւուր կոչեցեալ էր նա յանդիման լինել դահլեցւոյն գատա-
տորոյ յառանձին անդ Փարիզու:

Ի վաղիւ անդր որ 18 էր ամսեան ապրիլի գնայ Հ. Սարգիս
ի դատարանն Գաղղիացւոց որ ի Փարիզ, խորհի նա գանա-
պարհայն եւ առ ցուղևկիցս իւր զգաստութեամբ լինի եւ անխըր-
տոմ մտօք, թէ „ Ով կարէր գնամբ ածել, գատն եւ ոչ
„ ամբք յառաջ ի ժամնտակի յորում վասն այսր վարժարա-
„ նին եղեւ եւ վասն իրաւանց տղայոց տգիտ ի դատարան
„ Անգղիացւոց որ ի Մատրաս գնայի ես, եթէ եկեալ ժա-
„ մանակ՝ գի նոյն իսկ իմ յորդորմամբ ընտրեալ Մխիթարեան
„ Աբբայն, (որ ի ժամնտակի անդ աննչան պատանի մի էր
„ ի վանս որոյն Վաղարս,) այսօր առ ի բանի հանել գիս
„ ի հիմնադրեալ եւ ի ծաղկեցուցեալ յինէն վարժարանէս,
„ ի դատաստան Գաղղիացւոց որ ի Փարիզ կոչեցեալ գիս:
„ Ով ապերախտութիւն, գիարդ զանկարծելին ճշմարտես
„ դու: „

Հարցանէ ցնոսա ժպտելով, թէ քանի՞ իցեն մեզ նման
մեղքն: Նոքա՛ն են ասէ ոմն ի նոցանէ:

„ Մուսայար դու, ասէ, զսիմերտին, զբարերարուհիեն։
„ Սակայն ոչ, ասէ, զի արարեալքն իմ չէին մեղք, այլ
„ պարտքս, արդարութիւն էր. վասն որոյ ուրախ եմ ասէ,
„ զի յայս ահմանս եհաս բանն, որով երեւի թէ գոյ հզմար-
„ տութիւն մի, որ պարտ է յայտնիլ, և արդարութեան
„ պարտ է լինել. վասն զանազան են յոյժ վիշտքն զորս կրե-
„ ցի ես երթեալ ի Մարսա, և զորս կրեմ այժմ ի Փարիզ.
„ զի վիշտքն այնքիկ էին յոտարաց, իսկ այսքիկ ի տուս
„ երբարեցս, վասն որոյ ծանր են յոյժ և անտանելի։
„ Ահ նախանձ չար, զինչ վաճառել տուս զերբայրն
„ տարաց։ ՚՚

Փառասիրանն Գեր. Հիւրմիւզի խօսի նախ յառնել ընդ. և քանզի հին խօսից նորա այս լինի, թէ Մխիթարեանք ահր են վարժարանին, բողոք անդէն փառասիրանն Յովհաննու Մարսաի ընդդէմ անկրա քանից նորա, և համառօտ թէ Մխիթարեանք ոչ երբէք ահր եղեալ են առաջնոյ վարժարանին, այլ ընտանեաբար միայն նոցին։

Տեսեալ փառասիրին թէ խնդիրն ոչ էր թևթեւ ինչ, ի մէջ Մեծաւորի և հպատակի, կամ ի մէջ տանուտեառն և վարձառորի վէճ և կռիւ, որպէս ծանուցեալ էին նմա տգիտասիրքն, խնդրէ զի գրով տացի նմա տեղեկութիւն ինչ ի կողմանէ Հօր Սարգսի ի միջոցի չորից տարւոց։

Տեղեկացեալ զայն փառասիրին ի փառասիրանէն Հ. Սարգսի, ասէ ցնա թէ չկարէ ինքն միայն զայն խնդիրն որոշել, որովհետեւ Օտմանեան գրան գործակալն եղանակաւ իմն արգելեալ էր զայն։

Եւ միւնչդեռ ապատէ Հ. Սարգիս վերատին կոչման ի փառասիրանն և որոշման խնդրոյն, զոր բանից փառասիրին, Գեր. Հիւրմիւզ իմիջոցի յայն չորից տարւոց գաղնուայն հնարէ ժամանակութեամբ Նուերակի Գասլին և Արքեպիսկոպոսի Փարիզու, և խորամանկութեամբ փառասիրանին իւրոյ, միւնչեւ հարկաւորի նոյն գաղտուկն քննել զխնդիրն այն ընդ այլ գաղտուկս առաձին, առանց տգի առնելոյ զայն Հօր Սարգսի, և յանդիման լինելոյ փառասիրանն նորա ս անդ, և

հանել վճիռ. այսպէս. «Որովհետեւ ամբաստանեալն (Հայր
«Սարգիս Թէոդորեան) չերեւեցաւ ի դատարանի յարդարա-
«ցուցանել զինքն, պարտ է ի միջոցի հինգ աւուրց ելանել
«ի Մ. վարժարանէն։»

Օրէնք են Գաղղիացւոց առնել ի կոչել զոք ի դատաստան դնայ հրաւիրակն առնել ի կողմանէ ամբաստանողին և զրով ծանուցանէ ամբաստանելոյն թէ այս ինչ օր ամսոյն պարտի յանդիման լինել դատաւորաց յառնել, առ ի տալ պատասխանի։ Զայս նուազ ոչ դնայ հրաւիրակն առնել առ Հայր Սարգիս ծանուցանել նմա զայն զրով. ապա՛ կարէր նա իմանալ թէ դատաստան կայր յառնել վասն իւր . . . եթէ իմանայր զայն ընդէր խորշէր գնալ անդ որպէս զառաջին անգամ գնայ. խորհրդարանին Գեր. Հիւրմուզի անդէն և անդ համարի. վասն որոյ բողոքէ Հ. Սարգիս ընդդէմ վճռոյն այնորիկ, և որոշի քննել զանդիրն այն ի կայսերական առնել զինի քանի մի աւուրց անտի։

Յայսմիկ աւուրս՝ յ8 մայիսի, կոչէ Արքեպիսկոպոս Փարիզու զՀ. Սարգիս խօսել ընդ նմա. գնայ Հ. Սարգիս առ նա հանդերձ Հ. Ամբրոսիոսիւ, որ ինքնին կամի ընկերել նմա։

Տեսանէ Արքեպիսկոպոսն զՀ. Ամբրոսիս՝ առ չնա խառնեալ ընդ նմա. «Ընդէ՞ր իցէ և քո ներկայ այսր, չկոչելով իմ և «զքեզ. ել առ ի, ի բաց դնա վաղվաղակի։»

Խնդրէ իմանալ Հ. Սարգիս թողուլ նմա կալ անդ. զիջանի նա քառնալոյ, և հարցանէ զՀ. Սարգիս թէ ընդէ՞ր չհնազանդի Առաջնորդի իւրում Գեր. Հիւրմուզի, զոր պարտական է ամենայն կրօնաւորական հնազանդութեան. և թէ՝ զիարդ չերկնչի նա ի գայթագղութենէ հասարակաց անհնազանդութեամբ իւրով, մանաւանդ ի հասակի չայն ծերութեան իւրում։

«Արդ եթէ ոչ հնազանդիք զոք երկրային հրամանի առաջ-
«նորդի ձերում, որպէս ես զձեզ ի սպասաւորելոյ, և
«վախել առ գնասուն վարժարանիդ։»

Ասէ նա զայսոսիկ կարի չոյժ ցասմամբ և մոլեգին ձայն

չարժմամբ ձեռաց և ոտից : Իսկ Հ. Սարգիս աներկիւղ դիմեաք և անխոտոր միտք առնէ նմա պատասխանել, խնդրելով նախ դիջանել նորա ի տարտամութիւն ցասմանէ անտի, և ապա ասելով՝ թէ հնազանդութիւն իւր զոր ուխտեալ է ինքն պայմանաւոր է, զսա կանոնի սահմանադրութեան կրօնի իւրեանց :

Հարցանէ ցնա Աղբեպիսկոպոս, թէ գիշեր էր պայմանն այն սահմանադրութեան իւրեանց :

Պատասխանէ Հ. Սարգիս, թէ Առաջնորդ ուխտին իւրեանց հաւանութեամբ վանական ժողովոյ միայն կարող է առնել էական ինչ փոփոխութիւն գիտաւոր պաշտօնէից որ ի գործս հասարակութեան :

Ասէ ցնա Աղբեպիսկոպոս, թէ հաւանութեամբ բոլոր միաբանից իւրոց կամի Գեր. Հիւրմիւզ առնել փոփոխութիւն պաշտօնէից ի Մ. վարժարանին. ահա ասէ նամակն յորում են ստորագրութիւնք բոլոր միաբանից իւրոց, զոր և Հանեալ ցուցանէ նմա, իբրեւ յաչս նորա մուծանելով զայն :

Ակնարկեալ, Հ. Սարգսի ինամակն յայն՝ ուստանէ անդ ստորագրութիւնք չորից անձանց և նի, և այն հաւանեցեալ Գեր. Հիւրմիւզի : Ասէ ցԱղբեպիսկոպոս, թէ « Ի վանս իւ-« րեանց՝ թէև անձանց որք իրաւունս ունին մտանել ի ժո-« ղովն և տալ կարծիս իւրեանց՝ են հնգետասան, « իսկ ի նամակի յայն գտանին ստորագրութիւնք չորից « անձանց միայն. ուր են Ղազարեցին : Ապա չունի Գեր. « Հիւրմիւզ կարծիս բոլոր միաբանից իւրոց, և ա-« պա չունի նա իշխանութիւն առնել փոփոխութիւն պաշտօ-« նէից անդ : »

Ընդդիմանալ Աղբեպիսկոպոսի ի բանից Հ. Սարգսի, յոր և չունի այլ ինչ ասել :

Յայնժամ պատճառ առեալ Հ. Ամբրոսիոսի խոսի հանդիպակ գանգատանաճ գնացից Գեր. Հիւրմիւզի :

Չհանդուրժեալ Աղբեպիսկոպոսի Փարիզու հանդիպակութեան Հ. Ամբրոսիոսի հրամայէ զարձեալ երկնել նորա անտի վաղվաղակի և իւրոց գնալ, և ի գանգատել նորա, մինչ նա

ինքնին գնա մինչեւ ցղուն անեակին և հանեալ արտաքս վաւել ղբոյն ընդդէմ նորա։

Ապա դայ նա առ Հ. Սարգիս և տեսեալ զինքեան իբր թոլթոլիլն, խօսելով ընդ նմա քաղցրութեամբ և մեղմութեամբ, ասելով ցնա, թէ Գեր. Հիւրմիւզ ոչ միայն չունի ինչ դանդաղ գնանել, այլ վարկ մեծ ունի, և ճանաչէ զարդիւնս վաստակոց նորա ի գործ յայն վարժարանին, այլ գանգատ նորա, ասէ, է միայն զՀ. Ամբրոսիոսէ, զոր այնորիկ կամի հանել գնա ի վարժարանէն. և դու, ասէ, մի՛ ընդդիմանար այնմ, այլ հաւանեաց կամաց Առաջնորդիդ ճանաչելով զՀայր Ամբրոսիոս յանցաւոր և հեռանալով ի նմանէ իբրեւ ի վնասակար անձնէ։

Ասէ ցնա Հ. Սարգիս, թէ ինքն ոչ ճանաչէ զՀ. Ամբրոսիոս այնպիսի յանցաւոր, զոր որոյ պարտ իցէ հանել գնա ի վարժարանէս. իսկ եթէ Գեր. Հիւրմիւզ յանցաւոր ճանաչէ գնա, ընդէ՞ր ուղղակի և ինքնին ոչ խօսի ընդ նմա, ցուցանէ զյանցանս նորա, և հանէ գնա ի վարժարանէս։ Ապա երեւի թէ չունի նա յանցանս . . . և ապա չկարէ ինքն հաւանիլ կամաց Գեր. Հիւրմիւզի։

Իբրեւ ցուսահատ Արքեպիսկոպոսն Փարիզու հաւանեցուցանել զՀ. Սարգիս քաղցրութեամբ, յայնժամ սկսանի նա զարձեալ խաւսութեամբ խօսել ընդ նմա, սպառնալով խոխանել գնա ի պատարագէդ, և վակիլ տալ զմաուռն վարժարանին։

Ասէ ցնա Հ. Սարգիս, թէ Գեր. Հիւրմիւզ կոչեցեալ է զինքն յառեան դատաստանի, վասն որոյ պարտ էր մնալ արուեստն և վճռոյ անտի, որ լինելոց էր զկնի քանի մի աւուրց, յետ այնորիկ արտաքս նա զարժանն, ըստ իւրաքանչիւր իրաւանց և արդարութեան։

Զինքեան հաւանի Արքեպիսկոպոս Փարիզու բանիւ Հ. Սարգսի չառնել ինչ ի ժամուն. և եթէ ընդ նմա ինոխաւսեսցի, որ միայն Հ. Ամբրոսիոս, ասէ ցնա, թէ ըստ խնդրոյ Հայր Սարգսի թոյլ տայ նորա պատարագել մինչեւ ցորշումն առնին զիրաւունս իւրեանց։ Զայս առեալ՝ արձակի զնա խաղաղութեամբ։

Ահա այս լինի վախճան կոչելոյ Ալբեպիսկոպոսի Փարիզու Ղշ. Սարգիս Թէոդորեան, և այսպիսի խռովկոտ[ի]ն նոցա ընդ միմեանս, թէպէտ և անագան և անօգուտ։ Անագան, վասն զի պարտ էր նմա իրրեւ Ալբեպիսկոպոս փաղաքշին յառաջ քան զդիմել Դեր. Հիւրմիզդի յաշխարհական առեանն, քննել զվէճն որ ի մէջ նոցա և առնել իրաւունս. և անօգուտ, վասն զի աշառութեամբ կամի նա ապա առնել զնիկողիոսական դատաստան, պատուիրելով նմա արդէն ի Հռոմէ զիրոյն առնել և օժանդակել Դեր. Հիւրմիզդի, որպէս և առնէ, տալով նմա զիւր փաստարան, հանդերձ զրով առաւելութեան, թէ Ղ. Սարգիս իցէ պատճառ խռովութեան աշակերտաց վարժարանին, թէպէտ և երկիցս տեղեկացեալ էր ձեռամբ աթոռակալին իւրոյ թէ չէր Ղ. Սարգիս պատճառ խռովութեան աշակերտաց վարժարանին, և թէ՝ խորհրդակցեալ հանդարտ էին անդ աշակերտքն։

ԳԼՈՒԽ ԿԳ.

Ընծոյբիւն վիճոյ Դեր. Հիւրմիզդի ի կայսերական առեւին. — Հաստատութիւն հառնալ վիճոյն. — Դարձ Ղ. Սարգսի ի վարժարանին և խոստանալ տալոյ զնոյն տուրս. — Հրաւիրագիր Դեր. Հիւրմիզդի առ Ղ. Սարգիս և Ալբրտոսիոս. — Հրաւիրանաց Ղ. Սարգսի ի վարժարանին. — Հրաժարականի ողբոյն Ղ. Սարգսի առեալ Դեր. Հիւրմիզդի. — Ընծոյբիւն Ղ. Սարգսի և Ղ. Ալբրտոսեայ ի Փարիզ քաղաքի.

Ահա ի 11 մայիս 1855 ամի լինի քննութիւն վիճին ի կայսերական առեանն որ ի Փարիզ, ուր գնայ Ղ. Սարգիս և ընդ նմա պրիեէ հասնիցէն ազգայինքն որք անդ ի ժամանակին։

Առեներան նախ փաստաբանն Ղ. Սարգսի, ծանուցանէ

հանուռատիւ զեղբնատրութիւն և զառաջադիմութիւն Մուրատեան վարժարանին, յոր և զանձիսանելի արդիւնս վաստակոց Հ. Սարգսի և զանխրատ պահանջատուին Գեր. Հիւրմիւզի։ Առանց մանր քննելոյ զնոցին ոչ անկանի Տաղտկացուց առնին, այլ Օտիանեան Վեհապետին ի Փարիզ, որոյհետե թէ սխրատատուն և թէ սխրատատանեան հպատակ են Օտիանեան տէրութեան, զառ իրատանց ազգաց, և զառ օրինաց Երկրացուց։

Ապա առնետրանել վատատրանն Գեր. Հիւրմիւզի և ապ երկու պատճառ պահանջման նորին. մի, թէ Գեր. Հիւրմիւզ բացարձակ տէր զոյլ Մ. վարժարանին առնի իրատատեան հետեւութիւն առնել վտեհատութիւն պաշտանէից նորին զառ կամաց իւրոց. և մեան, թէ աշակերտք վարժարանին ի հատատեալ են և յապատամբութեան են միշտ, ատատ հարկ է հատնել անոն զվերատատուչն և զպատճառսն որք են պատճառք և հատատատութեան այնմ։

Ընդ զգոյ վկայութիւն Արքեպիսկոպոսին Փարիզու, զոր գրեալ էր առ ինքն, և զոր ընթեռնու անդ յանգնջ պատատուցաց, թէպէտ և առատ և անիրատ էր վկայութիւնն այն, զառ զոյս վերագոյն յիշեցաք թէ Արքեպիսկոպոս Փարիզու երկայս առաքէ զաթառակել իւր և տեղեկանալ անոն զիատատութենէ և հետազոտութենէ աշակերտաց Մ. վարժարանին. բայց քանզի հրամանն էր առ նա ի Պապէն Հռոմէ ոժանդակել Գեր. Հիւրմիւզի, ապ նա զայն վկայութիւն առ ի չնուէ զհրամանն Պապին։ . . .

Օրինք են գործել Տաղտկացուց առնին, զի առաջին հատատատան վատատրանն չկարէ երկրորդ հատատատանին վերատին առնել բանից նորին պատատխանի. ապա թէ ոչ պատրատառ էր պատատխանին այն երկուց պատճառաց նորին։

Հետ ոչինի առնետրանել ընդհանրական վատատրանն.

„ Թէպէտ և զառ իրատանց ազգաց զառս այս ոչ պատկանի
„ առնի վերոյ, ատ հպատակ զոյլ ազգս այլ տէրու-
„ թեան, ապայն զառ օրինաց բարեկարգութեան քաղաքա,

„ անկանի առնել զապրեցուցանել զխռովութիւնն որ
„ ի վարժարանին, բառնալով զպատճառ նորին : ,,

Ապա խորհուրդ արարեալ զառաջարկ ի մէջ խրեանց՝ համաձայն զտաւիղին վճիռն, առ ի բառնալ զխռովութիւնն աշակերտաց վարժարանին, բան վկայութեան Արքեպիսկոպոսին Փարիզու :

Անպատճառ լինի յայնժամ ազգայնոց տրտմութիւն. ժողովին նորա ի դատարանի անդ առ Հ. Սարգիս և վիճիլն զնա առնով. „ Այսպիսի եղանակաւ էանելդ ի Վ: վարժա-
„ րանէն առաւել վատ են քեզ, քան կալ հպատակ ապե-
„ րախտ և անիրաւ Առաջնորդի մոյ, և վերաւոնս ազգին
„ չկարելով պաշտպանել բան կամացդ (*) : ,,

Ընդ որոշել դառին վատաբանն Գեր. Հիւրմիւզի առաքելական վեհափառին առ նա ի Վ. վարժարանին ամենևին յայնմ ոչ :

Չկենալ Գեր. Հիւրմիւզի զվարդապետն պատճառան իբր ինքանէ ի դատաստան աշակերտաց և բազմիլ յոմն ատեարս և խնդրելոյն. „ Ահա դատաստանք Գաղղիոյ
„ վրաւնս նոտն ինձ, և զՀ. Սարգիս և զՀ. Ամբրոսիս
„ դատապարտելին. ես եմ այսուհետև տէր վարժարանիս
„ և ձեր վերատեսչ. և ձեր վարժապետք ահա ապա : ,,

(*) Հայելով միայն ի խնդիրն որ վասն փոփոխութեան մատակարարի Վ. վարժարանին և քննդիմութեան Հ. Սարգսի ընդ այն, համարիցի արդեօք թէ վասն այնորիկ արտաքսի սա ի Վ. վարժարանէն, և բաժանի ի Մխիթարեան միաբանութենէ :

Վասն որոյ պարտ է յիշատակել սաստ և զայլ ամենայն խնդիրս որ ի սկզբանէ հետէ եղեալ իցեն, զանդադար բողոքն Հ. Սարգսի որ դանդազիր մատակարարութենէ Վ. վարժարանին, գհակառակութիւնն ապա որ ընդ փոխադրութիւնն Մուրատեան վարժարանին ի Հռոմ, և գյանդիմանութիւնն ապա որ առ Գեր. Հիւրմիւզ, ընդ գնդաւոր սկզբանց կրանի իւրոյ, և ընդ գրգռութիւնն միաբանութեան կոչելով գազգն Հայոց հերձուածող և հերետիկոս. ահա այսորիկ են պատճառք արտաքսելոյ Հ. Սարգսի ի Վ. վարժարանէն, և բաժանելոյ ի Մխիթարեան միաբանութենէն, և ոչ ընդգիմութիւնն ապա ընդ փոխութիւնն մատակարարի վարժարանին, զոր Գեր. Հիւրմիւզ առ յարդարացուցանել գինքն. և հաստատութիւն այսմ, ահա գրով վկայութիւնն որ ի Պոլսոյ և որ ի վանից, զոր յառաջագոյն յիշատակեցաք ի սմին, և սմանզակութիւնն Տէր Գրիգոր Արքեպիսկոպոսին Փարիզու. Յորմէ յիշատակել առաս գրեթէ վկայութիւնն ամենից ի միաբանիցն ասեն :

Դարձեալ՝ նիւթ վասն փոփոխութեան մատակարարի Վ. վարժարանին, Հայր Ամբրոսեայ. և վասն գնդգիմութեան Հ. Սարգսի ընդ այն հետևեալ իցէ և զա-

Զայս ասէ և երեք Գաղղիացի նոր վարժապետք յանդիման կացուցանէ նոցա։ Աշակերտք ամենեքեան առհասարակ խոովեալ և զայրացեալ յոյժ ընդ գնացս նորա անդէն և անդ յոտն կան և ասեն. «Ո՛չ կամիմք, ո՛չ կամիմք, զձեզ ո՛չ ճանաչեմք, մեք ո՛չ. Սարգիս և ո՛չ. Ամբրոսիոս խնդրեմք։»

Գիտելով Գեր. Հիւբմէզի թէ այն այնպէս պատահ էր լինել, ասաց որոյ պատուիրեալ էր յառաջագոյն զի առ դրան վարժարանին բարեկարգութեան զինուորքն պատրաստ լինին։ Ազդարարել հրամայէ զի ի ներքս եկեալն նորա։ Զեղանին նորա ի դատաստան և ախտանին աճապարանել զխեղճ մանկտեան, այժմ կապեմք զձեզ և ի բանս ածեմք առնով։ Ընդդէմ ի մանկանց անտի, մանաւանդ փոքրագոյնքն ատելի եան գոլալով, իսկ մեծագոյնքն լեալ անհնարին պատճառեմամբ զինչ առնելն ոչ գիտեն։

Հ. Ռոմայէլ և Հ. Պետրոս յետուստ պատուհանաց վարժարանին կացեալք գիտեն զայն ոտքայն առատանն, և այլն, ընդ՝ը ոչ յանդիմանէ Գեր. Հիւբմէզ Մեծաւոր գՀ. Ամբրոսիոս իբրեւ յանցաւոր, ցուցանելով նմա հաւատոյք զանհաւատութիւնն նորա որ ի պաշտօնն յայն, քանզի ոչ միայն չյանդիմանէ գնա, այլ և ոչ հարցանէ և խոսի անգամ ընդ նմա գայնմանէ, թէպէտ և Հ. Սարգիս երիցս և երիցս ասէ և խնդրէ ի նմանէ առնել գայն... ընդ՝ը աւուրբք ինչ յառաջ քան զդատաստանն գրով հրամայէ նա Հ. Սարգսի երանել ի վարժարանէն և գոնոյլ ի վանս, իսկ Հ. Ամբրոսիոսի զկնի գատաստանին հրամայէ գնալ ի Հռոմ առ Գեր. Ներսէսեան և մնալ անդ նորոգ հրամանի իւրոյ, ընդ՝ը գոս գնէ նա ընդ Հ. Սարգսի, և ոչ ընդ Հ. Ամբրոսիոսի, իբրեւ ընդ միայնակ յանցաւորի, քոս քանից իւրոյ ատացելոց Արքեպիսկոպոսին Փարիզու, զոր միայն յիշեցաք, և ընդ՝ը ասէ նա ապա անպատճառաբար, թէ չէ իբր գոս եղեալ ընդ Հ. Սարգսի, այլ ընդ Հ. Ամբրոսիոսի, կոչեցաւ։ Իբրեւ յԱննէն Հ. Ամբրոսիոս ի գատաստան, թէ Հ. Սարգիս միայն, գոսանդ՝ և անուն Հ. Ամբրոսիոսի ի դ՚ծխ. անդ Առաննին, թէ Հ. Սարգսի միայն, հրամանագիրն և գ՚ծխ. անդ Առաննին, թէ Հ. Սարգսի միայն, հրամանագիրք և գ՚ծխ. առաննին են ի ձեռս Հ. Սարգսի...

Հ. Սարգիս որպէս երբեմն ի Մարսիլիա, նոյնպէս և այժմ ի Փարիզ պաշտպանէ զիրաւունս ազգասիրաց ազգին իւրոյ թէպէտ և գատաստանն. որ ի Մարսիլիա և որ ի Փարիզ այլապէս լինի գլխովին. քանզի անդ գննութիւնն իրաւանց և արդարութեան լինի գխնդրոյն, իսկ աստ ցանկութիւն Պապին և աստ գկայութիւն Արքեպիսկոպոսի Փարիզու գանցքին գխնդիրն, և գէնք գինուորաց վանին գպաշտպանեն ազգասիրաց ազգին... լինու նա այսպէս գպարտս իւր գերջին, մնացեալ յոյժ խոպան ընդ անիրաւին։

Սպասէնք որ ի Փարիզ ճանաչելով քոյ զարդիւնաւոր գործս Հ. Սարգսի, և տեսանելով գանիրաւս գնացս Գեր. Հիւբմէզի ընդ նմա Մխիթարեան և քոյ ջանիցն գնա այսու քանիւք։

Վանահայրութիւն Հիպինակին։

Գեր. Հիւրմիւզ՝ զանձայր և զանմայր մանկանցն զոյնոսիկ պահպանութեան և ապառնալոց և հայհոյութեանց վինասրոց մատնեալ՝ գնոյ առանձանոյ իսնեակ իւր, և անդ իրրև վարդ որ ի գառապիղն սրսոց սրսոց ընթանայ։

Անդ դարձեալ սրժանժառանդ յաջորդ մեծին Մխիթարոյ, և երջանիկ Մխարանութիւն նորա։

Ոչ նախանձ չար և ևիրք վիժիմնարութեան, զիարդ զրանախանն գազանացուցանէք, և զիարդն ընկերի իւրում մատնիչ և դահիճ կազմէք։

Յայնմ միջոցի դառնայ Հ. Սարգիս ընդ Հ. Ամբրոսիոսի ի վարժարանն. Թէպէտ և չգիտէ նա թէ որչափ ժամանակ պարտ էր տալ նմա Գեր. Հիւրմիւզ ի փոխադրիլ այլ սրբեք, սակայն կարծէր թէ գոնէ ժամս քանի և չորս պարտ էր տալ նմա փոխադրելոյ։

Խոսեալ Հ. Սարգսի զդառն վարժարանին, կիսարաց առնէ զայն կինդանատանին, և ազաչէ զնա լսելի առնել, և Թախանձանօք, զոսն սիրոյն Աստուծոյ չմոռանել ի ներքս։ Հարցեալ Հ. Սարգսի ընդ այն հարցանէ զնա զպատճառն, ասէ զնա կին լսել, թէ «Զի մի անպատուիցես իգինատրացն որք ի ներքս «կան։» Զայս ասացեալ՝ փակէ զդուռն ընդդէմ նորա։

Խնդրեալ զայն Գեր. Հիւրմիւզի՝ առաքէ զհրամիրակն առ Հ. Սարգսի այսպէս. «Եթէ կամիս մոռանել ի ներքս, պարտիս «խոստանալ հանդարտեցուցանել զաշակերտսն։»

Պատասխանի ասէ նմա Հ. Սարգիս թէ «Ես ոչ յոյս ունիմ «այսուհետև հանդարտեցուցանելոյ զաշակերտսն, և ոչ միտս «ունիմ զրգռելոյ զնոսա որով և իցէ եղանակաւ։»

Ասէ զնա հրամիրակն. «Ապա ուրեմն չիարձս մոռանել «ի ներքս։» Փակէ զդուռն ընդդէմ նորա։

Ելեալ զարմացեալ յոմանց անտի, մատուցանէ զեղեալն առաջի Հ. Ամբրոսիոսի ի Գեր. Հիւրմիւզէ, օրինակ զայս.

«Պատուական Հ. Ամբրոսիոս ոգջոյն սիրոյ ի Քրիստո-

«Մխարանութիւնս որ կարգեալ էր զքեզ ուսուցիչ ման-

«կրատոյն ի Վենետիկ վարժարանիս, զարմացա ոգւոյս տալն

„ զքեզ ի պաշտամանէ անտի. վասն որոյ պատուիրեմ քեզ
„ յանուն որոյ հնազանդութեան ոչ եւս մտանել ի վարժա-
„ բանս յայսմ օրէ եւ առ յապայ, այլ առաջեալ պատճառ
„ չոգնեսցեն ուղեւորիլ ընդ Մարսիլիա ի Հռոմ եւ անդ
„ կալ ի վանատունս մերում մինչեւ ցնոր կարգադրութիւն.
„ Եւ եթէ ոչ հնազանդեսցիս այսմ հրամանի, արդելեալ
„ լիցիս յամենայն քահանայական պաշտամունց.

„ Ողջ լինել մտքիս ի Քրիստոս

„ Պատուական Հայրութեանդ.

„ Ի Փարիզ, ի Մ. վարժարանի.

„ 11 մայիս. 1855.

„ ԳԻՄԱՐԳ ՀԻՒՐՄԻՒՉ

„ Արքեպիսկոպոս և քնդ. Աբրայ. „

Ընթերցեալ Հ. Ամբրոսեայ զայս գիր Գնր. Հիւրմիւզի թէ յայն և աւարէ գրոցն.

Այս առաջին անգամ լինի լսել Գնր. Հիւրմիւզի ընդ Հ. Ամբրոսիոյ, յորմէ հետէ նկատել էր ի Փարիզ, այսինքն ի 10 մարտէ մինչեւ ցյունիս, և այն ոչ բերանով, այլ գրով.

Զմէնչ արդեօք այսմ պատճառ, ակնածութիւն թէ արհամարհութիւն.

Ակնածութիւն չկարէր լինել, քանզի ընդ սմին առանց ակնածութեան վարի.

Արա ուրեմն արհամարհութիւն էր պատճառն, հանդերձ առելութեամբ.

Տեսեալ Հ. Սարգսի պանդխտութիւն մտանելոյ ի ներքս առնուլ զինչս իւր, մտածեաց թէ ի փոխել գոնէ զշապիկ իւր

Բացեալ ի քրմանց, և զդուռսպան յանձրևաց, առաւել յոյժ, և մնաւանդ ի տեսանել զրաղմութիւն անցաւորացն որք ընդ փողոցն այն զկայ առնուն և հարցանեն ցվիմանա զպատճառ պատելոյ զինեւորաց բարեկարգութեան զվարժարանն, և զաշակերտս իւր կարկառեալ ի վերուստ իւրեանց ունկանց անտի ցանկային խօսել ընդ նմա, և ոչ կարէին, քանզի չկամի նա և հայել անգամ ի նոսա, ակնածեալ ի զինեւորաց, որք լրտեսութեամբ դիտէին զայն և առատէին աշակերտաց։

Եւ չէարացեալ նորա այլ եւս ժամել այն ազետալի տեսանելն, առաքէ զՀ. Ամբրոսիոս առ գործակատար դեսպանին Տաճկաց ի պատմել նմա զանցեան, և ի խնդրել օգնութիւն ինչ անտի, և ինքն գնայ ի տուն Արքին Պէյի և ընկերանալ ի վերոյ նատարանի մերոյ յիշէ զրովանդակ անցեան որք անցին ընդ ինքն ի Մատրաս զամս չորեքտասան, և զհոգան զոր կրեաց ի Պատուհան ի վանենայ և ի փարիզ զամս չորս, ի ձեռս բերել և պաշտպանել զիրաւունս ազգային ազգին իւրոյ, և ապա զայնպիսի հատուցումն զոյանէ յիւրոցն։

Չայս ամենայն ի մուտ ժամու յանդիման աչաց բերէ, և զակերախտութիւն առակ։

Յայսմ միջոցի Գեր Հերմիւզ զարքին բերել առ ի բանալ զդրանն անուանից Հ. Սարգսի և Հ. Ամբրոսիոսի, առ ի հանել անտի զինչս նոցա զոր կամի և առաքել առ նոսա, որպէս զի մի հարկ լինի մտանել նոցա ևս ի վարժարանն յայն։

Ո՛չ ապաքէն վրէժխնդրութեան և անիրաւութեան Գերապայծառ Հերմիւզի ոչ կայինն չափ և սահման։

Բայց ի բռնել գործակատարն Դեսպանին Տաճկաց առ Ասիական բարեկարգութեան, ընդ խառնութիւն զինուորաց նոցա առ հպատակս իւրեանց, առ Հ. Սարգիս և առ Հայր Ամբրոսիոս, և յառաքել վաղվաղակի ասիկանին զայն ի գերիսառ զինուորաց իւրոց ի Վ. վարժարան քաղցրութեամբ առնուլ զդրանն, զկատարումն վճռի առնին, կամ ևս

յայնժամ ի գործ անել, ի բանալոյ զանձնեակն և ի հանելոյ զինչս նոցա։

Գնաց դռնապան Մ. վարժարանին ի տուն Արքին Պէյլ և կոչէ զՀ. Սարգիս և զՀ. Ամբրոսիոս ի հանել անտի զինչս նոցա։ Գնաց անդ Հ. Սարգիս միայն, գոլով տակաւին Հօր Ամբրոսիոսի ի գնապանատան տաճկաց առ գործակատար գնապանին։

Երթեալ մուտանէ Հ. Սարգիս ի գաւիթ Մ. վարժարանին ընդառաջ ելանէ նմա գլխաւոր զինուոր տախկանին բարեկարգութեան, և հարցանէ ցնա թէ հպատակէր նա վճռոյ Առնին, պատասխանէ Հ. Սարգիս թէ այո, բայց բողոքէ միշտ ընդդէմ բռնութեան Գեր. Հիւրմիւզի։

Իրաւունս ունիս, ասէ ցնա զինուորն։

Ելեալ անտի Հ. Սարգսի գնայ բանալ զդուռն սենեկի իւրոյ հանդերձ զինուորաւն, ուր գնան անդէն Գեր. Հիւրմիւզ և արքանեակք նորա Հ. Ռաֆայէլ և Հ. Պետրոս, իբրեւ իսուսեան զուարճութեան։ Հարցանէ զինուորն և անդ վերատին ցՀ. Սարգիս թէ հպատակէր նա վճռոյ առնին երանել ի վարժարանէն. պատասխանի Հ. Սարգիս զնոյն բան վերըսին։

Յայնժամ հարցանէ զինուորն ցԳեր. Հիւրմիւզ թէ զինչ ինչ էին Հ. Սարգսի զոր կարէր նա հանել անտի։ Ասէ Գեր. բարեյաջող Հիւրմիւզ Հ. Սարգսի կարնոյ զոր ինչ առանձին ունէր ի սենեկի անդ։

Կալեալ Հ. Սարգիս զքանի մի հատոր մատեանս իւր և զհանդերձս մոյն զոր ի առ ի բննեալ զինուորին զետեղէ ձեռամբ իւրով յարկեզուն յանդիման Գեր. Հիւրմիւզի։

Գնաց անդ ապա և եղբայր Արքէն Փելլեան, և օգնէ սպասաւորաց հանել անտի մահճով զբեհեզեան, և իջուցեալ զայն ի գաւիթ մերձ առ դրանն՝ շեղջեն ի վերայ մխիթարեայ խառն ի խառն։

Երբեմն վճարեն նոքա զգործատնեայքն որ ի սենեկի Հօր Սարգսի անցանեն անտի ի սենեակ Հ. Ամբրոսիոսի, որոյ ապա եկեալ և տագնապեալ ի հատցնոյ ժամուն, չգիտէր

պինչ կալնուլ և ուր զեռելել զայն, չունելով արկեզս : Վնվ, նա զձեռսդիր և զոտպգրեալ մատեանս իւր ի միջ տաւանից իւրոց, և իրրեւ կամի կալնուլ և զմատեանս իւր ար ի Գաղղ. լեզու, ասէ ցնա Գեր. Հիւրմիզ, Թէ արծաթով գպրոցին են գնեալք այնպիսի, զոյն արոյ չէր պարտ կալնուլ զնոսին :

Ասէ Հ. Ամբրոսիոս, զամն հօմն վատակեալ իւր անդ՝ չունելի իրաւունս ունել գքանի մի մատեանս իւր : Եւ յոյժ Հ. Սարգսի Թէ չարժէր անգամ իսուել զայնմանէ, ըստ Գերապայծառ Հիւրմիզ, և ի չգտանել արկեզ կալնուլ զնոսին, ասէ Գեր. Հիւրմիզ Թէ տացին այնք ոտս ի վաղիւն, չունելով այնր և ժամանակ. զի ժամ ուուն էր գնչելոյ, և գկտուսն գնեսոյց և գորժակալ վատուրանին Գեր. Հիւրմիզի փութային կարճել զգործն, զի գնա չէին ճարտար և նեղեալ էին յոյժ բնդ գործն այն :

Յայսմ միջոցի կայ անդ Հ. Սարգիս անհատ ի միջ անգամ և բնաւոր առաքեցին իւրոյ, և արդանիկաց նորին, Հարց Ռաֆայէլի և Պետրոսի, և խօսի բնդ նոսա առանց ինչ կրկոց, բայց իւրաքանչիւր ըստ արժանւոյն : Ասէ առաքելին իւրում գայսոսիկ բանս.

„ Պատուհասիւն իմ զոր առնուլ մխով յառաջ, յառաջ
„ ժամանելոյ ձեր այր, Թէ արով և բրով հնկնուլ էք ի վերայ
„ իմ, ահա կատարեցաւ այսօր : . . . Պշխանութիւն ձեր մին-
„ չեւ ցայս վայր է, և ահա արդուեցէք ինձ լեզի և քացախ,
„ առնոյն ինչ կատարեալ է, . . . և ահա կատարեցի ես
„ զպարտս իմ վերջին, պաշտպանեցի ցարդ զիրաւունս ա-
„ քաոյց ազգին իմոյ այսպէս, որպէս երբեմն ի Մատրա :
„ Թերճ մաց իմոց ոչ առպատնեցէ զիս յայսմ հետէ, Թէ
„ պահապետայ ես ի պարտս իմ երբէք : . . . Գործս այս
„ պարտ էր այսպէս կատարիլ, որպէս զի յայտնեացի ճշմար-
„ տութիւն, և յետոյ արդարութիւն : ՚՚

Եւ Հ. Ռաֆայէլի առ զայս. „ Յիշեցի արդեօք Թէ զինչ
„ պաշտպանեցեր քեզ երբեմն ընդդէմ Աղեքսանդր Ռաֆա-
„ յէլի, որ կամէր Հանել զքեզ ի պաշտօնէ տեսչութեանդ.

« այժմ զինդհակառակն առնես դու, հանել զիս բռնութեամբ « ի պաշտօնէ տեսչութեան : »

Առէ ցնա Հ. Ոսկայէլ . տեսուր է ինքն ընդ այս և ցան- յոյժ :

Առէ ցնա Հ. Սարգիս . ուրախ է ինքն ընդ այս , բարիս առ- նելով այլոց , և չարիս ընդունելով ինոցանէ , որպէս ի քէն այսօր :

Իսկ Հ. Պետրոսէ չառէ ինչ բնաւ, զի անզգայութեամբ իմն կայ նա անդ ի զննին :

Իբրեւ հաղձեալ և տպդնապաւ ժողմեալ Հ. Սարգսէ և Հ. Ամբրոսիոսէ զբանն մի ինչս իբրեանց , և չկարացեալ զրա- վանդակն ժողովել անդ ի միասին, առէ Հ. Սարգիս Գերապայ- ծառ Հիւրմիզդի, թէ ինան տակաւին հանել անտի և զտպագ- րեալ վարդան Գրիգորեան, որ առանձին ծախիւք իւրովք եղեալ էր , և կայր անդ յայլ ինչ սենեկի, յղեացէ կառս և բարձցէ զայն անտի ապա : Հաւանի ընդ այն Գեր. Հիւրմիզդ , որպէս և զոան ճառնելոց Հ. Ամբրոսիոսի :

Եւ իբրեւ այս ամենայն ուարտի՝ առէ Հ. Սարգիս Գերա- պայծառ Հիւրմիզդ . « Ոչխամբ ճեռքիք Գերապայծառ Տէր : » Եւ խնդրէ զհ նորա հաւքուրել , և ի գանգատել նորա տալ զոյն , առէ ցնա Հ. Սարգիս տալիք տալիք զհզ զի հաւ բուրելոյ , չունելով իմ բնաւ խելի ինչ ընդ ձեզ , քանզի յանձեալ եմ ես զամենայն ինչ Աստուծոյ արդարութեան և արդիւնեալ նորին վանդակացն :

Զոյս առացեալ՝ հաւքուրէ զհ նորա և մեկնի ի նմանէ խաղաղութեամբ զոյն :

Ի գնացեալ ասի Հ. Սարգսէ զր ընդ Գեր. Հիւրմիզդի, մո- նաստանդ յայսմ ժամուցանէ, կարիցէ զր առել թէ կրեաք ինչ վարեալ էիք առ ընդ նմա երբէք :

Ինքեալ Հ. Սարգսէ և Հ. Ամբրոսեայ ի գաւիթ վարժարանին լան զգաստին բարբառ աշակերտաց իբրեանց ի վերուստ ան- տի, զր առաքէին զանձին իբրեանց , չկենալով արժանի հրա- ժարական ողջոյնի և հայրական օրհնութեան վերատեսչին և

պատմութեան իրեանց : Ընդ այն ցաւագին բարբառ նոցա խռովին նորա ի ներքուստ, այլ ոչ առնեն ինչ պատասխանի, և ոչ ի վեր անդ հայեին, զի մի տացեն պատճառ առանել նա խռովութեան աշակերտաց : Վասն որոյ վտիտանս ապա ի վարժարանէն, Թողեալ անդ զբեռին իրեանց, և գնան ի տուն Արքին Պէյի, ուր պատրաստի նոցա ճաշ :

Ապա երեկոյ նոցա անտի ի մէջ գիշերի գնան ի խնդիր օթևանի ի պանդոկի ուրեք, ուր հազիւ ուրեմն գտանեն երկու ծառայից սենեակ, յոր անցուցանեն առեր շորս, մինչև ի վարձու կալնուն սենեակս երկու ի դպրոցի ուրեք :

Իսկ Գեր. Հիւրմիզ և Վ. Հ. Ռամայէլ Թրենց զայն գիշեր հանգիստ ի քուն լինին, քանզի հոգանեն նոքա երկոքեան վանեցւոյն ցանկութեան և նպատակի իւրեանց, կարգելով Հ. Ռամայէլի վերադառնալ Մ. վարժարանին, որում ի քուն զամ անց հետ ցանկայր, և ապառնալով Գեր. Հիւրմիզի ի հանդիպակ գրաբինն Հ. Մարգոի առ ինքն ի տուն անց հետ : Եւ ոչ այսչափ միայն, այլ և ակն ունելով նոցա լսել զոմանք ի պատուականաց Հռոմէից, և զոմանս անտի առանել ինձ ի հանդերձութիւն և պատիւ ինչ ինձ ընդ այն և այնչափ զհոգանս հանձառարութեան իրեանց, միոյն ունել զնախադասութիւն Վերադայծառ Հառնելին ի Պօլիս, և միւսոյն ունել զպատիւ Եպիսկոպոսութեան, յորում Մ. վարժարանն ի Հռոմ վտիտ խաղայր :

Անհուն ցանկութիւն, անտես յոյս . . . Ո՛վ եղկելի մարդկութիւն . . .

